Արցախի պետական համալսարանի

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета

Artsakh State University's

PROCEEDINGS

ՊՐԱԿ ТОМ VOLUME

1/2016

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ СОЦИАЛЬНЫЕ НАУКИ SOCIAL SCIENCES

Ստեփանակերտ Степанакерт Stepanakert

Հրատարակվում է 1998թ. Պարբերականությունը՝ տարեկան մեկ անգամ

Издается с 1998г. Периодичность - ежегодно

Issued since 1998. Frequency – annual

Խմբագրական խորհրդի նախագահ՝ տ.գ.թ.Մ.Մ.Մինասյան
Председатель редакционного совета: к.э.н. М.М.Минасян
Chairman of the Editorial Board: Ph.D. in Economics M.M. Minasyan

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ. Վ.Մ.Ավանեսյան
Главный редактор: д.и.н. В.М. Аванесян
Editor-in-chief Doctor of History, Professor V. Avanesyan
Խմբագրական կոլեգիա
Редакционная коллегия
Editorial board

1. Ասրյան Ս.Ա., ԼՂՀ ԿԳՍ նախարար – Асрян С.А. Министр образования, науки и спорта НКР - Slava Asryan, Minister of Education, Science and Sport, NKR

2. Արզումանյան Լ.Ս., բ.գ. դ. ՀՀ ԲՈՀ-ի նախագահ - Арзуманян Л.С., д.ф.н., председатель ВАК Армении - Lilit Arzumanyan, Doctor of Philology, Chief of the Higher Attestation Commission of Armenia

3. Սուվարյան Յու.Մ., տ.գ.դ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս –Суварян Ю. М., д.э.н., академик НАН РА - Yuri Suvaryan, Doctor of Economics, Academician of NAS RA

4. Ղազինյան Գ.Ս., ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս – Газинян Г.С., д.ю.н., профессор, академик НАН РА - G.S. Ghazinyan. Doctor of Law, Professor, Academician of NAS RA.

5. Ասրյան Շ.Շ., տ.գ.թ.- Асрян Ш.Ш., к.э.н. – Shushan Asryan, Ph.D. in Economics

6. Բալայան Վ.Ռ., պ.գ.դ., -Балаян В. Р., д.и.н. - Vahram Balayan, Doctor of History

7. Ղազարյան Հ.Ս., բ.գ.թ. – Газарян А.С., к.ф.н. – Hasmik Ghazaryan, Doctor of Philology

8. Ենգոյան Ա.Փ., ք.գ.դ.- Енгоян А.П., д.п.н. - Ashot Engoyan, Doctor of Political science

9. Հարությունյան Վ.Ն. բ.գ.դ., Арутюнян В.Н ., д.филол.н. – Harutyunyan V.N., Doctor of Philology

10.Խանյան Ս.Ա., բ.գ.դ.- Ханян С.А. д.ф.н. - Socrat Khanyan, Doctor of Philology

11.Կարապետյան Ի.Կ., մ.գ.դ./անգլերեն լեզու մասնագիտությամբ/- Карапетян И.К., д.п.н. - Igor Karapetyan, Doctor of Pedagogics

12.Կարապետյան Վ.Ս., հոգեբ.գ.դ., պրոֆեսոր –Карапетян В.С., д.п.н.- Vladimir Karapetyan, Doctor of Psychology

13.Հայրապետյան Է.Ա., մ.գ.թ. /անգլերեն լեզու մասնագիտությամբ/- Айрапетян Э.А., к.п.н.- Eleonora Hayrapetyan, Ph. D. in Pedagogics

14.Հարությունյան Գ.Հ., մ.գ.դ.– Арутюнян Г.Г., д.п.н. - Gregory Haroutyunyan, Doctor of Pedagogics

15.Հովհաննիսյան Լ.Շ., բ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Ованнисян Л.Ш., д.ф.н., член-корреспондент НАН Армении - Lavrent Hovhannisyan, Doctor of Philology, Corresponding Member of the Armenian National Academy of Sciences

16.Մանասյան Ա.Ս., փ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ – Манасян А. С., д.ф.н., член-корреспондент НАН Армении - Alexander Manasyan, Doctor of Philosophy, Corresponding Member of the Armenian Natioanl Academy of Sciences

17.Մարգարյան Գ.Գ. կ.գ.թ., /գիտ.քարտուղար/–Маргарян Г. Г., к.б.н., ученый секретарь - Gayane Margaryan, Ph. D. in Biology, Scientific Secretary

18.Մուսայելյան Հ.Գ., բ.գ.դ., պրոֆեսոր – Мусаелян О. Г., д.ф.н., профессор - Hovik Musaelyan, Doctor of Philology, Professor.

19.Յարամիշյան Վ.Բ., հոգեբ.գ.թ. - Ярамишян В.Б. –к.псих.н. - Yaramishyan V.B., Ph. D. İn Psycology.

ՀՏԴ 82.1/312:313) Գրականագիտություն

ՆԵՐԿԱՆ ԱՊԱԳԱՅԻՆ ԿԱՄՐՋՈՂ ՊՈԵԶԻԱ

Սոկրատ ԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր. *Պոեզիա, կյանք, հրապարակախոսություն, քնարականություն, Հայաստան, Արցախ, անկախություն, գրական ժանրեր, պոեմ, տիրադա, թարգմանություն, արվեստ, բանաստեղծ:*

Ключевые слова*: поэзия, жизнь, публицистика, лиризм, Армения, Арцах, независимость, литературные жанры, поэма, тирада, перевод, искусство, поэт.*

Key words: *poetry, life, journalism, lyricism, Armenia, Artsakh, independence, literary genres, poem, speech, translation, art, poet.*

С. Ханян

ПОЭЗИЯ КАК МОСТ, СВЯЗЫВАЮЩИЙ НАСТОЯЩЕЕ С БУДУЩИМ

В данной статье анализируется шестой том произведений знаменитого поэта Вардана Акопяна, изданный в 2016 году. Отмечается, что своими десятками сборниками В. Акопян весьма способствовал развитию и обогащению армянской поэзии независимого периода. Свидетельствам тому являются и его сборники, переведенные на русский, английский, французский, грузинский, болгарский, персидский, турецкий языки. Поэт неоднократно удостаивался высоких оценок, признающих как талантливого художника.

S. Khanyan

POETRY AS A BRIDGE LINKING THE PRESENT WITH THE FUTURE

This paper analyzes the sixth volume of the works of the famous poet Vardan Hakobyan published in 2016. It is noted that its dozens of volumes V. Hakobyan highly contributed to the development and enrichment of Armenian poetry of independent period. Evidence of this are his books, translated into Russian, English, French, Georgian, Bulgarian, Persian, Persian, Turkish languages. The poet repeatedly received the highest appreciation recognizing him as a talented artist.

Սույն հոդվածում վերլուծվում է ականավոր բանաստեղծ Վարդան Հակոբյանի երկերի 6-րդ հատորը, որը լույս է տեսել 2016 թվականին: Նշվում է, որ Վ.Հակոբյանն իր տասնյակ ժողովածուներով նպաստել է անկախության շրջանի հայ պոեզիայի զարգացմանն ու հարստացմանը, ճանաչվել ոչ միայն հայ իրականության մեջ, այլև համաշխարհային պոեզիայի ասպարեզում: Այդ են վկայում նաև նրա երկերի ժողովածուների թարգմանությունները ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, բուլղարերեն, գերմաներեն, պարսկերեն, թուրքերեն և արժանացել բարձր գնահատականի ու ճանաչվել որպես տաղանդավոր գեղագետ:

Հրապարակի վրա է ականավոր բանաստեղծ Վ.Հակոբյանի երկերի 6-րդ հատորը՝ 21-րդ դարի հայ պոեզիայի նվաճումների տեսականիով: Նրանում ընդգրկված են «Պոեմ իմ մասին կամ՝ 24-ն անց 81 ոտպե», «Ջրի շնչառությունը» ժողովածուները, ինչպես նաև թարգմանություններ համշխարհային պոեզիայի ընտիր նմուշներից:

Գրքի (խմբագիր՝ ակադեմիկոս Սերգեյ Սարինյան) մուտքում բերված է Վ.Հակոբյանի հետևյալ համոզմունքը. «Աշխարհում, բանաստեղծությունից բացի ամեն ինչ բանաստեղծություն է, ահա թե ինչ է պոեզիան»: Դա ապացույցն է այն ճշմարտության, որ Վ.Հակոբյանը կյանքի բանաստեղծ է, որ նա Արարչի հետ հաղորդակցվելու կարողության տեր է, որը շատ քչերին է հատուկ: Այս դիտարկումը մեզ իրավունք է վերապահում ընդգծելու, որ նրա բանաստեղծությունների նույնիսկ վերնագրերը մենկնության կարիք ունեն: Այսպես, իր պոետական վաստակի երգերից մեկը վերնագրված է«Բանաստեղծության փոխարեն»: Բայց այն ամբողջության մեջ ցնցող մի պատկեր է՝ դեռևս չասված, չհոլովված արտահայտամիջոցներով: Նրբանկատ բանաստեղծը միայն կարող է խորհուրդ տալ ոչ թե կենդանի մարդկանց, այլ նահատակներին.

Զոհվածներին կխնդրեի՝ հրաժարվել ծաղիկներից
նրանց, ովքեր
պսակներ դնելու պահին հատուկ նկարահանվում են՝
հուշարձանները դարձնելով ինչ-որ մի տարրն իրենց
քարոզչության[1]:

Ապա խորհուրդն ուղղվում է ռամիկներին, Աստծուն, և առանձնապես հանրությանը.

Երբեք չվստահել նրանց, ովքեր
սարեր են խոստանում անվերջ՝

[1] Վ.Հակոբյան, Երկեր,հ.6, <<Վաչագան Բարեպաշտ>> հրատ., 2016թ., էջ 6:

մոռանալով, թե քանի սար է արդեն մնացել
հայոց աշխարհում[1],

Վ.Հակոբյանի երգերը, սակայն, փաստարկված հրապարակախոսություններ չեն: Դրանք գաղափարահուզական հյուսվածքներ են՝ գեղարվեստական պատկերների բազմազանությամբ ու թարմությամբ: Բանաստեղծը համոզված է, որ պետք է «Փրկել օդը վերահաս ճահճացումից», որովհետև «Ծառը ծառերից դուրս է զգում, որ ինքը ծառ է»:

Վ.Հակոբյանի երգերից մեկը կոչվում է «Հակացանկություն»: Բայց, տեսնենք, թե ցանկությունների ինչ աշխարհ է բացում նա.

Բոլոր ուղղությունները սխալ են, բացի նրանից, որով ծաղիկները հողից բարձրանում են վեր[2]*:*

կամ

Յուրաքանչյուր բառ դիրք է, ոչ թե…ապաստան, Զուրը դաշտի միջով հոսում է այնպես, որ ամեն խոտ զնգում է[3]*:*

«Լռության ծիրանի» բազմաշերտ բանաստեղծության մեջ Վ.Հակոբյանը խոստովանում է.

…Զեմ գնում այն ճանապարհով, որը իմը չէ, ոտքերս սովոր էն միայն արգելքների[4]*:*

Քանի որ արվեստը, այդ թվում և գրականությունը, պայմանական է, ապա նշված խոստովանանքի մեջ պետք է տեսնել որոնումների և գտնումների ճամփաները, որ Վ.Հակոբյանինն են, ուրիշ ոչ ոքի: Վերընթերցում ես տաղանդաշատ բանաստեղծի «Խաչելություն առանց խաչի», «Համաստեղություն ցուլից հետո, երկվորյակից առաջ», «Խաղ», «Ուշացած թուղթ՝ մի աղջկա, որն այլևս չի հիշում», «Հենց այնպես», «Թևերդ՝ շուրթերիս վրա կամ գիշերը՝ գնդասեղի ծայրին» և այլ գործեր, թվում է, թե Վ.Հակոբյանը ոչ թե ուղեկցում է ընթերցողին, այլ դիմավորում է հեքիաթային իմաստունի պես՝ մի դեպքում զգուշացնելով, մյուս դեպքում վստահելով, ամեն դեպքում հնչեցնելով կենսահաստատ իր խորհուրդը:

Վ. Հակոբյանն իր ժողովրդանվեր գործը համարում է ընծա, ընդգծելով.

Լեռան ձյուներից հյուսում եմ հորիզոն: …Խավարից աստղիկներ եմ հյուսում:…Թռչունների երգից հյուսում եմ արշալույս[5]*:*

Անվանի բանաստեղծի երգերը կոնկրետ հասցեներ ունեն: Դրանք Հայաստանն է, Արցախը, Սփյուռքը, դրանց երկնակամարներում հուրհրատող աստղերն են, որոնք շողշողում են հայրենիքի հանդեպ ունեցած կարոտի ու տագնապի, վստահության ու հավատի երանգներով, երկրի սահմանապահը լինելու ցանկությամբ.

«Երկրիս սահմանները ճշտելու համար՝որպես չափման միավոր, Ընտրում եմ սերը … չկա Արցախից ավելի մեծ մի երկիր, Արցախից ավելի հզոր մի հայրենիք»[6]*:*

Վ. Հակոբյանի երգերում բառերը բուրում են մեղրոնով: Նա չի հաշտվում չարի հետ, ընդվզում է, երբ տեսնում է, թե ինչպես՝

Սահմանները հորինում են մարդիկ,
Սահմանապարերի փշերը նույնպես,
և նրանցով բարուրում են հայրենիքները[7]*:*

Թեմաների լայն ընդգրկումով, կոմպոզիցիոն ձևերի ու միջոցների բազմազանությամբ Վ.Հակոբյանը կրկին ու կրկին հաստատում է հին աշխարհի հսկաներից մեկի, գրականագիտության հիմնադիր Արիստոտելի այն խորհուրդը, որ չի հնացել առ այսօր և չի հնանալու երբեք: «Պոետի խնդիրն է,- գրել է նա,- խոսել ոչ թե իրապես եղածի մասին, այլ այն բանի, ինչ կարող է լինել, այսինքն՝ հնարավորը ըստ հավանականության և անհրաժեշտության»[8]: Այս նշանակում է, որ Արիստոտելը իրականության ճշմարտացի, փաստարկած նկարագրությունը համարում է պատմաբանի գործը, այլ ոչ թե՝ արվեստագետի: «Պատմաբանը և պոետը տարբերվում են իրարից ոչ նրանով,- ուսուցանում է նա,- որ մեկը չափածո է գրում, մյուսը՝ արձակ, Հերոդոտի ստեղծագործություններին չափածո ձև տվեք այնուամենայնիվ դրանք կմնան որպես պատմական գործեր, ինչպես չափածոյի, այնպես էլ արձակի մեջ: Բայց պոետը պատմաբանից տարբերվում է նրանով, որ մեկը պատմում է իրապես

[1] Նույն տեղում, էջ 6:
[2] Նույն տեղում, էջ 8:
[3] Նույն տեղում, էջ 9:
[4] Նույն տեղում, էջ 10:
[5] Նույն տեղում, էջ 33:
[6] Նույն տեղում, էջ 39:
[7] Նույն տեղում, էջ 44:
[8] Արիստոտել, «Պոետիկա», Հայպետհրատ, 1955թ., գլուխ իններորդ, էջ 163):

կատարվածի, իսկ մյուսը՝ ամեն հնարավորի մասին: Դրա համար էլ պոեզիան պատմությունից ավելի փիլիսոփայական է և խոր, քանի որ մեկը գործ ունի ընդհանուրի, մյուսը՝ մասնավորի հետ»[1]:

Դժվար չէ նկատել, որ Արիստոտելն ընդգծում է պոեզիայի անխզելի կապը ընդհանուրի հետ: Այսինքը, թեպետ արվեստագետը թեմաները վերցնում է իրականությունից, միևնույն է, որպեսզի այդ նյութը գեղարվեստական երկ դառնա, դրսևորում է իր անհատականությունը, երևակայությունը, ստեղծագործելու աստվածանվեր կարողությամբ:

Այսպես, կրկին դիմենք Վ. Հակոբյանի բանաստեղծությունների փիլիսոփայությանը: Վերցնենք, թեկուզ, նրա «Մարդակազմություն՝ անհատի բաղադրատարրերով» գործը: Երեք մասից բաղկացած այս երկի առաջին և երկրորդ մասերում նա բանաստեղծական պատկերավորությամբ բնութագրում է ՄԱՐԴԸ ԵՎ ԼՈՒՅՍԸ՝ ոչ թե կենսաբանության օրինաչափություններով, այլ բարոյահոգեբանական դրսևորումներով՝ գեղարվեստական պատկերների հյուսվածքով: Սույն բանաստեղծության երրորդ մասը կոչվում է ՓՈՇԻՆ: Ինչից է բաղկացած փոշին մարդկային կյանքի հոսքում.

ՓՈՇԻՆ բաղկացած է թագավորներից ու
բուրգերից, աշխարհի
ամենամեծ զորավարներից, զորքից, ամենաշքեղ
սիրուց ու երազներից,
հարեմներից, հավատարմությունից ու
կուռքերից, տաճարներից, երբեմնի հավերժականից,
մոլորակներից ու ոչնչից, մի խոսքով՝
ՄԱՐԴՈՒՅ ՈՒ ԼՈՒՅՍԻՅ[2]*:*

Այստեղ ողորմի ասենք մեր հանճարեղ Մեծ Լոռեցուն, մեջբերենք նրա պոեզիայի փիլիսոփայությունից մի հատված.

Մենք ամենքս հյուր ենք կյանքում
Մեր ծննդյան փուչ օրից,
Հերթով գալիս, անց ենք կենում
Էս անցավոր աշխարհից:
Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ[3]*:*

Այսպես, բոլոր մեծերը յուրովի ընդհանրացրել են հավերժական թվացող կյանքի փիլիսոփայությունը: Ու ոնց չապրես հոգու ներքին խանդաղատանք, երբ չճանաչված երկրի բանաստեղծը խորն է հասկանում կյանքը և աշխարհի հետ խոսում է անժխտելի օրենքներով: Դեռ ավելին, ի հեճուկս մեր ոխերիմ թշնամիների, նա դիմում է հային հայ պահող Հայաստանին և ի լուր աշխարհի ասում.

Ինչքան անպաշտպան կլինեիր, Հայաստան,
եթե հանկարծ թշնամիներ չունենայիր (չի էլ հնչում՝
անոսոխ հայրենիք), և հիմա որքան անպարտելի ես,
Հայաստան[4]*:*

Միաժամանակ բանաստեղծը գիտակցում է իր (ասել է թե՝ բոլորիս) պարտքը հայրենիքի հանդեպ .

Հայաստան, ինչպես ապրեմ այսօրը, որ այն վաղվա վրիպումը չդառնա[5]*:*

Թե հայ պոեզիայում, թե՝ համաշխարհային, քիչ չեն այն անհատները, որոնց պոետական խոսքը մտահղացումից մինչև ընդհանրացում, հնչում է որպես ասացվածք, որպես թևավոր միտք, որը կարող է ճեղքել դարերի պատնեշները ու սերունդներին հասնել որպես չհնացող դաս ու խորհուրդ: Նման անհատներից է Վ.Հակոբյանը: Բերենք օրինակներ «Ելք» հյուսվածքից.

«Ճանապարհին նա չէ, ով ճանապարհին է, այլ նա, Ով ճանապարհը կրում է իր մեջ…

Դրախտում նա չէ, ով դրախտում է, այլ նա, ով դրախտը կրում է իր մեջ…Ցավի մեջ նա չէ, ով ցավի մեջ է, այլ նա, ով իր մեջ կրում է ցավը»[6]*:*

---

[1] Նույն տեղում, գլուխ իններորդ, էջ 163-164:
[2] Նույն տեղում, էջ 41:
[3] Հ.Թումանյան, երկերի ժողովածու 4 հատորով, Հ.1, «Հայաստան» հրատ.,1969, էջ 185:
[4] Վ.Հակոբյան, Երկեր, հ.6, էջ 47:
[5] Նույն տեղում, էջ 47:
[6] Նույն տեղում, էջ 50:

Հավերժաթև կենսափիլիսոփայության օրինակների յուրովի փնջեր են «Ամեն գիշեր երկնքից մի սպիտակ թել է իջնում», «Վարդը, որ բուսնում է 1000 տարին մեկ, մասիսների ձյունների մեջ», «Ճախրանք», «Առանց տեղանունների», «Տարաժամ» և այլ բանաստեղծություններ:

Վ. Հակոբյանի պոեզիան ամբողջության մեջ ներկայացնում է արդի համարյա բոլոր հրատապ հիմնախնդիրները՝ փիլիսոփայական խորհրդածություններով: Նրանում զուգահեռ խոսք է գնում հայրենիքի, ժողովրդի, գոյամարտի, նահատակության, Սումգայիթի, Հրանտ Դինքի, Ավոյի, Բեկորի, որբացած տղայի, ժողովրդի ցավի ու հույսի, սիրո, ընտանիքի և այլ ավանդական արժեքների մասին: Ճշմարտությունը պահանջում է ընդգծել, որ Արցախյան պատերազմի տարիներին ծնված մեր մանուկների մասին հաջողված գործեր քիչ չեն գրվել, բայց Վ.Հակոբյանի նույն թեմայով գրած երկը միանգամայն թարմ խոսք է՝ բանաստեղծական նովելային գյուտով.

Ներիր,ներիր, զավակս, որ առաջինը
Քո հայրը չի քեզ դիմել
«զավակս » բառով:
Եվ ներիր, որ այլևս երբեք չի դիմելու:
Ներիր, որ ապրելը, առավել ևս՝ մեծանալը
դժվար է ու դաժան: Դիմացիր, խնդրում եմ:
Եվ հիշիր՝
Երջանկություն է, գոնե, ովքեր հասցրել են ծնվել:
Ներիր, որ աշխարհ գալուդ բերկրանքի ճիչը
Իր մեջ ունեցել է, ավաղ,
նույն պահին աշխարհից գնացող հորդ ցավը:
Բայց դու ծնվելու համար սխալ պահ չէիր ընտրել[1]*:*

Վ.Հակոբյանի նրբանկատությունը, զգացողությունը, ստեղծագործական ավյունը արարման պաթոսը, ճախրանքը, ոգևորությունը, հիասթափությունը, լավատեսությունը, ցավը, սփոփանքը, հույսը և այլ բարեմասնություններ, ժողովրդի իմաստասիրության , արյան կանչի, դարավոր փորձի արդյունք են: Կարող ենք նրա հանդեպ կիրառել Մեծ Լոռեցու ընդհանրացումը. «Բանաստեղծը ժողովրդի սիրտն է»: «Հայր մեր»-ից՝ մի մեղեդի», «Բուրգ», «Լուսնային իմ սայթը», «Այժմ»-ը և «Վաղը», «Երեկը շարունակվում է վաղվա հաշվին», «Աշնանային ռեպորտաժ» և այլ գործեր հավաստիացումներն են այն ճշմարտության, որ նրա խորհուրդները Հայոց հազարամյակների նորօրյա, ինքնաբուխ դասեր են: Ասացվածքների թևեր ունեն «Հայրենիքը միակն է, որ չեն մուրում», «Հիշողությունը տարողունակ է ավելի, քան գույները», «Յուրաքանչյուր ծաղիկ թագուհին է ծաղիկների», «Ժամանակի մեջ «վաղը» գոյություն չունի», «Հեռացող յուրաքանչյուր վայրկյան իրենով է սկսում հավերժությունը» և այլ իմաստություններ:

«Պոեմ իմ մասին կամ՝ 24-ն անց 81 ոսպե» գրքի խորիմաստ բանաստեղծություններից մեկը կրում է «Բառերս ոտնահետքեր են, որտեղով մի օր անցել է իմ նախահայրը» վերնագիրը: Երկու մասից բաղկացած այս քերթվածքը պարունակում է մի ամբողջ պոեմի բովանդակություն՝ յուրաքանչյուր տողի ենթատեքստում ունենալով յուրովի մի աշխարհ: Դա բանաստեղծ քաղաքացու հավատամքն է հայրենի ծննդավայրի հանդեպ, որի առջև բացում է սիրտը և շշնջում որդիական իր երախտագիտությունը, ընդգծելով. *«Իմ մանկությունը լիքն է հորս սիրով: Եվ շնորհակալ եմ Մասրուտի հովտից, որ ես հենց այնտեղ եմ ծնվել , ուրիշ տեղ ծնվեի՝ ես չէի լինի ես»*[2]*:* Եվ իր «Ես»-ի կայացման համար նա շնորհակալություն է հայտնում «Թառամնի աղբյուրին», «Գյոլեն տանձենուն», «Սաքունց սարին», «Մեծ քարին», «Խոտհարքների «շնացած» արևին» և այպես շարունակ: Դրանք լոկ տեղանունների թվարկումներ չեն, այլ բանաստեղծի արյան կանչը, հիշողությունը, կարոտը, հպարտությունը, երգի աղբյուրը, աշխարհի հետ խոսելու իր իրավունքը: Դրանք բառի թռիչքաղաշտն են, լույսի տնկարանը: Դրանք աստվածանվեր այն վայրերն են, որտեղ.

«Մանուշակները՝ ճեղքելով ժայռուտները, քարերին վերադարձնում են նրանց կորսված տեսողությունը: Կոշիկներս օտարում են հողը, որին դաջված իմ նախահոր ոտնահետքերը հիշողություն են և ընթացավորում են հորիզոնը: Թեև , համոզված եմ, ծննդավայրս այն բառն է լինելու, որ դառնալու է ինձ ափ հանող իմ միակ նավակը»[3]*:*

Երկերի 6-րդ հատորի առյուծի բաժիններից մեկը հեղինակի «Ջրի հիշողությունը» ժողովածուն է՝բանաստեղծությունների և տիրադների ներառմամբ: «Մանիֆեստ ունայնության» բնաբանում Վ.Հակոբյանը քննարկում է «աշխարհի ամենալավ բանաստեղծության» ծննդի խնդիրը, «որ երբևէ

[1] Նույն տեղում, էջ 55:
[2] Նույն տեղում, էջ 80:
[3] Նույն տեղում, էջ 81-82:

գրվել է կամ, գուցե, պիտի գրվի»[1]: Կատարյալ արվեստի դարավոր ճանապարհը զարդարված է բազում անձեռակերտ հուշարձաններով, որոնց արարողները, այնուամենայնիվ, դժգոհ են եղել իրենց ստեղծածից, արդարացիորեն հաստատելով այն կարծիքը, որ արվեստի բարձունքները անհասանելի են, եթե համոզվեն, որ արդեն կատարյալ արվեստն ստեղծվել է, նշանակում է, որ արվեստը կնքել է իր մահկանացուն: Նման համոզմունքով էլ Վ.Հակոբյանը հերթական անգամ բացել է իր երգասան սրտի դռները ու զարմանալիորեն նկատել, որ ջուրը հիշողություն ունի: Բայց այստեղ «ջուրը» փոխաբերական լայն իմաստով է օգտագործված: Դա մի այնպիսի հիշողություն է, որ բանաստեղծի առջև շատ փակագծեր է բացում, հուշում, որ «Բառերը թռչուններ են, », որ թռչունը «գտնում է իր ճյուղը տիեզերքում, հետո նա գտնում է իր երգը տիեզերքում, հետո ծառը թռչում-գնում է իր ճամփան», բայց կրկին «թռչունը մնում է դարձյալ մենակ», մենակության մեջ լուծելու այն առեղծվածը, թե ինչպես են պարզում «ջրերի տարիքը… լեռների տարիքը… լույսի տարիքը>: Եվ այս առեղծվածային հարցերը քննարկելով, թռչունը «թևերը լայն բացելով…իրեն վերադարձնում է անտառին»: Եվ այստեղ բանաստեղծը ներքին խանդաղատանքով բացականչում է, որ անտառում «Ստվերներն առանձնանում են լույսերի մեջ՝ քանի դեռ անտառի ծառերից մեկը ես եմ»: Սակայն դրանով չի ավարտվում բանաստեղծի խոսքը: Թռչունի ու երգչի աստվածահաճո նմանությունը նոր ելակետով է ընդգծվում նրա երգում.

«Թռչունը կանգնեց իր ճյուղին: Թռչունը երգեց իր երգը: Թռչունը գնաց իր ճամփան: Եվ աշխարհը վայելումն էր նրա արդար, անչափելի ներկայության: Մթնալույս է, իրիկնածես: Մատաղի գառ է արեգակը լեռան վրա»[2]:

Այսպես, «Ջրի հիշողությունը» գրքում էջ առ էջ, պատկեր առ պատկեր Վ. Հակոբյանը գեղարվեստի ամենահաճելի միջոցներով ներկայացնում է իր ասելիքը՝ մերթ «Հայելու առաջ», մերթ իր ձիուն որոնելիս, մերթ բառի և ոչ բառի արանքում տառապելիս, բարձրաձայնելով.

«Երբ բառը ծլում է քո ափի մեջ՝ ափը դարձնելով ամենատաք կետն աշխարհի,քո բառն, ուրեմն, բանաստեղծում է Աստված»[3]:

Վ.Հակոբյանի մտահղացումների արմատները խրված են հողի մեջ, իսկ ճյուղերը լույս են առնում աստղերից, շաղկապելով երկիրը երկնքին, նյութականը՝ հոգևորին, որոնումը՝ հույսին, հույսը՝ ապագային: Նրանցում մարդկային կերպարներ են, որոնց շնորհիվ խոսքը դառնում է անմիջական, զգացմունքային, խոհական, առինքնող: Այդ երգերում նախ բանաստեղծն է, որպես քնարական հերոս, Ասոն ու Գիրոն են՝ իրենց ստվերախաղերով, Գանձասարի զանգերն են, Մեղրագետն է, Ծաղրն ու Ծիծաղն են, Զոհվածի այրին է, Խաչքարն է, իրար ոչնչացնող տերություններն են, Զրվեժն ու Սահյանն են, տխուր և ուրախ մարդիկ են: Եվ ամենուրեք աշխարհի հոգսերով ապրող բանաստեղծը կենսահաստատ է: Նա «Մենության տխուր արծաթը» փառում է «գիշերվա թևին», «Քանդված եկեղեցիներից լսում է մանկական լացի ձայներ», տեսնում, թե ոնց է «Մասրուտի ձորում, հողի մեջ ծխում մի արմատ», բացականչում. «Քո ծիրանավոր թևերի վրա լեզուս համտեսում է արևը… բառերս վերածնվում են գույների՝ վառվող, վառվող, վառվող ու չմարելի…»: Ապա ընդհանրացնում է.

«Ես սիրում եմ հորիզոնը կոռավորել իմ աչքերով, և հեռուն, ուր դու ես, դառնում է իմ գաղտնաբառը, Իսկ ճյունախառն քամին, հակառակ ուղղության մեջ, վարդի թերթեր է բերում ինձ՝ կարմիր, կարմիր, կարմիր ու ….չմարելի»[4]:

Բանաստեղծը նկատում է նաև, որ «Գաղափարը հոգևարքի մեջ է և նյութը շարունակում է ձևավորել մարդուն, ինձ ու քեզ՝ նախապատրաստելով աշխարհի վերջը»[5]:

Կան նշանավոր բանաստեղծներ, որ իրենց տաղանդը դրսևորում են որոշակի թեմաների հոլովմամբ: Վ.Հակոբյանն իրեն թևավոր է զգում թեմաների անսպառ տարածքներում: Նա կյանքի բոլոր շերտերի մեջ ամենատես է, խորհող ու մտորող, հողասեր՝ իր Հաբի պապի պես, որն օգնում է իր պոետ թոռանը հայացքն ուղղել աշխարհին ու խոստովանել. «Ես փաթաթում եմ ոտքերս մշտադալար ճանապարհների երազներով: Նրբանկատությունը Վ.Հակոբյանին հնարավորություն է ընձեռում զգալու «Կարապի ծարավը՝ վերջին երգից առաջ», կազմակերպելու «Բառի մենաթատրոնը», լսել Եսենինին, տեսնելու, թե ոնց է Տոլստոյի գավազան-գայիսոնը զայրագին իջնում այն մի քայլաչափ հողին, ուր կանգնած է Շեքսպիրը և հնչեցնել նորօրյա խոսքի կարևորությունը.

«Բանաստեղծությունը ոչ թե այնտեղ է, ուր է, այլ ավելի հեռու այն վայրից, ուր գտնվում է: Ու խորն է ավելի, ու անվերջ՝ ավելի»[1]:

---

[1] Նույն տեղում, էջ 200:
[2] Նույն տեղում, էջ 202:
[3] Նույն տեղում, էջ 209:
[4] Նույն տեղում, էջ 261-262:
[5] Նույն տեղում, էջ 269:

Վ. Հակոբյանի տեսիլքային պատկերներում վրնջում են հրեղեն նժույգներ, որ իրեն ճանաչում են մանկության տարիներից, ինչպես ինքն է հաստատում, «իրենց մեջքի վրա, վարգ ու վրնջյունով, իրեն հասցնում են «հեռու-հեռավոր հորիզոնները»: «Իսկ հեռու -հեռավոր» այդ հորիզոնները վերացական հասկացություններ չեն, կամարված ծիածաններ են՝ բխած հայրենի եզերքից, *…«Որը բուրում է մեր Մասրուտի բոլոր գույներով, և ձայներ են ականջիս հասնում, որ ես իբրև, դրախտում եմ»*[2]*:*

Սակայն դրա հետ մեկտեղ բանաստեղծը հանգիստ չէ , որովհետև աշխարհը դուրս է եկել իր ծիրից, որտեղ «հրեշտակներից ամեն մեկը » կարող է ծաղիկ մեկնի և «Ում ձեռքից ծաղիկը վերցնես՝ նրա ձեռքով էլ կգլխատվես»:

Եվ ոչ միայն այդ: Այս պատկերի հյուսվածքում ծավալվում է բանաստեղծի հումորը: Նա հորիզոնի երկնակամարից կարոտում է երկրին, որտեղից գետերը բերում են նոր իրադարձություններ.

Եվ ընտրական քարոզարշավի փողփողուն պլակատներ,
Էլ թեկնածուների ինքնագոհ պոզաներով նկարներ,
Էլ պատգամավորական ոսկեփոկ պորտֆելներ,
Էլ «ինքնասպան» զինվորների անդագաղ դիակներ,
Էլ ջրային մեղուզաներ հիշեցնող ամերիկյան պահպանակներ…
Էլ հայ-թուրքական սահմաններ՝ առանց
«բոլորս հայ ենք» պաստառների,
էլ Հիլարի Խանում ու Օբամա, ԵԱՀԿ, Ղարաբաղյան
հիմնախնդիր ու եվրոսեքս… [3]

Բանաստեղծն այս ամենի արդյունքում իրեն զգում է մենակ, բայց ոչ պարտված , այլ աշխարհի խղճի արթնացման ջատագով:

Ճշմարտությունը պահանջում է նշել, որ Արցախում ստեղծվող պոեզիայում առաջին անգամ Վ.Հակոբյանն է ձեռք մեկնել Տիրադա ժանրին՝ արտահայտելով իր կենսափիլիսոփայությունը՝ համոզիչ ու խոհական: Տիրադան (ֆր. tirade-իտալերենից, tirada-ձգողականություն, համառոտ և ուժեղ մենախոսություն է դրամայի մեջ, երկարաշունչ արտահայտություն՝ արտաբերված ոգեշունչ տոնով: Առանձնանում է իր հնչողությամբ, արտաքին հաջողության ակնկալիքով: Տիրադան օգտագործվել է անտիկ դրամատուրգիայում որպես արտայայտչական տարր, որին հատուկ է հրապարակախոսությունը: Այն հնարավորություն է ընձեռում հեղինակին դրսևորելու իր տաղանդի բոլոր կողմերը ու ներկայացնել ժամանակաշրջանի կարևոր հարցերը: Տիրադան վերածնություն է ապրել համաշխարհային արդի պոեզիայում:

Վ.Հակոբյանի «Տիրադներ» շարքը խոսուն վկայություն է այն ճշմարտության, որ Աստծո հրամայականով ծնված բանաստեղծն իրավունք չունի ժամանակի շունչը չդառնալ, լռել այն պահերին, երբ հրամայում են լռել, չգրել այն ժամանակ, երբ ստիպում են՝ չգրել: Հենց այս իրողության ներկա դրսևորումների փիլիսոփայական արձագանքներն են բանաստեղծի «Հիմարության առիթմիա», «Բառը հասարակածի վրա», «Սուրբ սատանա», «Գրառումներ նշանի տակ», «Երկու միլիոն զոհերի ձայնով», «Լույսի հեղինակը» ստեղծագործությունները: Բարձրաձայնելով, որ «Հիմա սիրո ժամանակը չէ», բանաստեղծը ժամանակակից կյանքը ներկայացնում է որպես հակադրամիասնությունների անկասելի ընթացք: Նա խիստ քննադատում է հասարակության անունից հանդես եկող այն գործիչներին, ովքեր իրենց տունը դարձնում են «օֆիս», հանուն բիզնեսի », «Իրենց թույլ են տալիս անել այն ամենը, ինչ կամենում են», չի հաշտվում այն շերտավորումների հետ, որ գոյացել են անկախության շրջանում, երբ տեսնում է« մարդկանց խմբերը բազմազան՝ հարուստներ, աղքատներ, մուրացողների հոծ զանգվածներ, օլիգարխներ, դզող-փչող չինովնիկներ»: Նա չի շրջանցում մարդու անունից հնչող այն մարդասիրական կոչերը, որոնք, ցավոք, վերածվում են մարդուն ոչնչացնելու հազար ու մի միջոցի: Ու բերում է դրանցից մի քանիսը. «արհամարհել, սովի մատնել , նսեմացնել, չլսել, զրկել, ճամփան փակել, խլել խոսելու իրավունքը, կեղծ սիրով փայփայել, ընտրակաշառքով սնել, բռնանալ, խոստանալ ու չանել, բերանը մեղրով փակել»[4]:

Գրելով հասարակական ու անհատական այս արատների մասին, բանաստեղծը սակայն չի հուսալքվում, աշխարհի ապահով գալիքի հավատով հայտարարում է.

[1] Նույն տեղում, էջ 277:
[2] Նույն տեղում, էջ 278:
[3] Նույն տեղում, էջ 281:
[4] Նույն տեղում, էջ 350-356

«Ես գնում եմ՝ աշխարհի բոլոր մարդկանց հավաքելու արեգակի շուրջ Մի պահ բոլորդ ցած դրեք զենքերը, մի պահ ոչ մեկն արյուն չթափի, թող երկնքում կանգնեն ռմբարկուները. հայտարարվում է ՍԻՐՈ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԱՅՐԿՅԱՆ»[1]:

Վ.Հակոբյանի Տիրադների շարքը ժամանակաշրջանի հասարակական կյանքի սոցիալական, քաղաքական, բարոյահոգեբանական դրսևորումների գեղարվեստական մնայուն վավերագրություններ են: Ինչ վերաբերում է «Երկու միլիոն զոհերի ձայնով» երկին, կարելի է այն որակել որպես մեր ժողովրդի ցավի ճիչը աշխարհին ներկայացնող կարևոր մի գործ՝ թշնամուն ճանաչելու , համաղմբվելու,ազատ և անկախ ապրելու կոչով:

Տիրադների հակոբյանական շարքը պոեզիայի փիլիսոփայության բազմերանգ ծիածան է, բազմիմաստ մատյան՝ ուղղված գալիք սերունդներին:

Համաշխարհային պոեզիայի զարգացման ու հարստացման ուղին հարուստ է առեղծվածային երևույթներով: Այն առաջին հերթին ժխտումն է հաճախակի հոլովվող այն կարծիքի, ըստ որի, բանաստեղծները դադարում են արարելուց 50-ը լրանալուց հետո:

Այս մտացածին կարծիքը դարերի ընթացքում ժխտել են աստվածաշնորհ գեղագետները: Այսօր, կարող ենք նշել նաև Վ. Հակոբյանի օրինակը, որի ստեղծագործական ուղին գնալով հրաշքներ է գործում: Վստահորեն կարող ենք նշել, որ հայոց պոեզիան շարունակում է իր զարգացման թռիչքները նաև չճանաչված երկրի ամենուրեք ճանաչված բանաստեղծը՝Վարդան Հակոբյանը, որի ընտրանիները թարգմանվել են ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, վրացերեն, բուլղարերեն, գերմաներեն, պարսկերեն, թուրքերեն և արժանացել բարձր գնահատականի:

Անվանի բանաստեղծներն իրենց նկատելի նպաստն են բերում նաև թարգմանության ասպարեզում: Այդ առումով կարող ենք ընդգծել, որ Վ.Հակոբյանը շարունակում է հայ դասականների, առանձնապես Ե.Չարենցի, Ն.Զարյանի, Պ.Սևակի,Գ.Էմինի ավանդույթը: Այդ են վկայում նրա բարձրարվեստ թարգմանությունները Ուոլթ Ուիթմենից, Եզրա Փաունդից, Հերման Հեսսեից, Կոնստանտին Բայլմոնտից, Սթիվեն Կրեյնից, Կլոտ Էստեբանից, Մարկ Ստրենդից, Եվգենի Կուպրինովից և Ժան Սիից:

Ավանդույթը շարունակվում է… Հայոց ազգային պոեզիան համամարդկային անդաստան է մղվում նաև Դիզափայտի օրհնանքով հասակ նետած, Աստծո աջի զորությամբ արարող, տաղանդաշատ գեղագետ Վարդան Հակոբյանի շնորհիվ:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Սոկրատ Խանյան-բ.գ.դ.,պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ, ԱրՊՀ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., դոցենտ Հ.Ղազարյանը:

[1] Նույն տեղում, էջ 352:

ՀՏԴ 808(09) Գրականագիտություն

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ա.ԱԹԱՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա.Յու.Սարգսյանը հետազոտական աշխատանքի անուրանալի ձիրքով,բանագիտական աշխատանքին հատուկ հմտությամբ, ստեղծագործաբար յուրացնելով Արցախի ժողովրդական բանահյուսության մեջ իրենց հետագիծը թողած բանահավաքների փորձը, հավաքեց, ընդհանրացրեց և նորովի դասդասեց հայ ժողովրդի բանավոր ստեղծագործության հազարամյա գանձերը՝ նոր աստիճանի բարձրացնելով Արցախի ժողովրդական – բանագիտական մշակույթը:

Բազմիցս առնչվելով ժողովրդական բանահյուսության բովանդակության, արվեստի առանձնահատկությունների, հայ վիպական ու քնարական բանահյուսության ընդհանուր ոգու և ոճի քննությանը՝ բանագետը փաստական հարուստ նյութ է ժողովել գրքի՝ համապատասխան ժանրն ու տեսակը ընդգրկող գլուխներում, որոնց նախահիմքը հեղինակի մի շարք գրքերն ու հոդվածներն են և ապացուցում են անգիր բանարվեստի՝ տվյալ ժողովրդի հնօրյա ազգային հավատալիքներին և ավանդույթներին կապվածությունը:

<<Արցախի բանահյուսությունը>> ընդգրկում է Արցախի ժողովրդի դարերով ստեղծված և դարերի խորքից եկող ավանդույթների, զրույցների, հեքիաթների, երգերի, առած-ասացվածքների և այլ ժանրերի գիտականորեն համակարգված ժառանգությունը՝ ներածական ընդարձակ և խորիմաստ վերլուծություններով ու հետազոտությամբ: Ակնհայտ է, որ հեղինակի նպատակը ոչ միայն ընթերցողի գեղարվեստական պահանջների բավարարումն է, այլև նրան համապատասխան պատմաաշխարհագրական, կենցաղային, սոցիալական, աղբյուրագիտական և այլ բնույթի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելը: Գրքի գիտական արժեքը համալրվում է ծանոթագրություններով, բառարանով, անձնանունների և տեղանունների, մատենագիտական ցանկերով: Այն ոչ միայն բանահյուսական նյութերի ժողովածու է, այլև յուրօրինակ գիտահետազոտական աշխատանք, որը վկայում է բանահավաք-բանասերի հստակ նպատակադրման, վերլուծական մտքի, բանասիրական հմտությունների մասին:

Ժողովածուի նյութերի նպատակային դասակարգումը խոսում է նաև հեղինակի ճաշակի, ինքնատիպ գրելաոճի, ժողովրդական բանահյուսության ճանաչողական ու պատմական բնույթի հստակ ընկալման մասին:

Գիրքը Արցախի բանահյուսության առանձին ժանրերի գիտական ուսումնասիրություն է, որը լրացվում է տեքստաբանությամբ ու աղբյուրագիտական որոշակի ընդհանրացումներով: Բանագետի՝ օրինաչափությունների արժեք ունեցող հավաստումները բխում են իր իսկ հեղինակի հավաքած, ձեռքի տակ եղած նյութերի բովանդակության, ձևի, ժանրային առանձնահատկությունների մանրակրկիտ ուսումնասիրությունից: Յուրաքանչյուր հայեցակետ հիմնավորվում է՝ քննության նյութ դարձնելով տարբեր տեսակետները՝ կապված Արցախի բանահյուսության հավաքման, գրառման ու տարածման շնորհակալ գործի հետ:

Ժողովածուում ընդգրկված են 1992-2014թթ. ընթացքում հողինակի հավաքած բանահյուսական նյութերը՝ ըստ նրանց ժանրային նկարագրի և առանձնահատկությունների: Երեք բաժիններում ամփոփված են վիպական, քնարական և ասույթաբանական բանահյուսության բազմաթիվ նմուշներ: Աշխատանքն ունի կառուցվածքային հետաքրքիր և կանոնիկ ձևավորում՝ նյութերի թվի, քանակի, բնագրային համարների, վերնագրերի, բանասացների անուն ազգանունների և այլ մանրամասնությունների և արժեքավոր աղբյուրների բնութագրումով ու ներկայացմամբ:

Ակնհայտ է գրքի գիտական ուղղվածությունը, մանավանդ , որ այն ոչ միայն Արցախի բանահյուսության հավաքման ու գրառման պատմությունն է, այլև նյութերի բանագիտական վերլուծությունն ու Ղարաբաղի բարբառի հնչունաբառաքերականական օրինաչափությունների բացահայտումը, ինչին, թերևս, բանագիտության մեջ քիչ է ուշադրություն դարձվել:

Ա. Սարգսյանը, կարևորելով Արցախի բանահյուսության հավաքման գործընթացում իրենց լուման ներդրած բանահավաքների ստեղծած արժեքները(Մ. Գրիգորյան-Սպանդարյան, Բ. Ղազիյան, Ա. Ղազիյան, Մ. Առաքելյան, Մ.Մխիթարյան, Մ.Օհանջանյան, Լ. Հարությունյան, Ռ. Ղահրամանյան), իրավացիորեն նշում է այն հանգամանքը, որ հաճախ են անտեսվել Ղարաբաղի բարբառի կամ կոնկրետ խոսվածքների յուրահատկությունները, շատ հաճախ նկատելի են բարբառային օրինաչափությունների աղավաղումներ:

Բոլոր բանահավաքներն էլ հիմնականում <<առաջնորդվել են բանահյուսական ժառանգությունը ընթերցող լայն շրջաններին հասու դարձնելու սկզբունքով>>:

Գիտականորեն հիմնավորելով իր դիտարկումները, Ա. Սարգսյանը գրքի առաջաբանում պարզաբանում է աղավաղումները ծնող պատճառները: Ողջունելի է գրառված նյութերում բարբառային տառադարձության պահպանումը, ինչը հնարավորություն է տալիս տվյալ ժանրը պատկերացնել տեղի և խոսվածքի հստակ համապատկերում:

Առաջնորդվելով այն սկզբունքով, որ յուրաքանչյուր բանահյուսություն իր ժողովրդի դիմագիծն է, հայրենիքը, միջավայրը, բնավորությունը, կենցաղը, և վերջապես՝ ազգային ոգին, Ա. Սարգսյանը բավականին շնորհակալ գործ է կատարել՝ ներկայացնելով երբեմն նույն բնակավայրի տարբեր բանասացների, անգամ նույն բանասացի հաղորդած տարբեր նյութերում նկատված արտասանական զուգաձևությունները: Բացատրությունները հենվում են ոչ թե կռահումների կամ մոտավոր եզրահանգումների, այլ կոնկրետ նյութի գիտական ուսումնասիրության, քննության և համապատասխան դատողությունների վրա: Բանահյուսական ժանրերի դասդասումը տրված է պատմականորեն զարգացման համապատկերում՝ շեշտադրելով դրանց թե ճանաչողական, թե գեղարվեստական արժեքը: Գիրքը ազգագրական, բանահյուսական բազմաթիվ նյութեր է պարունակում հայրենի բնաշխարհի, Արցախի բնակավայրերի, ժողովրդի մեջ արմատացած սովորույթների, հավատալիքների, պաշտամունքի զանազան առարկաների ու երևույթների հետ կապված:

Գիրքը անվերապահորեն կարելի է համարել նաև Արցախի բարբառի համակողմանի վերլուծություն՝ լեզվական տարրերի, տարբեր շերտերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ:

Բանասիրությամբ զբաղվողների համար ուղղակի սեղանի գիրք է <<Արցախի բանահյուսությունը>>՝ նոր նյութերով համալրված, մնայուն արժեք ունեցող աշխատություն , որը և վկայում է հեղինակի կողմից ժողովրդական բանահյուսության հասարակական դերի ու գիտական արժեքի գիտակցումը:

Երիցս ճշմարիտ էին հին հույները, երբ Ապոլլոնի տաճարի ճակատին գրել են <<Ծանիր զ քեզ>> արտահայտությունը:Յուրաքանչյուր արցախցի ինքն իրեն ավելի լավ ճանաչելու համար պետք է ուսումնասիրի իր ժողովրդի բառ ու բանը, որովհետև մշակույթը սկսվում է ազգային բանարվեստից, իսկ ազգային ոգին ազգային երկերում է ընդգծվում: Բոլոր ժամանակներում էլ բանահյուսության հավաքման ու ուսումնասիրության խնդիրները միաձուլվել են ժողովրդի ինքնաճանաչման և նրա զարգացման պատմական ուղու կարևորագույն խնդիրների հետ:

Աշխատությունը Արցախի բանահյուսության հրաշք գանձարանի մասին է և ամբողջական պատկերացում է տալիս բանագիտության անցած պատմական ուղու, նշանավոր բանահավաքների վաստակի, բանահյուսական ժանրերի ծագման, զարգացման, գիտական անուրանալի արժեքի մասին:

Մի շարք առումներով արժեքավոր այս գիրքը Ա, Սարգսյանի արցախասիրության և անմնացորդ նվիրվածության առհավատչյան է, հմուտ բանասեր-բանագետի տարիների տքնանքի արդյունքը, որը նորովի կարժևորի Արցախի բանահյուսության ճանաչողական-դաստիարակչական բնույթը:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ա. Աթայան, հայ գրականության և լրագրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.թ.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.071 Գրականագիտություն

ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1960-1980-ԱԿԱՆ թթ.ՀԱՅ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *կորուսյալ հայրենիք, մտահայեցողություն, բնաշխարհիկ տեսիլք, հոգևոր պատմություն, հեռազգայություն, կարոտաբույր, կարոտականչ, կարոտախաղք, կարոտագույն, կարոտավառք, խոհափիլիսոփայություն, խաչելություն, հարություն:*

Ключевые слова: *потерянная родина, настороженность, земное видение, духовная история, признание, тоска, зов, привкус ностальгии, философичность, распятие, вознесение .*

Keywords: *lost homeland, alertness, earth vision, spiritual history, recognition, longing, the call, taste of nostalgia, philosophy, the crucifixion, the ascension .*

Н. Аванесян

ХУДОЖЕСТВЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ОБРАЗА ПОТЕРЯННОЙ РОДИНЫ В 1960-1980 гг.

В статье рассматриваются патриотические произведения В. Давтяна, С. Капутикян, Г. Эмина: В поэзии В. Давтяна описан образ родного края, который ассоциируется с горящим, но не сгорающим терновым кустом – неопалимой купиной. В поэзии С. Капутикян признание в любви и чувство страдания выражаются посредством различных психологических оттенков: это и чувственная страсть, и душевное умиротворение, и могучее , сравнимое с камнем, противостояние. Лиризм поэзии Давтяна противопоставлен мощности и жесткости историко-философских стихотворных произведений С. Эмина.

N. Hovhannisyan

ARTISTIC TRENDS OF THE IMAGE OF THE LOST HOMELAND IN 1960 TO 1980

The article discusses the Patriotic works of V. Davtyan, S. Kaputikyan, Emin: In the poetry of V. Davtyan described the image of the native land in which is associated with burning, but not burnt thorn Bush . In the poetry of S. Kaputikyan Declaration of love and a sense of suffering are expressed through a variety of psychological shades: sensual passion, and peace of mind and the opposition and powerful comparable to stone. The lyricism of Davtyan's poetry is opposed to the power and stiffness of the historical and philosophical poetry of S. Emin.

Հոդվածում քննվում են Վ. Դավթյանի, Ս. Կապուտիկյանի, Գ. Էմինի հայրենասիրական ստեղծագործությունները: Վ. Դավթյանի պոեզիայում բնաշխարհիկ մանրամասներով ամբողջացող ծննդավայրի տեսիլքը բնապատկերայինից վեր հոգեաշխարհային վիճակ է, որ խորհրդանշվում է աստվածաշնչյան անկեզ մորենու գաղափարանիշով: Սիրո և ցավի խոստովանությունը Կապուտիկյանի պոեզիայում արտահայտվում է հոգեբանական տարբեր երանգներով. դա մերթ զգայական վառք ու կիրք է, մերթ գերագույն պաշտամունք և հոգեկան ներքին խաղաղություն, մերթ քարեղեն հզոր դիմակայություն: Քնարական մեղեդայնությամբ առանձնացող Դավթյանի պոեզիային զուգահեռ նշանավորվեցին Էմինի ջղուտ, ասքային բնույթի բանաստեղծությունները՝ խոսքի հուժկու հանդիսավորությամբ, հրապարակային հզոր կրքով, պատմափիլիսոփայական տարողությամբ:

1960-1980 թթ. հայ պոեզիայում ցեղասպանության և պատմական հայրենիքի կորուստի գեղագիտական զարգացման ընթացքը ձևավորվում էր անհատական յուրահատկություններով և գաղափարական առանձնահատուկ շեշտադրումներով: Նախորդ տարիների գրական ընթացքին բնորոշ խոհազգայական շրջապտույտը տեղի է տալիս՝ պայմանավորված և՛ ժամանակաշջանի գաղափարաքաղաքական կենսոլորտով, և՛ ստեղծագործ անհատին ներհատուկ հատկանիշներով: Կորուսյալ հայրենիքի գեղագիտական ճանապարհին այս շրջանում նշանավորվեցին Վ. Դավթյանի «Անկեզ մորենի», «Երկիր գաղտնարան», «Հայերգություն», «Ռեքվիեմ», «Բայց ծնվեցի», Գ. Էմինի «Ես հայ եմ», «Ա~խ, այս Մասիսը», «Սասունցիների պարը», Ս. Կապուտիկյանի «Տպավորություններ սփյուռքից», «Արարատյան համանվագ», Մ. Մարգարյանի «Արարատյան», «Սփյուռքի բարեկամներիս», Ռ. Դավոյանի «Ռեքվիեմ» և այլ պոեմներ ու շարքեր:

Վ. Դավթյանի պոեզիայում կարոտի չմոխրացող ապրումը վերածվում է կոնկրետ մտահայեցողության՝ վերածվելով կորուսյալ ծննդավայրի բնաշխարհիկ տեսիլքի: «Հուշը», «Կարոտը», «Տեսիլքը» ենթախորագրերով բանաստեղծը եզրագծում է հոգևոր պատմության

սկիզբն ու ընթացքը: Բնաշխարհիկ մանրամասներով ամբողջացող ծննդավայրի տեսիլքը բնապատկերայինից վեր հոգեաշխարհային վիճակ է, որ խորհրդանշվում է աստվածաշնչյան անկեզ մորենու գաղափարանիշով: Վառվող, բայց չմոխրացող անկեզ մորենու պատկերը «Աստվածաշունչ»-ում խորհրդանշում է իսրայելցիների ճակատագիրը, որոնք գերության մեջ են, բայց պետք է գոյատևեն անհրաժեշտաբար:

Ծննդավայրի հեռազգացողությունը վերականգնում է բնաշխարհի շարժումը, բույրը, ձայնը, գույնը, դառնում մանրապարկերներով որոշակիացող գեղագիտական մի համապատկեր: Բնաշխարհիկ հատկանիշներով ամբողջացող ծննդավայրը միաձուլվում է քնարական հերոսի կենսագրությանն ու ճակատագրին: Բանաստեղծի հոգևոր դարձը դեպի ծագումնաբանական սկիզբ միաժամանակ իր՝ որպես ծննդավայրի իրական և ոգեղեն մասնիկի ինքնավերագտնումն է: Բայց նախաստեղծ արմատներին տեսիլային դարձը ցավին ցավ է ավելացնում, կրկնապատկում կորստի ներքին զգացողությունը. «Այդ աստղային պատրանքից Ցավիս մեջ ցավ է կաթում»: Զգացողությունների կրկնապատկերները զուգորդվում են խոսքի կրկներգերով, որ նպաստում են պատկերի ներքին կշռույթին, զգայական լիցքերին, բառ ու բանի եղանակավորումին: Խոսքի գեղագիտությունը Դավթյանի պոեզիայում առանձնանում է նաև բնապատկերում առկա բույրի, գույնի, ձայնի, շարժումի հատկանիշներով: Բնապատկերի բույրի, գույնի, ձայնի, շարժումի գեղագիտությամբ Դավթյանի բանարվեստը համադրելի է Սահյանի բնաշխարհիկ արվեստին, սակայն եթե Սահյանի դեպքում բնապատկերը առարկայական է, Դավթյանի դեպքում ներհայեցողական է: Սահյանի ծննդավայրի գեղագիտությունը տեսածի ու զգացածի խտանյութ է, Դավթյանինը՝ երևակայության և հեռազգայության: Սակայն ծննդավայրի կորստի ցավը չի բերում մռայլագին պատկեր-ապրումներ, ընդհակառակը՝ Դավթյանի պոեզիայի քնարական բաղադրիչներն են արևը, շողը, ասուպը, աստղը, որոնց լույսով են ճառագում հայրենի հեռավոր եզերքները: «Ամեն բանաստեղծ մի խորհրդանիշ ունի աշխարհը տեսնելու, ընկալելու, կշռելու, չափելու: Վահագն Դավթյանի այդ խորհրդանիշը լույսն է»[1] ,- նկատում է Հ. Սահյանը:

Բնաշխարհի պատկերային բազմաձայնության հետ Դավթյանի պոեզիայում ի հայտ է գալիս բնաշխարհիկ բազմաձայնությունը, որ մերթ հորովել է ու ծիծաղ, մերթ՝ խոլ գոռոց կամ անեծքի փոխարկված աղոթք. «Սարավանդի վրա՝ հին ակոսներն ի վար// Հորովելն է հողոտ դեռ թպրտում շվար:// Որձաքարե անձավն իր կապույտը խնկում,// Ինչ -որ կորած մանկան ծիծաղով է զնգում…»: Այս ձայներն ի վերջո միաձուլվում և վերածվում են հասուն կանչի, ծննդավայրի կանչի, որ առավոտի հետքերով տանում է քնարական հերոսին: «Նա հմուտ, նուրբ վարպետ է բնությունը գրով նկարելու գործում»[2] ,- գրել է Գ. Մահարին

Լույսը՝ որպես կարոտի տրամադրություն, արևը՝ կարոտի տաքություն, կանչը՝կարոտաձայն, կապույտը՝կարոտագույն, շարժումը՝ կարոտախաղք, որոնցով պատկերանում են և՛ ծննդավայրը, և ծննդավայրից բռնահատված մարդու ինքնությունը: Ծագումնաբանության ակունքների տենդագին ապրումների մեջ առանձնացող «Թե հրաշքով ճամփաս տանի» բանաստեղծությունում որոնումի հեռապատկերը առաջ է մղվում ենթագիտակցության խորքերում պահված ծննդավայրի բույրի և համի ներզգացողությամբ, ընդ որում՝ բանաստեղծի և ծննդավայրի ժառանգորդական կապը դրսևորվում է կայուն ձևերով ու վիճակներով.

Թե հրաշքով ճամփաս տանի
Դեպի Եփրատ ու մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
Հայրենական փոքրիկ իմ տուն…
Եվ օդի մեջ, ոլորտի մեջ,

[1] Հ. Սահյան, Լույսի խորհուրդը, Վ. Դավթյան, Լույսն իբրև հաց, Ե., 1980 :
[2] Գ. Մահարի, Անցողիկն ու հավիտենականը: Վահագն Դավթյանի հիշատակին, Ե., 2005:

Հովերի մեջ՝ լուսաբացի
Ես կգտնեմ բույրերը տաք
Մեր տան ծխի ու մեր հացի…

«Անկեզ մորենի» ժողովածուի համար Դավթյանը բնաբան է դրել Նարեկացու աստվածորոնման տարակույսի տողերը. «Մի լիցի ինձ// Երկնել և ոչ ծնանել…// Ամպել և ոչ անձրևել,// Ընթանալ և ոչ հասնել»: Բնաբանի մեջ առկա կորուսյալ հայրենիքի վերագտնման տարակույսը, որ ամբողջ ժողովածուի ներքին տրամադրությունն է, մնում է անորոշ, ինչպես այրվող, բայց չմոխրացող ծննդավայրի խորհրդանիշը՝ անկեզ մորենին: Դավթյանը գրեց նաև հայրենի երկրի ճակատագրի մտորումներն ի մի բերող շարք՝ «Երկիր գաղտնարան»: Նախորդ շարքերի կարոտը հասունանալով վերածվում է մտորումի, պատկերի մեջ գերիշխող է դառնում խորհրդածությունը, զգայածին պատկերներին փոխարինելու են գալիս խոհածին պատկերները: Խոսքի կառուցվածքային չափերը վերափոխվում են՝ ձեռք բերելով նոր ձևաչափ.

Երկի՛ր, քարի մոլուցք ու մոլեգնած դու ջուր…
Աստծուն խոյահարող լեռան քարե եղջյուր
Ու զոջացող վիհի քարե ապաշխարանք…

Տառապանքի, ցավի մոտիվները գնալով ուժգնանում են, նոր ծավալներ ընդգրկում՝ դառնալով լայնաշունչ պոեմների նյութ: «Բայց ծնվեցի» պոեմում քարե տառապանքի բնապատկերային աշխարհընկալումը նոր խորքեր է բացում.

Ու ժայռեր կան, որ կարծրացել անարտասուք
Եվ աչքերում՝ ամեն մեկը մի քարանձավ,
Պահել մորմոք, պահել են ցավ
Ու դարձել են խոսող քանդակ…

Հայաստանի ճակատագրի խորհրդածություններն ի վերջո հանգում են քրիստոնեական աշխարհայացքի վերջնակետին, որ հարությամբ ավարտվող խաչելության հոլովույթն է. «Դու խաչելության, ցավի, թախծության// Եվ հրաշալի ու մեծ հարության// Անվերջանալի արարողություն…»: Ցեղասպանության հիշողությունը 1977թ. Հալեպ տանող ճանապարհին առարկայանում է Դեր Զորի անմիջական տպավորությամբ. հոգեհանգստի սպասող եղեռնազարկ ժողովրդի հիշատակին Դավթյանը գրում է «Ռեքվիեմը».

Դեր Զորի քամին
Մանկան ոսկորից սրինգ էր սարքել
Եվ արշալույսի խաղաղության մեջ
Սուլում էր մահվան անմահ նվագներ:
Սրինգն էր սուլում
Ու տեսիլներ էր կախում լազուրում…

Հայրենիքի և բանաստեղծ որդու ցավի և ճակատագրի միաձուլվածքը այսպիսի գեղարվեստական հզոր պատկերի հիմնանյութ է դառնում. «Գնում եմ դեպի շիրիմդ հսկա,// Որ ավազներին ընկնեմ ծնկաչոք,// Որ լռեմ այնտեղ, // Քարանամ այնտեղ,// Որ խաչքար դառնամ// Իմ մարմնի խաչով…»:

Քնարական մեղեդայնությամբ առանձնացող Վ. Դավթյանի ծննդավայրի պոեզիային զուգահեռ նշանավորվեցին Գ. Էմինի ջղուտ, ժամանակային ընդգրկումների խորհրդածություններով առանձնացող ասքային բնույթի բանաստեղծությունները: «Էմինի քնարական հերոսը,- նկատում է Դ. Գասպարյանը,- անձնավորում է հայի հավաքական կերպարը»[1]: Խոսքի հուժկու հանդիսավորությամբ, հրապարակային հզոր կրքով, պատմափիլիսոփայական տարողությամբ զուտ էմինյան ընդհանրացում է «Ես հայ եմ» բանաստեղծությունը::

Ես հա՛յ եմ. հին, ինչպես լյառն այս բիբլիական,
Թա՛ց են ոտքերս դեռ ջրհեղեղի ջրից,

[1] Դ. Գասպարյան, Հայ գրականություն, գիրք 3, Ե., 2007, էջ 75:

Իմ սուրբ հողն է տեսել Նոյն առաջին անգամ,
Բաբելոնյան Բելը՝ սատակել իմ սրից:

Մասիսը Էմինի պոեզիայում կորուսյալ հայրենիքի խորհրդանիշից վերաիմաստավորվում է որպես ազգային ոգու և գոյապահպանման այսպիսի քարակոփ պատկերի հիմնանյութ.

Ես հա՛յ եմ. հին, ինչպես լյառն այս Արարատյան,
Հազար տեգ է բախվել իմ վահանին ահեղ,
Փշրել եմ ես սակայն ամեն սուր ու պատյան
Եվ լեռներիս նման գլուխս վեր պահել:

Մասիսերգությունը Էմինի պոեզիայում չհասավ տարերային այն զգայաչափին, որով հատկանշվում է Ծիրազի արարատապաշտությունը: Էմինի մասիսերգության հիմնաշաղախը ներքին խորհրդածությունն է. Մասիսը նրա պոեզիայում նախ և առաջ խոհապատկեր է, նաև՝ շարժապատկեր՝ հարափոխ ու կենսանորոգ: Մասիսի շուրջ խոկն ու խորհրդածությունը, հոգևոր ներքին հաղորդակցությունը ի վերջո վերածվեցին բանաստեղծական կուռ կառուցվածքի՝« Ա՛խ, այս Մասիսը » շարքի.

Կանգնել ու անթարթ իրա՛ր ենք նայում
Ես ու իմ լեռը.
Հավատն,-ասում են,- լեռնե՛ր է շարժում.
Իմ հավատից էլ մոլեգին հավա՞տ,-
Որ Նոյան հայտնի ջրհեղեղի պես,
Նրա գագաթն ու լանջն է ողողում…
Եվ, սակայն, ավա՛ղ,
Լեռն իր տեղումն է,
Իսկ ես- իմ տեղում…

Ազգային պատմության էմինյան վերաիմաստավորման խոհապատկեր է «Մենք» եռամասնյա բանաստեղծությունը: «Անժողովուրդ հող», «Անհող ժողովուրդ» խոհաքննությանը հաջորդում է գալիքի հաստատակամ հեռապատկերը.

Մենք կմիանա՛նք,
Մենք կամբողջանա՛նք,
Կգտնե՛նք մի օր
Լրի՛վ դառնալու
Հնարն անհնար…

Ազգային պատմության պոետական ընկալմանը զուգորդվում է ազգային ինքնագիտակցության իմաստասիրությունը. «Մենք փո՛քր ենք, այո,// Ձեզ ո՞վ էր ասում// Մեզ սեղմե՛ք այնքան,// Որ մենք ստիպված… ադամանդ դառնանք… »:

Պոետական արվեստի և ստեղծագործական ներքին ոգու արժեկշռով Էմինի ստեղծագործության բարձրակետը «Սասունցիների պարը» պոեմն է, ուր գեղարվեստական ինքնարտահայտման բազմաձևության են հասնում ազգային մաքառման հերոսական ոգին, ծննդավայրի կորստի ցավը: Տողի ներքին ռիթմը, կրկնաբերումները, լեռների ուսին թնդացող Սասնա խրոխտ պարեղանակի հնչեղ, առարկայական պատկերը ուժգնացնում են պոեմի ոգեղեն ներգործությունը: Էմինի պոեմի և 1930-ականներին գրված Բակունցի «Ծիրանի փող»-ի ընդհանրություններն ակնհայտ են՝ գաղափարական բովանդակությամբ, բազմաձայնության ներքին ակորդներով, «վերադարձի և վերջին հույսի հնչյուններով»:

Եվ Արագած լեռան գոգին
Զարթնե՛ց կրկին Սասնա ոգին…
Եվ Սասունը նորի՛ց պարեց,
Ոտքը զարկեց, ձեռքով արեց,
Եվ նույն զուռնան, որ հնչում էր հին տան բակում,
Հնչեց հիմա ամեն գյուղում ու քաղաքում…

Սասունցիների պարը պոեմում խորհրդանշում է էրգրի պատմությունը և ծննդավայրից բռնագրկված արևմտահայության ոգին: Պարապատկերի ներքին ռիթմը աստիճանաբար ուժգնանում է՝ երևան բերելով արդար վրեժի, համազգային անկատար իղձի, համամիասնության և հայրենիքի ազատագրման ոգեղեն ասքը: Էմինի պոեմի և Բակունցի պատմվածքի «Յարխուշտայի» պատկերային առանձնահատկությունների և գաղափարական ներքին էության միաձուլվածքը հար և նման են իրար. «Նրանց ձեռքերի հարվածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքված աչքերից… Երբ մի շարքը մյուսին ետ էր մղում ձեռքերի հարվածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշավում էին նոր թափով, որպեսզի վրիժառու լինեն ամոթի և պարտության համար»[1] :

-Հալա՛լ է քեզ,
Սասո՛ւն, պարի՛…
Պարի՛,
Դու դեռ երազ ունես կատարելու,
Վրե՛ժ ունես պատմությունից դեռ հանելու…
Պարի՛,
Մինչև ո՛ղջ հայերին դու ամբարես
Եվ այս պարը
Մասիս լեռան լանջի՛ն պարես…

Ժամանակի հայրենասիրական պոեզիայում բոլորովին ուրիշ տրամադրություններով հնչեց Ս. Կապուտիկյանի քնարը: Հայրենիքի անհատականացումը Կապուտիկյանի հոգևոր աշխարհում նույն մտերմական բնութագիծն ունի, ինչ Չարենցի պոեզիայում: Բայց եթե Չարենցի մոտ դա ճեղքված հայրենիքի վերամիավորման և սեփական հոգեկերտվածքի վերագտնման խոհափիլիսոփայություն է, Կապուտիկյանի մոտ՝ կյանքի բարձրագույն իմաստ կազմող ապրում: Կապուտիկյանի քնարական հերոսը ժողովրդի համահավաք խորհրդանիշն է, Չարենցի հերոսն առանձնանում է ընդգծված անհատականությամբ: Կորուսյալ հայրենիքի զգայաչափը Կապուտիկյանի պոեզիայում Արարատն է, որին և ուղղված է նրա խոստովանությունը.

Ա՛խ, մեր կարոտն ելե՛լ, դիզվե՛լ, դե՛մ է առել փեշերիդ
Ու խռոված՝ դարձել է գետ, դարձել Արազ, Արարատ:
Աչք ենք բացել քեզնից հեռու, քո կարոտով ծերացել,
Մի՞թե պիտի մեռնենք մի օր քեզնից անմա՛ս, Արարատ…

Սիրո և ցավի խոստովանությունը Կապուտիկյանի պոեզիայում արտահայտվում է հոգեբանական տարբեր երանգներով: Դա մերթ զգայական վառք ու կիրք է, մերթ հույզի դող, մերթ՝ դիմադարձ էլեկտրականացնող թախիծ: Կապուտիկյանի հայրենասիրական պոեզիայի առանձնահատկությունն ինքնամոռաց սիրահարությունն է, որ ինքնարտահայտման ձևով նորարարություն է հայ հայրենասիրական պոեզիայում:

Դու մոտիկ եղար՝
Սրտիդ տրոփը մեր կոշտ ձեռքերին հաղորդելու՛ չափ…
Դու տաք հո՛ղ եղար՝
Մեր պիրկ խոփերի տենչանքին հլու,
Մեր գգվանքներից ծլարձակող հո՛ղ,
Եվ միրաժ եղար՝
Կապույտ, անշոշափ ու անբռնելի…

[1] Ա.Բակունց, Երկեր, չորս հատորով , հ. 1, Ե., 1976-1984, էջ 202,20:

«Մենք՝ աներջ հասնող,// Իսկ դու հեռացող» սիրո բանաձևումը համազոր է աստվածորոնումի ճանապարհին: Հաջորդում է պաշտամունքի արարողությունը, որ նաև ինքնազատագրման մղում է.

Դու՝ նախնիներիս աճյունի կավից շաղախված չաստված,
Ես- էլեկտրոնիկ հաշվարկումներով լցված ուղեղս,-
Քո կռապաշտն եմ, քո միամի՛տը…
Արդ՝ աստվածներից ձերբազատ հոգիս
Քո դեմ ծնկաչոք՝
Աղոթքի համար թևերն է պարզել…

Արարատը և գերագույն ու միակ պաշտամունք է, և հոգեկան ներքին խաղաղություն, և քարեղեն հզոր դիմակայություն: Խոսքի ճարտարապետական կառուցվածքը, խոհազգայական տարողությունը, տողի ազատաչափը «Աղոթք Արարատի»-ն մերձեցնում են Նարեկացու «Մատյան»-ին: Դա նորագույն ժամանակների աղոթասացություն է, նարեկացիական զրույց բիբլիական երկրի հետ, խոստովանություն՝ ի խորոց սրտի:

Եվ ինձ էլ օժտիր անտրոհելի քո այդ դաշնությամբ՝
Շունչ դառնալ, ոգի, գոյության խորհուրդ՝ հնամյա ցեղիս,
Գամվել ու մնալ հողին իր դժվար,
Իր դժվար բախտին…

Աղոթքին հաջորդում է «Խռովք»-ը, որն այս դեպքում համակշիռ է շղթայված Արտավազդի տառապալից խռովքին. «Ո՞վ ինձ անիծեց ծնվել հենց այստեղ // Այս եսակենտրոն Մասիսի հանդեպ,// Որ հոգիս անվերջ թպրտա նրա ուղեծիրի մեջ// Ու վերադառնա նրա՛ն, միշտ նրա՛ն.// Հոգնել եմ նրա քար սառույցներին գամված մնալուց,-// Արձակեցե՛ք ինձ, ես Արտավա՛զդ չեմ…»: Սիրո այս տառապագին անհասանելիությունը ավելի է բարձրացնում նվիրումի աստիճանը.

Օ՜, լեա՛ռն Արարատ,
Կանգնած հինավուրց քո ստորոտում՝
Ողողված եմ ես ոչ ջրհեղեղով,
Այլ քեզնո՛վ, քեզնո՛վ,
Եվ մարմնիս, հոգուս ամեն մի նյարդը, բջիջը, հյուլեն
Քաղցր նվում է՝
Ներծծված քեզնից ճառագած լույսով-
Ճառագայթային քո հիվանդությամբ…

1960-1980-ական թթ. ազգային վերազարթոնքի նշանաբաններից մեկը եղավ «Քելո, լաո, քելե էրթանք մըր էրգիր» ժողովրդական երգի կրկնատողը: Այս ոգով ու ոճով է գրված Կապուտիկյանի համանուն գործը.

Աչքերի մեջ համառ մի ուխտ ու հարցում,
Ու մի զարմանք, խեղճ մի զարմանք անմեկին,
Հարցնում է իրեն, բախտին, Աստծուն՝
Իմալ կեղնի, իմա՞լ չերթանք մըր էրգիր…

Սա հայրենագրկված ժողովրդի կորուստների, կարոտների և անմեռ ճանապարհի երգն է՝ անսասան հավատքով, վստահությամբ և կամքով. «Պիտի փլվի՛ ամեն պատնեշ, ամեն սուր,// Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր»:

Կապուտիկյանի, Էմինի, Դավթյանի հայրենասիրական ստեղծագործությունները ոգեղեն կամուրջ են նորագույն և արդի պոեզիայի միջև, ուր հանգուցալուծվում են կորուսյալ հայրենիքի գաղափարագեղագիտական ճանապարհները:

Գրականություն

1. Վ. Դավթյան, Երկեր, 2 հատորով, հ. 1, Ե., , 1985:
2. Հ. Սահյան, Լույսի խորհուրդը, Վ. Դավթյան, Լույսն իբրև հաց, Ե., 1980 :
3. Գ. Մահարի, Անցողիկն ու հավիտենականը: Վահագն Դավթյանի հիշատակին, Ե., 2005:
4. Դ. Գասպարյան, Հայ գրականություն, գիրք 3, Ե., 2007:
5. Ա.Բակունց, Երկեր, չորս հատորով, հ. 1, Ե., 1976-1984:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Նարինե Հովհաննիսյան, բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն
e-mail: nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.9(749.25) Գրականագիտություն

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ 1960-1980-ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՎԵՊՈՒՄ

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լուսինե ԱՎԱՆԵՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *ցեղասպանություն, հիմնապատճառներ, ինքնապաշտպանություն, բռնագաղթ, մահմեդականացում, հիշողություն, պահանջատիրություն, պատմաքաղաքական, պատմագեղարվեստական, պատմակենսագրական ժանր:*

Ключевые слова*: геноцид, первопричины, самозащита, изгнание, исламизация, память, правопреемстенность, историко-политический, историко-биографический жанр.*

Key words: *genocide, root causes, self-defense, expulsion, Islamization, memory, succession, historical-political, historical-biographical genre.*

Н. Аванесян

ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН В АРМЯНСКОМ СОВЕТСКОМ РОМАНЕ 1960-1980гг.

Статья посвящена отображению Геноцида армян в советском романе. В 1960 - ых годах подъем темы геноцида армян был обусловлен преодолением культа личности, и за историко - бытовыми истинами и подъемом национального самосознания последовало раскрытие литературно-исторического этапа. Однако на пути исторической романтизации Геноцида, имея литературную культивизацию и художественную многочисленность, тем не менее романтизация геноцида не произошла.

N. Hovhannisyan

THE QUESTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE ARMENIAN SOVIET NOVEL OF 1960-1980

The article is devoted to the display of the Armenian Genocide in the Soviet novel. In the 1960s, the rise of the Armenian genocide was caused by overcoming the cult of personality and historical home truths and the rise of national consciousness was followed by the opening of a literary-historical stage. However, in the way of the historical romanticizing of Genocide, having literary cultivation and artistic multiplicity, however, the romanticizing of genocide did not happened.

Հոդվածը նվիրված է Հայոց ցեղասպանության հիմնախնդրի պատկերմանը խորհրդահայ վեպում: 1960-ական թթ. ցեղասպանության թեմայի վերընթացը պայմանավորված էր անհատի պաշտամունքի հաղթահարմանը հաջորդած պամակենսական ճշմարտությունների բացահայտման, ազգային գիտակցության վերելքի գրապատմական փուլով: Սակայն ցեղասպանության պատմավիպականացման ճանապարհին, գրական անհատականությունների և գեղարվեստական առանձնահատկությունների բազմազանությամբ հանդերձ, չստեղծվեց ցեղասպանության վեպ վիպացը: Այս հանգամանքը մասամբ պայմանավորված է նրանով, որ ցեղասպանության պատմավեպը պահանջում էր ոչ միայն պատմաքաղաքական նյութի համապատկերային ճանաչողություն, ոչ միայն գրական վարպետություն, այլև ուղենշային գրական անհատականություն:

Հայոց ցեղասպանության թեման խորհրդահայ վեպում ամրագրվեց 1960-ական թթ.՝ գրական շարժման ընթացքում միանգամից երևակելով վիպական մի ստվար ժառանգություն: Ցեղասպանության թեմայի վերընթացը պայմանավորված էր անհատի պաշտամունքի հաղթահարմանը հաջորդած պամակենսական ճշմարտությունների բացահայտման, ազգային գիտակցության վերելքի գրապատմական փուլով: Պատմահասարակական ժանգից և գրաքննչական սպառնալիքներից զգալիորեն ազատագրված 1960-ականների մթնոլորտը հնարավորություն ընձեռեց գրական սերնդին՝ կենդարյա ճանապարհի խորքից ի մի բերելու հիշողությունները, քննելու պատմագիտական նյութերը, վերագտնելու ազգային կենսունակության ոգեղեն ջիղը: Էպիկական արվեստի տիրական ժանրը, բնականորեն, դարձավ ազգային պատմավեպը՝ պատմաքաղաքական, պատմագեղարվեստական, պատմակենսագրական յուրօրինակ դրսևորումներով: 1920-1930-ական թթ. ձևավորված ազգային գրական ավանդույթների ժառանգորդականությունը պահպանելով՝ 1960-1980-ականների սերունդը ընդսմին հետագծում էր զարգացման նորարարական միտումներ: Սակայն ցեղասպանության պատմավիպականացման ճանապարհին, գրական

անհատականությունների և գեղարվեստական առանձնահատկությունների բազմազանությամբ հանդերձ, չստեղծվեց ցեղասպանության վեպ վիպացը: Այս հանգամանքը մասամբ պայմանավորված է նրանով, որ ցեղասպանության պատմավեպը պահանջում էր ոչ միայն պատմաքաղաքական նյութի համապատկերային ճանաչողություն, ոչ միայն գրական վարպետություն, այլև ուղենշային գրական անհատականություն:

1960-1980-ական թթ. ցեղասպանության խորհրդահայ արձակը գլխավորում են Գ. Մահարու «Այրվող այգեստաններ», Մ. Գալշոյանի «Ձորի Միրոն», Ս. Խանզադյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ», «Անդրանիկ», Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին», «Ջսպիացող վերքեր», Հ. Քոչարի «Նահապետ», «Կարոտ», Պ. Զեյթունցյանի «Վերջին արևագալը» վեպերն ու վիպակները: Այդ թեմային անդրադարձել են նաև Հ. Մելքոնյանը, Մ. Հարությունյանը, Աղավնին, Մ. Սարգսյանը, Բ. Վերդյանը և ուրիշներ:

Խանզադյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպի նյութը երգնկահայության՝1915-1917թթ. կոտորածներն են, ինքնապաշտպանական կռիվները, ազգային գոյության պահպանման ճիգերն ու մաքառումները: Համադրելով պատմականությունն ու գեղարվեստականությունը՝ Խանզադյանը վիպական վարպետությամբ ստեղծել է ժողովրդի անօրինակ ողբերգությունների, հերոսացումների, ապրելու կամքի պատմագեղարվեստական ասքապատում: Վեպի արժանիքներից ամենահատկանշականն այն է, որ Խանզադյանն էպիկականացրել է հայոց ցեղասպանության համապատկերը՝ կոտորածներ, բռնագաղթ, բռնի մահմեդականացում, հայ որբերի առուծախ, ավեր ու կողոպուտ. վեպը ոչ միայն ցեղասպանության, այլև ցեղասպանության հետևանքների՝ մարդկային, տարածքային, տնտեսական, հոգևոր-մշակութային և բարոյահոգեբանական կորուստների պատմությունն է: «Սովետահայ արդի վիպասաններից, թերևս նաև գործող արձակագիրներից ոչ ոք այնպես տարածքով ու խորությամբ չգիտի մեր պատմությունը,- նկատում է Ս. Արզումանյանը,- ինչպես Ս. Խանզադյանը»[1] :

«Խոսեք, Հայաստանի լեռներ»-ը բնույթով հարում է պատմաքաղաքական վեպին: Խանզադյանը 1915-ի ցեղասպանությունը ներկայացնում է առաջին աշխարհամարտի համատեքստում՝ բացահայտելով նաև դաշնակից Գերմանիայի ոճրալի քաղաքականությունը: Առաջին համաշխարհային պատերազմը հարմար պատրվակ էր Թուրքիայի համար՝ վերջնականապես իրագործելու հայերի՝վաղուց ծրագրված ցեղասպանությունը: Երիտթուրքերի կառավարությունը, խոսելով Թուրքիայում բնակվող ժողովուրդների ազատությունից, հավասարությունից, եղբայրությունից, իրականում համիդյան վարչակարգի հետևորդն էր և հետամուտ էր թուրքական հայաջինջ քաղաքականությանը: Խանզադյանը վեպում բացահայտում է ցեղասպանության պատմաքաղաքական հիմնապատճառները, բացասում պատմագիտական այն ըմբռնումը, թե հայկական կոտորածները Թուրքիայի կողմից իրագործվել են հայության ռուսամետ կողմնորոշման, առաջին աշխարհամարտում հակաթուրքական գործողությունների պատճառով: Պատմաքաղաքական դրդապատճառներից բացի՝ վեպում Խանզադյանը վճռորոշ գործոն է համարում նաև հայ-թուրքական ազգային, կրոնական, մշակութային անհամատեղելիության խնդիրը: Խանզադյանի պատմաքաղաքական վերլուծությունները հանգեցնում են հայկական պետականության ստեղծման գաղափարին: Ներսեհ Ջավուշը՝ Խանզադյանի գաղափարակիր կերպարը, դառը խորհրդածությունների պահին գիտակցում է, որ հայ ժողովրդին պակասում է դիվանագիտությունը, հայությունը չունի հավաքական ուժ, որ կազմակերպի համընդհանուր դիմադրությունը: «Պետք է ստեղծել հայկական պետականություն, իշխանություն… Դա կունենա իր բանակը, իր դիվանագիտությունը, իր ինքնուրույն պատկերը՝ դաշնակից տերությունների ընտանիքում: Ռազմական մինիստրի գրասենյակի ստույգ տվյալներով, ռուսական բանակում ծառայության մեջ են երեք հարյուր հազար հայ զինվորականներ՝ գեներալներ, սպաներ, զինվորներ…. Սա շոշափելի ուժ է, մեծ ուժ, եթե… Եթե համախմբես, դնես մի ընդհանուր հրամանատարության տակ….»[2] :

[1] Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 3, Ե., 1986, <<Սովետական գրող>> հր., էջ 108:

[2] Ս. Խանզադյան, Խոսեք, Հայաստանի լեռներ, Ե., 1980, <<Սովետական գրող>> հր., 520 էջ, էջ 103:

Ներսեհ Զավուշը գիտակցում է, որ ցարը ինքնուրույնություն չի տա Հայաստանին, թուրքական բանակի նախկին չավուշը վերհիշում է Էնվերի խոսքը. «Թող հասկանան բոլորը, ռուսաց թագավորը երբեք առանձին Հայաստան, հայկական պետություն չի ստեղծի: Երբեք: Հայաստանը ռուս թագավորին հարկավոր է միայն մեր դեմ ճակատամարտելու վայր ունենալու համար: Այսքանը: Ռուս թագավորը կօգտագործի հայերի խանդավառությունը, ուժը, քաջությունը, նվրվածությունը իր խաչին, բայց երբեք թույլ չի տա, որ հայն իր պետությունն ունենա»[1] : Խանզադյանը վեպում հարցադրումներ է անում, թե ինչու ռուսահպատակ հայ զինվորականությունը, որ ռուսական տարբեր ռազմաճակատներում հաղթանակներ է ապահովում Ռուսաստանի համար, չի կանխում արևմտահայության կոտորածները, նահանջելով իր կողմից ազատագրված հայկական վայրերից՝ կրկնակի աղետի է ենթարկում արևմտահայությանը: Մյուս կողմից՝ Խանզադյանը ներկայացնում է թուրքական զորքերում ծառայող հայ զինվորների նվիրվածությունը թուրք պետությանը և, ի հեճուկս դրա, նրանց մասսայական կոտորածը ցեղասպանության նախօրեին: Հազարապետ Ալի Մյունիր բեյը, գաղտնի արձակելով իր զորահրամանատարության տակ գտնվող հայ զինվորներին, խոստովանում է. « Դուք, այս մոմի պես այրվելով, լուսավորում եք իմ հայրենիքը, ձեր պարտքը կատարում զինվորի արժանապատվությամբ: Սակայն ձեզ մահ է սպառնում… Մահ, հրաման է…»[2] :

Թուրքիան զազրելի քաղաքականություն է խաղում՝ խեղաթյուրելով փաստերը.«Հայերին տեղափոխելը, տեղահանելը դեպի Արաբիա, սոսկ կարգապահության վերականգնում է,- ամեն միջոցներով գոռում, գրում, աղմկում էին նրանք: Դրանով մենք ապահովում ենք հայերին՝ տեղական բնակչության հնարավոր խժդժություններից: Ոչ մի ջարդ չի եղել ու չկա»: Այսպես էին խաբում, ում պատահեր, նույնիսկ կարեկցանք էին առաջացնում իրենց նկատմամբ՝ ահա նայեցեք, հայերը ֆիդայական խմբեր են կազմակերպել ու վնասում են մեզ: Այս կեղծավորության ու խաբեության տակ դնում էին մահացու ռումբը՝ կրոնական մոլեռանդության վայրագության կոչը՝ «ջիհա~դ, ջիհա~դ»՝ սրբազան պատերազմ քրիստոնյա անհավատների դեմ: Իսկ այդ սրբազանը դարձավ կեղտոտ ցեղասպանություն»[3] : Ալի Մյունիր բեյը, նկատի ունենալով հայերի ակնկալիքները առաջին աշխարհամարտի ելքից, զգուշացնում է.«Թուրքիան կատվի ճարպկություն ունի… Նա ելք կգտնի անգամ բոլորովին կործանված տեղից… Ձեզ համար ոչ ոք չի նեղացնի Թուրքիային»[4] :

Խանզադյանը պատմաքաղաքական փաստերին խորագիտակ գրող է և վարպետությամբ առաջ է տանում ժողովրդի հերոսացումների, ինքնազոհությունների, անվերջ կորուստներից ու մաքառումներից չթուլացող կամքի, գոյի և արարումի գեղարվեստական պատումը: «Այս մարդիկ աստվածներ են,- նկատում է ռուս գնդապետը:- Ես հիացած եմ ձեր ցեղով, որ ապրելու այսպիսի ուժ ու կորով ունի»[5] : Այդպիսին են վեպի հերոսները՝ Ներսեհ Զավուշը, Զիլ Զաքարը, Խորեն աղան, Բենիամինը, Փափազը, Աղավնին, Ձյունիկը, Հեղինեն, Մարթան, Մարգարիտը, Գերասիմ վարժապետը, ողջ ժողովուրդը:

Երզնկայի ինքնապաշտպանական կռիվների պատկերաշարը վեպում ընդհանրացնում է արևմտահայության հերոսամարտերը դարասկզբին: Վիպական գործողությունները ծավալվում են խոխկապակցված, հոգեբանորեն ու գեղագիտորոն ճիշտ համադրված: Երզնկահայության գոյակռիվները, լեռներն ի վեր ձգվող մաղկային խմբերի գողգոթան, բռնի մահմեդականացվող հայ որբերի, կանանց փրկագնումը, բեկոր առ բեկոր հավաքվող մնացորդաց սերնդի փրկության որոնումները վեպի ամենատպավորիչ ենթամասերից են: Գրողը շեշտադրումներ է արել նաև հայ-ռուս զինվորների բարեկամական կապի, փոխօգնության, ինչպես և հայության մի զանգվածի մահմեդականացման առերեսման վրա: Գործող հերոսներից Գուրբան Ալին, Հաջի Բարսեղ էֆենդին առերես մահմեդականացել են՝ ազգային նպատակների միտումներով. «Ես պատրաստ եմ հենց այս պահին նույնիսկ ճիզվիտ

[1] Նույն տեղում, էջ 104:
[2] Նույն տեղում, էջ 168:
[3] Նույն տեղում, էջ 443:
[4] Նույն տեղում, էջ 445:
[5] Նույն տեղում, էջ 397:

դառնալու, եթե իմանամ, թե դա կօգնի մոլորված ու դժբախտ ազգին մեր: Հայ պիտի ունենանք այստեղ, այս հողի վրա, որ ձայն ունենանք, նաև իրավունք՝ ասելու, թե մերը մերն է: Պետք է փրկել ժողովրդի բեկորները, որ հետո դրանք հավաքենք ու նոր Հայաստան ստեղծենք»[1] : Հերոսների այս դրույթները վեպում հիմնավորվում են առանցքային գործողություններով:

«Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպի հիմնագաղափարը ցեղասպանության հիշողությունն ու հետևանքների փոխհատուցումն է: Նախկին Գուրբան Ալին՝ այժմ կարմիրբանակային Մանուկը, վրիժահատույց է լինում Էնվերից՝ «սատկացնելով իր ցեղի դահճին» : Բայց վրժառությամբ չի ավարտվում հատուցման պահանջը վեպում. Մանուկի գլխում «ղողանջում էր Ներսեհ Չավուշի երազանքը՝ գուցե մի օր ինքը, ահա իր այս ձիու մեջքին նստած, Ուլիկի հետ թռչի դեպի հեռավոր հայրենի լեռները»[2] :

Խանզադյանի «Խոսեք, Հայաստանի լեռներ» վեպը 1960-1980-ական թթ. ցեղասպանության հայ վեպի նվաճումներից է:

Ցեղասպանության հայ վեպի առանձնանշելի պատումներից է Ս. Ալաջաջյանի «Եղեգները չխոնարհվեցին» վեպը: Խորհրդահայ վիպագրության մեջ Ս. Ալաջաջյանն առաջինն էր, որ «Եղեգները չխոնարհվեցին» վեպով 1960-ական թթ. գեղարվեստական գրականություն բերեց Քեմալական Թուրքիայի կողմից կիլիկիահայության մասսայական կոտորածները՝ բարձրացնելով նաև կիլիկիահայերի հայրենազրկման հիմնախնդիրը: Վեպում պատկերված են անգլո-ֆրանսիական դիվանագիտական խաղերը, աշխարհաքաղաքական շահերի բախումը, ցեղասպանությունից ուշքի եկող, հայրենիքի շուրջ համախմբվող կիլիկիահայության պետականաշինության ջանքերը, կոտորածներն ու մաքառումները: Հավատալով եվրոպական դիվանագիտությանը՝ 1915թ. ցեղասպանությունից փրկված կիլիկիահայերը վերադառնում են բնօրրան, վերստին ցեղասպանության ենթարկվում և հայրենազրկվում, իսկ մնացորդաց սերնդի մի փոքր զանգված ապաստան է գտնում Մերձավոր Արևելքում: Պատմական տվյալներով՝ միայն 1920-1921թթ. Կիլիկիայում զոհվել է շուրջ 25 000 հայ:

Վեպում գործող հերոսները՝ Կարոն, Արամը, Փառենը, Սիմոնյանը, Միքայելը, Ենոքը, Դշխուհին, Օսանը, Արշակը, Տրդատը և մյուսները, հոգեբանական նկարագրով և պատմակենսագրությամբ հանդերձ, ավարտուն և ամբողջական կերպարներ չեն դառնում, բայց ստեղծում են պատմական կենսոլորտ, առաջադրում պատմաքաղաքական հարցեր, ինչպես՝ կարո՞ղ էր արդյոք հայությունը համընդհանուր ինքնապաշտպանությամբ կանխել կոտորածները, պատմաքաղաքական ի՞նչ հետևանքներ ունեցավ բոլշևիզմը Հայաստանի համար, որո՞նք են մեր ազգային բացթողումներն ու սխալները, ի՞նչ շահեր ու հետաքրքրություններ էր հետապնդում տարածաշրջանում Եվրոպան, որո՞նք են եվրոպական քաղաքակրթության և թուրքական բարբարոսության հետևանքները մեր ազգային կյանքում: «Սխալվեցի,- հետահայաց քննելով իրողությունները՝ մտատանջվում է վեպի կենտրոնական հերոսը՝ Արամը,- զորանոցի հազար հինգ հարյուր բնակիչներից ութ հարյուրին կարող էի զինել, սակայն սխալվեցի: Հավատացի եվրոպացուն, հավատացի պետականության երազանքին, թշնամու պարտված լինելուն՝ անվերապահ անձնատվության ու զենքերը վայր դնելուն՝ ու վրիպեցի»[3] :

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից հետո ֆրանսիական զորքերը գրավում են Կիլիկիան: Ըստ Սայքս-Պիկոյի համաձայնագրի՝ Կիլիկիան մտնում է Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ: Սակայն Կիլիկիայում տեղակայված ֆրանսիական զորքերի հրամանատարությունը չի զինաթափում թուրքական զորքերին՝ հետագայում ձեռնպահ մնալով նաև հայկական կոտորածների ժամանակ: Ֆրանսիացի զինվոր Դյուրենն, բացելով իր երկրի քաղաքական խաղաքարտերը, ասում է. «Թուրքական երրորդ բանակը մինչև ատամները զինված կազմ ու պատրաստ մնում էր Անատոլում, և դաշնակիցները չզինաթափեցին այդ բանակը… Փարիզը և Լոնդոնը, պարոն հայ, մտածում են, որ Գերմանիան

[1] Նույն տեղում, էջ 293-294:
[2] Նույն տեղում, էջ 519:
[3] Նույն տեղում, էջ 519:

պարտված է, Ավստրո-Հունգարիան՝ անճիտված, Թուրքիան՝ տապալված…. Սակայն ծնվել է մի մեծ թշնամի՝ բոլշևիզմը: Հիմա ուշադրության կենտրոնը դարձրին Ռուսաստանը…. Ամբողջ Անատոլուն և Կիլիկիան ետ կտան, միայ թե միլիականները շարժվեն Կովկաս, բոլշևիկների դեմ: Ու բոլշևիկներն էլ, սիրելիս, հասկանում են, նրանք էլ միլիականներին ուժ կտան, որ իմպերիալիստներին դուրս քշեն Թուրքիայից՝ Ռուսաստանի սահմանամերձ գոտուց»[1]:

Վեպում մեր կորուստների հիմնապատճառներից մեկը, Ալաջաջյանի համոզմամբ, ազգային համընդհանուր ինքնապաշտպանության բացակայությունն է. առանձին մարտերը, որքան հերոսական ու բացառիկ, եղանակ չէին կարող փոխել: Ազգային միասնության երկփեղկվածությունն առկա է նաև ռազմավարական նշանակության ծրագրերում: Կարոն, Փառենը, Միքայելը կոչ են անում զինվել՝ գոյության ելքը համարելով միմիայն կռվելը. «Պետք է զինվել, որպեսզի չմորթեն»[2] ,- Փառենի համոզմունքն է: «Ճշմարիտը վրեժն է: Վրեժը սուրբ զգացում է, արդար»[3] ,- Կարոյի սկզբունքն է: Արամը հակված է խաղաղ պետականաշինության, բայց իրադարձությունների հետևանքները վերլուծելուց հետո համոզվում է, որ պայքարն է գոյության միակ երաշխիքը. «Կռվել եմ ուզում և քավել մեղքս»[4] ,- ասում է նա:

Արամի նախատիպը Արամ Զոլաքյանն է, ով գլխավորում էր Կիլիկիայի Ազգային խորհուրդը: Նա մտածում է, որ ժամանակն է՝ «քրիստոնյա Եվրոպայի հովանու տակ հայերը վերագտնեն իրենց ուժերը, ստեղծեն պետականություն ու երկիր»[5] : Արամը, որքան էլ անվեհեր ու քաջ, հանճարեղ զորավար, այդուհանդերձ իդեալիստ կերպար է և ծանրորեն վերապրում է ժամանակին չկողմնորոշվելու ողբերգական հետևանքները: Փառենը, հակառակը, չի հավատում Եվրոպային: Նա գիտակցում է, որ պետականությունը ժողովրդի գոյատևության, անվտանգության երաշխիքն է, բայց այն չի կարող ստեղծվել օտարի հովանու ներքո: Փառենի կերպարում վիպասանը խտացնում է մեր ժողովրդի անպատում վիշտը, դեգերումների ուղին, մաքառումի կամքը: Փառենը երկու ցեղասպանություն, բռնագաղթ վերապրած հայ է, որ հաղթահարում է դժոխքի ճանապարհները՝ որպես ժողովրդի տոկունության և գոյապահպանման հավաքական խորհրդանիշ:

Վեպում գործողությունների առանցքը Զեյթունի և Մարաշի ինքնապաշտպանությունն է, կիլիկիահայերի կոտորածները: Թուրքերը անխնա կոտորում են հանձնված հազարավոր հայերի, երեք հազար հինգ հարյուր հոգու, փակելով Սուրբ Աստվածածին և Սուրբ Գևորգ եկեղեցիներում, հրդեհում են անխտիր: Եվրոպան, Պիղատոսի նման ձեռքերը լվանալով, մարդասիրություն է խաղում: «...Ամերիկան որբեր է հավաքում, Ֆրանսիան՝ քաղաքացիներ»[6] : Զեյթունի մնացորդաց սերունդը՝ ընդամենը ինսուներկու հոգի, հաղթահարում է իսպառ ոչնչացման վտանգը և հրդեհի տրված եղեգների մեջ կենդանի մնալով՝ ճեղքում պաշարման օղակը՝ ապաստան գտնելով հայրենիքից դուրս:

Անհատի կենսագրության և ժողովրդի պատմության համադրման, անհատական հոգեբանությամբ ազգային հոգեկերտվածքի տիպականացման, կերպարների ներքին հոգևոր վերլուծության, պատմաքաղաքական իրադարձությունների վիպականացման, ինչպես և գեղարվեստական արժանիքների տեսանկյունից նորագույն հայ պատմակենսագրական վեպի ձեռքբերումներից կարելի է համարել Պ.Զեյթունցյանի «Վերջին արևագալը» վեպը: «Անցյալում կան անհատներ,- նկատում է Մ. Շահինյանը,- որոնցից յուրաքանչյուրն իր բնագավառում զարմանալի համոզչությամբ արտահայտել է պատմական զարգացման ուղենշային ընթացքը»[7] : Հայոց ցեղասպանության և պատմական անհատի ճակատագրի զուգադրման պատմագեղարվեստական ճանապարհին Զեյթունցյանի «Վերջին արևագալը», հիրավի,

[1] Ս. Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին, Երկեր 3 գրքով, գիրք 3, Ե., 1979, էջ 434:
[2] Նույն տեղում, էջ 116:
[3] Նույն տեղում, էջ 24:
[4] Նույն տեղում, էջ 329:
[5] Նույն տեղում, էջ 21:
[6] Նույն տեղում, էջ 479:
[7] Մ. Շահինյան, Литературная газета, 1961, 7 октября.

նշանակալի երևույթ է հայ պատմակենսագրական վեպի զարգացման ճանապարհին: Դա պայմանավորված է նաև արևմտահայ գրողների անձնական արխիվների մանրաքննին հետազոտությամբ, համապարփակ դիպաշարով, գաղափարական - հայեցակարգային ընդհանրացումների արտածումով: Արժևորելով խոշոր անհատների դերը անցյալի իրողությունները բացահայտելու գործում՝ Ս. Արզումանյանը գրում է. «Պատմակենսագրական վեպը նույնպես սոցիալական ու մարդկային, ազգային ու քաղաքական, էթիկական ու փիլիսոփայական խտացումների լայն հնարավորություն է ենթադրում և ամենևին էլ պատմությունը չի դիտում որպես «շինարարական մատերիալ» իր կառուցվածքի համար»[1]: Միաժամանակ Ս. Արզումանյանը նկատում է, որ պատմակենսագրական ենթաժանրի վեպը բացառում է մանրուքը, անկարևորը, կենցաղագրությունն ու պատահականը. «Ականավոր գրողը շեշտը դնում է այն հանգամանքի վրա, թե ինչ դեր է խաղացել անցյալի մեծ անհատը պատմության մեջ. գտնել այն «գլխավոր փաստերը», որոնցով նրա կենսագրությունը հասարակական-պատմական նշանակություն է ձեռք բերում»[2] :

«Վերջին արևագալը» վեպում Գ. Զոհրապի կյանքին համընթաց ամբողջանում է ցեղասպանված արևմտահայ ժողովրդի, մասնավորապես մտավոր սերուցքի ողբերգապատումը. վիպական գործողությունների առանցքում թեև Գ. Զոհրապն է, սակայն սյուժետային զարգացման ընթացքում կարևոր տեղ ու դեր ունեն Սիամանթոն, Ռ. Սևակը, Դ. Վարուժանը, Ա. Արփիարյանը, Տ. Կամսարականը, Լ. Բաշալյանը, Ե. Օտյանը, Ա. Զոպանյանը և այլք: Արևմտահայ մտավոր սերուցքի ջարդի պատմականացումը, ողբերգության դատապարտված հայ մտավորականների կյանքի դրաման, որ «Վերջին արևագալի» վիպական առանցքն է, Զեյթունցյանը պատկերեց նաև «Մեծ լռություն» դրամայում: Պատմավավերական նյութերի վերհանումով Զեյթունցյանը պատկերում է ժամանակի արևմտահայ մտավոր մթնոլորտը, մեծ անհատների կյանքը, ձերբակալությունները, աքսորն ու սպանդը: «Այս հուսահատության, զզվանքի, անկարելի ստրկության և պառնիկ համակերպումի և իմ բառարանես ու ձեր բառարանեն բացակա ամեն հայհոյանքի արժանի օրերուն մեջ կմտածեմ, թե դեռ Մարդեր, բարեկամներ կան… Բայց իմ ցավես առաջ, ցեղիս ու ցեղիդ ցավեն խոսիմ… Բովանդակ ծաղիկ հայ երիտասարդությանը բորենիները զինվոր տարին… Դեպի մահ, դեպի ստույգ մահ… Ջիղերս կայծակի խուրձի մը վերածվեր են»[3] ,-գրում է Սիամանթոն նամակներից մեկում: Սիամանթոյի կերպարում գրողը առանձնանշում է ասպետական բարոյագիծը, հպարտ արժանապատվությունը, արիական ոգու և ֆիզիկական նախճիրի, մաքառումի և ցավի, ազատապաշտ իդեալների և անձնական զոհողությունների հանգուցալուծումը: Արևմտահայ մի այլ հանճարի՝ Ռուբեն Սևակի կերպարում Զեյթունցյանը ընդգծում է սիրո բացառիկ գեղագիտությունը՝ ընդսմին հակադրելով այն ցեղասպանությանը: Գրողը բոլոր դեպքերում հավատարիմ է մնում վավերագրին, պատմականությունը պահպանելու իր սկզբունքին՝ դրվագ առ դրվագ արխիվային վավերագրերով փաստարկելով վեպի վավերականությունը: «Ես քու ստրուկդ եմ, և այդուհանդերձ, դուն անգութ տիրուհի մը չես: Քեզի կպատկանիմ, կրնաս գուրգուրալ կամ փշրել զիս: Ի՜նչ լավ է երկուք ըլլալ և միայն մեկ անձ կազմել»[4] ,- գրում է Սևակը Յանիին՝ արտածելով ժամանակի մեծագույն սիրո պատմություններից մեկը: «Արդեն ըսեր եմ քեզի, որ սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է: Անիկա միակ զգացումն է, որ մեզ կմոտեցնե աստվածներուն… Կարոտագին կըղձամ տեսնել աչքերդ, կըղձամ նայվածքիդ մեջ կորսվիլ, կըղձամ զգվել քեզ, ունենալ, տրվիլ քեզի, սարսռալ սերեն, ապրիլ և զգալ, որ կապրիմ… Կներես ինձի, եթե երբեմն քիչ մը պաղ/ քիչ մը ծեր թերևս/, քիչ մը մտախոհ եմ երևցած քեզի: Պատճառն այն է,որ սառնորեն դատող այս ճակտին տակ բոցեր կան, կրակներ, գաղտնի կայծեր, որոնք պիտի ուզեին վայրկենապես հրո ճարակ դարձնել իմ ամբողջ էությունս…»[5] : Այս և ուրիշ

[1] Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, հ. 2, Ե., Սովետ. Գրող, 1986, էջ 262:
[2] Նույն տեղում, էջ 260:
[3] Պ. Զեյթունցյան, Վերջին արևագալը, էջ 202:
[4] Նույն տեղում, էջ 211:
[5] Նույն տեղում, էջ 211-212:

վավերագրերով Զեյթունցյանը աստիճանաբար հասունացնում է ցեղասպանության զոհ դարձած արևմտահայ անհատների համամարդկային խորագույն կենսապատումները: Սևակը բուժում, մահից փրկում է տասնութամյա մի թուրք աղջկա: Վերջինս սիրահարվում է իրեն կյանք վերադարձրած բժշկին: Հայրը տեղեկացնում է Սևակին, որ դատապարտված են սպանդի. եթե համաձայնի մահմեդականություն ընդունել և իր աղջկա հետ ամուսնանալ, կազատի նրան, սակայն Սևակը անդրդվելի է մնում և բարձր ասպետականությամբ հրաժարվում է երկրորդ կյանքի հնարավորությունից :

Զեյթունցյանը, բնականաբար, առավել լայն կտավի վրա պատկերել է վեպի կենտրոնական հերոսին՝ Գրիգոր Զոհրապին: Վերակերտելով արևմտահայ առաջադեմ մտավորականի կերպարը՝ վիպասանը նրա կյանքի և գործունեության առանցքում դնում է Հայկական հարցի պատմությունը 1980- 1915թթ.: Զեյթունցյանը վիպական գործողություններում երևան է բերում Զոհրապի փաստաբանական տաղանդը, հռետորական արժանիքները, ազատական գաղափարներն ու հասարակական ազդեցիկությունը, թուրքական մեջլիսում պատգամավորական կեցվածքն ու կրքոտ ելույթները՝ ի պաշտպան Թուրքիայում ազգային փոքրամասնությունների իրավունքների և օրենքի ազատության, Զոհրապի և Թալեաթի բարեկամական հարաբերությունները՝ ազնվասիրության և կեղծիքի ու սադրանքի տարաբևեռներով: Զոհրապի անձնական և հասարակական-քաղաքական կյանքի համադրությամբ գրողը ռեալիստական բնութագծերով կարողացել է հասնել կերպարի ինքնատիպ ամբողջացմանը՝ աշխարհաքաղաքական հենքի վրա ուրվագծելով հերոսի կյանքն ու ճակատագիրը:

Որպես իրավաբան-փաստաբան՝ Զոհրապը Պոլսում շատ հաճախ պաշտպանում է օտարահպատակների շահերը թուրքական առևտրական առաջին դատարանում, Պոլսի ռուսական դեսպանատան իրավագետ-խորհրդականն է, թարգմանիչը, դիվանագիտական կապեր ունի և ազատ ելումուտ դեսպանատներ: Նա վարում է կարևոր, խիզախ դատեր, մինչևիսկ պետական կարգադրությամբ նրան արգելվում է թուրքական դատարաններում դատեր վարելը: Որպես Ազգային ժողովի երեսփոխան՝ Զոհրապը բարձրացնում է Թուրքիայում հայկական բարեփոխումների հարցը, դիմում եվրոպական տերությունների միջնորդությանը, մինչև վերջ հավատում է օրենքի ուժին, ապավինում սահմանադրությանը:

Լինելով հասուն մտավոր գործիչ՝ Զոհրապը շատ պարզ պատկերացնում է առաջին աշխարհամարտի հետևանքները հայ ժողովրդի համար և ամեն ջանք գործադրում է՝ դիվանագիտական ուղիներով հայությանը զերծ պահելու վերահաս աղետից. «Եթե Թուրքիան Ռուսաստանի թշնամիներուն հետ ըլլա,- ջղագրգիռ ասաց Զոհրապը, որովհետև բոլորն էլ պտտվում էին հիմնական հարցի շուրջը, և ոչ ոք չէր համարձակվում բուն միջուկին հասնել,- վրեժը պիտի հանե մեզմե հայ դատին համար»[1] : Զոհրապի նախաձեռնությամբ պատրիարքարանը հայերից հավաքագրած գումարներով օսմանյան բանակին նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերում, նվիրում դաշտային հոսպիտալ, վիրավորների բուժման և խնամքի համար կամավոր հայ կանանց հիվանդապահական կուրսեր կազմակերպում: «Մեր բարեկեցիկ դասը պետք է նյութական զոհողություններ ընե բանակի համար, մեծ զոհողություններ… Տեղական կառավարական պաշտոնեության հետ սիրալիր հարաբերություններ մշակել: Ժողովուրդը հորդորել, որ առիթ չտան թյուրիմացություններու, հեռատես ու շրջահայաց ըլլան ամեն ժամանակ ավելի…»[2] : Զոհապը հետագայում ցավով է հիշելու իր նախաձեռնության մասին՝ համարելով այն աններելի միամտություն, եվրոպական ինտելիգենտություն քոչվորների համար, որովհետև երիտթուրքերի կառավարությունն արդեն ստեղծել էր Կարմիր Մահիկը, Նավատորմի ընկերությունը, Ազգային պաշտպանության ընկերակցությունը, որոնց նյութական հոգսերը ընկնում էին միմիայն հայերի վրա :

Աղետալի օրերին, երբ սկսվում են հայ մտավորականների և գործիչների զանգվածային ձերբակալություններն ու կոտորածները, Զոհրապին առաջարկում են հեռանալ Թուրքիայից,

[1] Նույն տեղում, էջ 13:
[2] Նույն տեղում, էջ 50:

սակայն նա մերժում է բոլոր հնարավորությունները. «Որո՞ւ ձգեմ այս դժբախտ ժողովուրդը… Պարտքս է մինչև վերջ պատնեշին վրա կենալ…»[1] : Օգտվելով մեջլիսի պագամավորի իր իրավունքից՝ նա բազմիցս դիմում է պետական բարձրաստիճան պաշտոնյաների, որոնց հետ մտերիմ հարաբերություններ ուներ, այդ թվում ներքին գործերի նախարար Թալեաթին և խորհրդարանի նախագահ Սայիդ Հալիմ փաշային՝ հայկական կոտորածները կասեցնելու, ձերբակալվածներին ազատ արձակելու: Հայ մյուս մտավորականների նման նա ևս կարծում էր, որ իրենց «ընկեր» իթթիհատականները կանգ են առնելու: Հայերի ջարդերի համար նա համարձակորեն մեղադրում է Թալեաթին՝ ասելով. «Վստահ եղիր, Թալեաթ, մի օր հաշիվ պիտի պահանջվի ձեզանից, և դուք չպիտի կարողանաք արդարացնել ձեր ոճիրները»[2] : Զոհրապը ևս ձերբակալվում է: Նա մերժում է փախուստի բոլոր առաջարկները նախ՝ մտածելով. «Ես չեմ կրնար փախչիլ, երբ հարյուր հազարներ անապատ կքշվին ու կմորթվին… Ես ալ պիտի ըլլամ անոնցմե մեկը, ես ալ…»[3] և ապա՝ համոզմունքով, որ ինքն անմեղ է և կարող է իրեն պաշտպանել օրենքի առաջ:

Զեյթունցյանը կարողանում է պահպանել պատմականությունը, իրադարձությունների և համոզմունքների ողբերգական հանգուցալուծումը: Վիպական գործողությունների վերջնահանգումը Զոհրապի և Վարդգեսի ծրագրված սպանությունն է: Զոհրապին Դիարբեքիրի ճանապարհին սպանում է Զերքեզ Ահմեդը՝ քարերով ջարդելով նրա գլուխը:

Զեյթուցյանի պատմակենսագրական այս վեպը ճանաչողական և խոհափիլիսոփայական արժանիքներով, աշխարհաքաղաքական իրադարձությունների ընկալումներով, անհատի մտավոր-հոգեբանական կերտվածքի բացահայտումներով չի զիջում հայ պատմակենսագրական լավագույն վեպերին:

1960-1980-ական թթ. ազգային պատմագեղարվեստական արձակում նշանավորվում են նաև Հ. Քոչարի՝ տունդարձի կամ վերհուշի ուղղվածությամբ առանձնացող «Նահապետ», «Կարոտ» վիպակները, որոնց հիման վրա հայֆիլմը նկարահանեց ֆիլմեր. սցենարի հեղինակներ՝ Հ. Մալյան, Ռուբեն Հովսեփյան, բեմադրող ռեժիսոր՝ Ֆ. Դովլաթյան: Հիշյալ վեպերի հոգեբանությունը պայմանավորված էր գաղափարական վերանորոգման և վերաճշգրտման շրջափուլում հեղինակի գեղարվեստական մտածողության վերափոխումով: Շ. Շահնուրին հղած նամակում Գ. Մահարին այս առթիվ գրում է.«Հ. Քոչարը ստալինյան շրջանի կարկառուն չմշակներից էր, որը բավական չար սերմեր ցանելուց և հեղինակություն հնձելուց հետո, վերջին շրջանին կերպով մը ուզեց քավել իր մեղքերը / Ն. Զարյանը գլացավ այդ իսկ…/ և գրեց մի քանի տանելի բաներ, որոնք սակայն չկարողացան բարձրանալ իսկական արվեստի պատվանդանին»[4] :

Քոչարի վիպակներին բնութագրական են ցեղասպանությունը վերապրած սերնդի գոյափիլիսոփայությունն ու հոգեվերլուծությունը, որոնցով հատկանշվում է վերհուշի ազգային գրականությունը: Շարունակելով ազգային գրականության մեջ լայն հետագիծ ձգած վերհուշի արձակի ավանդույթները՝ Քոչարը 1960-ական թթ. գեղարվեստի մեջ իր հերթին շեշտադրում է հիշողության դերը՝ կերպարների կենսահոգեբանական ներքին բացահայտումներով մտահայեցողական դարձից հասնելով իրական դարձի. «Ամեն օր հիշում էին իրենց երկիրը, բայց վախենում էին խոսել, որովհետև բարեկամություն կար պետությունների միջև, վերադարձից ու հույսից խոսելը դատվում ու դատապարտվում էր»[5] : Վեպի տրամաբանական ընթացքից չի բխում և պատմականորեն համոզիչ չէ պետական սահմանը հատած և էրգրից վերադարձած Առաքելի նկատմամբ խորհրդային կալանքի խափանումը, ինչը թերևս Քոչարի կուսակցական սուբյեկտիվ վերաբերմունքի դրսևորումներից է, հանգամանք, որ վերանայվեց ֆիլմի սցենարում:

[1] Նույն տեղում, էջ 15:
[2] Նույն տեղում, էջ 410:
[3] Նույն տեղում, էջ 640:
[4] Շ. Շահնուրին, 18 մայիսի, 1965:
[5] Հ. Քոչար, Երկեր, Ե., <<Սովետական գրող>>, 1980, 504 էջ, էջ 310:

Հ. Քոչարը ստեղծել է ժողովրդական մի կերպար, որի միջոցով երևան է բերում էրգրի մարդկանց կարոտացավը, վերադարձի հույսն ու հավատը, ու թեև չի հասնում հոգեվերլուծության պահանջված մակարդակի, ստեղծում է տոհմիկ ծննդավայրից զրկված, ցեղասպանությունից փրկված մարդկանց որոշակի միջավայր, ինչին մեծապես նպաստում է նաև արևմտահայ խոսվածքի կենդանագրումը: «- Իմ սիրտ կցավե … Երկիր ինձի կկանչե»[1] : Թեև վիպակում հանգամանորեն չի հասունացվում Առաքելի դարձը, սակայն այն միանգամայն համոզիչ և բնական է:

Էրգրի գրեթե բոլոր վայրերից իրար գլխի հավաքված մարդիկ հույս ունեին, որ, «երկիր երթալ» կլինի, ու իրենք առաջինը կանցնեն Արազը: « -Վա՛յ, ընկեր Ստալին, բալքի դու լե քո թախտից գլորիս, հորի՞մեր երկիրը թողեր իս թուրքին» [2],- բարձրաձայնում է Առաքելը, և Քոչարը պատկերում է հոր և որդիների գաղափարական բախումը այդ հողի վրա՝ ընդգծելով կուսակցական պաշտոնական դիրքորոշման հոգեբանական ազդեցությունը նոր սերնդի վրա:

Թուրքական և խորհրդային փոխհամագործակցության արդյունքում կեղծ տվյալներով հրատարակվում է, որ Առաքել Էլոյանը, «մտնելով թուրքական տերիտորիան, խուսափել է ներկայանալ պետական մարմիններին, ապաստանել է լեռները քաշված քուրդ ապստամբների մոտ և մասնակցում է նրանց հակակառավարական գործողություններին, որոնք խրախուսվում են անգլիական իմպերիալիստների կողմից»[3] : Կորուսյալ էրգրի կարոտի մղումով ծննդավայր հասած Առաքելը դատապարտվում է որպես պետական հանցագործ. կարոտախտը ողբերգաերգիծական կերպով քաղաքականացվում է, մինչդեռ Առաքելը միմիայն մի փաստարկ ունի՝ կարոտը. «- Ես գնացի, երկիր տեսա, իմ հոր գերեզման պագեցի, իմ աչքերուն քսեցի Մուրադ գետի ջուր, իմ խարաբա տան շեմին նստա ու կուշտ լացի, իմ կարոտ առա, եկա»[4] : Պետքաղվարչության նախագահի պնդումին, թե կարոտը պետք է մոռանալ, և նոր սերունդը մոռանալու է, Առաքելը հակադարձում է ժողովրդի կենսափորձից հասունացած իմաստնությամբ. «-Կարոտ թոնդրի մոխրի տակ մնացած անթեղ կրակ է: Կարծես հանգեր է, չի երևա: Թոնդիր պաղեր է: Բայց որ մոխիր բացեն, անթեղ կրակ կերևա, կկայծկլտա… Անթեղ կրակ չմարի, կապրի»[5] : Սա նաև Քոչարի հեռահար հայացքն է՝ ուղղված գալիքի ճանապարհին:

Ցեղասպանությունից վերապրած մի ուրիշ կյանքի հոգեբանական պատմություն է «Նահապետ» վիպակը: Նահապետի հոգևոր երկփեղկվածությունը, ցեղասպանության մղձավանջի հիշողությունները, ընտանիքի սպանդը, ծննդավայրի կորստի վերապրումը, ցեղասպանությունից ու բռնագաղթից հետո իրար վերագտած հարազատների ապրումները, տոհմի ջիղը չկորցնելու պարտավորվածությունը, արևմտահայ մնացորդաց սերնդի կորստի կրկնակի ցավը Մեծ հայրենականի ռազմաճակատներում վեպում ամբողջացնում են ժամանակաշրջանի պատմահոգեբանական պատկերը: Ի տարբերություն Առաքելի, որի հոգեբանության մեջ տիրական է էրգրի կարոտը, Նահապետի հոգեաշխարհում գերտիրական է ցեղասպանության հիշողությունը. «- Սիրտ սպանվեր ի, սիրտ չունի: Ոտի վրա կքելի, կերթա, կիգա, բայց մեռեր ի, հոգով հեռացիր ի կյանքեն, աշխարհ էնոր համար պաղ գերեզման ի…. Կայծակ զարկեր, վառվիր ի, տեղ մոխիր ի մնացեր…»[6] :

Քոչարը ազգային վերածնության ճանապարհը վերահիմաստավորում է Նահապետի՝ մահվան դեմ տարած ապրելու սխրանքով: Տոհմի վերաշարունակության կամքով ամուսնանալով իր բախտակցի՝ Նուբարի հետ՝ Նահապետը վերահաստատում է ազգային լինելության գաղափարը. «-Կուզեմ իմ տոհմ տիսնամ…. Իմ աչքով տիսնամ, համոզվեմ, որ իմ գերդաստան կմեծնա, կաճի, կբազմանա…»[7] : «Շատ երեխա բերեք, որ ազգ ապրի, չկորսվի»,-

[1] Նույն տեղում, էջ 306:
[2] Նույն տեղում, էջ 310:
[3] Նույն տեղում, էջ 316-317:
[4] Նույն տեղում, էջ 331:
[5] Նույն տեղում, էջ 326-327:
[6] Նույն տեղում, էջ 371:
[7] Նույն տեղում, էջ 490:

ազգային գոյության պահպանման խնդրի գիտակցումն ունի անգամ ցեղասպանության մղձավանջային պատկերներից հոգեկան առողջությունը կորցրած Հակոբը՝ Նահապետի կնքահայրը՝ ուղենշելով գալիքի ճանապարհը. «–Առ, Նահապետ, տար փրկի Արտամետի խնձոր… Թուրքեր կացիններ առեր են, կկտրեն մեր խնձորի ծառեր… Արուն կիգա արմատներից, կուլան ծառեր, կմեռնեն ճյուղեր, փրկի էնոնց կյանք, Նահապետ…»[1] : Արտամետի խնձորները կորուսյալ հայրենիքի մասունքներից են, որ պահ են տրվում նոր ժամանակներին՝ որպես հեռվում մնացած հայրենիքի խորհրդանիշ: « -Էսօրվանից երդում կուտեմ և ուխտ կանեմ… Ուխտ կանեմ, որ ում տուն երեխա ծնվի, նրա դռան առաջ խնձորի ծառ տնկեմ և ամեն ամառ պատրուսեմ…»[2] : Մահվան մահճում անգամ չի խամրում փափագը. «-Կցանկանամ,-ասում է Նահապետը պատերազմից վերադարձած վիրավոր որդուն՝ Ժիրայրին,- որ ժուկով-ժամանակով արժանանաք ձեր հայրենի երկրին, տիսնաք մեր Վանա ծով ու մեր Սիփանա սար, մեր Արծկե ու Արտամետ, մեր Վարագ ու Ախթամար…»[3] :

Վիպակում Քոչարը թույլ է տվել նաև կուսակցական վերապահումներ՝ այս դեպքում ևս տուրք տալով գրական ենթատեքստի խորհրդային միտումներին: Հերոսներից մեկը՝ Ղուկասը, ժողովրդին քարոզում է, որ «Եթե բոլշևիկները չգային, ով գիտի, հիմա թուրքերն ու՞ր էին հասել, հիմա մենք էլ չկայինք: Ո՞վ էր կռվողը: Ժողովուրդը սովից մեռնում էր: Բանակ չկար, դաշնակցականները Հայաստանը կտրել էին Ռուսաստանից, օգնող չկար: Խորհրդային իշխանությունը եկավ, փրկեց հայ ազգին» [4]: Սա գրողի միանշանակ ընկալումն է, որից չհրաժարվեց ստեղծագործական կյանքի ամբողջ ընթացքում:

Գեղագիտական թերություններով հանդերձ՝ «Կարոտ» և «Նահապետ» վիպակները 1960-ական թթ. ազգային վերածնության և վերհուշի արձակի հիշարժան գործերից են: ««Կարոտ» և «Նահապետ» վիպակները,- նկատում է Ս. Արզումանյանը,- իրենց ներքին փիլիսոփայությամբ, գեղարվեստական ներգործուն լիցքով սովետահայ արձակի նվաճումներից են»[5] : Հ. Մաթևոսյանը Քոչարին համարում է «կռվից ուշացած հայդուկ»՝ «անելանելիության մեջ կաշկանդված իր շատ կարճ կյանքով»[6] :

Գրականություն

1. Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 3, Ե., 1986, «Սովետական գրող» հր.:
2. Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, հ. 2, Ե., Սովետ. Գրող, 1986:
3. Ս. Խանզադյան, Խոսնք, Հայաստանի լեռներ, Ե., 1980, «Սովետական գրող» հր.:
4. Ս. Ալաջաջյան, Եղեգները չխոնարհվեցին, Երկեր 3 գրքով, գիրք 3, Սովետական գրող հր., Ե., 1979:
5. Պ. Զեյթունցյան, Վերջին արևագալը, Ե., 1989:
6. Հ. Քոչար, Երկեր, Ե., «Սովետական գրող», 1980:
7. Մ. Շահինյան, Литературная газета, 1961, 7 октября.
8. «Գրական թերթ», 1980, թիվ 25:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Նարինե Հովհաննիսյան, բ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոն
e-mail: nare-luys@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 402:
[2] Նույն տեղում, էջ 447:
[3] Նույն տեղում, էջ 502:
[4] Հ. Քոչար, Երկեր, Ե., <<Սովետական գրող>>, 1980, 504 էջ, էջ 420:
[5] Ս. Արզումանյան, Սովետահայ վեպը, գիրք 3, Ե., 1986, <<Սովետական գրող>>, էջ 386, 454 էջ:
[6] <<Գրական թերթ>>, 1980, թիվ 25:

ՀՏԴ 941 (479. 243)
ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Ա - Բ

Գրականագիտություն

ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԳԻՐՔԸ. ԺԱՆՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր. *Արցախ, Ռաֆֆի, պատմաաշխարհագրական սուբյեկտ, 19-րդ դարի Արցախի մշակույթի մեջ, Խամսայի մելիքությունների դերը:*
Ключевые слова: *Арцах, Раффи, историко-географический субъект, в культуре Арцаха 19-го века, роль Меликств Хамсы.*
Key words: *Artsakh, Raffi, subject of the study, In the 19th century Literature of Artsakh, the political life of Khamsa Melikdoms.*

З. В. Балаян
КНИГА РАФФИ "МЕЛИКСТВА ХАМСЫ": АНАЛИЗЫ ЖАНРА

Исследование ценного исторического труда "Меликства Арцаха" прославленного армянского классика Раффи впервые в арменоведении нами проанализировано научно историко-филологически, литературоведчески на принципах герменевтики и аксиологии.

Исследование доведено до конца, учитывая представленную историком-романистом программу, целенаправленность, вопросы чести и достоинства ученого-исследователя, показ основополагающих частей армянской национальной идеологии, раскрытие поставленных важнейших и частных исторических явлений.

Z. Balayan
THE RAFFI'S BOOK « MELIK'S KINGDOM OF KHAMSA»:ANALYSES OF THE GENRE

This is the first fundamental historical, philological, literal analysisin Armenological studies of eminent work «Melikates of Khamsa» by Armenian classical author Raffi based on hermeneutic and axiological principles.

Step by step our research considers the program and strategy of talented historian, novelist and researcher, who studies both major and minor historical phenomena, following national ideology and adopted objectives.

Հայ մեծանուն դասական Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները» պատմական մեծարժեք ուսումնասիրությունը հայագիտության մեջ առաջին անգամ ենք գիտական պատմաբանասիրական, գրականագիտական հիմնավոր վերլուծության ենթարկում՝ նյութը բացահայտելով հերմենևտիկ (մեկնաբանական) եւ աքսիոլոգիական (արժեքաբանական) սկզբունքներով:

Ուսումնասիրությունը ավարտին է հասցված պատմավիպասան-պատմաբանի ներկայացրած ծրագրայնության, նպատակաուղղվածության, գիտնական-ուսումնասիրողի պատվախնդրության ու պատասխանատվության, հետապնդած եւ որդեգրած խնդիրների, ազգային գաղափարակառույցի ցուցման, արծարծած կարեւորագույն եւ մասնակի պատմական երեւույթների բացահայտումներին համաչափ ու զուգընթաց:

Ժանրերը իրենց կոնկրետ դրսեւորումների մեջ ներկայացնում են ավանդականի ու արդիականի միասնությունը: Այն լավագույնս է բնութագրում Բախտինը: «.... Ժանրի մեջ պահպանվող հնությունը ոչ թե մեռած, այլ հավերժ կենդանի, այսինքն՝ նորանալու ընդունակ հնություն է: Ժանրը ապրում է ներկայով, բայց միշտ հիշում է իր անցյալը, իր սկիզբը: Ժանրը՝ ստեղծագործական հիշողության ներկայացուցիչն է գրական զարգացման պրոցեսում: Հենց դրա համար էլ,- շարունակում է Բախտինը,- ժանրն ընդունակ է ապահովելու այդ զարգացման միասնությունը և անընդհատությունը»[1]:

Խոսելով ժանրերի մասին՝ Թումանյանը դրանք «խախուտ» է անվանում, զուրկ գիտականությունից: Այս տեսանկյունից նա հաճախ միեւնույն գրվածքը մե՛րթ իբրեւ լեգենդ, մե՛րթ՝ հեքիաթ է անվանում եւ այլն:

Սա նշանակում է, որ հաճախ գրական մշակները միեւնույն երկը՝ բալլադ, պոեմ, վեպ, պատմական ուսումնասիրություն, լեգենդ, պատմվածք եւ այլ ժանրեր տարբեր բնորոշումներով են ներկայացրել:

Գրող Ռաֆֆին «Խամսայի մելիքությունները» անվանելով պատմական ուսումնասիրություն, այն, միեւնույն է՝ համարում է գրականության արժեք:

[1] Бахтин М., Проблемы поэтики Достоевского, Москва, 1963, стр.141-142.

Գրականագիտական դաշտում օգտվելով նշանագիտական մեթոդից, «Խամսայի մելիքությունները» ներկայացրել ենք որպես գրականագիտական ուսումնասիրություն:

«Վիպագրությունը ռուսահայերի մեջ» հոդվածում, որը տպագրվել է գրողի մահվանից հետո, Ռաֆֆին, դժգոհություն հայտնելով հասարակության կողմից ոչ ճշմարտացի գնահատվելու համար, նշում է. «Քանի դեռ գործին հմուտ և արդարադատ անձինք հանձն չեն առնում քննադատել իրանց գործիչների արդյունքները…., այդ դեպքում գործիչը ստիպված է, ոչ թե ինքնագովության համար, այլ գեթ ինքնապաշտպանության համար ցույց տալ, թե ինչ է արել ինքը.- հեղինակը, թվարկելով իր գործունեության շրջանակները, մատնանշում է մի կարեւոր միտք,- Մեր գրական ասպարեզում գործել ենք՝ թե իբրև հրապարակախոս և թե իբրև վիպագիր…. Մենք մի փոքր հաշիվ կներկայացնենք միայն մեր **վիպական** (ընդգ.- Զ. Բ.) վաստակների մասին»[1]:

Ռաֆֆին նշում է նաեւ, որ իր շոշափած հարցերը, ներկայացրած հարցադրումները՝ հասարակության կազմը, միջավայրը, կերպավորված խավերը, անցյալը, ներկան, հայ իրականության մեջ **առաջինն ինքն է գրականության նյութ** դարձնում :

Խոսելով գեղարվեստական երկերում առկա վիպական եւ հրապարակախոսական պաթոսի, արվեստի ունեցած հատկանիշների, հերոսների հոգեբանական ներսուզումների, մարդկային հարաբերությունների հետախուզման ու տրամաբանական, փիլիսոփայական ելագծերի մասին՝ գրականագետ Ս. Արզումանյանն ընդգծում է. «Եթե գեղարվեստի դիտանկյունից գրական երկում առաջնայինը արվեստն է, պատկերային կառույցը, հրապարակախոսական գործերում՝ գլխավորը դառնում է մտքի թարմությունն ու սրությունը, հայացքի դիպուկությունը, կողմնորոշման հրատապությունը»[2]:

Ռաֆֆին նշում է, որ իրենից առաջ ո՛չ մի վիպասան ուշադրություն չի դարձրել անցյալի վրա: Հիրավի, նա առաջինն էր, որ մտավ պատմության խորքերն ու մոռացության վիհերից լույս աշխարհ հանեց, կենդանացրեց հայոց հին ժամանակների հերոսներին՝ գրելով «Դավիթ Բեկ», «Պարույր Հայկազն», «Սամվել» վեպերը, ապա թարգմանեց Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագէտը» պատմավեպը:

Իր **վիպական վաստակի** մեջ ընդգրկելով նաեւ «Խամսայի մելիքությունները«՝ հեղինակը այդ մասին գրում է. «Մեզանից առաջ հայոց պատմությունը սկսվում էր Հայկից և վերջանում էր Լևոն Զ-ով: Մենք **եղանք առաջինը**, որ անհայտության միջից գտանք մի կորած հայկական իշխանություն, երբ գրեցինք «Խամսայի մելիությունները»[3]:

Ռաֆֆին նշում է, որ ինքը չի ունեցել իր նախորդը, իրեն էլ հետեւել են հայ նոր գրողները: **Առաջինն է** եղել, որ վստահություն է ունեցել հայոց դեռ անմշակ, աղքատ գրական լեզուն դարձնելու վեպի լեզու՝ իր աշխատությունների մեջ պահպանելով իրեն հատուկ ինքնուրույնությունը:

Հեղինակը իրեն իբրեւ մի **նոր ուղղության կարապետ** (ընդգծ. - Զ. Բ.) է ներկայացնում, նշելով, որ շատ բնական է, եթե թշնամիներ եւ նախանձողներ վաստակի եւ… վաստակել է: «Շատ գործել և սակավ խոսել,- միշտ այս է եղել մեր կյանքի կանոնը… Թող ներվի մեզ, որ այս անգամ մեղանչեցինք մեր սովորական համեստության դեմ»[4],- ընդհանրացնում է գրողը:

Իր երկերի «թագն ու պսակը» համարելով «Խամսայի մելիքությունները», այն որպես «պատմական ուսումնասիրություն» (էջ 163) ներկայացնելով՝ գեղագետը գրքի վերջում, աշխատության բաժանության սկզբունքի մասին խոսելով, միաժամանակ նշում է ժանրի հարցում կողմնորոշող մի կարեւոր հանգամանք՝ իր գիրքը համարելով հայ գրականությանը մատուցած մի փոքր ծառայություն. «Երջանիկ կհամարեմ ինձ, եթե հաջողվի այս ձեռնարկության մեջ մի փոքրիկ ծառայություն անել **մեր գրականությանը** (ընդգծ. - Զ. Բ.) »[5] :

Այսպիսով՝ «Խամսայի մելիքությունները » Ռաֆֆին համարում է իր առաքելությունը **ոչ թե պատմագրության, այլ գրականության մեջ: Այս միտումը կարող ենք այլ օրինակներում եւս** ցույց տալ:

Տխուր փաստ դիտելով ընկերությունների սպանեցուցիչ դերը հասարակական կյանքում՝ Ռաֆֆին գալիս է հետեւյալ մտքին. «Բայց ինչ որ ճշմարիտ է, այն է, որ մեզանում մեծ պետք է զգացվում մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր անցյալը և ներկան ուսումնասիրելու»[6]: Այդ մտահանգումներն առիթ

[1] Ռաֆֆի, Վիպագրությունը ռուսահայերի մեջ, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Ռաֆֆի, Վիպագրությունը ռուսահայերի մեջ), էջ160 :

[2] Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 5-րդ հատոր, Երեւան, ՀԳՄ հրատարակչություն, 2004 (այսուհետեւ՝ Արզումանյան Ս., Արդի հայ վեպը), էջ 77 :

[3] Ռաֆֆի, Վիպագրությունը ռուսահայերի մեջ, էջ161:

[4] Նույն տեղում, էջ 162:

[5] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները), էջ 395:

[6] Նույն տեղում, էջ 394-395:

հանդիսացան «Խամսայի մելիքությունների» համար նյութեր հայթայթելու եւ դրանք գրի առնելու: Արցախի դրվագներով լի պատմության ոչ հեռավոր անցյալի մասին խորհելով՝ Ռաֆֆին նորից է ընդգծում իր առանցքային երկի՝ «Խամսայի մելիքությունների» որ ժանրին, գրական որ տարածքին դասելու միտքը. «Զանազան խորշերում ընկած էին ծածկված, մոռացված ձեռագրեր, որոնք դեռ **գրականության** (ընդգծ. - Զ. Բ.) սեփականություն չէին դարձել»[1]:

Իսկ դրանք ոչ միայն պատմական վավերագրեր, վիմագրեր, այլեւայլ տիպի փաստակտորներ էին, այլ նաեւ ավանդություններ, հիշատակարաններ, հայսմավուրքներ, ժողովրդական արարումների անդրադարձներ. «Մեզ հաջողվեց ձեռք բերել բավականաչափ, բոլորովին անհայտ, գրավոր նյութեր և, որ ամենագլխավորն է, ժողովրդի մոտ լինելով, մենք առիթ ունեցանք հավաքել նրա մեջ պահպանված ավանդությունները»[2] :

Վիպասան Ռաֆֆին խավարից լույս աշխարհ է հանում մի կորած, մոռացված իշխանության պատմություն՝ ծախսելով իր ամենաչքավոր նյութական միջոցները, ակնկալելով միայն, որ իր հակառակորդները չխանգարեն սկսած գործը, միաժամանակ հոգ տանելով այն մասին, որ ընթերցողները իր գիրքը գրողի երեւակայության արդյունք չհամարեն, իսկ երեւակայությամբ ստեղծվում են ոչ թե պատմական, այլ վիպական երկեր. «Եվ որպեսզի կասկածանքի տեղիք չմնար, թե «Խամսայի մելիքությունները » հեղինակի **երևակայության** (ընդգծ. - Զ. Բ.) ծնունդ է, և որպեսզի ցույց տայինք, թե այդ աշխատությունը հիմնված է պատմական ճիշտ փաստերի վրա, այդ նպատակով մենք մեր գրքի վերջաբանի մեջ (եր. 369-414) մի առ մի տպեցինք այն բոլոր աղբյուրների անունները, մինչև անգամ նրանց բովանդակությունը, որոնցից մենք օգուտ էինք քաղել մեր պատմությունը կազմելու ժամանակ: Եվ այդ բավական չհամարելով,- շարունակում է Ռաֆֆին,- մենք մինչև անգամ խոստացանք առանձին հատորով տպել մեր ձեռքի տակ ունեցած բոլոր դոկումենտների իսկականները»[3]:

Ստացվում է, որ հեղինակն իր հերթին իր հյուսած գիրքը՝ «Խամսայի մելիքությունները », **գրականության** (ընդգծ.- Զ. Բ.) համար ստեղծած համարելով՝ հետամուտ է, որ այն ընդունեն որպես հավաստի աղբյուր մելիքության ժամանակների պատմության, որի մեջ անփոփված կլինեն բազմապիսի հրովարտակների եւ այլեւայլ նյութերի օրինակները, մելիքների տոհմերի վերաբերյալ գտնված արձանագրությունների օրինակները ե՛ւ այլն, ե՛ւ այլն: «Այդ բոլորը տպված կլինեն իմ սեփական բացատրություններով և ծանոթություններով » (Եր. 398, 399) »[4],- գրում է Ռաֆֆին: «Խամսայի մելիքությունները» ստեղծելու գործի հանդեպ պատասխանատվություն ունենալով, Ռաֆֆին մի անգամ եւս ընդգծում է, որ գիրքը կհանդիսանա հայ գրականության երկ. «Եվ եթե խոստացել ենք մի այսպիսի հավաքածու տպել, որպես հավելված «Խամսայի մելիքությունների », այստեղից շատ պարզ է, որ մեր խոստմունքը թե դեպի հասարակությունը և թե դեպի **գրականությունը** (ընդգծ. - Զ. Բ.) կատարելու համար, ոչ միայն հարկավոր է, այլև անհրաժեշտ է, որ մի անգամ մեզ հանձնված և մեր ձեռքի տակ գտնված նյութերը մեզ մոտ մնային »[5] :

Ռաֆֆու ԵԺ 10-րդ հատորի ծանոթագրություններում նշվում է, թե գրողը ընթերցող ամենալայն շրջանակներին հայտնի էր իբրեւ վիպասան, հրապարակախոս, քննադատ, մանկավարժ, հասարակական ու քաղաքական գործիչ, եւ երբ 1882 թ. «Մշակում» հրատարակվում է »«Խամսայի մելիքությունները », ընթերցողները՝ ի դեմս նշանավոր վիպասանի տեսնում են նաեւ ոչ հեռավոր անցյալի տարաբնույթ հարցերին քաջատեղյակ մի պատմաբանի[6]:

«Խամսայի մելիքությունները» գրելու շարժառիթի մասին տարբեր պահերի խոսելու ժամանակ, Ռաֆֆին գիրքը անվանում է գրականության արժեք, բայց եւ պարտադիր կերպով ձգտում է մելիքության ժամանակների պատմությունը գրելու ընթացքում շարադրվող դեպքերը ներկայացնել տարաբնույթ փաստերի վրա հիմնված ապացույցներով:

Պատմական նյութին զուգահեռ «Խամսայի մելիքությունները» ներհյուսված է գեղարվեստական յուրահատկություններով, գեղարվեստի շերտերով, որոնք գրքին հաղորդում են վիպական շունչ ու հմայք, փիլիսոփայական մտասուզումներ:

Քանի որ հայ ժողովրդի, ներառյալ Արցախի պատմությունը՝ ունեցել է ծանր ողբերգություններով, կոտորածներով լի ժամանակներ, ուստի գազանակերպ թշնամիներին ու նրանց վայ «գիտնականներին» մերթ-մերթ էլ պետք է հիշեցնել, թե ո՞վ է հայ ժողովուրդը, որտեղի՞ց է գալիս եւ

[1] Ռաֆֆի, Նամակ խմբագրին,ԵԺ, տասներորդ հատոր (այսուհետեւ՝ Ռաֆֆի, Նամակ խմբագրին), էջ147:
[2] Նույն տեղում, էջ 147:
[3] Նույն տեղում, էջ 148:
[4] Նույն տեղում, էջ 149:
[5] Նույն տեղում, էջ 149:
[6] Տես նույն տեղում, էջ 655 :

ո՞ւր է գնում, տե՞ր է իր վաղեմի առաքինություններին ու հայրենիքի պահպանման ուխտին, ազատության ճանապարհին ու նրա գաղափարախոսությանը, փիլիսոփայությանը:

Հիշենք, թե ինչու էր պատմահայր Մ. Խորենացին «Հայոց պատմության» մեջ առանձնանշում. «Որովհետև թեպետ մենք փոքր ածու(այստեղ՝ ազգ) ենք և շատ սահմանափակ թվով և շատ անգամ օտար թագավորության տակ նվաճված, բայց և այնպես մեր աշխարհում էլ քաջության շատ գործեր կան գործված, գրելու և հիշատակելու արժանի» կամ քաղաքական հարցադրում կատարում, թե ինչու մեր նախնիները՝«նրանցից ոչ ոք, հոգ չտարավ գրի առնելու(Գիրք առաջին,Գ) »[1] իրենց թագավորական մատյաններում իրենց կատարած գործերը, այս տեսանկյունից նրանց բարքը համարելով անիմաստասեր: Պատմահայրը Գողթան երգիչներից լսած ու գրի առած շարքը երկու մասերի՝ պատմականի եւ վիպականի բաժանելով, ցույց է տալիս փաստացիություն ունեցող մասի՝ պատմականի առավելությունը, որովհետեւ պետք էր թշնամիներին հիշեցնել, որ հայերն ունեցել են թագավորական-իշխանական կարգ: Բայց եւ երկրորդ՝ հնարածին-առասպելածին շարքը եւս ստեղծելով՝ դարերին պատգամել է մեր պատմության հնագույն՝ հեթանոսական ժամանակների թե՛ պատմական էջերը, թե՛ վիպական հյուսվածքները, թե՛ **հայ ժողովրդի հոգեւոր հարուստ գանձարանը**:

Այս տեսանկյունից ճիշտ է նկատում Ս. Արզումանյանը, երբ նշում է անցյալի ու ներկայի քննաբանների կրած ու թողած ազդեցությունների, ունեցած անքակտելի կապի ու այդ ամենի արգասաբեր հունձքի ու ստացած արդյունքների մասին. «Ավանդականն այն է,- գրում է նա,- որ նախորդներն են ազդեցություն թողնում հետնորդների վրա: Ամեն մի սերունդ վերցնում է անցյալից, ավագներից իր, իր օրերի և ժամանակների համար կենսականը, մնայունը, գեղարվեստական (ինչու չէ նաեւ պատմական ու այլ հայեցակարգի որակները - Զ. Բ.) հնչեղությունն ու թարմությունը պահպանած արժեքները»[2]:

Այսպիսով՝ Ռաֆֆին, իր իսկ առանձնադիտմամբ, **հայ գրականության** համար գրած գրքի՝ «Խամսայի մելիքությունների» պատմությունը (որպեսզի այն միայն երեւակայանի՝ վիպականի արդյունք չհամարվի ընթերցող-քննաբանների կողմից, լինի փաստարկելի-հերքելի-ապացուցելի) հյուսել է հայ եւ օտար պատմագրական, բանահյուսական աղբյուրների համադրմամբ ու արժեւորմամբ, ստեղծել վիպական ու պատմական հերոսների կերպարներ, տվել պատմական ու գեղարվեստական իրադարձությունների սինթեզը, արցախահայության, մելիքությունների ժամանակաշրջանի գեղարվեստական եւ պատմական դիմագիծը:

Վիպասան Ռաֆֆին, հետեւելով իր մեծ նախորդների՝ Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Մ. Կաղանկատվացու, Ասողիկի, Ստ. Օրբելյանի, Վ. Արեւելցու, Կ. Գանձակեցու. Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի օրինակներին, փորձել է ստեղծել թե՛ «պետականության հուշ» (Ս. Սարինյան) ներկայացնող Խամսայի մելիքությունների երկուհարյուրամյա վիպապատմական նկարագիրը, թե՛ Արցախի մելիքությունների պատմությունը փրկելու մոռացումից, թե՛՝ մենք էլ մեր հերթին, ազգերի վայ «գիտնականներին» հիշեցնելու Հայոց Արցախի՝ նախնի ժամանակներից եկող պատմամշակութային երկրի գոյության փաստը եւ, միաժամանակ հուժկու ապտակ հասցնելու նրանց հոխորտացող, թուլամիտ ուղեղներին: Իսկ որ գրականությունն ու պատմությունը, գրականագիտությունն ու պատմագիտությունը, հաճախ նաեւ մնացած գիտությունները միահյուս են ի բնե՝ տեսականորեն ընդունելի է, եւ տվյալ դեպքում **նյութը պետք է քննել նաեւ նշանագիտության մեթոդով, թե՛ որպես նշանագետ-գրականագետ, նշանագետ-պատմաբան, նշանագետ-հոգեբան, թե՛ ՝ նշանագետ-աշխարհագետ, նշանագետ-ֆոլկլորագետ** եւ հաստատել, որ այն հերքումների ու հաստատումների ենթակա է: Վերլուծման նման մեթոդը նշանագիտության ոլորտներն է հատկանշում: Կարծում ենք, որ Ռաֆֆին էլ իր գիրքը գրելիս առաջնորդվել (իմացությամբ, թե անիմացությամբ) է նշանագրության մեթոդով, մենք էլ՝ «Խամսայի մելիքությունների» վերլուծության ժամանակ:

«Պատմությունը՝ ճշմարտության մայր» հոդվածում ռուս հայտնի գիտնական Դ. Լիխաչյովը կարեւոր տրամաբանական մտահանգման է հասնում. գեղարվեստական ստեղծագործության ոճին անդրադառնալիս անիմաստ է համարում ուսումնասիրվող երկերի այն մասերը, որոնք «չեն լուսաբանվում խորը պատմականությամբ»[3], որն իր հերթին հնարավորություն է տալիս հեռու մնալ «ծայրահեղ սուբյեկտիվիզմից» եւ չտարվել հնարավոր «**իմպրենսիոնիստական** (տպավորապաշտական- ընդգծ.- Զ. Բ.) գրականագիտությամբ»:

Գրապատմական երկի գնահատման չափորոշիչի մասին խոսելիս, հեղինակը հետեւյալ կերպ է ավարտում իր հոդվածը՝ բարձր գնահատելով պատմական մոտեցման դերը. «Պատմական մոտեցումը՝ իր բոլոր դրևսորումներով՝ տեքստի պատմությունից, կյանքի պատմությունից,

[1] Մովսես Խորենացու ասույթները, Երեւան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991, էջ 7 :
[2] Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, էջ 7:
[3] Лихачев Д., История- мать истины, Ленинград, издательсто ‘‘Советский писатель’’, 1981, ст. 210 :

գրականության պատմությունից և ընդհանուր պատմությունից մինչև հարցի պատմությունը, մեր գիտության նյարդն է.... »[1]:

Գիտական աշխատանքի ընթացքում փորձել ենք հետեւել քննվող փաստական նյութի ձեռքբերմանն ու նրա հնարավոր իմացությանը, ունենալ որոշակի վերլուծական, համադրական ընկալողականություն եւ դիտողականություն, ինտելեկտուալ մտածողություն, ձեռք բերել գրականագիտական համապատասխան հերքումի եւ հաստատումի փորձ, քանի որ ըստ գրականագետ Յու. Լոտմանի «Նոր տիպի գրականագետը ուսումնասիրող է, որը պետք է միավորի ինքնուրույն ձեռք բերած էմպիրիկ նյութը դեդուկտիվ մտածողության հետ՝ մշակված ճշգրիտ գիտությունների կողմից»[2]:

Ռաֆֆին, ըստ բովանդակային կառուցվածքի, «Խամսայի մելիքությունները» ստեղծել է երկու զուգահեռ ծրագրայնությամբ՝ գրավոր աղբյուրների եւ ավանդությունների հիման վրա: Հայթաթված գրավոր աղբյուրներից շատերը, լինելով պատմական փաստեր, իրենց խորքում ամփոփում են նաեւ վիպական կտորներ: Ելնելով հայ ժողովրդի ստեղծագործ ոգուց, այլ կերպ էլ պատկերացնել հնարավոր չի: Ռաֆֆին ձգտել է պատմական փաստը որպես կատարված իրողություն ներկայացնել, փորձել նաեւ պարզել, գտնել նրա «կատարող տերը»:

Գրքի վիպական նյութը գրողը քաղել է իր շրջագայությունների ժամանակ հայթայթած ժողովրդական ավանդություններից, զրույցներից. «Ժողովուրդը,- գրում է Ռաֆֆին,- ունի իր լեգենդները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանց կատարածը չէին կարող լինել.... Հայտնի բան է, միայն ժողովրդական ավանդությունների վրա հիմնվելով, շատ դժվար կլիներ կազմել մի քանի դարերի շարունակ պատմությունը»[3:]

Դրա համար է նա նաեւ դիմում գրավոր հավաստի աղբյուրներին: Ըստ Ռաֆֆու՝ ավանդությունները, որոնցից նա օգտվել է, Խամսայի մելիքությունների պատմության ամենահարուստ մասն են կազմում: Վիպասանը ավանդությունների հետ վարվել է այնպես, ինչպես բնագետը մի հնադարյան անծանոթ կենդանու ոսկորների կույտի հետ՝ առաջնորդվելով կենսաբանական օրենքներով:

Հեղինակը ստեղծել է **գեղարվեստական եւ պատմական կերպարների** մի պատկերասրահ, սկզբունքորեն այն հասցնելով տիպականացված մի համակարգի, որտեղ տիպական կերպարները ներկայացված են տիպական հանգամանքների մեջ:

«Խամսայի մելիքությունների» պատկերները համակարգելով ըստ բովանդակային կառուցվածքի՝ կարելի է առանձնանշել երեք ուղղություն՝ առաջինը՝ բնաաշխարհագրական՝ կապված հայրենագիտության կոնցեպցիայի բացահայտմանը, հայրենի երկրի ճանաչողական ուղղվածությանը, երկրորդը՝ սոցիալական կառուցվածքի քննությունը, երրորդը՝ Խամսայի մելիքությունների պատմավիպական նկարագրի վերհանումը: Գրողի՝ երկու ամիս տեւողությամբ ճանապարհորդությունը Ադվանից աշխարհի շուրջը տվեց իր պտուղները: Այն Ռաֆֆուն հնարավորություն տվեց ճանաչելու հայրենի երկիրը, արցախահայությանը, Արցախի մելիքություններն իրենց կենտրոններով, ավերակ ու կանգուն բերդերով, հոգեւոր համալիրներով: Վիպասանը, ձեռքի տակ հավաքված հին մելիքական պալատների հուշիկներից, հայսմավուրքներից, ձեռագիր հիշատակարաններից նյութեր քաղելով, ծերունիներից լսելով սիրելի հերոսների կատարած քաջագործություններին ու անձնական կյանքին նվիրված հիշողությունների հետաքրքիր ու արժեքավոր պատառիկներ, ստեղծել է Խամսայի մելիքների պատմությունը:

«Խամսայի մելիքություններում» առկա են նաեւ ավանդությունների ու տարբեր ժանրատեսակներով արարված երգերի, վիպական կտորների վերածված քնարական պատումներ, որոնց օգնությամբ Ռաֆֆին հյուսել է արցախահայության եւ մելիքական տների՝ նախնի ժամանակներից եկող պատմությունը՝ ստեղծելով Արցախի մելիքների եւ հոգեւոր գործիչների բարոյաէթիկական ու գեղագիտական, փիլիսոփայական, պատմական մտասուզումներով, պայքարի ոգով, հերոսացումներով ու կորուստներով, մաքառումներով՝ դրամատիզմով լի պատմությունն ու քաղաքական նկարագիրը:

Ռաֆֆին հատկանշել է նաեւ արցախահայության ու մելիքների առաքինությունները, տոհմիկ հոգեբանությունը, արտաքին ու ներքին ուժերի դեմ նրանց առճակատումները, առնչությունները Անդրկովկասյան ժողովուրդների հետ, հարեւան մեծ տերությունների որդեգրած քաղաքական

[1] Лихачев Д., История-мать истины, Ленинград, издательсто ‘‘Советский писатель’’, 1981, ст. 214 .
[2] Лотман Ю., Литературоведение должно быть наукой, Вопросы литературы, 1967, N 1, ст. 100 .
[3] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 379, 378:

տեսադաշտում ճշմարտացի ներկայացրել հայ-ռուսական, հայ-վրացական, հայ-պարսկական հարաբերությունների խաբուսիկ ու վտանգներով լի շարժը:

«Մի ամբողջ պատմություն կորչում է, անհետանում է, իսկ մենք դրա վրա ուշադրություն չենք դարձնում»[1],- այդ ամենի հնարավոր կորստի ահազանգով գրում է Ռաֆֆին:

Այս մտահոգությամբ տարված, մելիքությունների մասին պահպանված հնարավոր պատմությունը հավաքելու, պատմություն դարձնելու առաքելությամբ էլ Ռաֆֆին գրում է «Խամսայի մելիքությունները» արժեքավոր գիրքը՝ այն համարելով **հայ գրականության** (ընդգծ. - Զ. Բ.) միավոր:

Գիրք, որի յուրաքանչյուր էջից խոսում են դարերը՝ առած ոգի եւ ուխտ, մաքառում եւ հերոսացում, միաժամանակ կորուստներ արձանագրելով. ավերակ մատուռների, բերդերի հուշիկներ, ժողովրդական հեծեծանքներ, հուսացումներ, հաղթական կոչնակներ, վիպական բազմաբույլ կտորներից հառնող ճակատագրեր, գրականության եւ պատմության ուշադրությանն արժանի էջեր, գրական եւ պատմական կերպարների զուգորդումներ, հերոսների ու հերոսացումների գործելադաշտ, քաղաքական եւ հայրենիքի հոգեւոր ու ֆիզիկական մարմինը պահպանելու մարտադաշտ, վիպապատմական կերպավորումների ռաֆֆիական մեկնումներ, պատմականի ու վիպականի սինթեզումներ…

Ուշ ռոմանտիզմի ուղղության ներկայացուցիչ Ռաֆֆին գրելով Խամսայի մելիքությունները«, փորձել է ցույց տալ նաեւ արցախահայության ու մելիքությունների սոցիալական, բարոյահոգեբանական, քաղաքական, արարչագործ էության, ազգային գոյաբանության, գաղափարաբանությանն առնչվող հարցերը, տարածաշրջանում մելիքությունների ճակատագրի հետ կապված բազմապիսի հարցադրումները՝ ընդլայնելով ժամանակաշրջանի առաջադեմ գաղափարներով քայլող մելիքների-արցախահայության մտախառնվածքի, ազգային նկարագրի, քաղաքական ներուժի ու ինքիշխանության, պետականության պահպանման մասին պատկերացումները:

Ինչպես Ռաֆֆու ստեղծագործության առանձին երկերի դեպքում, նույնպես «Խամսայի մելիքությունների» վերաբերյալ հետազոտող-մեկնաբանները առանցք են դարձրել ազգային ազատագրության գաղափարի հարցադրումները՝ անտեսելով երկի սյուժեների ընթացքը հատկանշող տարաբնույթ կենսապատկերների, ժողովրդական ստեղծագործ ոգու իմացական եւ բարոյական, գեղագիտական, փիլիսոփայական նշանակությունը, կերպարների մեկնության վերաբերյալ ռաֆֆիական հարցադրումները, այդ ամենից ուղղորդված գեղարվեստական-փիլիսոփայական ընթերցումները:

Քանի որ նման գրականության մեջ հատկանշական է դառնում հերոսների վարքաբանությունը, նրանց փնտրած, բայց չգտած ո՛չ միայն ռոմանտիկական, այլեւ իրական աշխարհը, այդ ամենը գեղարվեստում ցույց տալու ձգտումը, ժողովրդական հուշապատումները, նրա պատկերավոր մտածողությունը, թողած պատմության դասերը գեղարվեստականացնելու պահանջը, որոնք պարտադրում են լինել թե՛ պատմական, թե՛ գեղարվեստական ազգ, ու քանի որ գեղարվեստում են երեւան գալիս մարդկային առաքինությունները՝ բարոյական, իմացական հատկանիշները, զգացմունքային որակները, ուստի ազգային ու համազգային, հասարակական գոյության ոգով ամրապնդված որոշիչները, նրանց կերպը մեկնաբանելը, նկարագրելը դառնում են պարտադիր. »Դա, որպես ինձ թվում է,- գրում է Ռաֆֆին,- այն գերագույն տիրապետող ոգին է, որ ինքը գոյություն ունի անհայտության մեջ, որ իրան պահում էր անմատչելի, իսկ իր հզոր, աներեւույթ ձեռքով կառավարում է մարդկանց սրտերը, մարդկանց մտքերը և նրանց ուղղություն է տալիս»[2]:

Փորձելով ցույց տալ ազգային գաղափարաբանության աղերսները «Խամսայի մելիքություններում»՝ Ռաֆֆին **կերպարաստեղծ մի համակարգ** է հատկանշում՝ մելիքների կերպավորումներում ցույց տալիս ազգային ոգին, ապա ազգային գաղափարաբանության շուրջ՝ նրանց մտախառնվածքի դրսեւորումները: Խոսելով «ազգային գաղափարաբանություն» հասկացության շուրջ ակադեմիկոս Ս. Սարինյանը ընդգծում է գաղափարի երեւույթաբանական հատկանիշը, ոգու դրսեւորումը գեղագիտության մեջ՝ նշելով. «Ազգային գաղափարաբանությունը հարաբերական է ազգային ոգուն»[3],- այս տեսանկյունից Ռաֆֆին, անշուշտ ներկայացնում է հայոց ազգի, առանձնադիտված՝ արցախահայության պատմության եւ գրականության փիլիսոփայությունը:

«Խամսայի մելիքություններում» Ռաֆֆին, վերակենդանացնելով ոչ հեռավոր անցյալի մելիքությունների քաղաքական դիմագիծը, արժեւորել է արցախահայության մաքառումները, մելիքների նպատակամետ գործունեությունը՝ գաղափարների հետադարձ նկարագիրը տալով:

---

[1] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 388-389 :

[2] Ռաֆֆի, Եժ, հ. 6, Երեւան, 1986, էջ18:

[3] Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, Երեւան, « Զանգակ-97» , հրատարակչություն, 2005 (այսուհետեւ՝ Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն), էջ 4:

Xvll-xvlll դարերում սկզբնավորված հայ գաղափարաբանության դասական շրջանը ավարտին է հասնում XlX դարի առաջին տասնամյակներին: Հաջորդ սերունդը, որի ժամանակակիցները Խամսայի մելիքներն էին նաեւ, նախորդից ժառանգեց վիպական ու պատմական հերոսներով բնակեցված պատմաաշխարհագրական մի երկրամաս՝ Հայաստան-Արցախ շաղախով՝ լի հոգեւոր, մշակութային ծանրաբեռ արարումներով:

Ճարունակելով իր նախորդների՝ Աբովյանի, Նալբանդյանի ավանդները, ազգային գաղափարաբանության մեկնումները, Ռաֆֆին ոչ միայն պատմավեպերում, այլեւ «Խամսայի մելիքություններում», որպես գրականության արժեք[1] առաջադրեց ու զարգացրեց ազգային գաղափարաբանության հարցադրումները, գեղագիտական շերտերը, որում գեղագետ Ռաֆֆու երեւակայության ու նոր մտասուգումների բազմապիսի դրսեւորումներ են նկատվում, աշխարհիկ եւ հոգեւոր առաջնորդների կերպավորումների նկարագրությամբ բացահայտվում վիպական հետաքրքիր անդրադարձներ՝ նրանց գաղափարական դատողություններում ընդգծելով հայրենիքի ճակատագրի վերաբերյալ փիլիսոփայական ընդհանրացումները:

Գրականության ցանկ

ա. հայերեն

1. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 5-րդ հատոր, Երեւան, ՀԳՄ հրատարակչություն, 2004 :
2. Մովսես Խորենացու ասույթները, Երեւան, Հայաստանի ԳԱ հրատարակչություն, 1991 :
3. Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, Երեւան, « Զանգակ-97» հրատարակչություն, 2005 :
4. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, ԵԺ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959:
5. Ռաֆֆի, Վիպագրությունը ռուսահայերի մեջ, ԵԺ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Ռաֆֆի, Վիպագրությունը ռուսահայերի մեջ), էջ160 :
6. Ռաֆֆի, ԵԺ, հ. 6, Երեւան, 1986, էջ18:
7. Ռաֆֆի, Նամակ խմբագրին,ԵԺ, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959:

բ. ռուսերեն

1. Бахтин М., Проблемы поэтики Достоевского, Москва, 1963, стр.141-142.
2. Лихачев Д., История- мать истины, Ленинград, издательсто ‘‘Советский писатель’’, 1981
3. Лихачев Д., История-мать истины, Ленинград, издательсто ‘‘Советский писатель’’, 1981.
4. Лотман Ю., Литературоведение должно быть наукой, Вопросы литературы, 1967, N 1.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զինաիդա Բալայան, դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն

E-mail: zinaida_araqelyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

[1] Տե՛ս Ռաֆֆի, ԵԺ, հ. 10, էջ 147,148,149, 395:

ՀՏԴ 941 (479. 243) Գրականագիտություն
ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Բ 706

ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԵՐԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ, Սիլվա ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր. *Աշխատանքի երկրորդ գլուխը, 18-19-րդ դարեր, Արփիար Արփիարյան, «Խամսայի մելիքությունները», հայ հեղինակ, Ռաֆֆի, տաղանդավոր պատմաբան, ռոմանտիկ, Մովսես Խորենացի, հաղթանակ, կռիվ, ազգային գաղափարախոսություն:*

Ключевые слова: *Вторая глава работы, 18-19 веков, А. Арпиарян,"Меликства Хамсы", армянский автор, Раффи, талантливый историк, романист, Мовсес Хоренаци, победа, война, национальная идеология.*

Key words*: The third chapter, 18-19th, A. Arpiaryan,«Melikates of Khamsa», Armenian author, Raffi, talented historian, novelist, Movses Khorenatsi, victory, war, national ideology*

З. Балаян, С. Хачатрян

СИСТЕМА ОБРАЗОВ ПРОИЗВЕДЕНИЯ РАФФИ «МЕЛИСТВА ХАМСЫ»

Исследование, на наш взгляд, ценно новой мыслью в арменоведении и арцаховедении ,так как, как и "История Армении" Мовсеса Хоренаци, так и исторические исследования "Меликства Хамсы" Раффи для армянского народа и для армян Арцаха особенно получают учебно-научную, историческую, литературную большую значимость.

Мы полностью исследовали, представляя основную направленность данной работы Раффи и отмечая политические причины распада Меликст Хамсы, используя систему революции.

Научные тезисы актуальны и современны и доказываются научно.

Z. Balayan, S. Khachatryan

THE SYSTEM OF IMAGES OF RAFFI'S WORK « MELIK'S KINGDOM OF KHAMSA»

Hereby, the importance of the goal of our research is the specific expression of Armenological study, since Raffi's «Melikates of Khamsa», like «Armenian History» of our venerable historian Movses Khorenatsi, acquires immense literary, historical, scientific and classical value for Armenian people and the Armenians of Artsakh.

The study was newly analyzed by Raffi as regards the ideological orientation of the book and the political causes of decline of melikdoms of Khamsa.

The thesis is actual and might be proved scientifically.

Ուսումնասիրության նպատակադրումը, մեր կարծիքով, արժեւորվում է որպես հայագիտական-արցախագիտական մտքի նորովի դրսեւորում, քանի որ, ինչպես պահմտահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկասիրությունը, այնպես էլ Ռաֆֆու «Խամսայի մելիքությունները» պատմական ուսումնասիրությունը հայ ժողովրդի, արցախահայության համար դասագրքային ու գիտական, պատմական, գրական մեծ արժեք է ստանում:

Աշխատանքն ամբողջությամբ ***նորովի*** *քննել ենք* ***վերագնահատման մեթոդով՝*** *մեկնելով Ռաֆֆու այդ երկի գաղափարախոսական հիմնական ուղղվածությունը եւ նշելով Խամսայի մելիքությունների կործանման քաղաքական դրդապատճառները:*

Գիտադրույթը հրատապ ու արդիական հնչողություն ունի եւ ապացուցելի է գիտականորեն:

«Մտածող եւ գեղագետ Ռաֆֆին,- գրում է ակադեմիկոս Ս. Սարինյանը,- նոր մակարդակ տվեց հայ ազատագրական գաղափարաբանությանը, ստեղծեց նրա գիտությունը՝ դիտելով այն ոչ իբրև սոսկ քաղաքական աշխարհայացք, այլ որպես բնության, պատմության, դիցաբանության, կենսաբանության….մի վերին արարչություն»[1]:

Գրողը հայոց նոր պատմության համար նյութեր հավաքելով, սկսելով շարադրել «Խամսայի մելիքությունները», Արցախի մելիքական տների մասին տալիս է նախնական, կարճառոտ տեղեկություններ, որոնց զուգահեռ գծվում ու վիպական երանգներ են ստանում **մելիքների կերպարների բնութագրումները**, որոնք նաեւ պատմության կրողներն են:

[1] Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, Երեւան, «Զանգակ-97 » հրատարակչություն, էջ 53:

Գյուլիստանի Մելիք Բեգլարյանների ծագման մասին խոսելով Ռաֆֆին ներկայացնում է նրանց տոհմի հիմնադիր, Նիժ գավառից գաղթած առաջին գաղթական Աբովին, որին թուրքերը կոչում էին «Ղարա-Յուզբաշի» (սեւ հարյուրապետ): Վերջինիս անվան հետ է կապված մի հետաքրքիր, վիպական երանգներով շաղախված պատմություն: Հայրենիքում՝ Նիժ գյուղում, լինելով ժողովրդի կառավարիչ, որոշ հանգամանքներից ելնելով, հեռանում է դեպի Ղարաբաղ, Թարթառ գետի ձախ ափերի մոտ, Թալիշ գյուղից փոքր ինչ հեռու վրաններ զարկում՝ փորձելով անհայտության մեջ մնալ: Ավազակները հանկարծակի մոտենալով սեւ հարյուրապետի դաշտում արածող գրաստներին՝ գողանում են անասունները: Վրանից դուրս եկած հարյուրապետն ու մի քանի երիտասարդներ հետապնդում են ավազակներին, գերում նրանց:

Ավազակներին փնտրում էին Բարդայի խանի մարդիկ: Սակայն սեւ հարյուրապետի մոտ հայտնվում են ձիավորներ՝ խանի անունից պահանջելով ավազակներին, այս կերպ փորձելով խանի մոտ իրենց հերոս ձեւացնել, որպեսզի պարգեւներ ստանան: Խանը հրամայում է գլխատել ավազակներին, իսկ բռնողներին՝ պարգեւատրել: Ավազակապետը վրդովմունքով ասում է խանին. «Պատժեցեք մեզ, որպես ձեր կամքն է, որովհետև մենք քո երկրները ավերակ դարձրինք, բայց մի անպատվեցեք մեզ, այդ ողորմելի մարդիկների չկատարած քաջությունները վարձատրելով, իբրև թե դրանք են եղել մեզ հաղթողները….»[1]:

Խանը, պարգելով խաբեությունը, կանչում է հարյուրապետին, փորձում պարգեւատրել նրան, բայց Աբովը հրաժարվում է որեւէ պարգեւ վերցնել իր մատուցած ծառայության փոխարեն, միայն խնդրում է, որ իրեն, որպես գաղթականի, բնակության տեղ տա: Բարդայի խանը, որպես մշտական սեփականություն, նրան տալիս է Թալիշը՝ Գյուլիստանի գավառում, Հոռեկա վանքի մոտ: Հարյուրապետը վախճանվել է 1632 թ.:

Այսօր, Հայոց պատմական Թալիշի ու թալիշցիների գոյության կռվաններն են դրվել հարցականի տակ ու հարցի լուծման սթափ քաղաքական մակարդակներով մոտեցում է պահանջվում: Պատմությունը կրկնվում է, պատմության դասերը՝ ահագանգում. չպետք է մոռանալ դամոկլյան սրի մասին:

Սեւ Աբովին հաջորդած երեց որդուն՝ Մելիք Բեգլար **I-ին**, Ռաֆֆին վիպական գույներով է բնութագրում՝ իբրեւ արժանավոր որդի, ով «իր նախնիքների քաջասիրության հետ ուներ և խելք: Նա հիմքը դրեց Գյուլիստանի մելիքների իշխանությանը և տիրապետելով նոր երկրներ, ավելի ընդարձակեց իր իշխանությունը»[2],- եւ տեղային տիրապետողից խլեց Վերին շենը, Ներքին շենը, Էրքեջը, Գյուլիստան բերդը: Նորոգելով բերդը՝ դարձրեց իր անմատչելի ամրոցը:

Ռաֆֆին սոսկ փաստի՝ ճշմարտության արձանագրողը չէ: Նա լավ է հասկանում պատմության դասերը, պատմության փիլիսոփայությունը, բայց, միաժամանակ ձգտում է պատմական փաստերը ուսուցողական ու գեղարվեստական գունեղ շերտերով ներկայացնել, կերպարներին տալ ներքին հոգեբանական լարվածություն, խորը զգացմունքայնություն, քնարական շարժ: Առաջին պլանում հերոսը պատմական իրականության «նատուրալ» փաստողն է, երկրորդ դեպքում՝ ոգին հայտնաբերողը:

Մելիք Բեգլար **I-ի** երեց որդին կրեց պապի անունը՝ Աբով: Ոտքից վնասված էր, դրա համար ստացել էր կաղ Աբով անունը:

Ռաֆֆին, միաժամանակ բնութագրելով ժամանակի ոգու ու նրա տիրապետող պահանջները, հասարակության կազմությունն ու նրա բարոյական նկարագիրը, իր հերոսներին նույնպես նրա օրգանիզմի մի մասնիկն է ներկայացնում, պատմական կերպարների բնավորության գծերին հաղորդում ոգեղեն ու կենսական շունչ, վիպական-քնարական երանգներ:

Գրողը ներքին համակրություն ունի իր հերոսների նկատմամբ, նրանց բնավորության մեջ գնահատում է ժամանակի ոգուն համահունչ ու նաեւ բնածին քաջությունը: Թշնամին միմիայն երկյուղում էր երկրի տիրապետողների քաջությունից եւ հետագա օրինակներում կտեսնենք, թե ինչպես է նա փորձում խորամանկությամբ շրջանցել քաջարի մելիքներին, նրանց դավելով, միմյանց դեմ լարելով. «Կաղ Աբովը,- գրում է Ռաֆֆին,- իր անպարտելի քաջագործություններով շատ նման էր իր պապին՝ սև Աբովին: Հափշտակությունը, ավարառությունը և հանդուգն ասպտակությունները նրա ժամանակներում երկրների իշխողների համար ոչ միայն անբարոյականություն չէին համարվում, այլ ընդունվում էին որպես քաջագնական արժանավորություններ, որոնց անպատճառ պետք է ունենար

[1] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 (այսուհետեւ՝ Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները), էջ 170:

[2] Նույն տեղում, էջ 170:

երկրի իշխողը, իր շրջակա թշնամիներին երկյուղի մեջ պահելու համար: Այդ հատկություններից զուրկ չէր կաղ Աբովը»[1]:

Սյուժետային հետաքրքիր բացահայտումներ է տալիս Ռաֆֆին կաղ Աբովի կերպարային զարգացումներում: Վերջինս իր արշավանքների ընթացքում Գանձակի կողմերում՝ Գետաշենից բարձր Ղուլուսլու գյուղի լեռնային լանջերին, հանդիպում է Մամադ-խանի օբաներին: Այնտեղ՝ հովիվների մոտ էր գտնվում խանի գեղեցկուհի աղջիկը՝ Ղամար Սոլթանը՝ իր քառասուն աղախիններով: Կաղ Աբովը հարձակման պահին տեսնում է վերջինիս, հափշտակվում նրա գեղեցկությամբ, մոռանում, որ պետք է ավարի ենթարկի Մամադ խանի հարուստ հոտերը եւ միայն առեւանգում է վերջինիս դստերը: Կաղ Աբովը եւս գեղեցիկ երիտասարդ էր՝ մարմնապես ու ոգեպես միաձույլ համամասնությամբ՝ գումարած զարմանահրաշ քաջության գենետիկ **կոդ-կրիչով**:

Պլ. Զուբովի «Ղարաբաղի աստղագէտի» կերպարային համակարգում նույնպես կա այդօրինակ մի դեպք: Մելիք Զումշուդը եւս սիրում էր ջուանշիրցի Սալիհային: Վերջինիս քրիստոնյա է մկրտել տալիս, ամուսնանում հետը: Կաղ Աբովը, իր հափշտակած չքնաղագեղ ավարը բերելով Գյուլիստանի մոտ գտնվող Ամենափրկիչ վանքը, եւս քրիստոնյա է մկրտել տալիս եւ ամուսնանում նրա հետ:

Երկար կռիվներից հետո խանը հաշտվեց կաղ Աբովի հետ. իր ամբողջ հարստությունը կտակեց միակ ժառանգին՝ Ղամար Սոլթանին:

Հետաքրքիր վիպական հյուսվածք է նաեւ կաղ Աբովի մահից (1728թ.) հետո պատանի որդու հետ կապված պատմությունը: Նրա որդին՝ մելիք Յուսուբը, անչափահաս էր: Երկրի կառավարումը հանձնվում է հորեղբորը՝ Թամրազին: Վերջինս փորձում է եղբոր իշխանությունը լիովին զավթել, նույնիսկ մահափորձ կատարել եղբորորդու հանդեպ:

Ատրպատականի վեզիր Միրզա Թահիրը շահ Սուլթան Հուսեինի հարկահաններից էր: Արքունի հարկերը հավաքելով՝ Դերբենդից հասնում է Գանձակի եւ Ղարաբաղի կողմերը: Մելիք Թամրազն իր տանը հարկահանին ընդունելով՝ փորձում է նրան շողոքորթել եւ տեղեկացնում է եղբոր թողած մի հազվագյուտ զենքի՝ հրացանի մասին, որ պատանի Յուսուբի ձեռքում էր գտնվում: Պարսիկ հարկահանը խաբեությամբ Յուսուբից հոր զենքը վերցնում է՝ ասելով, թե այդ հրացանը շահի գանձարանին է վայել ոչ թե պատանուն:

Անչափ հուսահատ եւ արցունքախառն պատանին պատմում է մորը իր հետ պատահած տխուր պատմությունը:

Ղամար Սոլթանը խիստ հանդիմանում է որդուն՝ հոր ժառանգությունից մնացած միակ նվիրական հիշատակը ավարի տալու պատճառով, որը հիշատակ-վկան էր ամուսնու անպատմելի քաջության. «Քաջ հոր անարժան որդի,- խստությամբ ասում է մայրը,- լավ էր, որ քո սպանված դիակը ինձ մոտ բերեին, եւ ասեին, որ դու կռվեցար, քո հոր հիշատակը չկորցնելու համար:

-Ես կվերադարձնեմ հորս հրացանը,- արցունքախառն ասում է որդին, մորից խնդրելով որոշ գումար զենքեր գնելու համար»[2] :

Մայրը իր գլխաշարի (բարբառով՝ չըխկի, պալի - Զ. Բ.) ոսկիներից մի քանիսը տալիս է որդուն:

Պատանին հարազատ բարեկամ-ընկերների հետ հոր զենքը հետ առնելու որոշում է կայացնում, եւ պայմանավորվում են այն իրագործել՝ հարձակման նշանը՝ «ծրկըտ», դադարմանը՝ «մրկըտ» ազդանշանով: Հարկահանը, երբ մտնում է Թարթառ (Տրտու-Մայր գետ) գետի նեղ ձորի մեջ, պատանու արձակած հարձակման ազդանշանով ընկերներով թափվում են հարկահանի վրա: Յուսուբը իր ձեռքով կտրում է հարկահանի գլուխը, խլում հոր նվիրական հրացանը, խմբի մի մասը փախչում, մի մասը կոտորվում է:

Սա մի ամբողջ վիպական սյուժետային հարստություն է արձանագրում՝ իր ներկայացրած ֆաբուլատիկ ու կոմպոզիցիոն գծերով[3]:

Ռաֆֆին նույն էջում Յուսուբին մեկ մանկահասակ, մեկ երիտասարդ է անվանում գուցե փոխաբերական իմաստներով՝ ցույց տալու համար Յուսուբի անհավատալի ու առնական, առասպելական քաջությունը:

Յուսուբը եւ իր ընկերները հարկահանի ջորիների բեռների՝ պարսից արքունի հարկի ամբողջ ոսկին՝ հավաքված տարբեր գավառներից, ավար դարձրին: Յուսուբը ամրացավ Գյուլիստան բերդում, իր հետ տանելով հավաքված ամբողջ գանձը: Քանի որ Պարսկաստանում գահակալական խռովություններ էին ընթանում, ուստի պատանի Յուսուբի վարմունքը մատնվեց անուշադրության, մնաց անպատիժ:

[1] Նույն տեղում, էջ 171:

[2] Նույն տեղում, էջ 173 :

[3] Նույն տեղում, Ռաֆֆին նշում է. «Այդ հրացանը հետո Մելիք-Բեգլարյանների ժառանգները վաճառեցին 1000 ռուբլով գեներալ Երմոլովին, եւ նա ուղարկեց Ս. Պետերբուրգի Արուժեյնի պալատը», էջ 173:

Երիտասարդ Յուսուբը ոչ միայն հարստության տեր դարձավ, այլեւ իր հորեղբայր, անագնիվ ու անգութ հոգաբարձու մելիք Թամրազին հալածեց, Զրաբերդի մելիք Աթամի հետ դաշնակցեց ու մի քանի օրվա սաստիկ կռիվներից հետո հորեղբոր ամրոցը գրավեց, հրամայեց կախել նրան մի չինարի ծառից: Կա հետաքրքիր ավանդություն այդ մասին[1]:

Իսկ մելիք Թամրազի որդին՝ Սարուխան բեկը, 1723թ. կազմված հայոց չորս գունդերի քաջ զորապետներից մեկն էր հանդիսանում:

Զրաբերդի մելիքներից Ռաֆֆին հիշատակում է մելիք Իսրայելի որդի՝ մելիք Եսայուն, նրա եղբայրներ Ալլահ Ղուլի սուլթանին, մելիք Աթամին: Բոլորն էլ իրենց քաջությամբ, զորությամբ, իմաստությամբ փայլում են թե՛ որպես վիպական եւ թե՛ պատմական հերոսներ, ովքեր Ռաֆֆու գրչի տակ կերպավորվել են բարձր հատկանիշներով, հոգեբանական ներքին հզոր շարժերով:

Նրանք բոլորն էլ միանման էին, վիպական հատկություններով զարգացող կերպարներ, Ղարաբաղի ոճրագործ խաների ու անմիաբանների դեմ պայքարողներ:

Մելիք Աթամի նստավայրը անմատչելի Զրաբերդն էր:

Խաչենի Հասան Զալալյան մելիքական տոհմի ներկայացուցիչները բազմաբեղուն գործունեություն էին ծավալել: Այս տոհմից էին ընտրվում Գանձասարի վանքի կաթողիկոսները: Ռաֆֆին բավականին խորությամբ է վիպականացրել Գանձասարի առաջնորդներին:

Հասան Զալալյան իշխաններից Xv դարում նշանավոր էին երեք եղբայրներ՝ Երեմիա կաթողիկոսը, Վելիջան բեկ Երրորդը եւ Մուլքի բեկը: Վերջինիս երկու որդիներից երեցը մելիք Գրիգորն էր:

Ռաֆֆին բնութագրում է նրան իբրեւ խելացի, ճարտարախոս, բազում քաջագործությունների հեղինակ: Վիպական գծերով հարուստ այս կերպարը հայտնի անձնավորություն էր, օսմանացիների եւ պարսիկների կողմից իր շնկության համար ստացել էր «սարի-մելիք»՝ «շնկ-մելիք» մականունը: Այս արիասիրտ արցախցին քաջության բազմաթիվ օրինակներ ցույց տալուց հետո հեռացավ աշխարհիկ կյանքից եւ մտավ Գանձասարի վանքը, ապա վարդապետ ձեռնադրվելով՝ հոգեւոր ուղղությամբ եւս պսակեց իր անձը: Եղբայրը՝ մելիք Ալլահվերդին, վարեց Խաչենի իշխանությունը: Վերջինիս մահից հետո հաջորդեց որդին՝ Մելիք բեկը, որի ութ որդիներից էր Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը, ում Շուշիի բանտում մահաթույնով սպանեց ոխերիմ Իբրահիմ խանը:

Գեղամա գավառի Մազրա գյուղում, Պարսից Շահ Աբաս մեծին հյուրընկալեց Գեղարքունիքի իշխող Մելիք Շահնազարը: Ռաֆֆին վիպական պաթետիկ ոճով է բնութագրում վերջինիս, թվարկելով նրա ֆիզիկական եւ հոգեւոր բարեմասնությունները, նրան դիտելով որպես հայոց ազգից՝ հավատքով քրիստոնյա, փառավոր ու հզոր ինքնակալ, ով, շահին վայել հյուրընկալություն կազմակերպելով, դարձավ Շահ Աբասի սիրելին, մտերիմն ու բարեկամը: Շահն իր կողմից նրան շքեղացրեց շահական ազնիվ ու պատվական զգեստներով, խալաթներ-նվերներ տալով՝ ավելի փառավորեց մելիքին, ապա գավառի մելիքության, իշխանության մեջ հաստատելով՝ այլ դաստակերտներ, գյուղեր ընծայեց թե՛ մելիքին, եւ թե՛ նրա եղբայրներին: Եւ ամենակարեւորը՝ հաստատուն նոմոսով (հրովարտակ)՝ կնիքված արքայական կնիքով, Մելիք Շահնազարին ու նրա հետեւորդներին հաստատեց ու անփոփոխ դարձրեց իրենց իշխանական ժառանգության մեջ:

1682 թ. Գեղարքունյաց երկիրը ավերակ դարձավ վրա հասած կովկասյան լեռնաբնակների փոթորկալի արշավանքներից, որի պատճառով Մելիք Շահնազարի որդին՝ մելիք Հուսեինը եւ նրա եղբորորդի (մելիք Միրզաբեկ) մելիք Բաղին, Գեղամա եզերքը թողնելով, իրենց ժողովրդի մի մասով գաղթեցին Ղարաբաղի կողմերը՝ Վարանդայի Ավետարանոց գյուղը: Գյուղը շենացավ նրանց օրոք: Ամրակայվեց շրջապարիսպը, Կուսանաց անապատը (շինված 1616թ.), Ս. Աստվածածին եկեղեցին (շինված 1651թ.), եւ գյուղը բերդի ձեւ ստացավ: Բերդում ամրոցներ հիմնեցին, որոնց կիսավեր ամրությունները ցայսօր կրում են իրենց վրա հնության գեղեցիկ շերտերը, կառուցումների ճարտարապետական ուրույն ոճավորումները, արվեստի չխամրող երանգները:

1721թ. կովկասյան լեռնաբնակների ասպատակությունները դեպի Շաքի, Շիրվան, Գանձակ, Երասխ գետ նոր սարսափ բերեցին այդ երկրների ժողովուրդներին: Երբ նրանք մոտեցան Վարանդային, մելիք Բաղին դիմադիր եղավ այդ հրոսակներին ու Վարանդան զերծ մնաց թշնամու ավերմունքից: Նմանատիպ անցքերը մելիք Բաղուն սիրելի ու գովական դարձրին ժողովրդին: Այս կերպ իմացաբանական, ազգային բնատուր խառնվածքի, մտախառնվածքի ուրույն հատկանիշ, բարոյագիտական, հոգեբանական արժեք են ստանում Ռաֆֆու հերոսները:

Նրա պատմավիպական ընդհանուր կոնցեպտում, շարադրանքի պատումներում հերոսները տիպականացված են՝ տիպական հանգամանքներում, կոմպոզիցիոն հարցադրումներում, ֆաբուլայի

[1] Տե՛ս նույն տեղում, Այդ չինարի հինավուրց ծառը մինչեւ այսօր էլ ցույց են տալիս Գյուլիստանի եւ Զրաբերդի սահմանի վրա եւ կոչվում է «Ղանլու չինար», որ նշանակում է արյունոտ չինարի, էջ 174:

բացահայտումներում, այուժետային հետաքրքիր պարույրներում՝ ոճական նոր երանգներ նախանշելով «Խամսայի մելիքություններին»:

Այս պարագայում, պատմական իրադարձությունների եւ վիպական հնարանքների ընդհանուր ֆոնին ուրվագծվում ու շոշոփելի են դառնում մելիքների գործունեության թե՛ շրջանակները, թե՛ կառուցողական ձիրքը, թե՛ ժողովրդի հետ հարաբերվելու, իշխելու համապատասխան կանոնակարգը, կուլտուրան, նրանց՝ հայրենիքի հանդեպ ունեցած պարտավորությունները կամ էլ երբեմնակի պարտազանցությունները, անմիաբանությունները, արյունահեղ ընդհարումները՝ գրողի գրչի տակ քննողաբար արժեւորվելով: Ինչպես, օրինակ. «Ղարաբաղի մելիքների ձգտումները, իրանց հայրենիքում մի անկախ հայկական իշխանություն հիմնելու վերաբերությամբ, նոր մտածություններ չէին»[1]:

Ռաֆֆին իր ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների իմաստն ըմբռնելու, քննելու տեսանկյունից պնդում եւ հարցադրում է հետեւյալը. «Մեր նախնի գրողները ավելի փութաջան գտնվեցան մեզանից: Նրանք թողեցին մեզ իրանց ժամանակների պատմությունները: Իսկ մենք, տասնիններորդ դարու զավակներս, ի՞նչ պիտի թողնենք մեր ապագա սերունդին»[2]:

Արդի քաղաքական դաշտում թե՛ մելիքության ժամանակների պատմությունից պետք է դասեր առնել, թե՛ ներկայից. անցյալը եւ ներկան Արցախի պատմության տարբեր էջերն են հատկանշում՝ ուսանելի ապագա սերունդների համար, որը եւ գիտական աշխատանքի կարեւոր հարցադրումներից մեկն է:

Այստեղից եզրահանգում ենք, որ գրողը, ներկայացնելով xvlll- xlx դդ. Արցախի մելիքների պատմությունը՝ իր հասարակական, մշակութային, քաղաքական, աշխարհագրական, ազգագրական, սոցիալական առանցքներով, շատ ուսանելի կողմեր է հատկանշում, ցույց տալիս արցախահայության տոհմիկ հոգեբանության ներքին սուզումները, գենետիկ որակները, կոդերը, աշխարհընկալման երանգները, բնավորության առանձնադիտվող կողմերը, ռազմական հանճարը, նպատակաուղղվածությունը:

Խոսելով հայրենիքում՝ Արցախում, անկախ հայկական իշխանություն հիմնելու վերաբերյալ մելիքների ձգտումների եւ այս ուղղությամբ նրանց գործադրած ջանքերի մասին՝ Ռաֆֆին ճիշտ եւ տեղին է բնութագրում Պետրոս I քաղաքական-դիվանագիտական պահվածքը, քաղաքական հոտառությունը, սուր ընկալողականության ու հայերի վերաբերյալ ունեցած կարծիքը, այդ ամենից բխող հեռագնա, շահադիտական նպատակը. «Մեծ կայսրի **արծվի աչքերը** իսկույն նախադիտեցին այս մեծ շահերը, որ նա կարող էր քաղել, ձեռք առնելով մի ճարպիկ առնտրական և միևնույն ժամանակ պատերազմող ժողովուրդ, որի հետ ծանոթ էր դեռ իր երիտասարդական հասակում»[3]:

Պետրոս Մեծը արտասահմանում գտնված ժամանակ, Հոլանդիայում ծանոթացավ մի Աբրո անունով զմյուռնիացի վաճառականի հետ, որին հետո հրավիրեց Ռուսաստանում առեւտուր անելու:

Վիպական հետաքրքիր ու արժանահիշատակ կտոր է Արցախի գահերեց իշխան մելիք Ավանի գաղտնի կազմակերպած ժողովրդական ապստամբությունը (1733 թ.) Սարը Մուստաֆա փաշայի դեմ: Դա, անշուշտ, նաեւ **Արցախի մելիքների միաբանության ու հաղթության ապստամբությունն էր,** քանի որ Արցախի բոլոր մելիքները միաբանվեցին Մելիք Ավանի հետ:

Պարզ հետեւություն. «գյուղ կանգնի, գերան կկոտրի» ժողովրդական ասացվածքը նման օրինակի դեպքում է ասված: Ռաֆֆին Մելիք Ավանի ու Արցախի մյուս մելիքների ու հատկապես ժողովրդի կերպավորումով արժեւորում է ազգովի միաբան, միակամ լինելու, որոշված ծրագրով՝ թշնամուց ազատվելու ուխտին հավատարիմ մնալու, ազգը ազատագրված տեսնելու ռեալ հնարավորության փաստը, որը վիպական անզուգական օրինակ է հանդիսանում հայ ժողովրդի պատմության մեջ, եւ որը հետագայում կարող էին օգտագործել Ղարաբաղի խան կոչեցյալների՝ Փանահի, Իբրահիմի, Մեհտի Ղուլիի դեմ ճակատ ստեղծելով, նույնիսկ անհնարինը հնարավոր դարձնելու պատգամով, ուխտապահությամբ, բայց որն, ավաղ, տեղի չունեցավ:

Հայրենիքն այստեղ բացարձակն է, անտրոհելին, բարձրագույն մարմինն ու գաղափարը, որը պետք է ընդունել որպես հայրերից մնացած միակ եւ բարձրագույն ավանդ. ոգեղեն խորհուրդ, ֆիզիկական, պատմական, միֆական, իրական ու իրավական անպարտ, ճանաչելի օբյեկտ:

Սակայն, ինչպես տեսնում ենք, հետագա ժամանակներում XVIII-XIX դդ. Արցախի քաղաքական կյանքում՝ որպես էթնիկական տրվածք, քայքայիչ գործոն դարձավ անմիաբանությունը:

Ռաֆֆին ցանկանում է մելիքությունների պատմությունից դասեր քաղել, մի կողմից ցույց տալ, որ մելիքների միաբանվելու դեպքում, թշնամին կարող է ջախջախիչ հարված ստանալ, մյուս կողմից, որ

[1] Նույն տեղում, էջ 180 :
[2] Նույն տեղում, էջ 388 :
[3] Նույն տեղում, էջ 181 :

մելիքների անմիաբան լինելու դեպքում ներքին ու արտաքին թշնամին գլուխ կբարձրացնի, կավերի հայրենի երկիրը, կվերացնի հայրենիքի անկախությունը, մյուս կողմից, որ մելիքության ժամանակներում հայկական իշխանությունը կար ու պահպանվեց մինչեւ ներկա դարը, եւ կարելի է անպայմանորեն անցյալից դասեր առնելով՝ վերակենդանացնել հայոց կորսված ինքնիշխանությունը:

Ռաֆֆին ակտիվ շրջադասության մեջ՝ պատմական փաստին զուգահեռ, ընդգծում է հերոսների հետապնդած նպատակները՝ քաղաքական կյանքի բացահայտումներում ներկայացնելով նաեւ նրանց կենցաղավարությունը, հարաբերությունների շղթան, միաբան ու անմիաբան լինելու դրսեւորումները՝ հերոսների կերպարային բացահայտումները հարստացնելով վիպական օրինակներով:

Քանի որ Ռաֆֆու գրողական նպատակը մելիքությունների երկու դար տեւած պատմության վերհանումն է, դրանց փաստացիությունը ապացուցելը, ուստի փորձում է այնպես շարադրել նյութը, որ այն ապացուցելի լինի, որպեսզի ընթերցողները, քննադատները (հայ եւ օտար) նյութը հնարովի, պատմականությունից զուրկ չհամարեն: Այս տեսանկյունից, կարծում ենք, որ «Խամսայի մելիքությունների» նյութը կապված է պատմության իրական դեպքերի ու անձնավորությունների հետ, բայց եւ որը անհրաժեշտաբար ենթարկվում է թե՛ վիպական, թե՛ բանահյուսական չափազանցումների ու որոշակի ձեւափոխությունների օրենքին, ցույց տալիս հերոսների մասին հյուսված վիպապատումները եւ այլն:

Ղարաբաղում մելիքները մելիք Ավանի գլխավորությամբ օսմանացիներին ջարդեցին, իսկ Սյունյաց իշխան Դավիթ Բեկը հրաշքներ գործեց Ղափանի կողմերում՝ մեկը մյուսի հետեւից մաքրելով հայոց բերդ-ամրոցները թուրքերից: Նրա անվան շուրջ ժողովուրդը տարբեր երգեր էր հյուսել: «Շահ Թահմազը,- գրում է Ռաֆֆին,- .... վարձատրեց քաջի հաղթությունները՝ զանազան արտոնություններ շնորհելով Դավիթ Բեկին.... »[1]:

Մելիք Եսայուն հաջորդած եղբայրը՝ Ալլահ Ղուլին եւս քաջագործությունների հեղինակ է: Գնահատելով նրա քաջությունը՝ Նադիրը սուլթանության տիտղոս տվեց նրան եւ կոչեց Ալլահ Ղուլի սուլթան, որին հետագայում տմարդորեն սպանեց երախտամոռ Փանահ խանը: Ալլահ Ղուլի սուլթանի անվան շուրջ ժողովուրդը տարբեր ավանդություններ է հորինել, որոնք պատմվում էին ամենուր:

Վիպական տարբեր իրադարձություններ են կապված նաեւ մելիք Ավան խանի անվան հետ: Նա ոչ միայն պարսից Նադիր շահի, այլեւ ռուսաց կառավարության ինքնակալների՝ Աննա Իվանովնա կայսրուհու եւ այլոց մոտ սիրված ու հարգված էր: Իր աստիճանավորներով 1734 թ. գնաց Ռուսաստան եւ փառավոր ընդունելության արժանանալով՝ առանձին ուշադրություն գտավ թագուհու կողմից: Օժտված լինելով ռազմական տաղանդով՝ մելիք Ավան խանը մասնակցեց Պետրոս Մեծի արշավանքներին, զինվորական շքանշաններ ստացավ, ապա գեներալ մայորի աստիճան:

Շուշիի Փանահ Խանը կերպավորված է որպես պարսկական արքունիքի խորամանկությունները ընդօրինակած մեկը, ով միամիտ ջուանշիրցիներին խաբելով, կարողացավ նրանց տանուտերին հրաժարեցնել իր պաշտոնից ու ինքը գրավել նրա տեղը:

Նադիրի մահից հետո, արքունիքում եւ երկրում տիրող ընդհանուր շփոթից օգտվելով, ջառչի Փանահը, Ադիլ շահից խանության տիտղոս ստանալով, ընդլայնեց իր գործունեության շրջանակները:

Ռաֆֆին նրան խելացի է համարում, իր նպատակների իրագործման համար ոչնչի առջեւ կանգ չառնող, ով, օգտվելով մելիքների միջեւ ծագած անհամաձայնություններից, մանր-մունր կռիվներից, փորձեց բերդ կառուցել՝ հանդիպելով մելիքների դիմադիր ուժերին եւ այլն:

Ռաֆֆուն մտահոգել է ոչ միայն իր ստեղծած վիպապատմական կերպարների հոգեբանական զարգացումը կամ ներքին մարդու գեղարվեստապատմական ոճի խնդիրը, այլեւ վիպական կերպարների բազմապլան մեկնումը:

Նրա մոտ գեղարվեստական ձեւերը, մտածողության համակարգը պարզ չեն, միակերպ, այլ՝ հակառակը: Այս տեսանկյունից, «Խամսայի մելիքություններում» այդ ամենը պայմանավորված է հատկապես նյութի կենսական բովանդակությամբ:

«Խամսայի մելիքությունները», որը Ռաֆֆին գրական երկ է համարում, ունենա լով պատմական փաստերի ընթացք, միաժամանակ գրող Ռաֆֆու գրչի արգասիք է, պատմահոր նման նա էլ հետամուտ է, որ օտարի աչքին իր պատմությունը հավաստի, փաստացի երեւա, բայց չի բացառում վիպասանության տարրերը, «....բացատրելու գայթակղությունը,- նշում է Ալբեր Քամյուն,- չափազանց մեծ է, պատրանքայնությունն ինքնին հասկանալի...., եզրահանգումները գրեթե անխուսափելի.... », վիպասանություն, «որը արվեստի ինտելեկտուալացման ամենաբարձր աստիճանն է »[2],

[1] Նույն տեղում, էջ 193 :

[2] Քամյու Ա., Փիլիսոփայությունը եւ վեպը, տե՛ս Գրական թերթ, Երեւան, 1992, հ.1 :

վիպասանություն, որն ունի իր տրամաբանությունը, դատողության, սիլլոգիզմի ձեները, հոգեբանական ներըմբռնումն ու կանխադրույթներն ու դրույթները, ապա նաեւ պարզության միտումը, սյուժեի զարգացումները: Գրքի շարադրանքում առկա է փիլիսոփայական աշխարհընկալումը՝ աշխարհազգացման եւ գեղարվեստի պատկերման իր փիլիսոփայական մոդելը:

«Գրողի համար նյութի գեղարվեստական յուրացումը պետք է դառնա ժամանակի ու ժամանակակից մարդու ներքին բարդությունն արտահայտելու առաջին պայմանը»[1],- գրական արտադրանքի գեղարվեստականության հատկանիշի մասին այսպես է մեկնում Ս. Արզումանյանը: Անշուշտ, նման դիտանցքում է իր հերոսներին կերպավորում Ռաֆֆին: Շարադրելով Դիզակի Մելիք Ավան խանի՝ Պետրոս Մեծի ու Նադիր շահի սիրելիի, Արցախի մելիքների գահերեցի կրտսեր եղբայր մելիք Եսայու վիպական տարրերով լի վարքապատումի էջերը (ծնվել էր աջ ձեռքի մատները խփված, որը լի էր արյունով, ըստ մանկաբարձ պառավների նախագուշակության՝ մեծանալով՝ մեծ արյունահեղությունների պատճառ պիտի հանդիսանար, առաջինն էր Խամսայի մելիքների մեջ, որ հասկացավ կանոնավոր զորքի եւ ընդհանուր զինվորականության անհրաժեշտությունը երկրի ապահովության համար, եւ դրանց հետ կապված այլեւայլ կարեւոր հարցադրումներ՝ Ռաֆֆին, իր հավաքած զրույցներից քաղվածք անելով, նշում է. ««Նրա ժամանակում….., մեր երկրում այնպիսի ապահովություն էր տիրում, որ դեռահաս աղջիկները այգիների ծառերի տակ նստած, կար Էին կարում, մնում էին այնտեղ, մինչև մութը պատում էր. հարսները զուգված, զարդարված դուրս էին գալիս տներից և աներկյուղ զբոսնում էին լեռների վրա, բոլորովին չմտածելով, թե թուրքը կամ պարսիկը կգա, կհափշտակե և կտանե նրանց: Երբ թշնամին հայտնվում էր, երկրի երիտասարդները զենքը ձեռքում միշտ պատրաստ էին նրան հանդիպելու համար»»[2]:

Վիպական շնչով շարադրելով մելիք Եսայու բնավորության գծերը, հոգեկան ներքին անցումները, հայրենի օջախի, հայրենիքի ազատության համար գործադրած նրա ձեռնարկումների ոդիսականը՝ վիպասանը ընդգծում է մելիքի ինքնիշխան մնալու բացահայտ վարվելակարգը: Այսպիսով, ազատության հանդեպ նրա անբեկանելի ուխտը գերադրական որակ ներկայացնելով՝ նրան բնութագրում է իբրեւ անվեհեր ու հայրենասեր մարտիկ, հայրենիքի երդվյալ պահապան, ինչը բարոյական մեծ տրվածք է հայ միաբան մելիքիներից շատերի նկարագրերում:

Ռաֆֆին թվարկում է այն բոլոր քաջագործությունները, որոնց միջոցով մելիքը համառորեն պատերազմել է Փանահ խանի մատնությամբ եւ օժադակությամբ իրեն մարտահրավեր նետած, Ղարադաղի կառավարիչ Քազըմ խանի անհամար զորքի դեմ եւ հաղթել, նույն կարգով երկրորդ հարձակման ժամանակ՝ Թավրիզում նստած եւ Դիզակի (Տողի) վրա հարձակված Ադիլ շահի մեծաքանակ զորքի դեմ:

Ռաֆֆու կերտած պատմական եւ վիպական կերպավորումներում, միաբան մելիքների խառնվածքային գծերում, որոշակի տարբերություններով հանդերձ, հայրենիքի, ազատության, հայրենի ավանդների, հավատի պահպանման դրսեւորումները հարաբերության եզրերում են ներկայացված, սյուժետային զուգահեռ հանգույցներում:

Լեոյի «Մելիքի աղջիկը» վեպում եւս անվտանգության կոնցեպտի քննությամբ, Վարանդայի իշխան Մելիք Շահնազարյան մելիք Հուսեինի իշխանության օրոք, հայրենիքի լիակատար ապահովության փաստ է արձանագրվում: Վարանդան հզոր էր հատկապես այս տիրապետողի՝ մելիք Հուսեինի օրոք (գլխատվել է 1736 թ.):

Նրա իշխանության տարիներին, թշնամիները չէին փորձում մոտենալ երկրի սահմաններին: Վարանդան ապահով էր ամեն հարցում: Շինականները ազատ զբաղվում էին իրենց գործերով, կանայք առանց վախի հայտնվում էին այգիներում, վայելում բնության թովչանքները:

Մելիք Հուսեինի նման մելիք Եսային եւս որոշեց հարկ չտալ պարսից շահերին: Եվ նրա մղած կռիվներն ու հաղթությունները թշնամիների դեմ դրա պատճառով էին: Ինչպես հետագա դեպքերն են փաստում, Փանահ խանը յոթ տարի պատերազմեց մելիք Եսայու դեմ, ոչնչի չհասավ եւ որոշեց նրան խաբեությամբ հաղթել, ինչը նրան հաջողվեց:

Թե՛ Վարանդայի Մելիք Շահնազարյան մելիք Հուսեինը, թե՛ Դիզակի մելիք Ավանյան մելիք Եսային իրենց հանդգնության, ինքնիշխանության համար (հարկ չվճարել պարսից շահերին) պատժվեցին, մատնությունների զոհ դառնալով՝ գլխատվեցին:

Երբեմնի «ազատության հանդիսարան» (Լեռ) հանդիսացող Վարանդայի մելիքանիստ Ավետարանոցը տարբեր առաքինություններով է հայտնի պատմությանը՝ եկեղեցի-գրչագրատնով, գրչագիր գանձարանով, բերդապարսպով, գետնուղիներով, իշխանական գերեզմանոցով, որտեղ

[1] Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 5-րդ հատոր, Երեւան, ՀԳՄ հրատարակչություն, 2004 էջ 15:
[2] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, էջ 201-202:

թաղված են Վաչե եւ Համամ թագավորները, եւս մի թագուհի, մի սպարապետ, մելիքական տան ժառանգները:

Բնության եւ ազատության, ազատ ոգու պարգեւ Ավետարանոցն ունի իր վիպական պատումներով հարուստ հուշարձանները. ահա դրանցից մեկը եւս. «Ավետարանոց (Զանախչի) բերդը շատ անգամ եղել է հանդիսարան արյունոտ գործերի: Մենք նկարագրեցինք,- գրում է Ռաֆֆին,- Մելիք Հուսեին մեծի ժամանակ տեղի ունեցած օսմանցիների կոտորածը այդ բերդում: 1723 թ. օգոստոսին ղափանցի Ղանլու-Շաբան անունով հայ իշխանը 300 զինվորներով հյուր է գալիս Ավետարանոց բերդի Մելիք-Միրզա-բեկի մոտ (Մելիք-Բաղիի որդին): Չնայելով, որ Մելիք-Միրզա-բեկը հին ոխ ուներ Ղանլու-Շաբանի հետ, այսուամենայնիվ, սիրով ընդունում է նրան իր տանը և նրա սվիտային որպես հյուրեր բաժանում է իր գյուղացիների տներում: Գյուղացիները պատվեր են ստանում, հենց որ գիշերը Մելիքի տնից լսելի կլինի հրացանի ձայն, ամեն մարդ պատրաստ լինի իր հյուրին սպանելու: Այսպիսով մի գիշերվա մեջ կոտորում են բոլոր 300 զինվորներին՝ իրենց իշխանի հետ: Դա միևնույն Մելիք-Միրզա-բեկն էր, որին Նադիր-շահը գլխատել տվեց»[1]:

Ռաֆֆին, քաջությամբ պսակյալ, նահատակված մելիք Հուսեինի փոխարեն Վարանդան կառավարող մելիք Միրզա բեկ II-ին անվանում է «հանդուգն», ով իր անհնազանդությամբ գրգռեց շահի բարկությունը եւ վերջինիս հրամանով գլխատվեց:

Ռաֆֆին, բնութագրելով պարսից շահերին, ընդգծում է հայերի, Արցախի մելիքների նկատմամբ նրանց ունեցած վերաբերմունքը, որը գալիս էր տարածաշրջանում իրենց տիրապետությունը հաստատուն տեսնելու ընդգծված քաղաքականությունից:

Թե՛ Շահ Աբասը, թե՛ Նադիր Շահը հրովարտակներով Արցախի մելիքներին հաստատեցին իրենց մելիքական իրավունքներում՝ հորոց որդի:

Շահերը նաեւ պատժում էին մելիքներից նրանց, ովքեր փորձում էին հավատարիմ չլինել, կամ «թշնամական» քայլ կատարել: Այս քաղաքականությունը վարել են նաեւ մնացած շահերը (Աղա Մուհամմեդ, Աբաս Միրզա եւ ուրիշներ):

Գրականության ցանկ

1. Արզումանյան Ս., Արդի հայ վեպը, 5-րդ հ., Երեւան, ՀԳՄ հրատարակչություն, 2004:
2. Սարինյան Ս., Հայոց ազգային գաղափարաբանություն, Երեւան, « Զանգակ-97» հրատարակչություն, 2005:
3. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 :
4. Քամյու Ա., Փիլիսոփայությունը եւ վեպը, տե՛ս Գրական թերթ, Երեւան, 1992, հ.1 :

Տեղեկություններ հեղինակների մասին.

Զինաիդա Վանիի Բալայան, դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն

Սիլվա Եղիշեի Խաչատրյան, դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն

E-mail: zinaida_araqelyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Խանյանը:

[1] Նույն տեղում, էջ 204:

ՀՏԴ 809.198.1 Ոճագիտություն

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՃԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ

Շուշանիկ ՍԱՂՅԱՆ

Բանալի բառեր՝ *բառային միջավայր, բառի անվանողական դեր, ժամանակավրիպություն, խորհրդանիշ, հնաբան, շրջառույթ, պատկերավորման միջոց, պատմաբան, պատմական ոճավորում*

Ключевые слова- *архаизм, изобразительные средства, историзм, историческая стилизация, окказионализм, перифраз, символ , тенденциозный анахронизм, языковая среда*

Keywords- *anachronism, archaisme, function of word, historism, trope, historical stylization, paraphrase, symbol*

Ш. Сагиян

Историческая стилизация в поэме Ованеса Шираза «Тондракецинеры»

В статье исследована историческая стилизация в однои из больших романов Ованеса Шираза «Тондракецинеры». Как известно, исторические романы Ованеса Шираза своеобразны с точки зрения восприятия философии истории и его стилизации. В статье исследованы способы употребления иссторизмов и архаизмов, а также ряд слов, связанных с Западной Армении в поэме «Тондракецинеры». Историзмы употреблены умеренно, преобладает индивидуальное применение. Заметен тендензиозный анахронизм. Архаизмы соответствуют классическим методам историческои стилизации.

Sh. Saghyan

Historical stylization in the poem of Hovannes Shiraz «Tondraketsinery»

The article deals with historical stylization in the biggiest historical poems of Hovannes Shiraz «Tondraketsinery».In general, the historical poems of Hovannes Shiraz are original by phylosophy of history and its stylization.The article deals with historisms (they have nominal and aesthetic functions), archaisms (they are used according to classical methods), some words relating to Western Armenia and some means of their usge. It is distinguished tendentious anachronism.

Հոդվածում քննվել է Հովհ. Շիրազի պատմական ծավալուն պոեմներից մեկի՝ «Թոնդրակեցիները» երկի պատմական ոճավորումը: Նրա յուրահատկությունը պայմանավորված է թե լեզվական նյութի առանձնահատկությամբ, թե պատմականության հեղինակային ընկալմամբ: Հնաբանությունների անվանողական գործառույթին զուգահեռ ընդգծվում է գեղագիտական գործառույթը, որով ապահովվել է հիմնագաղափարի՝ միջին դարերից պատմական հայրենիքի աստիճանական կորստի հիմք դարձած բարդ նախադրյալների վերհանումը: Լեզվական հնարների միջոցով (ընդգծված են նույնահիմքությունը, միտումնավոր ժամանակավրիպությունը) հանճարեղ գրողը ստեղծել է համակողմանի ուսումնասիրության արժանի համակարգ:

XXդ. հայ գեղարվեստը զարգացրել է պատմական թեմատիկան ենթաժանրային ու գաղափարական առումներով: Ընդհանուր առմամբ պահպանվում էր այն ճշմարտությունը, որ. «Ներկա իրադարձությունները մշտապես ստուգվում են անցյալի փորձով, հետևաբար պատմությունը ոչ միայն անցյալի հայելին է, այլև ներկայի խորհրդատուն, որ ուսուցանում է ապագա սերնդին զգուշանալ «նախահարց սխալներից և հետևել նրանց լավ գործերի օրինակին»»:[1] Հայ մտավորականներն անընդհատորեն անդրադարձել են հայոց պատմության ուշագրավ անցքերին, դրանք գեղարվեստորեն մատուցել՝ անցյալի և ներկայի միջև անխզելի կապն ապահովելու ազգապահպան նկատառումներով: Այս դաշտում Հովհ. Շիրազի պատմական պոեմները ևս, տաղանդավոր գրողի արվեստի նման, ինքնատիպ են՝ թե լեզվական նյութի, թե պատմականության ընկալման տեսակետից: «Շիրազը սերունդների համար պատմությունից վերցրել է կրակը՝ մոխիրը թողնելով անցյալին»,- գրել է Ս. Մուրադյանը «Թոնդրակեցիները» պոեմի ներածականում[2] :

Ինչպես հայտնի է, Շիրազն իր ժամանակաշրջանի ազգային ու բարոյական խնդիրներին անդրադարձել է անընդհատորեն. դրանցից մեծագույնը եղերականորեն կորսված հայրենիքի գաղափարն էր, նրա վերհիշեցումը: «Թոնդրակեցիները» պոեմում արտացոլվել է համամարդկային ու ազգային խնդիրների հերթական բախումը IXդ.: Հանճարեղ գրողը նորից ազգայինին նախապատվություն տալու անթաքույց վերաբերմունքն է ի ցույց դրել, ներկայի ու անցյալի զուգադրմամբ ածանցել այն ճշմարտությունը, որ ազգերի բարեկեցությունից է ի վերջո ձևավորվում

[1] ***Սարինյան Ս.***, Հայոց գրականության երկու դարը, Եր., 2004, էջ 446:
[2] ***Շիրազ Հովհ.***, Թոնդրակեցիները, Եր., 2014, էջ 18:

համամարդկային բարեկեցությունը: Այն լեզվական նյութը, որով հեղինակը կառուցել է պոեմը, նույնպես ինքնատիպ է:

Շիրազը նորից պատմությունն ուղղակի չի արձանագրել. պատմական միջավայրի նկարագրությունը նույնպես ստորադասել է հիմնագաղափարին՝ այն բարդ նախադրյալների վերլուծությանը, որոնք պատմական հայրենիքի աստիճանական կորստի հիմքն են դարձել: Պատահական չէ, որ պոեմի նախերգանքում հանդիպում են՝ *Եղեռն, բանտված լեռներ* (36), *կարոտի կանչ* (37) լեզվական միավորները: Կամ՝պատմական տարբեր վիճակների զուգադրություն կա՝ *Այնտեղ, ուր Վանա ծովն էր ծիծաղում Զվարթ քրոջ պես հպարտ լեռների, Ուր այժմ վիշտը ծիծաղն է թաղում, Լեռներն են նման կապված ձեռների* (36): Շիրազը հաճախ էր այուժեն վերացարկում այն կենսամիջավայրից, որում այն առկայացել է: Սրանից էլ բխում է պատմական ոճավորման ուրույն համակարգ, որին կանդրադառնանք սույն հոդվածում:

Հայտնի է, որ պատմական երկի դեպքերը նախ և առաջ ծավալվում են որոշակի ժամանակաշրջանի հարթակում, և երկի լեզվական համակարգ են ներառվում համապատասխան վարչաքաղաքական, մշակութային կացութաձև, կենցաղավարություն արտացոլող բառեր: Դրանց թեմատիկ ընդգրկվածությունն ու հաճախականությունը տարբեր է ըստ ստեղծագործողների: Շիրազի քննվող պոեմում պատմաբառերի յուրահատկությունը մի մասով պայմանավորված է նրանով, որ հեղինակի բնութագրմամբ՝ երկը պատմափիլիսոփայական է[1]:

Մեր արձանագրած *վարչական, կառավարման, ռազմի* և այլ ոլորտների պատմաբառերը մասամբ են անվանողական գործառույթով հանդես գալիս: Դրանցից են՝ *աղվեսադրոշմ* (77), *արքա* (52), *բերդ* (112), *թագ* (50), *թագավոր* (68), *թուր* (126), *իշխան* (103), *ծաղկող* (63), *ճորտ* (126), *մագաղաթ* (63), *նախարար* (126), *սպարապետ* (96), *սելջուկ* (56) և այլն: Միակ պատմական մակդիրը *մեծաթագ*-ն է՝ ուղղված թագավորին (101): Սրանք նպաստում են թե պատմական, թե խոսքային միջավայրի կերտմանը. *–Ի՜նչ բանադրանք, երբ կա իմ նետը* (201): *Ազատությունը… արքայի գլուխ գլխատող սակրին, ո՛չ ստրկուհուն* (126): *Ամրոցով, դղյակով իրենց Եկան ճոնվեցան իմ պարզ համայնքին* (210) և այլն: Նշվածից քանակապես ավելի ու ցայտուն է պատմաբառերի գեղագիտական գործառույթը, որին կանդրադառնանք քիչ ներքևում:

Պոեմի պատմական անձնանունների մի մասն առնչվում է կերպարներին: Դրանք քննվող ժամանակաշրջանի հայտնի պատմական անձինք են՝ *Սմբատ Բագրատունի, Հուսիկ Արավնունի, Վահրամ Պահլավունի, Գրիգոր Մագիստրոս, Սմբատ Զարեհավանցի, Թորակ Թոնդրակեցի* : Նշվածների ժամանակակից օտարներից կան *Աբլ-Բարբ, Ատիշին* (54) անունները: Շիրազն ընթերցողին նաև բացահայտել է նրանց պատմական դերակատարությունը կամ ընկալումը. *–Քեզ կձոնեմ Աբլ-Բարբին, Դվնո վիշապ ժանտ արաբին….Քեզ կուզե դահիճն հայոց…Քեզ է խալիֆն ինձնից խնդրում* (228): Պատմական կերպարները կենսամիջավայրում առկայացած են այնքանով, որքանով դա պետք է գաղափարական հիմքն ապահովելու համար: Շիրազը պատմական միջավայրն ընդամենն ուրվագծել է: Կերպարների արտաքինը չի պատկերվել. հեղինակը հմտորեն հյուսել է ներքին հոգեվիճակի նկարագրությունը: Ներկայանում է Ս. Մուրադյանի պատկերավոր բնութագրմամբ՝ «կերպավորված հերոսների հոգեբանության բացահայտման բացառիկ ձիրքը»[2]: Տանք արքայի՝ Սմբատ Բագրատունու շիրազյան նկարագիրը, որ արտաքին կերպավորում ներկայացնող միակ հատվածն է պոեմում, նաև նկատելի է հեղինակի անթաքույց դրական վերաբերմունքը հայ արքայի նկատմամբ. *Ասես աստված լիներ արքան, Հայոց թագով յոթնաժանիք, Շքախմբով իր փառանպարտ, Իր թիկնապահ զինախմբով, Ձեն ու զարդով իր քաջազարդ, Ոսկու մեջ էլ վշտի ամպով: Ծիրանիով արյունաստույգ* (47): Ի դեպ, Շիրազը խոսքի հուզականությունը պահպանել է իշխանական կացութաձևի նկարագրություններում՝ թագավոր ունեցած երբեմնի մեծ Հայաստանի պատմական կարոտի երանգ հաղորդելով ստեղծագործությանը. *Արևը՝ հագած ոսկեղեն զրահ, Գլխին՝ թագն հայոց մեր թագվորի, Արքայավայել ելավ ու բազմեց Անիի վրա, Յրելով մութը մեր սար ու ձորի: Ոսկի շաղ տվեց վեր՝ Արագածի արծաթե ձյունին, Եվ Ախուրյանին ողջունեց ձորում, Երբ միջնաբերդից դուրս եկան արքան և Արավնունին՝ Դեռ չկայծակող ամպիկն աչքերում, Նախարարներով և իշխաններով Եվ սպառազեն թիկնապահներով մայր տաճար մտան* (268): Գլխավոր կերպարներից Սմբատ Զարեհավանցու նկարագիրը հակասական է՝ կառուցված հակադրույթի միավորներով. *Հոգու մեջ կանթեղ, հագինը՝ խավար: Հոգում հույս ու ջահ, Հագին՝ ֆարաջա*[3] (43): Գրիգոր Մագիստրոսի նկատմամբ Շիրազի ակնհայտ բացասական վերաբերմունքն արտացոլվել է Սմբատ Զարեհավանցու խոսքում. *-Դու քեզմե խոսե՝ ի՞նչ ես հրոսել, Որ բյուզանդն է*

[1] Ն.տ., էջ 8:
[2] Ն.տ., էջ 26:
[3] Կարծում ենք՝ Շիրազն այս բառը գործածել է *լայն հագուստ* իմաստով:

քեզ մագիստրոսել… Բյուզանդը, ոչ թե մեր հայոց արքան: Ինչու՞ է շոյում քեզ օտարն այնքան, Որ երազում է Անի ներխուժել՝ Բյուզանդը, որ դեռ փոքր ազգերին Տենչում է ճուլող իր ծոցը քաշել…. Քեզ նման ուլին Բյուզանդն է ճուլել, Որ անմեղիս ես եղջյուրահարում, Հույն զորքով չէի՞ր հայ բերդն ավերում (112):

Շիրազի մտահայեցողությամբ՝ պատմական կերպարը ներկայանում է իր գործունեության և դրա հետագա արդյունքի միասնությամբ: Թեկուզ այս երկուսի սահմանագիծը հազարամյակ լինի: Պատմական հայտնի կերպարները կարող են դրական կամ բացասական արժեորումների չափանիշներ լինել, հեղինակի կամ կերպարների կողմից հիշատակվել՝ ապահովելով պատմության կապը, որ միշտ կա տաղանդավոր գրողի երկերում: Օրինակ՝ *Վարդան Մամիկոնյանի* (161) կամ *Վասակ Սյունու* (158) անուններն այլաբերաբար դրական կամ բացասական իմաստավորումներով են հանդես եկել, կաթողիկոսի կողմից *Ներսես Մեծի* հիշատակումը նպաստել է համապատասխան խոսքային միջավայր ստեղծելուն. *Ներսես Մեծից ետ ու այսօր՝ խեղճ են հայոց վանքերն անզոր* (64) :Կամ՝ Պապ թագավորի հակաեկեղեցական դիրքորոշման հիշատակումը Սմբատ Զարեհավանցու կողմից. -*Պապ թագավորն իրավն ասավ, Վանքի հացից մեզ սով հասավ* (59): Հեղինակի մերժողական վերաբերմունքի արտահայտություն է *Բելի* անվան հիշատակումը թոնդրակեցիների նկատմամբ. –*Մենք ձեզուրաց ենք,- կրկնեց Հաբելը, Ինչպես հայկընդդեմ աղեղված Բելը* (76):

Պոեմում պատմական տեղանունների ճոխ համակարգ է արձանագրվել: Ընդհանրապես, Շիրազի պատմական երկերի սյուժեները ծավալվում են պատմական Հայաստանի այն տարածքներում, որոնց հայկական կենսամիջավայրն ի վերջո կորսվել է: Այսպես է նաև քննվող պոեմում: Հեղինակը պատմական տեղանքն աշխարհագրական, ռելիեֆային նկարագրություններով չի տվել: Պատմանունների մի մասը ծառայում է պատմական դեպքերի արձանագրմանը. *Եվ ճիշտ այն ժամին, երբ խուժել Դվին՝ Իշխում է արաբ զորքը տակավին:* Կամ՝ *Այս տարաժամին ի՞նչ թոնդրականալ, Երբ կուզեն Անվո դռներն էլ բանալ, Երբ սելջուկ զորքն է իմ վրա գալիս:* Նշված միավորների մեծ մասը ներկայանում է իբրև այս կամ այն ազգային խնդրի տեղայնացման արտահայտություն, օրինակ՝ *Տարոնն էլ ձի է Բյուզանդին դառել, հեծյալն իր աչքը Անի է հառել* (90): Կամ՝ թոնդրակացած գավառներում սյուժե չի ծավալվում: Դրանց անունները 109-րդ, 111-րդ և այլ էջերում նշվում են իբրև IXդ. ազգային խնդրահարույց իրողություններ, օրինակ՝ *Այսպես էր ողջը, դատավոր արքա, Այսպես էր Մոկսը և Մանանաղին, Զարեհավանը, Վանը, Հաշտյանքը… Ուր պաշտվեցավ այս պիղծ հեշտանքը :* Կամ՝ վանքապատկան տեղանունները հակաեկեղեցական խոսքում են գործածվում. *Քանզի ինչպես Անին ոստան, Հազար վանք է՝ մեկ Հայաստան: Բայց կա՞ անհող Հայ վանք մի ճոխ, Որ չի խլել հանքն իմ հացի: Կա՞ մի վանքյան եկեղեցի, Մայր Անիի մի տաճար, Վանա ծովի մի Ախթամար, Մի Սասունա Սուրբ Կարապետ, Կա՞ մի մատղյա Սպասավանք….Մի Խաչավեմ, մի Գլակա, Որ չի զավթել իր շրջակա Գյուղաց հողերն իբր Մոտկան՝ դարձնելով վանքապատկան* (58-59) :

Տեղանունների խտացումներ կան արքայի խոսքում. վերջինս պոեմում Հայաստանի աշխարհիկ հզորությամբ մտահոգվող անձ է խորհրդանշում: Այսպես առանձնանում են էջեր (72, 85, 90, 91), որոնք ի վերջո տաղանդավոր բանաստեղծի հավերժախոս աղաղակումներն էին հայոց կորուստների հանդեպ. *Գահս թողեց առանց հող-տան՝ Առանց Արաքս, Առանց Գողթան,- Առանց տան-սյուն՝ առանց Մասիս, Առանց Սասուն, Առանց Տիգրիս, Առանց Խլաթ, առանց Խարբերդ, Առանց Եփրատ, անարտամեդ, Առանց մոկսի, Առանց Սիփան, Առանց Ղարսի, առանց Սիփան, Առանց Տարոն, առանց Անի, Առանց կարնո, առանց Վանի, Առանց Դվնա, առանց Ճորոխ, Էլ ի՞նչ արքա առանց մայր հող: Վառվող սիրտս՝ առանց հովի, Ավաղ, առանց Վանա ծովի, Առանց Բինգյոլ ու Բյուրական, Ավաղ, առանց Վասպուրական Էլ ո՞րն ասեմ Առանց Մասիս՝ Ինչպե՞ս կիսեմ Յավերն ազգիս….* (90- 91): Այսպես իբրև խորհրդանիշներ են հանդես գալիս նաև *Փոքր Հայք* անունը, որ ընդամենը ծառայում է հունացող տարածքի վտանգ նշելու համար, *Բյուզանդիան*՝ ուծացնող քաղաքականություն վարող կայսրություն, երբեմնի *Արշակավանը*՝ հասարակական կացութաձևի արտասովոր միջավայր է նշանակում: Իսկ պատմական որոշ անուններ «Թոնդրակեցիները» պոեմում ևս, ինչպես հեղինակի ողջ չափածոյում, ներկայանում են իբրև խորհրդանիշներ, օրինակ՝ *Անի, Վան* անունները քննվող պոեմում ևս կորուսյալ հայրենիքի հզոր խորհրդանիշներն են՝ *Գոց ճամփեքդ Անիից մինչ Վան Ջան մեջ էլ պիտի զորքերիդ առջև կանաչ զորգվեն (245): Որ վաղը Վանն էլ կամրջե քո ձին* (234):*Միայն Անին չէ, Վանն էլ կկանչե, Զորք է երազում հույսն հայրենիքի*(134): *Մասիս* բառն ընդգծվում է սովորույթի ուժով. այն պատմական կերպարների խոսքում ևս ազգային վերարժեորումների չափանիշ է: Ի վերջո, պատմական Հայաստանի գաղափարը Շիրազն ամփոփել է մեկ բառի մեջ՝ *մայրահող* (134), որ առավել խտացված է ներկայացնում նրա պատմական կարոտը:

Նշվածին զուգահեռ, Շիրազի վարպետ գրչով պատմաբառերն այլաբերվել են գեղարվեստին հատուկ օրենքներով: Ընդհանրապես, XXդ. պատմական գեղարվեստն առանձնացել է նաև

պատմաբառերի անհատական կիրառության լայն հնարավորություններով. մտքի ազատությունը զգալի է նաև այս ոլորտում: Այսպես է նաև գեղարվեստը տարբերվում պատմագրությունից. *Բա՞վ չէ ճորտանա ճոխ կինը՝մեկին* (109): *Ոչ ստրկանա կինն այրմարդոց, Ոչ այրմարդն է ստրուկը կնոջ* (և.տ.): *Ու չեք ծունկի գալիս անգամ՝ Անգամ առջև հայոց գահի* (51): *Բայց քուրմերը թոնդրաղանդի Կանգնած էին համր ու կանգուն (48) և այլն: Ընդոծին են բոլորն ասես* (101) համեմատությունը կաթողիկոսի խոսքում նպատակ ունի հասարակական ցածր կարգավիճակ և անհայր՝ ծագումնաբանությամբ չտարորոշված անձ նշելու՝ կապված թոնդրակեցիների ազատ կենցաղավարության հետ:

Շիրազը կերտել է պատմաբառերով կայուն կապակցություններ, որոնք հիմնականում գործում են կերպարների խոսքում. տվյալ պարագայում գործող անձի խոսքն առկայանում է իր կացութաձևի անվանումների միջոցով: Պատահական չէ, որ դրանք նշված դարաշրջանի համագործածական բառեր են, և դրանց այլաբերացումը սովորական խոսողական գործընթաց է եղել: Քննվող պոեմում նկատելի են՝ *սուր, նետ, նիզակ, դաշույն, թուր, տեգ* բառերով կապակցություններ, որոնցով մտավոր կամ ֆիզիկական գործունեության ազդեցությունն է ընդգծվում: Հատկանշական է, որ պոեմում ռազմի տեսարաններ չկան, և Շիրազը գենքերի անուններն ավելի շատ պատկերավոր արտահայտություններում է գործածել: Եզակի է նշվածների անվանողական դերը, օրինակ՝ *-Թե ստեմ, արքա,-շշնջաց մեկը,- Թող կուրծքս խրվի քո արդար տեգը* (123): Շիրազը յուրովի գեղարվեստականացրել է պատմական մտածելակերպը, օրինակ՝ սպարապետի հրամանի՝ ազդեցություն չգործելը այլաբերվել է *Վրիպեց նետը* (162) կամ՝երբ կաթողիկոսը հանդիմանում է նրան՝ *Լռո՞ւմ ես, ինչպես սուրդ պատյանում* (159): Այսպես են նաև՝ *սև մեղաց սև սուրը պատյանել* (78), *լեզուն ասես թուր է դահճի, ազգի նիզակ* (136) , *Աչքերիդ սուրը պատյանում պահիր, Ինձ տեր կոչելով՝ քեզ մի զրահիր* (52) : *Իշխանաց առաջ Այս զինաշառաչ, Որոնց աչքերու լռությունն անգամ Քեզ՝ մահավճռի թուր է անպատյան: Թե՞ թաքուն թուր եք՝ իմ խաչի առաջ* (77)*: Մյուս քաջերն՝ իր աղանդի Նիզակ մոնթերն անշեղ Զորավարներն իր փաղանգի՝ նորամորուս ու նորագեղ, Իբրև նետեր՝ իր աղեղին* (41): *Պարզեց խաչը թրի նման* (41): *Բոլոր ցեղերն, ասում եք, մեկ են, Էլ ինչով են մեկ, երբ թուր ու տեգ են, Նիզակ ու նետ են՝ մեր ձեռքից խլված Մեծն Մասիսի հայ կուրծքը խրված* (72): *Անբանակ բերդ է մարմինն անհոգի* (283): Մտքի ու լեզվական միավորների համադրման արդյունքում *թրալեզու* (68), *սուսերալեզու* (159) բառերը ևս ընդգծված են ներկայացնում խոսքի ազդեցությունը: Նշվածների բացառումն ընդգծում է հակառակը, օրինակ՝ *անթուր խոսել* (134)՝ մեղմ, առանց սպառնալիքների արտահայտվել: Հեղինակի գեղարվեստական դիտարկումը *նիզակացցվել* հեղինակային բառով արտացոլում է նրա ստեղծագործական ազատության չափը. *Եվ թոնդրակեցոց խումբն էլ հայտնվեց՝ Նիզակացցվեց ատյանի առաջ* (268):

Անհատական ոճավորման երևույթ է նաև համատեքստում պատմաբառերի նշված երկու՝ *անվանողական* և *գեղագիտական* գործառույթների համատեղումը : Ընդհանրապես, նմանությամբ կազմվող ձևերի ոճական կիրառությունները հատուկ են մեր լեզվին: Հովհ. Շիրազը դրանք հասցրել է նոր գեղագիտական մակարդակի: *Նույնահիմքության՝* միևնույն հիմքից կամ արմատից կազմված բառերի արվեստավոր գործածության քննությամբ զբաղվել է Պ. Պողոսյանը[1]: Այդպիսի ոճաձև է առաջացել հետևյալ օրինակներում. *Յուլի նման ծունկի չի գալիս Արքայիս առջև՝ արքայի նման Այս սատանաչյա ստրուկն էլ, սակայն* (49): Կամ՝ *Թե՞ ճորտացավ խաչն իմ ճորտին* (և.տ.):

Պատմական ժամանակաշրջանի տիպականակացմանն են ծառայում նաև այնպիսի բառային միջավայրերի ստեղծումը, որոնցով վեր է հանվում պատմական մտածողություն, օրինակ՝ *Ու մռայլվեց արքան անչափ, Որ փոշու պես ոտքը չընկան* (48):

Գեղարվեստական հնարք է նաև պատմաբառերից կամ հնաբառերից հեղինակային միավորների սերումը. քննվող պոեմում գերակշռում են *թոնդր(ակ)*- հիմքով կազմությունները: Կան և չեզոք, և բացասական երանգավորումներով բառեր՝ *թոնդրաազատ, թոնդրաղանդ, թոնդրաբողոք, թոնդրակամեծ, թոնդրակուհի, թոնդրահամբույր, թոնդրահայ, թոնդրանետ, թոնդրառգի, թոնդրառհմակ, թոնդրառրձ, թոնդրապղծյալ, թոնդրավագր, թոնդրաքառս,* և այլ՝ քսանի հասնող հեղինակային կազմություններ, որոնցով ևս ցայտուն դրսևորվում է Շիրազի անսպառ երևակայության ու հմուտ բառագործածության հարաբերակցությունը: Հանճարեղ գրողը կարողացել է բառային այնպիսի միջավայր ստեղծել, որ իրարամերժ իրողություններ արտահայտող բաղադրիչները համադրվեն մեկ բառում և ցայտուն արտահայտեն պաշտոնական եկեղեցու բացասական վերաբերմունքն աղանդի նկատմամբ: Արդյունքում ստեղծվել է արտակաղապարային[2] *թոնդրաղուրան* (77) բառը, որ նշանակում է Սմբատ Զարեհավանցու հայացքների ամբողջությունը՝

[1] ***Պողոսյան Պ.***, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.2 , Եր., 1991, էջ 155:
[2] ***Էլոյան Ս.,*** Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989, 199:

քրիստոնեական պրիզմայի ներքո: Այսպես է նաև *գաղտնաբյուզանդ* (54), որի բառակազմական հիմքերը բացասական երանգ ունեն ինքնին:

Պատմական ժամանակաշրջանի խոսքային միջավայր են կերտում հնաբառերը: Իբրև երկխոսությունների հիմքի վրա կառուցված երկ՝ «Թոնդրակեցիները» առատ է գրաբարյան և միջին հայերենյան լեզվական իրողություններով: Հնաբառերը խոսքիմասային տարբեր միավորներ են՝ գի (269), պղծանք (267): Քերականական ձևերի առատությունը ևս զգալի է, այստեղ Շիրազը մնացել է ժանրի ավանդական սահմաններում: Կան գոյականի, դերանվան բառաձևեր՝ այլոց (267), կամոքն (268), հագարաց (267), օրինաց (269) և այլն: Դրանց կիրառության սխեման դասական է. բառերն ու բառաձևերը կերպարների խոսքը տիպականացնող միջոցներ են: Առանձնանում են հոլովաձևերը, անցյալ դերբայի անկախ գործածությունն առանձնապես կաթողիկոսի խոսքում:

Պատմական ժամանակաշրջանի գեղարվեստականացումը Շիրազն իրացրել է մեծագույն արվեստով: Պատկերավորման տարբեր միջոցների չափավոր կիրառությամբ վեր է հանել պատմական ևս մեկ բարդ ժամանակաշրջան: Օրինակ՝ պատմական խնդիրներ են արտացոլված նաև արքային վերաբերող շրջասույթներում՝ *փոքրացված երկրի մեծ մոլորյալ* (89), *փոքրագորք երկրի մեծ տագնապյալ* (114): *Մեծ-փոքր* հակադրույթն առավել է ընդգծում ստեղծված ազգակործան իրավիճակը: Անթաքույց բացասականություն կա *Բյուզանդիա, թաթար, թուրք, արաբ* հասկացությունների նկատմամբ: Առաջինն իբրև հունացնող գիշատիչ սպառնալիք՝ *Տենչում է ծուլող իր ծոցը քաշել, Քաշել՝ դարձնել նախ գերին թրի,-Ապա դարձնել գերին իր գրի,- դարձնել ստրուկն ու դանդաղ ծուլել* (112): *Բյուզանդիան* բնութագրվել է իբրև *սուտ խաչեղբայր, մութ քրիստոնյա* (161): Արտաքին թշնամիներից վտանգի ընդհանրացված պատկերներն են ստեղծում՝*թաթարն ամպել է հայ երկրի վրա* (54), *օտարն է իմ երկրում ամրոցվել* (54), *մայր Արաքսի ջրերն էլ խմում են արաբ նժույգները* (53) և այլն: Շիրազն ընդհանրապես հայ ժողովրդի պատմական ծանր վիճակը ներկայացրել է բանաձևային արտահայտությամբ՝ *յոթն ազգերի ճանկն ընկած ազգ* (145):

Սովորաբար յուրաքանչյուր պատմական երկի ժամանակաշրջանն ինչ-որ կերպ հարաբերվում է գրողի ժամանակաշրջանին, և դա չի արտացոլվում երկի բառապաշարում, մնում է գաղափարական ոլորտում: Շիրազը խախտել է ավանդականության սահմանները: Նրա գաղափարները պատկերային մակարդակից անցել են բառային միջավայր, օրինակ՝ *Մասիս, խլել, գերություն* բառերը շարահյուսական որոշակի միջավայրում, *Վանա դուռը բացել, Հոն այնտեղ է, Արագն այն կողմ, Ողջը խլեց թուրքն անողորմ* (91) և այլ արտահայտություններ: Շիրազի նման հմուտ ստեղծագործողը, սակայն, այսպիսի միջարկումներն այնքան արվեստորեն է կատարել, որ դրանք ժամանակավրիպության ոճական թերությունը մասամբ են կրում: Նման նախադասություններն ու արտահայտություններն այն հատվածներում են, որոնք ազգային, տնտեսական խնդիրների խտացվածք են ներկայացնում, և մտքի ու բառերի դինամիկ զարգացման մեջ ներհյուսվում են տարբեր ժամանակաշրջանների խնդիրները, որոնք ընդհանրական են պատմական վիճակի և դրա արդյունքի առումով, օրինակ՝ *Ի՞նչ կուսանոց, երբ մայր կուզեն Հայոց՝ գերի սարերն անգեն…կուսանոցներն հայոց անծին՝Ջուր են թուրքաց ջրաղացին* (67): *Հայ վանքեր մզկիթող թուրք (160), Գերության մեջ է Մասիսն իմ Հայկյան* (41) , *Ի՞նչ վեճի դար է, երբ հույսն է գոցվել, Երբ օտարն իմ իսկ երկրում ամրոցվել,Երբ թուրքը խլել ծովն էլ իմ Վանա, Տենչում է խմել ծովն էլ Սևանա* (54): Նշված ասույթները դարերի պատմության վերջնարդյունքն են՝ տեղափոխված IX դարի տիրույթ: Վերջին արտահայտությունը համեմատության բաղադրիչ է՝ *Կանգնած մնացին, ինչպես իր գահով՝ Գերության մեջ է Մասիսն իմ Հայկյան* (41): Կամ՝ նույն պատմական դարաշրջանում *Մասիսը* կարող է խորհրդանիշ լինել միայն շիրազյան պատմական կերպարների համար՝ *Դուք ուրիշ մուր եք Մասիսի ձյունին* (77), *Հայ եմ, Մասիսն հայ է ծնում* (60) և այլն: *Թուրք, ենիչար* բառերի բազմաթիվ գործածությունները (էջեր 54, 67, 91, 155, 156, 160 և այլն) ժամանակավրիպության արտահայտություններ են, սակայն ամեն դեպքում հեղինակը դիմել է ***միտումնավոր ժամանակավրիպության*** [1]: Ծայրահեղության է հասցված կնոջը հակադրվող բացասական եզրերում *սելջուկ, ենիչար* բառերի գործածությունը՝ *(Ազատությունը) Սելջուկին տվեք, ժանտ ենիչարին, բայց ոչ կնոջը (203):* Պոեմում թե արքայի, թե սպարապետի, թե ի վերջո կաթողիկոսի մտքի զարգացումը հանգեցնում է հայրենիքի ազատագրման գաղափարին, նրանց խոսքը երբեմն պաթետիկ է, վեր է հանվում պատմական երազանքը՝ միահյուսված արդիական երանգներով՝ *-Կծոնեմ, արքա՛, կգտնեմ ելքը, Զանգերս պիտի խնկեն քո խելքը, Եվ պիտի կոտրեն այս ծով-ծարավդ Քո դեմ խոյացող հյուսիս-հարավը: Քո յոթ գետերով՝ երկրով Նահիրյան, Քո մայր Արաքսով մյուռոնաբուրյան, Քո Եփրատ, Տիգրիս, Ճորոխ գետերով, Քեզ կտան հողդ՝ քո գորք նետերով (245):*

[1] **Խլղաթյան Ֆ.**, Ոճաբանական բառարան, Եր., 2000, էջ 64:

Այսպիսով՝ պատմական ոճավորման շիրազյան համակարգն այնքան յուրատիպ է, որ XXդ. հայ գեղարվեստում ներկայանում է իբրև առանձին համակարգ՝ արժանի համակողմանի ուսումնասիրության :

Օգտագործված գրականություն

1. Արզումանյան Ս., Սովետահայ վեպը, հ.3 , Եր., 1986:
2. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճագիտություն, Եր., 1989:
3. Խլղաթյան Ֆ., Ոճաբանական բառարան, Եր., 2000:
4. Շիրազ, Թոնդրակեցիները, Եր., 2014:
5. Պողոսյան Պ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, հ.2 , Եր., 1991:
6. Սարինյան Ս., Հայոց գրականության երկու դարը, Եր., 2004:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Շուշանիկ Սաղյան-բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: shushaniksagyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Ոճագիտություն

ԽԻՂՃ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌՈՒՅԹԻ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԵՐՏՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ

Միլվա ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *բառույթ, բարոյագիտական նորմ, հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական, ոճագիտական մակարդակներ, նախադասություն, բառակապակցություն, կոչական:*

Ключевые слова- *Лексема, этический норм, фонотический, лексический, морфологический, синтаксический, стилистический уровень, предложение, словосочетание, обращение.*

Keywords- *allocution, lexeme, phonetic, lexical, morphological, syntactic, stylistic levels, sentence, word-group.*

С. Минасян

ЛИНГВИСТИЧЕСКАЯ ФУНКЦИЯ СЛОВА խիղճ (СОВЕСТЬ) И СОСТАВЛЕННЫХ ИЗ НЕГО СЛОВ В ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕРЫ»

В поэме Ов. Шираза «Тондракецинеры» слово совесть , как нравственное понятие, и однокоренные слова в армянском языке (жалеть, безсовестныи) употреблены более сто раза (поэма составлена из 300 страниц). Они имеют фонетические, лексикологические, морфологические, синтаксические и стилистические особенности, позволяют отобразить всечеловеческие и общенациональные понятия, обусловленные верой, который был утерян в советском обществе. Нами отмечены разные стили, метафора, идиомы, гипербола, антитеза, градация, реприза.

S. Minasyan

THE LINGUISTIC FUNCTION OF MORAL WORD խիղճ (CONCIENCE) AND FORMED FROM IT IN THE POEM OF HOVANNES SHIRAZ «TONDRAKETSINERY»

The article deals with the moral word conscience and formed from it in Armenian some words (to pity, pitiless ets.) in the poem of Hovannes Shiraz «Tondraketsinery». They are used frequent: hundred times (the poem has 300 pages). The foregoing words have phonetic, lexical, morphological,syntactic, stylistic picularities. For example, make different styles, idioms, metaphor, hyperbole, antitesis, gradation, redublication, intonation.

Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» երեք հարյուր էջանոց պատմահրավաբանական պոեմում խիղճ գործուն գրական-խոսակցական, բարոյագիտական բառույթը և նրանից սերված ու սակավ կիրառված՝ խղճալ, անխիղճ, խղճամեռ, խղճուրացներ բառույթների հարյուր տասից ավելի գեղագիտական կիրառությունները հնչյունաբանական, բառագիտական, ձևաբանական, շարահյուսական, ոճագիտական լեզվաբանական մակարդակներում համապատասխան ձևերով դրսևորում են մարդկային ու համամարդկային, ազգային ու համազգային վերաբերմունքներ՝ կապված հավատի հետ՝ կորուսված խորհրդային կարգերում: Գեղագիտական մակարդակում համեստորեն ճոխացված այդ բառույթները սակավ արտահայտչական-պատկերային միջոցներով են զարդարուն:

Ո՛վ խիղճ, Մարդկային ծովում՝ մարգարիտ կորած (290),
298՝ Աստված ունենք, Մենք քեզ (կաթողիկոս Աղավնունի) չունենք,
Մեր աստվածն է առանց միջնորդ, Առանց կամուրջ, անառաջնորդ,
Վեր՝ երկնքում, Ոչ թե վանքում, Աստված խիղճ է մարդու հոգում…
Մեր աստվածը՝ առանց խաչի, Տաճարի մեջ է մեր խղճի.
ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՅԻ (Թոնդրակեցիները)

Խիղճ գործուն գրական-խոսակցական, նաև բարոյագիտական բառույթը մեծանուն բանաստեղծ Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում գաղափարի արտահայտության կարևորագույն միջոցներից է: Այն կիրառված է գեղագիտական միջոցների սահմաններում և հետապնդում է համամարդկային արժեքներ՝ բարոյագիտական բոլոր նորմերով: Նախապես չի զգացվում այդ բառույթի գործուն կիրառությունը, բայց հետո աստիճանաբար իր հաճախականությամբ ուշադրություն է բևեռում մարդկային ու համամարդկային, ազգային ու համազգային կարևոր, հոգեմոտ հասկացություններ արծարծող շարահյուսական կառույցներում արտահայտված վեհին, լավին, օրինակելիին և ընդդիմանում չարին, կեղծիքին, շահադիտականին (երեք հարյուր էջանոց գործի չորս մասերում հարյուր տասից ավելի կիրառություն կա, որոնք աստիճանաբար հաճախակի են դառնում՝ 45, 51, 52, 55, 58, 63, 78, 84, 88, 90, 99, 104, 106, 111, 114, 122, 135, 138, 139, 141, 142, 143, 144, 146, 150, 152, 159, 163, 168, 169, 170, 176, 179, 180, 181, 184, 190, 210, 211, 212, 213, 218, 219, 220,

222, 223, 225, 226, 228, 243, 244, 250, 256, 255, 261, 262, 269, 271, 274, 275, 278, 280, 281, 283, 286, 287, 289, 290, 292, 296, 298, 306, 313, 314, 326. մասն առաջին՝83 էջ-17 անգամ, մասն երկրորդ՝ 109 էջ-40 անգամ, մասն երրորդ՝35 էջ-25 անգամ, մասն վերջին՝ 60 էջ-30 անգամ. նախերգանքն ու վերջերգանքը սակավ էջեր են. առաջինը՝ երեք էջ-0, երկրորդը՝ երկու էջ-1):

Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը գրվել է նախորդ դարի հիսունականների սկզբին, բայց խորհրդային կարգերում չէր տպագրվել, փականքի տակ էր, որովհետև միջնադարյան հայկական համայնքին վերաբերող սխալների քննադատությունը հենց խորհրդային կարգերում թույլատրված սխալներն էին (մեծատաղանդ բանաստեղծը հեշտ հասկացել է խորհրդային կարգերի սխալներն ու համարձակվել դրանք արտահայտել հազարամյակ առաջ եղած և որոշ նվաճումների հասած թոնդրակյան կյանքին, իսկ գեղագիտական այդպիսի հնարանքները չէին վրիպել ժամանակի քննադատների ուշադրությունից, ուստի տպագրությունն անթույլատրելի է մնացել): Այդ մեծարժեք գործը վերջապես լույս տեսավ խորհրդային կարգերի փլուզումից երկու տասնամյակ հետո՝ 2014 թ.՝ Սամվել Մուրադյանի ծավալուն գրականագիտական վերլուծությամբ: Նույն թեմայով ու նույն վերնագրով պոեմ գրել էր նաև Վահագն Դավթյանը՝ Հովհ. Շիրազից մի քանի տարի հետո, որը տպագրվել է իսկույն՝ վաթսունականի սկզբին, որովհետև արգելված հարցեր չեն արծարծվել, գրաքննչական դատաստան չի եղել: Խիզախող Հովհ. Շիրազը նկարագրել է թոնդրակեցիների դեմ հարուցված բուն միջնադարյան դատահիրավաբանական աշխատանքների ընթացքը՝ արքա Օհան՝ Հովհաննես-Սմբատ Բագրատունու, կաթողիկոս Հուսիկ Աղավնունու, սպարապետ Վահրամ Պահլավունու և ժամանակի մեծ մտածող, բազմակողմանի կրթություն ստացած, Բջնի աշխարհի իշխան Մագիստրոսի՝ Փիլիսոփոսի՝ Բջնեցու՝ Գրիգոր Պահլավունու մեղադրականներով ու գործավարությամբ (գլխավոր օրենսգետն ու իրավաբանն արքան էր, իսկ մեղադրողը՝ Բջնեցին՝ Գրիգոր Պահլավունին): Թոնդրակյան շարժման ղեկավար, դրանց վերաբերող աշխատանքների ծրագիր-մագաղաթի հեղինակ Սմբատ Զարեհավանցին և դատվող մյուս ընկերները, որոնք բանահյուսական յոթնյակ էին կոչվում (դատավարության ժամանակ Թորակի պատահական սպանությունից, Հրանուշի դարձի գալուց հետո էլի նույն յոթնյակն են կոչվել): Մեղադրյալներն պետական, իշխանական ու նրանց օգնող այլազգի զորքերի կողմից պարտվել, շղթայվել ու բերվել են մայրաքաղաք Անի՝ բանադրելու համար: Թոնդրակցիների համարձակ քննադատությունը հավատի շուրջը հավասարակշռությունից հանում էր մոլի հավատացյալ երիտասարդ սարկավագին, որը, կաթողիկոսի ձեռքից հափշտակելով ծանր խաչը, հարվածում է Սմբատ Զարեհավանցու առաջնակարգ աշակերտ՝ հետևորդ ռաբբի Թորակի ճակատին: Վերջինս արյունվա անշնչանում է: Միամորիկ Թորակի մոր, սիրած Կամարայի աղեկտուր սուգից և արևախավարումի շփոթից օգտվելով, ճողոպրել է յոթնյակը, բայց բռնվել արաբ հրոսակ զինվորների կողմից, որոնք հակաթոնդրակյան պայքարում արքայի՝ օտարազգի օգնականներից էին և անձամբ վրիժառու էին մահմեդական հակակրոնական պայքար մղող Սմբատ Զարեհավանցու դեմ (հայերի նկատմամբ արաբական անօրինության հարցը Վահագն Դավթյանը խոր է ներկայացրել): Թոնդրակեցիների ղեկավարական յոթնյակը Դվինի արաբ ղեկավար Աբլ-Բարբիի հրամանով կախաղան է հանվել հրապարակում, որովհետև դրան ձգտում էին թե՛ հայ, թե՛ արաբ ղեկավարները (բյուզանդականը վեր չի լուծվում, բայց Սմբատ Զարեհավանցու կապույտ աչքի խորհրդանիշով հեղինակի կողմից սուր է ընդգծվել դարեր առաջ եղած թե՛ բյուզանդամետությունը, թե՛ հազարամյակ հետո՝ ռուսամետությունը, որը և գիրքը չտպագրվելու ակնհայտ պատճառներից էր):

«Թոնդրակեցիները» պոեմի թեման, ինչպես նշեցինք, հայ ժողովրդի միջնադարյան հասարակության ստորին կարգի ընչազուրկ մարդկանց՝ հացի կարոտ ապրելակերպի շուրջ բռնկված շարժման ղեկավար դրդիչների դատավարությունն էր (հատկապես հավատի միջնորդների՝ շինականի հողերը զավթած եկեղեցականների դեմ), որը քննաբանվել է սոցիալական, տնտեսական կացութաձևերի, կին-տղամարդ հարաբերությունների և այլնի շուրջ եղած իրավիճակների բանադրման ընթացքում վերին ու ստորին խավերի ամենայն տիպականացված լուսաբանմամբ: Շիրազյան շրջանում՝ խորհրդային կարգերում, ազգության ինքնության խաթարման վտանգ նորից եղավ, մարդկային խղճի ոտնահարում զգացվեց: Մեծ մտածող Հովհ. Շիրազը երազում էր՝ *Մարդուկները …մարդանան* (141), *Մարդել մարդուն* (301), որն առ այսօր դեռ անրջանք է, խիղճ, որ երբեմն կորչում է (ՄԱՐԴ եղածները ճնշվել ու ճնշվում են դեռ անարդար շրջապատից՝ ազգային ու համազգային շրջանակներում): Կոմունիզմի ցնորքը՝ թումանյանական ոսկի քաղաքը, երազանք մնաց: XX դարի վերջին խղճուկ Հայաստանը ինքնուրույնություն ստացավ, հավատի իրավունքները համեմատաբար ազատություն ստացան, բայց հարուստ ու աղքատ դեռ կան, անհավասարությունը դեռ սարսափելի է (ծույլիկները, դժվարություններից խորշողները կարգին մասսա են կազմել ու

կազմում, օտարի շահադիտական վերաբերմունքն ակնհայտ է): Հայոց մեծ զավակ Հովի. Ծիրազը համամիտ չէր հավատի ժխտմանը՝ չարյաց փոքրագույնը, մարդկության հատկանիշների պահպանության սովորական միջոցն էր համարում այն, հայության ինքնության նվազագույն պայմանը (Քրիստոսը, Լենինը, կոմունան՝ հայկական ոչինչ չունեին, բայց գոնե Հայկի հայերենը՝ հայոց լեզուն, մեծագույն մտածողների շնորհիվ ու հայ աստված Մեսրոպ Մաշտոցի հայաշունչ հայերենի զորությամբ, մասամբ պահպանվել ու պահպանվում է): Բայց միևնույն է, առանց հավատի՝ խղճի մեծ գրավականի անհնար է: Ահա մեծ բանաստեղծի հավատամքը և ընդհանրացումը.

Մի աստվածայնի պիտի հավատաս, Մարդուց վեհ բանի, որ աստվածանաս:
Մի խղճի ձայնի, որ գեթ մարդանաս… Թեկուզ չլինի՝ պիտի հավատաս,
…Ո՛վ մարդ, մի բանի պիտի հավատաս՝ Որ աստված լինի, որ գեթ մարդ մնաս…(էջ 326)

Մեծանուն բանաստեղծ Հովի. Ծիրազի «Թոնդրակեցիները» պոեմի հավատամքի կենտրոն, համամարդկային ԽԻՂՃ բարոյագիտական ու սովորական համամարդկային ու մարդկային բառույթը, ինչպես նշել ենք, հարյուրտասից ավելի կիրառություն ունի՝ 113 (բառակազմական տարաբնույթ կառույցները սահմանափակ են՝ յոթից չեն անցնում): *Խիղճ* արմատի կիրառությունը որոշ էջերում երկու, երեք անգամ է գործածված, չորսը՝ հազվագյուտ. էջ 45, 63, 99, 114, 135, 139, 141, 146, 150, 220, 271, 274, 280, 306՝ 2 անգամ, 142, 176, 226, 256, 287, 289, 298՝ 3 անգամ, 180, 222, 243՝ 4 անգամ: *Խիղճ*-ը հայերենում չստուգաբանված բառույթներից է (հակում կա համարելու նահիրյան): Ջայնդարձով տարբերակն է *խեղճ*-ը (2, էջ 944. 3, էջ 257, 366): Մեծանուն լեզվաբան Գ. Ջահուկյանը ևս *խիղճ-խեղճ* տարբերակներ է ընդունել (9, էջ 388. կոնկրետ՝ հնագույն՝ ուրարտական շրջանի հետ է կապել): Արդի բացատրական բառարաններում (7, էջ 518. 1, էջ 579) պահպանված են *խիղճ* բառույթի նույն սահմանափակ իմաստները: Խիղճը՝ որպես բարոյագիտական նորմ, ունի հետևյալ բացատրությունը՝ 1. *արարքների ներքին գիտակցումն ու գնահատումն է, իր վարքագծի բարոյական պատասխանատվության զգացում*, 2. *գութ, կարեկցանքի զգացում, կրոնական համոզմունք*: Հայկական սովետական հանրագիտարանի 5-րդ հատորում բարոյագիտական խիղճը բնութագրվում է հետևյալ կերպ՝ *Խիղճը բարոյագիտական կատեգորիա է, իրականացված բարոյագիտակցություն, որ բնորոշում է իր բարոյական սկզբունքներ մշակելու, արարքները հսկելու և արժեքավորելու անհատի ունակությունը. Անհատի արարքների գնահատականը դրսևորում է ոչ միայն որպես դրանց բանական գիտակցում, այլև ապրում՝ խղճի խայթ* (էջ 52): Բուն բարոյագիտական բառարանում առավել ծավալուն է տրված՝ *Խիղճը բարոյագիտական կատեգորիա է, որը բնութագրում է անհատի ընունակությունը իրագործելու բարոյական ինքնավերահսկումը, ինքնուրույն ձևակերպելու իր համար բարոյական պարտականությունները, պահանջելու իրենից դրանց կատարումը և տալու կատարված արարքների ինքնագնահատումը, անհատի բարոյական ինքնագիտակցության արտահայտություններից մեկը* (շատ եվրոպական լեզուներում ԽԻՂՃ բառը ստուգաբանորեն նշանակում է համատեղ գիտելիք, իսկ ռուսերեն այն ծագում է зедать՝ իմանալ բառից: …Այն նաև զգացական վերապրումների ձև է:…Այսպիսով, *խիղճը անհատի կողմից հասարակության հանդեպ իր պարտքի և պատասխանատվության սուբյեկտիվ գիտակցումն է* (4, էջ 187):

Խիղճ բարոյագիտական ու համամարդկային բառույթի կիրառությունը Հովի. Ծիրազի «Թոնդրակեցիները» պոեմում գործածության հաճախականությամբ սովորական ու գեղագիտական սահմաններում՝ լեզվաբանական բոլոր ձևերով հնչողություն ստացած, բայց ամենաազդեցիկը շարահյուսականն է, որովհետև այդ բառի բազմաշերտ ու տարաբնույթ կապակցությունների գեղագիտական ու իմաստաբանական արժույթների ծավալումը, համեմատաբար, ավելի հնչեղ ու խոր ընկալելի է:

1. *Խիղճ* և նրանից կերտված բառույթների հնչյունաբանական արժույթը- *Խիղճ* բառույթի հնչյունաբանական ոճական առանձնահատկությունները սահմանափակ են: Արտաբերական տեղերը ներքին շարժական ծնոտին տեղադրված լեզվի մասերով հավասարարական են չորս հնչյունների համար (առաջնալեզվային ու հետնալեզվային): Արտաբերման եղանակից շփականությունը՝ բերանի քիչ բացվածքով, իշխող է, իսկ ձայնի և աղմուկի հարաբերությամբ՝ հավասար: Թույլ շչականությունը Ճ հնչյութում ուշադրություն է հաղորդում բառին, քանի որ սովորական խոսքում այս բառի նման մեկ քառորդի (4-1=100-25 տոկոս) հարաբերություն չունի այլը, ուստի սովորական բարեհնչունությանն էլ հավելվում է հնչական սակավ շչականությունը: Բառույթը, ձևաբանական թեքման ենթարկվելիս կամ բառակազմական իրողությամբ սակավ փոխվելիս, Ի ձայնավորը հնչյունափոխվում է Ը գաղտնավանկի, իսկ հավելվող ձևույթներում գրվող ձայնավորները հայերենի հնչական համակարգին համապատասխան կառույցներ են և օրինաչափ: Օրինակ, Թորակ Թոնդրակեցու խոսքում՝ Խղճիս աչքերն ինչպե՞ս փակեմ (152): *Խիղճ* բառույթի *ի* ձայնավորի՝ շեշտի հետ կապված դիրքային

սովորական հնչյունափոխությունը ոճական արժեք չունի, բայց ստացական Ս հոդը կիրառվելիս սուլականությամբ իսկույն ուշադրություն է գրավում:

Հանգի համար ԽԻՂՃ-ը հազվադեպ է կիրառվել՝ հարյուր տասից ավելի կիրառությունում՝ չորս անգամ (տողում առաջնադիր է, քանի որ ուշադրության կենտրոն լեզվական միավոր է):

…խիղճ…չիղջ: (51)

Մայր տաճարներն են զարթենցնողը մեր քնած խղճի,

Նոքա մեր ոգյաց մարմնաձևերն են,-ինչպես թե՝ «պետք չի» (139):

-Այս ինչե՞ր կասես,-ասացի,-*անխի՛ղճ*:

Ասել է՝ կույսս դառնամ պերճաղի՞ճ:

-Ինչո՞ւ պերճաղիճ, երբ պերճաղիճը

Ծախում է նաև մարմնի հետ *խիղճը* (256):

2. *Խիղճ* բառույթի և նրանից կերտված բաղադրությունների բառագիտական արժեքները-*Խիղճ*-ը բառագիտական մակարդակում հնչեղ է հենց բառույթի իմաստաբանական հատկանիշով, որին սկզբում անդրադարձանք, իսկ իրեն կապակցվող բառերի հարևանությամբ ստեղծվում են նույնիսկ աստվածացվող իրադրություններ, որտեղ հնչեղ են շարահյուսական կառուցվածքից բխող ծավալուն վերլուծությունները: Հատկապես առանձնանում են հոմանիշներով ստացվող աստիճանավորումները, կամ հականիշներով՝ հակադրույթները (երբեմն հակադիրը սատանայացվողն է, դժոխայինը. 180): Ախորժալուր բարեհնչունությամբ առանձնանում է դարավոր հավատի քարոզչությամբ հագեցած է խոսքը, որտեղ թոնդրակեցիներին վերագրվող բացասականը հակադրվում է խղճին: Օրինակ, ահա աստվածապաշտ կաթողիկոս Հուսիկ Աղավնունու ճոխ մտածողության արտահայտությունը թոնդրակեցիների դեմ՝ *…աղոթքներն են սրբողը սրտիդ, Միակ սրբողը՝ սատանայախաբ, սև սարդոստայնիդ: Տաճար է, որ մեզ մաքրաթորում է՝ մանկացնելով, Վանելով դիրտը ամենաներող խիղճը ծնելով* (141):

Խիղճ բարոյագիտական բառույթի արժևորումը երբեմն ընդգծվում է աստվածաբանական հավատի բառերով հագեցած խոսքային կառույցներում, ուր մեծարվում են հավատը, աստված, բայց երբեմն (թոնդրակեցիների խոսքում զուսպ փնովվում է եկեղեցին), ինչպես՝ *Աստված մոր խիղճն է, բնազդն է գութի* (168), *Ինձ աստված միայն իմ խիղճն է թվում: Միայն իմ խիղճն է կամուրջն ու ճամփան, Տաճարները չեն, բայց ընդդեմ կյանքի՝ Թե չհավատաս աստծո գոյության՝ Մարդը կուլ կերթա օրը բյուր մեղքի* (289. ՍՁ), *Թե աստված խիղճ է՝ ճորտ ու տերն ի՞նչ է* (181. Կունձիկ աբեղա), *Արքայի խղճի վրա եք հենվում,- Սակայն աստծո չարընդդեմ խիղճն է հավիտյան քենվում, Ահա թե ինչու աստվածն իմաստուն դժոխքն էլ ստեղծեց* (180. Հուսիկ Աղավնունի), *Թե աստված խիղճ է՝ վանքում էլ չկա* (190. Հարքա Վրվեռ), *Ո՛վ դու նեռ Վրվեռ, թե աստված չկա՝ Ո՞վ դրդեց խիղճդ, որ գանձ է ոսկյա, Հարստությունդ ողջը բաժանես հեզ աղքատներին, Աստված՝ խիղճը կա-, թե որ լավ նայես խղճիդ աչքերին* (176. Հուսիկ Աղավնունի), *Երբ հավատով են առնում ականջին խղճի փոխարկվող անտես արարչին* (281. ՀԱ), *Աստված խիղճ է մարդու հոգում …Տիեզերքն է մեր խղճի հետ, …Մեր աստվածը՝ առանց խաչի, Տաճարի մեջ է մեր խղճի* (298) ևն:

Մեծանուն բանաստեղծ Հովհ. Շիրազը, նույնիսկ Հուսիկ Աղավնունու խոսքում կիրառելով աստվածաբանական մեծարման սովորական գեղագիտական փորձը, արևի խավարման պահին ամբողջացնում է կաթողիկոսի գրագիտության, խոսքի վարպետության, պահը նպատակասլաց գործադրելու հմտությունը՝ հասարակ ամբոխի նկատմամբ, նրանց դարձի բերելու ընդունակությունը (համաշխարհային փորձ. եգիպտական տաճարների պատմությունից. ապստամբների կողմից տաճարի վրա հարձակման ժամանակ դուռը ջարդելիս՝ արևի խավարում և տանիքից քուրմի խոսքը): Ահա այդպիսի պահ էլ գործածում է Հովհաննես Շիրազը՝ տիպականացնելով կաթողիկոսին: Այստեղ նպատակային է հնչում *խիղճ* բառը:

Քանզի ձեզ փրկեց աչն իմ աստծո՝ Ձեր հոգում մեռած հավատը նորեց,
Այս խավարումով ձեզ լուսավորեց, Ձեզ դարձի բերեց սրբազան ահով,
Ձեր *խիղճը* փորձեց՝ արևի մահով,- Որ ծունկի եկաք իմ խաչի առաջ (306. Հուսիկ Աղավնունի):

Ճիշտ է, մեծ հեղինակը հակադրում է նաև Սմբատ Զարեհավանցու ճշմարիտ խոսքը, բայց միևնույն է, ամբոխը հարձակվում է նրա վրա, զրկում կապույտ աչքից՝ հունամետությունից, բյուզանդամետությունից (հեղինակի գեղագիտական հայամետությունը՝ սև աչքը, մնում է, որը շիրազյան մտքի գեղագիտական նվաճումներից է, իսկ կապույտ աչքը հանվում է, այսինքն՝ հունամետությունը, բյուզանդամետությունը, ռուսամետությունն իբր վանվում են, բայց արքան,

պատերազմից խուսափելու համար, վերջում Անին հանձնում է հունաբյուզանդականներին՝ ինքնասպանություն գործելով. այս լուծումը «Անի» պոեմում է):

Խիղճ բառույթը բառաշերտային տարբեր ձևերում գործածվում է բարձր ու սովորական ոճերում, ուր իշխողը սովորականն է (ցածր ոճ չկա. *խղճի* հետ մահ է զուգորդվում մի անգամ, կաթողիկոսի խոսքում՝ թոնդրակեցիների նկատմամբ. Իմ *խիղճն* էլ ձեզ մահ ինչպե՞ս չմաղթի, 226. *մահ* և *մաղթել* բառերն իրար հետ կապակցելը ոճական անհարթություն է ստեղծում. *խղճի* հետ մի անգամ էլ *ոսկի* բառն է զուգորդվում, որը ժողովրդական մտածողության գեղագիտական հոյակապ նմուշ է՝ Տեղ կա՝ խելքն է ոսկին, իրավ, Բայց տեղ էլ կա՝ *խիղճն է ոսկի* (226)): Դատավարական ատյանի ժամանակ բարձր ոճ է կերտվում, քանի որ իրավաբանական արտահայտությունները հեղինակի կողմից գեղագիտական պատշաճությամբ վերագրվում են արքա Սմբատ Բագրատունու, կաթողիկոս Հուսիկ Աղավնունու, սպարապետ Վահրամ Պահլավունու, Մագիստրոս՝ Փիլիսոփոս՝ Բջնեցի՝ Գրիգոր Պահլավունու խոսքերին, որով տիպականացվում է քննաբանվող բառույթի ոճական բարձր արժեքը: Օրինակ, ահա քրիստոնեական հավատի արժևորմանը պատշաճող՝ կաթողիկոս Հուսիկ Աղավնունու բարձր ոճը՝ ուղղված Սմբատ Զարեհավանցուն: *Խիղճ* համագործածական բառույթի հարևանությամբ իսկույն ընդգծվում է բարձր ոճի վերամբարձությունը (երբեմն բացասական իմաստով)՝ *չարընդդեմ խիղճ* (180), քննեցանք *խղճի* մտոք (269), խղճի ստերջ (210). (երբեմն զգացվում է արհեստականությունը՝ *Խիղճդ զարթեցավ* (262)): Ահա բնագրային մի շարք ծավալուն օրինակներ Հուսիկ Աղավնունու խոսքերից:

Մարդուկներն աստ են մարդանում լույսով աստծու օծյալ,
Առանց մեղքերի խոստովանության՝ ի՞նչ հավատացյալ:
Հիսուսի *խիղճն* է խնկաբուրվառում մեջն այս վանքերի (141):
Ոգեծեսերը բոլոր խնկաբույր
Խղճի մերան են ձգում ոգյաց մեջ,
Խիղճը՝ իբրև անտես աստծո համբույր,
Մանուշակում են փշոտ սիրտը, ո՛վ խեղճ (280) նայլն:

Առանց գրաբարատիպ բառերի պաճուճանքների՝ բարձր ոճ է նաև սպարապետ Վահրամ Պահլավունու խոսքը, ուր *խիղճ* բառույթն իր աշխատանքի ոճի՝ զինվորական նետ-ին է կցել, ռազմականն ընդգծելով և այլաբերական իմաստով դիպուկ, հակիրճ բնութագրություն տվել՝ *խղճի* նետը խայթել (296)՝ *խիղճը տանջել* (շրջասույթ):

Խիղճ գործուն բարոյագիտական բառույթը հարյուրտասից ավելի օրինակների սահմաններում Հովհ. Ծիրազի կողմից կիրառված է հիմնականում սովորական ոճում: Հատկապես իմաստուն խոսքի արժեք ստացած խոսակցական կառույցները բավականին կշիռ ունեն՝ խղճի ձի (142)՝ միտք՝ Բայց ինձ երկինք չի տանում *խղճիս ձին* (թոնդրակյան Կյուրեղի խոսք), միշտ *խղճի միջով ճամփորդել՝* խիղճ ծնել (142), *մայրական խիղճ* (146)՝ բնազդ, *խղճի գերի* (243), *խիղճը գողանալ* (244), *խղճի կշեռք* (287) ևն: Ժողովրդական մտածողությամբ իբր Սմբատ Զարեհավանցու ստեղծածը ոչ միայն կործանվեց, այլ նաև՝ *համայնքներդ խիղճը կերան* (314): Ընդհանրապես, սովորական, ժողովրդական պարզ ոճին միշտ ձգտել է Հովհ. Ծիրազը: Այս պոեմում էլ արքայի խոսքով իմաստասեր Փիլիսոփոսից՝ Բջնեցուց է պարզ ոճ պահանջում հեղինակը, որովհետև բանադրանքը հասարակ աշխատավորների հետ է ընթանում, ղեկավարը՝ Սմբատ Զարեհավանցին, միջակ կրթական մակարդակ ուներ, իշխան, եկեղեցական անձիք նրանց մեջ սակավ էին:

Հակաթոնդրակյան պայքարն արքայի խոսքում անգամ արդարացվում է *հայոց ու մեր խիղճ* կառույցներով (ազգայինը հակադրվում է համազգայինին)՝ Թե մենք հենվենք հայոց *խղճին*, Թե մեր *խղճի* ձայնով խոսենք, Ազգի վիշտը թե չկիսենք, Կպղծեն վանքն էլ մեր ոգու (271): Այսինքն՝ համայնավարությունը, որը համաշխարհային նպատակ ուներ իբր, ի շահ ուժեղ ազգի է, թույլը կտուժի (Հովհ. Ծիրազը, քանի որ ապրում էր համայնավարական խորհրդային կարգերում, հեշտ է հասկացել այդ սխալը, օտար ուժեղների կողմից հասարակ ժողովրդին կառավարականի՝ իշխողականի՝ հարուստների դեմ հանելը, և դա վերարտադրել է հազար տարի առաջվա արքայի խոսքով ու ցույց տվել դատավարության ժամանակ Սմբատ Զարեհավանցու համոզվելը իր կատարած սխալի նկատմամբ. հայրենիքին հասցրած վնասն այնքան ճնշող է, որ ցանկացած հայրենասեր գիտակից մարդ ցավով է ընդունում դա):

Խիղճ գոյականից բառակազմական երկրորդական ածականակերտ *ան-* նախածանցով կերտվել է *անխիղճ* բառույթը՝ երկու անգամ կիրառված (150, 256) և բայակերտ *–ալ* վերջածանցով բայ՝ *խղճալ* (45, 114)՝ չորս անգամ կիրառված, իսկ բարդությունը երկուսն է (խղճամեռ, 228, խղճուրաց/ներ, 212):

Խիղճ բաղադրիչով բավականին շրջասույթներ ու դարձվածներ կան (համարյա հարյուրտասից ավելի կիառությունների մեկ երրորդը), որոնք հիմնականում գոյական, բայ և ածական են (խղճի

աչք/եր դարձված-շրջասույթը կիրառվել է հինգ անգամ՝ 144, 152, 159, 176, 219): Ահա այդ շարքը՝ ***գոյական***. *խիղճն արքայի*, շրջ.՝ հանուն հայրենիքի՝ արքայի կշռադատողություն (274), *խղճի ածու*, շրջ.՝ մարդ (286), *խղճի աչք/եր*, շրջ.՝ խղճմտանք, ինքնաքննադատություն (144, 152, 159, 176՝ լավ նայես խղճիդ աչքերին, 219), *խղճի ձեռքից*, դարձ.՝ խղճմտանք/ից (225), *խղճի խորան*, շրջ.՝ շատ խիղճ ունեցող (88), *խղճի ձի*, շրջ.՝ միտք (142), *խղճի ձոր*, դարձ.՝ խղճմտանք (150), *խղճի մեղք*, շրջ.՝ անխղճություն (275), *խղճի մերան*, շրջ., դարձ.՝ խիղճ գործադրելում օրինակ հանդիսացող ու տարածող (280), ***բայ՝*** *խիղճը բախել*, դարձ.՝ բանակցել (90՝ գնա հայ հողն ափշոփողի խիղճը բախե), *խիղճը գողանալ*, դարձ.՝ կաշառել (244), *խիղճը խոսել*, շրջ.՝ մարդանալ (222, 278), *խիղճը մտքի հետ կամրջել*, շրջ.՝ խղճմտանքով գործել (243), *խիղճը սրտի մեջ կրել*, շրջ.՝ խղճով լինել (152), *խիղճը վանել*, շրջ.՝ անխղճանալ (58), *խիղճը փորձել*, շրջ.՝ ստուգել (309), *խիղճն ուտել*, շրջ.՝ անխղճանալ (314, խիղճը կերան), *խղճին պատանք կարել*, շրջ., դարձ.՝ անխղճանալ (306), ***ածական՝*** *խղճի կշեռք*, շրջ.՝ աչառու (287), *խղճին հլու*, շրջ.՝ խղճմտանքով (213), *խղճի ստերջ*, շրջ.՝ անխիղճ (210), *խղճի գերի*, շրջ.՝ խղճմտանքով (243) ևն:

Դարձվածները հիմնականում ժողովրդական ծագում ունեն, իսկ շրջասույթները՝ հեղինակային, որոնք, ցավոք, դեռ ամբողջական տարբերակում ու լայն ճանաչում չունեն հայ լեզվաբանությունում: Հովհ. Շիրազի Քնար Հայաստանի եռահատորից դարձվածների օրինակներ կան հայագիտական բառարանում, բայց շիրազյան գործերի հետագա հրատարակություններից չկա (այդ բնագավառում խոր աշխատանք կատարած հարգարժան Պետրոս Բեդիրյանը սակավ է օրինակներ տվել, որովհետև վերջին հրատարակությունները չի օգտագործել. շատ դարձվածներ Քնար Հայաստանի եռահատորից գիտականորեն խոր քննարկել է Վ. Ալեքսանյանը, ցավոք, որն անտիպ է): Մեծանուն ստեղծագործող Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում գործածված դարձվածներն ու շրջասույթները, որոնք պարունակում են խիղճ բառույթը, թեև առավել շատ բարձրաստիճան պաշտոնավորների (արքա, կաթողիկոս) խոսքում են կիրառված, բայց հիմնականում, բնական, ժողովրդական բնույթ ունեն:

3. *Խիղճ* և նրանից կերտված բառույթների ձևաբանական կիրառությունները:

ԳՈՅԱԿԱՆ-*Խիղճ* արմատական բառույթը գոյական է, որն այդպես էլ հիմնականում կիրառված է Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում (հարյուրի հասնող): *Խիղճ* գոյականից բառակազմական երկրորդական ածականակերտ ան- նախածանցով կերտված է *անխիղճ* բառույթը՝ երկու անգամ կիրառված (150, 256), բայակերտ –ալ վերջածանցով՝ բայ՝ խղճալ (45, 114՝ երեք դիմավոր, մեկ անդեմ ձևով կիրառված): Երկու բարդույթներն ածականներ են գոյականաբար կիրառված (ո՛վ խղճամեռ, 228 և ո՛վ խղճուրացներ, 212):

Խիղճ գոյականն առավել շատ գործածվում է եզակի թվի ուղղական, սեռական, տրական, հայցական հոլովներով, մյուս ձևերը սակավ են (ներգոյական հոլովի և հոգնակի թվի կիրառություններ չկան): Ահա հոլովաձևերի մի քանի օրինակներ:

Ուղղ. - …քանզի խիղճդ է խոսում (222), Ուր որ խիղճն է քուն (287), Աստված խիղճ է մարդու հոգում (298), խիղճը խոցվեց (313):

Սեռ. - Խղճի խորան (88), …խղճիս ձին (142), Աստված…տաճարի մեջ է մեր խղճի (298):

Տր. – …քո խղճին վայել (111), …հենվենք հայոց խղճին (271), …իմ խղճին հլու (213):

Հայց. –Պիտի գողանամ ես խիղճը նրա (244), …այս դաշույնները խիղճս մեռցրին (274):

Բաց. - …թոնդրակուհին խղճից է գործում (256):

Գործ.- Որ դարձի գա՝ խղճով մաքուր (63), …խղճով բանան Այս մթին կիրճը բանադրության (122), (արքան) Խորհում էր խղճով ապաշավանքի (գոջանք, բնագրում ապշավանք է գրված. 218):

Ներգոյ. - -

Խիղճ գոյականը խնդրո առարկա գրքում մեծ մասամբ բառահարաբերական երկրորդական ձևույթների (վերջավորությունների) հետ է կիրառվել (ներառյալ՝ զրո), իսկ քերականական ստորադասական հարաբերություն ցույց տվող խոսքի մասերի՝ կապերի և բառահարաբերական երկրորդական ձևույթների համատեղությամբ՝ սակավ: Օրինակ՝ ընդդիմության ու հակառակության կապի հետ՝ Երբ *խղճիդ ընդդեմ* ճիշտը կխոսի (84), տարածականի՝ Միշտ *խղճի միջով* ցմահ ճամփորդե (142), հանգման՝ Արքայի *խղճի վրա* եք հենվում (180), վերաբերության՝ Ի՞նչ հայեր…վայեր են խղճիդ հանդիման (222), միասնության՝ Երբ մի մատուռն էլ կամրջում է միշտ Մարդուն *խղճի հետ* (139), Աստված տիեզերքն է մեր *խղճի հետ* (298):

ԱԾԱԿԱՆ- *Խիղճ* գոյականից ԱՆ- ժխտական նախածանցով կերտված *անխիղճ* ածականը վերագրվում է Սմբատ Զարեհավանցուն՝ (150), մի տող հետո կրկնաբերվելով *խիղճ* արմատը՝ *խղճի ձորեր դարձվածով* խտացնելով այդ բառույթի իմաստային արժույթը և Հրանուշի խոսքում՝ ուղղված Կունձիկին՝ իրեն թոնդրակցիների շարքը հրապուրելիս, քրիստոնեական բարոյական գծերից հեռացնելիս (256):

Ածական երկու բարդություններ գոյականաբար կիրառված եզակի ու հոգնակի ձևերով կոչականներ են արքայի ու վեհի խոսքում բացասական իմաստով՝ ուղղված թոնդրակեցիներին և արտահայտելով հոգու ցասումը (ո՛վ խղճամեռ, 228 և ո՛վ խղճուրացներ, 212):

ԲԱՅ- Բառակազմական *–ալ* վերջածանցով բայ է կերտվել *խիղճ* գոյականից՝ *խղճալ* (45՝ խղճ-ա (կրկնված), 114՝ խղճ/ա-ց, խղճ/ալ-ով մանկանց): *Խիղճ* գոյականից սերված ընթացական վիճակը կարծես առավել հնչեղ է արտահայտում բարոյական նորմը: Անորոշ դերբայի արմատական հիմքից կամ առաջին՝ անկատարի հիմքից կիրառված են ըղձական ապառնի բայական երկու թեքված ձևերը՝ *խղճ-ա* պարզ կառույցը, երկրորդ նշույթավոր ցոյական հիմքից՝ սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակաձևի եզակի թվի երրորդ դեմքի պարզ ձևը՝ *խղճ/ա-ց*, իսկ երրորդ հիմքից՝ գործիական հոլովաձև՝ *խղճ/ալ-ով*: Առաջին հիմքով՝ խղճ-ա, աղաչական ձևով ըղձական ապառնի բայաձևերն են իրար մոտ տարբեր նախադասություններում՝ արքայից աղերսելով թոնդրակյան շարժման ղեկավարների ազատությունը, երրորդ դիմավոր ու չորրորդ անդեմ կառույցները՝ ցոյական և երրորդ հիմքերով, բնութագրում են Վահրամ Պահլավունու ու կաթողիկոս Հուսիկ Աղավնունու խղճահարական վերաբերմունքները Սմբատ Զարեհավանցուց ծնված տարբեր գույնի աչքերով (երեք տարբեր մայրերի) մանկանց նկատմամբ:

-Արքա՛, *խղճա՛* Զարեհավանցուն, Նա չար մտքով չառաջնորդեց…-Ազնիվ արքա՛, *խղճա՛* մեզ էլ…(45): Բայց Պահլավունին, թվաց, թե *խղճաց*…Հառաչեց վեհը՝ *խղճալով* մանկանց (114):

4. *Խիղճ* և նրանից կերտված բառույթների շարահյուսական արժեքները-Մեծատաղանդ մտածող Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում *խիղճ* բառույթի և նրանից սերվածները այլնի հետ իմաստաբանական բազմազանություններով շարահյուսական սահմանափակ հարաբերություններում են խմբվում՝ պահպանելով կեցության համար բարոյագիտական կարևոր սահմանները: *Խիղճ* և նրանից կերտված սակավ բառույթների շարահյուսական մակարդակում կապակցվում են ստորոգումային, գերադաս ու ստորադաս անդամների դերում, ուր իշխում են ենթակա-ստորոգումային, հատկացական և խնդրային կիրառությունները (կոչականը սահմանափակ է): Դա բխում է մեր լեզվի ու շիրազյան մտածողության օրինաչափությունից, *խիղճ* բառի նկատմամբ մարդկային դարավոր աստվածավախ վերաբերմունքից:

Խիղճ և նրանից սերված բառույթների ենթակա-ստորոգյալ հարաբերությունները պոեմում, ինչպես նշել ենք, իշխող ու ծավալուն են: Այն պարզ նախադասության՝ ասույթի (Գ. Զահուկյան), կարևորագույն գերադաս անդամ կենտրոն է դառնում: Ահա դրանք՝ ենթակա (շատ է). Տե՛ր իմ, խի՛ղճդ է իմ մեղքի վկան (52. Սմբատ Զարեհավանցին՝ արքային), Մահ է ձեր խիղճն էլ (Տեր Աղավնունին՝ թոնդրակեցիներին. 55), Թե մաքրովի խիղճդ է սև ամպ (99), Ո՞ւր է հայ խիղճը (106), Երբ խիղճը չկա (170), Խիղճ կա (176), խիղճն է տանջում (179):

Բաղադրյալ՝ անվանաբայական ստորոգյալի վերադիր՝ Մեր հույսն արքայի խիղճն է յոթնասիրտ (78), Թե աստված խիղճ է (149), Թե աստված խիղճ է՝ Ճորտ ու տերն ի՞նչ է (181. Կունծիկ աբեղա), մայրական կուրծք է խիղճդ ինձ թվում (243՝ վեհը՝ արք-ն), Արքայի խիղճն էր ձեր սպեղանին (274), հավատքը խիղճն է (283): Պարզ ստորոգյալ՝ խղճա (45), խղճաց…(114):

Ստորադասական հարաբերություն՝ գերադասը կամ ստորադասը *խիղճ* բաղադրիչն է (շատ է)՝ արքայի խիղճն է յոթնասիրտ (78), խաթարված խիղճը (99), մոր խիղճն է (168), խոսեց խիղճս մունջ (250. Հրանուշ), այս դաշույնները խիղճս մեռցրին (274), ձեր խղճի նետը (296) ևն:

Խիղճ բառույթի ստորադասական հարաբերությունները տարաբնույթ են: Հաճախակին հատկացականն է: Որոշչային հարաբերություն չկա, իսկ բացահայտչայինը՝ սակավ:

Հատկացական-Շարահյուսական այս հարաբերությունը գործածության հաճախականությամբ իշխողն է (հասնում է երկու տասնյակի): Խիղճը գործում է կարծես աստվածային զորությամբ: Նրան վերագրվողը, նրա հատկացական հատկանիշները բազմազան են: Հատկացական հարաբերությունը նույնիսկ հաճախակի նորից գերադաս կամ ստորադաս հատկացուցիչ է ընդունում՝ զորացնելով հատկացման, ծագման, սերման, վերաբերության, պատկանելության նրբերանգային կենսունակ հաճախականությունը: Օրինակ՝ ահա Աստծո *խղճի մագնիս* (141) արտահայտությունը, որը *ծեսեր* իմաստով շրջասություն է, բայց մի կատարյալ ամենակարող՝ վերագրված հավատին:

Բացահայտչային (սակավ է, միայն աստծուն է բացահայտում)՝ Աստված՝ *խիղճը*, կա՛ (176), Մի աստվածայնի պիտի հավատաս՝ *Մի խղճի ծայնի*, որ գեթ մարդանաս (326):

Խնդրային (բազմազան են, իշխողն ուղիղ խնդիրն է)՝ *սեռի՝* ուղիղ խնդիր՝ խիղճ են ծնում (142), Ո՞վ դրդեց խիղճդ (176), Կառափնարանո՞ւմ իմ խիղճը փնտրեմ…(222), խիղճ չունի՞ն (292), *կողմնակի ուղիղ* խնդիր՝-Ի ցիվ կարենանք մեղեդիներով սոցա մշուշել, Զարթնեցնելով քնած *խիղճն* այնպես, որ իրավ զղջան (138):

Անուղղակի՝ բնության խնդիր, 1. *հանգում՝* Երբ մի մատուռն էլ կամրջում է միշտ Մարդուն խղճի հետ (139), Այս է աղանդս՝ իմ խղճին հլու (գեղչված է օժանդակ բայը՝ հլու է. 213), վայեր են խղճիդ հանդիման (222), մնաս խղճիդ գերին (243):

Խիղճ և նրանից սերված *խղճալ* բառույթները գործողության հետ հանգամանքային լրացական հարաբերություն սակավ ունեն: *Հիմունքի պարագա՝* թոնդրակուհին խղճից է գործում (256), *ձևի* պարագա՝ *Հառաչեց վեհը՝խղճալով* մանկանց (114):

Համադասական հարաբերությամբ *խիղճ* բառույթի կապակացությունը (այլի հետ) հազվագյուտ է. պարզ նախադասություն (համազոր անդամ՝ ուղիղ խնդիր)՝ Որ ո՛չ *աստված ունեք, ո՛չ խիղճ* (51), ենթակա (ստորոգյալը գեղչված է)՝ Որտեղ *խիղճ ու սեր՝* այնտեղ *աստված* կա (287), բարդ նախադասություն, *վերադիր* (օժանդակ բայը գեղչված է)՝ Կամարան… ի՞նչ կին, ի՞նչ իշխանուհի, Համակ *խիղճ ու գութ,* թող աստված պահի (211. ՍՋ), Աստված մոր խիղճն է, բնագդն է գութի (168):

Խիղճ և նրանից սերվածները՝ կոչական (Արտաշես Պապոյանը և Խաչիկ Բադիկյանը կոչականը նախադասության անդամ են համարում՝ հետևելով Մ. Աբեղյանին (8, 183-194))՝ Որ հողն էլ խլեք, ո՛վ խղճուրացներ (212), ո՛վ խղճամեռ (228. Արքան՝ թոնդրակցիներին), որտե՞ղ ես, ո՛վ խիղճ, ո՛վ դու ամեն ինչ (290), Այս ինչե՞ր կասես… անխի՛ղճ (256):

5. *Խիղճ* և նրանից սերված բառույթների արտահայտչական-պատկերային արժույթները: Հովի. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում *խիղճ* բառույթը և նրանից սերվածների արտահայտչական-պատկերային արժույթները զուտ գեղագիտական ճոխ ձևերով քիչ են ոճաբանական համակարգ կազմում: Իշխող են այլաբերության, մակդիրային և չափազանցության չափավոր կառույցների հարևանությամբ կիրառվածները: *Խիղճ* բառույթը և նրանից սերվածները նաև համադրվելով այլաբերական որոշ բառերի, վեր են ածվում շրջասույթի կամ դարձվածի, որն ունի ծավալուն կիրառություն (դրա մասին խոսվել է): *Մակդիրի* դերով ոչ թե *խիղճ* բառն է հանդես գալիս, այլ նրա լրացումը ու, քանի որ սերտ են բովանդակությամբ և իմաստային ընկալմաբ, ուստի գերադաս *խիղճը* մերվում է պատկերային նպատակին ու հնչեղ է լինում: Քանի որ կառույցները գեղագիտական չափածոյում են, ուստի մակդիրների նախադաս ու հետադաս շարակարգվածությունը *խիղճ* գերադասի նկատմամբ, ըստ տաղաչափական պահանջի կիրառության, համարյա հավասար է: *Խղճի* նկատմամբ գերադաս կամ ստորադաս մակդիրները տարբեր խոսքի մասերով են (իշխողն ածականն է)՝ ուղղակի ու փոխաբերական իմաստներով կիրառված, որոնք խորացնում են *խիղճ* գոյականի իմաստաբանական կարևորությունը մարդկային կյանքում: Հատկապես առանձնանում է *հայ խիղճը* (106) կառույցը, որով արքայի կողմից շեշտվում է անմիաբանության ցավը Գրիգոր Պահլավունու՝ Մագիստրոսի և Սմբատ Զարեհավանցու միջև (դա մեծ բանաստեղծի և հանուր հայության տառապանքն է նաև):

Շրջասույթների, դարձվածների *այլաբերություններում խիղճը,* երբեմն պահպանելով ուղղակի իմաստը, հարստացվում է պատկերային այլ կառույցներով, որոնք օժանդակում են մասնակի անձնավորման: Օրինակ՝ ահա *խղճի աչք* (159) դարձված-շրջասույթը, որը, գործածվելով վեհի խոսքում, ձեռք է բերում *ուշադրություն* իմաստը: Գեղագիտական սաստկացում է հաղորդվում կարևորվող մտքին, այն է՝ թոնդրակեցիներին մեղադրում են ի շահ հայրենիքի չանհանգստանալու համար:

Չափազանցություն- Խիղճ բառույթի, բարոյագիտական հասկացության վեհ իմաստների վերաբերյալ կուտակվում են ահագնանալու, շատանալու ցանկություններ, լավին տեղ տալու, ուսուցանելու երազանքներ, ուստի արբշիռ են մտային գեղումները, եղածների նկատմամբ սրտաբացության վերաբերմունքը: Օրինակ՝ Մարդասպանի մեջ *խիղճ* են ծնում…, Միշտ *խղճի* միջով ցմահ ճամփորդե…, ինձ երկինք չի տանե *խղճիս ձին* (142), Համայնքներդ *խիղճը* կերան (314, ժողովուրդն իբր ասում է Սմբատ Զարեհավանցուն):

Հակադրություն (սակավ)՝ *խիղճ* բառին հակադիր հասկացությունների համադրությամբ, արտահայտիչ է դառնում համամարդկային այդ երազանքը: Օրինակ, ահա արքայի խոսքում՝ ուղղված Սմբատ Զարեհավանցուն, կիրառվում է *խղճին* իրոնիայով հավասարեցվող զրո հասկացությունը՝ անխելքությունը՝ չեղյալ խելք, ներքուստ հակադրվող իմաստով. գեղագիտական կառույցը պարադոքսալ է դառնում՝ Ինչպե՞ս է *խիղճդ* կամ չեղյալ խելքդ անմիտ բարբառում (143):

Աստիճանավորում (սակավ և ոչ ծավալուն)՝ հոմանիշ հասկացությունների համադրությամբ ու *խիղճ* բառի մեկ անգամվա գործածությամբ, որոնք ծավալվելով առավել ազդեցիկ են դարձնում վեհը, գեղեցիկը կամ թվարկում և մոտավոր հավասարություն ստեղծում, ուր զգացվում է *խիղճ* բառի թեկուզ աննշան առավելությունը. Աստված մոր *խիղճն* է, բնագդն է գութի (168):

Կրկնաբերությունները քիչ են (հնչյունականի սահմաններում. Խ-ղ, ճ-չ՝ դ ստացականով)՝ Ինչպե՞ս է խիղճդ կամ չեղյալ խելքդ անմիտ բարբառում (143): Հանգի համար՝ Մայր տաճարներն են զարթնեցնողը մեր քնած խղճի, Նոքա մեր ոգյաց մարմնաձևերն են,- ինչպե՞ս թե՝ պետք չի (139): *Խղճալ* բայի կրկնություն դիմավոր և անդեմ բայաձևերով՝ Պահլավունին, թվաց, թե *խղճաց*…Հառաչեց վեհը՝ *խղճալով* մանկանց (114), բայի դիմավոր բառաձևն է մի անգամ կրկնվում՝ -Արքա՛-, խղճա՛- Զարեհավանցուն, -Ազնի՛վ արքա-, խղճա՛- մեզ էլ…(45): *Խիղճ* գոյականի կրկնությունը միևնույն տողում, լիասույթում (Գ. Զահուկյան) երկու անգամ է (բարդ ստորադասական նախադասության՝ լիասույթի գերադաս ու ստորադաս ասույթներում է կիրառված, ուր հնչեղանում է *խիղճ* բառույթի բովանդակ էությունը, հատկապես աստվածային ընդհանուրի ու անհատական գոյի հակադրությունում. համադասականի միավորականում ևս մտքին խտացվածություն է հաղորդվում)՝ Աստված՝ *խիղճը*՝ կա՛, թե որ լավ նայես *խղճիդ* աչքերին (176), …իմ *խիղճը* խոսեց, *Խիղճն* էլ խելք ունի (220. Արքան՝ կաթողիկոսին):

Հնչերանգ-Բնական է, Հովհ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմում կիրառված, *խղճի* հետ կապվող, հուզարտահայտչական հարստությունները բխում են հայ ժողովրդի հոգում կուտակված դարավոր ցավից, որոնք շիրազյան գեղագիտական մտահղացմամբ հնչերանգում նույն շղարշն են կրում՝ հավելվելով արքայական, եկեղեցական, ուժի (բանակ), քաղաքականության, գիտության, իրավաբանական իրավունքների պահանջկոտությամբ, սպառնալիքով, գթության հայցման և այլնի հնչերանգներով: Թեև կետադրական նշաններով երեքի մեջ են պարփակվում, բայց նրբերանգները բազմազան են: Իշխում է շեշտ-դիմումը: *Հարցում* պարունակող հնչերանգ՝ … և խի՞ղճդ է իմ մեղքի վկան (ՍՋ-ին՝ արքային, 52), *շեշտ*՝ հոգեկան ապրումներով շաղախված՝ *խրախուսանք*՝ կեցցե՛ս, որ այսպես *խիղճդ* զարթեցավ (262. Աղավնունի վեհը՝ դարձի եկած Հրանուշին), *ցավ*-դիմում՝ Այս ինչե՞ր կասես… անխի՛ղճ (256՝ Հրանուշը Կունծիկին), Որտե՞ղ ես, ո՛վ խիղճ, Ո՛վ դու ամեն ինչ, Մարդկային ծովում՝ մարգարիտ կորած (290):

Օգտագործված գրականություն

1. Աղայան Է. , Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976 թ., 1616 էջ:
2. Ավետիքեան Գ., Սիւրմէլեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի (1836, ի Վենետիկ, վերահրատարակված), Ե., 1979 թ., 1142 էջ:
3. Աճառյան Հր. , Հայերեն արմատական բառարան, հ. II, Ե., 1973 թ. (վերահր.), 688 էջ:
4. Բարոյագիտական բառարան, Ե., 1983 թ., 456 էջ (թարգմանված ռուս. V հր.):
5. Դավթյան Վ., Երկեր, հ. երկրորդ, Ե., 1985 թ., 422 էջ (Թոնդրակեցիներ՝ 89-188):
6. Եզեկյան Լ. , Ոճագիտություն (հայոց լեզվի, ուսմնկն ձեռնարկ), ԵՊՀ հրտրկչ., Ե., 2003 թ., 376 էջ:
7. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. II, Ե., 1972 թ., 720 էջ:
8. Պապոյան Ա., Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ հրտրկչ., Ե., 2003, 462 էջ:
9. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Ե., 1987 թ., 748 էջ:

ԲՆԱԳԻՐ

Հովհաննես Շիրազ, Թոնդրակեցիները, Ե., 2014, 328 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Սիլվա Մինասյան-բ.գ.թ., դոցենտ, ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն, 097- 26-75-37, E-mail: silvaminasyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 398 (282) Լեզվաբանություն

ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԲԱՌԸ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԷՋԵՐՈՒՄ

(Նվիրվում է «Ազգագրական հանդեսի» հիմնադրման 120-ամյակին)

Արմեն ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր- *ազգագրություն, բանահյուսություն, բարբառ, հանդես, ժողովածու, ուսումնասիրություն, հոդված, տառադարձություն, խմբագիր, հեղինակ*

Ключевые слова: *этнография, фольклор, диалект, журнал, коллекция, исследование, статья, транскрипция, редактор, автор.*

Keywords: *ethnography, folklore, dialect, journal, collection, research, article, transcription, editor, author.*

А. Саркисян

ЭТНОГРАФИЯ, ФОЛЬКЛОР И ДИАЛЕКТ АРЦАХА НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «АЗГАГРАКАН АНДЕС»

В данной статье рассматриваются этнографические, фольклорные и диалектные материалы Арцаха, напечатанные в разных изданиях журнала «Азгагракан андес» Е. Лалаяном. Особое внимание обращено на этнографический сборник «Варанда» под редакцией Е.Лалаяна и фольклорный сборник «Из устной литературы Варанды» под редакцией А. Дадяна, в первой из которых дана общая этнографическая характеристика провинции Варанда, во второй - национальные песни, джангюлумы (частушки), из разных деревень Арцаха в период конца 19 и начала 20 веков, собранные А. Дадяном и Д. Дадяном.

A. Sargsyan

ARTSAKH ETHNOGRAPHY, FOLKLORE AND DIALECT IN THE PAGES OF «AZGAGRAKAN HANDES»

In this article the ethnographical, folklore, dialectal materials of Artsakh which are printed in different books of §Azgagrakan handes¦ established by E. Lalayan are analyzed. Special attention is paid to §Varanda¦ ethnographical collection edited by E.Lalayan and §From Varanda oral literature¦ folklore collection by A.Dadyan, the first one gives the total ethnographical description of Varanda province and the second one includes national songs called jangyulums, collected by A.Dadyan and D.Dadyan from different villages of Artsakh at the end of the 19th and the beginning of the 20th centuries are presented.

Հոդվածում քննության են առնվում Ե. Լալայանի հիմնադրած «Ազգագրական հանդեսի» տարբեր գրքերում տպագրված Արցախի ազգագրական, բանահյուսական, բարբառային նյութերը: Հատուկ ուշադրություն է դարձվում Ե. Լալայանի խմբագրությամբ հրատարակված «Վարանդա» ազգագրական և Ա. Դադյանի «Վարանդայի բանաւոր գրականութիւնից» բանահյուսական ժողովածուներին, որոնցից առաջինում տրված է Վարանդայի գավառի ազգագրական ամբողջական նկարագիրը, իսկ երկրորդում ընդգրկված են Ա. Դադյանի և Դ. Դադյանի կողմից 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Արցախի տարբեր գյուղերից գրառված ժողովրդական վիճակի երգերը՝ ջանգյուլումները:

Հայ ազգագրության պատմության մեջ աննախադեպ երևույթ էր 1896 թվականին նշանավոր ազգագրագետ Ե. Լալայանի՝ Շուշի քաղաքում հիմնադրած *«Ազգագրական հանդեսը»*, որով էլ *«հիմք դրվեց հետագա ժողովրդագիտական ուսումնասիրությունների համար»*[1]: Կարճ ժամանակում հանդեսի շուրջն են համախմբվում անվանի մտավորականներ Մ. Աբեղյանը, Լեոն, Ստ. Մալխասյանը, Հր. Աճառյանը, Թ. Թորամանյանը, Ե. Շահազիզը, Խ. Սամվելյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը, Վ. Փափազյանը, Գ. Լևոնյանը և շատ ուրիշներ, որոնք, նաև ակտիվ աշխատակցելով հանդեսին, տպագրում են ժողովրդագիտական մնայուն արժեքներ ներկայացնող իրենց ուսումնասիրություններն ու ժողովածուները: Լավ գիտակցելով իր նպատակի կարևորությունը, այն է՝ հրատարակել հայ ժողովրդին, նրա պատմությանը,

[1] Խեմչյան Է., ***Ժողովրդագիտական նյութերի հավաքման ու հրատարակման պատկերը Շուշի քաղաքում (XIX դարի 60-ական թվականներից մինչև XX դարի 60-ական թվականները)***, «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան. Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր», Երևան, 2007, էջ 343

տնտեսական դրությանը, մշակույթին վերաբերող նյութեր, եվրոպական բարձրագույն կրթություն ստացած և առաջավոր երկրների գիտությանը քաջատեղյակ Ե. Լալայանը իր ձեռնարկությունը համարում է ոչ թե անհատական, այլ ամբողջ առաջավոր դասակարգի գործ. *«Մենք չենք խոստանում հրաշքներ գործել, որովհետև այս ձեռնարկութիւնն անհատական գործ չէ և սոսկ մինի տաղանդից չէ կախուած. ազգի ուսումնասիրութիւնն ամբողջ առաջաւոր դասակարգի գործն է. երբ ժողովուրդը սիրով կը բանայ իւր սիրտն ազգագրի առաջ, երբ վերջինս կը լուսանկարէ նրան իւր բոլոր ճշտութեամբ, երբ կանխակալ և կուսակցական գաղափարները չեն պղտորիլ ո՛չ ժողովրդի և ո՛չ հետազօտողների միտքը, մեր հանդէսը կը դառնայ ժողովրդական կեանքի մի ճշմարիտ հայելի, մի շտեմարան...»*[1]: Պատահական չէ, որ հանդեսի առաջին համարը սկսվում է *«Համառօտ տեսութիւն հայ ազգագրութեան»* բաժնով, որտեղ խմբագիրը, ըստ արժանվույն գնահատելով հայ ժողովրդի հոգեկան ու մտավոր կյանքն արտահայտող ուսումնասիրությունների հեղինակ-մատենագիրների աշխատանքը, առանձնահատուկ տեղ է հատկացնում հայ ազգագրության առանձին գոհարների արժեքին, դրանց ուսումնասիրման և պահպանման անհրաժեշտությանը:

Հանդեսի խմբագրությունը շուտով տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ լույս են տեսնում երկրորդ և հաջորդ համարները: Ընդհանուր առմամբ 1896-2016 թթ. տպագրվում է հանդեսի 26 գիրք, որտեղ լավագույնս ներկայացվում են հայ և առանձին ազգագրական շրջանների ազգագրական, բանահյուսական, բարբառագիտական, հնագիտական և տարաբնույթ այլ ուսումնասիրություններ, ժողովածուներ, նյութեր:

«Ազգագրական հանդեսի» հիմնադրումը և նրա առաջին գրքի լույս ընծայումը Շուշիի Մահտեսի Հակոբյանի տպարանում առանձնակի կարևորություն ունեցավ Արցախի և մասնավորապես Շուշիի հոգևոր կյանքում, որը 19-րդ դարի վերջին իր նշանակությամբ համարվում էր Անդրկովկասի երրորդ քաղաքը[2], և որտեղ բուռն վերելք էին ապրում հասարակական կյանքը, մշակույթն ու կրթությունը: Պատահական չէ, որ հենց Շուշիում, իր շուրջը համախմբելով Արցախի մի խումբ մտավորականների, Ե. Լալայանը գավառի տարբեր բնակավայրերից կարճ ժամանակում հավաքում է ազգագրական հարուստ նյութ, որն էլ խմբագրելով, լրացնելով և ամբողջացնելով Վարանդային վերաբերող տարբեր լեզուներով հրատարակված և արխիվային ձեռագիր նյութերով ու պաշտոնական վիճակագրական տեղեկություններով կազմված մի շարք աղյուսակներով ու տախտակներով, *«Վարանդա»* ընդհանուր խորագրով հրատարակում է հանդեսի երկրորդ և երրորդ գրքերում[3]:

Բ գրքում տեղադրված ժողովածուի բաժինների մեծ մասի նյութերը հավաքել է Ե. Լալայանը: Որպես հեղինակներ են նշված նաև Լ. Աթաբեկյանը՝ *«Ստատիսքիկական տեղեկութիւններ (Շուշու ամբողջ գավառի մասին)»*, Ղ. Տեր-Ղազարյանը՝ *«Տնտեսական դրութիւն»*, Վ. Յ.-ն՝ *«Տղաբերք և կնունք»*, Բ. Ա.-ն՝ *«Ընտանեկան կեանք»*, Յ. Տեր-Հովհաննիսյանը՝ *«Հիվանդութիւն և բժշկութիւն»:*

Ժողովածուն սկսվում է *«Մի երկու խոսք Վարանդայի պատմական անցեալի մասին»* բաժնով[4], որտեղ տրվում է Վարանդա գավառի համառոտ պատմությունը, առանձին անդրադարձ է կատարվում Ամարաս վանքին:

«Վարանդայի տեղագրութիւնը»[5] բաժնում հեղինակը առանձին ենթաբաժիններով ներկայացնում է գավառի սահմանները, լեռները, դաշտերը, գետերը, լճերը, աղբյուրները, քարայրերը *(Հունոտի կարան, Շմանեք, Ավանա կարան, Որվան կարան, Ծծքարի կարան)*, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, հանքերը, Շուշի քաղաքը և նշանավոր գյուղերը

[1] «Ազգագրական հանդես», Շուշի, 1896, Ա գիրք, էջ 5
[2] **Нагорный Карабах (историческая справка)**, Ереван, 1988, с. 83
[3] Լալայան Ե., ***Վարանդա. Նյութեր ապագայ ուսումնասիրութեան համար***, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 5-244, ***Վարանդա, նշանաւոր տօներ***, «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1898, Գ գիրք, էջ 338-349
[4] Բ գիրք, էջ 5-8
[5] Նույնը: էջ 9-53

(Ավետարանոց, Շոշու գյուղ, Կյունի Ճարտար, Սարուշեն, Վարազաբուն, Նոր Թաղլար), նշանավոր վանքերը *(Ամարաս, Ս. Գրիգորիս, Կուսանաց անապատ, Ղևոնդյանց անապատ, Եղիշա կուսի անապատ, Բռի եղցե, Կարմիր եկեղեցի, Բողրխանի վանք, Մավասի վանք, Շոշկա վանք)*, նշանավոր բերդերը *(Աղջկաբերդ, Ղալին խութ, Բրդահոնջին դալա)*:

Շուշի քաղաքի և ամբողջ գավառի մասին վիճակագրական լուրջ տեղեկություններ են տրվում *«Ստատիսքիկական տեղեկութիւններ (Շուշու ամբողջ գավառի մասին)»*[1] բաժնում: Ուշագրավ են 1886 և 1895 թթ. բնակչության թիվը և խտությունը, բնակչությունն ըստ ազգությունների և դավանությունների, ըստ բնակության տեղի (քաղաքում և գավառում), ինչպես նաև բնակչության շարժը ամուսնությունները, ծնունդները, մահացությունը, հայ բնակչության աճը, ներկայացնող աղյուսակներն ու համապատասխան վերլուծությունները:

Ծավալուն և բովանդակալից է *«Տնտեսական դրութիւն»*[2] բաժինը, որտեղ հանգամանորեն ներկայացվում է Վարանդայի բնակչության տնտեսական զբաղմունքը՝ երկրագործությունը, այգեգործությունը, անասնապահությունը, շերամապահությունը, մեղվաբուծությունը, ձկնորսությունը, որսորդությունը, արհեստները, գործարանային արդյունաբերությունը, առևտուրը՝ անհրաժեշտ աղյուսակներով:

Հաջորդ՝ *«Լուսաւորութիւն»* բաժնում[3] Ե. Լալայանը անդրադառնում է դպրոցներին, գրադարաններին, պարբերական հրատարակություններին, թատրոնին, տպարաններին, ոճրագործությանը, փոստին՝ քննության արդյունքները ներկայացնելով տարբեր աղյուսակներով:

«Ընտանեկան բարք» խորագրի տակ առանձին բաժիններով՝ *«Ամուսնութիւն և հարսանեաց սովորութիւններ»*[4], *«Տղաբերք և կնունք»*[5], *«Ընտանեկան կեանք»*,[6] *«Հիվանդութիւն և բժշկութիւն»*[7] · *բժշկութիւն»*[7] · *«Մահ, թաղումն և մեռելոց»*[8], *«Հոգու և հանդերձեալ կեանքի մասին»*[9], հանգամանորեն լուսաբանված են ընտանեկան բարքերն ու ծեսերը: Ամուսնությունը և հարսենական սովորությունները քննելիս հեղինակը առանձին ենթավերնագրերի տակ անդրադառնում է այնպիսի ծեսերի ու երևույթների, ինչպիսիք են՝ *օրորոցի նշանադրությունը, շալակի նշանադրությունը, ծաղկազարդի նշանադրությունը (բարգյահ), օջախի պսակը, թոնրի պսակը, առևանգմամբ ամուսնությունը, գնմամբ ամուսնությունը, լեվիրան, ծախսը, աղջիկ ուզելը, նշանդրեքը, խոնչա տանելը, հղե կտրելը, տըշտըմաղը, քավորը, հանդերձօրհնեքը, սափրելու ծեսը, հարսնառ գնալը, փըթեթօրհնեքը, պսակ գնալը, հարսի օժիտը, հարս տանելը, մեծարքը, մկրկոչեքը*:

Ընտանեկան կյանքը նկարագրելիս վերլուծության են ենթարկվում նահապետական ընտանիքի բարքերը, տրվում են ազգակցության աստիճանները, անդրադարձ է կատարվում նաև բարոյականությանը. նշվում են նահապետական բարքերի ու բարոյական ըմբռնումների անկման պատճառները, որոնցից են պանդխտությունը, երկրի դիրքը, գործարանները, զորքը և այլն:

«Հիվանդութիւն և բժշկութիւն» բաժինը ներկայացնում է գավառում տարածված մի շարք հիվանդություններ՝ *ականջի վշշոց, աչքացավ, անքնություն, արյունահոսություն, այտուռուց, ատամնացավ, այրված մարմին, բարակացավ, բերանհարենք, գլխացավ, լուծ, խավարսն, խոլերա, խլություն, կատաղած շան կծած, կողքի ծակոց, կտրված մաշկ, կապույտ վերք, հազ, հարբուխ, միզակապություն, մատնաշունչ, մազոլ, մոլոքոր, ոսկրաբեկ, ոտների քրտինք, գնդակի*

[1] Նույնը: էջ 54-76
[2] Նույնը: էջ 77-101
[3] Նույնը: էջ 102-112
[4] Նույնը: էջ 113-144
[5] Նույնը: էջ 144-150
[6] Նույնը: էջ 151-172
[7] Նույնը: էջ 173-178
[8] Նույնը: էջ 178-184
[9] Նույնը: էջ 185-186

վերք, տաքություն, ցավ տված մկանուք, փայծաղի մեծանալը, փորացավ, փորկապություն, օձի թույն, և դրանց բուժման ժողովրդական միջոցներն ու հիվանդությունների տարածման հիմնական պատճառները:

Համառոտ տրվում են նաև մահվան և թաղման հետ կապված ծեսերը, հոգու և հանդերձյալ կյանքի մասին ժողովրդի պատկերացումները:

Աշխատության մեջ ամենաընդարձակը *«Հավատք»* բաժինն է, որտեղ Ե. Լալայանը առանձին ենթաբաժիններով քննության է առնում լեռների, քարերի, կրակի, ջրի, ծառերի, կենդանիների, լուսավորների պաշտամունքի ձևերը, անդրադառնում նաև քաջքերին և սատանաներին, կախարդությանն ու սնոտիապաշտություններին:

Աշխատության երկրորդ մասի[1] հեղինակը նույնպես Ե. Լալայանն է, ով ուսումնասիրության համար, ինչպես նշում է, բացի իր հավաքած նյութերից, օգտագործել է Ալլահվերդյանի, Վարդապետյանի, Հովհաննիսյանի և ուրիշների՝ տարբեր գյուղերից հավաքած նյութերը[2]: *«Նշանաւոր տօներ»* խորագիրը կրող այս բաժնում ամենայն մանրամասնությամբ քննության են առնված 19-րդ դարի վերջին Վարանդայում տարածված տոները՝ *Նոր տարի, Ծնունդ և ջրօրհնեք, Սուրբ Սարգիս, Բարեկենդան, Տյառնընդառաջ, Մեծ պաս, Ծաղկազարդ, Զարչարանաց շաբաթ, Զատիկ, Համբարձում, Լուսավորչի պաս, Վարդավառ, Նավասարդ*, դրանց հետ կապված զանազան ծեսերը, կերակրատեսակները, խաղատեսակները և այլ հանգամանքներ:

Կարևոր նշանակություն ունեն նաև աշխատության մեջ ընդգրկված լուսանկարները՝ *«Շուշի», «Շուշեցի հայ կինն ու իր թոռը», «Շուշեցի այան ու հարսը», «Շուշեցի կինը փողոցում», «Մոլլան ազան տալիս», «Զենքեր», «Շուշու ջրկիր», «Վարանդեցի հայ գեղջկուհի», «Վարանդեցի հայ կին»,* որոնք այդ ժամանակաշրջանի եզակի նմուշներից են:

19-րդ դարի երկրորդ կեսին դեռևս բանագիտությունը առանձնացված չէր որպես առանձին գիտություն: Թերևս դրանով պետք է բացատրել, որ ժամանակի մի շարք ուսումնասիրություններում և ժողովածուներում, այդ թվում *«Ազգագրական հանդեսում»* տպագրված բանահյուսական նյութերը ներկայացվում են ազգագրականի հետ միասին: Նման բազմաթիվ նյութեր են ընդգրկված նաև *«Վարանդա»* ժողովածուում[3], որտեղ հեղինակները տարբեր բաժիններում այս կամ այն երևույթը նկարագրելիս հաճախ են անդրադարձել դրանց հետ կապված ժողովրդական ստեղծագործություններին: Առատ են ասույթային բանահյուսության նմուշները, որոնք հիմնականում ընդգրկված են ընտանեկան բարքերի ու ծեսերի նկարագրություններում: Դրանց մեջ հաճախ են հանդիպում բարեմաղթություններ ու օրհնանքներ՝ *«Բարով դու էլ մին տղա բիրիս…», «Շէն կէնաս», «Հորով, մորով ու բախտաւոր զավակ լինի», «Աստոծ ձեզ պահի», «Քո շոքը ոչ պըկասի իմ գլխան… »,* անեծքներ: *«Քու հոր տոնը պրիշակ մնա», «Ծոխդ կտրե», «Պոչերդ կտորիմ», «Ծամերդ տըխտակին սանրիմ», «Ծծերավդ չանգալ ընկնիս», «Մին ծրկիս, հրզեր փրքիս», «Հանց օրի կյաս, օրին ծնընդկանը թրմաշա կյա»*, այլ բանաձևումներ: *«Չոր տառեխ», «Քավթառ գըլխակեր», «Աստված, էնքան մեր խեզանը պահիս, չրքօրանը ես մեռնիմ, հարսին նան տղի ումուդ չընգնիմ»* և այլն:

Հարսի և ընտանիքի մյուս անդամների փոխհարաբերություններն ու նրանցից յուրաքանչյուրի բարոյական նկարագիրն է բնութագրում *«Ընտանեկան կեանք»* բաժնում զետեղված չափածո ստեղծագործությունը[4], որտեղ հիվանդ հարսը աղերսական ձայնով դիմում է ընտանիքի անդամներին՝ մի գդալ ջուր խնդրելով, սակայն ոչ մեկը չի կատարում նրա խնդրանքը, մինչև ամուսինը գալիս և տալիս է ջուրը, որը խմելուն պես հիվանդը մեռնում է:

---

[1] Գ գիրք, էջ 338-349

[2] Նույնը, էջ 349

[3] *Մանրամասն տե՛ս* Վարդանյան Ս., ***Վարանդայի բանավոր մշակույթը Ե. Լալայանի և նրա թղթակից բանահավաքների գրառումներում***, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2015, N2, էջ 356-367

[4] Բ գիրք, էջ 156

Այս բաժնում են ընդգրկված մեկ այլ չափածո ստեղծագործություն, որը ունի քնարական բնույթ և ներկայացնում է սիրահար զույգի զուգերգը[1], և մի քանի աղոթքներ:

Վարանդայում ժամանակին լայնորեն տարածված էին ավանդությունները, որոնց մի մասը տեղ է գտել ժողովածուում, մասնավորապես *«Հավատք»*[2] խորագրի տակ ընդգրկված նյութերում, որտեղ ներկայացված են տարբեր լեռների, քարերի ու ժայռերի, կրակի, ջրի, ծառերի, թռչունների ու կենդանիների, երկնային լուսատուների ու տարբեր երևույթների, քաջքերի ու սատանաների, տարբեր սրբավայրերի մասին եղած տասնյակ ավանդություններ:

Հարկ է նշել, որ Ա. Նազինյանի խմբագրությամբ *«Վարանդա»* ժողովածուն՝ լեզվական, քերականական, ոճաբանական որոշ անհարթությունների, բացթողումների և վրիպակների ճշգրտմամբ ու լրացմամբ, հանդեսում տպագրված *«Գանձակի գավառ (նյութեր ապագայ ուսումնասիրության համար)»* ժողովածուի հետ *«Արցախ»* խորագրով վերահրատարակվել է 1988թ.՝ կազմելով Ե. Լալայանի երկերի հինգհատորյակի 2-րդ հատորը[3]:

«Ազգագրական հանդեսի» 17-րդ, 18-րդ և 19-րդ գրքերում լույս է տեսնում Ա. Դադյանի *«Վարանդայի բանաւոր գրականութիւնից»* ժողովածուն[4], որտեղ ընդգրկված են հեղինակի՝ 1903 թ. և նրա եղբոր՝ նշանավոր ժողովրդագետ Ա. Դադյանի՝ 1885-1889թթ. Վարանդայի, մասամբ նաև Դիզակի և Խաչենի գյուղերից գրառած ժողովրդական վիճակի երգեր՝ջանգյուլումներ:

Առաջաբանում՝ *«Երկու խոսք»*[5], տրվում են նյութերի գրառման հանգամանքները, որից պարզ է դառնում, որ հեղինակները, բացի վիճակի երգերից, գրառել են ալելույաներ, երգեր, ոտանավորներ, չնայած հանդեսի նշված գրքերում զետեղված են միայն վիճակի երգերը: Այստեղ Ա. Դադյանը ներկայացնում է նաև մի ուշագրավ բացահայտում. *«Երգերը, մանաւանդ սիրոյ երգերը, ասում են աղջիկները, որոնք օտար մարդկանց մօտ ամաչում են «յար» բառը գործածել, որի փոխարէն ախպէր բառն են գործ ածում: Եւ այն երգերը, որոնք հաւաքել ենք երկուսս էլ, և նրա գրի առածի մէջ ախպէր է գործածւած, իսկ իմ գրի առածի մէջ յար բառը, ես գերադասել եմ իմը, որովհետև նախ սիրոյ երգի միտքը չի համաձայնում ախպէր բառին, և ապա այն, որ պատահում էր ինձ հետ գրի առնելիս: Աղջիկները, որ իմ ազգականներն էին, նոյն իսկ իմ մօտն ամաչում էին «յար» ասել, և ախպէր էին ասում. երկար թախանձելուց, համոզելուց յետոյ միայն սիրտ էին անում «յար» բառը գործածել, որի պատճառով նոյն իսկ քառատողի ամբողջ շարայարութիւնը երբեմն փոխւում էր»*[6]: Ինչ խոսք, որ նման պարզաբանումը ճշմարտացի է և կարևոր հայ ժողովրդական, մասնավորապես վիճակի երգերի ուսումնասիրության համար:

Բուն ժողովածուն ընդգրկում է 229 ջանգյուլում, որոնցից մի քանիսի համար նշված են նաև տարբերակները՝ տարբերվող տողերի ներկայացմամբ: Դրանք գերազանցապես սիրո երգեր են, որոնք արտահայտում են երիտասարդ աղջիկների և տղաների սիրո զգացմունքը տարբեր նրբերանգներով: Մի շարք ջանգյուլումներ նվիրված են յարի գովքին, որ ասվում են աղջկա կամ տղայի կողմից: Գովվում են աղջկա *չինար բոյը, ալագյոզ աչքերը, քաղցր լեզուն, ծամերը, հագուստը*, տղայի *բոյն ու բուսաթը, ճարպկությունը, ֆիզիկական ուժը, չալ-չալ աչքերը, թուխ բեղերը, քյաքուլը* և այլն.

Ալ տըղա ջան, ալ տըղա,
Աշկերը չալ-չալ տըղա,
Էտ մուտանան պէր մըէր տօնը,
Ինձ գյըլըջաղ տար ծէր տօնը.[7]

Ախճի, ախճի համ օնիս,
Չուրուքսլուանէ ծամ օնիս,
Քա հոր, քա մոր աչքը լիւս կյա,
Վըէր ինձ կյոլի կամ օնիս.[8]

[1] Նույնը, էջ 171-172
[2] Նույնը, էջ 187-244
[3] Լալայան Ե., ***Երկեր 5 հատորով***, Երևան, 1988, հ.2
[4] Դադեան Ա., ***Վարանդայի բանաւոր գրականութիւնից***, «Ազգագրական հանդես», XVII գիրք, Թիֆլիս, 1908, N1, էջ 37-48, XVIII գիրք, Թիֆլիս, 1908, N2, էջ 25-32, XIX գիրք, Թիֆլիս, 1910, N1, էջ 85-89
[5] XVII գիրք, էջ 37-40
[6] Նույնը, էջ 38-39
[7] Նույնը, էջ 41
[8] Նույն տեղը

Որոշ խաղիկներում արտահայտվում է աղջկա բողոքը ժամանակի սովորությունների և բարքերի հանդեպ: Աղջիկներին սովորաբար ամուսնացնում էին փոքր հասակում արդեն տարիքն առած տղամարդու հետ՝ հաճախ հիմք ընդունելով վերջինիս հարստությունը: Ծնողների որոշումը օրենք էր աղջիկների համար, և նրանք լուռումունջ ենթարկվում էին նրանց՝ անիծելով իրենց բախտը.

Բախճա-բրհար ըմ կապալ. *Արէվրն ընգավ մրէր պատէն,*
Ադուս զրհոր ըմ կապալ. *Արքայութիւն իմ տատէն,*
Յէս էն տրդէն էօզիւմ չրմ. *Հօքյիւտ դադվէ այ տատէ,*
Օժավ յրրա հրն կապալ:[1] *Ինձ խրէ տրվէր ըռնտտէն:*[2]

Սակայն լինում են նաև դեպքեր, երբ նրանք ընդդիմանում են այդ որոշման դեմ՝ գերադասելով աղքատ, բայց սիրած տղային.

Հոսիբ ա հա, հոսիբ ա, *Տախտ ըմ կյիւտոլ, հավան ըմ,*
Տօն չօնէ, քյոսիբ ա, *Յէս իմ կրլխու դրվան ըմ,*
Կօզէ ասիքյ, կօզէ վուչ, *Ա հոր, ա մար խօսէլ մրէքյ,*
Էն տրդան ինձ նոսիբ ա[3]: *Յէս էն տրդէն հավան ըմ*[4]:

Հավաքածուի վիճակի երգերում սիրված մոտիվներից են նաև յարին տեսնելու, նրա կողքին լինելու, շուտափույթ ամուսնանալու, նրա կրծքին հանգչելու, հանուն նրա կյանքը զոհաբերելու և բազմաթիվ այլ ցանկությունների արտահայտությունները:

Բազմազան ձևերով արտահայտված սիրո հետ հաճախ ներկայացվում է գյուղական աշխատանքը, և դա բնական է, քանի որ խաղիկների հերոսուհիները հիմնականում գեղջկուհիներն են, իսկ նրանց սիրած տղաները գյուղական աշխատանքին, հատկապես երկրագործությանը նվիրված երիտասարդները:

Հուզիչ են պանդխտության երգերը: Դարեր շարունակ արցախցի երիտասարդները բռնել են պանդխտության ճանապարհը՝ ոգևորված օտար ափերում հարստանալու գաղափարով: Սակայն երկար չի տևում այդ ոգևորությունը, և վրա է հասնում հիասթափությունը.

Նանէ նանէ, նան չօնիմ, *Ծրրավալ ըմ, ճիւր չրկա,*
Մին քրթէօլ թրթօ թան չօնիմ, *Սրրէրանում ըմ, ախպիւր չրկա,*
Կրմրէռնիմ ջոհիլ ջրվան, *Կրմէռնիմ դորիբ էօլքյիւմ,*
Մին թային վոթոն չօնիմ[5]: *Քրշտէս մար ու քուր չրկա:*[6]

Այլ խաղիկներում հանդես է գալիս պանդուխտի սիրածը, ով մնացել է անտեր, շատացել են յարի թշնամիները, սակայն նա չի կորցնում հույսը և մերժելով բոլորին՝ կարոտով սպասում է յարի վերադառնալուն.

Քյրնի, կյալ չրմ, կարէլ չրմ, *Հոլոլ-մաշալ ըմ, տօն յէք,*
Ղահրած ըմ, կյալ չրմ, կարէլ չրմ, *Քյամրտ մաշալ ըմ, տօն յէք,*
Մին հրեռէ տրէդ մին յար օնիմ, *Պիւլլիւր լիւսնրնգյին նրման,*
Հրիւշիւ կյալ չրմ, կարել չրմ[7]: *Հոլոլ-մաշալ ըմ, տօն յէք*[8]:

Ժողովածուում կան նաև այլ բնույթի սահմանափակ ջանգյուլումներ, որոնցում ներկայացվում են հայրենի բնաշխարհը, աշխարհի անցողիկությունը, մարդկային վեհ և ստոր արարքները և այլն.

Տիզափաղ պէցիր սար ա, *Նալը քրցիմ քրթօցը,*
Սիւն ու կյէրանը քար ա, *Յէր կրնի զրրընգօցը,*

---

[1] Նույնը, էջ 43
[2] Նույն տեղը
[3] XVIII գիրք, էջ 28
[4] XIX գիրք, էջ 87
[5] Նույնը, էջ 86
[6] XVIII գիրք, 1908, էջ 25
[7] XIX գիրք, 1910, էջ 89
[8] XVIII գիրք, 1908, էջ 28

Յէս մրէռնիմ էն Տրզրփադա, *Յէս տրէսալ չրմ, թա նի մրննէ*
Չրրքուպիւլլիւրը տրլոկու տար ա[1]: *Մարթ ըխպրրկրնգանը ծօցը*:[2]

«Վարանդայի բանաւոր գրականութիւնից» հավաքածուն կարևոր նշանակություն ունի ոչ միայն Արցախի բանահյուսության, այլև Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության համար: Ժողովածուի առաջաբանում լուրջ դիտարկումներ կան բարբառի վերաբերյալ, որը Ա. Դաղյանը կոչում է ղարաբաղցերէն:[3] Տառադարձության համար հեղինակը հիմք է ընդունել Հր. Աճառյանի՝ Աճառյանի՝ Ղարաբաղի բարբառին նվիրված ուսումնասիրությունը[4], որը բարձր գնահատելով՝ *«բաւականին ճիշտ որոշել էր ղարաբաղցերէնին յատուկ հնչիւնները»*[5], նշում է նաև որոշ խոտորումներ. *«Ի դէպ, կարևոր եմ համարում յիշել այդ խոտորումներից մեկը, որ բաւականին դժուարութիւն է պատճառում գրելու ժամանակ: Այդ «ը» տառի հնչման երկու տարբեր աստիճան որոշելն է, կակուղ և կոշտ, որ ինքը պարոն Աճառեանն էլ նկատել է, բայց տարբեր նշաններ չի որոշել, որով և ընթերցանութիւնը, մանաւանդ օտարի համար, բաւականին դժուարանում է… Աչքի է զառնում մի աւելորդ երկբարբառի ընդունելը դարձեալ նոյն գրքում, «ուա», որը չկայ, այլ «վա» հնչիւնն է, որ շփոթեցրել է պ. Աճառեանին, նոյն օրինակները, որ այդ երկբարբառի համար բերել է պ. Աճառեանը, հնչւում է ոչ թէ թթուաշ, այլ թըթվաշ, ոչ թե չուան, այլ չրվան և այլն և այլն»*[6]: Ուշագրավ է դիտողությունն այն մասին, որ բարբառում սեռական հոլովում գոյականները *ըէ* վերջավորություն ստանում են որոշյալ առման դեպքում, իսկ անորոշի դեպքում՝ *«բուն սեռական»*, պետք է լինի ոչ թե *ըե,* ինչպես ներկայացրել է Աճառյանը, այլ *ու*[7]:

Հեղինակը կարևոր է համարում բարբառային տարադարձության պահպանումը. *«Այս նոր հնչիւնաբանութեամբ գրած նիւթերը պարզ է, որ կրկնակի արժէք են ստանում, քան ունէին: Ազգագրական նիւթերը, որ միաժամանակ եւ լեզուաբանական նիւթեր են, չեն կարողանում վերջինիս պահանջներին բաւարարութիւն տալ, երբ այն տառերը, որոնցով գրուած են, չեն արտաբերում այն բոլոր հնչիւները, որոնք որ կան իրապես լեզուի մէջ»*[8]: Այնուհետև ներկայացվում է այբուբենը[9], որը հեղինակը գործածել է հավաքածուի նյութերի արտագրության արտագրության ժամանակ: Ինչ խոսք, որ այդ ժամանակ դեռևս մշակված չէր բարբառային գիտական տառադարձությունը, և Ա. Դաղյանը Ղարաբաղի բարբառի՝ գրական հայերենից տարբերվող հնչյունները տալիս է հետևյալ կերպ. *ա* ձայնավորի քմայնացումը՝ շրջած ***ո*** տառով, *ու*-ի քմայնացումը՝ ***իւ***, *օ*-ի քմայնացումը՝ ***էօ***, *գ*, *կ*, *ք* բաղաձայնների քմայնացումը՝ համապատասխանաբար՝ ***գյ***, ***կյ***, ***քյ***, *ը* և *է* ձայնավորների միջին աստիճանը՝ ***ըէ*** հնչյունակապակցություններով:

Ժողովածուում ընդգրկված դժվարհասկանալի գրեթե բոլոր՝ հիմնականում բարբառային և օտար լեզուներից փոխառյալ բառերը համապատասխան էջերում բացատրված են գրական հայերենով: Դրանցից առանձին նշանակություն ունեն նրանք, որոնք ներկայումս այլևս չեն գործածվում Ղարաբաղի բարբառում կամ միայն տարեց բարբառախոսների «սեփականությունն» են, ինչպես՝ *գլըլըջաղ* (եկող տարին), *չուրուքսլուանէ* (քառակուսի), *ջառռահ* (բժիշկ), *սաղվաթ* (հեռու տեղից բերած նվեր), *ծըրծառուտ* (ծաղկավոր), *քումդար* (շերամապահ), *վըէրթ* (հորթ), *տուցաղ* (բանտ), *գյիւրջի* (կռիվ), *բուրմա* (սև), *քյամ* (վիշտ,կարոտ), *դիլբանդ* (նուրբ), *դէօլմիշ հնիլ* (թարախակալել), *դէօնմիշ հնիլ* (ուռչել), *հալի անէլ* (տեղեկացնել), *դալամքյոր* (նախշուն), *գյիւլգյոգ* (կարմիր), *վէհլ անէլ* (գանգատվել) և այլն:

---

[1] XIX գիրք, 1910, էջ 89
[2] Նույնը, էջ 86
[3] XVII գիրք, էջ 38
[4] Աճառեան Հր., ***Քննութիւն Ղարաբաղի բարբառին***, Վաղարշապատ, 1901
[5] XVII գիրք, էջ 39
[6] Նույն տեղը
[7] Նույն տեղը
[8] Նույնը, էջ 39-40
[9] Նույնը, էջ 40

Արցախի ժողովրդագիտությանն առնչվող նյութեր են տպագրվել նաև *«Ազգագրական հանդեսի»* այլ համարներում:

Դեռևս Շուշիում 1896 թվականին հրատարակված Ա գրքում է ընդգրկված Լ. Բաբայանի *«Խոջալլուի գերեզմանները»* հաղորդումը[1]՝ նվիրված Պետերբուրգի հնագիտական ընկերության անդամ, Շուշիի ռեալական դպրոցի գերմաներենի ուսուցիչ Է. Ռոսլերի՝ Ղարաբաղում, հատկապես Խոջալլու և Առաջաձոր գյուղերում 19-րդ դարի վերջերին կատարած հնագիտական պեղումներին:

Հաղորդումից տեղեկանում ենք, որ գերմանացի հնագետը պեղումների արդյունքում հայտնաբերել է շինությունների մնացորդներ, կուրգաններ, անոթներ, դրամներ, զենքեր, զարդարանքներ, գործիքներ, սափորներ, որոնց մի մասը պատված է գեղեցիկ զարդաքանդակներով, *«որ ցույց են տալիս այդ տեղի բնակիչների գեղարուեստական զարգացած ճաշակը»*:[2]

Մեկ այլ Ջիբրայիլի գավառի Ղարաբուլաղ գյուղում կատարված պեղումների մասին հաղորդում է տպագրել Ե. Լալայանը[3]: Ըստ հաղորդման՝ 1896 թվականի ամռանը Մոսկվայի Կայսերական հնագիտական ընկերության հանձնարարությամբ նույն ընկերության անդամ Ա. Իվանովսկին պեղումներ է կատարել Գանձակի, Շուշու և Ջիբրայիլի գավառներում ու գիտության համար բավական թվով թանկագին իրեր գտել: Իվանովսկին, Ղարաբուլաղ գյուղի կուրգաններից մի քանիսի պեղումը սկսելով, այն անավարտ է թողել և խնդրել Ե. Լալայանին ավարտել այն, ով սիրով կատարել է գիտնականի հանձնարարությունը՝ ընկերության կողմից արժանանալով շնորհակալության: Հաղորդման մեջ Ե. Լալայանը ներկայացնում է այդ կուրգաններից մեկի՝ *«Ղարաքեօփակի»* մասին պատմվող ավանդությունը. *«Շահ Աբաս անցնելով այդ տեղից, տեսել է մի ծերունի, որ միայնակ հնձում է իւր արտը: Մեղքանալով նրա վրայ: հրամայում է իւր զինուորներին անմիջապէս բոլորը հնձելու և երբ վերջացնում են, Շահ – Աբաս հարցնում է ծերունուն, թե լա՞ւ է ընկերովի աշխատելը: Սա էլ պատասխանում է. «Լաւ է ընկերովի աշխատել, բայց միայնակ ուտել»: Սրա վրայ բարկանալով: Շահ-Աբաս հրամայում է իւր զօրքին մի մի քար ձգել այդ եսասէր ծերունու վրայ, որից և գոյանում է այդ բլուրը»*[4]:

Հանդեսի XIII գրքում է տպագրված Ի. Հարությունյանի *«Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց»* հոդվածը[5], որտեղ ներկայացնելով արցախցի նշանավոր հոգևորականի կյանքն ու գործունեությունը՝ անդրադառնում է նաև նրա ժողովրդագիտական աշխատություններին և հրատարակություններին:

Այսպիսով, արժևորելով Ե. Լալայանի հիմնադրած *«Ազգագրական հանդեսի»* տեղն ու դերը հայ իրականության մեջ, միանշանակ կարող ենք փաստել, որ այն առանձնահատուկ նշանակություն ունեցավ Արցախի ժողովրդագիտական նյութերի հավաքման, ուսումնասիրության ու հրատարակման բնագավառում և ուղենիշ հանդիսացավ հետագա ուսումնասիրությունների համար:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմեն Սարգսյան -բ.գ.թ., ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարություն

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Հ.Ղազարյանը:

[1] «Ազգագրական հանդես», Շուշի, Ա գիրք, էջ 37-40
[2] Նույնը, էջ 39
[3] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1897, Բ գիրք, էջ 307-308
[4] Նույնը, էջ 307

[5] «Ազգագրական հանդես», Թիֆլիս, 1906, XIII գիրք, N1, էջ 227-228

ՀՏԴ 82.09 (479-25) Գրականագիտություն

ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ «ՀՈՎՆԱԹԱՆ ՈՐԴԻ ԵՐԵՄԻԱՅԻ» ԵՐԿԸ

Անի ՇԻՐԻՆՅԱՆ

Բանալի բառեր: *Գյուղաշխարհի հերոսներ, ազատություն, ազնվագույն կավ, լեռան քաղաք, աղյուս, բրուտանոց, անմահություն, մարդկային թշվառություն, արարելու արվեստ, քանդակներ, ժառանգականություն:*

Ключевые слова: *сельские герои, свобода, благороднейшая глина, город горы, кирпич, бессмертие, человеческая нищета, искусство творения,скульптуры, наследственность.*

Keywords: *village heroes, liberty, the noblest clay, mountain city, column, pottery, immortality, human squalor, art of creating, sculptures, heredity.*

А. Ширинян
Произведение Вагана Тотовенца „Овнатан-сын Еремии"

Целью и ключем произведений Вагана Тотовенца является человек. В произведении „Овнатан-сын Еремии" поет изображает лица отличающихся их психологией, ролью и образом жизни, чистые и прозрачные характера. Он описывает искусство творения со сырого кирпича до белых мраморных памятников. Человеческая злость, темные мысли, отсталость, власть нахлебников не дают, чтобы мастер сотворял в мире.

A. Shirinyan
Vahan Totovents "Hovnathan the son of Yeremia" novel

The axis and the aim of Vahan Totovents's works is a human being. In the novel "Hovnathan the son of Yeremia" the writer creates images differing with their psychology, their role and way of life, simple and transparent characters. He dascribes the art of creating from the very raw column to white marble monuments. Human spite, dark thoughts, backwardness and sponger power do not let an artist create peacefully.

Վահան Թոթովենցի ստեղծագործությունների առանցքն ու նպատակը մարդն է: «Հովնաթան որդի Երեմիայի» երկում գրողը կերտում է իրենց հոգեբանությամբ, իրենց դերով ու կենսակերպով տարբերվող կերպարներ, պարզ ու թափանցիկ բնավորություններ: Նա նկարագրում է արարելու արվեստը՝ հում աղյուսից մինչև սպիտակ մարմարե հուշարձաններ: Մարդկային չարությունը, խավար միտքը, հետամնացությունը և ձրիակերների իշխանությունը թույլ չեն տալիս, որ արվեստագետն ստեղծագործի խաղաղությամբ:

Պետք է մտածել մարդուն մասին: Պետք է ջանալ
մարդուն կարողությունները հասցնել իրենց
բարձրագույն կատարելության: Աստվածայինը չէ, որ
մեզ առավելապես կը շահագրգռե, այլ մարդկայինը:
Մարդը... իմ նպատակն է:
Վահան Թոթովենց

Նորագույն շրջանի հայ գրականության մեջ յուրահատուկ տեղ է գրավում Վ. Թոթովենցը արևմտահայ, սփյուռքահայ և խորհրդահայ գրականության ավանդների կրողն ու ներկայացուցիչը: Մեծ հայ էր նա և մեծ հայրենասեր, հայ ժողովրդին, հայ մշակույթը սիրող ու պաշտող: Վիլյամ Սարոյանը, որ մոտիկից գիտեր Վահան Թոթովենցին, գրել է, որ ինչքան էլ սահում է ժամանակը, ավելի ու ավելի է սիրում Թոթովենցի կյանքը, ճշմարտությունը, առասպելն ու ողբերգությունը: Պարզ անկեղծությամբ Թոթովենցը կերտում է կերպարներ, որոնք տարբեր են իրենց հոգեբանությամբ, իրենց դերով ու կենսակերպով: Նրա ստեղծագործությունների առանցքն ու նպատակը մարդն է: Գրողի համար առաջնային են դառնում մարդու կրքերն ու ապրումները, հույզերն ու զգացողությունները, սիրո ճշմարտության հաստատումը, գեղեցիկի ու մարդկայինի հաղթանակը:

Մարդու և մարդկայինի կորստյան տագնապը, տառապանքի աննկարագրելի ճամփաները, հայրենիքի մխացող ցավը սկիզբ դրեցին մի նոր գրականության, որի ընթացքը պիտի հոսեր վերհուշի ու կարոտի գրական ճամփաներով: Այս հզոր բախումների կիզակետում Թոթովենցի երկերը կրում են համամարդկային խմորումների դրոշմը:

«Հովնաթան որդի Երեմիայի» վիպակում քնարական բանաստեղծի նուրբ զգացողությամբ Թոթովենց արձակագիրը ամբողջական բնանկարի մեջ մեկիկ-մեկիկ առանձնացնում է հարազատ գյուղաշխարհի հերոսներին, հողը, բնությունը: Զգուշավոր և բազմափորձ հոգեբանի նման նա ընթերցողին կամաց-կամաց ներքաշում է իր հարուստ գյուղաշխարհը՝ նրան ևս դարձնելով դեպքերի անմիջական մասնակից: Պարզ, անպաճույճ նկարագրություններն ու համոզիչ խոսքը հիմնավորապես գերում են ընթերցողին իրենց բնականությամբ:

Վիպակը գրվել է Միքայել Նալբանդյանի հիշատակին, ում համար ազատությունն անփոխարինելի համամարդկային արժեք էր: Նալբանդյանը մարտնչել է բռնության դեմ՝հանուն ժողովրդի քաղաքական և տնտեսական ազատության, հանուն մարդկային ու համամարդկային ազատության և եղբայրության: Ու կարծես Նալբանդյանի «Ուր չկա մտքի և բանականության ազատություն, այնտեղ կա հոգու ստրկություն» միտքն ուղղված է հենց այս ստեղծագործությանը:

Երկը գրվել է 1934 թվականին: Այս շրջանում ստեղծված գործերի մեծ մասը գրողի ծանր ապրումների, նրա փոթորկահույզ ներաշխարհի, կործանվող հայրենիքի, ժողովրդի ազատագրության ուղիների փնտրտուքի, հակասությունների և հուսախաբությունների արտահայտություններն են, որ ծնունդ են առել ցեղասպանություն տեսած ժողովրդի անվերջանալի տառապանքներից:

Թոթովենցը խաղաղ ու անփույթ սկսում է իր պատմությունը: Անխախտ հանդարտությամբ նա թվարկում է այն նյութերը, որոնք «հին ժամանակների իշխողները» օգտագործել են քաղաքի ամրոցի շինության համար. «ձվի միջուկը, կաթ և մարդկային ստրուկների քրտինքն ու արյունը»:

Գիշերները «արյունարբու ավազակները» լցվում էին բերք ու բարիքով ծանրաբեռնված դաշտերը, կողոպտում ու սպանում էին մարդկանց, իսկ առավոտյան՝ հեռանում: Դաշտը բարի էր, բերքը՝ առատ, լեռան քաղաքը՝ հյուրընկալ: Երբ վրա էր հասնում ձմեռը, օտար աշխարհներից այս քաղաքն էին թափվում բազմաթիվ աղքատներ: Եվ այսպես բարի լեռն իր ուսերին պահում էր և քաղաքի բնակիչներին, և ավազակներին, և աղքատ օտարականներին:

Թոթովենցը բարձր է գնահատում «քրտինքով հաց վաստակելու անհուն հաճույքը», ինչը ավազակին դարձնում է հողի աշխատավոր ու արարիչ: Ժամանակի ընթացքում ավազակությունն ու ավազակներն անհետանում են, և դաշտում լեռան սպիտակ քարից կառուցվում է առաջին սպիտակ տնակը, որից հետո տներ կառուցելը դառնում է «առօրյա սովորություն»:

Դաշտում սկսում են առաջանալ բնական ավազաններ, որոնց հատակին ազնվագույն տեսակի կավ էր գոյանում: Քաղաքի բնակիչներից մեկը՝ քարտաշ Դավթի որդի Անդրեասը, փորձում է այդ կավից աղյուսներ շինել:

Հենց սկզբից էլ Անդրեասի կերպարը գրավում է ընթերցողի ուշադրությունը: Նա չգիտեր, թե ինչպես են օգտագործում կավը, երբեք նման բան չէր արել, սակայն հանձն է առնում դրանից աղյուսներ՝ իսկ աղյուսներից: տներ շինել: Հայրը չէր հավատում, որ դրանից ինչ-որ բան դուրս կգա, սակայն չէր կարող ստիպել որդուն ձեռք քաշել իր նպատակից, որովհետև որդին այլևս երեխա չէր:

Անդրեասի աշխատասիրության ու հնարամտության շնորհիվ սովորական կավը վերածվում է աղյուսի, ապա՝ կիսախողովակների ու խողովակների, փարչերի, գինու և ջրի կարասների, թասերի, երկարավիզ սրվակների...

Ձմռանը բրուտանոցում աշխատանքը կանգ էր առնում, իսկ ահա կարմիր կտուրներով կարմիր աղյուսե պատերից ներս տղամարդիկ «Անդրեասի բրուտանոցում շինված ու նրա հնոցում թրծված հողե կարմիր թասերով» թանձր գինի էին խմում, կանանց առօրյայի մաս էր կազմում բամբակի բոժոժներ մաքրելը, ծամոն ծամելը, հղիանալը, անվերջ շաղակրատելն ու ծիծաղելը:

Ինչպես քաղաքի մյուս բնակիչները, ծերունի Անդրեասն էլ բարի էր ու աստվածավախ: Նա կարդում էր Ավետարանն ու մագաղաթյա հոտավետ այլ գրքեր և պատմում տնեցիներին լեռան քաղաքի ու քարտաշ Դավթի մասին: Ու չնայած Անդրեասը բոլորված էր

քրիստոնեական հավատով, հենց նրա սարկոֆագի մեջ, հեթանոսական սովորության համաձայն, մեծ հարսը մի փարչ գինի է դնում դագաղի գլխավերևում և մի կողով ծիրան: պապի ոտքերի մոտ: Սա խոսում է հին ավանդույթների արժևորման ու պահպանման մասին: Նման դրվագները քիչ չեն վիպակում: Բարի ավանդույթների կրողն է ողջ գերդաստանը, որ ապրում է մի կտուրի տակ, հաշտ ու խաղաղ: Այստեղ է, որ արվեստը փոխանցվում է ժառանգաբար: Դավիթ-Անդրեաս-Երեմիա-Հովնաթան:

Ժառանգականության հարցը հայ ընտանիքի համար միշտ էլ կարևորագույն խնդիր է եղել (հիշենք մեր հերոսական էպոսի Մեծ Մհերին): Ծերունի բրուտին տանջում էր իր անդրանիկ որդու՝ Երեմիայի զավակ չունենալու հարցը: Եվ քանի որ մահացել էր Երեմիայի անպտուղ կինը, հարկ էր, որ որդին ամուսնանար ու թոռներ պարգևեր հորը: «Եվ Երեմիայի ծառը ծաղկեց ու տվեց գույնզգույն պտուղներ»[1]:

Երեմիայի երկրորդ կինը, հակառակ իր տարիքին, համարվում էր մեծ հարսը: իբրև անդրանիկ զավակի ամուսին: Հայ ընտանիքում ավագը մեծարանքի ու պատվի է արժանի բոլոր ժամանակներում: Երբ Անդրեասը խոսում է Հովնաթանի հետ, նշում է սերնդի ավագներին: Եվ ավագներն են պահպանում սերունդն ու ժառանգականությունը: Անդրեասն ուներ յոթ երեխա, սակայն, որպես իր սերնդի շառավիղ նա նշում է Երեմիային՝ ավագ որդուն: Իր հոգու և մարմնի պատկերը ծերունին տեսնում էր Երեմիայի անդրանիկ որդու՝Հովնաթանի մեջ: Նրա բովանդակ սերը, որ տածել էր դեպի կավը, դեպի մայր հողը, կենտրոնանում է Հովնաթանի վրա: Եվ մի օր կանչում է թոռանն ու գրել տալիս. «Հայրապետ ծնավ Առաքել, Առաքել ծնավ Դավիթ, Դավիթ ծնավ Անդրեաս, Անդրեաս ծնավ Երեմիա, Գրիգոր, Պետրոս, Պողոս, Սառա, Յուղաբեր, Հռիփսիմե, Երեմիա ծնավ Հովնաթան, Մարգարիտ և Դավիթ»: Ապա կանգ է առնում, կարոտագին նայում Հովնաթանի կապույտ ու շողշողուն աչքերին և երանությամբ շարունակում. «Հովնաթան ծնավ Անդրեաս»[2]:

Ծերունու հոգում թրթռում է անմահությունը, երակներում զրնգում արյունը: Ժառանգականության պահպանման խնդիրը տեսանելի է նաև նրա շարադրանքի մեջ, որ աստվածաշնչյան ոգով է. ոչ թե Երեմիայի կինը «ծնավ Հովնաթան», այլ «Երեմիա ծնավ Հովնաթան»: Աստվածաշնչյան ոգով են նաև Անդրեաս պապի վերջին խոսքերը. «...կավ էի, նորից կավ եմ դառնալու»:

Ընտանիքում ամենից ավանդապահը Անդրեասն էր, ով բարկացել էր մեծ հարսի վրա ծամերը կտրելու համար. «լավ չարավ»: Կյանքի վերջին րոպեներին, ի նշան հաշտության, պապը թույլ է տալիս, որ հարսը համբուրի իր դողդոջուն ձեռքը:

Հովնաթանը ներկա չի գտնվել պապի շիրմաքարի հանգչեցնելուն: Ամբողջ այդ ժամանակ նա բրուտանոցում էր աշխատում: Մի օր էլ հայրը մտնում է բրուտանոց, տեսնում որդու աշխատանքը, զարմանում ու զմայլվում. քառսային կավը ձև էր ստացել, նմանվել պապին: Երեմիան երբեք չէր մտածել, որ կավը, բացի թասերից, փարչերից ու աղյուսներից կարելի էր օգտագործել նաև անմահության համար:

Պապի կիսանդրիից հետո Հովնաթանը սկսեց համարձակորեն զբաղվել արձաններ շինելով: Նա «ըմբռնեց մարմնի ձևերը, հասարակ աչքերով աննշմարելի խորությունները, բարձունքները և ծավալները»[3]:

Երեմիան հրճվանքով է նայում որդու ամենափոքր փորձերին, սակայն շուտով՝ հորեղբայրների ու նրանց որդիների բողոքներից հետո, Հովնաթանը ստիպված է լինում սեփական աշխատանքով զբաղվել բոլորից թաքուն: Բոլորից թաքուն նա քանդակում է եղբորը՝ Դավթին՝ խոստանալով, որ ձի կնստեցնի, ապա նաև քրոջը՝ Մարգարիտին, ինչը և պատճառ է դառնում Հովնաթանի՝ օտար երկիր մեկնելուն:

Օտարությունից Հովնաթանը վերադառնում է որպես մեծ արվեստագետ, ով կավից ու քարից կերտում է մարդկության թշվառությունը, զրկանքն ու հալածանքը, ինչին ենթարկվում է նաև ինքը:

[1]Թոթովենց Վ., Ստեղծագործություններիժողովածու, Եր., «ԷդիթՊրինտ», 2013, էջ 277:

[2]Թոթովենց Վ., Ստեղծագործություններիժողովածու, Եր., «ԷդիթՊրինտ», 2013, էջ 278:

[3]Նույն տեղում, էջ 290:

Մահվանից հետո միայն թանգարանում մի մեծ դահլիճ հատկացվում է Հովնաթանի գործերի համար, իսկ վերջին հուշարձանը հանձնվում է երիտասարդ արվեստագետներին՝ սպիտակ մարմարից քանդակելու:

Այդ սպիտակ մարմարի տակ հանգչում են Հովնաթանի ոսկորները, և բլրի ստորոտում փորագրված է.

Հովնաթան՝ որդի Երեմիայի

Վիպակի սկզբից մինչև վերջ արարելու արվեստն է՝ պարզագույնից մինչև կատարելություն հում աղյուսից մինչև սպիտակ մարմարե հուշարձաններ: Եվ այս արարման դժնդակ ճանապարհին ոչ մի բան պատահական կամ ավելորդ չկա, ամեն ինչ պահանջված է ու անհրաժեշտ: Եվ ինչպես աղյուսները մարդկանց «ցած բերեցին» լեռան կատարից դաշտերն ու այգիները, այնպես էլ իսկական արվեստը մարդուն դարձնում է ավելի ընտանի, ավելի բարոյական, ավելի բարի ու ավելի ազատ: Եվ ինչպես անհրաժեշտությունից ծնվեցին տարբեր տեսակի աղյուսներն ու խողովակները, անոթներն ու կարասները, թասերն ու սրվակները, այնպես էլ անհրաժեշտությունից ծնվեցին Հովնաթանի քանդակները՝ արվեստի բարձրագույն կոթողները:

Անդրեասի որդիները, թոռներն ու ծոռները երբեք չիմացան, թե երբ և ինչպես սովորեցին ձևավորել կավը, սովորեցին այնպես, «ինչպես երեխաները սովորում են ձեռները տանել բերանները»:

Ստեղծագործության ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ հայ ոգու, հայ մտքի, արվեստի ազատագրումը գրողի ողջ կյանքում մնացել է առաջնային: Թոթովենցի վիպակը կյանքի խոր դիտողության արդյունք է: Նա գեղարվեստական պատումը ներքուստ բոցավառում է ոգեղեն շնչով և ստեղծում մարդկային փխրուն հոգիներ, պարզ ու թափանցիկ բնավորություններ:

Լինելով արևմտահայ, սփյուռքահայ և խորհրդահայ գրականության ավանդների կրողն ու ներկայացուցիչը: Թոթովենցն ուսումնասիրման արժանի ժառանգություն է թողել նաև լեզվաոճական տեսանկյունից, քանի որ այս դեպքում գործ ենք ունենում գրական հայերենի երկու ճյուղերի հետ: Նա մեր գրականության այն սակավ ներկայացուցիչներից է, ում ստեղծագործությունը հատկապես արժևորվում է գրական հայերենի երկու տարբերակների համատեղումով:

Պատկերներ ստեղծելու անառարկելի տաղանդն ու նուրբ զգացողությունը գունեղ ներդաշնակությամբ հարստացնում են գրողի արձակը նրա գեղարվեստական աշխարհը դարձնելով առավել բազմաշերտ ու ինքնատիպ: Թոթովենցի՝ իմաստով հագեցած նախադասությունների մեջ չկան դատարկ տարածություններ: Նա միտքը կառուցում է մանրամասների ճշգրիտ արժեքավորմամբ, որի շնորհիվ պատումը դառնում է ավելի խիտ ու հագեցած:Վիպակը գրված է նկարագրությունների ճշգրտությամբ, պատկերավորությամբ, անսպասելի համեմատություններով ու չափազանցություններով. «Դաշտի ծիրանը լինում է բառունցքի չափ, տանձը՝ ինչպես երեխայի գլուխը, քաղցր ու ջրոտ... իսկ մեխակը հնձում են, ինչպես խոտը»[1]:

Թոթովենցն այն սակավաթիվ գրողներից է, ում արձակն արտացոլում է արևմտահայ գյուղն ու կենցաղը, սակայն չի դառնում սոսկ գյուղագրություն: Նա իր գունագեղ լեզվամշակույթը ստեղծում է ոչ միայն հեղինակի կամ քնարական հերոսի խոսքի միջոցով, այլև լսելի է դարձնում իր հերոսների խոսքը:

Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ Վահան Թոթովենցը զոհ է դարձել ստալինյան բռնարարքներին (բանտարկվել է 1936 թվականին, 1938-ին: գնդակահարվել, հետմահու արդարացվել), կարելի է ասել, որ նրա ճակատագիրը ինչ-որ տեղ համընկնում է վիպակի գլխավոր հերոսի ճակատագրին: Մարդկային չարությունը, խավար միտքը, հետամնացությունը և ձրիակերների իշխանությունը թույլ չեն տալիս, որ արվեստագետն ստեղծագործի խաղաղությամբ և խնդությամբ:

[1] *Թոթովենց Վ., Ստեղծագործությունների ժողովածու, Ե. »Էդիթ Պրինտ«, 2013, էջ 268:*

Վահան Թոթովենցի ապրած ամբողջ կյանքը խորունկ հայրենասիրության, վառ ու ազնիվ քաղաքացիական նվիրվածության մի պայծառ օրինակ է:

Գրականություն

1. Թոթովենց Վ., Ստեղծագործությունների ժողովածու, Ե. «Էդիթ Պրինտ», 2013:
2. Թոթովենց Վ., Երկեր, գիրք 1, Ե., «Սովետական գրող», 1988:
3. Ադալյան Ն., Վահան Թոթովենց, Ե., 1992:
4. Արզումանյան Ս., Վահան Թոթովենց, Ե., 1961:
5. Մանուկյան Ս., Վահան Թոթովենց, Ե., 1959:
6. gradaran.mskh.am:
7. freeboks.do.am:
8. akumb.am:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Անի Շիրինյան- ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
e-mail: shirinyanani@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 82.09 (479-25) Գրականագիտություն

ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ

Անի ՇԻՐԻՆՅԱՆ

Բանալի բառեր: *Հին աստվածներ, հեթանոս ոգի, դիցաբանություն, հոգու գոյապտույտ, հելլենական մշակույթ, առասպել, դիցուհի, նախասկիզբ, վեդայական գրականություն, խորհրդանիշ:*

Ключевые слова: *Древние боги, языческая душа, мифология, буря души, эллинская культура, миф, богиня, предначало, ведическая литература, символ.*

Keywords: *Ancient gods, pagan soul, mythology, whirlwind of soul, Hellenic culture, myth, goddess, source, vedantic literature, symbol.*

А. Ширинян
Языческий пантеон Егише Чаренца

Языческое мышление Чаренца нашло свое отражение в его произведениях. Первые годы литературной деятельности поэта совпали с периодом, когда одним из главных направлений развития цивилизации являлось возраждение языческого прошлого. Языческий пантеон в литературе занял широкое место и стал постаментом героических идеалов.

Чаренц изображает языческую стихию выражающую далекую бытовую красоту культур дохрестианского периода параллельно античной, элинской культуре, затронув ассорийских, индийских, греко-римских множественных богов.

A. Shirinyan
Yeghishe Charents' pagan pantheon

Charents's pagan thought was reflected in his poems. The first years of the poet's literary career coincided with such a period when one of the important directions of the national civilization was regeneration of the pagan past. Pagan pantheon occupied a spacious place in the literature and became a pedestal for ideals.

Charents describes the pagan element expressing the beauties of the old way of life, at the same time showing a parallel between the Armenian culture of the pre-Christian period and ancient, Hellenic culture noting numerous Assyrian, Indian and Greco-Roman goddesses.

Չարենցի հեթանոսական մտածողությունն իր արտացոլումն է գտել նրա ստեղծագործությունների մեջ: Բանաստեղծի գրական գործունեության առաջին տարիները համընկան մի այնպիսի ժամանակաշրջանի, երբ ազգային քաղաքակրթության զարգացման գլխավոր ուղղություններից մեկը համարվում էր հեթանոսական անցյալի վերածնությունը: Հեթանոսական պանթեոնը գրականության մեջ գրավեց ընդարձակ տեղ և դարձավ հերոսական իդեալների պատվանդան:

Չարենցը պատկերում է հեռավոր կենցաղի գեղեցկություններն արտահայտող հեթանոսական տարերքը՝ նախաքրիստոնեական շրջանի հայ մշակույթին զուգահեռելով նաև անտիկ, հելլենական մշակույթը, անդրադառնալով ասորական, հնդկական և հունա-հռոմեական բազմաթիվ աստվածությունների:

Չարենցը անցյալի խիզախ մենակաբանն է և գալիքի մարգարեն: Նրա ստեղծագործությունները բոլորի մասին ու բոլորի համար են: Այնտեղ ենք մենք, այնտեղ են ապագայի սերունդները, այնտեղ են հին աստվածները: Ընդգրկումների որպիսի՜ ահռելիություն՝ խելագարության հասնող...

Գրողի գրական գործունեության առաջին տարիները մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող մղձավանջային ժամանակներ էին: Հայրենիքը բզկտված էր ու անհույս: Մեծագույն ցավ էր սա, որի մեջ էլ մկրտվեց Չարենց-բանաստեղծը:

1909 թվականին Ադանայում և Հալեպում կազմակերպվեց հայության ջարդ, որին հետևեցին 1915 թվականի, ապա նաև 1923 թվականի կոտորածները: Քրիստոնեությունը չէ, որ պետք է լուծեր այս խնդիրը. անհրաժեշտ էր ուժ, առնականություն, հեթանոս ոգի: Հայ գրականության մեջ սկսվում է «հեթանոսական շարժումը»: Կոստանդնուպոլսի հեթանոսական խմբակը 1914 թվականին հրատարակում է «Նավասարդ» տարեգիրքը: Հրապարակված հոդվածներում ազգային քաղաքակրթության զարգացման գլխավոր ուղղությունը համարվում էր հեթանոսական անցյալի վերածնությունը: Շարժման խորքերում ազգային ոգու վերադարձն էր, որի տրամաբանությամբ էլ հեթանոսական պանթեոնը

գրականության մեջ գրավեց ընդարձակ տեղ ու դարձավ հերոսական իդեալների պատվանդան:

«Կյանքի հիմերի» որոնումները Չարենցին ևս տանում են հին աստվածների մոտ: Սակայն բանաստեղծի հեթանոսական մտածողությունը տարբերվում է արևմտահայ գրական շարժման ընդհանուր մթնոլորտից: Սա սիմվոլիստի յուրահատուկ դարձ է դեպի անտիկ դիցաբանություն: Հիմա՝ սիմվոլի՞ստ, թե՞ հեթանոս: Չարենցի պարագայում սա ոչ երկվություն, ոչ էլ հակադրություն է. դիցաբանությունը ձևավորվել է այն ժամանակ, երբ դեռ մարդկային գիտակցությունը նույնացնում էր իրականն ու իդեալականը: Չարենցի երկերում կան և՛ հեթանոսական, և՛ խորհրդապաշտական պատկերներ:

Հայտնի փաստ է, որ Չարենցը պայքարում էր հնի ու հնացածի դեմ: Բայց ինչու՞ է նորարարության այս ջատագովը դիմում հին աստվածներին: Պարզվում է, որ Չարենցը դեմ էր հնացածին, բայց ոչ հնուց եկող հավերժականին:

Բանաստեղծն իրեն համարում է Արամազդ աստծու հովանու տակ ծնված.

Ես ծնվել եմ Մակու քաղաքում,
Արևի տակ ոսկեղեն, հասուն,
Շոգ շնչի տակ Օրմուզդի թևի–
1897 թվին[1]:

Զրադաշտական կրոնում Օրմուզդը (Արամազդը) համարվում էր լույսի և բարու աստվածություն: Եվ, իրոք, Չարենցից լույս ու բարություն է ծորում:

Չարենցը հյուսում էր նոր հայրենիքի ավանդավեպը: Լինելով լավատես՝ նա ձգտում էր դաշնության: Բայց ինչու՞ առասպելն այդքան տխուր է ստացվում: Ինչքա՞ն կդիմանա գալիքի համար մաքառման ճանապարհին ու... կդիմանա՞ արդյոք... Հեթանոսությունը որոշ լիցքեր ու սիմվոլներ էր հաղորդում բանաստեղծի քաղաքական մտածողությանը:

Վահագնի առասպելը, անցնելով դարերի միջով, սերունդների համար դարձել է փրկության հույսի խորհրդանշան: Դաժան իրականությունը, սակայն, ցրելով բոլոր պատրանքները, երազի տեղ թողնում է արյունոտ մի վերք.

Եվ հավատացինք, հարբած ու գինով,
Որ դու կաս՝ հզոր, մարմնացում Ուժի–
Իսկ նրանք եկան՝ արյունով, հրով,
Մեր երկիրը հին դարձրին փոշի...
Եվ երբ քարշ տվին դիակդ արնաքամ,
Որ նետեն քաղցած ոհմակներին կեր–
Մեր կյանքի հիմերն անդունդը ընկան
Եվ արնոտ միգում ճարճատում են դեռ...[2]

Հայաստանի կերպարի հետ վեր է հառնում և նրա զավակի կերպարը, որի որոնումների նպատակը հայրենիքի ճակատագրի առեղծվածն էր: Վահագնի արնաքամ դիակը «քարշ տվին», «Որ նետեն քաղցած ոհմակներին կեր»: Բայց չէ՞ որ չնետացին: Ու Վահագնը փյունիկի նման պետք է վեր հառնի՝ «մեր կյանքի հիմերն» անդունդից հանելու: Սա մաքառման բանաստեղծություն է:

Սակայն իրականությունն այլ բանի մասին էր աղաղակում, գահավիժում էին երբեմնի լուսավոր երազները, պատմության չար հողմերի դեմ կանգնում է ավերակված ու վիրավոր Հայաստանը: «Վահագնը» յուրօրինակ մի ճիչ էր Հայաստանի անհեռանկար կացության

[1]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 2, Եր., 1963, էջ 154:
[2]Նույնտեղում, էջ 37:

մասին: Մի պահ բանաստեղծի ուղին մոլորվում է հակասությունների խաչմերուկներում. նա մերթ գտնում, մերթ կորցնում է փայփայած հույսերը. «Թե մի՞ֆ էիր դու...»:

Չարենցը առաջիններից էր, ով տեսավ, որ «թագավորը մերկ է»: Գոյության այուները կորցրած հայ ժողովուրդը կանգնած էր անդունդի ամենավտանգավոր եզրին: Այնուհանդերձ, բանաստեղծը հավատում էր, որ մի օր կտեսնի կապուտաչյա հայրենիքը՝ որպես իր «անբիծ հարսնացուն»՝

Արևների նման պայծառ, լուսավոր,
Ճաճանչների նման Վահագն Աստղծու[1]:

Ու թեկուզ «Մեռնող օրվա արնաթաթախ հայացքում», Չարենցը տեսնում է «կապուտաչյա սիրուհու» հեթանոս հարսանիքը, գիտեր, որ մի օր կերջանկանա՝ օրհներգելով իր հեթանոս Աստծուն.

Վաղը, վաղը գինաառատ հարսանիքը կըտոնենք.
Կապուտաչյա՛ Սիրուհիս... – մեզ աստվածներն են կանչում...[2]

Կորցրած հայրենիքը գտնելու ակնկալիքներով Չարենցն արթնացավ... «զորքերի շարքում»: Սակայն մահվան խրախճանքն էր ամենուրեք: Դանթեական դժոխքը կլանել էր և՛ կապուտաչյա հայրենիքը, և՛ ժողովրդի զավակներին. ահա մարդու հոգեկան փլուզումը, ահա նրա բարոյական ոչնչացումը: Հենց այս դժոխքում է բանաստեղծը մի պահ մարմինը հանում հագիցն ու հայտնվում նախապապերի երկրում, ուր

Թռչկոտում էին սեթևեթ ու չար
Եվ երգում էին Աստղկա մասին...
Խենթ երգում էին, որ Աստղիկը կա,
Ապրում է այնտեղ – ջրերի խորքում.
Թող բուքը ոռնա՛ աշխարհի վրա –
Իրեն ինչ՝ նա կա – անմահ, անհերքում, –
Եվ միշտ գեղեցիկ ու կույս կմնա
Իր աստվածային, անհուն եզերքում[3]:

«Դանթեական առասպել»-ի առաջին տարբերակում «...ծովն էր զառանցում մեռած՝ //Խեղդելով իր մեջ ամեն հիշատակ // Ու ամեն սիրերգ՝ Աստղիկից առած»: Սակայն բանաստեղծը հավատում էր դիցուհուն ու ոչ իզուր.

Եվ հանկարծ, այն գոց լռության միջում
Զնգաց մի անու՛շ, մի անու՛շ սիրերգ…
– Ջրերի միջից Աստղիկն էր կանչում –
Աստղիկն՝ հեթանոս, աստվածորեն մերկ…[4]

Ու հենց այդ «նո՛ր ու խորհրդավո՛ր Աստվածածարավ երգի ելևէջն» է, որ գուրգուրում էր բանաստեղծի վիրավոր սիրտը: Հայոց վիշտը դառնում է այն խթանը, որն առաջ է տանում բանաստեղծի երգը դեպի համաշխարհային գրականության հզոր հոսանքները:

[1]Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 10:
[2]Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 315:
[3]Նույն տեղում, էջ 27:
[4]Նույն տեղում, էջ 320:

Ավելի ուշ Աստղիկի կերպարին Չարենցն անդրադառնում է համանուն բանաստեղծության մեջ: Հայկական հեթանոսական պանթեոնից նա արդիականություն է հրավիրում սիրո և պտղաբերության աստվածուհուն.

Աստղի՛կ, իջի՛ր նորից, որ իմ հրով վառած՝
Արյունդ արև՛ ծնի գալիք կյանքի համար[1]:

Սոմայի նման Աստղիկն էլ շարունակ ինքնափոխակերպվում է՝ ասպարեզ տալով նորանոր մարմնացումների: Ամենից առաջ նա փառաբանվում է որպես հզոր, չեղծված, տիեզերածավալ սիրո ու կանացիության խորհրդանշան, ապա՝ որպես պտղավետության ու կենդանության նախասկիզբ.

…Աստղի՛կ, կին դու՝ հավերժ բեղուն[2]:

Վեր հանելով Աստղիկի հզորությունը, սերը, կենսունակությունն ու կանացիությունը՝ Չարենցը պսակազերծում է իր ժամանակի բարոյականությունը.

Վաղու՛ց անցել ես դու, Աստղի՛կ, կյանքից մեր մութ…[3]

Չարենցի վաղ շրջանի ստեղծագործական առնչությունները բնութագրելիս հարկ է հիշատակել նաև Լ. Շանթի անունը: Պատանի Չարենցը Թիֆլիսում դիտել է Լ. Շանթի «Հին աստվածները»: Կարելի է ենթադրել, որ հեթանոս աստվածներին նվիրված տեսարաններից է ծնվել «Կապուտաչյա հայրենիքի» հեթանոս ոգին: Այստեղ բանաստեղծը փառաբանում-օրհնում է Սիրուհուն, Սերին, Տնակին, Այգուն, Աստծուն, Արևին, Հայրենի հովտին… Երևում է այն եզրը, որով պոեմը կապվում է 10-ական թվականներին հայ գրականության մեջ սկսված «հեթանոսական շարժմանը»: Այստեղ տեսնում ենք հնամենի պատմության հերոսական ոգին ու հեռավոր կենցաղի գեղեցկություններն արտահայտող հեթանոսական տարերքի նշանները.

Օ՜, հինավուրց Վանք… Հայրերիս բագին…
Ուր նրանց կնդրուկն է սուրբ մխացել…
Ողջունու՛մ է Քեզ իմ տրտում հոգին,
Ու սիրում է Քո վեհությունը ծեր[4]:

Դրամայի առաջին պատկերների տեսլային լիցքը երևում է հատկապես «Տեսիլաժամեր»-ում:

Չենք կարող ժխտել նաև, որ Չարենցի բանաստեղծական ինքնատիպ աշխարհի ձևավորման մեջ որոշակի մասնակցություն է ունեցել Դ. Վարուժանի պոետիկան: Վերջինիս մտածողության ու արտահայտչական արվեստի առանձին ձևեր որոշակի դրոշմ են թողել Չարենցի հոգեբանության մեջ: Ազդեցության գլխավոր հունը նորից բանաստեղծական հեթանոսությունն է: Ժամանակին Վարուժանը ողբում էր ուժի, գեղեցկության ու սիրո հովանավոր հին աստվածների՝ Ապոլոնի, Անահիտի, Պանի, Աստղիկի և մյուսների մահը:

Գեղագիտական նուրբ ու բազմազան աղերսները շատ են: Դիտարկենք, օրինակ, գիներգությունը: Գինու նկատմամբ Չարենցի հետաքրքրությունը սկիզբ է առնում կենցաղա-խրախճանքային մակարդակից և հասնում մշակութային, դիցաբանական,

[1]Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր. 1984, էջ 310:

[2]Եղիշե Չարենց, Երկերիժողովածու, հ. 1, Եր. 1962, էջ 326:

[3]Նույն տեղում:

[4]Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 312:

բանաստեղծական խոր ըմբռնումների, ինչպես Վարուժանի մոտ: «Ճանթ իր վերջին գործով մեզ կվերադարձնե Հին Աստվածներուն, սիրո և գինիին ու կը հրավիրե մեզ իջնել կյանքի ծովին մեջ»[1],– նշել է Դ. Վարուժանը, երբ 1913 թվականին Պոլսում մասնակցում էր «Հին Աստվածներին» նվիրված «Գրական թեյասեղանին»:

Վարուժանի այս զգացությունը գլխավորապես գործում է գինու՝ իբրև սրբազան հեղուկի նախնական-դիցաբանական պատկերացումների հունում (սոմայական սկիզբը վեդաներում, դիոնիսյան սկիզբը հունական պանթեոնում և այլն): «Հեթանոս դարերուն մեջ իգական ձևը պաշտվեցավ, գինին ոգևորեց ձևին գեղեցկությունը…»[2],–նկատել է Տիգրան Զոկյուրյանը: «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմում Չարենցն անտիկ, հելլենական մշակույթին զուգահեռում է նախաքրիստոնեական շրջանի հայ մշակույթը:

Չարենցի բանաստեղծություն է ներթափանցում մարդու (այս դեպքում՝ կնոջ) և բնության նույնացման մոտիվը.

Անուշաբույր իր բեռին տակ կը կքեր
Դեղձենին քեզ նմանակ…[3] (Վարուժան)

Բնությունը, գիրգ ստինքները բաց,
Ցոփ կնոջ նման հեթանոս, հլու–
Պատրաստ էր ամե՛ն անցորդի առաջ
Իր աշնանային բերքը փռելու[4]: (Չարենց)

Երիտասարդ Չարենցը գործում էր մշակութային մի դաշտում, որ լիցքավորված էր Նիցշեի փիլիսոփայությամբ ու սիմվոլիզմի գեղագիտությամբ: Համաձայն նիցշեական փիլիսոփայության տեսության՝ մարդը, ապավինած սեփական ուժերին, պիտի ապրի ազատ, անկաշկանդ հեթանոս ապրելակերպով, որի խորքում հոգևոր ու բարոյական հզոր ուժ է թաքնված: Նիցշեն առաջ էր քաշում հեթանոսությունը՝ գերմարդու որակով: Իմացաբանական տարաբնույթ հոսքերը տարբեր անկյուններով բեկվում էին բանաստեղծի քնարական աշխարհում: Չարենցի ստեղծագործության կապը խորհրդապաշտության հետ միջնորդավորված էր այդ ուղղության եվրոպական և ռուսական դպրոցներով: Խորհրդապաշտական գեղագիտության բանալիներով Չարենցն արտահայտում է հավերյալ աշխարհների տեսիլքը, որ նրա ստեղծագործության մեջ երբեմն հայտնվում է եգիպտական անդրշիրիմյան Ամենտի եզերքի նշանով՝ մի անծանոթ հանգրվան, որի մասին ասվում է, թե այնտեղ՝

Հոգին չի մեռնում: Մարմինը թողած երկրային փոսում –
Թափառում է նա տիեզերական լաբիրինթոսում[5]:

Երբեմն տեսիլքը համբառնում է երկինք և նրա ելագիծն են դառնում Հարդագողի «ոսկեման ուղիները», որ հմայում են Չարենցին՝ որպես մարդկային կյանքի հավերժական փնտրումների հանգրվան:

Չարենցն ասպարեզ եկավ իբրև ազգային մեծ ողբերգության, հույսի և մաքառման խոշորագույն բանաստեղծ: Նա ստեղծեց ոչ միայն արյունաներկ հայրենիքի պատկերը, այլև՝ հեթանոս անցյալի ոգով տոգորված մթնոլորտ, ընդվզման և կամքի, վրեժի և զորության, երազանքների և երջանկության թեմատիկ մի համակարգ, որ զարգացնում է ազգային

[1]Ա. Շարուրյան, Դ. Վարուժանիկյանքիևստեղծագործությանտարեգրություն, Եր., 1984, էջ 202-203:

[2]Գրականասուլիսներ, Գ, Դ. Վարուժանի «Հեթանոսերգերը», Կ. Պոլիս, 1913, էջ 30:

[3]ԴանիելՎարուժան, Երկերիլիակատարժողովածու, հ. 2, Եր., 1986, էջ 31:

[4]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 23:

[5]https://hy.wikisource.org:

ազատագրության հասնելու գաղափարը: Ծնվում են նոր երկեր՝ հոգեբանական ու քաղաքական նյութի պատկերավոր խտացումներով: Հեղինակը հատուկ իմաստ է դրել «Վահագն»-«Աթիլլա» մերձեցման մեջ՝ ընդգծելով դրանց ժամանակագրական, բարոյական ու գաղափարական աղերսները: Ըստ Չարենցի՝ վերջինիս մեջ «պատկերված է «հոների արքա հզոր Աթիլլը»՝ որպես պատերազմի ահեղ սպառնալիք, որ կախված է բուրժուական հասարակարգի վրա»: Ուշագրավ է, որ այս կերպարը խուժել էր նաև ռուսական պոեզիա. Չարենցի «Աթիլլան» ունի Վյաչեսլավ Իվանովից քաղված «Տրորի՛ր նրանց դրախտը, Աթիլլա» („Топчиихрай, Атилла!") բնաբանը: Ռուս սիմվոլիստների տեսաբանը, ի դեմս Աթիլլայի, փառաբանում է աշխարհը հիմնահատակ կործանող ուժը: Նա երկրպագում է Աթիլլային՝ իբրև «ահեղ դատաստանի» մարգարեի (հարկ է նշել, որ հայ աստվածների մեջ չկան չարի աստվածներ):

Բացի այս սիմվոլիկ կերպարից, Չարենցն անդրադառնում է հնդկական ու հունա-հռոմեական բազմաթիվ աստվածությունների: Ինչպես նշեցինք, նա քաջածանոթ էր նաև Նիցշեի կողմից բացահայտված «ապոլոնյան և դիոնիսյան նախասկիզբ» հասկացություններին: Սիմվոլիկ կերպով «ապոլոնյան» կոչվող նախասկիզբը մարդու ներաշխարհում առաջ է բերում մի այնպիսի հոգեվիճակ, որը կարելի է համեմատել երազատեսության իրավիճակի հետ: Այսինքն՝ մարդկային միտքն ու բանականությունը ռեալ կյանքի ցավից ինքնաբերաբար փախչում են դեպի հոգու խորխորատներ, ուր երազանքների, անուրջների հրաշալի տարածք կա: Ապոլոնը երևակայության, պատրանքի թվացյալ փայլի աստվածն է, որ փնտրում է վեհը, գեղեցիկը ու խորհրդանշում այն:

Ի հակադրություն ապոլոնյանի՝ դիոնիսյան հոգեմիտվածքն առաջ է բերում գինովության, թմրածության հոգեվիճակ: Այս միտվածությունը մեծ մասսայականություն էր վայելում Հին Հունաստանում. դա ամբոխի ապրելակերպն էր՝ կյանքի կենսատու երակների փառաբանումն ուվայելքը, ապրելակերպ, որը կոչվում էր հեթանոսականություն: Այս ամենն իր վառ արտացոլումն է գտել «Տեսիլաժամեր» շարքում:

«Եզերքը Ադ» բալլադում Չարենցի գրչի տակ վերաիմաստավորվում է հունական դիցաբանությունից վերցված մի սյուժե. մեռյալների հոգին նավավար Քարոնը Ստիքս գետի վրայով հասցնում է Եզերքը Ադ, որի մուտքի պահապան Կերբեր շունը ներս է թողնում հոգիները և հսկում, որ ոչ ոք դուրս չգա այնտեղից: Այդ մեռյալները չէ, որ տեղափոխվում են անդրշիրիմյան աշխարհ, այլ՝ մարդկային երազանքները: Այսինքն՝ կենդանի մարդն իսկ մեռյալ է, քայլող դիակ, եթե նրա երազանքները հոշոտվել են ու նետվել Ստիքսը: Իսկ որտե՞ղ է Ադ եզերքը: Չարենցը հստակ մատնանշում է դրա տեղը.

Հոգու հեռավոր դարպասից անդին,
Ուր մշուշ է, մեգ,–
Ուր թանձր միգում վխտում են մթին
Կասկածները նենգ…[1]

Բանաստեղծը մեռյալների հոգիները փոխադրողի՝ Քարոնի կերպարին անդրադարձել է նաև ավելի ուշ՝ 1933 թվականին գրած «Մահվան տեսիլ»-ում.

Եվ Մտածումս ահա, որպես մշտնջական ու կորովի Քարոն,
Նավարկում է դեպի Անցյալը...[2]

Այստեղ է, որ Չարենցը համոզվում է՝ «դժնի» ու «ժանտաժանտ», «անփայլ» ու «գոսնական» տեսիլը.

[1]ԵղիշեՉարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր. 1984, էջ 246:
[2]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 4, Եր. 1968, էջ 485:

Ո՛չ փառքի գագաթ է խոստանում, ո՛չ քերթության Պառնաս...[1]

«Տեսիլաժամերն» ընդգրկում է նաև «Մարի, էգ թռչուն…» բալլադը, որը կարծես ամփոփում է շարքի ողջ ասելիքը: Դեռևս վեդայական գրականությունից եկող Սամսար հասկացությունը (Չարենցի մոտ՝ Սանսար) ենթադրում է հոգու հավերժական գոյապտույտ՝ անցում մի ձևից մյուսին: Սակայն Չարենցի քնարական հերոսը բուռն տենչում է վայելել կյանքը, սթափ է նայում իրականությանն ու երբեք չի տրվում պատրանքի ինքնախաբեությանը.

Հոգնե՛լ եմ, հոգնե՛լ երազից, մահից,
Անտարբերության վիճակից երեր.
Ուզում եմ զգալ, շոշափել նորից,
Չունենալ երազ, թռիչք ու թևեր[2]:

Նա ուզում է աշխարհն զգալ «որպես քաղցր դող», նա չի կամենում իրեն բեռ անել «հոգու դիակը», նա փառաբանում էԱրևը, Ագնին, Ռան և էգ թռչունի «հուր մարմնի հմայքը դյութող»:

Արևի մեջ միշտ բովանդակվել է մարդկանց երազանքը գեղեցիկ կյանքի մասին: Չարենցի արևապաշտությունն ունի սենիական, ինքնուրույն բովանդակություն: Այն ամենուր է: Իր դստերը՝ Արփենիկ Չարենցին նվիրած ակրոստիքոսներում «անհուն հավատքով» նա դիմում է Արևին՝ որպես աստծու: Իրականում Հայաստանում Արևը եղել է սիրված աստվածներից մեկը, և նրա պաշտամունքը կրել է համահայկական բնույթ: Հելլենիզմի ազդեցությամբ Արևը նույնացվել է հունական Հելիոսի հետ, իսկ հետագայում՝ Տիրի և Միհրի, երբեմն նույնիսկ՝ Վահագնի հետ: Չարենցի արևապաշտությունը նման չէ սիմվոլիստ բանաստեղծների (Սիամանթո, Մ. Մեծարենց…) աղոթքներին: Չարենցի արևապաշտությունը արևի՝ արիության, ուժի, վերածնության ժողովրդական պատկերացումից սնվող մեծ զգացմունք է:

Չարենցի Արևը կյանքի ծաղկման ու հզորության աղբյուր է. «Դեպի Արև՛նէին գնում ամբոխները խելագարված»: Չարենցի Արևը հայ է, պաշտամունքը՝ ազգային: Հնադարյան առասպելները, հոգևոր երգերը, ինչպես նաև ավելի ուշ շրջանում ստեղծված ժողովրդական ավանդությունները վկայում են, որ արևը հայերիս համար եղել է վերածնության, զարթոնքի, հառնումի, ուժի ու արիության խորհրդանշան: Լեոն վկայում է, որ հնդեվրոպացի հայերը իրենց հին հայրենիքից էին բերել արեգակնային աստվածությունը, որ նախապես կոչվում էր Արեգ կամ Արև, իսկ տվնջյան լուսատուն, որ կոչվում էր Արեգակն, ընդունվում էր իբրև այդ աստվածության աչք (արև ակն): Պատմաբանը Արեգ աստծու հոմանիշ է համարում Վահագն աստծուն: Ի դեպ, այս պաշտամունքը շարունակվում է մինչև օրս. հայերս սովորություն ունենք երդվելու իրար արևով:

Արևը մտնում է հաղթանակած բազմությունների երթը՝ խորհրդանշելով նրանց հզոր ապագան.

Հոծ խմբերով հազարանուն, արեգակի հրով վառված՝
Դեպի Արև՛ն էին գնում ամբոխները խելագարված…[3]

[1]Նույնտեղում, էջ 224:

[2]ԵղիշեՉարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր. 1984, էջ 249:

[3]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 94:

Արևապաշտության թեման շարունակվում է նաև «Ողջակիզվող կրակ» շարքում: Արևը, կրակը, հուրը հանդես են գալիս որպես հոգեկան ազատության խորհրդանիշներ, որպես հարության ակունքներ:

«Իրիկնային» արևը երևում է հեթանոսական տեսիլի կերպարանքով: Սկսվելով Մահից՝ ենթաշարքն ավարտվում է Արևի երկրպագությամբ:

Իսկ ահա «Սոմայում» հեղափոխությունը ներկայացվում է դիցաբանական հերոսի կերպարանափոխության խորհրդապաշտական պատկերով: «Սոման» բանաստեղծի՝ հին աշխարհի դեմ անհուն ատելության և նոր կյանքի նկատմամբ ունեցած խանդավառ սիրո արտահայտությունն է: Առաջին հրատարակության մեջ «Սոման» ենթավերնագրված է՝ «Նոր վեդյան պոեմ» և ունի «Սո՛մա, դու վերջին ազատություն…» բնաբանը: Հայտնի է, որ Սոման ունի բույսից սերված աստվածային խմիչքի հրաշագործ ուժ: Սոմա խմելով՝ իրենց ուժերն են բազմապատկում նախաբուդդայական աստվածները, ինչպես նաև՝ Ինդրան՝ հնդկական արեգակի և ամպրոպի աստվածը: Այդ թունդ խմիչքը պատերազմներից առաջ ռազմիկներին ուժ ու կորով էր տալիս: Այն օգտագործում էին նաև ծիսակատարությունների ժամանակ: Նրան անվանում են աշխարհի տիրակալ, աստվածների աստված, կենարար ուժի կրող, երկնային, ինչը միանգամայն համապատասխանում է այն զգացողություններին, որ առաջացնում է թմրադեղը: Չարենցը գիտեր, թե ինչ է Սոման, երբ նրան «քաղցր քույր» էր անվանում (խմիչքն իրոք քաղցր էր՝ բառի ուղիղ և հատկապես փոխաբերական առումներով, իսկ Չարենցը նման խմիչքներից շատ լավ էր հասկանում):

Սոման ունի նաև սրբազան կրակի՝ Ագնու հատկություն: Նա աստվածն է սրբության ու մաքրացման, նա հավերժական նախասկիզբն է ազատության, մի ազատության, որ Չարենցի գրչի տակ դառնում է երկնային քույր, սուրբ բույս, արև, կրակ, հուր, բոց, հրդեհ, Ագնի, սրբազան խմիչք… Չարենցի Սոման աշխարհը ցնցող հրդեհ է, բոցավառված սեր, ոգևորության գինի, արշալույսների անարատ արգանդ, ազատության սրբազան հարս… «Քաղցր քույրը» փոխակերպվում է փոթորկվող կրակ-հրդեհի, Ագնիի, նա դառնում է արբեցնող խմիչք, ազատության խորհրդանիշ, մրրկաշունչ բոց…

Հայտնի է, որ Վահագնը ծնվել է կարմիր եղեգնիկից: Ագնին, իբրև կայծակի, կրակի աստվածություն, ծնվում է բույսերից: Մ. Աբեղյանը բերում է Ռիգվեդայի հետևյալ բացատրությունը. «Բույսերը կանոնավոր երևացողին՝ Ագնիին իրենց մեջ են առել իբրև սաղմ. այս Ագնիին ծնեցին մայրական ջրերը, նմանապես ծնում են նրան ծառերն ու խոտերը՝ հավետ հղանալով»[1]:

Սոման, դառնալով համաշխարհային հրդեհի սկիզբը, իր մեջ է առնում նաև հնամյա Նաիրին: «Սոման» Չարենցի հեղափոխական պոեզիայի նախերգանքն է, որին հետևեց «Ամբոխները խելագարված» հերոսական ասքը: Կրակի կերպարը, պոեմի հետագա հատվածներում կենտրոնական տեղ զբաղեցնելով, հարաբերվում է խենթ ամբոխների հետ.

Ամբոխները զրահապատ
Ծափ են զարկում ու պարում,
Ջահ է դարձել ամեն մի մարդ
Կրակապատ աշխարհում:

Ու պար բռնած ու խելագար
Ե՛րգ ենք ասում կրակին –
Ու վառվում է աշխարհը քար
Մրրիկներում կրակի[2]:

[1]ՄանուկԱբեղյան, Երկեր, հ. Ա, Եր. 1966, էջ 79:

[2]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 2, Եր. 1963, էջ 76:

Կարելի է ենթադրել, որ Չարենցը պոեմը մտահղացել է իբրև ժողովրդի հզոր ուժի մասին պատմող դյուցազնավեպ, որ ներշնչվել է նաև «Սասունցի Դավիթ» Էպոսից: Բանաստեղծն իր ողջույնն է հղում «Հեռու՛, մոտիկ ընկերներին,–աշխարհներին, արևներին…»: Սա նման է հայ ժողովրդական վեպի ավանդական «զօղորմիներին»:

Անցած դարի 10-ական թվականներին տարածված սյուժե էր նաև Ծամիրամի թեման: Ասորական դիցաբանական թագուհու կերպարի միջոցով սերն արտահայտելու փորձ էր Չարենցի «Ծամիրամ» բանաստեղծությունը: Իսկ ահա այլաբանություն է նույնանուն բալլադը: Առասպելի կերպարների միջոցով բանաստեղծը ներկայացնում է ժամանակակից իրականության հոգևոր աղքատությունն ու բարոյական քայքայումը: Այստեղ առավել ընդգծվում են հեթանոսական հնադարի մարդկանց հերոսական գծերն ու բարոյական բարձր հատկանիշները, նրանց անսայթաքիայրենասիրությունն ու հոգեկան գեղեցկությունը: Իսկ «Արքաների համար նոր – բավական է մի ժպիտ»[1]:

Արա Գեղեցիկի պաշտամունքին է աղերսվում Ադոնիսի մասին առասպելը: Վերջինս հին շատ կրոններում համարվում է մեռնող և հարություն առնող աստվածություն (Ադոնիս նշանակում է հազվադեպ գեղեցկության տղամարդ): 1937 թվականի հունիսին Չարենցը գրում է «Իմ Ադոնիսին» բանաստեղծությունը, որը, ինչպես բանաստեղծի մի շարք այլ գործեր, վիճաբանությունների տեղիք է տալիս: Նույն ժամանակում է գրել նաև «Արուսին–մենակ» ստեղծագործությունը, որտեղ Արուսի նկատմամբ իր սերն անվանում է «ադոնիսյան», իսկ գործն ավարտում է այսպես.

Նրան գրկած՝ ես երազել եմ լուսե
Ադոնիսի բարակ մարմինն արևե...[2]

Մեկ այլ սևագրության մեջ Չարենցն Արուսին կոչում է Մելպոմենեի ամենափայլուն աստղ: Հունական դիցաբանության մեջ Մելպոմենեն ողբերգության մուսան է, այլաբանորեն նշանակում է՝ ընդհանրապես թատրոն կամ ողբերգության բեմական մարմնավորում: Սևագրությունն ունի հետևյալ գրությունը. «Նվիրում եմ իրեն՝ Արուսին՝ նրա հանճարով ու հրով ներշնչված այս պոեմը՝ հայկական Մելպոմենեի տաճարի չքնաղագույն և արևահամ դիցուհու – նու՛յն Արուսի մասին...»[3]:

Չարենցի ստեղծագործության մի շատ հետաքրքիր ու բեղմնավոր շրջան սկսվում է «Էպիքական լուսաբաց»-ով: Բանաստեղծն ավելի հասուն է ու իմաստնացած, քանի որ «Իմաստուն բուն Միներվայի» թառել է նրա գլխի վրա: Հին Հռոմում Միներվային նույնացնում էին Աթենասի հետ: Միներվան համարվում էր արհեստների, գիտության և արվեստների հովանավոր: Իմաստության ու գեղեցկության գերագույն դիցուհուն՝ Աթենաս-Պալասին, որպես Զևսի աստվածային գլխից ծնված, Չարենցը հիշում է նաև «Երկիր Նաիրի» վեպում:

Կյանքի չափազանց դժվարին, մահահոտ ու ոգեպահանջ ժամանակներում Չարենցը գրել է իր «ամենաչքնաղ երկը»՝ «Նավզիկեն»: 1930-ական թվականների մոձավանջի մեջ Չարենցն իր Նավզիկեին էր որոնում: Ժամանակի քաղաքական փոթորիկները խորտակել էին Չարենցի նավը: Ոդիսևսի նման նա ևս մահվան օրհասական տագնապների մեջ էր, բայց նրա Նավզիկեն այդպես էլ չհայտնվեց, և նա, իր երազանքների հանգրվանին չհասած, մահացավ բանտում: Քնարական պոեմում բացահայտվում է Չարենցի՝ որոնողի ու թափառողի փոփոխական կերպարը: Բանաստեղծը խորհրդածում է ամբողջ կյանքում իր որոնած և այդպես էլ չգտած Նավզիկեի մասին, որ նայադների նման անվերջ կանչում ու կանչում է (ինչպես տեսանք վերոնշյալ տողերում, Չարենցը նայադներ է անվանում նաև Վահագնի հրավարս հարսներին, որոնք, բացի նիմֆաներ (ջրահարսեր) լինելուց, առնչվում

[1]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 1, Եր. 1962, էջ 207:

[2]ԵղիշեՉարենց, Գիրքմնացորդաց, Անտիպժառանգություն, Եր., Նաիրի, 2012, էջ 65:

[3]Նույնտեղում, էջ 276:

էին երգի ու պոեզիայի հետ): Կարոտների կանչին ունկնդիր՝ նա այդպես էլ ավարտում է պոեմը.

Եվ կկանչեն նրանք, մինչև անշընչացած՝
Վայրկյաններիս վերջին երազի մեջ՝
Ինձ համբուրե իբրև իր Ուլիսին տենչած՝
Վերջին շնչիս կառչած իմ Նավզիկեն…[1]

Չարենցի կանայք երկրային էին, հրապուրիչ: «Նավզիկե»-ում բոլոր կանանց կերպարները ամբողջացված են մի կնոջ մեջ՝ անհասանելի, առեղծված, կրակ, երազանք, անընդհատ փոփոխվող, մերթ աղջնակի նման, մերթ՝ եգիպտուհու, մերթ՝ որպես արվեստի գլուխգործոց: Փոփոխվող են նաև նրան ձգտող տղամարդու իղձերը: Նավզիկեի կերպարին Չարենցն անդրադարձել է նաև մոտալուտ մահվան զգացողությամբ գրած «մայրամուտի» երգերում (1936.10.XII, Երևան): Այդ դժոխաթավալ ու մշտագիշեր օրերին Չարենցը որոնում էր իր փրկչին՝ Նավզիկեին:

Պ. Սևակը Չարենցին համեմատում է Հերակլեսի հետ, որի ամենամեծ սխրագործությունը հին հույները համարում էին ավգյան ախոռների մաքրումը: «Բանաստեղծությանը մատուցած նրա բոլոր ծառայությունների մեջ էլ մեծագույնը նույնն է, ինչ Հերակլեսինը»[2], – ասում է գրողը: Իսկ Չարենցն իրեն համեմատում է Կորնթոսի թագավոր Սիզիֆոսի հետ, ով աստվածների կողմից դատապարտված էր դժոխքում մի ծանր քար գլորելով լեռան գագաթը բարձրացնելու, որտեղից, սակայն, քարը ներքև էր գլորվում ու այսպես շարունակ: 1929 թվականին «Թուղթ Ակսել Բակունցին, գրված Լենինգրադից» բանաստեղծության մեջ Չարենցը գրում է.

Վայե՞լ է մեզ լինել անինքնուրույն, անդեմ,
Եվ օրերում վատնել մեզ տրված գանձը զուր,
Ինչպես վատնել է այն ճորտը լեգենդական[3]:

Ապա 1934 թվականին իր դիստիքոսներից մեկում ավելացնում է.

Դու ձգտում էիր դաշնության, երբ անդա՛շն էր շուրջդ կյանքը. –
Այս է ահա, որ հնում – սիզիփյան աշխատանք են կոչել[4]:

«Հերոսի հարսանիքը» չափածո դրամայում Չարենցը հիշատակում է Տրոյայի հերոսներ Աքիլլեսին ու Հեկտորին, իսկ «Աքիլլե՞ս, թե՞ Պյերո» ինտերմեդիայում այս շարքը համալրում են Պատրոկլեսն ու Այաքսը:

Հունա-հռոմեական աստվածները տեղ են գտել Չարենցի ոչ միայն չափածո, այլև արձակ ստեղծագործությունների մեջ: «Երկիր Նաիրի» վեպում մենք հանդիպում ենք բժիշկ պ. Սերգե Կասպարիչի՝ «Լեդայի գեղեցկություն ունեցող մանկահասակ» կնոջը: Վեպում հիշատակվում է նաև աստվածուհի Մայայի անունը, որ հայտնի է հնդկական դիցաբանության մեջ, ձիերը համեմատվում են քարացած նեոբենների հետ (Հունական դիցաբանության մեջ Նեոբեն տասներկու զավակներից զրկված մայր է՝ կերպարանափոխված արցունք թափող քարի):

Վկայակոչելով Չարենցի հեթանոսական պանթեոնը՝ ամենևին չի կարելի ժխտել նրա ստեղծագործության քրիստոնեական երանգները: 1920 թվականի հոկտեմբերի 6-ին Չարենցը

[1]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 3, Եր. 1987, էջ 313:

[2]Պ. Սևակ, «ԵղիշեՉարենցըևարդիականությունը» (Պ. ՍևակիզեկույցըԵ. Չարենցիծննդյան 70-ամյակիառթիվ), սեպտեմբեր, 1967 թ.:

[3]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 4, Եր. 1968, էջ 36:

[4]ԵղիշեՉարենց, Երկերիժողովածու, հ. 4, Եր. 1968, էջ 420:

գրեց «Մահվան տեսիլը», որտեղ նա պատրաստ է տալու պարանոցը «կարոտին այն երկնուղեշ», եթե միայն այդ զոհողությամբ հնարավոր լինի Հայաստանը փրկել կործանումից: Ինքնազոհաբերման այս տարրը բանաստեղծությանը բարոյական ու քրիստոնեական լիցք է հաղորդում:

Կյանքի վերջին տարիներին բանաստեղծի հոգում պայքար էր տիրում: 1936 թվականի հոկտեմբերի 25-ին գրված «Վերջին աղոթք»-ում նա դիմում է տիրոջը.

Տե՛ր իմ, – էությու՛ն իմ, – հարազատ իմ – այսինքն՝
Ա՛յն, որ չունեմ կյանքում և չեմ ունեցել…[1]

Ապա և ավելացնում է. «Զե՞ս զարմանում, Տե՛ր իմ, որ ես դիմում եմ քեզ» կամ «Տարօրինա՞կ է, չէ՞, որ ես դիմում եմ քեզ»: Սակայն արդեն դեկտեմբերին գրված «Տետրապտիքոս»-ում, որի վերնագիրն ուղղակիորեն փոխառված է Նարեկացուց՝ «Ի խորոց սրտի խոսք ընդ աստուծո», թվում է, թե Չարենցը վերադարձել է քրիստոնեական հավատքի հանգրվանին:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր հավաքական ճանաչողության հեղինակներն ու կերպարները, որոնք մատնանշում են, թե ինչպես է նա գնահատում իրեն: Մարգարե էր և Մ. Սարյանը, ով Չարենցին պատկերած կտավի կապույտ ֆոնի վրա եգիպտական դիմակ է դրել: «Մի տեսակ խորհրդավոր զորություն ունի դիմակը, – գրում է Սարյանը, – ամենաանարտահայտելի բանը կարելի է նրա միջոցով արտահայտել»[2]: Հանճարեղ նկարիչն այն դիտում է որպես ճակատագրի, հավերժանալու մարդկային ձգտման խորհրդանիշ:

Գրականություն

1. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հհ. 1-4, Եր., 1962-1968:
2. Եղիշե Չարենց, Երկերի ժողովածու, հ. 3, Եր., 1987:
3. Եղիշե Չարենց, Պոեմներ, բանաստեղծություններ, Եր., 1984:
4. Եղիշե Չարենց, Նորահայտ էջեր, Եր., 1996:
5. Ա. Ճարուրյան, Դ. Վարուժանի կյանքի և ստեղծագործության տարեգրություն, Եր., 1984:
6. Դ. Վարուժան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Եր., 1986:
7. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա, Եր., 1966:
8. Եղիշե Չարենց, Գիրք մնացորդաց, Անտիպ ժառանգություն, Եր., «Նաիրի», 2012:
9. Եղիշե Չարենց, Անտիպ և չհավաքված երկեր, Եր., 1983:
10. Հուշեր Եղիշե Չարենցի մասին, Ժողովածու, կազմ.՝ Ե. Հովհաննիսյան, Եր., 1986:
11. https://hy.wikisource.org:
12. https ://hy.wikipedia.org:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Անի Շիրինյան- ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ
e-mail: shirinyanani@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

[1]ԵղիշեՉարենց, Անտիպևչհավաքվածերկեր, Եր., 1983, էջ 189:

[2]ՀուշերԵղիշեՉարենցիմասին: Ժողովածու: Կազմ.՝Ե. Հովհաննիսյան, Եր. 1986, էջ179:

Ժ.01.00 Գրականություն

ԱՆՀԱՏԻ ԵՐԿԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ Պ.ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ, «ԿԼՈԴ ՌՈԲԵՐՏ ԻԶԵՐԼԻ» ՎԵՊՈՒՄ

Արտակ ՂՈՒԼՅԱՆ, Համլետ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *ռոմանտիզմ, ազատություն, անհատ, հասարակություն, երկատում, երկաշխարհություն, երկվություն, նմանակ, շրջանակ, ներաշխարհ, ֆանտազիա, իրականություն:*

Ключевые слова: *романтизм, свобода, личность, общество, раздвоение, двоемирие, двойственность, двойник, рамка, внутренний мир, фантазия, реальность.*

Key words: *romanticism, freedom, individual, society, split personality, dual reality, duality, doubleganger, frame, inner world, fantasy, reality:*

А.Гулян, Г.Мартиросян

ПРОБЛЕМА РАЗДВОЕНИЯ ЛИЧНОСТИ В РОМАНЕ ПЕРЧА ЗЕЙТУНЦЯНА «КЛОД РОБЕРТ ИЗЕРЛИ»

Тема дуализма нашло свое отражение еще в древних мифах, сказках и других жанрах фольклора. В поэзии, однако, этот феномен первый раз нашел свое уникальное художественное воплащение в творчестве великого армянского мыслителья Григора Нарекаци, в частности, в Книге скорбных песнопений. Позже двойник (двойники) стал главным героем у представителей романтизма.

В армянской литературе использованиа принцип сходства мировоззрений двойников в большом количестве можно встретить в творчестве яркого представителя поколения 60-х П.Зейтунцяна. Его роман „Клод Роберт Изерли'' тоже построен на мотиве двойничества.

A.Ghulyan, H.Martirosyan

THE PROBLEM OF SPLIT PERSONALITY IN «KLOD ROBERT IZERLY» BY PERCH ZEYTUNTCYAN

The theme of duality found its reflection even in the ancient myhts, tales end other genres of folklore. But in poetry, this phenomenon first fund its unique artistic expression in the works of the great Armenian thiker Grigor Narekatsi, particular in his poem The Book of Lamentations.Later a „double'' must have become the protagonist in the writings of the upresentatives of Romanticism.

In Armenian literature the un of the principle of similiarity of worldriens can be largely found in the creations of the bright uprepresantive of the 60s Perch Zeytountsiants. His novel Klode Robert Izerli is also written on the theme of duality.

Նմանակի, երկաշխարհության մոտիվները արտացոլվել են հին առասպելներում, հեքիաթներում, բանահյուսության այլ ժանրերում: Ֆենոմենը, սակայն, առաջին անգամ չափածո խոսքում գեղարվեստական բացառիկ մարմնավորում ստացավ հայ մեծ մտածող Գ. Նարեկացու ստեղծագործությունում, մասնավորապես «Մատյան ողբերգության» պոեմում, իսկ հետագայում պետք է դառնար ռոմանտիզմի ներկայացուցիչների ստեղծագործության գլխավոր հերոսը: Հայ գրականության մեջ նմանակների տարբեր կերպարների (որոնք առանձնացվում են աշխարհատեսության ընդհանրությունների սկզբունքներով) առավել հաճախ հանդիպում ենք 60-ականների վառ ներկայացուցիչ Պ. Զեյթունցյանի արձակում: Նրա «Կլոդ Ռոբերտ Իզերլի» վեպը նույնպես կառուցված է երկատված անհատի մոտիվի հենքի վրա:

Երկատված մարդու գիտակցության երկվության հիմնահարցը դարեր շարունակ հուզել է ոչ միայն հոգեբաններին, այլև փիլիսոփաներին, գրողներին, նկարիչներին:

Մարդկային հակասական բնության և տիեզերքի բազմաշերտ համակարգի մասին պատկերացումները մարմնավորվել են դեռևս միֆերում և բանահյուսության մեջ, մասնավորապես դուալիստական միֆերում, որոնք արտացոլում են երկու հակադիր նախասկիզբների գոյությունն ու անհամատեղելիությունը (երկու հերոս, որոնցից մեկը մարմնավորում է դրականը, գեղեցիկը, իսկ երկրորդը՝ բացասականը, այլանդակը. վերջինս քանդում է իր դրականի ստեղծածը, թշնամին է ամեն տեսակ գեղեցիկի ու վեհի) [1]:

Հին ժամանակներից սկսած այդ հիմնախնդիրը քննարկման առարկա է եղել նաև գրողների համար, որոնք իրենց գործերում ստեղծում էին երկաշխարհության և նմանակների կերպարներ: Գրականագիտության մեջ ընդունված է համարել, որ այս ֆենոմենը փիլիսոփայական-գեղագիտական տեսանկյունից ամենայն խորությամբ սկսեց գիտակցվել հենց ռոմանտիզմի շրջանում,

հատկապես գերմանական ռոմանտիզմի այնպիսի վառ ներկայացուցչի ստեղծագործական ժառանգությունում, որպիսին Է.Հոֆմանն է [2]: Մինչդեռ տեղին է նկատել, որ նույն երկատված անհատի կերպարը ռոմանտիզմի գրականությունից շուրջ 8 դար առաջ արդեն կերտել էր հայ հանճարեղ մտածող Գրիգոր Նարեկացին, մասնավորապես բոլոր ժամանակների գլուխգործոց համարվող «Մատյան ողբերգություն»-ում:

«Ժամանակի մեծերի ողբերգության ակունքներից մեկն էլ աշխարհի երկատվածության գիտակցումն է: Այն տարածվում է բնության, հասարակության ու անհատի վրա»- գրել է Ս.Մխիթարյանը իր՝ «Մարդու կատարելության պահանջը Գրիգոր Նարեկացու մատյանում» հոդվածում [4]:

Երկու ըմպանակ ունի ձեռքերում,
Մեկն արյունով լի, մյուսը՝ կաթով.
Երկու բուրվառներ կայծակնացնցուղ,
Մեկը՝ խնկաբույր, մեկը՝ ճենճահոտ.
Անոթներ, երկու համեմունք կրող,
Մեկը՝ քաղցրություն, մեկը՝ դառնություն.
Զույգ բաժա՛կ, երկու պարունակությամբ,
Մեկը՝ արտասուք, մյուսը՝ ծծումբ.
Գավաթներ, բռնած մատների ծայրով,
Մեկի մեջ՝ գինի, մյուսում՝ լեղի:
Տեսնում է բացված զույգ ներհակ դռներ,
Մեկը՝ դեպի լաց, մեկը՝ վրիպում.
Հակառակագործ երկու հոգոցներ,
Մեկն արծարծում է, մյուսը՝ շիջում.
Աչքերի խոժոռ հայացք երկդիմի,
Մեկն՝ անզգալի, չնչին ողոքմամբ,
Մյուսը՝ ցասմամբ, ժանտ ու անողորմ.
Բարձրացած երկու ահեղ բազուկներ,
Մեկն՝ հարվածելու,
Մեկը՝ մերժելու.
Մի դեմք, երկակի արտահայտությամբ՝
Տխուր ու ցասկոտ… (ԲԱՆ Լ, էջ 206)

Նարեկացուն՝ որպես իր պոեմի քնարական հերոսի, երկատված մարդու հոգեվիճակը ստիպել է միշտ լինել ելք գտնելու տաժանակիր որոնումների մեջ:

Նիրհում եմ՝ մինչդեռ արթուն եմ,
Թմրում եմ՝ մինչդեռ զգաստ եմ երեւում,
Բարեպաշտությանս մեջ գայթակղվում եմ,
Եվ վրիպում՝ մինչդեռ աղոթում եմ,
Ընթանալիս՝ հանկարծ կանգ եմ առնում,
Հազիվ արդարացած՝ մեղանչում եմ,
Ու դեռ նոր խաղաղված՝ վրդովվում դարձյալ,
Մինչդեռ արշավում եմ առաջ՝ դեպի ետ եմ հակամիտում,
Ու քայլելիս՝ կրունկիս վրա դառնում եմ ետ,
Լույսի հետ՝ մի մաս խավար եմ կցում,
Օշինդր եմ խառնում քաղցր համի հետ,
Բարիքների կուղի հետ ե՛վ չարիքներ եմ հյուսում,
Հազիվ կանգնած՝ կրկին գլորւում եմ,
Ծաղկում եմ ու չեմ տալիս պտուղ,
Ասում եմ ու չեմ գործադրում,
Խոստանում եմ ու չեմ կատարում,
Ուխտում եմ ու չեմ վճարում… (ԲԱՆ ՀԱ, էջ 489)

Եվ նման բազմաթիվ հատվածներ կարելի է մեջբերել «Նարեկ»-ից, որոնք վկայում են ռոմանտիկներից դարեր առաջ հայ գրականության մեջ երկաշխարհության և երկվության մոտիվի հիմքի վրա կառուցված գեղարվեստական կատարյալ ստեղծագործության առկայության մասին: Ինչ վերաբերում է ռոմանտիզմի գրականության մեջ երկատված անհատին գլխավոր հերոս դարձնելուն,

ապա դա բացատրվում է առաջին հերթին նրանով, որ ֆրանսիական հեղափոխությունից հետո արվեստի առջև նոր խնդիր էր դրվել. անհրաժեշտ էր արտացոլել մարդու լինելության հարցը ամբողջությամբ, իր ողջ հմայքով: Քննության առարկան դարձավ անհատը: Ըստ ռոմանտիկների՝ անհատը իր օրենքները թեև ինքն էր պարտադրում իրականությանը, սակայն ամենուր հանդիպում էր հակազդեցության: Եվ հենց այս հակազդեցություն-հակասականության մեջ էլ ծնվում է օբյեկտիվի և սուբյեկտիվի բախումը. սեփական օրենքներով ապրող գրողի անսահմանափակ հնարավորություններ, որոնք անընդհատ բախվում են իրական կյանքում առկա պայմաններին: Ահա այստեղից է սկսվում աշխարհի յուրօրինակ երկատումը իսկապես գոյություն ունեցողի՝ իրականի ու ռոմանտիկ հերոսի գիտակցության մեջ՝ անուրջների աշխարհում գոյություն ունեցող անիրականի, ֆանտաստիկի միջև [5]: Ռոմանտիկները չէին ճանաչում օբյեկտիվ իրականության պարտադրած պայմանները և «պաշտպանվում էին» նրանից փախուստով դեպի սեփական երևակայությամբ ստեղծած իրենց ֆանտազիաների աշխարհ:

Մի խոսքով, երկաշխարհության գաղափարը հանգեցրեց անհատի երկատմանը. հերոսը անզոր էր դիմադրելու իրականության ճնշմանը, և, տեղի տալով, փլուզվում է իբրև ամբողջականություն, տրոհվում է մասերի (հիմնականում երկու մասի), որոնք սկսում են փոխադարձ պայքար մղել:

Հին միֆերից մինչև XX դար երկատման մոտիվն անցել է զարգացման երկար ճանապարհ՝ ժամանակի ընթացքում հարստացնելով նմանակների կերպարների ստեղծման գեղարվեստական տարատեսակ հնարներն ու հոգեբանական մոտեցումները: Եվ, ինչպես նախորդ դարերում, XX դարի գրականության քննության առարկան կրկին անհատն էր՝ իրականության դեմ իր հավերժական պայքարով: Ինչպես իրավացիորեն նկատել է գրականագետ Հրաչյա Սարիբեկյանը «XX դարի գրականության ամենատիպական կերպարը թերևս հասարակությունից մեկուսացված, օտարված ու ներամփոփ, արտաքին աշխարհի հանդեպ փակված մարդն է: Սակայն մարդը օտարվում է արտաքին աշխարհի և հասարակության հետ հաղորդակցման և կապի խզման պատճառով: …Այսպես հաղորդակցման ամենաանհրաժեշտ պայմանը և միջոցը լեզվական հաղորդակցումն է, սակայն ժամանակակից մարդու օտարման ու ինքնամեկուսացման օրեցօր աճող երևույթի համար լեզվական հաղորդակցման խզումը, որպես մարդու մեկուսացման պատճառ կարող է մնալ միայն երևույթի հիմնական էությունը բացատրելու հավակնությունից հեռու մասնավոր դեպք» [6]:

Երկատված անհատին ստեղծագործության հերոս դարձնելու գործում Նարեկացին հայ գրականության մեջ եզակի չէ: Հայ գրողներից շատերն են այս ֆենոմենին անդրադարձել, բայց այն առավել մեծ տարածում գտավ հատկապես հայ ռոմանտիկների գործերում, որոնք տուրք տալով եվրոպական ռոմանտիզմի ավանդույթներին՝ հայ գրականության մեջ ստեղծեցին նմանակի նոր կերպարը: Հոֆմանի ազդեցությունը առանձնապես ընդգծվում է հայ սիմվոլիստների, մասնավորապես Լևոն Շանթի ստեղծագործություններում: Փայլուն վկայությունը՝ «Հին աստվածներ»դրաման, որտեղ գործողությունները սկզբից մինչև վերջ զարգանում են երկու տարբեր աշխարհներում [7]: Հասարակությունից օտարված և տարբեր աշխարհներում ապրող անհատին գրականության հերոս են դարձրել նաև նոր և նորագույն շրջանի հայ գրականության բազմաթիվ ներկայացուցիչներ, սակայն նորարարության, նմանակի կերպարի կերտման գեղարվեստական հնարների յուրահատկությունների տեսանկյունից առանձնանում է Պերճ Զեյթունցյանի արձակը: Այս համատեքստում տեղին է առանձնացնել նրա «Կլոդ Ռոբերտ Իգերլի» [8] վեպը, որը տաղանդաշատ գրողի՝ երկատված հերոսի քննության թերևս առաջին, բայց և հաջողված փորձերից է:

Վեպը լույս տեսավ 1968 թ: Ուշագրավ է, որ երկը՝ չնայած յուրօրինակության ու արծարծված թեմայի արդիականությանը, բազմաթիվ լեզուներով թարգմանվելուն (լիտվերեն, ռուսերեն, բուլղարերեն և այլն), երկար ժամանակ «անարձագանք» մնաց: «Ես անդրադառնում եմ այս վեպին, որի գրական ճակատագիրն ինչ-որ տեղ նույնիսկ անհանգստության տեղիք է տալիս… Սա բարդ ստեղծագործություն է և իր այդ բարդության մեջ՝ մի փոքր անսովոր, հետաքրքիր իր գեղարվեստական ստրուկտուրայով, գրական մտածողությամբ, և առաջին հայացքից կարող է դասական ավանդներից հեռու թվալ», -գրել է գրականագետ Ար.Գրիգորյանը [9]: Իսկ Ս. Սարինյանի հետ երկխոսության մեջ, անդրադառնալով հայ վեպի ներկա վիճակին, նրանում համամարդկայինի ու համաշխարհայինի բեկման պրոբլեմին, Հր.Մաթևոսյանը անդրադառնում է նաև Պերճ Զեյթունցյանի արձակին, մասնավորապես Կլոդ «Ռոբերտ Իգերլի» վեպին. «Պերճ Զեյթունցյանը ոչ դիլետանտ է, ոչ էլ մանավանդ նմանարկող: Իր սերնդի մեջ Զեյթունցյանը թերևս ամենաներգրական արձակագիրն է, բայց նրա «Կլոդ Ռոբերտ Իգելին» ստիլիզացիա է՝ այն պարզ պատճառով, որ վերցված իրականությունը հեղինակին ներկայացել է կենսական դիմադրություններից զրկված վիճակում: Այդ իրականության մեջ արդեն չի եղել այն երկրորդական-անհրաժեշտը, այն ավելորդը, այն անտեղին, ինչը գուցե չներմուծվեր էլ վեպ, բայց հեղինակի մեջ ուղնուծուծ էր լինելու» [10]: Մինչդեռ Ս. Սարինյանի

համոզմամբ, Կլոդ Իգերլիի պրոբլեմը, որը՝ համաշխարհային պրոբլեմ է և արտացոլում է խղճի բախումը 20-րդ դարի կատաստրոֆիկ իրադարձություններին, «նրա էթիկական-փիլիսոփայական մեկնակետը կարող է զբաղեցնել նաև հայ գրողին», բայց, եթե Զեյթունցյանը «երկի փիլիսոփայական և հոգեբանական նստվածքները շաղախեր հայ ժողովրդի պատմական ճակատագրի փորձով, այսինքն համաշխարհայինն ու համամարդկայինը բեկեր ազգային հոգեբանության մեջ, թերևս չէր լինի այն խզումը, որ առկա է ձևի պայմանականության և մտադրույթի գեղարվեստական լուծման մեջ» [11]:

Այնուհետև վեպին անդրադարձան շատերը, տարբեր տեսանկյուններից և տարբեր հարթությունների վրա դիտարկելով այն գրելու շարժառիթները, վեպում անհատի հիմնախնդիրն ու դրա լուծման գեղեցկյանական հնարքները, սակայն թերևս ոչ բոլորը նկատեցին կամ չցանկացան նկատել մի շատ կարևոր հանգամանք՝ այն նորարարությունը, թարմությունը, որ այս ստեղծագործությամբ պիտի բերեր Զեյթունցյանը հայ գրականության մեջ: «Պերճ Զեյթունցյանը «առօրյա հոգսերը» թողած, ինչու՞ անդրադարձավ այդ խնդրին,-գրում է Ֆ.Մելոյանը,- ինչպե՞ս հղացավ իր վեպը. թեման ինքնին հետաքրքրի՞ր է, թե՞ «դարիս ցնցող ողբերգությունը» նյութի մատուցման նոր ձևերի, նոր արտահայտչամիջոցների օգտագործման հնարավորություններ էր ընձեռում» [12]: Իսկ ըստ Հ. Մարգարյանի, պատճառը պայմանավորված էր նյութի թելադրանքով: «Խնդիրն այն է,- «Ժամանակակից վեպը» հոդվածում գրում է գրականագետը,- որ սկսած «Կլոդ Ռոբերտ Իգերլի» վեպից՝ հեղինակը ձեռնամուխ եղավ միջազգային ներկա իրադրությամբ պայմանավորված մի շարք էական պրոբլեմների մշակման: Նրա ստեղծագործությունները ստացան քաղաքական ընդգծված հնչեղություն» [13]:

Մինչդեռ հենց «Կլոդ Ռոբերտ Իգերլիով» Զեյթունցյանի ստեղծագործության մեջ պիտի սկիզբ դրվեր երկատված հերոսի հոգեվերլուծությանը: Այս մոտիվը նորություն էր շատերի համար և դա է պատճառը, որ Զեյթունցյանի այս շրջանի ստեղծագործությունը սկսեց գնահատվել նույնիսկ որպես աբսուրդ: «**Աբսուրդը** չի կարելի թարգմանել **անհեթեթություն**,-արդարացիորեն նկատել է Ն.Ադալյանը,-այն անթարգմանելի է. դա քաոսն է, որը յուրաքանչյուր ակնթարթ պետք է վերահսկվի տրամաբանող մտքի կողմից թերևս ավելի զգաստ կերպով, քան ուրիշ շատ ու տարբեր դեպքերում: Սրա մեջ է ինքնահաստատումը, որ նկարագրված նյութը դարձնում է, այնուամենայնիվ, հասկանալի ու ամբողջական» [14]:

Ով էր Կլոդ Ռոբերտ Իգերլին և ինչու էր հենց նրան ընտրել որպես գլխավոր հերոս: Առաջին հայացքից մի սովորական զինվոր, որ բազմաթիվ իր նմանների պես անմիջականորեն մասնակցություն էր ունեցել հարյուր հազարավոր մարդկանց սպանության մեջ, բայց պարզապես բացառիկներից, որ ճանաչում են իրենց մեղքը: Ավելի քան 200 հազար անմեղ մարդկանց սպանության մեջ իր մասնակցության համար պատասխանատվության գիտակցումն է, որ Իգերլին հրաժարվում է կանգնել ամերիկացի ժողովրդի առջև իբրև ազգային հերոս:

«Ես այն մայորն եմ,- իր մասին գրել է Իգերլին,- որ հրաման արձակեց ռումբ գցել Հիրոսիմայի վրա... Ես չկարողացա մոռանալ այդ արարքը, որն ինձ պատճառեց դաժան տանջանքներ, որովհետև գիտակցում եմ մեղքս» [15]: Այստեղ գրողը հիանալի վարպետությամբ նկարագրում է հերոսի երկվությունը, երկատված բնությունը, այստեղից է սկսվում հերոսի ողբերգությունը: Իգերլին ցանկանում է, որ իր գործած մեղքը հասարակությունը նույնպես ճանաչի և դատապարտի, մինչդեռ դեպքերի զարգացումը արդեն հուշում է դրա անհնարինության մասին: Արդյունքում Կլոդ Ռոբերտ Իգերլին հայտարարվում է հոգեկան հիվանդ: Թերևս, այս պարագայում առիթ հանդիսացավ նաև իր՝ երիտասարդ օդաչուի տարօրինակ վարքը. հավատարիմ իր սկզբունքին և ընդդիմանալով հասարակական կեղծ կարծիքին, ցանկանալով իրեն տանջող հիմնահարցերի, տառապանքների վրա հրավիրել շրջապատի ուշադրությունն, այլև հասնելու իր գործած մեղսագործության համընդհանուր ճանաչմանը (հետևաբար և՝ ինչ-որ պատժի)՝ ազգային հերոսը գնում է բոլորովին ուրիշ քայլերի՝ գողություններ, կողոպուտներ, անկարգություններ և այլն: Այս «ճարահատյալ գործողությունների» արդյունքում Ռոբերտ Կլոդ Իգերլին շուտով հայտնվում է բանտում, իսկ կարճ ժամանակ անց՝ հոգեբուժական հոսպիտալում: Եվ չնայած վիեննացի փիլիսոփա Գյունտեր Անդերսի ընվզումներին՝ հղված նամակներին առ միջազգային մամուլ, նախագահ Քենեդի, գործով քննող դատարան, Իգերլիին բուժող բժիշկներ, ինչպես նաև իշխանություններին և հասարակական կազմակերպություններին ուղղված Իգերլիի դիմումներին, այնուամենայնիվ, վերջինս դուրս չգրվեց հոսպիտալներից: Նա այդպես էլ պահվեց այնտեղ որպես »կամավոր հաճախորդ», իսկ իրականում՝ որպես կալանավոր: Զինվորական իշխանությունների նպատակն ակնհայտ էր. Իգերլիին մեկուսացնել հասարակությունից, խանգարել նրան իր համոզմունքներն արտահայտելու, սակայն թաքցնել ճշմարտությունը Կլոդ Ռոբերտ Իգերլիի մասին նրանց չհաջողվեց: «Նրանք շատ ուրախ կլինեին, եթե կարողանային «բերանս փակել»,- գրել է Իգերլին [16]:

Ուշագրավ են նաև կյանքի մասին Իգերլիի մտորումները պառլամենտի անդամ ճապոնացի քահանային գրված նամակում«....ապրել թեկուզև ամենադժվար կյանքով, բայց կատարել իր պարտքը. օգնել բոլոր մարդկանց, լինեն դրանք կարմիր, սպիտակ, սև թե դեղին, ապահովել երջանիկ կյանքով, առանց վախի, առանց աղքատության, առանց տգիտության և ստրկության… Դաժանությունը, ատելությունը, բռնությունը, անարդարությունը երբեք չեն ստեղծի պայծառ ապագա ո՛չ հոգևոր, ո՛չ բարոյական և ո՛չ էլ նյութական: Պայծառ ապագայի միակ ճշմարիտ ճանապարհը ստեղծագործ սերն է, վստահությունը, եղբայրությունը…» [17] :

Զեյթունցյանն այստեղ վարպետորեն իրար է միահյուսել իրականն ու ֆանտաստիկը, պատմականն ու գեղարվեստականը, վավերագրականն ու պայմանականը, ուր միասին գործում են գեղագիտական բազմաբնույթ և բազմազան բնավորությունների տեր հերոսներ՝ Կլոդ Ռոբերտ Իգերլի, նրա հայրը, Լիլի, Գյունտեր Անդերս, Նապոլեոն Բոնապարտ, նախարար Վիլհելմ Իքս, Ատոմային և Ջրածնային ռումբերի Հայրեր և ուրիշներ: «Որքան էլ այդ համատեղումները մի ինչ-որ տեղ խախտում են ոճի միասնությունը,- գրում է Ս. Սարինյանը,- այնուամենայնիվ իբրև փորձ և իբրև իրացում ինքնին գեղարվեստական թարմություն են բերում հայ արձակին: Գրողը փորձում է լուծում տալ հասարակություն և անհատ, հանցանք և պատիժ, բարոյականություն և խիղճ ըմբռնումներին՝ 20-րդ դարի հասկացողությամբ» [18]:

Դժվար ու տաժանակիր է երկատված հերոսի անցած ուղին՝ ազգային հերոսից մինչև «խելագար», դատապարտված մշտական հալածանքի, ուղի, որը ձգվում է սեփական Ես-ի խորապես գիտակցումից մինչև կյանքի իմաստի ճանաչումը: Նա ինքնազննումի, ինչպես նաև հասարակության դեմ պայքարի միջոցով հասնում է ինքնաճանաչման՝ հոգեբանական այդ բարդ գործընթացի արդյունքում դառնալով մարդկային - բարոյական վերածնության հիմքը: Անհատ և հասարակություն, բանական մարդ և մարդ-պտուտակ, մեղքի կոպլեքսի գիտակցմամբ ինքնաճանաչման հասած անհատն ընդդեմ ոճրագործ հասարակության: Ահա այն առանցքը, գաղափարը, որը, գեղարվեստորեն մարմնավորվելով, վերածվում է մի զգաստացնող ճիչի՝ ընդդեմ բռնության ու անարդարության, ընդդեմ մարդու ազատությունն ու անկախությունը շղթայողների: Պետք է նկատել, որ Զեյթունցյանը, ըստ ամենայնի, գտել է կենսական նյութը, որի հենքի վրա էլ կառուցել է ստեղծագործությունը և տվել նրան գեղարվեստական իմաստավորում: Անդրադառնալով կենսական նյութի և գրականության փոխհարաբերությանը՝ Զեյթունցյանը գրում է. «Ինձ թվում է, որ մեր արձակը կենսական նյութի հետ հաճախ կապվում է մի կարճ և ուղիղ գծով. նյութը մինչև գրականություն հասնելը մեծ մասամբ չի իմաստավորվում, փոխակերպման չի ենթարկվում հեղինակի կողմից, չի «հարմարվում» գրողի սեփական տեսանկյանն ու մեկնաբանությանը և, ի վերջո, չի վերածվում պրոբլեմի: Ստացվում է, «կյանք՝ ինչպես որ կա»: Չկա արվեստի մյուս՝ երկրորդ աստիճանը՝ կյանք՝ ինչպես ինքդ ես տեսնում, և հաջորդը, ավելի բարդը՝ ինչպես ես ընկալում կյանքը և ինչ ես մտածում այդ մասին» [19]:

Հիրավի շատ խորն է Զեյթունցյանի հերոսի ճգնաժամը . «Ես կբաժանվեմ: Ես կդառնամ երկու հոգի: Մեկն իմ մեջ, մյուսն ինձանից դուրս: Համլետ և Դոն Կիխոտ»: Իգերլին երկատված է, տրոհված է մասերի: Նրա բազմաթիվ նմանակների կարելի է հանդիպել վեպում, որոնք բոլորը պայքարում են հենց իր դեմ: Օրինակ՝ իրեն սպասարկող ռոբոտները, ճառագայթահարված աղջիկները և այլն: Կատարած հանցանքի, մեղքի, պատասխանատվության զգացումը Իգերլիին ակամա «դարձնում է» Հիրոսիմայի զոհերից մեկը: «Դուք ևս այնպիսի զոհ եք, ինչպիսին և մենք»,-ասում են ճառագայթային ախտով հիվանդ երեսուն աղջիկները, նույնն է ասում նաև Գյունտեր Անդերսը, նույն միտքն է հաստատում նաև Նապոլեոն Բոնապարտը, որը վեպում հանդես է գալիս որպես մի հավաքական խորհրդանիշ՝ իր մեջ ներառելով բոլոր դարերի բռնակալներին և ոճրագործներին՝ Ներոն, Հուլիոս Կեսար, Թալեաթ, Հիտլեր, Ստալին…:

Ի դեպ, Նապոլեոնին որպես բռնակալի պայմանական կերպար ներկայացնելու գործում Զեյթունցյանը առաջինը չէր. Նապոլեոնը նաև Պուշկինի «Դեպի ծովը» բանաստեղծության հերոսներից է, որտեղ նա պատկերվում է որպես անհատի ազատության թշնամու հավաքական կերպար. «Где капля блага, там на страже Уж просвещенье иль тиран» [20].

Զեյթունցյանի վեպում Նապոլեոնը արդարացնում է Իգերլիի ոճրագործությունը՝ բացառելով մարդու ազատությունը, անհատին ընդհանրապես. «Դու կատարող ես… քեզ ոչ ոք իրավունք չունի մեղադրելու: *Դու ինքդ էլ չունես* (ընդգծումը՝ Ա.Ղ): …Եթե յուրաքանչյուր կատարող մտածի, աշխարհում ոչինչ չի կատարվի» [21]:

Հիրավի, որքան ուժգնանում է «հասարակության» ճնշումը, այնքան ավելի շոշափելի է դառնում անհատի երկատման խնդիրը, և ներաշխարհում անընդհատ բորբոքվող հոգեբանական ճգնաժամը հետզհետե մղում է ինքնասպանության, ինչը, սակայն, կանխվում է Անդերսի նամակի շնորհիվ:

Վեպում Իգերլիի գլխավոր նմանակը Զո Սթիբորիքն է: Նա վերջում խոստովանում է իր անզորությունը փառքի ճանապարհին. «Ճիշտ է, Բոբ, բայց ես վախկոտ եմ: Հասկացիր, դու

պարտավոր ես հասկանալ, որ ես վախկոտ եմ: Ես ուզում եմ լավ ապրել …Փառքն ինձ դուր է գալիս… Մի՛ մեղադրիր, Բոբ… Աշխատի՛ր հասկանալ… Չէ՞ որ այս բոլորը… մարդկային բաներ են… Ես չեմ առարկում, քո արածն էլ է մարդկային… Ես նույնիսկ նախանձում եմ քեզ, բայց… Ինձ երբեմն դուր է գալիս, որ ես մենակ եմ մնալու… Ես սոսկում եմ այդ ստոր մտքից… Ես ինձանից եմ վախենում… հանկարծ մի օր ես էլ խղճի խայթ զգամ»[22]:

Իսկ հասարակությունը, որ սկզբում անվերջ մխիթարում էր, ներշնչում, հուսադրում («Դու կատարող ես, քեզ ոչ–ոք իրավունք չունի մեղադրելու, դու ինքդ էլ չունես» կամ «նրանք զոհեր են, իսկ զոհեր միշտ եղել են և կլինեն: Նրանք հերոսներ են, ամենահիսկական հերոսներ»), արդեն ինքնաճանաչման հասած Իզերլիին սկսում է հալածել: Նրա ինքնաճաղկող խոստովանությանը. «ես հերոս չեմ, ես հանցանք եմ կատարել, ես սպանել եմ երկու հարյուր հազար մարդ», հասարակությունը պատասխանում է ոստիկանների ծեծով և բանտարկությամբ: Իզերլին ամենայն արժանապատվությամբ է տանում բոլոր հալածանքները: Նրան նույնիսկ արձան են կանգնեցնում, իսկ իբր բուժելու նպատակով նստեցնում են տիեզերանավ և աքսորում Թյունիկ մոլորակ: Սակայն Բոբը չի դադարում ինքնազննումը, որի միջոցով և հասնելով իր «ես»-ի բացարձակ բացահայտմանը, արդեն իրավունք է վերապահում մեղադրել առաջին հերթին հասարակությանը, այն հասարակությանը, որի կամա, թե ակամա զոհն է դարձել ինքը: Թյունիկ մոլորակում, ուր շարունակվում է դեպքերի զարգացումը, ավելի տեսանելի է դառնում Զեյթունցյանի ընտրած պայմանականությունը: Ելնելով Իզերլիի կենսագրական փաստերից՝ Թյունիկ մոլորակն այստեղ հանդես է բերված իբրև խորհրդանիշ այն հոգեբուժական հոսպիտալների, ուր երկար տարիներ, ինչպես վերում նշեցինք, պահվել էր որպես «կամավոր հաճախորդ», ինչպես նաև՝ Իզերլիի հոգեկան ու բարոյական որոնումներն են այստեղ ամփոփված:

Այնուամենայնիվ, Իզերլին կարողանում է իր մեջ ուժ գտնել և հաղթահարել բոլոր դժվարությունները: Նա վերադառնում է Թյունիկից՝ կատարելու համար իր պարտքը մարդկության հանդեպ: «Ես վերադառնում եմ երկիր, վերադառնում եմ քսաներորդ դար: Ինձ հետ է նաև կինս, -ասում է Կլոդ Ռոբերտ Իզերլին, - …Մենք պիտի աշխատենք և վաստակենք մեր հանապազօրյա հացը: Մենք պիտի վարենք մեր հողամասը և աճեցնենք պոմիդոր, դդում և կարտոֆիլ» [23]:

Լավատեսությունն, ի դեպ, գերիշխում է Զեյթունցյանի գրեթե բոլոր ստեղծագործություններում: Եվ այս ամբողջ պատմությունն էլ հումանիստ գրողը ներկայացնում է իբրև XX դարի լեգենդ, որը չի եղել երբեք. «Այս վեպի հիմքում ընկած է մի լեգենդ, որ ծնվել է մոտավորապես քսաներորդ դարում,- ստեղծագործության յուրովի մուտքում գրում է Զեյթունցյանը,- ըստ այդ լեգենդի՝ մարդիկ ստեղծել են մի այնպիսի գերհզոր զենք, որ տեղնուտեղը կործանել է մի ամբողջ քաղաք իր հազարավոր բնակիչներով: Կարդալով այս տողերը, կարելի է բացականչել. *ինչ լավ է, որ այդպիսի բան չի եղել, ինչ լավ է, որ այդպիսի բան չէր կարող լինել* (ընդգծումները վիպասանինն են)»[24]:

Աշխարհը տրոհված է կատարյալի և իրականի, որոնց միջև առկա հակադրամիասնությունների անխուսափելիությունը հանգեցնում է անհատի երկատմանը: «Մենք պետք է մտածենք մարդու մասին: Մենք համառ անհրաժեշտություն ենք զգում մարդկանց միջև նոր տեսակի կապեր ստեղծելու: Ես վախենում եմ այն բանից, ինչ կատարվում է այսօր, մենք ապրում ենք տներում և չենք ճանաչում հարևաններին, բոլորս էլ օտար ենք իրար... »[25],-ատոմային ռումբի հոր շուրթերով ահազանգում է Զեյթունցյանը:

Զեյթունցյանի՝ երկատման մոտիվին դիմելը և հետագայում նրա ստեղծագործության մեջ այս մոտիվի գերիշխող դառնալը պայմանավորված է երկաշխարհության գաղափարի, նմանակի կերպարի միջոցով անհատ-հասարակություն պայքարի, անհատի ներաշխարհի, երկատված անհատի ողբերգության ներկայացման գեղարվեստական առավել բազմազան հնարանքների օգտագործման հնարավորությամբ: Այս համատեքստում «Կլոդ Ռոբերտ Իզելի վեպը», ըստ ամենայնի, նորություն էր 70-ականների հայ գրականության մեջ:

Ծանոթագրություններ

1. Абрамян Л.А. Человек и его двойник: к вопросу об истоках близнечного культа // Некоторые вопросы изучения этнических аспектов культуры. М.,1977.

2. Карельский А. Эрнст Теодор Амадей Гофман / Вступ.ст. в кн.: Гофман Э.Т.А. Собрание сочинений. - В 6 т., Т 1. - М.: Художественная литература, 1991. - С. 3-25.

3.Նարեկացի Գ., «Մատյան ողբերգության», «Նահապետ հրատ», Եր, 2007:

4. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 3 . pp. 73-80:

5. Гинзбург Л. О психологической прозе. Л., 1977.

6. Կանթեղ, 2004, № 3. pp. 3-9:

7. ԵրՄՀ «Գիտական տեղեկագիր», Եր, 2008:
8. Զեյթունցյան Պ., Կլոդ Ռոբերտ Իգերլի, «Հայաստան», 1968:
9. «Երեք տարով ուշացած գրախոսություն», Գրական թերթ, 1970թ, N 37:
10. «Երկխոսություն», Գրական թերթ, 1974 թ. N 19:
11. Նույն տեղը:
12. Գրական թերթ, 1970, N14
13. Ժամանակակից հայ արձակը, Երևան, 1981, էջ 29:
14. «Պերճ Զեյթունցյանի նոր վեպը», Սովետական գրականություն, 1970, N 9:
15. Զեյթունցյան Պ., «Կլոդ Ռոբերտ Իգերլի», «Հայաստան», 1968, էջ 3:
16. Նույն տեղը, էջ 114:
17. Նույն տեղը, էջ 119:
18. Ս.Սարինյան, «Քննադատությունը և գեղարվեստական զարգացումը», էջ 169:
19. «Գրական թերթ», 1973, N 1:
20. А. С. Пушкин. Собрание сочинений в 10 томах, М, 1962.
21. Զեյթունցյան Պ., Կլոդ Ռոբերտ Իգերլի, «Հայաստան», 1968, էջ 95:
22. Նույն տեղը, էջ 119:
23. Նույն տեղը, էջ 249:
24. Նույն տեղը, էջ 3:
25. Նույն տեղը, էջ 86:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արտակ Ղուլյան - ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Համլետ Մարտիրոսյան - ԱրՊՀ գրականության և լրագրության ամբիոնի հայցորդ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Խանյանը:

ՀՏԴ- 809.198 .1 Հայոց լեզու

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ռենա ՄՈՎՍԵՍՅԱՆ

Բանալի բառեր. *լեզվամտածողություն,բարբառային մտածողություն, բառաձև, ձևույթ, քերականական իրողություն, հոգնակերտություն, հոլովակազմություն, հոդառություն, բայի եղանակաժամանակային ձևեր, Ղարաբաղի բարբառ, բարբառայնություն, բարբառակիր:*

Key words*: linguistic thinking, dialectal thinking, word form, morpheme, grammatical reality, formation of plural forms, cases, the use of article, mood and tenses of verb, Karabakh dialect, dialectism, dialect carrier.*

Ключевые слова*: языковое мышление, диалектное мышление, словоформа, морфема, грамматические реалии, образование множественности, падежей, употребление артикля, наклонение и временные формы глагола, карабахский диалект, диалектизм, носитель диалекта*

R.Movsesyan

DIALECTAL GRAMMATICAL REALITIES IN ARTSAKH WRITERS' WORKS

Linguistic thinking and linguistic feeling of the writer are directly manifested by his choice of word forms and grammatical forms. The presence of deviation in the language of fiction may be the result of the writer's dialectal thinking impact.

Applying dialectal grammatical realities the writer creates an appropriate linguistic space introducing through them people thinking into literature.

In the article we have tried to examine the most common non-literary grammatical realities, connected with the formation of plural forms, cases, the use of articles with nouns and the formation of mood and tenses of verbs.

Р. Мовсесян

Диалектные грамматические реалии в произведениях арцахских писателей

Языковое мышление и языковое чутье писателя непосредственно проявляются выбором словоформ и грамматических форм. Наличие того или иного отклонения в языке художественной литературы может быть результатом воздействия диалектного мышления писателя.

Применяя диалектные грамматические реалии писатель создает соответствующее языковое пространство, через них вводя в литературу народное мышление.

В статье мы пытались исследовать самые распространенные нелитературные грамматические реалии, связанные с образованием множественности, падежей, употреблением артикля с существительными и формированием наклонения и временных форм глаголов.

Գրողի լեզվամտածողությունը և լեզվազգացողությունը անմիջականորեն դրսևորվում են նրա կողմից բառաձևերի ու քերականական ձևերի ընտրությամբ: Գեղարվեստական գրականության լեզվի մեջ առկա քերականական այս կամ այն շեղումը գրական լեզվից կարող է լինել գրողի բարբառային մտածողության ազդեցության արդյունք:

Բարբառային քերականական իրողությունների գործածումով գրողը ստեղծում է լեզվական համապատասխան տարածք՝ դրանց միջոցով գրականություն բերելով ժողովրդական մտածողություն:

Հոդվածում փորձել ենք քննության առնել ոչ գրական քերականական ամենատարածված իրողությունները՝ կապված գոյականների հոգնակերտության, հոլովակազմության, հոդառության և բայի եղանակաժամանակային ձևերի կազմության հետ:

Գրողի լեզվամտածողությունը և լեզվազգացողությունը անմիջականորեն դրսևորվում են նրա կողմից բառաձևերի ու քերականական ձևերի ընտրությամբ: Գեղարվեստական գրականության լեզվի մեջ առկա քերականական այս կամ այն շեղումը գրական լեզվից կարող է լինել գրողի բարբառային մտածողության ազդեցության արդյունք: Նման շեղումները կարող են պատճառաբանված լինել տարբեր հանգամանքներով. «Լեզվի քերականական օրենքներին հարազատ մնալն ամենևին էլ չի նշանակում, թե գրողն ընդհանրապես իրավունք չունի ընդունված ձևերից ու կանոններից որևէ շեղում կատարելու»: [10-127]

Գրողի ազատությունը, ըստ Ա. Պապոյանի, պայմանավորում է լեզվի զարգացումը: Ընդ որում, եթե անհատը, գրողը դառնա լեզվական օրենքների «գերին»՝ բոլորովին զուրկ ազատությունից, ապա լեզուն կդադարի զարգանալուց և կդատապարտվի ճահճացման ու ոչնչացման: [12- 85]

Ստեղծագործողի լեզվամտածողությունն անպարագիծ է, և քերականական իրողություններն էլ միջոց են այն արտահայտելու համար: Այդ միջոցների ընտրության ազատությունը ստեղծագործողի մենաշնորհն է: Վ. Առաքելյանը ընդգծում է. «Գրողին չպետք է վախեցնել քերականական կանոնների փշալարերով. գեղարվեստական խոսքի մշակման մեջ ազատությունը միշտ էլ կարդյունավորվի, եթե այդ ազատությունը վայելողը չի չարաշահում այն»:[3- 155]

Բարբառային քերականական իրողությունների գործածումով գրողը ստեղծում է լեզվական համապատասխան տարածք՝ դրանց միջոցով գրականություն բերելով ժողովրդական մտածողություն:

Հոդվածում փորձել ենք քննության առնել ոչ գրական քերականական ամենատարածված իրողությունները՝ կապված գոյականների հոգնակերտության, հոլովակազմության, հոդառության և բայի եղանակաժամանակային ձևերի կազմության հետ:

Հայտնի է, որ ժամանակակից գրական հայերենում հոգնակի թիվը կազմվում է *-եր*, *-ներ, -իկ, -այք* վերջավորություններով: Հայերենի մի շարք բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում, զգալի տարածում ունի նաև գրաբարյան **ք**-ն, որը թեև գրական հայերենին չի անցել, բայց հաճախակի է գործածվում ժողովրդախոսակցական լեզվում:

Ըստ այդմ՝ անվանական համակարգի բարբառային-քերականական ամենատարածված իրողություններից է *-ք*-ով և դրանով բաղադրված *-եք, -երք, -անք, -ենք* ձևույթներով հոգնակերտությունը:

Անդրադառնալով նշված մասնիկների արժեքին՝ Մ. Ասատրյանը նշում է, որ *ի*-ով վերջավորվող բառերից *–ք* մասնիկով հոգնակիի կազմությունը ունի գրաբարյան կամ բարբառային երանգ, մինչդեռ «Լրիվ բարբառային ու մերժելի են ք-ով կազմված հոգնակիները *ա*-ով վերջավորվող բառերից, օրինակ՝ *ճամփա-ճամփեք, փեսա-փեսեք* և այլն: Ժողովրդական-բարբառային երանգ ունեն *տղերք, աղջկերք* ձևերը, որտեղ հանդես է գալիս *-երք* հոգնակերտը»: [4- 61]

Հոգնակերտության այս միջոցը գործածվել է մեր կողմից ուսումնասիրության նյութ դարձած գրեթե բոլոր գրողների ստեղծագործություններում: օրինակ՝ *Դու <u>բորփեբիդ</u> համար մտածիր, իմոնք արդեն տեղ հասած են:* [8-184],*Հազարապետը մենակ մի խոսք ասաց՝ Տիրան, <u>խոխեբս</u> քեզ ամանաթ:* [14- 190], *Շատ էլ թաղի <u>տղերքը</u> ինչքան ժամանակ է արդեն ինձ են սպասում:* [9-66], *Գնացեք իմ ու Շալիկոյի <u>ձիանքը</u> թամբեցեք, գնալու ենք Կաչաղակաբերդ:* [7-378], *Հասակը՝ բարձր, մեջքը՝ լայն, գեղեցիկ տղամարդ էր՝ <u>կնանիք</u> ձեռից գնում էին նրա համար:* [7-294]

Այսպիսով՝ գրողները, հերոսների խոսքում տեղ տալով այս հոգնակերտներին, պահում են կենդանի խոսքի երանգը:

Բարբառային հոլովական ձևերի գործածությունները նույնպես հաճախադեպ են: Արցախի բարբառակիր հեղինակները չեն խուսափել նաև բարբառային հոլովական ձևերի գործածությունից:

Ղարաբաղի բարբառը գրական հայերենի համեմատ հոլովման համակարգում երևան է հանում զգալի տարբերություններ: Բարբառն ունի ուղղական-հայցական, սեռական-տրական, բացառական, գործիական հոլովները: Որոշ դեպքերում գործածական են ներգոյականի հատուկ ձևեր: Ուղղական-հայցական հոլովը զուրկ է հոլովակերտներից և մյուս հոլովներին հակադրվում է զրո վերջավորությամբ: Տրականը բնութագրվում է հոլովանիշ թեքույթների բազմազանությամբ, որոնք արտահայտվում են *էն/ին, ու(ն), ու(ն),վա/վա, ա(ն)/ա(ն)* վերջավորություններով և *ք/գ, ա/օ, է/օ, է/ու, ի/ու, օ/ա, ու/ըվ/օ* հերթագայություններով:

Ղարաբաղի բարբառին հատուկ հոլովանիշ թեքույթներով ձևավորված բազմաթիվ բառաձևեր կարելի է գտնել Արցախի գրողների ստեղծագործություններում: Այսպես՝ *ու* թեքույթը Ղարաբաղի բարբառում կենսունակ հոլովանիշ ձևույթներից մեկն է: Այդ թեքույթով կազմված բարբառային բառաձևեր են խնդրո առարկա ստեղծագործություններից քաղված հետևյալ ընդգծված բառաձևերը. ինչպես՝ *<u>Տանձուն</u> աղբյուրի դիքը քարես-չքարես, մեկ է, անձրև եկավ՝ նույն ցեխն է:* [7- 352] *Արի դու գնա, համ Ղարաբաղը կտեսնես, համ <u>երեխուն</u> վերցրու բեր:* [9- 73] *<u>Թաքվու</u> հոգին լույս է դառել, ողորմի նրան:* [6- 153]

Կնեգ (կին) հիմքը Ղարաբաղի բարբառում թեքվում է ***ա(ն)/ա՛(ն)*** հոլովանիշ թեքույթներով: Արցախի գրողների ստեղծագործություններում մի քանի անգամ հանդիպել ենք նշված բառի ***կնկա*** սեռական-տրական հոլովաձևին և այդ հիմքից կազմած բառաձևերի, ինչպես՝ *Արտուշ բալա, կնկա փափուկն է լավ…:* **[7-177]**, *Հասկանալի չէ, կնկանդ մասին ես խոսում:* **[1- 282]**, *Երբ տղամարդը պատերազմ չի ապրում, նմանվում է ծնունդ չունեցող կնկա:* **[6- 555]**, *Տես ինչ է ասում, է՛, կնկա լեզվի ճար կլինի՞:* **[7- 232]**, *Խե՛ղճ, տղամարդը կնկանից ջուր է ուզում, խնդրելո՞վ:* **[7- 210]**

Ղարաբաղի բարբառի ամենակենսունակ թեքույթներից մեկով՝ ***էն/ին*** հոլովակերտով, թեքվում են նաև ***ա*** վերջավորություն ունեցող ազգակցություն արտահայտող որոշ բառեր: ***Երեխա***, ***տղա*** բառերի ***երեխի/երեխին, տղի/տղին*** ոչ գրական բառաձևեր օգտագործվել են Արցախի գրողների կողմից, ինչպես՝ *Ու՞մ աչքը կարոտ երեխին չի մեկնել ջեբը պահած հացի պատառը:* ***[8-109],*** *Ասում եմ՝ աղջի, երեխին մեկ-մեկ բեր մեր տուն, որ մեր կոճերն էլ երեխի ձեն լսեն:* ***[7- 118],*** *Բաղը մերը չի, Եսայու տղինն է, Սանթուրինը:* ***[8-59],*** *Սողոմոն, երեխիս ի՞նչ օր եք գցել:* ***[14- 7]***

Բարբառին հատուկ ***է>օ (ե>ո)*** հերթագայությամբ ձևավորված ***ապոր*** (ապեր), ***աքոր*** (աքեր) բառաձևերը գործածել են Վ. Հակոբյանը *(Եկել եմ Արսեն ապոր, մերոնց շիրիմներին այցելության:* **[6-368]***)*, Ս. Աբրահամյանը *(Նախշուն աքոր տունն անտղամարդ տուն է:* **[1- 226]***)*, Մ. Հովհաննիսյանը *(Երեկոյան Կուքան ապորը լուր տվին, թե նախագահը վռազ կանչում է:* **[7-118]***)*, Ա. Ղահրիյանը *(Անուշ աքոր վրա ծանր հոգնածություն-ձանձրույթ կար իջած:* **[8-221]***)* և այլք:

Բարբառում ***ու/օ*** հերթագայությամբ է թեքվում ***քուր*** (քույր) հիմքը (քըվօր): Էդ. Աղայանը հնագույն բարբառային տարբերակ է համարում ***քըվոր, քվեր*** ձևերը. «Գրաբարյան քեռ և բարբառային *քուոր*, *քուեր* ձևերը զուգահեռ ձևեր են, որոնք բոլորն էլ հնդեվրոպական swesor բառի սեռականից են ծագում՝ ձայնդարձի տարբեր աստիճաններով և ներկայացնում են հին հայերենի բարբառային տարբեր ձևերի շարունակությունը»: **[2- 74]**

Այս բառաձևը մի քանի անգամ գործածել է Մ. Հովհաննիսյանը. *Ինքը գնացել էր Երևան՝ քվոր աղջիկը պիտի մարդու տային:* **[7- 317]** *Ոչինչ էլ չի պատահելու, դու մեր քվոր հետ գրուցիր, ես մտնեմ մոտը:* **[7- 276]** *Ամառը Հեղուշի քվոր հետ քվոր մարդուն բերին թողին մեր տանը:* **[7- 328]**

Բարբառում գործիական հոլովն ունի *-ավ* վերջավորությունը, որով կազմված բառաձևեր ևս առկա են. *Եղիշն անցավ կայավը /Կարմրին տվավ հայավը:* **[14- 76]**

Գրական լեզվի ազդեցությամբ տեղի է ունենում բառաձևերի մասնակի գրականացում: Ուսումնասիրության առարկա գեղարվեստական գրականության մեջ հաճախակի ենք հանդիպել **բարբառային հիմք + գրական քերականական վերջավորություն** կաղապարով բառաձևերի, այսինքն՝ բարբառային բառերը թեքվել են գրական հայերենի օրինաչափությամբ:

Այսպես՝ բարբառային հիմքին գրական հոգնակերտների հավելմամբ է ձևավորվել ընդգծված բառաձևը. *Ինչ անեմ… ասի՝ եթիմներս իրենց թայերի մեջ աչքները կարոտ, լեզուները կարճ չմնան:* **[8-14]**

Կամ բարբառային ***–ին/-էն*** *վերջավորությունների փոխարեն գրական հայերենի սեռականի –* ***ի*** *վերջավորություն ստացել են ընդգծված բարբառային հիմքերը. Արխի գետաջրով լվացած վարո՞ւնգ ուզեց սիրտը, թե՞ ինքը իրավունք չունի մտնել:* **[8-24]**, *Նուբարիկին ինքը չի ծնել, Նուբարիկին քոյի տակ է գտել:* **[7- 322]**, *Ուշքդ ու միտքդ երևի ջրերը տարել են, մաշինի ձայնը չլսեցիր:* **[1- 71]**, *Ուտես ու փեչի կողքին պառկես, մտածես երանությամբ:* **[7- 16]**

Ղարաբաղի բարբառում բացառական հոլովը ձևավորվում է ***-ան*** վերջավորությամբ, ***-անա, -նըստա/նը՛ստեա/նիստա*** բառ-մասնիկներով: Դրանց փոխարեն բարբառային մի շարք հիմքեր ստացել են **–ից** գրական վերջավորությունը:

Ինչպես՝ *Սար ու քոյից շալվարդ ծակ եկար քաղաք, գլուխդ պահելով կրթություն, շնորհք առար…:* **[8-107]** ,*Տափից մինչև երկինք շնորհակալ եմ կոլխոզի բերքը փրկելու համար:* **[1- 89]**, *Լավ լսիր, իմ ախպերս, Թարխանը հազար թայակից պրծած մարդ է հա՛, լավ լսիր:* **[1- 433]**, *Երկու հարյուրը (դրամ) նրանց համար, ոնց որ կռանաս տափից մի քար վերցնես:* **[7- 303]**, *Ծանրը մենք կբերենք,-ասաց մյուսը և ընկերոջ հետ վերցրին պայուսակի կոթերից:* **[9- 61]**,

Գալուստը ելավ, կաղնու ճյուղից կախ խուրջինից հանեց հացն ու մեծ թասը: [8-17], *Տեղ հասար թե չէ, նոր քաշած արաղից մի պոչինկա ուղարկում եմ:* [14- 201], *Մինչև գերեզման սիրտս պիտի ցավի իմ ջանից պտկածի համար:* [1- 570], *Շկոյից ձեն են տվել, ուստա: Ինձ էնտեղից հանեցին:* [1-346]

Ժողովրդական լեզվից գեղարվեստական գրականություն թափանցած քերականական բավականին տարածված իրողություններից է բացառական, գործիական, ներգոյական հոլովների հոդառությունը: Ժամանակակից գրական հայերենում *ն/ը* որոշիչ հոդը դրվում է միայն ուղղական և տրական հոլովների վրա: Այս երևույթը արևելահայ գրական լեզվի զարգացման վերջին շրջանի արդյունք է: «Բացառական, գործիական, ներգոյական հոլովների որոշիչ հոդ չընդունելու այդ ընթացքը 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբներին վերածվում է որոշակի օրինաչափության: Ժամանակակից գրական լեզվում նորման այն է, որ բացառական, գործիական և ներգոյական հոլովները գործածվում են առանց որոշիչ հոդի»:[4-100]

Հայտնի իրողություն է, որ մի շարք բարբառներում, այդ թվում Ղարաբաղի բարբառում, բոլոր հոլովները հոդառու են, և այդպիսի օրինակների արձանագրություններ առկայացել են նաև քննության առարկա ստեղծագործություններում:: Բերենք օրինակներ, որոնցում ընդգծված բառերը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հոդով գործածության դեպքեր են. *Գնացի լախիցը բռնեցի, որպեսզի կոլխոզում սայլապան դառնա:* [1-291], *Այս խոսքերը մի կերպ թարգմանում են Ռիժիկին, և, ինչ եք կարծում, սա փորիցը բռնում է ու սկսում ծիծաղել:* [7-125], *Լավ է, որ Շուշանն էլ գնաց, բայամ երեխիցը վատ խաբար ես լսել:* [1-360], *Պապս պատմում, ասում էր, թե դաչաղները Փռշնոտ շենիցը մի սիրուն հարս են փախցրել:* [1-460], *Տեսնես Բուդին խոտ չի՞ տա, իմը պրծնելու վրա է,-ասում է քոռ Մուքանը,-կուզի փողովը կտա, կուզի փոխովը:* [7- 183], *Մի վերստի վրա խնձորը կարող է կիսել, թեկուզ տար ֆելդշեր Այվազի կշեռքովը ստուգիր:* [7-125], *Եղիշն անցավ կայլավը,/ Կարմրին տվավ հալավը:* [14- 70], *Դու մեր շենումը նոր մարդ ես, չես իմանա:* [1- 89], *Երևի ձեռքումը կա, է՛,-հիացավ Մեխակը:* [1- 41]

Բարբառային քերականական իրողություն է նաև ստացական հոդի կիրառությունը համապատասխան անձնական դերանվան սեռական հոլովի հետ, ինչը գրական արևելահայերենում քերականական սխալ գործածություն է: Ինչպես՝ *Բայց իմ լինել-չլինելս ինչի՞ս է պետք, երբ նա, նա՛ չդարձավ իր քորփաներին:* [8- 3], *Հա, ընկեր Արամյան, իմ անունս էլ Սաթի է, Ծուկանանաց Սաթի:* [1- 17]

Գրական արևելահայերենում ցուցական հոդը բացառում է ցուցական վերադրի (որոշչի) առկայությունը. դրանց միաժամանակյա կիրառությունը հատուկ է բարբառներին (ու արևմտահայերենին), հաճախ այս երևույթը բարբառներից մուտք է գործում գեղարվեստական գրականություն, օրինակ՝ *Հիմա էս խոսքս գյուղի բերանն է ընկել,-ժպտալով ավելացրեց Կուքանը:* [7- 119] ,*Ասաց՝ էս մի սեգոնս՝ իմ ախպորը:* [7-271]

Ղարաբաղի բարբառի որոշ խոսվածքների բնորոշ է հատուկ անունների առանց հոդի գործածությունը: Եվ հետաքրքրական է, որ խոսվածքային այս առանձնահատկությունները բնութագրող օրինակներ նույնպես դրսևորվել են: Օրինակ՝ *Գավրուշ փոքր տղա էր, սիրուն, փամփլիկ տղա երեխա էր:* [7- 342]

Գեղարվեստական գրականության մեջ հաճախակի հանդիպող բարբառային բայական իրողություններից է *ա* օժանդակ և վերացական բայ-հանգույցի գործածությունը գրական *է*-ի փոխարեն: Ինչպես՝ *Պինդ կացեք, խոխեք, լավ ա լինելու:* [6- 38] *Մի քիչ էլ որ կենանք, էս թուլան ասելու ա, թե պերանով են սիրում:* [1- 521], *Հա, ձեր պոեզը այ էն կողմից ա գնալու:* [9-74], *Ա ժողովուրդ, ով ուզում ա թող լսի, դասակարգային թշնամի ենք բռնել:* [7- 145], *Ոսկանանց ցեղը խյարի ցեղի նման ա՝ խակը հասածից լավ ա:* [1- 521]

Բարբառային *ա* օժանդակ բայ-հանգույցի հաճախակի կիրառությունը գեղարվեստական լեզվում բացատրվում է նրանով, որ վերջին շրջանում բանավոր խոսքում դրա գործածությունը բավականին տարածում է գտել և հիմնականում կերպարների խոսքի միջոցով մուտք է գործել գեղարվեստական գրականություն:

Բարբառից գեղարվեստական գրականություն մուտք գործած քերականական ամենատարածված իրողություններից է անվանաբայական ստորոգյալի բայական բաղադրիչի բարբառային *չի* տարբերակի կիրառումը *եմ* բայի անկատար ներկայի ժխտական խոնարհման եզակի թվի երրորդ դեմքի *չէ*-ի փոխարեն: Սա բավականին տարածված իրողություն է ոչ միայն

բանավոր խոսքում, այլև հաճախակի է հանդիպում մեր ուսումնասիրած գրեթե բոլոր ստեղծագործություններում: Ինչպես՝ *Ասես՝ սկի ռուս Ալեքսանթուրի աղջիկ չի, մեր շենացի Ղրիբանց Ալեքսանթուրի աղջիկն է:* **[1- 492],** *Կամ հրաշք է, կամ բժշկությունը սուտ չի:* **[7- 274],** *է՛հ, ջանդ սաղ, գործ եմ անում, հո փուչ բան չի արածս, կքշեմ է՛ վերևները:* **[8- 20]** *Ասել եմ, նորից եմ ասում՝ էդ բազազ Արտեմը մարդ չի, գազան է, ավազակ է, խուլիգան է:* **[14- 14],** *Բա ո՞նց ստեմ, ամո՞թ չի…/ Համ չի ների շնիկն ինձ, / Համ էլ վրաս կհաչի…* **[5- 77]** ,*Մենակ տխուր չի՞:* **[9- 34]**

Բարբառային մտածողության դրսևորում են նաև խնդրո առարկա ստեղծագործություններում գործածված հետևյալ դիմավոր ոչ գրական բայաձևերը. *Հա, ցավդ տանիմ (տանեմ), գրի (գրիր), ասե (ասա),-թելադրել սկսեց Մանուշակը:* **[1- 448],** *Հալա, որ կանգնում ես, շալակինդ տափին դիր, հետո խոսե (խոսիր):* **[1-520],** *Ուրեմին, մենակ էդ անտեր արաբան ա, որ պրանվեց, այսինքն ինձ տակին թողից (թողեց):* **[1- 328],** *Մթերումը էս էրկու օրը պրծնել պիտենք (պիտի պրծնենք):* **[7-317],** *Թող ինչքան ուզում է հաչա (հաչի), նրա ասած՝ քամուն տարած:* **[7- 358],** *Պետրոս, այսինքնս որ դու օգիս (ուզես), մարդ էլ կպատրաստիս (կպատրաստես), մարդ:* **[1- 347],** *Ա, կարում չեմ, էլ ինչ անեմ, կարում չեմ, տարեք շպրտեք:* **[8- 218]**

Քերականական բարբառայնությունների գործածությունը փաստում է նաև այն իրողությունը, որ գեղարվեստական ստեղծագործությունների լեզվական տարածքը «ցանկապատներ» չունի և բարբառային իրողությունների ներթափանցումը օրինաչափ երևույթ է ու ընդգրկում է լեզվական բոլոր մակարդակները:

Օգտագործված գրականություն

1. Աբրահամյան Ս., Սերունդների հետ, Երևան, «Ամարաս» հրատ., 2008, 595 էջ
2. Աղայան Է,Բարբառային հնագույն տարբերակները հայերենում, ՀՍՍՀ ԳԱ <<Տեղեկագիր>>, 1958, N 5
3. Առաքելյան Վ., Հայ գրական լեզվի ու բարբառների զարգացման հարցի շուրջ, էջ 155/ ՊԲՀ, հ.3, Երևան, 1964, էջ139-156
4. Ասատրյան Մ., ժամանակակից հայոց լեզու, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1989, 428 էջ
5. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ «Դիզակ պլյուս» հրատ., 2007, 25 էջ
6. Հակոբյան Վ., Զատիկը ջրավազանի հատակին, «Դիզակ պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2010, 665 էջ
7. Հովհաննիսյան Մ, Երկեր, հ1, «Վաչագան Բարեպաշտ» հրատ., 468 էջ
8. Ղահրիյան Ա., Պատրանք, «Սովետական գրող» հրատ., Երևան,1983,248 էջ
9. Մարտիրոսյան Հ., Համազարկ հրաժեշտից առաջ, ՀԳՄ հրատ., Երևան, 2007,94 էջ
10. Մարության Ա.,Եղիշե Չարենցի չափածոյի լեզուն և ոճը, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1979, 197 էջ
11. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի բառապաշարը, Երևանի պետհամալսարանի հրատ., Երևան, 1970, 156 էջ
12. Պապոյան Ա., Պարույր Սևակի չափածոյի լեզվական արվեստը, «Լույս» հրատ., Երևան,1970, 320 էջ
13. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, «Էդիտ պրինտ» հրատ., Երևան, 2013, 84 էջ
14. Օվյան Վ, Կապույտ տարիներ, «Դիզակ պլլուս» հրատ., Ստեփանակերտ, 2007, 527 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ռենա Մովսեսյան, Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի դասախոս

E-mail: rena-mov@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Հ.Ղազարյանը:

ՀՏԴ 371.31: 809.198.1 Հայոց լեզվի դասավանդման մոթոդիկա

ԼԵԶՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ « ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ծովինար ՀԱՍՐԱԹՅԱՆ

Բանալի բառեր *– հայոց լեզու, գրականություն, ուսուցում, մեթոդիկա, մեթոդ, դասագիրք, գրաբարյան բառեր, բառերի բացատրություն, միջառարկայական կապ, քերականական գիտելիքներ, բառապաշարի հարստացում, բանավոր խոսքի հղկում, համեմատություններ, ծրագրային նյութ, հիմնական և ավագ դպրոց:*

Ключевые слова *- армянский язык, литература, обучение, методика, метод, учебник, древнеармянские слова (грабар), объяснение слов, межпредметная связь, грамматические знания, обогащение лексикона, улучшение устной речи, сравнения, программный материал, основная и старшая школа.*

Keywords *- Armenian language, literature, training, methodology, method, textbook, the ancient Armenian word (grabar), words of explanation, intersubject communication, grammatical knowledge, enrichment of a lexicon, improvement of oral speech, comparison, software material, primary and high school.*

Ц.Асратян

ОБУЧЕНИЯ НЕКОТОРЫХ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ НА ПРИМЕРЕ ПОЭМЫ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕР»

В данной статье рассматривается ряд методов и средств содействия эффективности обучения некоторых языковых единиц. В статье как средством обучения указаны древнеармянские слова (грабарян), с которыми ученики встречаются в учебниках, а также в произведениях армянских писателей. Грамматические формы древнеармянских слов (грабарян) отличаются от грамматических форм современного армянского языка.

Для вышеприведенного является достаточно богатый и целенаправленный материал писателя с большим именем Ованеса Шираза, поэма «Тондракецинер».

Ts. Asratyan

LEARNING SOME LANGUAGE UNITS SUCH AS THE POEM HOVHANNES SHIRAZ "TONDRAKETSINER"

This article discusses a number of methods and means of promoting the effectiveness of learning some language units. The article learning tool identifies the ancient word (grabarân), with which the disciples found in textbooks, as well as in the works of Armenian writers. Ancient Armenian grammatical forms of words (grabarân) differ from the grammatical forms of the modern Armenian language.

For the above quite suited rich and focused material with big name writer Hovhannes Shiraz, the poem "Tondrakeciner".

Սույն հոդվածում քննվում են լեզվական որոշ միավորների ուսուցման արդյունավետությանը նպաստող մի շարք մեթոդներ ու միջոցներ: Ուսուցման նյութ ենք դարձրել գրաբարյան բառերը, որոնց աշակերտները հանդիպում են դասագրքերում, ինչպես նաև հայ գրողների երկերում:Հիշյալ բառերը իրենց քերականական ձևերով տարբերվում են ժամանակակից հայերենի քերականական ձևերից:

Վերոնշյալի համար բավականաչափ հարուստ ու նպատակահարմար նյութ ենք դարձրել Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը:

Աշակերտի խոսքի զարգացմանը որոշակիորեն նպաստում են դպրոցում դասավանդվող բոլոր առաարկաները, որոնք այս կամ այն չափով հարստացնում են սովորողի ակտիվ բառապաշարը, օգնում նրանց խոսքի հղկմանն ու կատարելագործմանը: Այդուհանդերձ, առանձնահատուկ է հայոց լեզու և գրականություն առարկան: Ահավասիկ, մայրենիի ուսուցիչն առաքված է կատարելու այդ խնդրահարույց, բայց և այժմեական գործը:

Հայ գրողների երկերում աշակերտները հաճախ են հանդիպում բառերի այնպիսի փոփոխությունների /հոլովում, խոնարհում/, որոնք տարբերվում են ժամանակակից հայերենի

քերականական ձևերից: Նման բառերի բացատրությունը խիստ կարևոր է նախ՝ սովորողների բառապաշարը հարստացնելու, ապա՝ նրանց ձեռք բերած քերականական գիտելիքները խորացնելու առումով: Չմոռանանք նաև այն փաստը, որ ժամանակին և ճիշտ բացատրությունը կօգնի լիարժեք ընկալելու նյութը:

Ուսուցիչը գրականության ժամերին հանդիպած նման բառերի բացատրությունը պետք է ամբողջացնի լեզվի ժամերին: Սակայն տրված բառերի բացատրությունը, անշուշտ, թերի կլինի, եթե բառերի քերականական այս կամ այն ձևերի նկատմամբ որոշ մոտեցում չցուցաբերենք: Հարկ է նշել, որ լեզվի քերականական կառուցվածքը դարերի ընթացքում կրում է մասնակի փոփոխություններ՝ քերականական ձևերի կատարելագործման տեսակետից: Պետք է տեղեկացնել նաև, որ հայ շատ գրողների երկերում պահպանված են բառերի հոլովման ու խոնարհման այնպիսի ձևեր, որոնք գալիս են գրաբարից: Քանի որ ավագ դպրոցի 10-րդ դասարանում հայոց լեզվից անցնում են հայերենի զարգացման փուլերը, գրաբարյան շրջանը, գրությունն ու արտասանությունը, երկբարբառներն ու եռաբարբառները և բառապաշարը, հետևաբար այդ դասարանում ուսուցումն այլ բնույթ պետք է ունենա: Իսկ եթե խոսքը վերաբերում է միջին օղակին, ապա կարող ենք նրանց ևս փոքր ինչ տեղեկացնել պատմական որոշ փոփոխությունների մասին՝ ընդգծելով, որ այդ մասին ավելի խորը կտեղեկանան բարձր դասարաններում: Նշենք, որ սկսած հենց միջին օղակից՝ աշակերտները հաճախ են հանդիպում գրաբարյան բառերի:

Աշակերտներին կարելի է հիշեցման կարգով թվարկել այն գրողներին կամ նրանց ստեղծագործությունները, որտեղ հաճախ կարելի է հանդիպել գրաբարյան բառերի, ինչպես՝ Մ.Նալբանդյան, Պ. Դուրյան, Ռ. Պատկանյան, Հ. Շիրազ և այլն: Սույն հոդվածով էլ կփորձենք սովորողների ակտիվ բառապաշարը համալրելու, նրանց ձեռք բերած քերականական գիտելիքները խորացնելու արդյունավետ միջոց ընտրել Հ. Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը՝ հաշվի առնելով այն փաստը, որ նմանատիպ բառերի գործածությունը առավել շատ են, այդ պոեմում:

Այսպես՝7-րդ դասարանում, անցնելով գոյականի հոլովները, աշակերտները հանդիպում են կայսրի /կայսեր/, դստրի /դստեր/, աստծու /աստծո/ ձևերին: Ուսուցչի բացատրությունից հետո միայն, գրականության մեջ հանդիպելով դստեր, կայսեր ձևերին, նրանք կհիշեն, որ դրանք գրաբարյան բառեր են՝դրված սեռական հոլովով: Բերենք օրինակներ ընտրված բնագրից. այսպես՝ Հայրը՝ *դստեր* հետ, մոր հետ՝ պիղծ որդին… (2,116)

Եվ դու՞ ես, հա՛յր իմ, *աստծո* ստվերը,

Աստված, թե՝ *աստծուն* նզովեր հոգիս:(2,226)

Գոյականի հոգնակի թիվն անցնելիս պետք է զուգահեռներ անցկացնել *ք* հոգնակերտ մասնիկով կազմված բառերի միջև, ինչպես՝ գյուղացիներ /գյուղացիք/, տեղացիներ /տեղացիք/: Առաջին դեպքում ք հոգնակերտ մասնիկի գործածության մասին դասագրքում խոսվում է, իսկ երկրորդ դեպքի մասին ուսուցիչը պետք համապատասխան տեղեկություն տա՝ օրինակներ բերելով գրականության դասերից: Այս մեթոդով ուսուցիչը և՛ թեմայի ընկալումն ավելի դյուրըմբռնելի կդարձնի, և՛ կապահովի միջառարկայական կապը: Փաստենք նաև մեկ այլ տեսակետ, որ գրականությունից ընտրված գեղեցիկ օրինակները ձևավորում են աշակերտի գեղագիտական ճաշակը, գեղեցիկը գտնելու և գնահատելու կարողությունը: Օրինակ՝

Ինչու հերձվածող դարձան *արեղայք*

Իմաստունները, ոչ թե դեռ տղայք: (2, 79)

Թեթև են ձեր սև *շղթայք* ավելի: (2, 80)

Դերանուններն անցնելիս նույնպես կարիք կլինի անդրադառնալու գրաբարյան բառերին և նրանց քերականական ձևերին: Աշակերտները գրեթե ծանոթ են որոշ դերանունների, որոնք ունեն գրաբարաձև հոլովում, ինչպես՝ սոքա, սորա, սոցա,սորան, նոքա, նորա,սոյն, դոյն, նոցա: Բնականաբար, մանրակրկիտ ծավալվել պետք չէ, ուղղակի անհրաժեշտ է նշել, թե դրանք որ դերանուններն են և որ հոլովով դրված:

Եվ դու *սոցա՞* ես ներելու, արքա,

Որ պղծեց յոթը վանքերն իմ Հարքա: (2, 221)

Սոքա ոչ աստված, ոչ էլ ազգ ունին: (2, 117)

Դերբայների ուսուցման ժամանակ ևս պետք է որոշ բացատրություններ տրվի գրաբարյան գործածության ձևերից: Այսպես՝ Եկեղեցիք են *հավատացելոց* կանչում,ամբոխում: (2,139)

Երբ սուրհանդակը *դարձողաց* թվեց: (2,235) *Իշխողաց* հողն էլ, որ խլե՝ ձոնե ռամիկներին:(2,242)

Ուսուցումը հեշտացնելու համար ուսուցիչը նախօրոք կարող է կազմել թեմատիկ բառախումբ, որոնք կարող են լինել ինչպես դասագրքերից, այնպես էլ առօրյա խոսակցության ընթացքում անհամեմատ շատ տարածված բառերից՝ վերջիններս համեմատելու արդի գրական լեզվի քերականական ձևերի հետ: Այսպես՝ սոքա, սորա, սորան, սոցա, ամբոխաց, ցվերջ, ցմահ, ցտեսություն, նորեն, զինյալ, հարքա, պատերազմողաց և այլն: Անշուշտ, վերոգրյալները գրաբարյան բառեր են, որոնց մասին աշակերտը պատկերացում չունի և, հետևաբար, կդժվարանա բնիմաստը բացատրել: Եթե դրանց կազմության մասին բացատրություն չտրվի, դրանք չհամեմատվեն աշխարհաբարի քերականության հետ, ապա աշակերտներին որոշ բաներ մութ կմնան: Ուսուցումը տարբեր օղակներում տարաբնույթ կլինի: Միջին օղակում ուսուցումն ավելի շատ տեսական բնույթ կկրի, քանի որ գրաբարը, որպես ծրագրային նյութ, անցնում են ավագ դպրոցի 10-րդ դասարանում: Բոլորովին էլ պարտադիր չէ, որ ուսուցիչն այդ դասարաններում հանգամանորեն բացատրի, ուսուցանի գրաբարի քերականությունը, բայց պարտավոր է պատշաճ ձևով բացատրել դասագրքում պահպանված որոշ բառեր, որպեսզի աշակերտները կարողանան ինքնուրույն կարդալ ու հասկանալ գրական երկերը: Բնականաբար, այն բառերը, որոնք հայ ժողովուրդը գործածել է հնագույն ժամանակներից մինչև այսօր, դժվարություն չի ներկայացնի և բացատրության կարիք քիչ կունենա, իսկ այն բառերը, որոնք գործածվել են միայն գրաբարում, բացատրության կարիք կունենան, ինչպես՝գոցել, ակոսել, այպանել, զայրանք, հեգ, խոկումն, տնանկված: Ուսուցումն այլ պատկեր կունենա ավագ դպրոցում: Տեսականի և գործնականի համադրությամբ աշակերտներն ավելի հեշտ կընկալեն նյութը, և գրաբարյան բառերի բացատրությունը կկատարվի գիտակցաբար: Գրականության մեջ նմանօրինակ բառերի հանդիպելիս պետք է նշել, որ այս կամ այն հեղինակի ստեղծագործության մեջ գրաբարյան բառերի առավել շատ գործածությունը կապված է ժամանակաշրջանի հետ:

Գրականություն

1.Լ.Եզեկյան, Ա. Սարգսյան, Ռ. Սաքապետոյան, հայոց լեզու, հում. հոսք, 10-րդ դաս.,2009:
2.Հ. Շիրազ, Թոնդրակեցիները,«Հայրապետ հրատարակչություն»,2014 :
3.Լ. Խաչատրյան, Գ.Թոսունյան,Գրաբարի դասագիրք,Եր.,2004:
4.Նոր բառագիրք հայկազեան լեզուի, Եր., 1979:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ծովինար Հասրաթյան- Ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի, ավագ դասախոս

E mail tsovinar-asratyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Ս.Խանյանը:

ՀՏԴ 809.198.1 Լեզվաբանություն

ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՄԻ ՔԱՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Նուսե ԽԱՉԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր *- Շաղկապ, նախադասություն, հարաբերություն, երկրորդական, իմաստային, գերադաս, գործողություն, պարագա, հիմունք, ժամանակ, քանակ*

Keywords *- conjunction, sentence, attitude, secondary, meaning, above all, the action, participle, the base, time, number.*

Ключевые слова *- союз, предложение, отношение, второстепенные, смысловые, главное, действие, причастие, основа, время, количество.*

N. Khachatryan

POLYFUNCTIONAL CONJUNCTIONS IN MODERN ARMENIAN

The article analyses application of polyfunctional subordinate conjunctions in the sphere of complex subordinate sentences. Polyfunctional conjunctions retain a decisive and important role in joining parts of complex sentences, shaping semantic relations and revealing their character.

Together with expressing their primary semantic relations, polyfunctional subordinate conjunctions also mark other relations. The semantic differentiation performed by conjunctions depends on the type and categories of connective words and word phrases. On the mood and tense forms of finite verb conjunctions they connect with.

Н.Хачатрян

ПОЛИФУНКЦИОНАЛЬНЫЕ СОЮЗЫ В СОВРЕМЕННОМ АМЯНСКОМ ЯЗЫКЕ

В статье анализируется применение полуфункциональных подчинительных союзов в сложных предложениях. Полуфункциональные союзы обладают главной значимостью в соединении отдельных частей сложного предложения, в оформлении семантических отношений и в выявлении характера их семантического взаимодействия.

Полуфункциональные союзы, кроме передачи основных семантических отношений, также маркируют иные отношения. Их семантическая дифференциация обусловлена типом соединительными слов и словосочетаний, их категориями, временными формами и формами наклонения личных глаголов, с которыми полуфункциональные союзы сочетаются.

Հոդվածում քննության առարկա ենք դարձնում բազմագործառույթ ստորադասական շաղկապների կիրառությունը բարդ նախադասության ոլորտում: Բազմագործառույթ շաղկապները վճռական դեր են կատարում բարդ նախադասության առանձին մասերի կապակցման, իմաստային փոխհարաբերությունների ձևավորման, դրանց բնույթի բացահայտման մեջ:

Իրենց հիմնական իմաստային հարաբերության արտահայտման զուգընթաց նշում են նաև այլ հարաբերություններ: Իմաստային տարբերակումը կատարվում է այն բանի հիման վրա, թե շաղկապները ինչ բառերի, բառախմբերի ինչ կարգերի հետ են կապակցվում, դիմավոր բայերի եղանակաժամանակային ինչ ձևերի հետ են զուգորդվում:

Բարդ նախադասության բաղադրիչ մասերի կապակցման, իմաստային փոխհարաբերությունների ձևավորման, դրանց բնույթի բացահայտման մեջ նշանակալից դեր են կատարում բազմագործառույթ շաղկապները:

Տարաբնույթ նախադասություններում իրենց իմաստաբանական և կիրառական դերով, յուրահատկություններով առանձնանում են բազմիմաստ ստորադասական շաղկապները, որոնք կարող են կապակցել շարահյուսական տարբեր գործառույթներով բնորոշվող նախադասություններ. կապակցման միջոցը նույնն է, տարբեր են իմաստային նշանակությունները:

Բազմագործառույթ ստորադասական շաղկապները, իրենց հիմնական իմաստային հարաբերության արտահայտման հետ զուգընթաց, նշում են նաև այլ հարաբերություններ:

Իմաստային տիպերի բացահայտումը կատարվում է այն բանի հիման վրա, թե շաղկապները ինչ բառերի, բառախմբերի ինչ կարգերի հետ են կապակցվում, դիմավոր բայերի եղանակային և ժամանակային ինչ ձևերի հետ են զուգորդվում: Կարևորվում են կապակցվող միավորների, շաղկապների շարադասությունը, ինչպես նաև ստորոգյալի կառուցվածքի և լրացյալի բառաքերականական բնույթը գոյականական անդամի լրացում կախյալ նախադասությունների դեպքում, բայի սեռը և բայիմաստը՝ բայական անդամի լրացում երկրորդական նախադասություններում:

Ժամանակակից հայերենում տարաբնույթ նախադասությունների մեջ այլևայլ գործառույթներով հանդես են գալիս հիմնակա*նում որ, թե, եթե, մինչ(և), քանի, քանի դեռ, քան,*

քանի որ, որովհետև, մանավանդ, մանավանդ որ, ինչ է թե, թե ինչ է, միայն, միայն թե ստորադասական շաղկապները:*

Մենք հոդվածում քննության առարկա ենք դարձնում բազմագործառույթ *որովհետև, քանի որ, մինչ(և),քանի դեռ* ստորադասական շաղկապների կիրառությունը բարդ նախադասության ոլորտում:

Արդի հայերենի գործածական շաղկապներից *է որովհետև-ը, քանի որ-ը,* որոնք արտահայտում են պատճառի և հիմունքի հարաբերություններ: Նշենք, որ պատճառի և հիմունքի պարագա ստորադաս նախադասությունները գերադասի հետ կապակցվում են հիմնականում միևնույն շաղկապներով՝ *որովհետև, քանի որ, չէ որ, մանավանդ որ* և այլն: Այդ տարբեր հարաբերությունների իմաստները դրսևորվում են նույն շաղկապների տարբեր կիրառություններում:

Սակայն *որովհետև-ը* տարածված է բուն պատճառի, *քանի որ*-ը հիմունքի հարաբերությունների արտահայտման դերով: Այս շաղկապները կարող են այդ երկու նշանակություններն էլ արտահայտել: Չնայած պատճառի ու հիմունքի հարաբերությունների ընդհանրությանը՝ դրանց միջև կա էական տարբերություն: «Գործողության կամ եղելության պատճառը այն բուն ազդակն է, դրդապատճառը, որի հետևանքով կատարվում է գործողությունը, իսկ հիմունքը մտավոր կամ այլ գործողության իրավական, սովորույթային,ճանաչողական այլ ելակետն է»:[1]

Որովհետև շաղկապը արտահայտում է և՛ պատճառի, և՛ հիմունքի հարաբերություն: Պատճառի հարաբերությունը արտահայտվում է այն դեպքում. «երբ կապակցվող երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության մեջ նկարագրվող որևէ մի իրողության կամ երևույթի ծագման կամ գոյության պատճառ»[2]:

Օրինակ՝

Մեր զրույցը խանգարվեց, որովհետև լսվեց ոչխարների մայունի աղմուկը:

Նա ձանձրանում էր հարցերից, որովհետև տհաճ էր խոսել նրա ապագայի մասին:

Որովհետև-ով կապակցված կախյալ նախադասությունը հիմունքի հարաբերություն է արտահայտում, երբ գլխավոր նախադասությունը պարունակում է եզրակացություն, ենթադրություն, կարծիք՝ երկրորդական նախադասությունում արտահայտված կատարվելիք, կատարվող գործողության մասին:

Ինչպես.

Նրան համարում են խելացի, որովհետև նա ամեն մի քայլը կատարում է մտածված:

Նա կհամաձայնվի քեզ հետ, որովհետև այդ հարցի մասին նույն կարծիքն ունի:

Իսկ այդ չինական պարիսպը, որովհետև երկար է, ամենաերկարն է, ուզում է տեղ գտնել յոթ հրաշալիքների շարքում :

Հաճախ գլխավոր նախադասության ստորոգյալը լինում է բաղադրյալ:

Օրինակ.

Նրա այդ որոշումը սխալ է, որովհետև հիմնված է անստույգ փաստերի վրա:

Որովհետև շաղկապով կապակցված հիմունքի պարագա ստորադաս նախադասությունը հիմունքի հարաբերություն է արտահայտում, եթե գլխավորում առկա են ենթադրական, հավանականության նշանակության բառեր/*հավանաբար, երևի, իհարկե* ևն/:

Օրինակ՝

Հավանաբար իրեն վատ է զգում, որովհետև աշխատանքի չի եկել:

Նա, իհարկե, կպարգևատրվի, որովհետև կա նախնական համաձայնություն:

Գլխավոր նախադասությունը պարունակում է որևէ գործողության անհրաժեշտության, հնարավորության կամ անհնարինության մասին եզրակացություն, որի համար հիմունք է հանդիսանում կախյալ նախադասության մեջ արտահայտված գործողությունը, երևույթը: Այս

*Որ,թե բազմագործառույթ շաղկապներին նվիրված մեր հոդվածը տպագրվել է Հայերենագիտական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածուում /7-9 հոկտեմբերի, 2015թ./

[1] Ս.Գ.Աբրահամյան,Հայոց լեզու, Շարահյուսություն,Երևան, 2004թ.,էջ 175:

[2] Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 240:

դեպքում գլխավոր նախադասության մեջ գործածվում են *պետք է, անհրաժեշտ է, անհնարին է, կարելի է* միադիմի կապակցությունները:

Օրինակ. Անհրաժեշտ է ելույթ ունենալ, որովհետև սխալ տեսակետներ առաջ քաշվեցին:
Պետք չէ ներս մտնել, որովհետև իրար թշնամի են:
Հաճախ գլխավոր նախադասության մեջ կարող են գործածվել *ուստի, ուրեմն* բառերը, որոնք *որովհետև* շաղկապի հետ կազմում են բարդ շաղկապներ:
Օրինակ՝ Որովհետև նա է ստեղծել դա, ուրեմն հզոր է բոլորից:
Եվ որովհետև մենք ուժեղ ենք ոգով, ուստի մեզ հաղթել չի լինի:
Քանի որ շաղկապով կապակցված երկրորդական նախադասությունը ցույց է տալիս այն հիմունքը, պատճառը, որից ծագում, բխում է գլխավոր նախադասության մեջ արտահայտված եզրակացությունը, հետևությունը: Այս շաղկապը ավելի հաճախ հանդես է գալիս հիմունքի հարաբերությունների արտահայտման դերով: « Հիմունքը տարբեր կարգի է լինում՝ իրավական, սովորույթային, դատողական, ճանաչողական և այլն»:[1] Հիմունքը հիմք է հանդիսանում հետևության:

Օրինակ՝
Ծիծաղիր, քանի որ կարող ես:
Քանի որ լույսերը մարած են, ըստ երևույթին, արդեն քնել են:
Գլխավոր նախադասությունը պարունակում է եզրահանգում, կարծիք երկրորդական նախադասության մեջ արտահայտված գործողության, իրողության, միջոցի վերաբերյալ: Այս դեպքում գլխավոր նախադասության ստորոգյալը կարող է դրվել ենթադրական, հարկադրական եղանակի բայերով:
Օրինակ՝ Նա չի գա, քանի որ ուշ է:
Անահիտը կմեկնի, քանի որ ստացել է ծնողների հանաձայնությունը:
Քանի որ շաղկապով կապակցվող պատճառի պարագա երկրորդական նախադասության գործողությունը նախորդում է գլխավոր նախադասության գործողությանը կամ էլ նրա հետ միաժամանակ է կատարվում:
Օրինակ՝Նստում էինք երկուսով, քանի որ Աստված մեզ արժանի չհամարեց զավակ ունենալու:
Ամեն օր տխրում էի,քանի որ չէի ընդունվել համալսարան:
Գլխավոր և երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալները արտահայտվում են հիմնականում սահմանական եղանակի ժամանակաձևերով : Երկրորդական նախադասության ստորոգյալը կարող է արտահայտված լինել անցյալի անկատար,անցյալի վաղակատար ժամանակներով կամ լինում է բաղադրյալ՝ արտահայտված անցյալ ժամանակով դրված հանգույցով:
Բերենք օրինակներ՝
Ինքնաթիռը պայթել է թռիչքից քսաներեք րոպե անց, քանի որ կտրուկ շեղվել էր ուղղությունից:
Շատ հազվադեպ են ուրիշները համաձայնվում նրա հետ, քանի որ աղանդը գաղտնի ծեսեր ուներ:
Այսպիսով՝ պատճառից բխող գործողությունը հետևանք է, հիմունքից բխող գործողությունը՝ հետևություն:
Ժամանակակից հայերենի ժամանակի իմաստ ունեցող շաղկապներից են *մինչ, մինչև, քանի դեռ: Մինչ(և)* շաղկապը իր հիմնական կիրառությամբ կապում է ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը գլխավորին: Գործածական և խիստ տարածված են նաև մինչ(և) շաղկապով կապակցվող չափի պարագա երկրորդական նախադասությունները:
Մինչ(և) շաղկապով կապակցվող ժամանակի պարագա կախյալ նախադասությամբ արտահայտված գործողությունը հաջորդում է գլխավոր նախադասությամբ արտահայտված գործողությանը, իրողությանը: Այն հիմնականում գործածվում է առաջադաս:
Այսպես՝
/Այն ժամանակ/,Մինչ(և) նա կմտածեր, դատախազն ասաց:

[1] Ս.Գ.Աբրահամյան,Հայոց լեզու, Շարահյուսություն,Երևան, 2004թ.,էջ 177:

/Այն ժամանակ/,Մինչև կինը ճաշը եփեր, նա սկսում էր մի հին պատմություն:

Մինչև շաղկապով կապակցված չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությամբ նշվում է այն ժամանակամիջոցը, ժամանակի տևողությունը, չափը,մինչև որը շարունակվում է գործողությունը:

Օրինակ.

Նա նստում է այնքան,մինչև հանգչում է կրակը:

Անահիտը խաղում էր գնդակով,մինչև լուսինը բարձրացավ ծառերի հետևից:

Գերադաս բաղադրիչի գործողությունը նախորդում է ստորադաս եզրում արտահայտված գարծողությանը: Չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունը կարող է գործածվել նաև նախադաս:

Օրինակ.

Մինչև տեղ հասնես, կքամվի:

Մինչև ձիերը նստեք,ես ձորը կհասնեմ:

Հաճախ էլ գերադաս նախադասության գործողությունը կատարվում է երկրորդական նախադասությամբ արտահայտված գործողության մի պահին՝ մինչև նրա ավարտելը: Երկրորդական նախադասության մեջ ստորոգյալը սովորաբար ըղձական եղանակով է արտահայտվում:

Ինչպես՝

Նա չի հանգստանա /այնքան ժամանակ/, մինչև հայրենիքի ռազմական վարկը չվերականգնվի:

Մնացողը նայում է գնացողի հետևից, մինչև սարի հետևն անցնի կամ իջնի ձորը:

Ես մատներս խառնեմ լուսնի վարսերի մեջ այնքան, մինչև ձուլվեն ու դառնան լույս:

Մի շարք օրինակներում զուգահեռաբար ընդգծվում են նաև գլխավոր նախադասության գործողության տևողության չափն ու քանակը:

Օրինակ. Այդ օտարները պետք է պահվեին այնքան ժամանակ, մինչև մեր աշխարհում բնիկներից նոր ուժեր պատրաստվեին:

Այս շաղկապը գործածվում է ժխտական կառուցվածք ունեցող նախադասությունների շաղկապման համար: Երկրորդական նախադասությունը նշում է մի իրողություն, որը մինչև չկատարվի, չի կարող իրականանալ այն, ինչի մասին խոսվում է գլխավոր նախադասության մեջ: Նշենք, որ այս դեպքում երկրորդական նախադասությունը, որպես կառուցվածքային յուրահատկություն, միշտ գործածվում է նախադաս:

Օրինակ.

Մինչև հատիկը հողում չի մեռնում, մեկը հազարի պտուղ չի բերում:

Մինչև դատախազը չգա, բերանս չեմ բացի:

Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը կարող է ունենալ *այն ժամանակ* հարաբերյալը գլխավոր նախադասության մեջ,իսկ չափ ու քանակի պարագան՝ *այնքան ժամանակ,այնքան ժամանակով* կամ *այնքան ժամանակում:* Այս հարաբերյալների չլինելու դեպքում մտովի վերականգնում ենք և որոշում երկրորդականի բնույթը:

Քանի դեռ շաղկապի գործածությամբ կապակցվող մասերի միջև կարող են արտահայտվել տարբեր իմաստային հարաբերություններ: Այն կիրառվում է ժամանակային, ժամանակի տևողության չափի նշանակությամբ: *Քանի դեռ* շաղկապով կապակցված ժամանակի պարագա երկրորդական նախադասությունները ցույց են տալիս տևական, ընթացքի մեջ գտնվող գործողություններ: *Այն* հիմնականում ցույց է տալիս ստորադաս ու գերադաս նախադասությունների գործողությունների միաժամանակություն:

Օրինակ.

Մի կին ջուր էր առնում, քանի դեռ մարդիկ չէին զարթնել:

Կարող եմ մոռանալ ես քեզ, քանի դեռ իմ մեջ մնում է հուշը անցած օրերի:

Բայ-ստորոգյալը անցյալ կատարյալ ժամանակով սովորաբար չի գործածվում:

Կախյալ եզրը կարող է ցույց տալ գլխավորին հաջորդող գործողություն: Այս դեպքում այն գործածվում է ժխտական ձևերի հետ:

Օրինակ. Քանի դեռ չի եկել, գնամ:

Քանի դեռ գնացքը չէր ժամանել, մենք հանգիստ զրուցում էինք:

Քանի դեռ շաղկապով կապակցվող չափ ու քանակի պարագա երկրորդական նախադասությունը նշում է ժամանակի այն տևողությունը,որի ընթացքում կատարվում է գերադաս եզրի բայ-ստորոգյալի արտահայտած գործողությունը կամ եղելությունը:

Օրինակ.Կաշխատեմ այնքան,քանի դեռ առողջ եմ:

Երկրորդական նախադասությունը չափի պարագա է՝ ժամանակի տևողության քանակության իմաստով. այն նյութական բովանդակություն է տալիս գլխավոր եզրում առկա *այնքան* հարաբերյալին: Գլխավոր եզրում իբրև հարաբերյալ կարող է գործածվել նաև *այնքան ժամանակ* կապակցությունը: Ունենում ենք ժամանակի տևողության չափի պարագա երկրորդական նախադասություններ:

Օրինակ.Լույսը բարի է, և բարին լույս է այնքան ժամանակ, քանի դեռ սրտերն այդ «բարի լույսը»... լսում են առաջին անգամ:

Այս շաղկապով կապակցվող նախադասությունների միջև դրսևորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք սահմանափակման ընդհանուր նշանակություն ունեն: Գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը կամ վիճակը տևում է այնքան ժամանակ, քանի դեռ տեղի է ունենում երկրորդական նախադասության մեջ նկարագրվող գործողությունը կամ վիճակը:

Օրինակ. Պիտի օգնեմ նրան, քանի դեռ կենդանի եմ:

Պիտի ապրենք, քանի դեռ ողջ ենք:

Այսպես էի ապրում ես, քանի դեռ նա սիրում էր ինձ:

Այսպիսով՝ բազմագործառույթ շաղկապները հարստանում են բազմապիսի նշանակություններով, իմաստային տարբեր նրբերանգներով՝ արտահայտելով շարահյուսական զանազան հարաբերություններ:

Օգտագործված գրականություն

1.Աբրահամյան Ս.Գ.,Չթեքվող խոսքի մասերը և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը ժամանակակից հայերենում, Երևան, 1965թ.:
2.Աբրահամյան Ս.Գ.,Հայոց լեզու, Շարահյուսություն, Երևան,2004թ.:
3.Աբրահամյան Ս.Գ., Պառնասյան Ն.Ա.,Օհանյան Հ.Ա., Բաղիկյան Խ.,Գ., Ժամանակակից հայոց լեզու,Շարահյուսություն, հ,3,Երևան, 1975թ.:
3.Գարեգինյան Գ,Լ.,Շաղկապները ժամանակակից հայերենում,Երևան,1963թ.:
4.Պապոյան Ա.Հ.,Բաղիկյան Խ.Գ.,Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան,2003թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նունե Խաչատրյան - բ.գ.թ., հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

E-mail: Khachatryan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ. Ղազարյանը:

ՀՏԴ 809.198.1 Հայոց լեզու

ԳՐԱԲԱՐԻ ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ

Կարինե ԱՎԱՆԵՍՅԱՆ

Բանալի բառեր: *Գրաբար, գունապատկեր, միջին հայերեն, աշխարհաբար, նախդիր, նախդրագործածություն, հոգնակի թվի կազմություն, հոլովում, խոնարհում, ածանցում, անցյալ դերբայ, պատմաբառեր, հնաբառեր, նորաբանություններ:*

Ключевые слова: *грабар (древнеармянский язык), колорит, среднеармянский язык, ашхарабар (новый армянский язык), предлог, структура множественного числа, склонение, спряжение, афиксация, неологизм, причастие прошедшего времени, архаизмы, истаризмы,*

Key words: *Old Armenian (Grabar), color, Middle Armenian, New Armenian (Ashkharhabar), preposition, use of the preposition, composition of the plural, declension, conjugation, affixation, past participle, historical words, archaic words, neologisms.*

К. Аванесян

КОЛОРИТ ГРАБАРА В ПОЭМЕ «ТОНДРАКЕЦИНЕРЫ»

Все писатели, которые творят на исторические темы, в основном обращаются к соответственному периоду развития родного языка. Для создания правдивого колорита эпохи используются историзмы и архаизмы. В этом смысле Шираз не исключение. В статье исследуется структура множественного числа древнеармянского языка (грапара), парадигма склонения и спряжения, причастие прошедшего времени, использование предлогов и разные грамматические категории в поэме, посредством которых Шираз создает колорит исторической эпохи языка.

K. Avanesyan

THE LANGUAGE COLOR IN THE POEM "THE TONDRAKIANS"

All writers, who create historical themes mainly apply to the corresponding period of development of the native language, use historical and archaic words with the aim of giving a historical style. The article examines manifestations of the composition of the plural form of the Old Armenian, declension and conjugation paradigms, past participle, the use of preposition, different derivative and grammatical realities in the poem "The Tondrakians" through which Hovhannes Shiraz creates the language color of the historical period.

Պատմական թեմաներով ստեղծագործող բոլոր գրողներն էլ հիմնականում դիմում են մայրենի լեզվի զարգացման համապատասխան շրջանին, պատմական ոճավորման նպատակով օգտագործում պատմաբառեր ու հնաբառեր: Հոդվածում քննվում են գրաբարյան հոգնակիի կազմության, հոլովման և խոնարհման հարացույցների, անցյալ դերբայի, նախդրագործածության, բառակազմական, քերականական տարբեր իրողությունների դրսևորումները «Թոնդրակեցիները» պոեմում, որոնց միջոցով Հովհ. Շիրազը ստեղծում է պատմական շրջանի լեզվական գունապատկերը:

Հովհ. Շիրազը «Թոնդրակեցիները» բնորոշել է «պոեմ՝ պատմափիլիսոփայական, վիպերգ՝ ազգային և համամարդկային»:Պատմական ոճավորման, ազգային հենքը տիպական ներկայացնելու համար բանաստեղծն առանձնահատուկ ուշադրություն է դարձրել պոեմի լեզվին: Իրադրությունները պոեմում տեղի են ունենում 11-րդ դարի կեսերին, երբ գրական լեզուն հին հայերենն էր: Շիրազը հմտորեն օգտագործում է գրաբարի բառապաշարը, քերականական ձևերը, բառակազմական միջոցները, արտահայտությունները, լեզվական-քերականական այլևայլ իրողությունները՝ ժամանակաշրջանի գունապատկերը ճիշտ ու արտահայտիչ ներկայացնելու համար:

Պատմական թեմաներով ստեղծագործող բոլոր գրողներն էլ հիմնականում դիմում են մայրենի լեզվի զարգացման համապատասխան շրջանին, պատմական ոճավորման նպատակով օգտագործում պատմաբառեր ու հնաբառեր; Այս առումով Շիրազը բացառություն չէ: Բայց և այնպես շատ ինքնատիպ է, յուրահատուկ: Պարզապես, Հովհաննես Շիրազ է:

Պոեմի սյուժեն զարգանում է կրքոտ բանավեճով, որ մղվում է մի կողմից պետական այրերի՝ Հովհաննես Սմբատ արքայի, Վահրամ Պահլավունի սպարապետի, Հուսիկ Աղավնունի կաթողիկոսի, Գրիգոր Մագիստրոս փիլիսոփայի, մյուս կողմից՝ թոնդրակեցիների պարագլուխների միջև: Այն ներառում է դավանաբանական, սոցիալական, փիլիսոփայական

հարցադրումներ: Դրանք հնչում են գրաբարյան շեշտադրումով, և մաս առ մաս, գրուխ առ գլուխ ստվարանում է պոեմի գրաբարյան բառապաշարը, ընդլայնվում է բառերի իմաստային խմբերի թեմատիկան:

Պոեմում գործածված հին հայերենյան բառապաշարը կարելի է բաժանել երեք խմբի. 1) ժամանակակից հայերենի համագործածական բառեր՝ չարք, քանզի, բալասան, յուր, հանապազօրյա, գույժ, օրհաս, ավետիս, զի, գեթ, սալ և այլն, 2) գրաբարյան բառեր, որոնք գործածվում են առավել նեղ մասնագիտական շրջանակներում, գրքային և հանդիսավոր,վերամբարձ ոճերում՝ անագորույն, պարմանի, զարմ, գոց, այպանել, հեղած, խոլ, բանադրել, տյարք, տարաժամ, իրավ, չիք, ծաղկող, ընդոծին, բավ, համբակ, ապերասան, սոքա, դոքա, ոգորում, բանգ և այլն, 3) հնաբառեր, որոնք այնքան վաղուց են դուրս եկել գործածությունից, որ դրանց բացատրությունը կարելի է գտնել միայն Հայկազյան բառարաններում: Նման բառերից մի քանիսի անհրաժեշտ բացատրությունը տրված է պոեմի տողատակերում՝մորոս, Ախերոն, կայթում, պլուզ, ոթան, իգան, երեկ, շարավ, արկանոց, մծղնյա, զարկան, հռակ, քարբ, հրոսել, գուպար, խոխոմ, մոծիր, անոպա և այլն: Իհարկե, այս բաժանումը պայմանական է, հստակ սահմանազատում չկա այդ խմբերի միջև, բայց որ երրորդ շարքը թե' քանակով, թե' իմաստով շատ ինքնատիպ է, շիրազաշունչ, անհերքելի է: Այսպես, բանաստեղծը գրում է. «- Լռի՛ր, ***մորոս*** դու ***քանասար***, Գայլիդ ի՞նչն է ու՞մ հավասար...» (էջ 44): ***Մորոս*** բառի բացատրությունը տրված է տողատակում, ըստ Նոր հայկազյան բառարանի՝ հիմար, անմիտ, խելագար և այլն, իսկ ***քանասար*** բառը նույն բառարանում բացատրվում է հետևյալ կերպ. «Մակդիր արաբացի գայլոյ՝ որպես անյագ բերանաբաց, երագոտն և հափշտակիչ, չար յոյժ...»:

Թեմատիկ առումով պոեմում շատ են եկեղեցու, հոգևոր պաշտամունքի հետ կապված գրաբարյան բառերն ու հասկացությունները: Դրանք հնչում են գործող հոգևորական կերպարների խոսքերում, կրոնական-դավանաբանական հարցերի շրջանակներում տարվող բանավեճերի ընթացքում, ինչպես նաև հեղինակային խոսքում: Վերջինս ուվերտյուրա-նախերգանքի պես ունկնդիր-ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնում է պոեմի հիմնական մոտիվների՝ շեշտադրումների վրա: Ինչպես՝

Դուռն բանադրանաց - Բայց այս իրիկուն՝ մոմերի նման ,
Հեգ լուսարարի աչքերն են դողում,
Ձեռքերն են դողում, ու տե՛ս՝ անսահման
Երկնի մոմերն էլ հազիվ են շողում
Վիրավոր աստծո աչքերի նման,
Որ դեռ չգործած մեղքն էլ է տեսնում,
Այրությանց մեղքը՝ մանկանց երեսին... (էջ 39, Գլուխ 2-րդ)

Աստված իմ, թույլ տուր՝ հուշերս բանան
Այն թոնդրալուսո դարերն անմատյան: (էջ 47, Գլուխ 1-ին)
Աստված իմ, երգիս շանթերով հեղիր ցած
Ոսկե բանալին բանադրությանց: (էջ 61, Գլուխ 3-րդ)

Բանադրանք միջին - Աստվա՛ծ իմ, ո՛ւժ տուր՝ մանկունքս բանան
Հավերժակորույս գաղտնիքդ հավիտյան: (էջ 173, Գլուխ 5-րդ)

Բանադրանք վերջին - Աստվա՛ծ իմ, ո՞ւր է դուռդ հարության,
Հայտնվիր դու էլ, ահե՛ղ դատաստան: (էջ 231, Գլուխ 1-ին)

Հուսկն բանադրանաց- Ահա թե ինչ է Մեր ոգեկյանքը, Անաստվածների ապաշավանքը: (էջ 265)

Հովհ. Շիրազը հոմանի շային շարքերով ներկայացնում է կրոնական հագ ու կապ, հոգևոր անձեր, հավատալիքներ նշանակող բառեր և դրանց հետ առնչվող այլ հասկացություններ՝ վեհ, վանահայր, կաթողիկոս, ռաբբի, սարկավագ, քուրմ, ճգնավոր վարդապետ, աբեղա, հերձվածող,

կերոն, բուրվառ, սկիհ, կանթեղ, ավետարան, ղուրան. վեհարան, խորան, տաճար, վանք, մատուռ, մզկիթ, մինարե, ատրուշան, բագին, քավարան, տարտարոս, դժոխք, կուսանոց. նշխար, մանանա, մյուռոն, խունկ. բանադրանք, հոգեհանգիստ, պատարագ, խաչհամբույր, ծոմ, հաղորդություն, ծես, ջրօրհնեք և այլն: Այս բառերի մեծ մասն այսօր կա մեր ակտիվ բառապաշարում՝ շնորհիվ գործող հայ եկեղեցու, իսկ 60 տարի առաջ, երբ գրվում էր պոեմը, դրանք սակավ գործածություն ունեցող հնաբառեր էին: Շիրազը պեղեց, թափ տվեց այդ բառերից հնության փոշին և պոեմի տողերում վերակենդանացրեց մեր ճոխ ու շքեղ արքայական լեզուն:

Պոեմում մեծ թիվ են կազմում նաև գրաբարյան հատուկ անունները՝ անձնանուններ, տեղանուններ, գետերի, վանքերի անուններ՝ Թորակ, Վրվեռ, Կյուրեղ, Հակոբոս, Հուսիկ, Վարազ, Ռահ, Թոնդրակ, Դարանաղի, Մանանաղի, Բասեն, Բերկրի, Ճորոխ, Խլաթ. Վանանդ, Ջյունիք, Ապահունիք, Սպասավանք, Զորավանք, Կեչառիս, Գլակա... Բազմաթիվ են: Շիրազը հրեղեն խոսքով մանրակերտում է հին Հայաստանի աշխարհագրական քարտեզը. «Կա՞ մի վանքյան եկեղեցի, Մայր Անիի մի մայր տաճար, Վանա Ծովի մի Աղթամար, Մի Սասունա Սուրբ Կարապետ, Կա՞ մի Սյունյաց Տաթևակերտ, ՄԻ Մարմաշեն, մի Գոշավանք, Կա՞ մի մատղյա Սպասավանք, Չունե՞ս, մի՞թե, մի Սանահին, Աղուհացկեր Հաղպատ մի հին, Վեղարակիր մի մենաստան...»(էջ 58): «Գահս թողեց առանց հող-տան՝ Առանց Արաքս, առանց Տիգրիս, Առանց Խլաթ, առանց Խարբերդ, Առանց Եփրատ, անարտամեդ, Առանց Մոկսի, առանց Սիփան, Առանց Ղարսի, առանց Ծիփան, Առանց Տարոն, առանց Անի, Առանց Կարնո, առանց Վանի, Առանց Դվնա, առանց Ճորոխ. Էլ ի՞նչ արքա առանց մայր հող»(էջ 90): «Ահա թե ինչու զինվեց մայր Անին՝ Ընդդեմ վարակյալ ողջ թոնդրակեցոց, Ընդդեմ Ծաղկոտնի, ընդդեմ հարքացոց, Ընդդեմ ուրացյալ Զարեհավանի, Ընդդեմ հերձվածող օձ Ապահունյաց, Ընդդեմ շղթայված ողջ Հայաստանի, Ընդդեմ Խնուսի, ընդդեմ օձ Սյունյաց, Ընդդեմ Եկեղյաց և ընդդեմ Տայոց...»(էջ 132):

Ժամանակաշրջանի լեզվական գունապատկերը «Թոնդրակեցիները» պոեմում չի սահմանափակվում գրաբարի բառապաշարի օգտագործումով: Պոեմում մեծ թիվ են կազմում գրաբարյան քերականական իրողությունները: Դրանք սոսկ քերականական քարացած ձևեր չեն, այլ մեր լեզվի հին ու ժամանակակից շրջանների քերականական ձևերի, համանիշների գիտական-նորարական համադրում, որի շնորհիվ պոեմի լեզուն հարստանում է կենդանի, գունեղ տարրերով:

Պոեմի լեզվին գրաբարյան շունչ են հաղորդում հոգնակիի կազմության -ք մասնիկի, հավաքականության իմաստ հաղորդող ածանցների, անեզական գոյականների գործածությունը, որով առատ է հին հայերենը. տյարք, ծնծղայք, շինականք, աբեղայք, իշխանուհիք, շղթայք, ո՞րք, պաղվոսյանք, Հռիփսիմյանք, մանկտի-մանկունք.... Բանաստեղծը, գրաբար ու ժամանակակից հայերեն միացնելով, կազմում է քերականական նույնանիշների շարք՝ թոնդրակյանք-թոնդրակեցիներ-թոնդրակեցիք: Բանաստեղծական տողերում ծնվում են հոգնակիի կազմության հեղինակային նորաբանություններ՝ խորամանկուհիք, միմոսյալք, անլոխմանելիք, մզկիթերաց, ըմբոստանք, հրեշուհիք, որձուհիք, հիզագյալք և այլն:

Պոեմում աչքի է զարնում նաև անցյալ դերբայի առատությունը, որով էականորեն տարբերվում են գրաբարի և աշխարհաբարի դերբայական համակարգերը: Ինչպես գիտենք, հին հայերենի այդ դերբայը շատ գործածական է ժամանակակից գրական արևելահայերենում: Անցյալ դերբայի մի շարք քարացած ձևեր վերածվել են ածականների, իսկ *-յալ* դերբայական վերջավորությունն արդի հայերենում դարձել է ածականակերտ ածանց: Պոեմում մեծ թիվ են կազմում այդ դերբայի և՛ գրաբարյան ձևերը, և՛ հեղինակային նորաբանությունները. կուրացյալ, կապյալ, սկսյալ, զինյալ, մեռյալ, ուրացյալ...// սրանց կողքին՝ անմոլորյալ, տմարդյալ, վերմակացյալ, ցավընկյալ, անգթացյալ, ազգաեղծյալ, թոնդրակացյալ, ճգնավորյալ, մծղնեացյալ, աղքատուսյալ և այլն: Շիրազը հմտորեն կազմում է նաև ապառնի դերբայներ՝ անհեղլի, հավատացելոց:

Պոեմում առկա է նաև հին հայերենի խոնարհման հարացուցային ձևերի գործածությունը: Դրանք սահմանական, ստորադասական, հրամայական եղանակների տարբեր ժամանակների,

տարբեր դեմքերի բայաձևեր են՝ ծածկե, խուժե, գուժե, համբուրե, բանամ, փրկյա, օգնյա, դարձուց... Այնպես, ինչպես վարպետ նկարիչն է գունային նրբերանգներ ստանում, Շիրազն էլ գրաբարի և աշխարհաբարի խոնարհման հարացույցների համադրումով բայաձևեր է կերտում՝ սկսվեցավ, չկանգնե, կբուրե, աղանդվեցար, ձոնեցար, գերվեցան...

Հովհ. Շիրազն անտես չի արել նաև գրաբարի հոլովման հարացույցի ընձեռած հնարավորությունները: Պոեմի լեզվական գունապատկերին առանձին շուք են տալիս հայերենի հոլովաձևերը և դրանց համաբանությամբ կերտված շիրազյան նորաբանությունները: Շատ են հատկապես տարբեր հոլովումների սեռական- տրական հոլովաձևերը՝ աստծո, գլխո, իմո, լուսնո, հուսո, երկնի, բանադրանաց, թոնդրակեցոց, սոցա, նոցա, է՞ր, առն, սոսյաց, իշխանաց, դժողաց, սոսյաց, տանջանաց, արանց, ծառոց, հավատոց.... Շատ են:

Գրաբարի, միջին հայերենի և ժամանակակից հայոց լեզվի քերականական ձևույթների համադրումով Շիրազը յուրովի է երանգավորում ժամանակաշրջանի լեզվական գունապատկերը: Այսպես, արդի հայերենի հոգնակի թվի կազմության ***եր, ներ*** համակարգային մասնիկների + գրաբարյան հոլովիչներ, հոլովակերտներ մասնակաղապարով ստեղծված են՝ ձիերաց, գետերու, կուսանոցներաց, մեղքերաց (սրան զուգահեռ պոեմում կա նաև մեղաց ձևը), աչքերու, վանքերաց, անաստվածներու, դաշույններաց, քույրերաց, աստղերաց, անխելքաց... հոլովաձևեր:

Պոեմում գործածված են ***տրական հոլով + է (ե) հոլովակերտ*** մասնակաղապարով աննախդիր բացառականի միջինհայերենյան ձևեր և հեղինակային նորաբանություններ. քեզմե, ինձմե, մեզմե, ուխտեուխտ, քարայրեքարայր..., նույն համաբանությամբ՝ ինձմով, իրմով գործիական հոլովաձևեր, սրանց կողքին՝ գրաբարյան հոլովաձևեր՝ ի նոցանե, կամոք, հացիվ, բանիվ, կամավ, մեղմիվ, շրթամբ, ձեռամբ, հեշտիվ և այլն:

Հին հայերենի և արդի հայոց լեզվի թերևս առանցքային տարբերությունը նախդրագործածությունն է: Այս առումով պոեմին պատմականության ուժեղ երանգ են տալիս հատկապես գրաբարյան նախդիրների և նախադրությունների գործածությունը: Դրանց մի մասը ժամանակակից հայերենում օգտագործվող քերականական ձևեր են՝ ի սեր, ի վեր, ի մեջ, ի լուր, ի վայր (ի վար), առժամ, ցայսօր, ցմահ, ցվերջ և այլն, մի մասը՝ գրաբարյան նախդրավոր կառույցներ, որ կազմում է բանաստեղծը. կթողնե ի բաց, ի վերա Ավետարանի, ի մեջ անգիտաց, դոնե ի դուռ, տնե ի տուն, մեջ ի վարդո, ի վեր գլխո (ի վերա գլխոց), ի վերա երկրի և այլն, որոնք Շիրազը վարպետորեն ներառում է գրական արևելահայերենի քերականության մեջ: Օր.՝ - Ազատ եք՝ ի դուրս, - շնորհեց արքան,- Ու թեթևացած վկայք դուրս եկան, - Վանդակից ի դուրս թռչող հավքի պես... (էջ 129):

Գրաբարյան ***ի*** նախդիր + հայցական հոլով մասնակաղապարը, ինչպես գիտենք, արտահայտում է գործիական հոլովի իմաստ: «Թոնդրակեցիների» հեղինակը քերականական այդ համանիշությունն օգտագործում է խոսքին պատկերավորություն, արտահայտչականություն, պատմականություն հաղորդելու համար: Օր.՝Լոկ մեկը մնաց երկու մտքանի,

Լոկ մի Հրանուշ, որպես աղավնի՝
Ցին ու բազեի երամից՝ մի հավ, որ խաչի առաջ
Այն է՝ ծունկի էր մեղմ գալու, ինչպես եղնիկի բառաչ,
Այն է՝ ուռենին, որ պիտի կորվեր,
Որ ձյունից որպես ձնծաղիկ՝ նորվեր,
Այն էր, բայց բոթի սուրհանդակն հասավ,
Հասավ և ***ի հեզ*** և ***ահով*** ասավ: (էջ 251)

Հին հայերենի քերականական այլ ձևերից հարկ է նշել նաև ***ն*** վերջնահնչյունի օգտագործումը պոեմում. դուռն բանադրանաց, հուսկն բանադրանաց, մեծն Մասիսի: Չնայած գրաբարում ***ը*** հոդ չկար, Շիրազը, անհրաժեշտության դեպքում, ***ն***-ն փոխարինում է նույնանիշ ***ը***-ով՝ յոթը տարի, հինգ հարյուր յոթը վանականներ, յոթը մահր, յոթը դաշույն:

Պոեմում մեծ թիվ են կազմում գրաբարյան արտահայտությունները, առանձին բառակապակցությունները, գրաբարյան ոճերը: Օր.՝ - Տե՛ր Աղավնունի, ***չեմ ինչ ավետիս***, Ե՛վ գույժ եմ, և՛ հույս, ների՛ր նվաստիս (էջ 39): Թե ձեռ քաշեք պիղծ աղանդից՝ Թե ***ետ այտու*** ինձ զորք էլ տաք՝ Ձեզ հող կտամ էն իմ հանդից (էջ 97): Մինչ լռում էին առաջնորդները, Ներսում՝ պորտի մեջ ***մահու ու կենաց***, Ողբերգում էին դրսում ճորտերը՝ Գուսանի բերնով՝ վշտով հայրենյաց (էջ 85): Արքա, թե աչքիս կշռած քառսը Քո աչքին՝ ***դույզնինչ***՝ ցնորք կթվա՝ Կբերեմ Թուղթն էլ Հայր Նարեկացու (էջ 110): ***Պահ մի*** սասանեց ատյանն ապշալի (էջ 127): ... Որ թույնի փոխեց ***տվնջյան հացս*** (էջ 127): - ***Բանիվ չեն սոքա, այլ միայն հացիվ***, Անբանանում է բանիվն էլ սոցա (էջ 129): ***Մեղա՛, փրկյա՛, տե՛ր,*** ծովն էլ Սևանա... (էջ 174): Լռեց ատյանը ***դարե մի վայրկյան..*** (էջ 177): ***Ի քեզ*** էլ, ահա, ծունկի չեն իջնում քեզուրացները (էջ 247): -Քննեցանք ***խղճի մտոք***, Ձննեցանք՝ խիստ ազգահոգ, - Գտանք, որ էլ ***Չիք ինչ ներել***, Ձի կուզեին մեզ մահ բերել (էջ 269):

Բանաստեղծի խոսքին գրաբարյան շունչ են հաղորդում նաև բառերի կրճատ ձևերի օգտագործումը՝ երդ, չիղջ, գռեհ, Թոնդրա, զայրածը, սաստ, եփը գա... Ով՝ ի հագ իր պիղծ, եղծ որովայնի՝ Այլոց կրքերը փայե, փայփայե... (էջ 212):

Շիրազը հմտորեն է օգտվում հին հայերենի բառակազմական այլևայլ միջոցներից: Այսպես, գրաբարյան ***առյուծենի, արքենի*** ածանցավոր կազմությունների կողքին, նրանց նմանությամբ ստեղծում է լրբենի (սատանի ծնունդ-288, լորենի (նռնալի կրծքով-189), ժայռենի (հող), ***-յա*** ածանցով՝ տրդատյա, մատղյա, օձյա, խաչքարյա, բյուրադարյա, ***ընդ*** նախդիրով՝ ծովընդդմոտ, խաչընդդեմ, հայընդդեմ, հայրընդդեմ, գահընդդեմ, չարընդդեմ և այլ բառեր:

Մեր ոսկեդենիկ հայերենի բույրն ու շունչն է թևում այս պոեմում: Բանաստեղծը նույնիսկ Ա. Լաստիվերցու Պատմությունից քաղված մեջբերումն է վերածել չափածոյի՝ գրաբար լեզվով.

-«Իր աչքերու պես ինքն էլ է եղծյալ...
Բայց նոցա մծղնե զազրելի գործն անպատշաճ
Համարեցանք ընդ գրով արկանել՝ քանզի կարի
Աղտեղի է և զի ոչ միայն որ պնդակազմ է լսելեոք՝
Բազմաց մեղաց յիշատակ է՝ խախտանս ձգե զլսողն և
Եվ ի կատարումն գործոցն իսկ ածե, վասն այսորիկ
Էլ ես խոյս ետու յայնմանէ...» (էջ 116):

Հրատարակվելով իր ստեղծումից 60 տարի անց՝ «Թոնդրակեցիները» պոեմը չի կորցրել իր արդիականությունը, նրա հարցադրումներն այսօր ևս հրատապ են: Այն ճանաչողական, էսթետիկական, լեզվաբանական մեծ արժեք ունի: Այսօրվա ընթերցողը շահել է շատ ու շատ առումներով, իսկ խորհրդային սերունդը, ավաղ, զրկված է եղել բարձր պոեզիային հաղորդակցվելու հնարավորությունից:

Գրականություն

1.Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երկեր, Ջ հ., Եր., 1974, 848 էջ:
2.Աբրահամյան Ա. Ա., Գրաբարի ձեռնարկ, Եր., 1976, 560 էջ:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզվի ոճագիտություն (ուսումնական ձեռնարկ), Եր.,2003, 376 էջ:
4. Ղազարյան Ս. Ղ., Հայոց լեզվի համառոտ պատմություն, 1981, 404 էջ:
5. Շիրազ Հ., Թոնդրակեցիները, Եր., 2014, 328 էջ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ավանեսյան Կ. Հ., բ.գ.թ., դոցենտ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոն
E-mail: avanesyan-karine@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Հ.Ղազարյանը:

ՀՏԴ 82.09:808.1(479.25) Գրականագիտություն

ԾԵՐԵՆՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Հասմիկ ԲԱԲԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *Ծերենց, պատմավեպ, գրականություն, մամուլ, հրապարակախոսություն, արևմտահայություն, հեղափոխություն, ազատագրում, ազգային, ժողովուրդ:*

Ключевые слова: *Церенц, исторический роман, литература, пресса, публицист, освобождение, национальный, народ.*

Key words: *Tserents, historical novel, literature, press, publicist, revolution, liberation, national, people.*

А.Бабаян

ПОЛИТИЧЕСКАЯ МЕЧТА И СОЦИАЛЬНЫЕ ИДЕАЛЫ ЦЕРЕНЦА

Политическая мечта и социальные идеалы Церенца, были основаны на идеях европейских осветителей 18-го века. Он мечтал о государственной системе, в которой действовало "моральное единство" всех классов общества.

Церенц верил, что это на самом деле можно улучшить состояние "бескровной революции", чтобы создать подходящую среду для народа. По его словам, в Османском государстве противоречия и беззакония проистекает не от религиозных различий, а от отсталости и невежество народа.

H.Babayan

TSERENTS' POLITICAL DREAM AND SOCIAL IDEALS

Tserents' political dream and social ideals are based on the ideas of 18th century European enlighteners. He had dreamed such a state system in which would be moral unity coalition of all classes of society.

Tserents believed that it is really possible to reform the country, creating tolerable living conditions for the people with the help of "bloodless revolution". In his opinion conflicts and illegalities in Ottoman Empire stem from not the religious differences, but but the backwardness of the country and people's ignorance.

Ծերենցի քաղաքական երազանքը, հասարակական իդեալները խարսխվում են 18-րդ դարի եվրոպական լուսավորիչների գաղափարների վրա: Նա երազել է պետական այնպիսի համակարգի մասին, որտեղ գործեր հասարակության բոլոր դասերի «բարոյական միասնության» դաշինքը:

Ծերենցը հավատում էր, թե, իրոք, հնարավոր է «անարյուն հեղափոխությամբ» բարեփոխել երկրի վիճակը, ստեղծել ժողովրդի համար տանելի պայմաններ: Նրա կարծիքով Օսմանյան պետության մեջ հակասությունները և անօրինությունները բխում են ոչ թե կրոնական տարբերությունից, այլ երկրի հետամնացությունից և ժողովրդի տգիտությունից:

19-րդ դարի 70–80-ական թվականներին Պոլսի եկեղեցական և աղայական վերնախավը Հայկական հարցի լուծումը գերազանցապես տեսնում էր Բեռլինի կոնգրես ներկայացված պատրիարք Ն. Վարժապետյանի ծրագրի իրագործման շրջանակներում, որը հանգում էր օսմանյան գահի հովանու ներքո ինքնավար Տաճկահայաստան ստեղծելուն: Այն կառավարելու համար թուրքական կառավարությունը պետք է նշանակեր մեծ տերությունների կողմից հաստատված գեներալ-նահանգապետ:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, Սան-Ստեֆանոյի 1878-ի փետրվարի 19-ի պայմանագիրը հայ ժողովուրդն ընդունեց մեծ խանդավառությամբ: Նշանավոր այդ իրողությունները նոր հովեր մտցրին ընթացիկ կյանքի մեջ և խորհրդածությունների ու մտորումների առարկա դարձան ժամանակի հայ հասարակական-քաղաքական մտքի ամենատարբեր ներկայացուցիչների համար: Թվում էր, թե Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանին փոխարինելու էր գալիս ազատ Հայաստանը:

Սուլթանի գիտությամբ կազմված և նրա թույլատվությամբ նախ՝ Սան-Ստեֆանո և ապա՝ Բեռլին ուղարկված այդ ծրագիրը հետագայում Գր. Զոհրապի

արտահայտությամբ՝ «տեսակ մը պատնեշ պետություն» էր, որ ռուսների առաջխաղացումը կանխելու համար 1877 թ. նոյեմբերին սուլթանն առաջարկեց հայ բարձրաստիճան հոգևորականներին, որպեսզի նրանք «հայ բնակչության նահանգներուն համար քաղաքական ինքնավարություն մը պահանջեն օսմանյան գերիշխանության տակ»[1]:

Հիասթափված մեծ տերությունների դիվանագիտական խաբկանքներից և սուլթանական կառավարության հայահալած քաղաքականությունից՝ Մկրտիչ Խրիմյանն անցավ Հայկական հարցը զենքի ուժով լուծելու, զինված պայքարի քարոզչությանը: Իրադարձությունները, սակայն, փոխեցին նրա համոզմունքները: Մեծ հայրենասերը ետ կանգնեց «երկաթե շերեփի» կամ զենքի քարոզչությունից և նորից բռնեց թղթե խնդրագրերի, գանգատների ու դիմումների անհուսալի ուղին:

Ամենայն հայոց կաթողիկոսի ուղեգծից շեղ չէր նաև Կ. Պոլսի պատրիարքների քաղաքական ընթացքը: Ն. Վարժապետյանին 1885 թ. փոխարինած ծայրահեղ պահպանողական Հարություն պատրիարքը, օրինակ, քարոզում էր, որ «Եվրոպայի քաղաքականության այս խառնակ վիճակին մեջ լավ կլինի հաշտ երթալ տաճկաց հետ, որպեսզի Թուրքահայաստանի հայք ենթակա չլինեն նորանոր տառապանաց և հալածանաց»[2]:

Հայկական հարցի լուծման որոնումներում նույն տեսակետն էր պաշտպանում Ամենայն հայոց կաթողիկոսության պաշտոնական ամսագիր «Արարատը», Կ. Պոլսի պատրիարքության «Մասիս» և «Արևելք» թերթերը:

Արևմտահայ առաջադեմ մտավորականները, գավառահայ բուրժուազիան և բնակչության մյուս խավերը, որոնք ամենատարբեր ձևերով տուժում էին թուրքական բռնություններից, կողմնորոշվում էին դեպի պայքար և դեպի Ռուսաստան[3]:

19-րդ դարի 70–80-ական թվականների արևմտահայ առաջադեմ բոլոր մտածողները չէին անտեսում անձի ու գույքի ապահովությունը, մեծարում էին լուսավորությունն ու քաղաքակրթությունը, քարոզում և գոյության իրավունքով պարզում այն ամենը, ինչը հնարավոր էր ցարիզմի տիրապետության պայմաններում: Արևմտահայ նշանավոր հրապարակախոս Արփ. Արփիարյանն իր «Ռաֆֆին և հայ վիպասանությունը» հոդվածաշարում մեծ համակրանքով էր խոսում Ռուսաստանի առաջադիմական դերի մասին և նշավակում ցարիզմի խավարամոլ քաղաքականության շրջափուլային դրսևորումները: «Ռուսիոյ հայոց մեջ գրական անձինք միշտ կանգնած են բարձր պատվանդանի վրա, և ժողովուրդը կարտասանե նոցա անուններն ակնածությամբ և համակրանոք: Ռուս ժողովուրդը մեծապես նպաստած է այս զգացմանց և գաղափարաց տարածմանն ի Հայս,– գրել է Արփ. Արփիարյանը:–Հրապարակախոս, վիպասան, պատմաբան, գրականության ամեն ճյուղերուն պատկանող անձնավորությունք վայելում են ամեն ատեն ռուս ազգին սերը, և իրենց ազդեցությունը միշտ մեծ եղած է իրենց ազգին վրա: Ռուս ազգը մին է ի նոցան է, որը ինչքան ալ թերությանց ենթակա լինին, բայց և այնպես հայրենյաց սերը իրենց առաքինությանց գլխավորն է»[4]:

---

[1] Գր. Զոհրապ, Հայկական հարցը փաստաթուղթերու լույսին տակ, Պեյրութ, 1976, էջ 7:

[2] Ա. Համբարյան. Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին. Երևան, 1990, էջ 10:

[3] Տե՛ս Սարուխան. Ազգային խնդիրն ու սահմանադրությունը Թուրքիայում. Թիֆլիս, 1912, էջ 145:

[4] Արփ. Արփիարյան, Ռաֆֆին և հայ վիպասանությունը, «Մասիս», 1884, -3737, էջ 215:

Սա ժողովրդավարական Ռուսաստանն է, որին արևմտահայ գրողը հակադրում է հակոտնյան՝ ցարականը: «Ռուսական կառավարությունը,_իր տեսակետն ամբողջացնում է գրողը,_որ Ասիո մեջ քաղաքակրթության տարածման ամենազոր միջոցը կհռչակե ինքզինք… հանդարտ ու հավատարիմ ժողովուրդեն կը սարսափի,՝ որ նորա մամուլը այսքան չարաչար կը կաշկանդե: Սակայն չհուսահատինք քաղաքակրթության հաղթանակեն»[1]:

Արփ. Արփիարյանի համար Արևելյան Հայաստանում Հայկական հարց չկար, քանզի այն օրից, երբ Ռուսաստանը տիրել է Արարատյան նահանգին, հայերի համար «նոր թվական մը բացվեցավ: Բարեկարգող վարչություն մը հաջորդելով նախորդ դրության, հայերը այլևս հանգիստ պիտի ապրեին: Նոր կյանքը բարեհաջող սկզբնավորությամբ կը բարգավաճեր: Նյութականին ապահովությունը հայոց ամեն դյուրություն կը հայթայթեր մտավորականին զարգացմանը համար»[2]: Արփ. Արփիարյանը համերաշխ էր Ռաֆֆու այն տեսակետի հետ, թե որպես ազատագրական պայքարի մարտավարություն պետք է շարժման հիմքում դնել ուժերի համախմբման, ներքին ու միջազգային պայմանների հաշվառման և տևական նախապատրաստության ծրագիրը: Նա Ռաֆֆու նման այն տեսակետն ուներ, որ արևմտահայությունը վերջին պատերազմը նախապատրաստված չդիմավորեց: Պատմական անցյալի կորցրած օղակը լավատեսությամբ ետ բերելու տրամադրությամբ այն կարծիքն էր հայտնում, որ եթե արևմտահայության կենսական ուժերը նախապատրաստված լինեին և երկրի ներսում նպատակասլաց գործողություններ սկսեին, ինչպես կատարեցին բալկանյան սլավոնները, արևմտահայությունը Ռուսաստանի օգնությամբ կթոթափեր թուրքական լուծը: Ուստի, սխալներից պետք է դասեր առնել:

Ժողովրդի և նրա գրականության պատմության մեջ, առհասարակ, լինում են շրջափուլեր, երբ ազգային հրատապ խնդիրների թելադրանքով պատմական հիշողությունը, տիրապես ներխուժելով արդիականություն, դառնում է սերունդների ինքնագիտակցության կարևորագույն լծակներից մեկը: Մեր գրականության համար այդպիսի շրջափուլ էր XIX դարի 70–80-ական թվականները: Հայ ժողովրդի գոյապայքարի առաջադրած պահանջների թելադրանքով և այդ պահանջների կենսագործմանն իր կյանքն ու ստեղծագործությունն է նվիրում Հ. Շիշմանյանը: Ռաֆֆու պատկերավոր արտահայտությամբ՝ եթե մեր նոր շրջանի գրականության մեջ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանին» հրաբխային զորության առաջին ժայթքումն էր, ռուս-պարսկական 1826–1828 թթ. Պատերազմի ընթացքում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կախարդական արտացոլումը, ապա կես դար անց, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմով հայ ժողովրդին համակած հայրենասիրական պոռթկումը կյանքի են կոչում Ծերենցի պատմավիպասանությունը և հրապարակախոսությունը: Ծերենցի երիտասարդությունը համընկնում է արևմտահայ իրականության մեջ ծավալվող ազգային արժեքների վերագնահատման և զարթոնքի իրադարձություններին, հասարակական կյանքում ձևավորվող առաջադիմական դիրքորոշումների և խմբակցությունների պայքարի ժամանակաշրջանին: Նա ներգրավվում է առաջադեմ երիտասարդության ծավալած հասարակական գործունեության մեջ, անդամակցվում և գործուն մասնակցություն է ունենում 1846 թ. Մ. Պեշիկթաշլյանի գլխավորությամբ հիմնադրված Համազգյաց ընկերության աշխատանքներին: 1840-ական թվականների

[1] «Մասիս», 1884, -3736, էջ 196:

[2] Արփ. Արփիարյան. Երկեր. Երևան, 1987, էջ 407:

վերջերին՝ Փարիզի Սորբոնի համալսարանի բժշկական բաժնում սովորելու տարիներին, Ծերենցն ականատես է լինում ծայրահեղ հետադիմական ուժերի ու Վատիկանի անսքող դաշնությանը, և ուսումնառությունից հետո վերադառնալով Պոլիս՝ բախվում է կաթոլիկ հայերի հովվապետ Անտոն Հասունյանի հետ: Նա դավանափոխության դեմ պայքարում էր ազգային ուծացման վտանգի գիտակցումով՝ աչքի առաջ ունենալով նաև Լեհաստանի հայության կորուստը: 50–60-ական թվականներին գրողը ազատագրական պայքարի կողմնակից էր, անմիջական կապեր է ունեցել Զեյթունի 1862 թ. ապստամբների հետ: Հետագայում նա նահանջ է կատարում պայքարի զինված ձևերից: Այս իրողությունն է հաստատում 1876 թ. հոկտեմբերին Գր. Արծրունու և Ռաֆֆու հետ ունեցած նրա սուր բանավեճը, որտեղ նա այն համոզմունքն էր հայտնում, թե ինքը «վերեն» հեղափոխության կողմնակից է, որովհետև «վարեն» եկող հեղափոխությունները մեծ արյունահեղություն են պահանջում: «Մենք կուզենք,– ասում էր Ծերենցը,– որ ամեն մի հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն: Վարեն եկած հեղափոխությունը (եթե որ հաջողին ալ) անչափ աղետք՝ անչափ թշվառություն ունին և այնչափ արյուններու առիթ կը լինին, և հայ ազգն այնչափ քիչ արյուն ունի յուր երակներուն մեջ, որ իր կարողութենեն վեր է այդ մասին շռայլ լինել. և ընդհակառակ, վերեն եկած հեղափոխությունք միշտ հաստատ են և երբեք այն արյանց գիներով չեն լիներ… Ռուսիո ինքնակալությունն երեսուն միլիոն մարդու ազատության տվավ գրեթե առանց արյուն թափելու, հրովարտակով մը միայն, հրովարտակ՝ որու բոլոր անցյալ և ապագա Ալեքսանդր անունը կրողներուն էն մեծը պիտի լինի նորա ստորագրողը հանդերձյալ ողջամիտ դարերու մեջ»[1]: Այստեղ Ծերենցի հարցադրումները բխում էին հասարակության աստիճանական առաջընթացի մասին նրա հիմնական դավանանքից: 1878 թ. ստեղծված կացությունը հաշվի առնելով՝ հայ գործիչներից շատերը պահանջում էին իրենց տալ «Հայաստան ոչ թագապսակ, ոչ անկախ, ոչ ինքնուրույն, այլ Հայաստան մասն օսմանյան տերության՝ հարկատու ճիշտ ուրիշ գավառաց պես… ազատ ի հարստահարությանց, ավազակաց, մանավանդ ի կուսակալաց և բարի օրինակ լավ կառավարության նույն տերության դրացի գավառաց»[2]: Չափավոր, ազգային-պահպանողական Ծերենցն այդ պահին այն թյուր կարծիքն ուներ, թե «այս պետք է փափագեր նույն այն ինքը Բ. Դուռը, բայց դժբախտություն մըն է, որ կենտրոնացման հիվանդությունը, պաշտոնյա տիրաց ապականությունը… և կրոնամոլություն օրենք դարձած են ի Տաճկաստան»[3]: Ծերենցը թեկուզ շարունակում է հույսը դնել հասարակության և մարդու բնական առաջադիմության և բարեհաջողության վրա, որի համաձայն՝ իբր թե ժամանակի տիրապետող ոգին «արդարությունն» է, այնուամենայնիվ, սուր քննադատության է ենթարկում Բեռլինի կոնգրեսում Անգլիայի դիրքորոշումը:

«Անգլիա բարոյապես և նյութապես պատասխանատու և գործակից է,– գրել է Ծերենցը,– ամեն անիրավությանց, որ Ասիո Տաճկաստանի մեջ տեղի ունին 1878 հունիսի 4-են վերջը: Այո՜, այն օրվանե, որ Անգլիա Կիպրոսը օսմանյան տերութեն է առնելով յուր սեփականության ընելով, փոխարեն նրա Ասիական ստացվածքը կերաշխավորե, աշխարիք զինքը պատասխանատու կճանաչե թե լավ, թե վատ գործունեությանց»[4]:

[1] «Արևելյան մամուլ», Զմյուռնիա, 1876, հոկտեմբեր, էջ 349–350:
[2] «Փորձ», Թիֆլիս, 1878, №1, էջ 207:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում, էջ 208:

Ավելորդ է ասել, որ Ծերենցը նկատի ուներ 1878 թ. Մեծ Բրիտանիայի և Թուրքիայի միջև կնքված պայմանագիրը, որի համաձայն, Օսմանյան կայսրությունից զավթելով Կիպրոսը, ծովերի «թագուհին» պարտավորվում էր ապահովել նրա ասիական տարածքների անձեռնմխելիությունը, Թուրքիայի ամբողջականությունը: Հիրավի, Բեռլինի կոնգրեսն ընթացավ այնպիսի սցենարով, որ Ծերենցին իրավունք էր տալիս առավել խիստ արտահայտվել. «Անգլիա Օսմանյան պետության կամ յուր անձնական շահերուն միայն բարեկամն է»[1]: Ծերենցը խորությամբ գիտակցում էր, որ Արևմուտքից Արևմտյան Հայաստանի ազատություն ստանալն առնվազն պատրանք է: Բեռլինի կոնգրեսից մեկ տարի էլ չէր անցել, երբ նա տագնապով զգաց ազգային բնաջնջման մոտալուտ և ահավոր այն վտանգը, որ օսմանյան կերպարանք ստացած դամոկլյան սրի նման կախվում էր արևմտահայության գլխին: Ծերենցը գիտեր, որ ձգտելով ամեն կերպ կանխել թուրքական պետության հետագա քայքայումը՝ կայսրության վերնախավը սկսել էր ծրագրեր մշակել արևմտահայության բնաջնջման համար: «Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք» պատմաքննական հոդվածում[2] Ծերենցը մեջբերումներ էր կատարում սուլթան Աբդուլ Համիդի մեծ վեզիր Քյամիլ փաշայի հեղինակած ծրագրից[3], որտեղ պանթուրքիզմի գաղափարներով ու կարգախոսներով ղեկավարվող «նոր օսմանները» սխալ և անօգուտ էին համարում կայսրության եվրոպական մասում ապրող քրիստոնյա ժողովուրդներին ժամանակին տրված արտոնությունները և կանխագծում ասիական քրիստոնյաների (հայերի) ոչնչացումը: «Եթե Եվրոպիո մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէր, որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ»,– մտորում է Քյամիլ փաշան:

… Խելոքությունը ջնջել վերացնելն է այն ամեն տարերքը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ և օտարին ձեռնամխության առիթ ու գործիք լինել: Ուրեմն,– եզրակացնում էր նա,– այդ հայ ազգը վերացնելու, անհետ և անճետ ընելու ենք: Եվ այդ ի գլուխ հանելու համար բան չի պակսիր մեզ. Ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ոստիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կըհրատարակենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինվորություն և ոչ պաշտպան»[4]:

Թուրքական մարտնչող ազգայնականության նոր զարգացումները և արևմտահայ հատվածի համար նախապատրաստվող ողբերգության մոտեցող տագնապները շատ անմիջական ներգործություն ունեցան Ծերենցի գաղափարական շրջադարձի վրա: Արևմուտքի դիվանագիտական խաբկանքներից ու խարդավանքներից հոգնած և հիասթափված Ծերենցը հանգեց այն համոզման, որ ազատությունն անհնարին է առանց ժողովրդի ազգային ինքնագիտակցության բարձրացման, ընդդեմ թշնամու՝ նրա ներքին ուժերի ու ջանքերի համախմբման: Եթե առաջ, մասնավորապես իր հրապարակախոսության մեջ, նա ինչ-որ հույսեր էր կապում «վերեն» շնորհվող ազատության հնարավորությունների նկատմամբ, ապա ուշ շրջանի գեղարվեստական ստեղծագործություններում ցույց տվեց, որ ազատությունը երբեք չի շնորհվում, որ ժողովուրդն այն նվաճում է միայն զինված պայքարով: Անսպասելի չէր, որ իր վեպերի համար («Թորոս Լևոնի», «Երկունք Թ դարու», Թեոդորոս Ռշտունի») որպես հենք

[1] Նույն տեղում:

[2] Ծերենց, «Օսմանյան ինքնակալություն. Տաճկահայք և Ռուսահայք», «Փորձ», 1879, 7–8:

[3] Քյամիլ փաշայի հայակործան այս ծրագիրը արևելահայ մամուլում առաջին անգամ հրապարակել է Ծերենցը («Փորձ», 1879, - 7–8):

[4] Նույն տեղում, էջ 204-205:

Ծերենցը վերցրեց պատմության այն շրջանները, երբ օտար զավթիչների դեմ ոտքի կանգնած հայ ժողովուրդը հանուն ազգային անկախության դրսևորում է իր ամենավսեմ հատկությունները՝ ազատասիրությունն ու հայրենասիրությունը: Ծերենցի առաջադիր նպատակն էր ժամանակակիցներին հասկացնել, որ անելանելի իրավիճակներ չկան, որ ազգը, անցյալի սերունդների փորձից ելնելով, չպետք է հաշտվի բռնակալության հետ: Վերոհիշյալ բանաձևման առումով խորհրդանշական է, որ, ելնելով Կիլիկյան Հայաստանի պատմության և արդիականության նկատմամբ տևական հետաքրքրությունից, Ծերենցը որպես դրոշակ պարզեց «Թորոս Լևոնի» վեպը: Միանգամայն իրավացի էր պատմաբան և հրապարակախոս Ստ. Պալասանյանը, երբ Ծերենցի վեպին նվիրած իր գրախոսականում գրում էր, թե «Քիչ գիրք կպատահի, որ «Թորոս Լևոնի» նման յուր ժամանակին գրված և հրապարակված լինի»[1]: Չմոռանանք, որ 1878–1881 թթ. հրապարակվեցին նաև մյուս վեպերը: Հայկական հարցի լուծման ճանապարհին Ծերենցի վերջնական կարծիքը հանգում էր նրան, որ նախքան զենքի դիմելը անհրաժեշտ է զինել արևմտահայ անզեն բնակչությանը, նրան ընդունակ դարձնել գեթ ինքնապաշտպանության: Հ. Երամյանը իր «Հուշարձան» Ա հատորում գրում է, որ Ծերենցի տեսակետին էին նաև Կարինում (Էրզրում) ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականը և Մ. Խրիմյանը, որոնք գտնում էին, որ նոր պայմաններում «մենք ուժ չունենք օսմանյան տերությանը հաղթելու»[2]:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Հասմիկ Բաբայան ,ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության ամբիոնի հայցորդ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Հ.Ղազարյանը:

[1] Նույն տեղում, էջ 195-196:
[2] Տե՛ս Հ. Երամյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. Ա., Ալեքսանդրիա, 1929, էջ 23:

ՀՏԴ81`37(22/11:479.243) Բառագիտություն

ԻՐԱՆԱԿԱՆ APAT /ԱՊԱՏ ԲԱՌԱՐՄԱՏԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ

Լուսինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ -ապատ բառարմատ, բնականուն, Խնապատ, Կուսապատ, Ղազարապատ, Մուշկապատ:
Ключевые слова: *корневая основа –апат, ойконим, Хнапат, Кусапат, Газарапат, Мушкапат.*
Key words*: root-stem –apat, oikonym, Khnapat, Kusapat, Ghazarapat, Mushkapat.*

Л.Маркарян
ФУНКЦИОНАЛЬНО-СЕМАНТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ИРАНСКОЙ КОРНЕВОЙ ОСНОВЫ -APAT/АПАТ В ОЙКОНИМАХ АРЦАХА

*Среди арцахских ойконимов заимствованным термином –апат осложнены следующие ойконимы: Хнапат, Кусапат, Газарапат, а также Мушкапат. В осложненных этим термином ойконимах корень –апат проявился и в своем изначальном дотопонимическом значении **"водное пространство"**, и в расширенном топонимическом значении **"место проживания"**. При этом изначальное значение **"водное пространство"** сохранено в тех структурах, в которых составляющими с термином –апат элементами являются имена нарицательные, имеющие топографические или атрибутивные значения. Тот же термин, осложняя имена собственные, проявляет только топонимическое значение **"местность, место"**.*

L.Margaryan
THE FUNCTIONAL-SEMANTIC CHARACTERISTICS OF IRANIAN ROOT STEM -APAT IN ARTSAKH OIKONYMS

Among Artsakh oikonyms the borrowed term –APAT complicates the following place-names: Khnapat, Kusapat, Ghazarapat and Mushkapat. In the oikonyms complicated by this term –APAT root appeared in its original pre-toponimic meaning of "water space", and extended toponymic meaning "place of residence".
Herewith the original meaning "water space" is preserved in the structures where the common nouns, having topographic or attribute meanings, are component elements with the term –APAT. The same term, while complicating proper names, expresses only toponymic meaning of "locality, location".

*Արցախի բնականուններում փոխառյալ -**ապատ** եզրով բաղադրված են՝ **Խնապատ, Կուսապատ, Ղազարապատ նաև Մուշկապատ** բնականունները: Այդ եզրով բաղադրված անվանումներում -**ապատ** արմատը դրսևորվել է և՛ իր նախնական՝ **ջրային տարածք** մինչտեղանվանական նշանակությամբ, և՛ **բնակության վայր** ընդլայնված տեղանվանական իմաստով: Ընդ որում նրանով կազմված այն կառույցներում է պահպանված եզրի նախնական՝ ջրային տարածք իմաստը, որոնցում **ապատ**-ին բաղադրակից են տեղագրական նշանակություն ունեցող կամ հատկանշակիր հասարակ անուններ: Իսկ նույն եզրը, հատուկ անուններին բաղադրվելիս, սոսկ տեղանվանական՝ **վայր, տեղ** նշանակությամբ է դրսևորվում:*

Տեղանունը հնադարան է, որում ամփոփվում են ոչ միայն ժողովուրդների պատմությունն ու նրանց լեզվական հարաբերությունները, այլև լեզվական այս կամ այն իրողության կենսագրությունը: Բառական միավորը, դառնալով տեղանվանակազմիչ տարր, զրկվում է բառիմաստային հետագա զարգացման հնարավորությունից, ու սահմանափակվում է նրա բազմանշանակության գործառույթը: Եվ եթե մայրենի միավորներով բաղադրվող տեղանուններում այդպիսի եզրերի մինչտեղանվանական իմաստները երկարակյաց են լինում, այսինքն՝ բառական նշանակությամբ ընկալելն ու վերծանելը հնարավոր է մնում նաև տեղանվան գոյության ընթացքում, ապա փոխառյալ եզրերով բաղադրություններում փոխառյալ միավորը, անկախ իր բառական կենսագրությունից, ամրակայվում է իր տեղանվանական նշանակությամբ:

Արցախի բնականվանակազմություններում քիչ չեն հիբրիդ տեղանունները՝ բաղադրված մայրենի և փոխառյալ միավորներով: Հատկապես նկատելի է իրանական լեզվազդեցությունը: Վկայված են իրանական ծագման միավորներ/-apat, -kert, -šat, -šen/, որոնք իրենց

իմաստագործառական ակտիվությամբ հիմք են տվել նոր կազմությունների և առավել կամ պակաս կենսունակությամբ պահպանվում են առ այսօր: :

Այդպիսի եզրերից է -**apat /ապատ-ը**:

apat- ը Հր. Աճառյանը բացատրում է *շէն, շէն տեղ* նշանակությամբ[1]: Նույն կերպ է մեկնաբանում Գ. Ջահուկյանը[2]: Լ. Հովհաննիսյանը իրանական այս փոխառյալ եզրի որակական և գործառական բնութագիրը տալիս այն նշում է անկախաբար չկիրառվող արմատների խմբում՝ հիմնավորելով, որ նրանով կազմված կառույցներում գիտակցվում են ***շեն, տեղ, վայր*** նշանակությունները: Եվ նշում է , որ **ապատ**-ը գրաբարում և այժմ էլ տեղանվանակերտ ձևույթ է[3]: Գ. Ղափանցյանը բառի նախնական իմաստը մեկնաբանում է որպես *ջրային տարածք*, ապա՝ *բնակության վայր*: Բառի հականիշն է *անապատը՝ անջուր տարածք*[4]:

Արցախի բնականուններում -**ապատ** եզրով բաղադրված են՝ **Խնապատ, Կուսապատ, Ղազարապատ նաև Մուշկապատ** բնականունները[5]**:** Հատկանշելի է, որ այդ եզրով բաղադրված անվանումներում -**ապատ** արմատը դրսևորել է և՝ իր նախնական՝ ***ջրային տարածք*** մինչտեղանվանական նշանակությունը, և՝ ***բնակության վայր*** ընդլայնված տեղանվանական իմաստը:

Իր նախնական իմաստով **ապատ**-ն առկայացած է ***Խնապատ*** բնականվան մեջ: Այն, որ բնականվան իմաստն աղերսվում է ջրային տարածքին, հավաստում են պատմաաշխարհագրական տեղեկությունները: Սլավա Սարգսյանը թե տեղում կատարած ուսումնասիրությունների և թե արխիվային նյութերի տվյալների[6] հիման վրա փաստում է, որ նախկինում՝ 9-17-րդ դդ., գյուղն անվանվում էր **Զրվեր** նաև **Զրհոր**[7]: Բանահավաք Լևոն Հարությունյանն էլ նշում է, որ գյուղի հին ու հայալեզու անունն է **Զրավեր**՝ կազմված **ջուր և վայր** բաղադրիչներից: Իսկ **Խնապատը Խոնապատի** աղավաղված տարբերակն է համարում[8]: **Խոն**-ը մեկնաբանում է ***ցած, ներքև, դաշտային, տափաստանային*** նշանակություններով, այսինքն՝ ցածում գտնվող: Եվ նշում, որ հինավուրց *խոն* բառի փոխաբերական իմաստներն են՝ ***թաց, խոնավ, ջրաշատ***: **Խոնապատ**՝ այսինքն՝ ***ջրավայր:***

Պատմական տեղեկանքն էլ վկայում է, որ **Խնապատը** ***ջրային տարածք, ջրառատ բնակավայր*** նշանակությունն ուներ: Ու **ապատ** արմատն իր նախնական իմաստով է վկայվել այդ բնականվան մեջ:

Նշենք, որ **Խնապատ**-ը թուրքական տիրապետության մի կարճ ժամանակաշրջանում վերանվանվել էր՝ ***Թեզիսարաբ,*** ապա 1962թ. անվանադրվել ***Ոսկեվազ***, իբրև լրացյալ անուններ առաջարկվել էին ***Այգեձոր և Մրգաշատ*** անունները[9]: Տրված անուններից և ոչ մեկը չամրակայվեց հանրային գիտակցության մեջ, ու նորից գյուղը վերանվանվեց **Խնապատ**: Այս դեպքում, կարծում ենք, իրավացի է Լ. Հարությունյանը, որ **Խնապատ և Զրավեր** անուններն իմաստային առումով նույնական է համարում[10]:

Ապատ եզրի իմաստագործառական առանձնահատկությունից ելնելով՝ հնարավոր ենք դիտում **Կուսապատ** գյուղի՝ *ջրակորոմ տարածք* լինելու ստուգաբանությունը: Ոչ հավաստի

---

[1] **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան*, հ.1, 1926, էջ 227:

[2] **Ջահուկյան Գ.,** *Հայերեն ստուգաբանական բառարան*, 2010, էջ 67:

[3] **Հովհաննիսյան Լ.,** *Հայերենի իրանական փոխառությունները*, Հայկ. ԽՍՀ ԳԱ հրատ, Ե., 1990, էջ 128:

[4] Капанцян Гр., Историко-лингвистические работы, Т II, Изд. Акад. Наук Арм. ССР, Ереван, 1956, стр. 160.

[5] ԼՂՀ վարչատարածքային բաժանման մասին օրենք, 1998, հունիսի 26, ՀՕ-15/ 2011 ապրիլի 1-ՀՕ-10_Ն օրենքի լրացումներով ու փոփոխություններով/:

[6] ՀՊՊԿԱ, ֆ.57, ց.1., գ.3, թ.113

[7] Սարգսյան Սլ., Արցախ. պատմաշխարհագրական ճշգրտումներ, «Հայ էդիթ», Ե., 1996, էջ 67:

[8] Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Չորրորդ գիրք, «Դիզակ Պլյուս», Ստեփանակերտ, 2009, էջ 49:

[9] ԼՂՀ պետական արխիվ, ֆ.1, ց.1, գ. 17:

[10] Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Չորրորդ գիրք, «Դիզակ Պլյուս», Ստեփանակերտ, 2009, էջ 49:

աղբյուրներում՝ բանավոր զրույցների, ավանդությունների հիմամբ կառուցված, այն մեկնաբանվում է ***կիսատ պատ*** կամ ***կուսի/կողմի պատ***. Բնականվան ծագումն այդպես է բացատրում նաև Սերգեյ Մելքումյանը[1]: Այդպիսի մեկնաբանությունը բառի բաղադրիչների պարզագույն վերլուծություն է՝ համաժամանակյա կտրվածքով: ***Կիսատ պատը*** կամ ***կողմի պատը*** չի կարող բնականվան հիմք հանդիսանալ այն հիմնավորմամբ, որ տեղանվանակոչումներում անորոշ, աննկարագիր, տեղանշող կամ հատկանշող որևէ իմաստ չունեցող կազմությունները սովորաբար չեն դառնում տեղանուններ:

Մինչդեռ աշխարհագրական իրողությունն այն է, որ **Կուսապատ** գյուղը գտնվում է **Կուսապատ** գետի հովտում՝ **Ջրակն/Ճիրակն/** ձորի ձախափնյա լանջին[2]: Վերջին հանգամանքը հավաստիություն է հաղորդում մեր վարկածի ճշտությանը: **Կուսապատ**՝ այսինքն՝ **կույսը՝ կողմը՝ ջուր:**

Ապատ եզրի որակական և գործառական նկարագրից հատկանշվում է, որ նրանով կազմված այն կառույցներում է պահպանված եզրի նախնական՝ *ջրային տարածք* իմաստը, որոնցում **ապատ**-ին բաղադրակից են տեղագրական նշանակություն ունեցող կամ հատկանշակիր հասարակ անուններ: Իսկ նույն եզրը, հատուկ անուններին բաղադրվելիս, սոսկ տեղանվանական՝ ***վայր, տեղ*** նշանակությամբ է դրսևորվում: Ինչպես՝ **Քաշաթաղի** շրջանի նորանուն **Ղազարապատ** անվան մեջ **ապատ**-ը բացառապես *բնակության վայր* տեղանվանական նշանակությունն ունի:

Մուշկապատ բնականվան ստուգաբանական վարկածների քննությունը թույլ չի տալիս միանշանակ պնդել, որ երկրորդ բաղադրիչը **ապատ** եզրն է և ոչ թե բնիկ անկախաբար չկիրառվող **պատ** /*պատել*/ արմատը: Նախ՝ բնականվան ստուգաբանության մի քանի վարկած է առաջ քաշվում:

Այսպես՝ Սերգեյ Մելքումյանը գյուղի անունը ստուգաբանում է ***մշուշ*** և ***պատել*** բաղադրիչների երկատմամբ՝ նշելով որ բարձրադիր լինելու պատճառով գյուղը միշտ մառախլապատ է լինում, այդ պատճառով էլ ***Մշուշապատ*** է կոչվում, որն էլ բարբառում հնչյունափոխվել է ***Մուշկապատ***-ի[3]:

Լևոն Հարությունյանն էլ նշում է, որ այն կազմված է **մուշ** գոյականից՝ **ք** հոգնակերտով և **պատ** բաղադրիչներից: Անվան իմաստն է **մուշապատ, ամպասքող**, փոխ. իմաստով՝ բարձր, երկնամերձ: Ու հավելում, որ տեղանունը համապատասխանում է իր բարձրագնա դիրքին[4]:

Բնականվան մյուս վարկածը **Մեջքապատ** անվան հնչյունափոխությամբ է բացատրվում: Այսինքն՝ գյուղը հարավարևմտյան մասով շրջափակված է աղեղնաձև քարաժայռի մի երկարաձիգ զանգվածով, մեջքը՝ թիկունքը, պատ է, պատվածք: Այդպես առասպելախառն է մեկնում գյուղանունը Հայկ Խաչատրյանը. «Ուրիշ է **Մեջքապատ** անունը, չես կարող ասել գյուղն ասքից է ստացել անունը, թե ասքը՝ գուղի անունից: Հնում այստեղ մի դյուցազուն էր ապրում՝ Արցախի Տորք Անգեղ: Մի անգամ հողը ուր որ է պիտի ճեղքվեր և դյուցազունը ինքնազոհության դիմեց՝ մեջքով պատ դարձավ ու փրկեց գյուղը: Եվ մարդիկ գյուղի անունը դրին **Մեջքապատ**»[5]:

Այդ երկու վարկածներում հավանական համարվող հնչյունափոխական երևույթները բարբառի հնչյունական ու հնչյունափոխական օրինաչափություններով չեն բացատրվում: Այստեղ առկա է հնչյունական հարմարեցման սկզբունքով բացատրություն, որը հակասում է լեզվական օրենքին:

Առավել հավանական է բառանվան տրոհումը **մուշկ** և /**պատ**/ել կամ **մուշկ** և **ապատ** բաղադրիչների: **Մուշկը**/ծագմամբ՝ իրաներեն/ բուրավետ, մշկահոտ բույս է, որն աճում է

---

[1] Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990,էջ 167:

[2] Մելքումյան Ս. Ա., *Լեռնային Ղարաբաղ*, Ե., 1990,էջ 167: *Դիվան հայ վիմագրության*, Պ.5, *Արցախ* /կազմ.՝ Ս. Գ. Բարխուդարյան/, ՀՍԱՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, ՀՍԱՀ ԳԱ հրատ., 1982, էջ 93::

[3] Մելքումյան Ս. Ա., Լեռնային Ղարաբաղ, Ե., 1990,էջ 239:

[4] Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Չորրորդ գիրք, «Դիզակ Պլյուս», Ստեփանակերտ, 2009, էջ 63-64:

[5] Խաչատրյան Հ., Վաչագան, «Զանգակ», Երևան, 1998, էջ 86:

բարձրադիր վայրերում[1]: Ստուգաբանական *մուշկ և պատել* տրոհմամբ բացատրվող վարկածին համակարծիք են Բ. Ուլուբաբյանը, Զավեն Աբրահամյանց Ադամյանը, Գրիգոր Ուլուբաբյանը: Էռնեստ Եսայանն էլ ***մուշկ-ով*** կազմությունը հավանական է համարում ու բնականունը տրոհում՝ **մուշկ** և **ապատ** բաղադրիչների, ապա, գեղարվեստորեն ընդհանրացնելով, նշում, որ ***մուշկը*** *կանաչերանգ մետաքսե շոր, սփռոց* իմաստն ունի: Ու գյուղն էլ կարծես մուշկե բեհեզ հագած լինի, կանաչաշոր է[2]:

Երկու դեպքում էլ՝ **ապատ** թե **պատ** բաղադրիչով կազմությունները բնականվան մեկնության համար ընդունելի են դառնում: Մի դեպքում՝ *մուշկի տարածք, վայր, որտեղ առատ մշկահոտ բույս էր աճում*: Մյուս դեպքում՝ *մուշկով, մշկահոտ բույսով պատված բնակավայր:*

Ենթադրելի է, որ **ապատ** եզրի բաղադրությամբ է առկայացած բնականունը. այն հիմնավորմամբ, որ այդ դեպքում մենք ունենք գոյականական բնականուն, ինչը հայկական տեղանվանական համակարգին բնութագրական է, իսկ **պատ** բաղադրությամբ ածականական բնականուն է կերտվում: Այդպիսի կառույցը նույնպես խորթ չէ արցախյան բարբառամտածողությանը. եթե վայրը նշելու համար ասվի՝ ընդէրէղ մուշկապատ ա, այսինքն՝ մուշկով պատված է, ու այդպես էլ ծնվի բնականունը: Անշուշտ, ածականական բնականուններ առկա են մեր տեղանվանական համակարգում, բայց տեղանվանակերտման այդ կաղապարը կենսունակ չէ մեր բնականվանակազմություններում:

Կարծում ենք՝ **ապատ** բաղադրիչով է ի սկզբանե բաղադրվել բնականունը, ապա այն մեր լեզվական ընկալումներում համապատասխանեցվել է **պատ** բառարմատին ու վերլուծվել այդպես: Իսկ այդ երևույթը հատուկ է լեզվին ու կոչվում է բառիմաստի բաղարկության կամ իմաստաշփոթության հետևանքով կատարված իմաստափոխություն: Տեղանվանագիտության մեջ էլ տարածված երևույթ է և կոչվում է տեղանվան, տվյալ դեպքում մի եզրի հարմարեցում մյուս լեզվի արտասանությանն ու ընկալմանը:

Վերոնշյալ բնականուններում ***ապատ*** ձևույթի գործառական նկարագրից երևում է, որ մեր տեղանվանակազմություններում նրա տեղանվանակերտության հնարավորությունը նվազում է, ընդ որում իր նախնական նշանակությամբ այն այլևս կենսունակ չէ, բայց իր մայրենի լեզվում՝ իրաներենում, ***ապատ***-ը շարունակում է մնալ որպես ակտիվ տեղանվանակերտ եզր[3]:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Մարգարյան Լուսինե, բ.գ.թ., դոցենտ, «Մեսրոպ Մաշտոց» համալսարան

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.թ., Հ.Ղազարյանը:

[1] **Աճառյան Հր.,** *Հայերեն արմատական բառարան*, հ.3, 1926, էջ 360:
[2] Է. Եսայան, Մուշկապատ, Արհմիություններ, 01-15 սեպտեմբերի, 2012:
[3] Капанцян Гр., Историко-лингвистические работы, *Т II*, Изд. Акад. Наук Арм. ССР, Ереван, 1956, стр. 161.

УДК 378.147: 802.0 Անգլերեն լեզվի դասավանդման մեթոդիկա

LEXICAL ASPECT OF TEACHING HOMONYMS TO ADVANCED STUDENTS

Arega HAYRAPETIAN

Key words: *Linguistics, Phonetics, Word-formation, Methodology, Semantics, Homonym, Homophone, Aspect, Teaching, Technique*

Ключевые слова: *лингвистика, фонетика, словообразование, методология, семантика, омоним, омофон, аспект, преподавание, техника*

Բանալի բառեր՝ *լեզվաբանություն, հնչյունաբանություն, բառակազմություն, դասավանդում, իմաստաբանություն, համանուն, ասպեկտ, նույնահունչ բառ, մեթոդաբանություն, հմտություն*

Ա. Հայրապետյան

ԱՌԱՋԱԴԵՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԱՍՊԵԿՏԸ

Հոդվածն ուսումնասիրում է տարբեր գիտնականների տեսակետները՝ համանունների ուսուցման բառագիտական հայեցակետի լույսի ներքո, քանի որ համանունները առաջացնում են որոշ դժվարություններ դասավանդման ժամանակ, ինչպես նաև առաջարկում որոշ մոտեցումներ յուրօրինակ հնարքներ, որոնք կօգնեն սովորողներին կատարել համանուն բառի ճիշտ ընտրություն՝ հիմք ընդունելով Վ. Ս. Մոեմի "Red" և "A Man with a Conscience" պատմվածքների օրինակները:

Այդպիսով՝ յուրաքանչյուր դասի վերջում տրվում է համանունների շարք՝ բացատրություններով և գեղարվեստական գրականությունից բերված օրինակներով՝ տվյալ բառերի յուրացումը ստուգելու համար:

А. Айрапетян

ЛЕКСИЧЕСКИЙ АСПЕКТ ОБУЧЕНИЯ ОМОНИМАМ СТУДЕНТОВ СТАРШИХ КУРСОВ

В статье рассматриваются точки зрения разных ученых на тему лексический аспект преподавания омонимов студентам продвинутого уровня, так как омонимы вызывают некоторые трудности в процессе обучения говорению, а также предлагаются некоторые стратегии и конкретные методы с целью обучения студентов правильному использованию омонимов на основе примеров, взятых из рассказа Сомерсета Моэма "Рыжий" и "Человек с совестью".

Таким образом, в конце каждого урока предлагается ряд омонимов с тщательными объяснениями, и приведены примеры из художественной литературы с целью проверки знаний данных слов.

The article provides different scholars' viewpoints on the lexical aspect of teaching homonyms as it is difficult for advanced students to speak the target language fluently and appropriately as homonyms are words that sound alike but are spelled differently and have different meanings; and also proposes some strategies, specific techniques for helping students learn correct homonym usage on the basis of the examples picked up from the W.S. Maugham's story "Red" and "A Man with a Conscience".

So, at the end of each lesson we propose to give a list of homonyms to students with the explanation and then give examples from fiction to check the understanding of the given words.

One of the phenomena peculiar to every language and characterized by the lexico-semantic system of the language is homonymy.

Homonymy exists in many languages, but in English it is particularly frequent due to the character of English and its analytic structure.

Learning to speak a foreign language requires more than knowing its grammatical and semantic rules. Learners must also acquire the knowledge of how native speakers use the language in the context of structural interpersonal exchange in which many factors interact. Therefore it is difficult for English language learners, especially for advanced to speak the target language fluently and appropriately.

The process of teaching a foreign language is a complex one: as with many other subjects, it has necessarily to be broken down into components for purposes of study: the teaching acts of presenting and explaining new material; providing practice; and testing.

In principle, the teaching process of presenting, practicing and testing correspond to strategies used by many good learners trying to acquire a foreign language on their own. They make sure they perceive and understand new language; they make conscious efforts to learn it through; and they check themselves.

In the class, it is teacher's job to promote these three learning processes by the use of appropriate teaching acts. Thus he or she: presents and explains new material in order to make it clear, comprehensive and available for learning; gives practice to consolidate knowledge; and tests, in order to check what has been mastered and still needs to be learnt and reviewed.

These acts may not occur in this order, and may sometimes be combined within one activity; nevertheless good teachers are aware which is their main object at any point in a lesson.

So, in modern teaching materials now in use the words students are to learn pass through the following stages:

1. students listen to the words in sentences arranged in a structural group;
2. they learn the meaning of the words in various contexts;
3. students learn the form of the words;
4. they perform various exercises with the words in phrases and structures to assimilate the usage of the words;
5. students use the words in speaking in various situations.

The rules, techniques, methods following these learning process we will achieve a step and will be successful in teaching homonyms and vocabulary as a whole[1].

The other most important aspect of vocabulary teaching for advanced learners is to foster learner independence so that learners will be able to deal with new lexis and expand their vocabulary beyond the end of the course. Therefore guided discovery, contextual guesswork and using dictionaries should be the main ways to deal with discovering meaning.

Guided discovery involve asking questions or offering examples that guide students to guess meanings correctly. In this way learners get involved in a process of semantic processing that helps learning and retention.

Contextual guesswork, according to S. Mora, means making use of the context in which the word appears to derive an idea of its meaning, or in some cases, guess from the word itself, as in words of Latin origin. Knowledge of homonyms can also help guide students to discover meaning. Teachers can help students with specific techniques and practice in contextual guesswork[2].

Some words and phrases have special attributes that make them particularly interesting to study. Synonyms, antonyms, homonyms, multi-meaning words, words borrowed from other languages, abbreviations, and acronyms can all be the basis for meaningful lessons. Moreover, knowledge of these types of words and phrases can make understandable spoken and writing activities.

A lot of words in the English language sound the same but have different spelling and different meanings. In P. Ur's opinion the problem is that a lot of people never learn these different spellings and meanings and just go about their merry way using the wrong words. When somebody is speaking, we cannot tell. However, once we start writing stuff we make the big mistake of confusing our readers. People that do not already know the right homonym will learn it wrong from our usage. Those that know the right word will just think we are a moron[3].

S. Rytkina in her article *"Homonymy"* writes that homonyms may cause special decoding problems for some students in reading since they have to learn that two or three different spellings may actually have an overall positive effect on the reading act because different spelling cue different meanings for students. Homonyms cause many problems for students in writing, too. Recalling the correct spelling for the particular usage appears to be very difficult for many students and incorrect choices abound in writing samples[4].

Brainstorming about homonymous words can be a worthwhile activity, especially among gifted learners, who tends to have more homonymous pairs collected in their vocabularies. Armenian methodologist S.V. Gulbudaghyan suggests teachers to put a homonym on the blackboard and have students give its homonyms with the definition of each word .Students can then discuss each homonym and make sentences fitting each meaning. At the end of the course he suggests to have dictation on homonymous words[5].

---

[1]Рогова, Г. В. Методика обучения английскому языку. Москва:Просвяшение, 1983: с. 69-112, 136.
[2] Mora, S. *Teaching Vocabulary to Advanced Students: A Lexical Approach/ http://www.seasite.niu.edu/Tagalog/Teacher_Page/Language_Learning_Articles/teaching...*
[3] Ur. P. *A Course in Language Teaching:Practice and Theory*. Cambridge University, 1997.
[4] Rytkina, S. *Homonymy/ http://irytkin.fromru.com/homonymy/htm*
[5] Գյուլբուդաղյան, Ս. Վ. *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա*. Երևան, Լույս, 1987, էջ 133, 137

At the same time another methodologist Ripple M. proposes students to learn to use dictionary to decide on the meanings for homonymous words that fit the peculiar situations in which the words are found. In order to do this he suggest students to look up the word, read each definition, and decide if that meaning fits to context in which the word was found. They need help in seeing that some of the definitions will not make sense in the given context and that a search for an appropriate definition, not just any definitions, is necessary. They can take a list of dictionary definitions for a given homonym and a number of occurrences of that word in context and match each context example to a definition that makes sense[1]. For example, *beach – the store of an ocean; beach a kind of tree*, *Heal – to bring back to health: heel – part of the foot, part of a shoe.*

a) The day was stormy and there were very few people on the ----------(*beach, beech*)

b) The dog followed the hunter at his ----------(*heal, heal*).

I.A Gruzinskaya proposes to present the word as an element in sentence pattern, first, then fix it

in students' memory through different exercises in sentence patterns and phrase patterns, i.e. the context, where we can easily follow their multiple meaning[2]. By the way, it is very important to teach homonymous words in context, as the use of words in complete sentences as opposed to simply defining the words, and the meanings of words will stick better with the students. It is common known that context prevents from any misunderstanding of meanings and the verbal context may make the meaning of an ambiguous word clear; syntactical constructions may give necessary indication as well, and the situation the utterance takes place in may also help. Fries Ch. in this respect writes; *"it is not the meaning of the words themselves but an intricate system of formal features which makes possible the grasp of what we generally call "meaning"*[3]. And it is quite obvious that without minding the context, people will not understand each other, and the natural function of language – to carry out meaning – would not be fulfilled.

For helping students learn correct homonym usage the teachers should review homophones frequently to keep them in students' minds and teacher should keep the review interesting by including a wide variety of examples.

We propose examples on the basis of W.S. Maugham's story *"Red"* which will provide some strategies for helping students learn correct homonym usage.

e.g. 1. Underline the word that corresponds to the definition:

a) I don't see the opening-said the mate. They went to sea a little and presently it was quite dark – to become aware of something by using eyes (*I don't see the opening- said the mate*);

b) I will spend it here and then I am content to die. It may only an effort of will now that prevented himself from going every day to the creek, and when he was not with Sally his thoughts were – the ability to control your thoughts and actions in order to achieve what you want to do (*It may only an effort of will now that prevented himself from going every day to the creek, and when he was not with Sally his thoughts were*).

c) Have you read them all? There was a native hut, with its beehive roof and its pillars, overshadowed by a great tree with red flowers; and the craton bushes, their leaves yellow and red and golden, made a pied fence around it. I wonder if you knew a man called Red. – having the colour of blood and fire (*There was a native hut, with its beehive roof and its pillars, overshadowed by a great tree with red flowers; and the craton bushes, their leaves yellow and red and golden, made a pied fence around it*).

e.g. 2.Choose the right pair of homophones from the list below and use them in the appropriate form in the blank spaces: *for-four, see-sea, it's-its, no- know, our- hour, to-too-two, maid-made,* etc.

a) The skipper thrust his hand into one of his trouser pockets and with difficulty,------- (for) they were not at the sides but in front and he was portly man, pulled out a large silver watch. It was a seventy ton schooner with paraffin auxiliary, and it ran, when there was no head wind, between -------(four) and five knots an hour.

b) -------(It's) a cute little house you've got here. There was a native hut, with ------(its) beehive roof and -------(its) pillars overshadowed by a great tree with red flowers; and the craton bushes, their leaves yellow and red and golden, made a pied fence around it).

c) He was a man -----(no) longer young with a small beard, now somewhat grey, and with thin face (I felt when I came here that all my past life had fallen away, Stochholm and its University, and than Bonn: it all seemed the life of somebody else, as though now at last I had achieved the reality which our doctors of philosophy - I am oneself, you--------(know) - had discussed so much.

---

[1] Rippel, M. *Ideas for Teaching Homophones and Homonyms*/ http://bellaonline.co./articles/ art4624.asp

[2] Грузинская, И. А. *Методика преподавания английского языка.* Москва, 1938, с. 97-98.

[3] Fries, Ch. *The Structure of English.* London: Longmans, 1957, p. 183

d) It was a seventy ton schooner with paraffin auxiliary, and it ran, when there was no head wind, between four and five knots an--------- (hour). I felt when I came here that all my past life had fallen away, Stochholm and its University, and than Bonn: it all seemed the life of somebody else, as though now at last I had achieved the reality which-------(our) doctors of philosophy - I am oneself, you know - had discussed so much.

e) Then ----------(to) the singing a couple began -----(to) dance he knew scarcely--------(two) words of native tongue… I don't think he was vain of it, he was-------(too) much ingenuous for that[1].

f) A home, at the Havre, that is where I lived,…and we had a -------(maid) who came in by the day. It-------(made) it ten times harder for me than for the rest, most of them, who have never known anything but squalor, filth and promiscuity[2].

In all the stages of teaching vocabulary the teacher should constantly use all kinds of vocabulary testing to see how students assimilate the form, the meaning, and the usage of the words. For testing the retention of homonyms, especially homophones dictionaries are suggested.

Summing up a comprehensive discussion of a number of methodologists' viewpoints on rules and techniques of teaching homonyms as part of vocabulary and since teaching homonyms, first of all, means to teach new words, i. e vocabulary, we suggest that the process of learning a word means to the students: identification of concepts that is learning what the word means, students' activity for the purpose of retaining words, students' activity in using this word in the process of communication in different situations. Accordingly, the teacher's role is to furnish the explanation, that is to present the word, to get students identify the concept correctly, to get them to recall and recognize the word by means of different examples in context, to stimulate students to use the words in speech. So, at the end of each lesson we propose to give a list of homonyms to students with the explanation and then give examples from fiction to check the understanding of the given words.

References

1. Գյուլբուդաղյան, Ս. Վ. *Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա:* Երևան, Լույս, 1987, էջ 133, 137
2. Грузинская, И. А. *Методика преподавания английского языка*. Москва, 1938, с. 97-98.
3. Рогова, Г. В. Методика обучения английскому языку. Москва:Просвяшение, 1983, с. 69-112, 136.
4. Fries, Ch. *The Structure of English.* London: Longmans, 1957, p. 183
5. Maugham, S. *Red*. 1921, p. 81-90
6. Maugham, S. A Man with a Conscience, 1900
7. Mora, S. Teaching Vocabulary to Advanced Students: A Lexical Approach/ *http://www.seasite.niu.edu/Tagalog/Teacher_Page/Language_Learning_Articles/teaching*...
8. Rippel, M. Ideas for Teaching Homophones and Homonyms/ *http://bellaonline.co./articles/ art4624.asp*
9. Rytkina, S. Homonymy/ *http://irytkin.fromru.com/homonymy/htm*
10. Ur. P. A Course in Language Teaching:Practice and Theory. Cambridge University, 1997.

Information about the author:
Arega Hayrapetian, Senior Lecturer, Artsakh State University
E-mail: arega63@mail.ru

The article is recommended for publication by the member of editorial board, Ph. D. in Pedagogics, E. Hayrapetyan.

[1] Maugham, S. *Red*. 1921, p. 81-90
[2] Maugham, S. *A Man with Conscience,* 1900

ՀՏԴ 82.09 *Գերմանական լեզուներ*

ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Ջ. Գ. ԲԱՅՐՈՆԻ «ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ» ԵՐԿՈՒՄ

Տաթևիկ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ *ուղղաձիգ համատեքստ, ուղղաձիգ համատեքստի տարր, իրակություն, տեղանուն, գրական անդրադարձ, մեջբերում, դարձվածք, խոսքաարտահայտչական հնար, գիտելիք, գեղարվեստական տեքստ, գեղագիտական ազդեցություն:*

Ключевые слова: *вертикальный контекст, элемент вертикального контекста, реалия, топоним, аллюзия, цитата, идиома, фигура речи, знание, художественный текст, эстетический эффект.*

Key words: *vertical context, element of vertical context, realia, toponymy, allusion, quote, idiom, figure of speech, knowledge, literary text, aesthetic impact.*

Т. Мовсисян

ПРОЯВЛЕНИЯ ВЕРТИКАЛЬНОГО КОНТЕКСТА В ПОЭМЕ ДЖ. Г. БАЙРОНА “ШИЛЬОНСКИЙ УЗНИК”

В статье рассматривается вертикальный контекст как инструмент полного понимания литературного произведения. В нем также обсуждаются элементы вертикального контекста. На примере отрывков из поэмы Дж. Г. Байрона "Шильонский узник" сделана попытка выявить их сходство и связь с работами других авторов и объяснить какие новые, дополнительные значения, коннотации и вертикальные контексты введены в данном произведении Байрона.

T. Movsisyan

THE VERTICAL CONTEXT DISPLAYS IN G. G.BYRON'S "THE PRISONER OF CHILLON" POEM

The article views the vertical context as a tool for complete understanding of a literary work. It discusses the elements of vertical context. By the example of the extracts from G. G. Byron's "The Prisoner of Chillon" poem an attempt is made to reveal their similarity and connection with the works of other authors and explain what new, additional meanings, connotations, vertical contexts are input into Byron's poem.

Մենախոսության ձևով և ութ վանկից բաղկացած բանատողերով դրամատիկ ստեղծագործությունը՝ 1816 թ. "*The Prisoner of Chillon and Other Poems*" հատորում լույս տեսած «Շիլիոնի կալանավորը» պոեմը, Բայրոնը գրել է՝ ներշնչվելով Փ. Շելլիի հետ Շվեյցարիայի Ժնև լճի վրա տեղակայված Շիլիոնի ամրոց կատարած այցից, որտեղ նա ծանոթացել է 16-րդ դարի մեծ հայրենասեր Ֆրանսուա Բոնիվարի՝ նույն ամրոցում բանտարկության պատմությանը: Պոեմն իր ամբողջության մեջ հասկանալու համար հարկավոր է ունենալ նախագիտելիք կամ հենքային գիտելիք նախ ամրոցի, ապա հերոսի մասին: Այս գիտելիքի առկայության պարագայում ի հայտ են գալիս մի շարք ուղղաձիգ համատեքստեր, որոնք թաքնված են վերջինիս կարգերի, օրինակ՝ տեղանունների կամ հատկանունների, ինչպես նաև այլ խոսքաարտահայտչական հնարների ներքո, որոնք կփորձենք բացահայտել, մեկնաբանել ցայտուն օրինակների հիման վրա՝ այդպիսով լիովին հասկանալի դարձնելով պոեմը ընթերցողին:

Նախ հարկ է սկսել պոեմի հենց վերնագրից՝, այսինքն՝ փորձենք հասկանալ, թե ի՞նչ ասել է Շիլիոն, արդյո՞ք այս անունը ծանոթ է մեզ և առհասարակ Բայրոնի ընթերցողին, և ինչո՞ւ հենց Շիլիոն, ի՞նչ պատմական փաստեր կամ համատեքստեր են ծածկագրված այս անվան ներքո:

Սակայն մինչ վերոնշյալ հարցերին պատասխանելը նշենք, որ, կախված այն հանգամանքից, թե ինչ միջոցներով է ուղղաձիգ համատեքստը ներհյուսվում գեղարվեստական տեքստին, տարանջատում ենք բանասիրական ուղղաձիգ համատեքստ, որն արտահայտվում է գրական անդրադարձների, մեջբերումների, այլակերպված կամ դեֆորմացված դարձվածքների և այլնի միջոցով, ինչպես նաև սոցիալ-պատմական

ուղղաձիգ համատեքստ, ինչն արտահայտվում է իրականությունների, հատկանունների կամ տեղանունների միջոցով:

Այսպիսով՝ անդրանդառնանք պոեմի վերնագրում տեղ գտած տեղանվանը՝ Շիլիոնին: Վերջինս մեր ուսումնասիրության շրջանակներում հանդես է գալիս որպես սոցիալ-պատմական ուղղաձիգ համտեքստ արտահայտող տարր, քանի որ այն իրականում տեղանուն է՝ առավել ստույգ ամրոցի անվանում:

Եվ բնավ էլ պատահական չէ այն հանգամանքը, որ «Շիլիոնի կալանավոր» է վերնագրված պոեմը: Այն, ինչպես արդեն նշվել է, ամրոց է Շվեյցարիայում: Ամրոցի մասին առաջին անգամ հիշատակվում է 1150 թվականին: Միջնադարում ամրոցը եղել է սավոյական կոմսերի (ապա՝ դուքսերի) նստավայրը: Սակայն 1530-1536 թվականներին Շիլիոնի ներքնահարկում կալանավորված է եղել շվեյցարական քաղաքական գործիչ Ֆ. Բոնիվարը, ով նախատիպն է Բայրոնի վերոհիշյալ պոեմի հերոսի:

Chillon! *Thy prison is a holy place,*
And thy sad floor an altar- for 'twas trod,
Until his very steps have left a trace
For they appeal from tyranny to God.
Worn, as if thy cold pavement were a sod,
By ***Bonnivard!*** *May none those mark efface!*[1]
Շիլիոն, *քո բանտը սրբավայր է միշտ,*
Եվ քո տրխրալի հատակը՝ սեղան,.
Բոնիվարն *այնտեղ տանջվեց բազմավիշտ,*
Թողեց հետքերը քարերի վրան:
Եվ թող միշտ մընան նրանք անջընջում,
Որ բրոնությունից Աստվա՜ծ են կանչում[2]**:**

Իրականում ազատատենչ հոգևորական և պատմաբան Ֆրանսուա Բոնիվարը (1493–1570) պայքարում էր ժնևի ազատության համար, ինչի համար էլ կալանավորվել էր: Այս ստեղծագործությունը հատկանշական է այն հանգամանքով, որ դրանում Բայրոնն առաջին անգամ է խոսում իրական պատմական կերպարի մասին՝ ուշադրությունը սևեռելով ոչ թե երևակայական կամ մտացածին, այլ հենց պատմական՝ իրական, դետալի վրա:

Պոեմն առավել ըմբռնելի դարձնելու համար բերենք փոքրիկ պատմական ակնարկ Բոնիվարի կյանքի պատմությունից, ինչը, ոչ միայն ոգեշնչման աղբյուր է պոեմի ստեղծման համար, այլ նաև որպես ուղղաձիգ համատեքստ է հանդես գալիս նրանում:

Այսպես՝ Լյունսի լորդ Լյուդովիկոս Բոնիվարի որդի **Ֆրանսուա Բոնիվարը** (1493–1570) **ծնվել** է Սեյսելում՝ հին սավոյական ընտանիքում, և կրթություն ստացել որպես հոգևորական Թուրինի համալսարանում:

Երբ Կառլոս III-ը բռնագրավում է Բոնիվարների ողջ ունեցվածքը՝ բացառությամբ փոքրիկ վանքի, Ֆրանսուա Բոնիվարը միանում է Ժնևի հայրենասերներին, ովքեր պայքարում էին սավոյացիների՝ տարածաշրջանում իշխելու ջանքերի դեմ: 1519 թ. Դուքսի գալստյան լուրն առնելուն պես Բոնիվարը վանականի կերպարի ներքո ծպտված փախչում է Ժնև, որտեղ նրան դավաճանում են իր ընկերներ լորդ Վարուգն ու Մոնթերոնի աբեղա Բրիսեն ու հանձնում Դուքսին: Վերջինս 1519-1521 թթ. նրան բանտարկում է Ռոն գետի ափին գտնվող ամրոցներից մեկում՝ Գրոլեում: Սակայն Մոնթերոնի աբեղային, ում դավաճանությունից հետո հանձնվում է Սուրբ Վիկտոր վանքը, Բոնիվարի ընկերները թունավորում են և ազատում վերջինիս կալանավայրից: 1527 թ. Բոնիվարը վերադառնում է իրենց փոքրիկ վանքը:

Սակայն այս փորձությունն էլ Բոնիվարին ետ չի պահում իր քաղաքական ակտիվությունից: 1530 թ. նա կրկին հանձնվում է Դուքսի յուրայիններին: Դուքսն այս անգամ նրան կալանավորում է Շիլիոնի ամրոցի նկուղում, որտեղից ազատ է արձակվում 1536 թ. բեռնցիների կողմից Վոյի (գավառ Շվեյցարիայում) ազատագրման ժամանակ: Մինչ այդ Բոնիվարների միակ ունեցվածք փոքրիկ

---

1 Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979, էջ 254.

2 Հ. Թումանյանի թարգմանական գոհարները: Համաշխարհային պոեզիա: «Իրավունք»: Երևան 2005, էջ 55:»:

վանքը հիմնովին ավերվել էր, ինչի դիմաց Բոնիվարին թոշակ է հատկացվում ժնևի կողմից, իսկ 1537 թ. նա բուրժուա է կարգվում, որից ստիպված հրաժարվում է ֆինանսական անբավարար միջոցների պատճառով: Իր կյանքի մեծ մասը Բոնիվարն անցկացնում է Բեռնում և Լոզանում, իսկ 1544 թ. հաստատվում է ժնևում:

Վերոնշյալ պամական ակնարկն ամբողջությամբ սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստ է՝ Շիլիոն տեղանվան և Բոնիվար հատկանվան տակ ծածկագրված, և ինչպես նկատելի է հայերեն թարգմանությունից, ուղղաձիգ համատքեստի տվյալ կարգերը թարգմանության դիտանկյունից որևէ խնդիր չեն հարուցում և նույնությամբ պահպանված են թիրախային տեքստում: Ուղղաձիգ համատեքստի այս կարգերը պարզապես հարստացնում են երկը պատմական դրվագներով ու փաստերով և առհասարակ բարոյախոսությամբ: Եվ պատահական չէ նաև այն հանգամանքը, որ երկը հաճախ անվանվում է նաև առակ, որի բարոյախոսությունը հետևյալն է՝ մարմնական անազատությունը դեռևս չի նշանակում մտքի անազատություն:

Eternal Spirit of the chainless Mind!
Brightest in dungeons, Libery! thou
art…[1]

Բերենք սոցիալ-պատմական ուղղաձիգ համատեքստի ևս մեկ օրինակ երկից՝

Lake Leman *lies by Chillon's walls:*
A thousand feet in depth below
Its massy waters meet and flow;
Thus much the fathom-light was sent
From Chillon's sow-white battlement,
Which round about the wave-inthralls:
A double dungeon wall and wave
Have made –and like a living grave.[2]

Այստեղ Բայրոնը նշում է Լեման լճի մասին, որի ափին էլ կանգնած է բանտ-ամրոց Շիլիոնը և որը իր հուժկու ալիքներով քիչ տառապանք չի հասցրել իրական պատմական կերպար Բոնիվարին: Որպես հավելում նշենք նաև, որ Լեմանը ներկայիս ժնև լճի նախկին անվանումն է, իսկ առանց այս ամենի իմացության կամ այս նախագիտելիքի՝ Բայրոնի ասելիքը թերի կամ անհասկանալի կարող է թվալ ընթերցողին:

Ինչ վերաբերում է Հ. Թումանյանի կողմից պոեմի թարգմանությանը, ապա հարկ է նշել, որ այս դրվագը՝ 6-րդ երգը, ինչպես նաև 7-րդը, բացակայում են թարգմանության մեջ:

Վերոնշյալ տարրերից բացի՝ հաճախ են հանդիպում այս ստեղծագործությունում ուղղաձիգ համատեքստի այլ տարրեր՝ մեջբերումներ, գրական անդրադարձներ, ինչպես նաև դարձվածքներ՝ այն էլ անգամ փոքր-ինչ այլակերպված:

Ասելիքը ավելի պարզ դարձնելու համար բերենք օրինակներ:

Այսպես՝

MY hair is grey*, but not with years,*
Nor grew it white
In a single night*…*[3]

Գորշ են մազերս, բայց ոչ տարիքից,
Ոչ էլ այպես ծեր,
Դարձա մի գիշեր… [4]

Նշված տողերը կարելի է դիտարկել որպես ուղղաձիգ համատեքստի կրկնակի տարր՝ և՛ որպես դարձվածք, և՛ որպես անդրադարձ այլ գեղարվեստական կամ գրական աղբյուրների: Դարձվածքն ինքնին հասկանալի է. **« Grey hair »** կամ **«մոխրագույն/գորշ մազեր»** դարձվածքը թե՛ անգլերենում, և թե՛ հայերենում շատ ընդունված և տարածված է, որը մեկնաբանության կարիք չունի: Սակայն այս մեջբերված բանատողերն ունեն նաև ուղղաձիգ համատեքստ. հեղինակն այստեղ կիրառում է Շեքսպիրի «Հենրի IV» քրոնիկից հետևյալ դարձվածը՝ փոքր-ինչ այլակերպված՝ "***Thy***

1 Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979 p 353.

4Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979 p 357.

5 Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979 p 353.

[4] Հ. Թումանյանի թարգմանական գոհարները: Համաշխարհային պոեզիա: Իրավունք: Երևան 2005, էջ 56:

father's beard is turned white with the news"[1]: Սակայն այստեղ հավանական է նաև անդրադարձը պատմական փաստի, այն է Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 16-րդի կնոջ՝ Մարի Անտուանետի պամությանը, ում մասին նույն են փաստում նրա աղախնի հուշերը, համաձայն որի՝

In the night of 21–22 June 1791[2], the queen's hair had, "turned white as those of a seventy-year old woman." (En une seule nuit ils étaient devenus blancs comme ceux d'une femme de soixante-dix ans[3]/ Մեկ գիշերում թագուհու մազերը սպիտկեցին, ինչպես յոթանասուն տարեկանի մազերը:

Նույն է վկայում նաև շոտլանդացի էսսեիստ, փիլիսոփա Թոմաս Քարլիլը իր «Ֆրանսիական հեղափոխություն» աշխատությունում. "Her hair is already grey with many cares and cr***osses…[4]:***

Վերոնշվածից բխում է, որ Բայրոնին հասկանալու համար պետք է լինել համապարփակ գիտելիքով հարուստ ընթերցող, որպեսզի առաջին հայացքից պարզ թվացող բառերի, արտահայտությունների, դարձվածքների կամ մեջբերումների տակ թաքնված տեղեկությունը, փաստերն ու ասելիքը պարզ լինեն, այլապես նրա ստեղծագործությունները զրկվում են խորքայնությունից ու իրական գեղագիտական արժեքից:

Բերենք մեկ այլ օրինակ պոեմից, ինչը ևս մեկ անգամ գաիս է ապացուցելու ասվածը:

We were seven—who now are one,
Six in youth, and one in age,
Finished as they had begun,
Proud of Persecution's rage[5]
Յոթ հոգի էինք, մընացել եմ ես:
Մեկը տարիքով, վեցն երիտասարդ,
Ինչպես սկրսան, վերջացրին նույնպես,
Հալածանքների սաստկությամբ հրպարտ:[6]

Մեջբերված տողերից կարելի է ենթադրել, որ պոեմի հերոս, պատմական կերպար Բոնիվարն ունի վեց եղբայր, սակայն իրականում այդպես չէ: Այստեղ ևս ընթերցողից պահանջվում է նախագիտելիք առ այն, որ փաստացիորեն Բոնիվարն ունեցել է երկու եղբայր, որոնցից մեկի անունը եղել է էմբլերդ: Իրականում հեղինակի այս տողերը անդրադարձ են Ռիչարդ լորդ Բայրոնի՝ Հաքնոլ-Թորքարդ եկեղեցու[7] բակում տեղակայված հուշարձանի վրա արված գրությանը՝ տապանագրին: Այն է . **"Beneath, in a vault, is interred the body of Richard Lord Byron, who with the rest of his family, being seven brothers, faithful served king Charles I in the Civil Wars- who suffered much for their loyalty, and lost their present fortunes"[8]:**

Ավելին՝ նշված բանատողերը նաև հիշեցնում են Չ. Չերչիլի հետևյալ տողերը "The Prophecy of Famine" ստեղծագործությունից, որտեղ հեղինակը խոսում է իր եղբայրների կորստի մասին, ովքեր զոհ են դարձել շոտլանդական Բյութ շրջանի ղեկավարների կողմից պարտադրվող անազատության դեմ պայքարում:

"Five brothers had I on the Scottish plains,
Well dost thou know we were none more hopeful swain,
Five brothers there I lost, in manhood's pride,
Two in the field and three on gibbets died[9].

---

1 Shakespeare, Henry IV., act ii. sc. 4, line 345

2 Այս օրը թագավորական ընտանիքը Փարիզից փախուստի ընթացքում բռնվում է Վարենեսի մոտակայքում:

3 Mémoires de Madame Campan, première femme de chambre de Marie-Antoinette, Le Temps retrouvé, Mercure de France, Paris, 1988, p.272, ISBN 2-7152-1566-5

4 Carlyle Tomas, French Revolution, Champan & Hall, London, 1837-http://www.gutenberg.org/files/1301/1301-h/1301-h.htm

5 Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979 p 256.

6 Հ. Թումանյանի թարգմանական գոհարները: Համաշխարհային պոեզիա: Իրավունք: Երևան 2005, էջ 56:

7 Նոթինգհեմշիրում տեղակայված եկեղեցի, որտեղ հանգչում է Բայրոնն ու իրենից օտարացած իր դուստրը՝ մաթեմատիկոս էյդա Լավլեյսը (Ada Lovelace).

8 The New Monthly Magazine and Literary Journal, Part One, Original Papers, London, Henry Colburn and Richard Bentley, 1830.p. 235.

9 Churchill, G. The Prophecy of Famine. A Scots Pastoral. The Second Edition, London. G. Kearsly. 1796. p. 20.

Նման տարրերի միջոցով Բայրոնը իր ստեղծագործության մեջ հիշատակում է մի շարք պատմական փաստեր և իրադարձություններ, որոնք ճակատագրական են եղել ոչ միայն անհատների, այլ նաև ազգերի համար:

But through the crevice where it came
That bird was perched, as fond and tame,
And tamer than upon the tree,
A lovely bird, with azure wings
And song that said a thousand things,
And seemed to say them all for me[1]!

Այս տողերը այլակերպված մեջբերում են Քոլրիջի "Zapolya" ստեղծագործության "Song of Glycine" հատվածից՝

A sunny shaft did I behold,
From sky to earth it slanted;
And poisoned therein a bird so bold-
Sweet bird, thou wert enchanted[2].

Հետևյալ բանաստողները հիշեցնում են Ուրդսուրթի (W. Wordsworth) "**I wandered lonely as a cloud**" ստեղծագործությունը:

For he would never thus have flown-
Lone-as the corse within its shroud,
Lone-as a solitary cloud,
A single cloud on a sunny day...[3]

Իսկ Ուրդսուրթն իր բանաստեղծության մեջ նշում է՝

I wandered lonely as a cloud
That floats on high o'er vales and hills...[4]

Ե՛վ անդրադարձնող, և՛ անդրադարձվող տեքստերում հերոսները համեմատվում են միայնակ, թափառական ամպի հետ հետևաբար անդրադարձնող տեքստը արտացոլում է մեկ այլ գեղարվեստական տեքստ, զուգորդումներ առաջացնում անդրադարձվող տեքստի հանդեպ: (Իսկ Թումանյանի թարգմանության մեջ մեջբերված օրինակները բացակայում են): Սակայն այդ զուգորդումները, անդրադարձները առաջ են գալիս միայն այն պարագայում, երբ ընթերցողը լիաճանաչ է և քաջատեղյակ նաև Ուրդսուրթի ստեղծագործություններին:

Այսպիսով, Բայրոնն իր Շիլիոնի կալանավորը երկում կիրառում է իրեն՝ ճարտարամիտ ու բազմակողմանիորեն զարգացած, բազմաճանաչ և գիտելիքի անհատակ շտեմարան ունեցող հեղինակին բնորոշ այն բոլոր հնարամիտ միջոցները՝ խոսքի պատկերավորման ցցուն և քողարկված հնարները, որոնք ստեղծագործությունը օժտում են մակերեսային համատեքստից և բուն ասելիքից բացի՝ այլ՝ լրացուցիչ, ծածկագրված համատեքստերով: Այս համատեքստը առավել հարստացնում են ստեղծագործությունը իմաստներով, հուզականությամբ, գեղագիտական ազդեցությամբ և վերջապես ուղղաձիգ համատեքստերով:

Օգտագործված գրականություն

1. Հ. Թումանյանի թարգմանական գոհարները: Համաշխարհային պոեզիա: «Իրավունք»: Երևան 2005,
2. Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979.
3. Carlyle Tomas, French Revolution, Champan & Hall, London, 1837 http://www.gutenberg.org/files/1301/1301-h/1301-h.htm.
4. Churchill, G. The Prophecy of Famine. A Scots Pastoral. The Second Edition, London. G. Kearsly. 1796.
5. Coleridge, S. T. The Poetical Works of S. T. Colridge. In three Volumes. Volume III. London, William Pickering, 1829.

1 Coleridge, S. T. The Poetical Works of S. T. Colridge. In three Volumes. Volume III. London, William Pickering, 1829, p. 257.

2 Quillar Couch, Arthur Thomas, Sir. The Oxford Book of English Verse. Oxford: Clarendon, 1919, p.1020.

3 Byron G. G.,The Poems.Raduga Publishers. Moscow, 1979 , p. 156.

4 Wordsworth W. The Complete Poetical Works.London: Macmillan and Co., 1888, p. 530.

6. Mémoires de Madame Campan, première femme de chambre de Marie-Antoinette, Le Temps retrouvé, Mercure de France, Paris, 1988.
7. Quillar Couch, Arthur Thomas, Sir. The Oxford Book of English Verse. Oxford: Clarendon, 1919.
8. Shakespeare, Henry IV., act ii. sc. 4. http://shakespeare.mit.edu/1henryiv/1henryiv.2.4.html.
9. The New Monthly Magazine and Literary Journal, Part One, Original Papers, London, Henry Colburn and Richard Bentley, 1830.
10. Wordsworth W. The Complete Poetical Works.London: Macmillan and Co., 1888.

Տեղեկություն հեղինակի մասին
Տաթևիկ Մովսիսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
E- Mail: movsisyantatevik@yahoo.com

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.թ.Է.Ա.Հայրապետյանը:

82.09(430.2) Արտասահմանյան գրականություն

ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ Յ.Վ. ԳՅՈԹԵԻ «ՖԱՈՒՍՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սիրվարդ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Բանալի բառեր: *Արմին Ռիզի, Շիլլեր, ողբերգություն, անագրամ, Գյոթե, մահվան առեղծված, Ֆաուստ, ակոնիտ, թունավորում:*

Ключевые слова: *Армин Ризи, Шиллер, трагедия, анаграм, Гете, тайна смерти, Фауст, аконит, отравление*

Key words: *Armin Rizi, Shiller, tragedy, anagram, Goethe, mystery of death, Faus, akonit, poissoning*

С. Степанян

ТАЙНА СМЕРТИ Ф. ШИЛЛЕРА В ТРАГЕДИИ “ФАУСТ” ГЕТЕ

Резюме

В основе данной статьи положено раскрытие швейцарским ученым Армин Ризи тайны смерти одного из основателей немецкой классической литературы Ф. Шиллера в трагедии “Фауст” Гете. При расшифровании новых анаграммических структур Ризи расскрывает во второй части трагедии “Фауст” историю убийства Шиллера. Шиллер был отравлен. В данной статье научно подчеркивается молчание Гете.На основе этого выявлена необходимость исследовать Гете как человека в аспекте трагичности для новых литературоведческих, историко-политических исследований.

S. Stepanian

THE MYSTERY OF F. SHILLER'S DEATH IN GOETHE'S <<FAUST>> TRAGEDY

Summary

This article discusses disclosure of Swiss scientist Armin Rizi about the mystery of the German poet - F.Shiller’s death in Goethe’s §Faust¦ tragedy. Decoding the new anagram structures Rizides closed Shiller's murder in «Faust» tragedy.Shiller was poisoned.In this artikel is stressed scintifically the silence of Goethe. Based on this it is identified the necessity to explore Goethe as a human in the tragic aspect for the new literal, historic-political researches.

Սույն հոդվածի հիմքում ընկած է գերմանական դասական գրականության հիմնադիրներից Ֆ. Շիլլերի մահվան առեղծվածի՝ շվեյցարացի գիտնական Արմին Ռիզիի բացահայտումը Յ.Վ. Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության մեջ: Անագրամային նոր կառույցների վերծանումով Ռիզին ողբերգության երկրորդ մասում հայտնաբերում է Շիլլերի սպանության պատմությունը: Բանաստեղծին թունավորել էին: Սույն հոդվածում գիտականորոն կարեւորվում է Գյոթեի լռությունը: Այս առումով հիմնավորվում է Գյոթե մարդու ուսումնասիրումը ողբերգականության տեսանկյունից՝գրականագիտական, պատմաքաղաքական ուսումնասիրությունների նոր փուլ սկսելու:

Գերմանական դասական գրականության հիմնադիրներից ֆրիդրիխ Շիլլերի մահվան առեղծվածը սկիզբ էր առել նրա անսպասելի վախճանի հետ կապված հասարակական շշուկներից: Այդ օրերի իր հիշողություններում Շիլլերը նույնիսկ չի ակնարկում առողջական խնդիրների մասին: Ընդհակառակը՝ նա անհանգստանում էր միայն Գյոթեի համար, որն այդ ժամանակ հիվանդ էր: Պաշտոնական տվյալներով Շիլլերը մահացել է 1805թ. մայիսի 9-ին տուբերկլյոզից ու թաղվել Վայմարի հին ընդհանուր՝ հասարակ ու աղքատ մարդկանց գերեզմանոցում: Բանաստեղծի մահից քսանմեկ տարի անց, երբ Վայմարի քաղաքապետը իրավունք ստացավ Շիլլերին տեղափոխել Վայմարի դուքսերի դամբարան, պարզվեց որ քսաներեք հանված գանգերից եւ ոչ մեկը բժիշկների քննության համաձայն չէր պատկանում Շիլլերին: Ենթադրաբար դրանցից ամենամեծը տեղափոխեցին նոր գերեզման, որն էլ առ այսօր տասնյակ հազարավոր այցելուների ու երկրպագուների համար մնում է որպես սրբավայր: Հետագայում Շիլլերի հարեւանությամբ թաղեցին նաեւ Յ. Վ. Գյոթեին՝ գնահատելով նրանց ընկերությունն ու մեծ բարեկամությունը: Նշենք, որ այս երկու գրողների կապն ունի արդիական հնչեղություն: Երբ 1998թ. Վայմարում Գյոթեի եւ Շիլլերի արխիվում վերսկսվեց Գյոթեի նամակների վերահրատարակման մեծ ծրագիր, հայտնաբերվեցին հարյուրավոր նոր նամակներ, որոնց ուսումնասիրությամբ զբաղվում են գերմանացի եւ այլազգի շատ գրականագետներ ու փիլիսոփաներ[1]: Գերմանագետ փիլիսոփա Ռյուդիգեր Զաֆրանսկին (ծնվ. 1945թ.), որը դարի ամենամեծ խնդիրը համարում է համաշխարհայնացումը, Գյոթեի եւ Շիլլերի արդիականացումը համարում է ժամանակի կարեւորագույն պահանջներից մեկը: Այդ նպատակին է ծառայում նրա «Գյոթե եւ Շիլլեր Մի ընկերության պատմություն» գիրքը: Բնականաբար բազմաթիվ հետազոտությունների նյութ են դառնում նաեւ Շիլլերի մահվան հետ կապված տարբեր հակասական միտումներ: 20-րդ դարի գերմանացի բժիշկ Ավգուստ ֆոն Վրորոպը հանրությանը ներկայացրեց

[1] Տես՝ Kerscheid G. /úellers N./ Richter E. Sechs unbekannte Briefe Goethes, Goethe Jahrbuch, Verlag Hermann Böhl aus Nachfolger Weimar, 20012, Band 119, S.183: Այսուհետեւ՝ Goethe Jahrbuch 2002:

Շիլլերի՝ իբր իրական գանգը: 2007թ. Ենայի եւ Ինսբրուկի համալսարանների բժիշկ պրոֆեսորները ուսումնասիրելով այս երկու գանգերը, հայտարարեցին, որ դրանցից ոչ մեկը չի պատկանում Շիլլերին: Այսպիսով մնում էր միայն հավատալ այն զրույցին, որ Գյոթեն , որ նույնիսկ չէր մասնակցել Շիլլերի հուղարկավորությանը,/Գյոթեն ընդհանրապես չէր հաճախում թաղման արարողություններ/, Շիլլերի գանգը թաղել էր Վայմարի իր տան այգում: Այուամենայնիվ այդ ընթացքում չէր պակասում Շիլլերի գերեզման այցելող երկրպագուների քանակը: Գուցե եւ ի հայտ չգար ճշմարտությունը, եթե չլիներ 2011թ. շվեյցարացի գիտնական Արմին Ռիզիի »Գյոթեի կոդը եւ Շիլլերի սպանությունը «Ֆաուստ II»-ում» բացահայտումը՝ Գյոթեի եւ Շիլլերի ողջ ժառանգությունը նորովի ուսումնասիրելու պահանջով: Գիտնականին հետաքրքրել ու կասկածի տեղիք էին տվել որոշ հանգամանքներ: Առաջին՝ ինչու՞ է Գյոթեն «Ֆաուստ»-ի երկրորդ մասը գրել առաջին մասը լույս տեսնելուց քսան տարի հետո եւ երկրորդ՝ որն է Գյոթեի կտակում «Ֆաուստ» ողբերգության երկրորդ մասի հետմահու հրատարակման պատգամի իմաստը: Նշենք, որ «Ֆաուստ»-ի երկրորդ մասը լույս է տեսել 1832թ. Գյոթեի մահից մի քանի ամիս անց: Գիտնականի առաջին կասկածներն ի հայտ են եկել դեռ ողբերգության երկրորդ մասի ընթերցման ժամանակ: Նա հայտնաբերել էր բազմաթիվ անագրամներ, որոնք սակայն տարբերվում էին անագրամի ավանդական ձեւից: Սովորական անագրամները բաղկացած են լինում երկու կամ երեք բառից, իսկ Գյոթեն «Ֆաուստ»-ում ստեղծել էր անագրամային կառույցներ: Այս առումով Ռիզին Գյոթեին հռչակում է անագրամային կառույցների հեղինակ, իսկ անագրամները՝ կոդավորված մտքեր, ու փորձում դրանք վերծանել:Աշխատանքին կցելով տաբեր մասնագետների՝ գիտնականը բացահայտում է Շիլլերի սպանության ամբողջ պատմությունը: Շիլլերին թունավորել էին ակոնիտով: Ուսումնասիրության հետագա քայլերում Ռիզիին հետաքրքրել էր այդ մասին Գյոթեի լռությունը: Ռուսական արխիվում Ռիզին հայտնաբերում է մի փաստաթուղթ, որտեղ դրված է լինում Գյոթեի ստորագրությունը, որը եւ հաստատում է Գյոթեի ընդունվելը իլյումինատների մի կազմակերպութկյան շարքերը: (Շիլլերը նունպես իլյումինատների կազմակերպության անդամ էր): Սույն հոդվածում գիտականորոն կարեւորվում է Գյոթեի լռությունը: Գրականագիտական առումով այդ լռությունը եւ ստեղծագործական միանգամայն նոր մեթոդով ճշմարտությունը մարդկությանը հաղորդելու փաստը գյոթեագիտության մեջ բերում է Գյոթե մարդուն ուսումնասիրելու նոր մղումներ, որոնք ողբերգականության տեսանկյունով քննության նյութ կդարձնեն Գյոթե մարդու ամբողջ կյանքը՝ թերեւս կցելով դրան նաեւ գիտական բացահայտումներ, արդիական առումով՝ Շիլլերի սպանությունը: Անհատի ողբերգության ներքին ըմբռնումը Գյոթեի ստեղծագործական համակարգում բխում է Գյոթեի անհատականությունից, ինչն ըստ արդի գրականագետների թույլ է տալիս Գյոթեի ստեղծագործության ճիշտ ընկալման նախապայման դարձնել նրա ձգտումների եւ տառապանքների ուսումնասիրումը: Դա խիստ արդիական է համարում գերմանացի գրող, գրականագետ Անժելիկա Ռայնմանը (ծնվ.1955թ.) «Պարտականությունների եւ հակումների միջեւ» գրքում. «*Մենք այս գրքում մոտենում ենք Գյոթե մարդուն ոչ միայն նրա բարի գործ անելու ձգտումների պատճառով, այլեւ որովհետեւ այն մեզ մոտեցնում է տառապող Գյոթեին, որն իր հիասթափություններով, սխալներով, ոչ ճիշտ ուղիներով, այո, նաեւ հուսահատություններով ստիպված է եղել իր ամբողջ կյանքում պայքարել,….»*[1]: Գյոթեի լռությունը եւ կոդավորման մեթոդը Ռիզիի ենթադրությամբ միայն կարող էր լինել պաշտպանական միջոց: Բոլոր ականատեսները պատմում էին, թե հիվանդ Գյոթեն ինչպես էր ձեռքերը դրել աչքերին ու հեկեկացել՝ լսելով Շիլլերի մահվան բոթը: Ապա նա փակվել է օրեր շարունակ իր սենյակում ու դուրս չէր գալիս եւ ոչ մեկին չէր ընդունում: Շիլլերի սպանության մասին Գյոթեի լռությունը տեւեց քսանյոթ տարի: Այդ տարիների ընթացքում Գյոթեն պահպանել է այդ լռությունը `որպես տառապանք, որպես խղճի ծանրություն, դավաճանություն եւ վախ: Հաշվի առնելով այն հանգամանքը, թե գաղափարական ինչ հզոր կապ կար այս երկու գրողների միջեւ, հստակ կարելի է ավելացնել, որ Գյոթեն եւս զոհ էր եւ Ֆաուստին նորից անդրադառնալու նրա ցանկությունը թերեւս սեփական ողբերգության հաղթահարման միակ միջոցն էր: Այստեղ եւս Գյոթեն իր ստեղծած կերպարի օգնությամբ արտահայտում է սեփական ողբերգությունը: Սա համարվում է Գյոթեի ստեղծագործության առանձնահատկությունը: Բազմիցս նա նշել է դա իր զրույցներում, նամակներում: Այսպես՝ Տասսոյի մասին նա գրել է. «*Նա ոսկորն է իմ ոսկորից եւ մարմինն՝ իմ մարմնից»*[2], «Երիտասարդ Վերթերի տառապանոները» վեպի նյութին անդրադառնալով նշել է.«*Ես իմ սեփական արյունով եմ սնել այդ ստեղծագործությունը: Հրձիգ փամփուշտներով լի է: Հոգուս համար՝ խռովիչ: Վախենում եմ՝չլինի թե մեկ անգամ եւս վերապրեմ ես այն ծանր երկունքը, որից ծնունդ առավ նա«*[3], «Ընտրովի ազգակցություններ» վեպի վերաբերյալ ասել է. «*Չկա եւ ոչ մի տող իմ այդ վեպի մեջ,*

[1] Reimann A.: Zwischen Pflicht und Neigung, Տես՝ Goethe-Jahrbuch, 2002, S.276:
[2] Գյոթե Յ., Ընտիր երկեր վեց հատոր. Ա Նորավեպեր, էջ 46:
[3] Նույն տեղում:

որ ապրած չլինեմ ես ինքս»[1]*:* Շիլլերին գրած նամակում Գյոթեն իր ստեղծագործական մղումների մասին գրել է.«*Երբեւէ ինձ չի հաջողվել որեւէ ողբերգական իրավիճակ մշակել առանց կենդանի պաթոլիկ հետաքրքրասիրության»*[2]*:* «Ֆաուստ»-ի մեջ Գյոթեն ամբողջացրել է իր բոլոր տառապանքները, որոնց միջով անցնելով մեծ հումանիստը կանգ առավ.«*Ես կարող եմ իմ հետագա կյանքը դիտել որպես սովորական պարգեւ: Իսկ հիմա իսկապես ասած, արդեն միեւնույն է՝ ինչ եմ անելու եւ որեւէ բան կատարելու եմ արդյոք»*[3]: Սրանում է կայանում ողբերգականի հոգեւոր իմաստը, ինչի մասին հայ գրականագետ Հ. Էդոյանը գրում է.«*Հոգեւոր իմաստը ողբերգության հիմքն է, նրա ինֆորմացիոն կենտրոնը», բոլոր ողբերգությունների ոչ միայն ժանրային առաջ տանող ուժը, որից եւ ուժ է առնում մարդը՝ դիմադրելու ճակատագրական հարվածներին: Այդ հիմքը չունեցողը ողբերգական չէ, եւ նրա վրա չի կարող կառուցվել որեւէ կոնցեպցիա,քանի որ նյութը ինքնին ողբերգական չէ»*[4]*:* Այս առումով համաշխարհային գրականության մեջ Գյոթեն ողբերգական մարդ է: Այդ մասին գերմանացի գրող Ալֆրեդ Դյոբլինը (1878-1957) այսպես է բացատրում.«*Երբ Գյոթեն մահացավ, նա գրեթե մոռացված էր երկրում: Նրա դագաղի մոտ ոչ մի ուսանող չէր հերթապահում եւ սաղմոսներ չէին կարդացվում… Այս մարդը, որը մահացավ ծեր տարիքում եւ թաղվեց այդպես շքեղորեն, իր կրքերից, տենսիլներից եւ վայրագություններից քրքրված ու ստրկացած էակ չէր: Ավելի շուտ նրան տրված էր կշեռքը հավասարակշռության մեջ պահելու հնարավորություն, որն էլ հաճախ հանգեցնում էր նրան, որ նա կոպիտ ու սառն էր երեւում: Ոչ ոք սկզբից չէր նկատում, որ նա ցավի ու վշտի ճգնաժամի մեջ է եւ որ նա գտնվում է ինքնահաղթահարման մարտադաշտում: Այս մասին են վկայում նրա արձակ գործերն ու պոեզիան»*.[5] Թե ինչ զարգացում կունենան գյոթեագիտական հետագա ուսումնասիրությունները, դա կրկին ժամանակի խնդիր է, քանի որ հանճարեղությունը որքան որ ծառայում է մարդկային քաղաքակրթության զարգացմանը, նույնքան վտանգավոր է թվում սեփական գոյության համար: Ա. Ռիզիի հայտնագործության մասին տեղեկացված բոլոր կառույցներից առ այսօր որեւէ առարկում չի հայտարարվել: Այս մասին վկայում է նաեւ գիտնականը.«*Հայտնագործության մասին առաջին տեղեկությունը հրատարակել եմ «mysterious» թերթում, կապվել եմ Շիլլերի եւ Գյոթեի անվան բոլոր կազմակերպությունների, բազմաթիվ համալսարանների հետ, դիմել եմ նրանց հետեւյալ հարցերով.Ի՞նչ տեղեկություն ունեն Գյոթեի մասին այս առիթով, արդյո՞ք թույլ եմ տվել որեւէ սխալ կամ գուցե անագրամային տողերն այստեղ զուտ պատահականություն են: Կես տարվա ընթացքում ես ստացել եմ շատ քիչ պատասխաններ եւ ոչ մի առարկում»*[6]:

Տեղեկություն հեղինակի մասին

Սիրվարդ Ստեփանյան – ԱրՊՀ, բանասիրական ֆակուլտետ, գերմաներեն եւ ֆրանսերեն լեզուների ամբիոն, բ.գ.թ.,

E- Mail: sirasuhi@rambler.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.թ.Է.Ա.Հայրապետյանը:

[1] Նույն տեղում:

[2] Goethe an Schiller, 9.12.1797: Տես՝ Goethe J.W. Die Briefe der Jahre 1764-1808. Briefe, Kommentare und Register. HamburgerAusg.In 4Bd. Hamburg-Wegner.

[3] Գյոթե Յ., Ֆաուստ I Հայպետհրատ, Եր.1963, էջ XXXI:

[4] Էդոյան Հ.,Ճարժում դեպի հավասարակշռություն, Համատեքս, 2005, էջ 19:

[5] Առաքելյան Ա., Գյոթեի կերպարի որոնումներ, Գյոթե եւ Շիլլեր Հայացք 21-րդ դարից, ԵՊՀ հրատարակչություն, Եր.,2011, էջ 83: Տես՝ Döblin A.,Aufsätze zur Literatur, Walter-Verlag, 1963, էջ 316-317:

[6] Rizi A.,Der Goethe-Code und Schillers Tod. KOPP ONLINE. 19. 07. 2011.

УДК 82.09 (479.25) Языкознание

ОБ ОСОБЕННОСТЯХ ПЕРЕВОДА В.БРЮСОВА НА РУССКИЙ ЯЗЫК ПОЭМЫ «АБУ-ЛАЛА МААРИ »

Любовь ГАБРИЕЛЯН

Ключевые слова и словосочетания: *культура, роль, взаимодействия, художество, перевод, современность, читатель, поэзия, автор, язык, ценности, художественное произведение,анализ,ценность.*

Keywords: *culture, work of art, interaction,reader, poetry, translation, author, analysis, language, role, art, interaction, values, a work .*

Բանալի բառեր *դեր, մշակույթ, թարգմանություն, արդիականություն, փոխգործունեություն, մշակույթ, ընթերցող, պոեզիա, գրող, լեզու, արժեքներ, գեղարվեստական ստեղծագործություն, :*

L.Gabrielyan

THE PARTICULAR FEATURES OF THE RUSSIAN TRANSLATION OF AVETIK ISSAHAKYAN'S POEM „ ABOOL-ALA MAHARI„ BY V.BRUSSOFF

Avetik Isahakyan's poem ,,Abool-Ala Mahari,, (1910) is the masterpiece of the Armenian literature translated into many languages of the world. The poem was created in the crucial period of the poet's life, just before his long-term departure from the Motherland where he might be imprisoned for his active participation in the national-liberation movement of the Armenians. The great creator's dramatic feelings of the collision with the social system have been brilliantly expressed in the poem ,,Abool-Ala-Mahari,,.

Լ.Գաբրիելյան

Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ „ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ„ ՊՈԵՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ավետիք Իսահակյանի „Աբու-Լալա-Մահարի„ պոեմը հայ գրականության գլուխգործոցներից է: Այն թարգմանված է աշխարհի տարբեր լեզուներով: Պոեմը գրվել է գրողի կյանքի բախտորոշ ժամանակաշրջանում, երբ նա ստիպված էր հեռանալ իր հայրենիքից, որտեղ նրան դատապարտել էին ազատազրկման՝ ազգային ազատագրական պայքարին մասնակցելու համար: Պոեմում վառ արտացոլված է գրողի անհատական հոգևոր զգացմունքների և սոցիալական հասարակարգի միջև ողբերգական առճակատումը:

В статье рассмотрена тема - чрезвычайно важной роли художественного перевода в современном мире. Перевод как фактор взаимодействия культур»

Художественный перевод, как известно, одна из основных форм общения национальных культур, основных и давних, столь же давних, как и сами культуры. Потребность переводить возникает вместе с возникновением культуры.

Конечно, путь писателя к международной известности лежит через переводы. Но не надо преувеличивать. А главное – надо помнить, что переводы существуют не столько для международной известности, сколько для того, чтобы литературные ценности одного языка переносить, так сказать, импортировать в другой язык.

Писатели-переводчики сближают литературы и вводят достижения одной национальной культуры в сокровищницу другой, они участвуют в нравственном становлении человека. Перевод – почти всегда обработка, степень вмешательства переводчика в текст оригинала. Перевод во многом зависит от того, насколько оригинал отвечает задачам, стоящим перед переводчиком как писателем.

Удавшуюся хорошую книгу переводят на другие языки, имя автора может приобрести известность во всем мире, тогда как переводчик всегда остается внутри своей литературы и за ее пределами он, как правило, неизвестен. В одной из эпиграмм Н. Минского, которую можно понимать и буквально, сказано:

Переводимы все- прозаик и поэт.
Лишь переводчикам - им перевода нет
Левон Мкртчян(4,45)

В современном мире перевод может быть и мощным фактором, способствующим прогрессу, и орудием борьбы с прогрессом. В стране оригинала с удовольствием узнают, что их писателя

понимают и принимают в других странах.

И как бы мы ни были точны и тонки в оценке своих собственных писателей иногда благодаря иноязычной критике обязанной своим появлением перевода, открываем какие-то новые грани в книгах наших писателей.

В отдельных случаях переводы наших книг помогают нам глубже осознать себя. В нашей статье рассматриваются переводы классика армянской литературы Аветика Исаакяна.

Благодаря переводам (иной раз не только на свой родной язык, но и на языки других народов) писатели получили возможность опереться в своей работе на богатейшие традиции мировой культуры.

Аветик Исаакян принадлежит к числу тех, у кого есть лишь одна единственная дата – дата рождения. «Гений народа рождается под давлением гущи народа как алмаз – под давлением каменного угля». Подобно алмазу, преломляющему в себе лучи солнца, поэт вобрал в себе и отразил жизнь и быт родившего и вскормившего его народа, его борьбу и дерзания, его пыл и пафос.

Он исколесил много стран, знал знаменитых людей Запада и Востока, испытал ужасы резни армян и тяжелые последствия двух мировых войн, обагривших кровью земной шар, поднимал против поджигателей этих войн свой могучий голос, приветствовал две русские революции. Он воспел и неизбывное горе пандухта – изгнанника, ушедшего из-за гнета и безземелья в чужие края, оторванного от родного очага и от любимой – от всего, что дорого сердцу, что согревает душу.

О некоторых переводческих принципах В.Брюсова.

Поистине небывалый размах и большое значение, приобрело благородное переводческое дело, в нашей художественной литературе. Важны и трудные творческие задачи в решении этих задач огромную помощь может оказать лишь изучение литературного наследия и опыта классиков, переводческого искусства, одним из которых является крупнейший русский поэт Валерий Яковлевич Брюсов.

Лучшие поэтические переводы Брюсова, до сих пор сохранившие значение непревзойденного образца, его переводческие принципы и методы, не утратившие и по ныне своей ценности, заслуживают самого пристального внимания и тщательного изучения

Брюсов был щедро наделен всеми данными подлинного поэта – переводчика, настоящий переводчик поэзии, особенно классической, должен обладать, пожалуй, тремя талантами - талантом поэта, талантом ученного и талантом артиста. Он должен быть, прежде всего, поэтом мастером художественного слова, чтобы чувствовать и постигать всю прелесть переводимого произведения и свободно пользоваться всеми богатствами родного языка; он должен быть ученым, чтобы глубоко исследовать своеобразие исторической эпохи, отразившейся в избранном произведении, и особенности творческого облика автора, наконец, дар артиста, дар перевоплощения ему нужен для того, чтобы уметь проникать в дух чужого произведения, в чужой стиль и чужую манеру письма, прочувствовать ее и творчески передать в переводе. Эти дарования счастливо соединялись в Брюсове. Работа Брюсова - переводчика отличается необычайным многообразием и плодовитостью. Он переводил поэтов разных стран и народов, самых различных эпох и творческих направлений, знание исходного языка - первое требование, которое Брюсов предъявил себе как переводчику. Но этим он, конечно, не ограничивался. Не менее необходимым он считал также изучение творчества переводимого автора, истории его народа и литературы. Эти принципы Брюсова особенно наглядно проявились в его работе над переводами произведений армянских поэтов. Когда в июне 1915 года Валерий Брюсов принял предложение Московского армянского комитета взять на себя редактирование и перевод произведений армянской поэзии, о которой он имел тогда весьма смутное представление, Брюсов выдвинул одно обязательное условие: «чтобы мне дана была возможность ознакомиться с армянским языком, и изучить, хотя бы в общих чертах, как историю армянского народа, так и историю его литературы». После этого один из представителей комитета (это был Павел Макинцян), любезно приняв на себя обязанности быть его учителем – профессором, начал давать ему уроки и читать курс лекции по истории армянской литературы. И уже через два месяца, в середине августа, в письме к Корнею Чуковскому Брюсов сообщил: Сейчас я редактирую сборник «Поэзия Армении». Сам я для этого изучил армянский язык (все лето учился с профессором). А еще через месяц 10 сентября 1915ода в письме к Федору Сологубу Брюсов пишет, что он «несколько месяцев усердно изучал армянский язык». О том, насколько действительно усердно занимался Брюсов армянским языком, интересные сведения узнавали из воспоминаний жены поэта - Иоанны Матвеевны Брюсовой. Ему важно было ознакомиться с языком, иметь о нем

представление, научиться читать и писать по армянски, чтобы уметь воспроизводить и слышать армянскую речь, ее звучание, схватывать ее смысл. И этого Брюсов достиг. А недостаток в знании языка, мешавший углубленному проникновению в содержании и дух переводимых произведений Брюсов в значительной мере компенсировал обстоятельным теоретическим изучением творчества автора, истории литературы и народа. За пол - года он прочел по армянской истории и литературе целую библиотеку книг на всех доступных ему языках. И это было не простое чтение, а самая настоящая серьезная исследовательская работа, в результате которой, как известно, Брюсовым были созданы обширнейший, интересный, с блеском написанный и проникнутый большим чувством любви «Поэзия Армении и ее единство на протяжении веков» и оригинальный научный труд «Летопись исторических судеб армянского народа».

Главный принцип Брюсова - переводчика - это максимальная близость к подлиннику и в содержании и в форме. В предисловии к антологии «Поэзия Армении» Брюсов определяя задачу переводчика, писал «Нашей конечной, идеальной целью было получить на русском языке **точное воспроизведение оригинала** в такой мере, чтобы читатель мог доверять переводам и был уверен, что по ним он знакомится с созданием **армянских** поэтов, а не **русских** переводчиков».

«Стихотворный перевод,- пишет Брюсов, - должен не только верно передавать содержание оригинала, но и воспроизводить все характерные отличия его формы». Иначе и не может быть, если переводчик стремится создать, реалистический перевод поэтического произведения. Исключительное место в творчестве Исаакяна занимает «Абу-Лала Маари»», характеризующая очень важный этап в творчестве поэта. Она стоила ему мучительной внутренней борьбы, и в буквальном смысле писалось кровью сердца.

В ряде стихотворений 1903-1908 годов мы находим уже первые отголоски тех дум и настроений поэта, которые позднее в полной мере выразятся в поэме «Абу-Лала Маари.

Герой поэмы «Абу-Лала Маари», живя в этом страшном мире, выпив до дна чашу горечи, его поэтическая душа более не в силах вынести тяжкий гнет и глубоко встревожена.

Եւ քարաւանը Աբու-Լալայի՝
աղբիւրի նման մեղմ կարկաչելով՝
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով,
Ինչուն զանգերի անոշ ղողանջով:
Հաւասար քայլով չափում էր ճամբան
այն քարաւանը ոլոր ու մոլոր,
Եւ ղողանջները ծորում քաղցրալուր՝
ողողում էին դաշտերը անդորր:
Մեղկ փափկութեան մէջ Բաղդադն էր նիրհում
ջեննաթի շքեղ, վառ երազներով,
Գիւլստաններում բլբուլն էր երգում
գազելներն անոյշ՝ սիրոյ արցունքով:

Образ героя соткан из раздумий и переживаний самого поэта. Следует особо подчеркнуть это обстоятельство, потому что одно время существовало мнение, будто сюжет поэмы «Абу-Лала Маари» - исторический, а Исаакян только переработал его.

Действительно, мастерски стилизованная поэма способная ввести в заблуждение не только рядового читателя, но и литературоведа и внушить мысль, будто она создана на исторической основе, тем более, что человек по имени Абу-Лала Маари - историческое лицо.

Историческим в поэме является лишь имя арабского поэта, жившего в X веке в городе Сирии, в эпоху, когда арабский халифат стоял на грани общественно - политического и экономического упадка. И может быть, следует отметить известную закономерность интереса Исаакян создавал свою поэму в период общественной реакции и декаданса.

Пожалуй, можно указать еще не одну деталь, связывающую обоих Маари, арабского поэта и лирического героя Аветика Исаакяна - это слова, начертанные на могиле арабского поэта.

Согрешил мой отец в былом предо мной,
но я, ни пред кем греха не свершил!(2,206)

Маари прекрасно знал, от какой действительности он бежит, но не знал, по каким путям должен

был идти его караван, чтобы достигнуть совершенной жизни, так - как неизвестно было это и самому автору в те годы беспросветной реакции «неизведанный путь, зыбкость чар» манили и ласкали Абу-Лала Маари: «Неизведанные берега, девственные дали» - вот предмет постоянных дум Маари.

Маари бежит с ненавистью не только от законов и власти, но и от отчизны, друга, любви - от всего, что было свято ему и дорого. Бежит, ибо эти святыни осквернены. Однако, не легко отвергать то, что некогда было свято, хотя Маари утверждает, что, уходя, он не станет оглядываться и не будет сожалеть о том, что осталось позади, в действительности это не так. Переживаемая им острая душевная боль точно слышится в самой поступи верблюдов, в ритме движения его каравана:

Казалось, рыдали в ночи бубенцы, и звонкие слезы по капле лились,
Как будто рыдали о том, что в былом любил Мари, и твердили
"Вернись!"(2,209)

И когда Маари в последний раз смотрел на "уснувший Багдад " и навсегда удалялся из него *одна за другой, палящей росо, по ресницам поэта стекала слеза*.

Человек, с ненавистью отворачивающийся от родного города, едва ли смог испытывать подобные эмоции. Глубока душевная трагедия Мари: он бранит с горечью и ненавидит с глубоким сожалением. Ему трудно отречься от родины, но он делает это, ибо

Она богачам тучным пастбищем служит
для всяких потреб.
А пахарь бесправный кровавой земли
голый камень грызет, взирая на хлеб!

Было бы ошибочным полагать, что здесь поэт выступает против идеи отчизны вообще, как склонны были думать иные критики.

Выше, говоря о патриотических стихах Исаакяна, мы отмечали, что лишь в годы реакции, то есть как раз в годы, совпадающие со временем написания «Абу-Лала Маари», отчизна в глазах поэта превратилась в «тучное пастбище» для богачей, где «пахарь бесправный кровавой земли голый камень грызет, взирая на хлеб» Вот к такой родине он питает ненависть, а не к родине вообще.

Еще в ранний период литературной деятельности (1890- 1900-е годы), поэт проявил резко отрицательное отношение только к определенному слою человечества, к сильным мира сего – богачам, которые отняли у него «яр», которые беспощадно эксплуатировали «несчастного бедняка», «выжимающего насущный хлеб из земли». Позже, в новых социально - исторических условиях, в поэме «Абу-Лала Маари», написанной в период спада общественной борьбы и реакции, поэт жестоко клеймил всех, кто впрягся в победную колесницу капитализма, ибо человек, потерял свой человеческий облик и изменил самому себе. Мир, построенный руками человека, поэт не только приемлет, не только признает в нем прогрессивное начало, но и называет его «волшебной сказкой», «великим чудом». Однако этот мир был превращен в юдоль крови, в горнило низменных страстей.

Против этого мира восстает Исаакян со всей силой своей гуманной души и облекает свой протест в форму проклятия отцам, рождающим детей, обреченных жить в капиталистическом аду.

Душевный мир Исаакяна в дни написания поэмы был объят смятением, это выражено в следующих строках поэмы:

В душе тосковал- тосковал Абул Маари,
безнадежной тоской было сердце полно
Так в гнев, с тоской, говорил сам с собой
Абул Маари великий поэт....
И в душе размышляя Абул Маари,
нахмурив чело и гнев затоя.
Он плакал без слез, и в сердце впилась
немая тоска без конца, без границ. (2,212)

Тревожные мысли Аветика Исаакяна в этой поэме рождены временным спадом, вызвавшим в поэте бурю противоречивых настроений вместе с тем эти противоречия отчасти были результатом того, что Исаакян порою попадал под влияние исключающих друг - друга философских доктрин. Вспомним хотя бы его исповедь.

Зная все, это нетрудно понять, как могло случиться, что Исаакян, столь восторженно воспевший когда - то женщину, теперь устами Маари жестоко поносит ее:

О бесстыдное тело женщин. Змея! Преступленья и зла
сатанинский сосуд!
Упоенья горьки, палящие плоть, и на солнце души они
тучу несут!
Ненавижу любовь, что жестока, как смерть, что рождает
повсюду зло без узды,
Неисчерпаемый ключ, что струит на весь мир, постыдную
тину вместо воды!

Однако, восторгаясь красотами природы, поэт не находит ничего более прекрасного, с чем можно сравнить луну, нежели тело женщины:

И луна, словно грудь, юной девы - из тех, что
мечтают в Дженнате, прозрачна, светла,
То стыдливо скрывалась во мглу облаков, то
зыбко и нежно по небу плыла.(2, 213)

Но это не все. Маари, называющий любовь сладким ядом, вместе с тем завидует «птицам с крыльями радуг » которые ласкают друг - друга, любовно воркуя.

Отрицание женщины в поэме «Абу-Лала Маари» обусловлено всей концепцией отрицания современного Маари общества, в котором женщина превращена в меновую ценность, причем эта функция осознана и ею самой. А так ли было у Исаакяна раньше? Женщина в ранних произведениях Исаакяна - символ святости семьи и домашнего очага («Был бы на Аразе», «взмок, хоть выжми, ты на вспашке») Однако в результате усложнения капиталистических отношений, нравственный облик женщины совершенно изменился. И все же идеальный образ «божественной женщины» поэт не перестает лелеять даже в этой поэме. Поэма Аветика Исаакяна «Абу-Лала Маари» (1910) является шедевром армянской литературы, переведенным на многие языки мира. Поэма была создана в судьбоносный период жизни поэта – перед долгосрочным отъездом с родины, где его ожидал судебный процесс за активное участие в национально-освободительном движении армянского народа. Драматические чувства столкновения индивидуума, великого созидателя с общественным строем наилучшим образом отразились в поэме «Абу-Лала Маари»

Список использованной литературы.

1.Аветик Исаакян (на армянском языке). Собрание сочинений в шести томах. Издательство «Айастан» Ереван,1973
Том 1Стихотворения (на армянском языке).
2.М.Д.Амирханян. Классики русской литературы и Армении
Ереван 1971 «Об Аветике Исаакяне» Вступительные статьи.
3.Брюсовское чтение 1962 года. Ереван -1963
Г.А.Татосян – В.Я.Брюсов – переводчик армянской поэзии.
4.Л.Мкртчян. Если бы в Вавилоне были переводчики.
Статьи - Мы жаждем взаимопонимания.
Ереван «Советакан Грох»1987

Сведения об авторе:
Габриелян Любовь - Магистр филологии русской литературы, ассистент кафедры гуманитарных наук, физической культуры и НВП Шушинского филиала Национального Аграрного Университета Армении
E-mail: Irina23.73@yandex.ru
Статья рекомендована к печати членом редакционной коллегии, к.п.н., Э.А.Айрапетян.

УДК 801.25 Русский язык

РЕЧЕВОЙ ЭТИКЕТ КАК НЕОБХОДИМОЕ ЗВЕНО ПОВЫШЕНИЯ КУЛЬТУРЫ РЕЧЕВОГО ПОВЕДЕНИЯ НА ЗАНЯТИЯХ ПО РУССКОМУ ЯЗЫКУ

Лусине ПЕТРОСЯН

Բանալի բառեր և բառակապակցություններ՝ *լեզվական գեղագիտություն, խոսքի մշակույթ, աստիճանական ուսուցում, բառապաշար, ձևաբանություն, շարահյուսություն, վարժություններ, թեստեր, բանավոր վարքագիծ, լեզվի իմացություն:*

Keywords and word combinations*: speech etiquette, speech culture, learning stages, Vocabulary, Morphology, Syntax, exercises, tests, verbal behavior, language proficiency.*

Ключевые слова и словосочетания*: речевой этикет, культура речи, поэтапное обучение, лексика, морфология, синтаксис, упражнения, тесты, речевое поведение, владение языком.*

ԽՈՍՔԻ ԷԹԻԿԵՏԸ ՈՐՊԵՍ ՌՈՒՍԱՅ ԼԵԶՎԻ ԴԱՍԱԺԱՄԻՆ ԲԱՆԱՎՈՐ ՊԱՀՎԱԾՔԻ ՄՇԱԿՈՒԹԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Լուսինե Պետրոսյան

Ամփոփում

Հոդվածում քննարկվում է արդիական հիմնախնդիր՝ խոսքի վարվելակարգի ուսուցման հետ կապված: Բանալի բառեր և բառակապակցություններ՝ խոսքի վարվելակարգ, խոսքի մշակույթի զարգացում, վարվելակարգի բանաձևեր, ուսուցման փուլեր, վարժություններ: Առաջադրված համակարգային աշխատանքը՝ ուղղված սովորողների խոսքի վարվելակարգի մշակույթի զարգացմանը, բաղկացած է չորս փուլից: Յուրաքանչյուր փուլ ներառում է որոշակի քերականական տարրեր և խոսքի վարվելակարգի կանոններ: Վարվելակարգի կանոնների, արտահայտությունների ճիշտ ընտրությունը որոշ դեպքերում հանդիսանում է հաղորդակցական բանիմացության կարևորագույն բաղադրամաս:

THE SPEECH ETIQUETTE AS THE NECESSARY LINK TO INCREASE THE CULTURE OF VERBAL BEHAVIOR AT THE RUSSIAN LANGUAGE LESSONS

Lusine Petrosyan

Summary

The article deals with the actual problem of the speech etiquette. The systematic work concerning the development of learners' speech culture, behaviour consists of four stages. Each stage involves certain grammar minimums and formulas, phrases as the case may require is main constituent part of communicative competence.

В статье рассматривается актуальная проблема, связанная с повышением речевого поведения учащихся на занятиях по русскому языку, которая осуществляется путем поэтапного внедрения в обучение (4 стадии) разных средств: грамматического минимума и этикетных выражений. Грамотный выбор этикетных формул позволяет осуществлять речевую деятельность в определенных интенциях.

Выпускнику вуза в современном обществе важно владеть речевыми навыками, нормами этикета, что позволяет осуществлять определенное речевое поведение или разворачивать речевую деятельность в определенных интенциях. Обогащение и пополнение активного словарного запаса учащихся этикетными фразами является первостепенной задачей в обучении русскому языку. В последние годы, несмотря на многочисленные методические и лингвистические разработки многих ученых, в методике преподавания русского языка в вузе не рассматривалась проблема повышения культуры речевого поведения студентов. На сегодняшний день все более остро встает вопрос об эстетическом воспитании молодежи. (1, 3, 4, 6)

Проблема, на наш взгляд, исходит из сложившейся ситуации в обществе, в связи с получением статуса русского языка как иностранного, уменьшения количества часов по дисциплине "Русский язык" как в школах, так и в вузах. Перед нами ясно проявляется картина рассматриваемой нами проблемы улучшения речевых норм этикета на занятиях в вузе. Становится

очевидным тот факт, что речевой этикет как необходимое звено повышения культуры речевого поведения учащихся относится к актуальным проблемам не только методики преподавания, но и современной русистики.

Как известно, общение осуществляется разными средствами. “Человек при передаче информации использует всегда два канала: вербальный и невербальный. Вербальное общение, или словесное, предполагает передачу информации собеседнику посредством речи, звуковых сигналов. Невербальный канал – совокупность вспомогательных средств общения, таких как жесты, мимика, позы и т. д. “ (5: 9) Исходя из данного, как нам кажется, важно акцентировать внимание студентов в процессе обучения русскому языку на уместность в речи выбора той или иной фразы и соблюдения правил хорошего тона, то есть выбор вербальных и невербальных средств языка, которые делают речь говорящего соответствующей целям и ситуации общения.

Итак, отработку нормы речевого этикета необходимо связать с изучением программного материала по русскому языку, учитывая то, что учащиеся вузов практический курс русского языка изучают один год (два семестра). В процессе повышения культуры речевого поведения на занятиях по русскому языку следует обратить внимание студентов на определенные темы в разделе лингвистики как “Лексика”, “Морфология” и “Синтаксис”, с которыми тесно соприкасаются правила речевого этикета.

Эффективность будет зависеть в значительной мере от правильности, целенаправленного введения соответствующего материала, а также организации поиска оптимальных форм самостоятельных действий учащихся. Рассмотрим некоторые из них. При изучении раздела лексических минимумов важным является тема “Синонимы”. Студентам предлагаются универсальные речевые формулы с соответствующими синонимическими рядами, используемые в определенных интенциях. Например: приветствие *(Доброе утро! Здравствуйте! Добрый день! Добрый вечер! Как дела! Как поживаете! Привет! Рад Вас видеть!), прощание (До свидания! Пока! Всего доброго! Всего хорошего! Доброй ночи! Счастливого пути! Попутного Вам ветра! Спокойной ночи!), формы благодарности (Спасибо! Большое спасибо! Благодарю! Сердечно благодарен! Очень признателен Вам!), просьба (Пожалуйста! Прошу Вас! Будьте добры!), извинение (Извините, Приношу свои извинения, Извините, пожалуйста), ответы на извинения (Ничего! За что извиняться? Ладно! Хорошо! Не стоит!), разговор по телефону (Алло! Я Вас слушаю! Кто это? Позовите, пожалуйста!)* и т. д.

Очень важно обращать внимание учащихся на выбор той или иной универсальной речевой формулы, так как они должны соответствовать обстановке и форме общения. В одной ситуации уместным, например, будет *Пока!*, а в другой – *До свидания!*, или употребление такой фразы как *Не стоит!* будет правильным и в выражении благодарности и в ответе на извинение собеседника. Речевая формула *Всего хорошего!* употребляется при прощании собеседников, в праздничной ситуации, добрых пожеланий любящих друг друга людей. Преследуемая нами цель обучения связана с обогащением активного словарного состава учащихся вузов, и в связи с этим важно знать студентам, что многие слова из приведенного ряда этикетных выражений могут быть многозначными и имеют богатые синонимические ряды, например, слово *хорошо* может выступать в значении “неплохо”, “недурно”, “одобрительно” и “согласен” и имеет следующий синонимический ряд: здорово, изрядно, порядочно, недурственно, отлично, прекрасно, превосходно, отменно, первоклассно, классно, справно и т. д. (2:582)

Правильный выбор этикетных формул, фраз к случаю – важная составная часть коммуникативной компетенции, знание их – показатель высшей степени владения языком.

Важнейшее умение в процессе изучения морфологии – умение осознанно, дифференцированно подходить к отбору языковых средств. Например, объем употребления личных местоимений широк. К правилам речевого общения, речевого этикета относится уместное, адекватное комплексу ситуативных и социальных условий использование *ты* или *Вы* – форм как местоименных указателей адресата. Выбор того или иного местоимения зависит от

характера отношений собеседников друг к другу, возраста и социального их положения, настроенности их на определенную цель в разговоре, языкового вкуса и привычек.

Вспомним историю возникновения местоимения *Вы* в русском литературном языке. Она вызывает интерес у учащихся в ходе занятий по русскому языку, поэтому целесообразно данный исторический комментарий внести наряду с грамматическим. Обращение на *Вы* получило распространение в Петровскую эпоху из западноевропейских языков. Грамматическое чужеземное обращение *Вы* прижилось не сразу. В светской речевой учтивости оно появилось в 18 веке, в частности, из французского и немецкого этикета. Именно в 19 веке возмущенные реплики "Не извольте тыкать", "Что ты мне тыкаешь?" стали привычными для воспитанного человека.

Главная функция обращения является вокативной, то есть привлечение внимания собеседника. Кроме *ты* и *Вы* в разговоре используются также имена, отчества, фамилии людей. Обращение может быть и эмоционально и экспрессивно окрашенным, а выбор таких обращений, как известно, зависит от отношений собеседников и эмоционального их состояния, официальной или неофициальной обстановки.

В зависимости от форм обращения на *ты* или *Вы* находится выбор грамматических форм глаголов и речевые формулы приветствия, прощания, выражения благодарности и т. д. Например, показателем вежливости является императивные (повелительное наклонение) формы глагола*: Будьте добры, Если Вам не трудно, Сделайте одолжение, Не откажите в любезности* и т. д. Вообще любая задача по взаимодействию содержит функцию побуждения, что во многом зависит от ситуации и цели общения. Глагол в форме императива обозначает попытку говорящего самим своим высказыванием каузировать (заставлять) кого-либо совершать какие-либо действия.

Изучение синтаксиса предполагает рассмотрение предложений повествовательных, вопросительных, восклицательных. Необходимым условием в процессе изучения русского языка раздела "Синтаксис" является переход различных типов предложений из одной коммуникативной функции в другую. Использование данных предложений в процессе коммуникации преследует цель не столько передать какое-то сообщение, сколько установить контакт, поддержать его, а также управлять эмоциональной стороной.

Закрепление и усовершенствование полученных знаний в области речевого этикета следует при помощи тестов и творческих упражнений. Приведем некоторые из них.

Тест 1. *Используются ли приведенные ниже формулы при встрече с преподавателем? Укажите неверный ответ.*

1. Здравствуйте!
2. Доброе утро!
3. Привет!

Тест 2. *Какие этикетные формулы соблюдаются при разговоре по телефону? Укажите какой из приведенных ниже вариантов не может употребляться как первый сигнал.*

1. Кто это?
2. Да!
3. Я Вас слушаю!

Тест 3. *Вы опоздали на урок. Какие фразы будут уместны? Укажите неверный ответ.*

1. Извините, пожалуйста, можно войти.
2. Я опоздал, пройду сяду.
3. Можно, я немного опоздал.

Упражнение 1. *Составьте маленький рассказ, употребив следующие фразы: Всего хорошего! Попутного Вам ветра! Большое спасибо! Было приятно с Вами вести разговор! До свидания!*

Упражнение 2. Ваш друг заболел. Как Вы выразите сочувствие?

Упражнение 3. Вы совершили поздний звонок. Какие формулы извинения Вы употребите?

Упражнение 4. Употребите в повелительном наклонение следующие глаголы: *делать, отказать, взять, класть.* Составьте предложения.

В рамках данной статьи мы рассмотрели несколько вариантов синонимических этикетных выражений, грамматических минимумов и способов внедрения их в речевую деятельность учащихся, а также тесты и упражнения, способствующие повышению культуры речевого поведения учащихся вуза. В ходе пристального внимания к проблеме речевого этикета на протяжении одного года наблюдений нами было выявлено следующее: речь студентов обогатилась целым рядом новых этикетных формул, лексический запас стал шире, поведение естественным в разговоре с преподавателями и сокурсниками.

Литература

1. Акишина А. А. Формановская Н. И. Русский речевой этикет. М.: “Русский язык”, 1983 г.
2. Александрова З. Е. Словарь синонимов русского языка. Издательство “Советская Энциклопедия”. Москва – 1971 г.
3. Введенская Л. А. Культура речи. Ростов на Дону: Феникс, 2001 г.
4. Клюев Е. В. Речевая коммуникация. М.: Рипол классик, 2002 г.
5. Пономарев Е. Г. Этика и психология делового общения: сборник упражнений. Екатеринбург: УрГУПС, 2008 г.
6. Формановская Н. И. Употребление русского речевого этикета. Изд.: “Русский язык”, 1984 г.

Сведения об авторе:

Петросян Лусине - доцент кафедры русского языка и литературы АрГУ, кандидат педагогических наук

Статья рекомендована к печати членом редакционной коллегии, к.п.н., Э.А.Айрапетян.

УДК 32.00 Политология

РЕЛИГИОЗНО-ПОЛИТИЧЕСКИЙ АСПЕКТ В ПОЭМЕ О.ШИРАЗА “ТОНДРАКЕЦИНЕРЫ” (“ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ”)

Давид КАРАБЕКЯН

Ключевые слова: *“секта”, “тондракийство”, “ересь”, “тондракийская секта”, “тондракийская ересь”, “предводители тондракидов”, “движение тондракидов”, “царство Ани”, “династия Багратуни”, “династия Арцруни”, “падение Ани”, “влияние Византии”, “внешние враги”, “внутренние враги”.*

Բանալի բառեր: *“աղանդ”, “թոնդրակյանություն”, “հերձված”, “թոնդրակյան հերձված”, “թոնդրակեցիների առաջնորդներ”. “թոնդրակյան շարժում”, “Անիի թագավորություն”, “Բագրատունյաց տոհմ”, “Արծրունյաց տոհմ”, “Անիի անկում”, “Բյուզանդիայի ազդեցությունը”, “ներքին թշնամիները”, “արտաքին թշնամիները”.*

Key-words: *"Sect", "tondrakidstvo", "heresy", "tondrakidskaya sect", "tondrakiyskaya heresy", "leaders of tondrakids", " tondrakids movement ", "the kingdom of Ani", "dinanstiya Bagratuni", "Dynasty Artsruni", "fall Ani "," the influence of Byzantium, "" external enemies "," internal enemies. "*

Դ.Կարաբեկյան

“Հ.ՇԻՐԱԶԻ “ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ” ՊՈԵՄԻ ԿՐՈՆԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ

Ուսումնասիրելով Հ.Շիրազի («Թոնդրակեցիները») պոեմը կրոնա-քաղաքական սպեկտը հանգել ենք հետևյալ եզրակացությունների. պոէմը է ներփաթանցված է համայն հայության իր հավերժական արժեքների շուրջ Պատմություն, Հայրենիքի, Հավատի, Եկեղեցու միավորման, և դրա միջոցով իր օտար և թշնամական ուժերի կողմից ներմուծված և ուռճացվող տառաձայնությունների հաղթահարման, իր բարձրագույն կոչումը գտնելու և իրականացնելու, ազատություն նվաճելու, պատմական արդարության վերականգնելու բազմաչարչար և բաժանված Հայրենիքի միավորման և բարգավաճման գաղափարով:

David P.Karabekyan

Religious-political aspect of the poem of H. Shiraz "Tondraketsinery" ("Թոնդրակեցիները")

Having studied the religious-political aspect of the poem H. Shiraz "Tondraketsinery", we have come to the following conclusions: the poem is imbued with the eternal values of all Armenians - the ideas of History, Homeland, Faith, Church that serve to overcoming disagreements and alienation caused and intensified by hostile forces, also the ideas of the search and living their higher purpose, achievement of freedom, restoration of historical justice, unification and prosperity of the divided, devastated and long-suffering homeland.

Изучив религиозно-политический аспект поэмы О.Шираза “Тондракецинеры” (“Թոնդրակեցիները”) пришли к следующим выводам: поэма пронизана идеей единения армянства мира вокруг вечных ценностей Истории, Родины, Веры, Церкви и преодоления через него разногласий и отчуждения, вызванных и раздуваемых враждебными силами, а также поиска и реализации своего высшего предназначения, достижения свободы, восстановления исторической справедливости, объединения и процветания разделенной, истерзанной и многострадальной Родины.

Статья посвящена интерпретации религиозно-политического аспекта движения в поэме выдающегося представителя современной армянской поэзии О.Шираза “Тондракецинеры” (“Թոնդրակեցիները”).

Центральной темой является суд над Смбатом Зареаванци и его ближайшими сподвижниками: епископом губернии Арк(Հարք) Акопосом, князем Врвером, Тораком, Аркаиком, Ананием, монахом Кунциком, Грануйш, сестрами Ахни и Камарой[1].

О самом движении известно достоверно следующее: оно получило название от села Тондрак (Թոնդրակ), уезда Апауник (Ապահունիք գավառի), губернии Туруберан Великой Армении (Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի). Отсюда начал свою проповедческую деятельность основоположник

[1] Հ. Շիրազ “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – с.17

ереси, уроженец села Зареаван (Զարեհավան գյուղ) уезда Цахкотн (Ծաղկոտն գավառ) Смбат Зареаванци[1]

Он долгое время путешествовал по Армении и соседней с ней странам, был хорошо знаком с учениями и идеологическими течениями того времени, и жил в центре движения павликиан в г.Теврике (Տարիկ), в котором детально изучил павликианскую идеологию [2].

После казни, после казни Смбата Зареаванци и его соратников, движение возглавляли Тодрос, Ананий, Арка, Йесус, Саркис, Кирилл и Лазарь[3] . Наибольшего подъема оно достигло в середине 10-го века[4], распространившись практически по всей Армении: общины тондракидов были в Апаунике, Арке, Моке, Арцахе, Айрарате, Вагаршапате, Шираке и т.д.[5]

Как и в случае с другими ересями: мессалиством, ересью борборитов(или точнее барберитов) и павликиан, распространенных в Армении до тондракидства наиболее полные сведения о сектах и учениях можно получить от их противников - представителей церкви, которые стремились не только искоренить секты, но и уничтожить практически все свидетельства об их вероучении, обрядах, богослужении, социальной и нравственной доктрине, представив их в искаженном, наиболее выгодном для себя свете, при этом максимально опорочив предводителей учения и образ жизни сектантов.

О секте или движении тондракидов, согласно автору вступительной статьи к поэме С.Мурадяну, писали многие средневековые богословы-историки А.Ластиверци, О.Драсханакертци (католикос), А.Нарекаци, Г.Нарекаци, Г.Магистрос, Нерсес Шнорали и советские историки А.Бабаханян(Лео), Э.Тер- Минасянц, А. Ованесян и другие[6].

Учение тондракидов наиболее емко и детально изложено в послании великого армянского богослова с.Григор Нарекаци (вторая половина 10 - начало 11 в.) монастырю Кчава (Կճավա վանք), состоящем из 14 пунктов: ***отрицание священства (քահանայական կարգը) и иерархии (եկեղեցական նվիրապետությունը), церкви как таковой – таинств рукоположения, причащения, крещения, Жертвы Иисусовой во спасение людей или литургии, а жертвоприношения (մատաղ), коленопреклонения как формы молитвы, Господские праздники(дни), и все внешние ритуалы и церемонии[7], почитании креста и икон считали проявлением идолопоклонства, признавали Христа обычным человеком,*** называя своего преводителя земным Христом, освободителем, спасителем, пророком ***посланным Богом, который положит конец всем несправеливостям злого мира, а также проповедывали поклонение перед человеком (մարդապաշտություն[8])***. По сути идеи, которые были распространены в европе в эпоху Реформации и Возрождения.

Отрицая таинство брака – церковное венчание и брак, они подобно секте мессалитов(примеч. Автора – К.Д.) превратили проповедь свободной любви один из критериев нравственности образа жизни, послужило основой для их обвинений в распущенности и аморальном образе жизни[9].

Историки-богословы выступали в роли апологетов церкви и престола, а советские историки, в частности, В.Амазаспян, А.Ованесян, С.Погосян и другие анализировали движение, его цели и движущие силы, исходя из социально-классового содержания эпохи, и как совершенно заметил, оценивали движение как антифеодальное, и чрезмерно выделяли его политический аспект и борьбу против арабских и византийских захватчиков, не обращая внимания на вопросы о сущности движения, его связи с другими движения и других важных вопросов[10].

Однако из работ Пахлавуни, Г.Нарекаци и А.Нарекаци, а также из поэмы О.Шираза, написанной на основе сркупулезного анализа религиеведческой, философской, исторической, художественной

---

[1] http://www.ankakh.com/article/316/thvondrakyetsinyeri-khvoshtangumnyere-shat-avyeli-dajan-ein--qan-yevrvopakan-inkvizitsiayine

[2] Там же

[3] http://ter-hambardzum.net/archives/3101#sthash.YiExPw1N.dpuf3101#sthash.YiExPw1N.dpuf Բարթիկյան Հ. Թոնդրակյան շարժում

[4] Там же

[5] Շիրազ Հ. “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – с.12

[6] Там же с.7

[7] http://ter-hambardzum.net/archives/3101#sthash.YiExPw1N.dpuf

[8] Там же

[9] Там же

[10] Там же

литературы, связанной с движением тондракидов, Анийской Армении и истории Армении в целом, показаны непримиримые идейные, социально-политические противоречия между тондракидами и церковью, факторы и соображения, которые обусловили позицию царя по отношению к сектантам, их учению и тезисам и требования церкви полностью искоренить данную и другие ереси, уничтожить тех еретиков, которые не захотят возвращаться в лоно церкви. (В ряде источников, в том числе в статье "Павликиане: еретики или истинные христиане?", размещенной на религиеведческом сайте www.religions.am тондракидов называют "позднейшими последователями "павликиан", "В конце концов, зятю Василия I Христофору в 872 году удалось разбить государство павликиан и захватить Тефрику. Хрисохер при этом был захвачен и обезглавлен. По всей Западной Армении было умерщвлено около 100 тысяч павликиан: многие оставшиеся бежали в Восточную Армению и объединились с армянским движением тондракитов", а также "На территории самой Армении павликиане продолжали существовать под именем тондракийцев. Ликвидация армянских павликианских твердынь на территории Византии привела к усилению их стремления заново возродить это движение на родине, внутри Армении[1].

Между 830-м и 840 годами некий Сумбат Зарехаванци начал миссионерскую работу в далеком районе Апахунике, близ города Манацкерт, к северу от озера Ван. Его штаб размещался в селении Тондрак, отсюда прозвище тондракийцы (тондракиты), данное позднее армянской ветви павликианского движения"[2]

А также весьма интересный факт: на территории восточной Армении следы павликиан прослеживаются до сер. XIX века. Британский исследователь Конибер (Frederick Cornwallis Conybeare) зафиксировал дискуссии между павликианами и армяно-григорианским епископом в 1837 году[3].

Вышеназванные источники также показывают весьма существенные отличия тондракидства от павликианства и других учений, которые принято считать его предпосылками - это подчеркнуто национальный, народный характер течения и наличие в нем элементов так называемой народной религии[4].

Даже Торак Тондракеци, который в ряде эпизодов поэмы отрицал, приводимые Церковью доказательства Божьего Промысла, святой Троицы, Боговоплощения, фактически признавал богоугодной жизнь в соответствии с совестью.

Именно через совесть человек может приблизиться человек может приблизиться к Боугу и получить свидетельства о Боге.

Очевидно, и то, что принимая одно из основоположений зороастризма – триаду – чистых мыслей(благих) – чистых(благих) слов – чистых дел, тондракиды не проповедовывали свойственные зороастрийцам, манихеям и гностическим течениям мессалитов, борборитов и павликиан дуализм(равноправие) доброго и злого начал, противопоставления Бога Творца духовного мира и демиурга – творца материального мира, атногонизма физического начала(тела) и души в человеке… (Что лишило противников тондракидов, смакующих тему проповедывания последними свободной любви, "подобно мессалитам", или "кровосмешения подобно зороастрийцам, религии персов", обвинить их также дьяволопоклоничестве.

При том, что Г.Магистрос, выделяя в тондракидстве три течения – называл, крайними злейшими тех, которые подобно эпикурейцам были безбожниками, отрицали существования Бога и воскресения из мертвых[5], а умеренных уподоблял манихеям, которые заметим, также признавали двух творцов и исповедовали дуализм добра и зла, указывая, что они внешне чли христианскую традицию, и даже называли себя христианами[6]. Если к первым можно отнести Торак Тондракеци, то ко вторым – Смбата Зареаванци). В речах последнего, кроме сказанного проглядывается и основное различие от павликиан и других упомянутых сект – их патриотизм и в определенной степени приверженность традициям. Даже в изобличительной критике католикоса и Г. Магистроса и лозунга – землю тому, кто ее пашет, женщину – кто ее обнимает(любит) после чего констатировался тот факт, что "князья остались князья, а крестьяне и демос, крестьянами и демосом, продолжающим нести бремя тяжелого

[1] www.religions.am Павликиане: еретики или истинные христиане?
[2] Там же
[3] Там же
[4] Շիրազ Հ. "Թոնդրակեցիները". Ե. "Հայրապետ", 2014 – cc.14-15
[5] http://ter-hambardzum.net/archives/3101#sthash.YiExPw1N.dpuf
[6] Там же

труда” видно, что тондракиды требовали секуляризации церковных земель. В отличие от павликиан они не требовали установить социальное равенство, при котором члены общины не только сообща совершали богослужение, вели хозяйство, но и распоряжались доходами общины и совместно управляли общиной.

Факт отчуждения общинных земель со стороны церковных феодалов делал лозунги тондракидов притягательными для светских феодалов и крестьян.

Смбат Зареаванци, критикуя духовенство, в том числе монашество, за алчность, жадность, празднолюбие, лицемерие, злоречие, зломыслие, считая неприемлемым отчуждение в пользу монастырей крестьянских земель, и беспристанное приращение земель, богатства и численности духовенства, называл всю Армению одним храмом[1]. (Только один Татевский монастырь, в котором было семьсот монахов, по словам Зареаванци, присовокупил к себе еще семь сел - что же дали слезные моления народу?! где же армянский Бог?! что выходит – монастыри, захватывают земли и насыщаются хлебом, а те у кого, их отбирают – армяне – слезами?!)[2].

Из истории видно, что наиболее мощный и достойный отпор иноземным завоевателям оказывали те области, в которых позиции тондракидов были особенно прочны, а народные традиции, в том числе сохранившиеся с языческих времен, в общественной жизни и сознании укоренились глубоко Сюнике, Арцахе, Гугарке и других.

Без сомнения попытка объяснить какой-либо социальный процесс подогнав его под определенные идеологические лекала, или рассмотреть его исключительно в ракурсе той или доктрины приводит к нежелательным последствиям: искажению и примитивизации представления о нем, и, как было сказано, тенденциозности, субъективизму при его анализу, и естественно, обнаруживает неразрешимые противоречия. Как армянские богословы- историки, так и историки советского периода, обходили вниманием духовно-нравственный и психологический аспект проблемы, порожденный не только последствиями иноземных нашествий, влиянием Византии и арабского халифата на внутреннюю социально-политическую жизнь Армении, но, главным образом, историческим развитием самого армянского общества и его институтов, в том числе и церкви.

Любой кризис, помимо аномии, потери доверия со стороны общества к системе, **утвержденных в нем норм и ценностей, а также обусловлен неспособностью общественных институтов, норм и ценностей адекватно оценивать, происходящие в обществе процессы и отвечать на запросы времени и обстоятельств, и наконец, переоценкой ценностей, предполагающей также критическую оценку реальности и самокритику.**

Шираз также сочетал в работе над поэмой самоанализ с исследованием беспокойной армянской души, богоискательством и правдоискательством, что для армян, особенно приверженцев традиционной морали, практически совпадает - հոգուս ծալքերում Աստված եմ որոնում – эти слова можно считать не только лейтмотивом творчества Шираза, но и всех выдающихся армянских писателей, поэтов, общественных и государственных деятелей Раффи, Г.Нжде, О.Туманяна, и других высшей целью жизни, деятельности и творчества, которого является история и будущее своего народа, ответ на вопросы, связанные с которой они искали в армянской истории, особенностях армянского склада души, характера, образа жизни.

Считается, что О. Шираз попытался придерживаться золотой середины[3]. С.Мурадян указывая на “дипломатические отклонения”, допущенные Ширазом, чтобы не казаться апологетом церкви и царя, попытался продемонстрировать об’ективность по отношению и другим участникам процесса – обвиняемым в ереси тондракидам[4], дабы провести через “сито цензуры” – главлита - важнейшие для самосохранения нации идеи вечности армянского языка, Ай Дата и правопритязаний армян(հայոց պանահջատիրություն)[5] .

Для этого Шираз, по словам С.Мурадяна, будучи сторонником Армянской Апостольской Церкви и царя, описывал суд на тондракидами в форме своего рода диспута, в котором каждая из сторон

[1] Շիրազ Հ. “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – сс.58-59
[2] Там же
[3] http://www.armworld.am/detail.php?paperid=4943&pageid=151772&lang
[6]Շիրազ Հ. “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – с.16
[7] там же сс. 7 - 9
[8] Там же сс. 26 - 28
[9] Там же сс. 21 - 23

представляла и защищала свою позицию по вопросам веры, морали, отношения к церкви, царю, народу, пыталась опровергнуть тезисы и обвинения оппонентов в своей адрес. Великий поэт формально, подобно царю Смбату, председательствующему на суде против семи лидеров тондракидов, а по сути всего тондракидского движения, сохранял внешнюю беспристрасность[1], в реальности являясь безжалостным обличителем учения, направленного против армянской государственности и церкви.

О. Шираз вкладывал в уста самих лидеров тондракидского движения и их обвинителей, главным образом, католикоса Иусика Агавнуни, царя Ованеса Смбата Багратуни(Смбата 1 Багратуни), вардапета - магистроса (очевидно, олицетворявшего Григора Магистроса Пахлавуни), спарапета Ваграма Пахлавуни, и писаря-секретаря (ատենադպիր) более того, предосудительные с точки зрения христианской веры и нравственности и разрушительные - с точки зрения интересов государства и народа идеи – деяния и поступки[2]. (Образ писаря олицетворяет историк, вардапет – ученый-богослов Аристакес Ластиверци, автор знаменитой “Истории”, из которой Шираз почерпал многие факты об Анийском царстве и тондракидах[3].).

В поэме Шираза обвинители тондракидам им и их лидерам приписывают сатанизм, указывая на их идейную связь с распространенным в Персии зороастризмом[4], о чем столь пространно говорит Магистрос, называя тондракидов язычниками и сравнивая их с персами, которые допускали многоженство и кровосмесительство, а также евтихианством(мессалинством), арианством[5], и сектами, распространенными в Армении до тондракидства[6], в том числе павликианами.

В основе учения александрийского священника начала 4в., пресвитера одной александрийских церквей Ария, (Арий, его учение и их последователи были преданы анафеме Первым Никейским Собором 325г.), поскольку вопреки утвержденному на нем Символу веры признавал, что второе Лицо Пресвятой Троицы Сын не рожден Отцом, а сотворен, то есть было время, когда его не было. Однако оба Лица божества вместе сотворили мир. Г.Магистрос рассматривал тондракидство как армянскую разновидность, модификацию арианства возрождающего зороастризм, называемого, в армянской богословской литературе парсизмом, религией персов, зерванизмом и т.д., по имени основателя персидского проповедника Зороастра(Зрадашта) до принятия ислама было доминирующей религией в Персии, и одного из верховных богов данной религии[7].

Косвенно указывается и на связь тондракидства с гностическим течением борборитов[8]. (На идейную идейную связь учения тондракидов с учениями мессалитов-евтихианцев, борборитов, павликиан также указывает профессор Э.Манучарян[9]). Мессалитов, борборитов и павликиан, в той или иной мере проповедующих ценности церкви первых веков или апостольской церкви в крайней моральной распущенности обвиняли не только армянские первосвященники и богословы-историки от католикосов Нерсеса Великого(4 в.) Саака Партева(5в.) до Нерсеса Шнорали(12в.), от автора “О Вардане и армянской войне” Егише (5в.) до А.Ластиверци (11в.), практически все обвинители тондракидов католикос Усик Агавнуни, царь Смбат Багратуни, Магистрос, но и ряд представителей советской историографии. Помимо слов Гр. Нарекаци, Гр.Магистроса, А.Ластиверци, обличающих ересь и моральную распущенность павликиан и тондракидов в эпиграфе поэмы приводятся слова известного армянского историка А.Бабаханяна (Лео), что в этих общинах(в частности, как подчеркивал у павликиан) практиковалась так называемая древняя досоциальная (նախակոմուն) форма собственности, при которой обобществлялись даже женщины. Помимо полигамии в этих общинах практиковалась также кровосмешение[10].

---

[1] Շիրազ Հ.“Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – cc.22, 23,
[1] Там же
[2] Շիրազ Հ.“Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – cc.22, 23,
[2] Там же 22, 23,
[3] cc. 22, 23,
[4] Там же cc. 116-117
[5] Տաթևացի Գ. “Ոսկեփորիկ”, Ե, “Գրություն” 1995 – c. 258
[6] Там же 16, 21
[7] http://ter-hambardzum.net/archives/3101#sthash.YiExPw1N.dpuf
[8] Там же
[9] Մանուչարյան Հ.Գ. Հայ քաղաքական մտքի պատմություն, Գիրք Ա, Եր., 2013, Է.102
[10] Շիրազ Հ. “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – c. 33

Отдавая дань уважения армянскому духовенству, царям и военачальнику-спарапету, мудрым ученым-богословам, философам и историкам, рисуя образ тондракидов как заблудших овец или искусных служителей сатаны, многие из которых подобно монаху Кунцику, совратившему с истинного пути сестер-княгинь Камару и Ахни, а также другую благочестивую представительницу высшей знати Грануйш, являясь служителем церкви и представляясь Божиими агнцем, в душе давно нес раздор, смятение, соблазн, Шираз подчеркнуто дистанцируется в догматических аспектах спора, указывая на то, что раскол **и насилие, взаимная вражда, ненависть, неспособность поступиться амбициями, сделать шаг к примирению, и хотя бы на мгновение принять точку зрения приводили лишь к самым тяжелым и трагическим для армянства последствиям, отдаляя участников спора от Бога и истины, и превращая их послушные орудия как врага рода человеческого, так и земных врагов Армении. (**Поскольку вся вселенная является тайной этот спор продолжится семь тысячелетий[1]**).**

При этом споры, взаимное насилие и непримиримость оказывались разрушительными для ценностей и идеалов, проповедуемых как представителями церкви и государства, так и их противниками.

Церкви и царю, несмотря на жестокие репрессии – казни, пытки, клеймление, разрушение, а порой и поголовное уничтожение предводителей тондракидства, прикнувших к ним представителям духовнества и аристоркатии, разорении сел и общин тондракидов, в результате которых было уничтожено, искалечено, изгнанно из Армении, продано в рабство несколько сотен тысяч тондракидов, не удалось искоренить ересь.

В поэме предводитель тондракидов Смбата Зареаванци начинает свою речь с выступления против передачи церквам земель, последствием которой стало обезземеливание крестьян, усгубившее и без того, крайне тяжелое положение сословия, вынужденного нести всю экономическую тяжесть бремени разоренной страной войны.

Вспоминая реформы армянского царя Папа, из династии аршакидов правившего в Армении 4в., направленные на усиление военной мощи и безопасности Армении, он якобы цитируя царя указывал на то, что земли, прожорливых монастырей не дали государству и народу ничего кроме голода, также как и их молитвы[2].

Отметим, что царь Пап осуществил попытку секуляризации церковных земель - часть земель переданных царем Трдатом он отобрал в пользу царского двора, часть вернул их прежним владельцам, существенно сократил привилегии церкви, в частности, изменил порядок взимания “десятины - налога в пользу церкви”, закрыл женские монастыри, разрешив девам выходить замуж[3]. замуж[3].

Эти меры были также направлены на увеличение численности населения Армении и ее войска[4].

В поэме указывается на то, что среди представителей духовенства, князей и княгинь, примкнувших к движению тондракидов, были не просто представители высшей церковной и светской знати, но и королевских кровей, что свидетельтсвуют о глубоком земельном кризисе в раздробленной феодальном обществе Армении в 9 – 11вв..

После практически полного подавления тондракидства ставленником византийского императора Константина Мономаха Г.Магистросом Пахлавуни в первой половине 11 в. Армения не стала безопаснее и сильнее, Ани пал жертвой предательства католикоса Петроса Первого Гетадарца и зятя Григора Магистроса Вест Саркиса, имевшего плохие отношения с армянским престолом[5].

В поэме Шираза Армения, Ани или царство Багратидов – последнее армянское государство, объединявшее земли двух частей Великой Армении.

Использованная литература

1. Գ.Տաթևացի “Ոսկեփորիկ”, Ե, “Գթություն” 1995
2. Շիրազ Հ. “Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014
3. Նժդեհ Գ.Նամակներ հայ մտավորականության, Ե. Հայաստան, 2001
4. Հ.Գ. Մանուչարյան Հայ քաղաքական մտքի պատմություն, Գիրք Ա, Եր., 2013,

[1] Շիրազ Հ.“Թոնդրակեցիները”. Ե. “Հայրապետ”, 2014 – сс.22, 23,
[2] Там же с.59
[3] http://www.historyofarmenia.am/ru/Encyclopedia_of_armenian_history_arshak_2_i_Pap
[4] Там же

5. История политических и правовых/ учений под общей академика РАН В.С.Нерсесянца/, М.: Норма – 2004

Համացանցային ռեսուրսներ

1. http://www.ankakh.com/article/316/thvondrakyetsinyeri-khvoshtangumnyere-shat-avyeli-dajan-ein--qan-yevrvopakan-inkvizitsiayine
2. http://ankakh.com/article/15181/%E2%80%8Bpyetrvos-gyetadardz
3. http://cultural.am/hy/norutyunner/hodvacner/egishe-charenci-patgamn-ibrev-mezostiqos
4. http://ter-hambardzum.net/archives/3101#sthash.YiExPw1N.dpuf
5. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/ Философская Энциклопедия. В 5-х т. — 6. М.: Советская энциклопедия. Под редакцией Ф. В. Константинова. 1960—1970.
7. http://dic.academic.ru/dic.nsf/enc_philosophy/2676 Новая философская энциклопедия: В 4 тт. М.: Мысль. Под редакцией В. С. Стёпина. 2001.
8. http://www.armworld.am/detail.php?paperid=4943&pageid=151772&lang
9. http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_nerses_a_mets
10.http://www.encyclopedia.am/pages.php?hId=1094
11.http://www.sacredtradition.am/Library/encyclopedia.php?iM=205&iL=0&iA=365
12. http://www.evangelie.ru/forum/t71605.html Андре Миллер " История христианской Церкви " Первый том. Глава 16. Золотые лучи безграничной благодати.
13. http://www.armworld.am/detail.php?paperid=4943&pageid=151772&lang
14. www.religions.am Павликиане: еретики или истинные христиане?

Տեղեկություններ հեղինակի մասին

Դավիթ Կարաբեկյան – ԱրՊՀ փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի ավագ դասախոս
E-mail: dav-karabekyan@yandex.ru

Статья рекомендована к печати членом редакционной коллегии, д.п.н. А.П., Енгояном.

ՀՏԴ 325 (479.243) Քաղաքագիտություն

ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ 1991-1992 ԹԹ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ

Հրայր ՓԱՇԱՅԱՆ, Լիանա ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր՝ *Ղարաբաղյան հակամարտություն, բանակցային գործընթաց, քաղաքական շարժառիթներ, ԵԱՀԽ Մինսկի խումբ, քաղաքական փաստարկներ, միջազգային հանրություն, հակամարտության կերպար, կարգավիճակ, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջան:*

Ключевые слова: *Карабахский конфликт, процесс урегулирования, политические мотивы, Минская группа ОБСЕ, политические аргументы, международное сообщество, суть конфликта, статус, Нагорный Карабах, Азербайджан.*

Keywords: *Karabakh conflict, the negotiation process, political motives, CSCE Minsk group, political arguments, international community, conflict essence, status, Nagorno Karabakh, Azerbaijan.*

Г. Пашаян, Л. Балаян

ВОСПРИЯТИЕ СУТИ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В 1991-1992 ДОКУМЕНТАХ

В ходе анализа документов связанных с урегулированием карабахского конфликта, в статье представлены мотивы их принятия, политические аргументы которые имеют место быть в текстах и контекстах и международное восприятие конфликта представленное в этих документах. Пропаганда Баку о том, что западные страны признав независимость республик Советского Союза, тем самым признали территориальную целостность Азербайджана вместе с границами прежней Аз.ССР, необоснованно. Следует отметить пункт 907 закона “ О поддержке свободы” принятый Соединенными Штатами, в которой, Азербайджан воспринимается агрессором.

H. Pashayan, L. Balayan

PERCEPTION OF THE ESSENCE OF THE KARABAKH CONFLICT IN 1991-1992 DOCUMENTS

In the course of the analysis of the documents related to the settlement of the Karabakh conflict, this article presents the motives of their perception, the political arguments that are in texts and contexts and the international perception of the conflict presented in these documents. It turns out that the propaganda of Baku that the Western countries recognizing the independence of the republics of the Soviet Union, thus recognized the territorial integrity of Azerbaijan, together with the boundaries of the former Az.SSR, is unfounded. It should be noted the article 907 of the law "On Freedom Support" adopted by the United States, in which Azerbaijan Republic is perceived an aggressor.

Հոդվածում՝ Ղարաբաղյան հակամարտությանն առնչվող փաստաթղթերի վերլուծությամբ ներկայացված են դրանց ընդունման շարժառիթները, տեքստերում և ենթատեքստերում առկա քաղաքական փաստարկները և դրանցում հիմնախնդրի միջազգային ընկալումները: Ժխտվում է Բաքվի այն կեղծարարությունը, ըստ որի Արևմուտքը ճանաչելով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների անկախությունը, դրանով իսկ ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը՝ նախկին Ադր.ԽՍՀ սահմաններով: ԱՄՆ-ի ընդունած Ազատության աջակցման ակտի 907-րդ՝ «Ադրբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» բանաձևով Ադրբեջանն ընկալվել է որպես ագրեսոր:

Եվրոպայի Խորհրդի Խորհրդարանական Վեհաժողովի (ԵԽԽՎ) 2016թ. հունվարյան լիագումար նիստում ներկայացված հակահայկական բովանդակությամբ զեկույցները, դրանց շուրջ ընթացող քննարկումներն ու ադրբեջանական կողմի ապակառուցողական կեցվածքը, այդ թվում նաև՝ Հայաստանի Հանրապետությանն ագրեսոր ներկայացնելու, ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական առաքելությունը տապալելու և Ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացը միջազգային այլ կառույցներ ներկայացնելու փորձերը, վերստին հրատապ են դարձնում անդրադառնալու առանցքային այն փաստաթղթերին, որոնցում

արտացոլված են հիմնախնդրի վերաբերյալ ժամանակի միջազգային ընկալումները: Մասնավորապես խոսքը վերաբերում է 1991-1992 թթ. հակամարտությանն առնչվող փաստաթղթերին, որոնցում առկա քաղաքական փաստարկները բացահայտում են կարգավորմանն ուղղված քայլերի շարժառիթները, նրա ծավալման շարժընթացն ու ժխտում ադրբեջանական կողմի կեղծարարությունները: Ներկայացվող փաստաթղթերում ուղղակի կամ անուղղակի անդրադարձ կա արդիական հարցերի՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի, ագրեսորի՝ զենքի ուժով հակամարտությունը լուծելու ադրբեջանական կողմին տրված միջազգային գնահատականի և տարածքային ամբողջականության ու ինքնորոշման իրավունքի վերաբերյալ: Սրանք այն հիմնական հարցերն են, որոնք տարբեր միջազգային հարթակներում փորձում է ներկայացնել ադրբեջանական կողմը՝ սեփական պատկերացումներին ու ցանկությանը համապատասխան, խեղաթյուրելով հակամարտության իրական կերպարը:

Ինչպես հայտնի է, ԼՂՀ-ի և ԱՀ-ի ձևավորումը հնարավոր դարձավ ԽՍՀՄ լուծարման և դրա շղթայական շարունակությունը հանդիսացող «մինի կայսրությունների» [1]՝ այդ թվում նաև ԱդրԽՍՀ-ի գոյության դադարեցման հետևանքով: Բազմիցս է խոսվել այն մասին, որ ԼՂՀ կազմավորումը թե՛ ԽՍՀՄ, թե՛ միջազգային իրավական նորմերի, և թե՛ ժողովրդավարության տեսանկյուններից մի շարք առավելություններ ունի ԱՀ-ի նկատմամբ [2]:

Հետխորհրդային տարածքում առկա հակամարտությունների առնչությամբ տարբեր հեղինակների կողմից բազմիցս՝ թեև անուղղակիորեն, նշվել է «անջատված տարածքների» նախկին «մայր երկրների» հետ հավասար իրավասուբյեկտության մասին [3, c. 16]: ԽՍՀՄ լուծարման և անկախ ԼՂՀ-ի ու ԱՀ-ի ձևավորմանը զուգընթաց քայլեր ձեռնարկվեցին նաև Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ: Դրանցից առաջինը համարվում է 1991թ. սեպտեմբերի 20-23-ը Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների գլխավորած պատվիրակության այցը հակամարտող կողմերի մայրաքաղաքներ: Արդյունքում սեպտեմբերի 23-ին՝ Ռուսաստանի Ժելեզնովոդսկ քաղաքում Բ. Ելցինը, Ն. Նազարբաևը, Ա. Մութալիբովն ու Լ. Տեր-Պետրոսյանը ստորագրեցին «Ժելեզնովոդսկյան հայտարարագիրը» [4]:

Հայտարարագրի ներածականում նշված է, որ միջնորդական ջանքերի անհրաժեշտությունը պայմանավորված է ստեղծված իրավիճակով, ինչը պայմաններ կստեղծեր այդ ուղղությամբ բանակցային գործընթաց սկսելու համար, որը քայլ առ քայլ տարածաշրջանում իրավիճակի կարգավորման հիմք կհանդիսանա: Ժելեզնովոդսկյան գործընթացը, ինչպես նշում է դրա մասնակիցներից Ս. Զոլյանը, օբյեկտիվորեն թելադրված էր ինչպես Լեռնային Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում և Ադրբեջանում փոփոխված իրավիճակով [5, c. 125]: Այսինքն՝ ժելեզնովոդսկյան գործընթացը պայմանավորված էր ոչ այնքան հակամարտող կողմերի, որքան միութենական ժառանգության հիմնական հավակնորդի՝ ՌԴ-ի կամքով:

Հայտարարագրի ներածականում նշված է նաև, որ **Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների գլխավորած միջնորդական առաքելությունը 1991թ. սեպտեմբերի 20-23-ը եղել է Բաքվում, Գանձակում, Ստեփանակերտում և Երևանում:** Միջնորդները շեշտել էին, որ **հակամարտության լուծման գործում իրենք ղեկավարվում են ինքնիշխան պետության ներքին գործերին չմիջամտելու, բոլոր քաղաքացիների իրավունքներն՝ անկախ նրանց ազգությունից, միջազգային իրավունքի նորմերին համապատասխան անշեղորեն կիրառելու սկզբունքով:** Քննարկումների արդյունքները համատեղ հայտարարագրում ձևակերպվել էին 9 կետերով:

Փաստաթղթի հենց առաջին կետում նշելով հակամարտության կարգավորման ժամկետը՝ մինչև 1992թ. հունվարի մեկը, հստակորեն թվարկված էին կարգավորման համար անհրաժեշտ և պարտադիր պայմանները: Դրանք էին՝ **կրակի դադարեցումը, ԼՂԻՄ-ի վերաբերյալ Ադրբեջանի և Հայաստանի կողմից ընդունված բոլոր հակասահմանադրական ակտերի չեղարկումը, օրինական իշխանությունների՝ լիազորությունների ճանաչումը, բոլոր զինված կազմավորումների դուրսբերումը՝ բացառությամբ ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի և ԽՍՀՄ պաշտպանության նախարարության զորամասերի:** Այդ ժամկետը լրանալուց հետո բոլոր զինված կազմավորումների առկայությունը և նրանց գործողությունները կողմերը համարում են անօրինական, և ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին

զորքերի կողմից կկասեցվեն: Ըստ փաստաթղթի՝ զինված կազմավորումների մասնակիցները ենթակա են օրենքով սահմանված պատասխանատվության:

Չնայած **«Կրակի դադարեցում»** արտահայտությունը կոնկրետ հասցեատեր չուներ, բայց փաստորեն այն վերաբերում էր ադրբեջանական կողմին, քանի որ հենց նա էր նախաձեռնել հիմնախնդիրը զենքի ուժով լուծելու քայլերը: «Օղակ» ռազմագործողությունը հանդիսանում է դրա ապացույցներից մեկը:

Հայտարարագրի առաջին կետով **չեղարկվում էին ԼՂԻՄ վերաբերյալ ընդունված հակասահմանադրական բոլոր ակտերը:** Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ սահմանադրական վերահսկողության կոմիտեն նույնպես չեղարկել է ԼՂԻՄ վերաբերյալ ընդունած բոլոր ակտերը, դրանք համարելով հակասահմանադրական: Այսինքն՝ ԱՀ-ի կողմից ընդունված բոլոր ակտերը չեն ընդունվել նաև միջազգային հանրության կողմից:

«Հայտարարագրի» առաջին կետում թվարկված հաջորդ անհրաժեշտ և պարտադիր նախապայմանը, որն առաջին հայացքից թվում է կոնկրետ հասցեատեր չուներ, **օրինական իշխանությունների լիազորությունների ճանաչումն էր:** Այդպիսի օրինական իշխանություն էր հանդիսանում ժողովրդավարական ճանապարհով ընտրված Արցախի Ազգային խորհուրդը, որը Հատուկ կառավարման կոմիտեի լուծարումից հետո՝ 1989 թվականից, իր ձեռքն էր վերցրել երկրամասի կառավարումը: Իսկ **«Բոլոր զինված կազմավորումները պետք է դուրս բերվեն»** արտահայտությունը վերաբերում է ԱՀ-ին, քանի որ Բաքուն էր զինված հարձակում ձեռնարկելով մտել ԼՂՀ տարածք և փորձում էր զենքի ուժով լուծել հիմնախնդիրը:

«Հայտարարագրի» երրորդ կետում ընդգծվում էր տեղահանված բնակչության՝ **սկսած դատարկվող գյուղերի փուլ առ փուլ վերադարձի անհրաժեշտությունը՝ ինչպես Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի հանրապետություններում:** Քանի որ Բաքվի ագրեսիայի արդյունքում են դատարկվել հայկական գյուղերը, ապա կարելի է ասել, որ այս կետը ևս ուղղված էր ադրբեջանական կողմին: Բավական է հիշել Եվրոպական Խորհրդարանի 1988թ. հուլիս 7-ի բանաձևի 4-րդ կետը, որը կոչ է անում խորհրդային ղեկավարությանը ապահովելու ԱդրԽՍՀ տարածքում ապրող 500 հազար հայերի անվտանգությունը, և խորհրդային օրենսդրության համաձայն ապահովելու սադրանքների կամ հայերի դեմ գործած ջարդերին մասնակից մեղավորների պատիժը [6]:

«Հայտարարագրի» 5-րդ կետով հակամարտող կողմերը պարտավորվում էին միութենական մարմինների հետ **ապահովել երկաթուղային, տրանսպորտի, օդային, կապի և հաղորդակցության այլ համակարգերի նորմալ գործունեությունը:** Իսկ ավտոմոբիլային ճանապարհների ազատ ու փոխշահավետ գործունեությունն ապահովելու նպատակով կողմերը միջնորդների մասնակցությամբ պետք է ձեռնամուխ լինեին բանակցությունների:

Իսկ ո՞վ էր փակել հաղորդակցության ուղիները: Փաստերը նորից վկայում են, որ հենց Բաքուն է հանդիսանում դրա նախաձեռնողը, որի արդյունքում ոչ միայն ԱՀ-ն շարունակում է Թուրքիայի հետ համատեղ շրջափակման մեջ պահել ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, այլև դրանով փակել է Եվրոպան Ասիայի հետ կապող ամենակարճ ցամաքային ուղին: Դա են փաստում արդեն հիշատակված 1988թ. հուլիսի 7-ի Եվրոպական խորհրդարանի [6] և 1989 թվականի նոյեմբերի 19-ին ԱՄՆ ծերակույտի ու ներկայացուցիչների տան ընդունած N 178 բանաձևերը [7]:

Փաստաթղթի 6-րդ կետը վերաբերում էր տեղեկատվական ոլորտին: Արձանագրվել էր միասնական կարծիք, համաձայն որի՝ **անհրաժեշտ է ապահովել հակամարտության գոտուց ստացվող լրատվության անաչառությունը:** Որոշվել էր կազմել լրատվական խումբ՝ ՌԴ-ի և Ղազախստանի ներկայացուցիչներից, որոնց պիտի տրվեին հակամարտության գոտու իրադարձությունների վերաբերյալ պաշտոնական տեղեկություններ պատրաստելու լիազորություններ: Խումբը պետք է ապահովեր անաչառ տեղեկատվություն ստանալու խնդիրը, ինչը մեր օրերում էլ այժմեականություն ունեցող խնդիր է: Այսինքն՝ ի սկզբանե առկա էր միջազգային հանրությանը ապատեղեկատվություն մատուցելու և նրանց մոտ հակամարտության էության մասին սխալ կերպար ձևավորելու վտանգը, ինչը հատկապես պարզ էր դարձել Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցած դեպքերից հետո: ԱՀ-ն հիմա էլ է

շարունակում միջազգային հանրությանն ապատեղեկատվություն մատուցել շփման գծում և սահմանում տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ: Դրանով է պայմանավորված սահմանային միջադեպերը հետաքննող հանձնաժողով ստեղծելու առաջարկից Բաքվի հրաժարումը:

Հատկանշական է միջնորդների տարածաշրջան այցելելու ժամանակն ու կազմը: 1991թ. սեպտեմբերի 2-ի ԼՂՀ հռչակմանը հաջորդած օրերին նման բարձրաստիճան անձանց այցելությունը մայրաքաղաք Ստեփանակերտ՝ և՛ ԼՂՀ-ում, և՛ ԱՀ-ում, այն տպավորությունն էր ստեղծել, որ դա ԼՂՀ-ի ճանաչման յուրօրինակ վկայություն է: Այդպիսի կարծիքը ցանկություն լինելուց բացի ուներ որոշակի հիմքեր: Նման կազմով միջնորդական առաքելություն կամ բարձրաստիճան պաշտոնյաներ առայսօր տարածաշրջան չեն այցելել: Հարցը վերաբերում է նաև հակամարտության իրական սուբյեկտների ճշգրտմանը: Անկախության հռչակման պահից ի վեր ԼՂՀ-ն փորձում էր սեփական շահերն անձամբ ներկայացնել, իսկ այդ առումով Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների Ստեփանակերտ այցելությունն ու ԼՂՀ իշխանությունների հետ հանդիպումը առաջին նման փորձն էր: Ժելեզնովոդսկյան հանդիպումից հետո ընթացող բանակցություններում Ադրբեջանի որդեգրած կոշտ դիրքորոշման պատճառներից մեկը, ընդդիմության կողմից երկրի բարձրագույն ղեկավարությանը դավաճանության մեջ մեղադրումն էր, որը ստորագրելով «Ժելեզնովոդսկյան հայտարարագիրը», ընդունել էր ԼՂՀ փաստացի գոյությունը: Հարկ է նշել, որ հայտարարագրի դրույթների քննարկմանը և ստորագրմանը՝ ճիշտ է միայն դիտորդի կարգավիճակով, բայց Ղարաբաղյան կողմից մասնակցում էին ԼՂՀ ներկայացուցիչները՝ Ռոբերտ Քոչարյանն ու Լեոնարդ Պետրոսյանը, ինչն ինքնին դրական փաստ էր, որն Ադրբեջանի քաղաքական ուժերի կողմից խիստ բացասաբար ընկալվեց: Նույնիսկ ընդդիմության ճնշումների տակ՝ գործող նախագահ Ա. Մութալիբովը զրկվելով կոմունիստական իշխանության աջակցությունից, ստիպված էր խորհրդարանական նոր ընտրություններ անցկացնել:

Իրենց կարևորությամբ հանդերձ ժելեզնովոդսկյան հայտարարագրի դրույթներն իրականություն դառնալու հիմքեր չունեին, քանի որ միջնորդներն առավելապես սեփական նկատառումներով էին կազմակերպել տարածաշրջանային այցը: Հետագա բանակցային գործընթացի առաջխաղացմանը լրջորեն խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկն էլ դարձավ Լեռնային Ղարաբաղին բանակցային գործընթացից դուրս մղելուն, իսկ այնուհետև՝ խնդիրը զենքի ուժով լուծելուն ուղղված ԱՀ-ի քայլերը, ինչը նաև երկրի ներքաղաքական լարված իրավիճակի արդյունք էր [8, *էջ 171*]: Ադրբեջանցիները նույնիսկ մերժեցին ռուսական կողմի առաջարկը՝ հերթական հանդիպումն անցկացնել Ստեփանակերտում, որտեղ որպես ընդունող կողմ պետք է հանդես գային ոչ թե ԼՂՀ իշխանությունները, այլ միջնորդները [5, с. 149]:

Ժամանակագրական առումով հաջորդ կարևոր փաստաթուղթը, որում առկա փաստարկները ժխտում են տարածված թյուրըմբռնումը՝ իբր Եվրամիության երկրները 1991-1992 թթ. ճանաչելով նախկին Սովետական Միության հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են այդ պետությունների սահմանների անձեռնմխելիությունը, հանդիսանում է 1991թ. դեկտեմբերի 16-ով թվագրվող «Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության (տարածքում, - Հ. Փ.) նոր պետությունների ճանաչման ուղենիշների» Հռչակագիրը [9]:

Հռչակագրի նախաբանի առաջին պարբերությունում նշված է. **«Եվրոպական խորհրդի առաջարկով նախարարները (Եվրոպական համայնքի երկրների արտաքին գործոց, - Հ.Փ.) գնահատել են Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության տարածքում ընթացող զարգացումները, նպատակ ունենալով մշակել միասնական մոտեցում՝ ուշադրություն դարձնելով նոր (անկախացող, - Հ.Փ.) պետությունների հետ հարաբերություններին»:** Արդյունքում՝ ինչպես նշված է երկրորդ պարբերությունում. **«Այս կապակցությամբ նրանք ընդունել են Արևելյան Եվրոպայում և Սովետական Միության տարածքում նոր պետությունների ճանաչման հետևյալ ուղենիշները.**

Եվրոպական համայնքը և նրա անդամ երկրները վերահաստատում են իրենց հավատարմությունը Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի սկզբունքների նկատմամբ, հատկապես՝ ինքնորոշման»: Այսինքն՝ նշված փաստաթղթի հիմքը

հավատարմությունն է ազգերի ինքնորոշման սկզբունքի նկատմամբ: Նախաբանում առանձնանշված է միայն այդ սկզբունքը, քանի որ անկախացող երկրների ճանաչումը դիտարկվել է որպես ինքնորոշման սկզբունքի իրականացում:

Նախաբանում առանձնանշված հաջորդ կարևոր միտքն այն է, որ նորանկախ պետությունները. **«...ընդունել են համապատասխան միջազգային պարտավորությունները և պարտավորվել բարեխղճորեն՝ խաղաղ գործընթացի և բանակցությունների միջոցով լուծել հարցերը»:** Սակայն, անկախացումից ի վեր պաշտոնական Բաքուն ոչ միայն կոպտորեն խախտում է միջազգային պարտավորվածությունները, այլև փորձել և այժմ էլ չի թաքցնում Ղարաբաղյան հակամարտությունը ուժի և բռնության ճանապարհով լուծելու մտադրությունը:

Եվրոպական համայնքը և նրա անդամ երկրներն ընդունելով նոր պետությունների ճանաչման գործընթացի վերաբերյալ ընդհանուր դիրքորոշում, հռչակագրի առաջին կետով պահանջում են. **«հարգանք Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրության հիմնադրույթների, Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի և Փարիզի ուխտի պարտավորությունների նկատմամբ, հատկապես նրանց, որոնք վերաբերում են օրենքի իշխանությանը, ժողովրդավարությանը և մարդկային իրավունքներին»:** Ինչպես Ա.Պապյանն է նշում. «Ակնհայտ է՝ այստեղ առանձնանշված են <u>**օրենքի իշխանությունը, ժողովրդավարությունը և մարդկային իրավունքները:**</u> Սկզբունքներ, որոնք ո՛չ անկախացումից առաջ, և ո՛չ էլ անկախացումից հետո երբեք չեն հարգվել Ադրբեջանի կողմից, հատկապես այդ երկրի հայազգի քաղաքացիների նկատմամբ» [10, էջ 84]: «Այլախոհների» նկատմամբ Ադրբեջանի Հանրապետությունում իրականացվող բռնություններն ու բանտարկություններն ակնհայտ փաստերն են, և բազմիցս են մատնանշվել միջազգային հանրության կողմից:

Հռչակագրի երկրորդ կետով պահանջվում է. **«էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխավորում՝ համաձայն ԵԱՀԽ-ում ունեցած պարտավորությունների»:** Այսինքն՝ հռչակագրում առանձնացված հաջորդ կարևոր սկզբունքը էթնիկ, ազգային խմբերի և փոքրամասնությունների իրավունքների երաշխավորումն է: Այս իրավունքները դարձյալ խախտվել և խախտվում են ոչ միայն հայերի, այլև Ադրբեջանի Հանրապետությունում բնակվող բնիկ ժողովուրդների՝ թալիշների, թաթերի, լեզգիների և այլոց նկատմամբ: Նրանց համար, ինչպես Ադրբեջանում տեղի ունեցող բռնություններն են վկայում, սեփական հայրենիքը դարձել է յուրօրինակ ազգային բանտ:

Միայն Հռչակագրի երրորդ կետում կա հիշատակում **«բոլոր սահմանների անձեռնմխելիության հարգանքի»** մասին և նշված է դրանց փոփոխելու հնարավորությունը՝ **«խաղաղ ճանապարհով և ընդհանուր համաձայնությամբ»:** Քանի որ Հռչակագիրը խարսխված է Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի, Փարիզի ուխտի և ՄԱԿ-ի կանոնադրության սկզբունքների վրա, ուստի «սահմանների անձեռնմխելիություն» հասկացությունը պետք է մեկնաբանվի ըստ այդ փաստաթղթերի, որոնցում չի նշվում սահմանների բացարձակ անձեռնմխելիության մասին, այլ նշվում է «ուժի կամ ուժի սպառնալիքի» կիրառմամբ դրանց փոփոխելիության անընդունելիությունը: Ըստ Ա.Պապյանի. «ԵՄ երկրները խնդրո առարկա Հռչակագրով, հաշվի առնելով, որ ԽՍՀՄ կազմալուծումով առաջանում էր իրավական վակուում, մինչև անկախացող երկրների կողմից վերոհիշյալ հիմնարար փաստաթղթերի ստորագրումը, այդ փաստաթղթերի երաշխիքները տարածում էին անկախացող երկրների վրա, որպեսզի վերջիններիս զերծ պահեին արտաքին զինված հարձակումներից: Օրինակ, Աֆղանստանը չհարձակվեր Թուրքմենստանի վրա, կամ Ֆինլանդիան՝ Ռուսաստանի» [10, էջ 84]:

Հռչակագրի 4-րդ կետը պահանջում է. **«բոլոր համապատասխան պարտավորությունների ընդունում՝ կապված զինաթափման և միջուկային զենքի չտարածման, ինչպես նաև անվտանգության և տարածաշրջանային կայունության հետ»:** Պատերազմ սանձազերծելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, Բաքուն ոչ միայն չի պահպանել «զինաթափման, ինչպես նաև անվտանգության և տարածաշրջանային կայունության» պահանջները, այլև օգտագործելով ԽՍՀՄ լուծարման հետևանքով երկրում հայտնված հսկայական քանակությամբ

զենք-զինամթերքը, այնուհետև՝ նավթադոլարները, խախտել և շարունակում է սպառնալ տարածաշրջանի անվտանգությանն ու կայունությանը:

Հռչակագրի 5-րդ կետը պահանջում է. **«հանձնառություն՝ պետական իրավահաջորդության և տարածաշրջանային վեճերի հետ կապված բոլոր հարցերը կարգավորել համաձայնությամբ, համապատասխան դեպքերում օգտվելով արբիտրաժի ծառայությունից»:** Այս պահանջը ևս կոպիտ կերպով խախտվել է Բաքվի կողմից: Անկախացման գործընթաց սկսելով, նա մի կողմից հրաժարվել է ԱդրԽՍՀ իրավահաջորդությունից, մյուս կողմից՝ ձեռնարկել քայլեր՝ այդ թվում ռազմական, իրավականորեն իրեն չպատկանող տարածքներում կայանալու համար: Այսինքն՝ Բաքվի կողմից խախտվել է **«պետական իրավահաջորդության և տարածաշրջանային վեճերի հետ կապված բոլոր հարցերը համաձայնությամբ կարգավորելու հանձնառությունը»:** Ներկայումս պաշտոնական Բաքուն խախտում է նաև նշված կետի երկրորդ մասը, որը պարտավորեցնում էր «համապատասխան դեպքերում օգտվել արբիտրաժի ծառայությունից»: Միջազգային հանրության կողմից հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված միջնորդ մարմնի՝ ԵԱՀԿ ՄԽ գործունեության իրավասությունը կասկածի տակ դնելու և այդ ձևաչափը փոփոխելու Բաքվի քայլերը դրա մասին են վկայում:

Հռչակագրի վերջում Եվրոպական Համայնքը և նրա անդամ պետությունները **«պարտավորվում են չճանաչել ագրեսիայի արդյունքում ստեղծված կառույցներին: Այս հարցում նրանք հաշվի կառնեն հարևան երկրների ճանաչման արդյունքները»:** Գաղտնիք չէ, որ Ադրբեջանական անվամբ պետություն Արևելյան Այսրկովկասում 1918թ. կազմավորվել է թուրքական զորքերի երկրամաս ներխուժման, 1920-ին՝ կարմիր բանակի, իսկ 1991-ին՝ ԱդրԽՍՀ պետականակիր հայության ոչնչացման ու բնիկ ժողովուրդների բռնի ուծացման արդյունքում:

Եվրոպական Համայնքը համոզված էր, որ իր կողմից ընդունված սկզբունքների հանձնառությունը **«ճանապարհ է բացում Համայնքի և նրա անդամ պետությունների կողմից նոր պետությունների ճանաչման և նրանց հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար»,** որոնք կարող են սահմանվել պայմանագրերով:

Հակամարտության կարգավորմանն ուղղված հաջորդ նշանակալից քայլը կապված է Իրանի միջնորդական նախաձեռնության հետ: Սակայն դա ձեռնտու չէր թե՛ Արևմուտքի և թե՛ տարածաշրջանն իր ավանդական ազդեցության գոտին համարող ՌԴ-ի համար [11, c. 182-198]:

1992թ. միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու համար լիազորվել է ԵԱՀԽ Մինսկի խումբը [12, էջ 52-62]: Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդաժողովի մարտի 24-ի նիստում որոշվեց՝ Լեռնային Ղարաբաղի հարցին նվիրված կոնֆերանս հրավիրել Մինսկում: Այստեղ ընդունվեց իրավաքաղաքական նշանակության մի կարևոր փաստաթուղթ [13], որը շարունակ անտեսվում է և՛ մեր, և՛ այն ընդունող երկրների կողմից:

Փաստաթղթում ներառված 12 կետերից երրորդով (առաջին երկուսը հիմնախնդրին չեն վերաբերում) «Նախարարներն արտահայտել են իրենց խորը անհանգստությունը կապված **Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը** շարունակվող զինված հակամարտության սրման հետ, որի արդյունքում ավելանում են տառապանքները և աճում բնակչության շրջանում մարդկային մահացության դեպքերը», որը շեշտվել է նաև 6-րդ կետում՝ «... Նրանք (մասնակիցները, - Հ.Փ) փաստել են, որ **Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջը** ստեղծված դրությունը պահանջում է ԵԱՀԽ կողմից հետագա գործողությունների»: Ըստ ԵԱՀԽ-ի խնդիրը նույնպես դուրս էր Լեռնային Ղարաբաղի շրջանակներից: Տվյալ ժամանակաշրջանում (1992-ին) միջազգային հանրության մոտ դեռևս թարմ էին Ադրբեջանում հայերի նկատմամբ կատարված բռնությունները, որոնք էլ հիմք են հանդիսացել նման ձևակերպման համար: Այսինքն՝ խնդիրն ի սկզբանե ընկալվել էր իր էությանը համարժեք և միայն հետագայում է նրա շրջանակները սահմանափակվել Լեռնային Ղարաբաղով: Արդյունքում՝ հակամարտության հիմնական զոհը՝ ցեղասպանության ենթարկված ադրբեջանահայությունն աստիճանաբար մոռացության է մատնվել: Մինչդեռ՝ 1992թ. մարտի 24-ին ընդունած ԵԱՀԽ որոշման մեջ անուղղակիորեն նշված է այդ մասին, քանի որ «նրա շուրջ»-ի մեջ գործնականում մտնում էր ցեղասպանության ենթարկվող ԱդրԽՍՀ

պետականակիր ադրբեջանահայությունը: Հետևաբար, խոսելով զինված հակամարտության, կրակի դադարեցման և նման ձևակերպումների մասին, ԵԱՀԽ-ն կարող էր նկատի ունենալ հենց ադրբեջանական կողմին, որի ձեռնարկած ագրեսիվ քայլերի արդյունքում էին **«ավելանում տառապանքները և աճում բնակչության շրջանում մարդկային մահացության դեպքերը»:** Սումգայիթի, Բաքվի ջարդերից մինչև «Օղակ» ռազմագործողությունը և դրանից հետո շարունակվող իրադարձությունները՝ բռնություններն ու ագրեսիան, դա են փաստում [14, c. 155-158]: Մյուս կողմից՝ ԽՍՀՄ կենտրոնական մարմինները նույն ոգով հիմնախնդրի վերսկսումից շրջանառության մեջ էին դրել համապատասխան անվանում՝ «Իրադարձությունները լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ»: «Նրա շուրջը» փաստորեն ընդգրկում էր ողջ նախկին ԱդրԽՍՀ տարածքը, որտեղ պետականորեն իրագործվել է թուրքական հայաջինջ քաղաքականությունը:

Հատկանշական է նաև փաստաթղթի 4-րդ կետը՝ **«Նախարարները նորից ամենավճռական ձևով կոչ են անում կրակի անհապաղ և արդյունավետ դադարեցում՝ դրա իրագործմանը ակտիվորեն ներգրավելով տեղերում պատասխանատու հրամանատարներին»: Կրակի անհապաղ և արդյունավետ դադարեցումն** անմիջականորեն վերաբերում էր ադրբեջանական կողմին, քանի որ հենց նա էր ձեռնարկել քայլեր ուղղված բնակության իրենց պատմական հայրենիքում ապրող հայերի ոչնչացմանը: Նրանք հանդես են եկել նաև վստահության մթնոլորտի ամրապնդման և կառուցողական երկխոսության համար պայմանների ստեղծման կոչով՝ ներառյալ **տնտեսական և քաղաքական ճնշման միջոցների դադարեցումը:** Հայկական բնակավայրերն ավերելուն զուգընթաց, պաշտոնական Բաքուն դեռևս ԽՍՀՄ գոյության շրջանում ձեռնարկեց Խորհրդային Միության համար նախադեպը չունեցող գործողության՝ ԼՂԻՄ-ի և Խորհրդային Հայաստանի շրջափակմանը, ինչի հետևանքով ինքնավար մարզը լրիվությամբ մեկուսացվեց աշխարհից և բնակչությունը սկսեց սովի մատնվել: Այս առթիվ բավականին խոսուն է 1989 թվականի նոյեմբերի 19-ին ԱՄՆ ծերակույտի ու ներկայացուցիչների տան ընդունած N 178 բանաձևը, որի կետերից մեկում հստակորեն նշված է, որ հենց Հայաստանն է շրջափակման ենթարկվել, որ շրջափակումը չի դադարեցվել նույնիսկ դեկտեմբերի 7-ի աղետի օրերին [7]: ԱՀ-ն օգտվելով մեր և միջազգային հանրության՝ ընդունած որոշումների նկատմամբ ցուցաբերած անհետևողականությունից, Թուրքիայի հետ համատեղ շարունակում է շրջափակման մեջ պահել ՀՀ-ն ու ԼՂՀ-ն, նույնիսկ սպառնալով ոչնչացնել ԼՂՀ ժամանող քաղաքացիական ինքնաթիռները: Ինչ վերաբերում է քաղաքական ճնշումներին, ապա այդպիսիք թե՛ նախախորհրդային [15], թե՛ խորհրդային [16] և թե՛ հետխորհրդային տարիներին Բաքուն է կիրառել: Դրա մասին է վկայում Եվրոպական Խորհրդարանի՝ վերոնշյալ բանաձևի ներածականի երրորդ կետը. **«Ուշադրություն դարձնելով վատթարացող քաղաքական իրավիճակին, որը հանգեցրել է Սումգայիթում հայերի ջարդերի և Բաքվում բռնության գործողությունների, որն ինքնին լուրջ սպառնալիք է հանդիսանում Ադրբեջանում բնակվող հայերի անվտանգության համար»** [6]: Պաշտոնական Բաքուն անպատժելիության հետևանքով այնքան է լկտիացել, որ ճնշումներ է իրականացնում նաև միջազգային հանրության նկատմամբ: Բաքվի այսպես կոչված «սև ցուցակի» գոյությունն ու ԼՂՀ այցելողների նկատմամբ քաղաքական ճնշումների գաղափարի հետևողական իրագործումը դրա լավագույն վկայությունն են:

Մեր օրերում, հակամարտության կարգավորման շուրջ ընթացող ձևախեղված «բանակցությունների» ձևաչափի վերականգնման տեսանկյունից կարևոր է փաստաթղթի 9-րդ կետը, որտեղ նշված է. «…նախարարները համաձայնել են, որ Մինսկում կայանալիք կոնֆերանսի մասնակիցները կլինեն Ադրբեջանը, Հայաստանը, Բելոռուսիան, Գերմանիան, Իտալիան, Ռուսաստանի Դաշնությունը, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Թուրքիան, Չեխական և Սլովակյան Ֆեդերատիվ Հանրապետությունները և Շվեդիան: **Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչները որպես շահագրգիռ կողմ խորհրդաժողովին կհրավիրվեն նրա նախագահի կողմից՝** կոնֆերանսին մասնակցող պետությունների հետ խորհրդակցելուց հետո»: Ամեն անգամ, երբ ԼՂՀ-ում տեղի են ունենում նախագահական կամ խորհրդարանական ընտրություններ, եվրոպական կառույցները հայտարում են, թե չեն ճանաչում դրանց օրինականությունը, հակառակ այն բանի, որ ԵԱՀԽ-ն 1992 թվականին որոշել

էր Մինսկի խորհրդաժողով հրավիրել **Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչներին:** Ընտրված ներկայացուցիչներ Լեռնային Ղարաբաղը կարող է ունենալ միայն ընտրությունների արդյունքում: Այս մասին անընդհատ պետք է հիշեցնել միջազգային հանրությանը:

Միջնորդների կողմից հակամարտող կողմերի գործողությունների միջև հաճախ հավասարության նշան դնելը, իրերն իրենց անունով չկոչելը և տեղեկատվական դաշտում մեր թերացումները, Բաքվին թույլ են տալիս խեղաթյուրելու հիմնախնդրի կերպարը՝ այն միջազգային հանրությանը ներկայացնելով որպես ՀՀ-ի կողմից ինքնիշխան պետության նկատմամբ իրականացրած ագրեսիա: Այդպիսի տեսակետը լռությամբ են լսում (նաև ընդունում) նույնիսկ այն երկրները, որոնք ժամանակին ընդունել են ԱՀ-ին դատապարտող բանաձևեր՝ Հայաստանի Հանրապետությանը և Լեռնային Ղարաբաղին շրջափակելու, հայերի դեմ բռնություններ կատարելու և ՀՀ-ին զինված հակամարտության մեջ ներքաշելու համար [17]:

Պաշտոնական Բաքվի նշված կեղծարարությունը ժխտող և հստակորեն հակառակն ապացուցող փաստաթղթերից է «Ազատության աջակցման ակտի» 907-րդ ուղղումը [18]: 1992թ. հոկտեմբերի 24-ին ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը ստորագրեց այսպես կոչված **«Ազատության աջակցման ակտը»** [19], որն ուղղված էր նորանկախ հետխորհրդային հանրապետություններում ազատ շուկայական տնտեսությունների ու ժողովրդավարական բարեփոխումների աջակցման ամերիկյան ծրագրերի իրականացմանը: Ըստ Ջ. Բուշի. «Այս պատմական օրենսդրությունը սահմանում է մի շարք ծրագրերի իրականացում՝ աջակցելու Ռուսաստանում, Ուկրաինայում, Հայաստանում և նախկին Խորհրդային Միության այլ հանրապետություններում ազատ շուկայական տնտեսություններին ու ժողովրդավարական բարեփոխումներին...» [19]: Փաստորեն, դիվանագիտական ձևակերպումներով՝ նախագահն արտահայտվել է հետխորհրդային երկրների նկատմամբ ԱՄՆ-ի իրականացվելիք քաղաքականության մասին:

Ազատության աջակցման ակտի 9-րդ՝ «Այլ հիմնադրույթներ» գլխի 907-րդ՝ «Ադրբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» հոդվածում նշվում է. **«Այս կամ այլ օրենքով (բացառությամբ սույն ակտի 5-րդ գլխով նախատեսվող աջակցության) Միացյալ Նահանգների աջակցությունը կարող է չապահովվել Ադրբեջանի կառավարությանը՝ մինչև նախագահի կողմից որոշում ընդունելը, Կոնգրեսին զեկուցելը, որ Ադրբեջանի կառավարությունը ձեռնարկում է փաստարկված քայլեր՝ դադարեցնելու Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կիրառվող բոլոր տեսակի շրջափակումները և ուժի կիրառման այլ ագրեսիվ ձևերը»:**

Փաստորեն՝ սույն օրենքի համաձայն, ԱՀ-ն համարվում էր նախկին Խորհրդային Միության միակ երկիրը, որին արգելվում էր Ազատության աջակցման ակտի համաձայն ստանալ ԱՄՆ կառավարության ֆինանսական աջակցությունը: Իսկ դրա հիմնավոր պատճառը, ինչպես հստակորեն նշված է փաստաթղթում. **Ադրբեջանի կողմից Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ իրականացվող շրջափակումներն ու ուժի կիրառման այլ ագրեսիվ ձևերն են:** Այսինքն՝ ԱՄՆ-ը 907 հոդվածը որպես պատժամիջոց էր կիրառում ԱՀ-ի նկատմամբ:

907-րդ բանաձևը կարևոր փաստարկ է պարունակում մեկ այլ առումով ևս: Բանն այն է, որ դրա ընդունմանը մեծապես նպաստել են ԱՄՆ-ի հայկական կազմակերպությունները, որը վկայում է, թե ինչ արդյունքների կարելի է հասնել ճիշտ և նպատակաուղղված աշխատանքի արդյունքում: Ճիշտ է, կարծիք կա, որ բանաձևն առավելապես որպես աշխարհաքաղաքական բնույթի խաղաթուղթ էր՝ թե՛ ԱՄՆ-ի վարչակազմի, թե՛ տարբեր լոբբիստական կազմակերպությունների ձեռքում [12, էջ 24]: Սակայն դրանով ամենևին չի նվազում այդ փաստաթղթի իրավաքաղաքական նշանակությունը: Քաղաքականության, որպես հնարավորինի ու անհնարինի արվեստի ողջ էությունը նրանումն է, որ հնարավորություն է ընձեռում շահերի համատեղմամբ հասնել դիվանագիտական նման հաջողության: Իսկ որ դա դիվանագիտական ու քաղաքական լուրջ հաջողություն էր, վկայում է մեկ այլ փաստարկ. «բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ամերիկյան օգնության հաշվարկով Հայաստանը ներկա դրությամբ այդ օգնության ամենախոշոր ստացողներից մեկն է. երկու տասնամյակում այն կազմել է մոտավորապես $2 մլրդ: ԱՄՆ-ը ամեն տարի նաև Լեռնային Ղարաբաղին է ֆինանսական օգնություն տրամադրում (2011թ. Կոնգրեսը մոտ $10 մլն է հատկացրել) և միակ

պետությունն է աշխարհում (Հայաստանից բացի), որ ուղղակի ֆինանսական օգնություն է տրամադրում Ղարաբաղին» [20, էջ 23-24]:

Հիմնախնդրի կարգավորմանն ուղղված քայլերում փաստաթղթի մասին պետք է մշտապես հիշեցնել, «դեմ տալ» այդ փաստը, հատկապես ԵԱՀԿ ՄԽ ԱՄՆ համանախագահներին:

Այսպիսով, 1991-1992 թթ. Ղարաբաղյան հակամարտության կապակցությամբ ընդունված բանալի փաստաթղթերի վերլուծությունը ցույց են տալիս, որ միջնորդական առաքելությամբ հանդես եկող պետություններն առավելապես շահագրգռված էին տարածաշրջանում սեփական շահերի հետապնդմամբ, շարժառիթ, որը շարունակվում է պահպանվել մեր օրերում:

Մյուս կողմից՝ դրանցում առկա փաստարկները թույլ են տալիս հստակորեն ասելու, որ հիմնազուրկ է տարածված այն տեսակետը, ըստ որի Արևմտյան երկրները ճանաչելով ԽՍՀՄ միութենական հանրապետությունների անկախությունը, միաժամանակ ճանաչել են նրանց սահմանների անձեռնմխելիությունը: Ընդհակառակը, Եվրոպական համայնքը 1991թ. դեկտեմբերի 16-ի Արևելյան Եվրոպայում և Խորհրդային Միության տարածքում նոր պետությունների ճանաչման ուղենիշների հռչակագրով առաջնային է համարել ազգերի ինքնորոշման սկզբունքը:

1992թ. միջազգային հանրության անունից Ղարաբաղյան հակամարտության կարգավորմամբ զբաղվելու լիազորված մարմինը՝ ԵԱՀԽ-ն, մարտի 24-ի նիստում ընդունված փաստաթղթով Լեռնային Ղարաբաղի ընտրված ներկայացուցիչներին ճանաչել է որպես շահագրգիռ կողմ, ովքեր պետք է հրավիրվեին մասնակցելու բանակցություններին, հանգամանք, որի «անտեսումը» դարձել է հակամարտության կարգավորման առաջընթացը կանխարգելող հիմնական պատճառներից մեկը: Իսկ Արևմուտքի առաջնորդողը համարվող ԱՄՆ-ի ընդունած Ազատության աջակցման ակտի 907-րդ՝ «Ադրբեջանին ցուցաբերվող աջակցության սահմանափակում» բանաձևով, ԱՀ-ն հռչակվել է ագրեսոր՝ զրկվելով նախկին խորհրդային երկրներին տրամադրվող ֆինանսական աջակցությունից: Փաստաթղթի կարևորագույն նշանակությունը հակամարտող կողմերից մեկին՝ տվյալ դեպքում Ադրբեջանի Հանարապետության իրական կերպարին տրված իրավաքաղաքական գնահատականն է:

Օգտագործված գրականություն

1. Այս մասին տես՝ Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Եր., 2006, էջ 158:

2. Այս մասին տես՝ Փաշայան Հ., ԼՂՀ-ի ու ԱՀ-ի ձևավորման լեգիտիմությունը ԽՍՀՄ լուծարման համատեքստում, ԱրՊՀ գիտական տեղեկագիր, թիվ 2 (22), Ստեփանակերտ, 2010, էջ 83-87:

3. Տես՝ Тренин Д., Казус Косово, «Pro et Contra», № 5-6, сентябрь-декабрь, М., 2006.

4. Совместное коммюнике о посредничесакой мисии призидента РФ Б. Н. Ельцина и президента Н. А. Назарбаева от 23.09.1991г. Տես՝ ՀՀ-ում ԼՂՀ Մշտական ներկայացուցչության ընթացիկ արխիվ, 1991թ. բանակցային ֆոնդ; *Газ. «Советский Карабах», 26 сентября 1991г.*

5. Золян С., Нагорный Карабах: проблема и конфликт. Ер., 2001.

6. Official Journal of Europian Communities, № C 94/11, 12.9.1988

7. Газ. "Коммунист", 23 ноября 1989г.

8. Գալստյան Խ., Քաղաքական բանակցություններ, տեսություն և պրակտիկա, Եր., 2007:

9. http://207.57.19.226/journal/Vol4/No1/art6.html

10. Պապյան Ա., Հայրենատիրություն, Հայոց պահանջատիրության իրավական հիմունքները և հարակից հարցեր, Եր., 2012:

11. *Իրանի միջնորդական առաքելության և նրա շարժառիթների մասին տես՝* Абдолла Рамезанзаде, Рол Ирана как посредника в Нагормо-карабахским кризисе, Спорные границы на Кавказе, М., 1996.

12. Այս մասին մանրամասն տես՝ Բալայան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Եր., 2004:

13.http://www.osce.org/documents/mcs./1992/03/4150_ru.pdf. Официальный сайт ОБСЕ:
14.«Օղակ» ռազմագործողության մասին տես՝ Кривопусков В.. Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Изд. второе, М., 2007.
15.1919թ. օգոստոսի 22-ի ժամանակավոր համաձայնագիրը հենց այդպիսի ճնշումների արդյունքում է ընդունվել: Տես՝ Нагорный Карабах в 1918-1923 гг., док. № 214. Ер., 1992.
16.Այդ մասին տես՝ Աբրահամյան Շ., Ազգային քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության տարիներին, Եր., 2003:
*17.*Այդպիսի փաստաթղթերից է 1993թ. հունվարի 21-ին Եվրախորհրդարանի կողմից ընդունված թիվ 42/165 բանաձևը՝ *Official Journal of Europian Communities, No C 42/165. (f) REZOLUTION B3-0049/93*
18.Freedom Support Act (Enrolled as Agreed to or Passed by Both House and Senate), Titel IX-Other Provisions, http://thomas.loc.gov/cgi-bin/query/D?c102:5:./temp/c102YegHO1
19.Statement on Signing the Freedom Support Act, October 24, 1992, http://www.presidency.ucsb.edu/ws/?pid=21658
20.Մինասյան Ս., ՀՀ և ԱՄՆ փոխհարաբերությունների դինամիկան և միտումները. հայեցակարգային վերլուծություն, «ԳԼՈԲՈՒՍ էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն», թիվ 4 (16), Եր., 2011թ.:

Տեղեկություններ հեղինակի մասին.
Հրայր Փաշայան - Արցախի Պետական Համալսարանի փիլիսոփայության և քաղաքագիտության ամբիոնի դասախոս, քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ
E-mail: hrayr.pashayan@mail.ru
Լիանա Բալայան - Ստեփանակերտի համար 2 հիմնական դպրոցի ուսուցչուհի,

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ա.Փ.Ենգոյանը:

УДК 94(044:32) Всеобщая история

ОТНОШЕНИЕ ФРАНЦУЗСКОГО ПАРЛАМЕНТА К БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКЕ НАПОЛЕОНА III

Валерий АВАНЕСЯН

Ключевые слова *– сирийская экспедиция, марониты, друзы, сенат, законодательный корпус, политические силы, избиение христиан, международная конференция*

Բանալի բառեր *- սիրիական արշավանք, մարոնիտներ, դրուզներ, սենատ, օրենսդիր կորպուս, քաղաքական ուժեր, քրիստոնյաների հալածում, միջազգային գիտաժողով*

Keywords *– the Syrian expedition, Maronites, Druzes, the senate, the legislative case, political forces, beating of Christians, the International Conference*

V. Avanesyan

THE ATTITUDE OF THE FRENCH PARLIAMENT TO THE POLICY OF NAPOLEON III IN THE MIDDLE EAST

On the basis of archival sources the author of the article made attempts to analyse the position of political forces of France on the Syrian expedition as a result of which the French troops dispatched to Mountain Lebanon should prevent further slaughter of Maronite Christians by the Druze Muslims incited by Ottoman Turkey.

As the financial support of similar expeditions need to be approved by the legislature, the author studied speeches of leaders of the main political fractions represented in the French parliament.

Վ. Ավանեսյան

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆԱՊՈԼԵՈՆ III ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Սույն հոդվածի հեղինակը արխիվային աղբյուրների հիման վրա փորձ է կատարել ուսումնասիրել Ֆրանսիայի քաղաքական ուժերի դիրքորոշումը սիրիական արշավանքի ժամանակ, որի արդյունքում ֆրանսիական զորքերի ուղարկվել են Լեռնային Լիբանան, որ կանխարգեն քրիստոնյա մարոնիտների հետագա ջարդերը Օսմանյան Թուրքիայից հրահրվող մահմեդականներ-դրուզների կողմից:

Քանի որ նման արշավների ֆինանսավորումը հաստատվում է օրենսդիր մարմնի կողմից, հեղինակը ուսումնասիրել է Ֆրանսիայի խորհրդարանի հիմնական քաղաքական խմբակցությունների առաջնորդների ելույթները:

Автор данной статьи на основе архивных источников попытался проанализировать позицию политических сил Франции по сирийской экспедиции, в результате которой французские войска, отправленные в Горный Ливан, должны были предотвратить дальнейшую резню христиан-маронитов со стороны мусульман-друзов, подстрекаемых Османской Турцией.

Поскольку финансирование подобных экспедиций одобряет законодательный орган, автор изучил выступления лидеров основных политических фракций, представленных во Французском парламенте.

Будучи докторантом в Институте всеобщей истории РАН (Российской академии наук) приходилось также работать в АВПРИ (Архив внешней политики Российской империи) с целью исследовать те материалы, которые относятся к теме диссертации и которые хранятся в архиве. В отдельных случаях, хотя это и происходит редко, дипломатические папки уникальны. Уникальность проявляется в том, что они (папки) не использованы исследователями до поры и до времени. А время может наступить и через 100-200 лет. Дело в том, что в архивах существует «железное» правило – любую использованную папку архивариус отмечает в специальном листе, и каждый последующий исследователь знает предыдущего по тому использованному листу в не зависимости от того, когда это произошло в XVIII или XIX-XX веках. Во время работы над кандидатской и докторской диссертациями, мне удалось использовать две такие папки с участием двух французских послов в России - маркиз Кастельбажак и Монтебло, которые сохранили все депеши, полученные от французских министров иностранных дел и депеши, отправленные этими послами в адрес тех же министров.

По сирийским событиям 1860-1861 гг. «Папка Монтебло» содержала копии всех депеш министра иностранных дел Франции чрезвычайному и полномочному послу в России Монтебло, и эти дипломатические документы еще не изучались исследователями.

Цель статьи – проследить позицию политических сил, представленных во французском парламенте по сирийской экспедиции на начальном этапе ее проведения. Автором использованы: архивные материалы, мемуары основных действующих лиц того периода, публицистическая литература, пресса, опубликованные дипломатические документы по изучаемой тематике и литература на французском языке.

Дипломатические депеши интересны не только с точки зрения определения позиции французского правительства, но и в плане взаимодействия двух кабинетов – французского и российского – в решении этой проблемы. Туневель, министр иностранных дел Франции, сообщая Монтебло, послу Наполеона III в России позицию кабинета, предлагал через него координировать совместные действия не только на конференциях по этому вопросу, но и предписывал действовать сообща послам в Константинополе и генеральным консулам в Дамаске. Первые дипломатические депеши, посвященные ливанским событиям, официальные сообщения в «Moniteur » и отклики депутатов на эти события в законодательном корпусе почти совпадали по времени. Уже 7 июля 1860г. Тувенель сообщил Монтебло об этих событиях[1].

Обратим внимание на основные моменты депеши. Прежде всего, в ней говорится, что факты могут иметь «самый досадный отклик» не только во всей Турции, но и в Европе. В депеше выражалось также серьезное опасение, что подобные зверства могли перекинуться на Дамаск, если не будут приняты эффективные меры. Более того, была угроза их распространения на всю Малую Азию, особенно в те районы, где христиане были более малочисленны, чем мусульмане. Французское правительство считало своевременным увеличить морские силы на побережье Сирии. Турции следовало принять эффективные меры, чтобы подавить эти зверства в горных районах Ливана. Кроме того, Франции было необходимо восстановить справедливость в части возмещения ущерба пострадавшим. Наконец, следовало выяснить причины беспорядков и принять все необходимые меры, чтобы предупредить их повторение в будущем. Но самое главное заключалось в том, что конфликт показал недостаточную эффективность административного устройства Ливана, введенного по соглашению между пятью державами Европы и Портой в 1842г.[2]

Такова была позиция французского правительства и первые шаги его представителей в Сирии и Ливане на начальном этапе событий.

В Законодательном корпусе во время обсуждения бюджета на следующий финансовый год представитель парламентского большинства депутат Морен поднял ливанскую проблему, охарактеризовав ее как часть «вечного восточного вопроса». Он подчеркнул, что «избивают христианских собратьев», и невозможно закрывать глаза на подобное обстоятельство, так как именно на востоке «скапливаются будущие тучи», которые могут иметь «страшные последствия». Однако депутат считал, что существовало два успокаивающих фактора: позиция Европы и непосредственно французского правительства. В международной политике стала преобладать практика, при которой в случае возникновения крупных проблем, способных поколебать европейское равновесие, крупные европейские державы решали их сообща. Подтверждение тому же была Крымская война. Европа одобрила итальянскую кампанию Франции, так как иначе было бы невозможно освободиться от исключительного влияния Австрии и Италии. Другой фактор безопасности проистекал из позиции,

---

[1] К депеше прилагались два письма (от 17 и 21 июня) Бентивоглио, французского консула в Бейруте, и выдержка из доклада Лапуса (от 19 июня), управляющего французкским консульством в Дамаске. Доклад и два письма адресованы Тувенелю. Кроме того, было приложено коллективное письмо генеральных консулов Англии, Австрии, Пруссии, России и Франции Хуршид-паше, наместнику Сирии и Ливана, а также протокол их беседы. Бентивоглио так описывал трагические события, произошедшие в Ливане и, в частности, в селениях Хасбайя и Рашая, где были убиты 1500 христиан-маронитов. Турецкий гарнизон, дислоцированный в этом районе, не только не помешал злодеяниям, но и выдал христиан из врагам. В Дамаске ситуация не менее критическая. Наблюдалось сильное брожение в городе. Власть деморализована. Ее ненавидят не только христиане, но и турки. Мусульмане привлекли на свою сторону арабов-бедуинов, обещая им грабеж христианских сел. Французский консул, пытаясь приостановить дальнейшее развитие событий, встретился с противоборствующими сторонами, акцентируя свое внимание на арабском факторе. Он указывал, что арабы по-прежнему были враждебно настроены против турок. По возвращении французский консул собрал у дуайена консульский корпус и сообщил о своих беседах. Он заявил о необходимости спасти важный стратегический пункт Захле, населенный христианами, и выступить с коллективным демаршем вместе с местной властью. Такова краткая история печальных событий в изложении французского консула в Бейруте. См.: Бейрут 17 июня 1860. АВПРИ, ф. Канцелярия, д. 69, лл. 414-416.

[2] Тувенель – Монтебло. 7 июля 1860г. АВПРИ, ф. Канцелярия, д.69, л. 412-413.

занимаемой французским правительством при возникновении крупных проблем. Существовало два подхода: сделать вид, что этих проблем не существует, или же понять, что проблема существует и приступить к ее решению. Последнего, по мнению депутата, придерживался император. Восточная кампания 1859г. дали тому подтверждение[1].

На заседании Законодательного корпуса от 12 июля 1860г. генерал Лебретон от имени «многочисленных коллег» попросил комиссаров правительства предоставить сведения по сирийским событиям для формирования мнения депутатов по этой проблеме и чтобы сообщать о мерах, принятых французским правительством для того, чтобы остановить зверства в отношении христиан, предупредить их повторение в будущем и наказать за эти злодеяния «мерзких подстрекателей». Лебретон знал о первых шагах французского правительства и, в частности, об отправке кораблей на побережье Сирии и о том, что морские силы Франции приложили усилия для спасения «несчастного народа», а их корабли стали убежищем для беглецов. Но эта защита, по мнению генерала, не распространилась на внутренние районы. Лебретон напомнил депутатам о том, что в 1827г. по всей Европе прокатилась волна возмущения относительно новости о зверствах мусульман в Греции, куда Франция направила свой флот. В сложившейся ситуации на Франции лежит более священная обязанность, поскольку освобождение христиан на Востоке было обещанной платой за кровь французских солдат, пролитую в Крыму. Депутат, от имени своих коллег - «славных манов»[2], потребовал от правительства мести и защиты несчастных народов, которые протянули Франции «умоляющие руки»[3]. Барош, президент Государственного Совета и комиссар правительства, отвечая Лебретону, косвенно выделил политические и человеческие мотивы в позиции французского правительства. С точки зрения политики оно придерживалось осторожности, поскольку официально не располагало достаточными фактами.

Однако позиция большинства депутатов по данной проблеме уже определилась и сводилась к следующему: Франция, исходя из традиций, должна была помочь христианам Ливана. Это нужно было сделать посредством ее активного вмешательства, а также при содействии европейских держав.

Что касается « Moniteur», выделим два направления в его публикациях относительно сирийских событий. Прежде всего – это официальные сообщения из Константинополя, Бейрута и Дамаска. Газета публиковала также список[4] лиц, которые вносили денежные средства для помощи, пострадавшим от зверств и погромов. Список открыли император (25 тыс.фр.), императрица (10 тыс.фр.), принц Наполеон (2 тыс.фр.), министры Наполеона III (по 1 тыс.фр.), другие известные деятели и рядовые граждане[5].

Теперь обратимся к дипломатическим депешам, пришедшим до открытия сессий Законодательного корпуса и Сената. Кровавые события развивались стремительно, и это вызвало сильное беспокойство у французского правительства. Консулы писали о «преступной небрежности» турецких войск. Вместо защиты мирного населения, чего требовали представители европейских держав, они принимали участие в событиях на стороне друзов. В этой ситуации Тувенель полагал, что Турция должна желать поддержки европейских держав, поскольку она способствовала бы установлению нового порядка местной власти. Кроме того, следовало учредить комиссию из представителей европейских держав и Порты, которая должна была выехать в Ливан с целью: 1. Выяснить обстоятельства, вызвавшие конфликт; 2. Определить меру ответственности главарей восстания и местных властей; 3. Определить размеры репараций жертвам беспорядков; 4. Наконец, представить своим правительствам меры, которые могут быть приняты с целью предупреждения новых бедствий. Тувенель выделил как главную цель французской дипломатии новое устройство

[1] Moniteur. 12 juillet 1860. La session du Corps législatif. 10 juillet 1860. Выступление Морена. Отметим, что эта сессия несколько раз продлевалась, на этот раз до 21 июля.

[2] Маны – обоготворенные души умерших.

[3] Moniteur. 14 juillet 1860. La session du Corps législatif. 12 juillet 1860. Выступление Лебретона.

[4] Иногда списки (их было более 40) занимали целую газетную полосу. Примечательно, что денежная помощь христианам Сирии была получена также из Алжира в сумме 2685фр. 30 сантимов и, в частности, из провинции Константина, где деньги внесли как европейцы, так и местные жители. См.: Moniteur. 8 novembre 1860.

[5] Списки публиковались в «Moniteur» в августе-декабре 1860г. и даже первые месяцы 1861г. Под председательством генерального консула Франции в Бейруте был образован Комитет по распределению помощи, присланной из Франции. Там, где дислоцировались французские отряды, создавались филиалы этого комитета. См.: Moniteur. 8 novembre 1860.

Ливана. От этой традиции Франция не желала отступать и обратилась к европейским державам со своими предложениями по этому вопросу. Однако, беря на себя инициативу, французская дипломатия руководствовалась не только своими частными интересами. Франция желала в интересах мира на Востоке восстановить спокойствие и порядок в местах восстаний, продолжение которых могло иметь опасные последствия. В тот момент, когда по предложению французского правительства, было принято решение о согласованных действиях в отношении Ливана, события в Дамаске приняли угрожающий характер. Тувенель писал; « … трудно себе представить, что может произойти с христианами, если кабинеты не примут меры, способные остановить развитие событий[1]». Отмечалось, что Порта сама встревожена этим фактом. Об этом говорило послание султана французскому императору[2]. Однако, Франция была озабочена тем, что ограниченные средства Турции не позволяют ей выполнять это намерение[3]. Без помощи европейских держав Турции могла не справиться с этой задачей. Франция и другие европейские державы отдали приказ командующим своих эскадр поступить в распоряжение консулов и выполнять их инструкции. Тувенель также сообщил о согласии английского правительства присоединиться к комиссии, которая отправится в Сирию для выяснения причин событий. Исходя из пожеланий Рассела, министра иностранных дел Великобритании, он подготовил соглашение, которое предусматривало отправку французских войск в Сирию без промедления, и оговорил эффективное сотрудничество держав в этом деле, вместе с депешей Монтебло получил и проект соглашения, выработанный Тувенелем, состоящий из преамбулы и шести статей. Поскольку это соглашение станет основой для экспедиции, нам кажется целесообразным дать его целиком.

«Султан, желая остановить кровопролитие, свидетельствует о своей твердой решимости обеспечить порядок и мир среди народов, находящихся под его суверенитетом, а их высочества Великобритании, Франции, Австрии, Пруссии, России, желая содействовать этому, решили договориться о мерах, способных реализовать эти намерения. С этой целью их высочества назвали чрезвычайных посланников.

Ст.1. Корпус европейских войск, состоящих из (цифра будет определена позже – В.А.) человек будет непосредственно направлен в Сирию, чтобы способствовать восстановлению спокойствия.

Ст.2. Император французов соглашается предоставить войска, участие которых оговорено предшествующей статьей.

Ст.3. Командующий этих войск, исходя из обстоятельств, примет все необходимые меры с тем, чтобы выполнить миссию. Ему позволено договориться с военными властями Порты о размещении и использовании войск, которые Порта соберет в Сирии.

Ст.4. Их высочества Австрии, Великобритании, Пруссии, России обещают способствовать общему успеху, поддерживая на берегах Сирии морские силы, и высадят войска, если в этом возникнет необходимость.

Ст.5. Высокие договаривающиеся стороны резервируют за собой право действовать по обстоятельствам. Они согласны также между собой в том, что по достижении цели европейские войска могут быть отозваны.

Ст.6. Транспортные издержки и содержание войск, высаженных в Сирии, Порта берет на себя[4].

Затем Тувенель сообщил послу о тревожных шагах английского правительства, в частности, о его отказе принять предложение Франции о посылке европейского экспедиционного корпуса в Бейрут, мотивируя его тем, что якобы между друзами и маронитами заключен мир[5].В ответ на это Тувенель обратился с письмом к Персиньи, послу Франции в Лондоне, в котором выразил сожаление, что «согласие между Францией и Англией по посылке войск в Сирию поставлено под сомнение». Более того, французский кабинет не обладает информацией о заключении мира между друзами и

[1] Тувенель-Мотнебло. 18 июля 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, л.448.

[2] Копия письма была послана Монтебло. Там же . Л.447.

[3] Речь идет о финансовом кризисе: в одной из депеш министру иностранных дел Лавалетт, посол Франции в Турции писал о тяжелом финансовом положении Османской империи. Для заполнения дефицита был необходим заем в 25 млн.ф.ст. и другой – в 250 млн.ф.ст. (Лавалетт – Тувенелю. 19 июля 1860. АВПРИ, ф.Канцелярия, Д.69, лл.381-383);в другой депеше Лавалетт также писал о плачевном состоянии финансов, которое могло привести к серьезным политическим последствиям. Лавалетт передал содержание беседы с Фауд-пашой, которая состоялась 3 июля 1860г., т.е. до отъезда в Бейрут. Министр полагал, что Порте необходим заем в 40 млн. Франков. (Там же. Лл.448-450).

[4] Тувенель – Монтебло. 21 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.464-465.

[5] Тувенель – Монтебло. 25 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, л.452.

маронитами. Французский министр попросил англичан действовать в Сирии сообща. Но если они не в состоянии этого сделать, пусть сообщат о своих намерениях и инициативах. Французский кабинет готов рассмотреть и принять их идеи, если они «более практичны, чем наши»[1]. После начавшихся событий в Сирии английский кабинет поручил своему послу Коулею сообщить министру иностранных дел Франции, что его правительство согласно заключить и подписать соглашение в Константинополе[2].

В ответ французский министр отметил, что такое промедление будет гибельным для всех народов.

Произошли изменения и в позиции Российского кабинета. Россия настаивала на включении в проект соглашения новой секретной статьи следующего содержания: «Державы обязываются заботиться, с согласия Порты и в соответствии с ее обещаниями, об улучшении положения христиан во всех провинциях Оттоманской империи и о том, чтобы серьезными административными мерами предотвратить злоупотребления, которые привели к современной ситуации». Тувенель считал, что включение такой статьи вызовет дополнительные трудности и встретит противодействие со стороны Англии и Турции и думал, что невозможно получить все выгоды от одного соглашения. Лучше, отмечал он, позволить состояться одному акту, а при необходимости в последующем распространить его и на другие провинции Оттоманской империи. Министр подчеркивал, что между французским и русским кабинетами не было никаких разногласий по этому вопросу. Но французское правительство считало, что сирийский случай следовало рассматривать как отправную точку для решения в будущем общих вопросов и в особенности для улучшения судьбы христиан и их эффективной защиты против «вылазок мусульманских фанатиков» «Я – указывал Тувенель, - убежден, что державы будут призваны сообща заняться этой проблемой, затрагивающее одновременно цивилизацию и политику»[3]. Он считал, что следовало создать прецедент и гарантировать его применение в будущем[4]. В беседе с английским послом Коулеем Тувенель порекомендовал не игнорировать предложение России и включить его в протокол. Инструкция идентичного содержания была послана Персиньи[5].

26 и 30 июля в министерстве иностранных дел Франции состоялось совещание с участием чрезвычайных полномочных представителей Австрии, Великобритании, Пруссии, России, Франции, Турции (Ахмер-Велик-эффенди) для рассмотрения проекта конвенции[6]. Тем временем ситуация ухудшалась не только в Сирии, но и в Константинополе. Тувенель в депеше от 22 августа прилагает 2 письма Лавалетта из Константинополя, датированные 4 и 8 августа. Лавалетт сообщал: « …ситуация в этой несчастной стране далека от улучшения. Новые грабежи имели место в Баальбеке, Сирия на грани нищеты и беспокойства, посылка Фуада-паши в Сирию навряд ли приведет к положительному результату, и первые акты доказывают, что положение правительства становится с каждым днем все более шатким и слабым, финансовая ситуация тяжелая»[7]. Лавалетт сообщал о предложении английского посла Бульвера собраться и обсудить положение в Константинополе. Тот считал целесообразным «подписать коллективный документ-прокламацию с целью успокоения тревоги, а послам держав сохранять умеренную позицию во избежание любого неожиданного демарша»[8]. В ответ на это Лавалетт предлагал выработать инструкции, ознакомив с ними турецкое правтиельство. Говоря о положении в Константинополе, Лавалетт писал: «Может ли Порта обеспечить безопасность громадной столицы, не имея возможности заплатить армии и служащим? Причем следует иметь ввиду, что три четверти мусульманского населения живут исключительно за счет денег правительства, и это наряду с существующей кастовой и религиозной ненавистью, которая в данный момент является более опасной, чем когда либо. Нужно иметь в виду слабость и непопулярность суверена и его министров». Называя ситуацию «беспокойной и сложной», Лавалетт считает, что кабинеты держав должны «немедленно договориться»[9] об оказании финансовой помощи Турции.

В соответствии с протоколом от 3 августа Франция подписала конвенцию относительно участия европейских войск в событиях Сирии. Ратификация этого акта должна была быть завершена в

[1] Тувенель – Персиньи. 23 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.456-458.
[2] Тувенель – Монтебло. 25 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, л.452.
[3] Тувенель – Монтебло. 1 августа 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.468-469.
[4] Там же.
[5] Тувенель – Персиньи. 31 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.470-471.
[6] Резюме конференции. Тувенель – Монтебло. 1 августа 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.472-475.
[7] Лавалетт – Тувенелю 8 августа 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, лл. 510-511.
[8] Лавалетт – Тувенелю 8 августа 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, лл. 512.
[9] Там же.

течение пяти недель[1]. Вместе с тем державы согласились учредить комиссию, которая должна была работать на месте событий. Тувенель считал, что деятельность комиссии могда быть плодотворной лишь в том случае, если ее представители получили бы одинаковые инструкции от правительств. В результате французская дипломатия добилась заключения конвенции об отправке французского экспедиционного корпуса в Сирию под эгидой европейского мандата и учреждения международной комиссии для изменения административного устройства Горного Ливана. Принятые решения вызвали удовлетворение французского правительства и оно надеялось, что присутствие войск в Сирии произведет благотворное влияние[2]. Что касалось наказания виновных, то участие комиссаров, по мнению Тувенеля, было необходимым и полностью обоснованным. Кроме того, державы должны были содействовать Порте в определении размеров репараций[3]. Однако турецкие комиссары не спешили выполнять решения, принятые с общего согласия держав и согласованные с Фуад-пашой. Более того, самые влиятельные руководители друзов, особенно скомпроментировавшие себя во время последних событий, беспрепятственно бежали и нашли убежище в турецких полках. А те, которые остались в горном Ливане и там, где не было иностранных войск, продолжали угрожать жизни христиан. Об этом сообщил французский генерал Бофор консулу в Ливане Бегляру. Последний в свою очередь информировал министра иностранных дел. Тувенель опасался, что если состояние дезорганизации и анархии в Горном Ливане продолжится, то беспорядки, вызванные сирийскими событиями в других частях Оттоманской империи, не успокоятся. Более того, они распространятся дальше, если увидят, что зло не подавлялось Портой, которая действовала с помощью Европы. «Это доказательство беспомощности может иметь самые гибельные последствия», - считал Тувенель[4]. Европейские кабинеты должны изменить существующее положение вещей, но в рамках содействия, оговоренных конференцией. Франция считает, что она должна брать на себя обязанностей больше, чем другие стороны. Она будет придерживаться обещанной цифры – 6.000человек. Но если обстоятельства вынудят ее увеличить это количество, то она сделает это только с согласия держав и с внесением соответствующих изменений в ст.2 конвенции. Тувенель поручает Монтебло привлечь внимание русского кабинета к этой проблеме[5].

Французское правительство пыталось воздействовать на европейские кабинеты, чтобы усилить эффективность действий европейских войск, дислоцированных в Сирии и Ливане. Тувенель поручил временному поверенному Шаторенару переговорить по этому вопросу с государственным секретарем Расселом[6]. Временный поверенный сообщил Расселу о неудачных попытках Фауд-паши умиротворить друзов и о препятствиях, чинимых им экспедиционному корпусу. На это Рассел заметил, что вся информация, которую дает временный поверенный, соответствует действительности и что его посол в Бейруте также говорит об этом[7]. Французское правительство предложило английскому задействовать рычаги, оговоренные 2-ой статьей конвенции.

Новая экспедиция под командованием Бофора привела к положительным результатам. Министр пишет: «Мы добились бы результатов более полных и удовлетворительных, если бы содействие турок было реальнее и энергичнее»[8]. В данной ситуации французское правительство полагало, что нет необходимости увеличивать численность экспедиционного корпуса, поскольку, поскольку для завершения миссии этих сил было достаточно. Но проблема устройства Горного Ливана очень его беспокоила, поэтому правительство намеревалось в обязательном порядке перед отзывом войск договориться об учреждениях, которые были бы в состоянии обеспечить мир в Ливане. В силу этих причин Франция выступила против продолжения оккупации сверх даты, определенной конвенцией от 5 сентября 1860г.

Литература

1. Тувенель – Монтебло. 7 июля 1860г. АВПРИ, ф. Канцелярия, д.69, л. 412-413.
2. Moniteur. 12 juillet 1860. La session du Corps législatif. 10 juillet 1860. Выступление Морена.

Отметим, что эта сессия несколько раз продлевалась, на этот раз до 21 июля.

[1] Тувенель – Монтебло. 5 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.5.
[2] Тувенель – Монтебло. 5 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.7.
[3] Тувенель – Монтебло. 19 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.23.
[4] Тувенель – Монтебло. 30 октября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, лл.80-81.
[5] Там же.
[6] Шаторенар – Монтебло 15 декабря 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.75, л.145.
[7] Там же.
[8] Тувенель – Монтебло. 15 декабря 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.145.

3. Moniteur. 14 juillet 1860. La session du Corps législatif. 12 juillet 1860. Выступление Лебретона.
4. Тувенель-Мотнебло. 18 июля 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, л.448.
5. Копия письма была послана Монтебло. Там же . Л.447.
6. Тувенель – Монтебло. 21 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.464-465.
7. Тувенель – Монтебло. 25 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, л.452.
8. Тувенель – Персиньи. 23 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.456-458.
9. Тувенель – Монтебло. 25 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, л.452.
10. Тувенель – Монтебло. 1 августа 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.468-469.
11. Тувенель – Персиньи. 31 июля 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.470-471.
12. Резюме конференции. Тувенель – Монтебло. 1 августа 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.69, лл.472-475.
13. Лавалетт – Тувенелю 8 августа 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, лл. 510-511.
14. Лавалетт – Тувенелю 8 августа 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.69, лл. 512.
15. Тувенель – Монтебло. 5 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.5.
16. Тувенель – Монтебло. 5 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.7.
17. Тувенель – Монтебло. 19 сентября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.23.
18. Тувенель – Монтебло. 30 октября 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, лл.80-81.
19. Шаторенар – Монтебло 15 декабря 1860. АВПРИ, ф. Канцелярия, д.75, л.145.
20. Тувенель – Монтебло. 15 декабря 1860г.АВПРИ, ф.Канцелярия, д.75, л.145.

Сведения об авторе:
Валерий Аванесян – д.и.н, кафедра истории АрГУ.
Статья рекомендована к печати членом редакционной коллегии, д.и.н. В. Р. Балаяном.

ՀՏԴ 94(479.25:82-94) Պատմություն

ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Նուսե ՍԱՐՈՒՄՅԱՆ

Բանալի բառեր: *Մանանաղ, թոնդրակեցիներ, սոցիալական շարժում, աղանդավորներ, Սմբատ Զարեհավանցի, աղանդավորական համայնք, Թուլայլ գավառ, Տևրիկ, պավլիկյան շարժում, հայոց պետականություն, հայ եկեղեցի, պատմագրություն:*

Key Words: *Mananagh, the Tondrakyans, sectants, Smbat Zarehavantsi, village Tondrak, sectarian community, province Tulayl, Tevrik, Pavlikyan movement, Armenian statehood, Armenian Church, Historiography*

Ключевые слова: *Мананах, тондракийцы, социальное движение,сектанты, Смбат Зареаванци, деревня Тондрак, деноминационное сообщество, Тулайлский район,Теврик, павликианское движение,армянская государственность,армянская церковь,историография.*

Н.Сарумян

ТОНДРАКИЙСКОЕ ДВИЖЕНИЕ И СМБАТ ЗАРЕАВАНЦИ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

В статье предпринята попытка интерпретировать жизнь армянского народа во время тондракийского - сектантского движения в 9-11-го веков,.

В статье освешается жизнь и деятельность основателя тондракийского движения Смбата Зареаванци. Показана так же, что источники о доктринах и идеях тондракийского учения сообщают скудную информацию- в основном отмечают отказывающие взгляды для принятия процедуры и церковной власти , и которые наполнены матом и оскорбительными словами.

В статье ревербрируется доктрина, идеи и роль тондракийского движения в армянской историографии.

В армянскай историографии попытались показать катастрофические и разрушительные удары нанесенные тондракийском движением национальному объединению и армянской государственности. Такие удары сопровождаются по всей исторической жизни армянского народа, от чего и сегодня не отрекаетя свободалюбивый народ.

N.Sarumyan

ABSTRACT TONDRAKYAN MOVEMENT AND SMBAT ZAREHAVANTSI IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

The article analyses the Tondrakyan movement of 9-11 centuries in Armenia.

The article sheds light on the founder of the Tondrakyan movement Smbat Zarehavantsi and his activity. It is mentioned that historical sources provide scant detail about the Tondrakyan movement and their ideas, mostly stating that the Tondrakyans denied the church rites and its authority with profanities and curses.

The article also reflects the Tondrakyan movement in the Armenian Historiography.

The Armenian Histriography attempted to show the disruptive and disastrous impact of the Tondrakyan movement on the national unity of Armenians and the Armenian statehood. This disruptive impact accompanied the Armenian during the whole course of history up to the present time.

Հոդվածում փորձ է արվում մեկնաբանելու հայ ժողովրդի կյանքում 9-11-րդ դարերում ծավալված աղանդավորական՝ թոնդրակյան շարժումը:

Հոդվածում լուսաբանվում է նաև թոնդրակյան շարժման հիմնադիր Սմբատ Զարեհավանցու կյանքն ու գործունեությունը:Նշվում է, որ թոնդրակեցիների ուսմունքի և գաղափարների մասին աղբյուրները սուղ տեղեկություններ են հաղորդում. հիմնականում նշում են եկեղեցու հեղինակությունն ու կարգերը մերժող հայացքները և ողողված են հայհոյանքներով ու անարգալից խոսքերով:

Հոդվածում անդրադարձ է կատարվում նաև հայ պատմագրության մեջ թոնդրակյան շարժման, թոնդրակեցիների ուսմունքի և գաղափարների դերին:

Հայ պատմագրության մեջ փորձվում էր ցույց տալ ազգային համախմբմանն ու հայոց պետականությանը թոնդրակեցիների հասցրած աղետալի և կործանարար հարվածները: Նմանատիպ հարվածները ուղեկցվում են հայ ժողովրդի ողջ պատմական կյանքում, որից զերծ չէ նաև մերօրյա ազատագրական մաքառումներով լեցուն կյանքը:

Հայ ժողովրդի կյանքում աղանդավորական շարժումները ծավալվեցին դեռևս 4-5-րդ դարերում: 9-11-րդ դարերում ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով գյուղացիների շահագործումն ուժեղացավ: Նրանց մի մասն ամրացվեց հողին, զրկվեց անձնական ազատությունից: Ծանրացավ հարկային բեռը: Անապատականների, մծղնեականների, բորբորիտների, պավլիկյանների սոցիալական շարժումները և ընդհանրապես սոցիալական պայքարը, որը հակաարաբական ազատագրական ապստամբությունների շրջանում մղվել էր երկրորդ պլան, կրկին աշխուժացավ՝ այս անգամ արդեն պատմությանը հայտնի դառնալով թոնդրակյան շարժում անունով:

Այսինքն, սոցիալական շարժումները հայոց պետականության առկայության, նրա ուժի և վերելքի շրջանում որոշ չափով և իմաստով կաշկանդվել էին, իսկ երկրի թուլության և պետականության անկման շրջանում՝ աշխուժացել:

Բագրատունիների Հայոց թագավորության իշխանությունները և եկեղեցին ստիպված էին երկարատև անդադրում պայքար մղել աղանդավորական նոր՝ թոնդրակյան շարժման դեմ:

Թոնդրակեցիները քրիստոնյա աղանդավորներ էին Հայաստանում և Բյուզանդիայում IX–XI դարերում:

Եթե պավլիկյաններին հովանավորում էին արաբները, ապա թոնդրակեցիներին՝ բյուզանդացիներն ու սելջուկները[1]: Թոնդրակյան շարժումը հրահրվում էր դրսից՝ հայ եկեղեցին ու հայոց պետականությունը ներսից քայքայելու քաղաքական նկրտումներով: Նույնը կարելի է ասել մերօրյա աղանդավորական շարժումների մասին:

Բագրատունյաց թագավորության 9-11-րդ դարերում Հայաստանի գրեթե բոլոր քաղաքներում, նահանգներում ու գավառներում, գյուղերում ու ավաններում արագորեն տարածվող թոնդրակյան շարժումը խարխլեց հայ եկեղեցու և պետականության հիմքերը, պառակտեց մեր ազգային միասնականությունը՝ թշնամական շրջափակման մեջ հայտնված հայությանը կանգնեցնելով նոր, անլուծելի խնդիրների առջև:

Գրեթե բոլոր բնակավայրերում ստեղծված թոնդրակյան աղանդավորական համայնքները միջնադարում ավելի ավերիչ ու կործանարար էին, քան տարերային ցանկացած աղետ կամ թշնամական որևէ հարձակում Հայաստանի վրա:

Երկրում ստեղծվել էր բարդ և ճգնաժամային իրավիճակ: Մի կողմից՝ սելջուկ-թուրքական հրոսակներն էին արշավում Հայաստանի վրա, մյուս կողմից՝ «բարեկամ» ձևացող բյուզանդացիներն էին դավադրաբար փորձում տիրել Հայաստանին, իսկ ներսից էլ թոնդրակեցիներն էին խարխլում երկիրը:

Թոնդրակյան շարժման հիմնադիր Սմբատ Զարեհավանցին ծնվել էր Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղում[2]: Ապրել և գործել է 10-րդ դարի առաջին կեսին: Պատմագիտության մեջ գերիշխող է այն կարծիքը, որ Սմբատ Զարեհավանցին ասպարեզ է իջել 830-ական թվականներին՝ Հովհաննես Դ Ովայեցի կաթողիկոսի[3](833-855) և Սմբատ Բագրատունի սպարապետի օրոք(822-855)[1]:

---

[1]Նորօրյա աղանդավորներն էլ ունեն իրենց օտարերկրյա սնուցիչները, որոնք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում մեր պատգամավորների անպատասխանատու և անկշռադատ, գուցե և ոմանց շահախնդիր քվեարկությամբ ճանաչվեցին պետականորեն:

[2] Տես՝ ՀԺՊ, ԳԱԱ հրատ., Երևան,1976, հ.3, էջ 280:

[3] Տես՝ Հովհաննես Դ Օվայեցու ծննդյան թիվն անհայտ է: Ծնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք գավառի Ովայք գյուղում:Ամփոփվել է 855 թվականին Սողք գավառի Մաքենացոց միաբանության գերեզմանատանը: Ամենայն Հայոց կաթողիկոս է կարգվել 833 թվականից: Հաջորդել է Դավիթ Բ Կակաղեցուն: Հայոց իշխանաց իշխան Բագրատ Բագրատունին, տեղի տալով զրպարտություններին, մանավանդ որ իր կամքին հակառակ էր Հովհաննես Դ Ովայեցին կաթողիկոս ընտրվել, հրովարտակով պատվիրել է «բոլորին հեռու մնալ հովվապետին ընդունելուց: Հովհաննես Դ Ովայեցին գահակալման ութերորդ տարում՝ 841 թվականին հեռացել է կաթողիկոսարանից և հաստատվել Այրիվանքում(Գեղարդավանք)՝ նվիրվելով ճգնակեցության: Սակայն Հայոց Սմբատ Բագրատունի սպարապետը և հայ նախարարները եկեղեցական ժողով են գումարել. արդարացրել կաթողիկոսին և

Սմբատ Զարեհավանցին շատ էր ճանապարհորդել թե՛ Հայաստանում և թե՛ հարևան երկրներում, եղել էր անգամ պավլիկյանների կենտրոն Տևրիկում: Թերևս այստեղ էլ նա ծանոթացել էր պավլիկյանների ուսմունքին: Վերադառնալով երկիր՝ նա հաստատվում է Մեծ Հայքի Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Թոնդրակ գյուղում և սկսում իր քարոզը: Շատ շուտով նա մեծաթիվ հետևորդներ է ունենում և այդտեղ էլ աղանդի հիմնադիրը՝ Սմբատ Զարեհավանցին կազմակերպում է աղանդավորական առաջին համայնքը և այն դարձնում թոնդրակեցիների կենտրոն:

Թոնդրակ գյուղի անունով շարժումն ստացավ թոնդրակյան անվանումը, իսկ մասնակիցները կոչվեցին թոնդրակեցիներ[2]:

Մխիթար Այրիվանեցին իր ժամանակագրության մեջ թոնդրակյան շարժման սկզբնավորումը դնում է 821-822 թվականների տակ[3]:

Ստեփանոս Տարոնեցին, խոսելով նշանավոր պատմագիր Հովհաննես կաթողիկոսի աթոռակալության (897-929) մասին, գրում է, «Սրա օրոք երևաց Սմբատը՝ թոնդրակյաններից առաջինը, Ծաղկոտն գավառի Զարեհավան գյուղից, որ հակառակ էր քրիստոնեական բոլոր կարգերին»[4]:

Գրիգոր Մագիստրոսը վկայում է, որ Սմբատ Զարեհավանցին հանդես է եկել Հովհաննես կաթողիկոսի և Սմբատ Բագրատունու օրոք[5],սակայն որոշակի չէ, թե խոսքը Հովհաննես անունով կաթողիկոսներից որին է վերաբերում, իսկ Սմբատ Բագրատունին էլ թագավոր չի անվանված:

Քննարկելով այս տվյալները՝ ակադ. Աշ.Հովհաննիսյանը գտնում էր, որ Սմբատ Զարեհավանցին ասպարեզ է իջել Հովհաննես Ովայեցի կաթողիկոսի(833-855) և Սմբատ Բագրատունի սպարապետի օրերին(822-855)(այս կարծիքը գերիշխող է պատմագրության մեջ, դրա մասին արդեն նշվել է վերևում), իսկ հալածանքները թոնդրակյան շարժման դեմ սկսվել են նույն դարի կեսերին: Այդ ժամանակներում Ապահունիքում՝ Մանազկերտ կենտրոնով, իշխում էր արաբ ամիրա Աբու-լ-Վարդը, որը 840–850-ական թթ. դաժանորեն ճնշել է նրանց ելույթները[6] և մահապատժի ենթարկել թոնդրակյանների առաջնորդ Սմբատ Զարեհավանցուն[7]:

Ըստ 15-րդ դարի հեղինակ Մխիթար Ապարանեցու հաղորդած տեղեկությունների՝ Սմբատ Զարեհավանցին, ինչպես մինչ Ապահունիքի Թոնդրակ ավանում հաստատվելը, այնպես էլ

վերահաստատել իր աթոռին: 850-ական թվականների արաբական արշավանքների հետևանքով Հայաստանում ստեղծված դառնաղետ պայմաններում Հովհաննես Դ Ովայեցին, չնայած ծեր տարիքին, շրջել է երկրով մեկ և ջանացել ոգեշնչել բնակչությանը, ուրացությունից հեռու պահել որոշ նախարարների: Ի հիշատակ արաբ զորապետ Բուղայի արշավանքի ժամանակ նահատակվածների՝ կաթողիկոսը հաստատել է տարեկան տոն: Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան,Երևան,2002,էջ 635:

[1] Տես՝ Այս տեսակետը առաջին անգամ հայտնել է Մ.Չամչյանը (Պատմութիւն Հայոց, Երևան, հ. Բ, էջ 884):

[2] Թոնդրակեցիները գտնում էին, որ ոչ հանդերձյալ կյանք կա, ոչ էլ հոգու անմահություն: Իրական է և արժեք ունի միայն այս աշխարհի կյանքը: Թոնդրակեցիները,ժխտելով հոգու անմահությունն ու հանդերձյալ կյանքը, մերժում էին նաև եկեղեցու ու հոգևորականության անհրաժեշտությունը: Ուստի և, նրանց կարծիքով, բոլորովին պետք չէին եկեղեցական ամենօրյա արարողությունները, ժամերգությունը և հաղորդությունը: Շարժման հետևորդ տղամարդիկ և կանայք իրավահավասար էին: Թոնդրակյան շարժման հոգևոր առաջնորդները հոգևորական կոչումներ ու աստիճաններ չունեին և մյուսների հետ մեկտեղ օգտվում էին միանման իրավունքներից:

[3] Տես՝ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն Հայոց,էջ 54:

[4] Ստեփանոս Տարոնեցի,Պատմութիւն տիեզերական, Պետերբուրգ, 1885, էջ 160:

[5] Տես՝ «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», ի լոյս ընծայեց Կ.Կոստանեանց, Աղեքսանդրապոլ, 1910,էջ 153:

[6] Տես՝ Նույն տեղում, էջ 167:

[7] Տես՝ Հովհաննիսյան Ա., Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը և ժամանակակիցները, Բանբեր Մատենադարանի,Երևան, 1956, թիվ 3, էջ 10-14:Նույնի, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, էջ 337-348:

դրանից հետո ճամփորդել է Փոքր Ասիայում, եղել պավլիկյան շարժման կենտրոններից մեկում՝ Թուլայլ գավառի Տևրիկ բնակավայրում[1], որտեղ հավանաբար հանդիպել է Սերգիոս Տյուկիքոսին, կրել նրա առաջնորդած շարժման ազդեցությունը: Ուշագրավ է, որ մասնավոր սեփականության վերացմամբ և հավասարության հիմունքներով համայնքների ստեղծումը, վանական կալվածատիրության մերժումը, աննահանջ ու համառ պայքարը տիրողների դեմ հավասարապես բնորոշ են Սերգիոսին, նույնպես և Սմբատ Զարեհավանցուն:

Սմբատ Զարեհավանցին կապեր է ունեցել և ուրիշների հետ:

Ըստ Գրիգոր Մագիստրոս Պահլավունու՝ Սմբատ Զարեհավանցին «ի հիմաց սասանեց առաքյալներին և մարգարեներին», «չար մոլորությունն ուսանելով Մրջուսիկ անունով մի պարսիկ բժշկից և աստղաբաշխ մոգից»[2]:

Վերահաստատվելով Թոնդրակում՝ Սմբատ Զարեհավանցին կրկին գլխավորել է իր ստեղծած համայնքը:

Սմբատ Զարեհավանցին ունեցել է իր հետևորդները: Նրան հաջորդած աղանդապետներից հայտնի են Թոդրոսը, Անանեսը, Արքան, Սարգիսը, Կյուրեղը, Հեսունը և Ղազարը, որոնք սերնդե սերունդ քարոզել են թոնդրակյան գաղափարները՝ ստեղծելով նաև իրենց գաղափարները պարունակող գրականություն, սակայն դրանցից մեզ ոչինչ չեն հասել և այդ նշանավոր շարժման մասին տեղեկություններ քաղում ենք միայն նրա հակառակորդների թողած տվյալներից[3]:

Թոնդրակյանների խոշորագույն կենտրոններից էր Մանանաղին, որտեղ ծագել էր պավլիկյան աղանդը: Վերջիններս, ինչպես նաև նախորդ բոլոր աղանդները մեծ ազդեցություն են ունեցել թոնդրակեցիների գաղափարախոսության ձևավորման վրա: Ավելին, ժամանակակիցները թոնդրակյաններին համարել են վերստին ասպարեզ իջած պավլիկյաններ և նրանց գաղափարների ուղղակի ժառանգորդներ:

Թոնդրակյանների մասին տեղեկություններ է հաղորդում Անանիա Նարեկացին, որը Անանիա Ա Մոկացի հայոց կաթողիկոսի պատվերով հեղինակել էր մի գործ՝ բացահայտելու թոնդրակյանների սխալներն ու մոլորությունները: Անանիա Նարեկացու հակաճառությունը Սմբատ Զարեհավանցու և թոնդրակեցիների ուսմունքի դեմ չի պահպանվել: Սակայն Գրիգոր Նարեկացին Կճավա վանքին գրած «Անանիայի գիր խոստովանութեան յաղագս սուտ կարծեացն, որ վասն նորա» թղթում ամփոփ տվել է Անանիա Նարեկացու գրվածքի բովանդակությունը և համառոտ թվել թոնդրակեցիների ուսմունքի 14 կետերը:

Այնուհետև թոնդրակեցիների մասին տեղեկություններ են տալիս Արիստակես Լաստիվերցին (XI դ.), Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, փիլիսոփա, աստվածաբան Պողոս Տարոնեցին (XII դ. Սկիզբ), Հայոց կաթողիկոս Ներսես Դ Կլայեցին (Ներսես Շնորհալի):

Թոնդրակյան շարժման գաղափարները խիստ գրավիչ էին և արագորեն տարածվում էին բնակչության լայն շրջաններում: Դրանք այնքան վարակիչ էին, որ նրանց հակառակորդները խուսափում էին շարադրել թոնդրակեցիների հայացքները՝ վախենալով, որ դրանք կգայթակղեն հավատացյալներին:

Սմբատ Զարեհավանցու գաղափարներն սկսեցին տարածվել երկրով մեկ, իսկ Թոնդրակը դարձավ շարժման գլխավոր կենտրոնը: Իշխանությունների և հոգևորականության հալածանքներից խուսափելու համար թոնդրակեցիները գործում էին ծայրաստիճան գաղտնիության պայմաններում: Բացահայտված թոնդրակեցիները ենթարկվում էին դաժան պատիժների՝ բանտարկության, խոշտանգումների և այլն: Նրանց դեմքին աղվեսադրոշմ էր դրվում, որպեսզի չկարողանային թաքնվել հասարակությունից:

---

[1] Ալիշան Ղ., Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 153:

[2] Հովհաննիսյան Ա., Սմբատ Զարեհավանցին, նրա ժամանակը և ժամանակակիցները, ԲՄ, 1956, թիվ 3, էջ 10-14:Նույնի, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք Ա, էջ 337-348:

[3] ՀԺՊ, հ.3, Երևան, 1976, էջ 280:

10-րդ դարի սկզբին՝ Սմբատ Ա թագավորի օրոք, երբ Հայաստանը ենթարկվեց Ատրպատականի ամիրայի ավերիչ արշավանքներին, գյուղացիական ելույթներ տեղի ունեցան Այրարատում և նրա շրջակա գավառներում: Շինականներն ու քաղաքային ռամիկները զինաթափում էին ազնվականներին, բռնագրավում նրանց և հարուստների ունեցվածքը, հարձակվում վանքերի վրա՝ սպառնալով մեծ ապստամբությամբ: Այդ նույն շրջանում ընդվզեցին Տաթևի վանքի շրջակա գյուղացիները, քանի որ նրանց հողերին ձգտում էր տիրանալ վանական միաբանությունը: Պայքարն այնքան սրվեց, որ 915 թ. գյուղացիները հարձակվեցին վանքի վրա՝ ավերելով և ծեծի ենթարկելով ու սպանելով վանականներին: Վանքի առաջնորդը դիմեց Սյունյաց իշխանին, որի զինվորները գյուղացիներին արտաքսեցին վանքից, ավերեցին նրանց շենները և վանքին հանձնեցին վիճելի հողերը:

Թոնդրակեցիների համայնքները 10-րդ դարի կեսերից ազդեցիկ ուժ դարձան: Նրանք լայնորեն տարածվեցին Մանանաղի գավառում, որը եղել էր պավլիկյանների կարևոր կենտրոններից մեկը: Շարժումն այնպիսի բուռն ընթացք ստացավ, որ տեղի հայ եպիսկոպոսը ճարահատյալ դիմեց բյուզանդական իշխանությունների օգնությանը: Պատժիչ ջոկատը հալածեց աղանդավորներին և առժամանակ ճնշեց Մանանաղիի թոնդրակեցիներին:

10-րդ դ. 2-րդ կեսից սկսվել է թոնդրակյան աղանդի գործունեության վերելքը՝ լուրջ վտանգ ներկայացնելով Հայ եկեղեցու համար: Հարք գավառում, Մանանաղի գավառի Կաշե, Աղյուսո, Թուլայլ գյուղերում (Գրիգոր Մագիստրոս Պահլավունին դրանք անվանել է «շնավաններ»), Խնուս, Անի քաղաքներում կազմակերպվել են համայնքներ՝ ծավալելով աշխույժ գործունեություն: Քարոզիչներ են գործել Շիրակում, Ռշտունիքում, Մոկքում:

Ըստ Արիստակես Լաստիվերցու՝ Հարքում, Հակոբ եպս. Հարքացու գլխավորությամբ թոնդրակեցիները կարգալույծ են արել բարձրաստիճան հոգևորականներին, արգելել կրոնական ծիսակատարություններն ու արարողությունները:

Հայոց կաթողիկոս Սարգիս Ա Սևանցին հալածել է թոնդրակեցիներին, դուրս քշել բնակավայրերից, իսկ Հակոբ Հարքացուն բանտարկել է և ճակատին աղվեսադրոշմ խարանել:

Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն Արիստակեսի Լաստիվերտցւոյ վարդապետի» աշխատության 22-րդ և 23-րդ գլուխները[1] նվիրված են թոնդրակյան շարժմանը և ունեն աղբյուրագիտական բացառիկ արժեք, որովհետև Արիստակես Լաստիվերտցու տեղեկություններն այլ աղբյուրներում չեն հանդիպում: Ար. Լաստիվերտցին պատմում է Մանանաղի գավառի Կաշե և Աղյուսո գյուղերի թոնդրակյան համայնքների մասին, որոնք Կունձիկ աբեղայի ղեկավարությամբ, ազնվական կանանց՝ Հրանույշի, Կամարայի, Ախնիի և Վրվեռ անունով մի իշխանի աջակցությամբ ավերել են եկեղեցիները, սրբատեղիները, կործանել խաչերը: Այնուհետև պատմիչը մանրամասն նկարագրել է Պախր կամ Գայլախազուտ լեռան ստորոտում Բազմաղբյուր ավանի մոտ կանգնած մեծահռչակ խաչը խորտակելու դեպքը: Ի պատասխան դրա՝ Մանանաղիի եպիսկոպոս Սամվելը արքունի զորաջոկատով ավերել և հրկիզել է տվել աղանդավորների երկու գյուղերը՝ Կաշեն և Աղյուսոն, իսկ նրանց 6 առաջնորդների ձերբակալելով՝ տարել Ջերմ գյուղաքաղաքը, դատել բազմության առջև ու աղվեսադրոշմ խարանել դեմքերին:

Ի շարս այլ հոգևորականների՝ նա այն կարծիքին էր, որ թոնդրակյան շարժումը կործանման է հասցրել Բագրատունյաց թագավորությունը: Արիստակես Լաստիվերցին թոնդրակյան առաջնորդներից ներկայացրել է Հարք գավառի եպիսկոպոս Հակոբի և Մանանաղիի Կունձիկ աբեղայի գործունեությունը, Հակոբին անվանել է «հայր ամենայն չարյաց», նրա ուսմունքը՝ մծղնեություն: Ըստ նրա՝ Հակոբ Հարքացին իր ճառերով ձգտել է «տապալել սուրբ եկեղեցին»: Շարժման կենտրոն Հարքի Թոնդրակ գյուղը Ար. Լաստիվերտցին անվանել է «սատանայի

[1] Տես՝ Լաստիվերտցի Ա., Պատմութիւն, Վենետիկ, 1844, կամ Պատմություն, Երևան, 1971, էջ 133 :

բնակարան»[1], իսկ Գրիգոր Մագիստրոսը նշում էր, որ «թոնդրակյանները հասել են ոչ միայն մոլորության ափը, այլև անդունդի հատակը և դարձել սատանայի գործակիցներ»[2]:

Պատմությունը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում 10-րդ դ. և 11-րդ դ. 1-ին կեսի Հայոց կաթողիկոսների, աստվածաբան վարդապետների և մատենագիրների մասին: Կարևոր են տեղեկությունները կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի քաղաքական գործունեության մասին: Պատմությունը 11-րդ դ. կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն Հայաստանի, այլև հարևան երկրների համար: Այն միաժամանակ հայրենասիրական ոգի է, որտեղ հեղինակը նկարագրում է 11-րդ դ. աղետները:

Չնայած ծանր հալածանքներին՝ չի հաջողվել վերացնել թոնդրակեցիների աղանդը, որը գնալով ավելի է տարածվել և ծավալվել Հայաստանում:

Բյուզանդական Կոստանդին IX Մոնոմախ կայսրի (1042-1054) հրամանով Հայաստանի հարավային նահանգների և Հյուսիսային Միջագետքի կառավարիչ նշանակված Գրիգոր Մագիստրոս Պահլավունին 1050-1054 թվականներին նոր հալածանքներ է սկսել թոնդրակեցիների դեմ՝ նրանց բնաջնջելու նպատակով. այդ մասին տեղեկություններ կան նրա «Թղթերում»: Գրիգոր Մագիստրոս Պահլավունու զինվորական ջոկատներն ավերել են Թոնդրակ, Կաշե, Թուլայլ, Խնուս և այլ բնակավայրեր՝ թոնդրակեցիներին արտաքսելով երկրից և Միջագետքի հյուսիսային շրջաններից:

11-րդ դարի 30-50-ական թվականներին Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի նվաճողական քաղաքականության հետևանքով աղանդավորներով բնակեցված շատ շրջաններ մտել են Բյուզանդական կայսրության մեջ, որի կառավարությունը նրանց բռնագաղթեցրել է կայսրության տարբեր շրջաններ, գլխավորապես՝ պավլիկյանների ավանդական աքսորավայր Ֆիլիպոպոլիս: Այստեղ նրանցից կազմավորվել են զորագնդեր, որոնք մեծապես նպաստել են Բյուզանդիայի այդ մասի քաղաքների ու շրջանների պաշտպանությանը ավարառու ցեղերի արշավանքներից: 11-րդ դարի վերջին թոնդրակեցիների որոշ մնացորդներ ապաստանել են Հյուսիսային Միջագետքում՝ հիմնելով կազմակերպված համայնքներ: Աղանդի կենտրոններից մեկի՝ Մանանաղիի Կաշե ավանի անունով նրանք կոչվել են կաշեցիք, նույն գավառի Թուլայլ գյուղի անունով՝ թուլայլեցիք և այլն: Թոնդրակեցիների համայնքներ են եղել Տարոնում, Հարքում, Մարդաղիում, Վասպուրականում, Շիրակում, հավանաբար և Սյունիքում[3]:

Թոնդրակեցիների ուսմունքի և գաղափարների մասին աղբյուրները սուղ տեղեկություններ են հաղորդում. հիմնականում նշում են եկեղեցու հեղինակությունն ու կարգերը մերժող հայացքները և ողողված են հայհոյանքներով ու անարգալից խոսքերով: Գրիգոր Մագիստրոսը վկայում է, որ նրանք իրենց համարել են հայ քրիստոնյաներ: Նա թոնդրակեցիներին բաժանել է երեք խմբի:

Ծայրահեղորեն տրամադրված է համարել «հարութիւնն ի մեռելոց» չընդունողներին, նրանց, ովքեր «ի չարն կատարելագոյնք են» և, ինչպես էպիկուրյանները՝ անաստված: Միջին տեղում գտնվողներին նմանեցրել է մանիքեցիներին, իսկ ինչ-որ չափով խաղաղ տրամադրվածների մասին ասել է, թե նրանք առերես հետևում են քրիստոնեական ավանդույթներին[4]:

Թոնդրակեցիների ուսմունքն առավել մանրամասն ներկայացրել է Գրիգոր Նարեկացին Կճավա վանքին ուղղած իր գրության 14 կետերի մեջ[5]: Ուսմունքի հետևորդները մերժել են քահանայական կարգը և եկեղեցական նվիրապետությունը, եկեղեցին առհասարակ,

[1] Ար.Լաստիվերտցի, էջ 133-165:

[2] Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 160:

[3] Տես՝ Պողոսյան Ս.Պ., Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX-XIII դդ., էջ 402: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 1, էջ 370:

[4] Տես՝ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 153:

[5] Տես՝ Գրիգոր Նարեկացի, Գիրք թղթոց, (Սահակ Մեսրոպյան մատենադարան, Ե), Տփղիս, 1901, էջ 499-500:

ձեռնադրության, մկրտության, հաղորդության խորհուրդները, Քրիստոսի զոհաբերությունը մարդկանց փրկության համար կամ պատարագը, ինչպես նաև ծնրադրությունը՝ որպես պաղատանքի արտահայտություն, տերունական տոները և ընդհանրապես արտաքին բոլոր ծիսակատարություններն ու արարողությունները:

Սմբատ Զարեհավանցին մերժել է քրիստոնեական եկեղեցու նվիրապետությունը, խորհուրդներն ու ծեսերը, Հիսուս Քրիստոսի հարությունը, հոգու անմահությունն ու հանդերձյալ կյանքը և առհասարակ եկեղեցին: Հավանաբար նա ժխտել է նաև աստծո մասնակցությունը երկրային գործերին, որն էլ Գրիգոր Մագիստրոսին և Գրիգոր Նարեկացուն առիթ է տվել նրան համարելու Էպիկուրի և Պյութագորասի հետևորդ: Սմբատ Զարեհավանցու հայացքներին հատուկ է եղել նաև պանթեիզմը: Որպես հակաավատատիրական գյուղացիական շարժման գաղափարախոս՝ Սմբատ Զարեհավանցին քարոզել է մարդկանց իրավական և գույքային հավասարություն և դրանից բխեցրել հասարակական կյանքի վերափոխման համար պայքարի անհրաժեշտությունը: Ամուսնության հարցում կնոջը վերապահել է ընտրության և սիրո ազատություն: Սմբատ Զարեհավանցու սոցիալական և փիլիսոփայական հայացքները դրվել են թոնդրակյան շարժման գաղափարախոսության հիմքում:

Թոնդրակեցիների վարդապետությամբ կատարյալ սերն այն է, երբ մարդիկ սիրով են մերձենում միմյանց՝ համարելով դա Աստծուն հաճելի կենցաղավարություն. այս հարցում էլ թոնդրակեցիները բոլորովին չեն ընդունել եկեղեցու հեղինակությունը՝ մերժելով եկեղեցական ամուսնության ու պսակի խորհուրդը և մծղնեների նման ազատ սիրո քարոզը դարձրել են իրենց կենցաղավարության բարոյական չափանիշ:

Սա հիմք է տվել հակառակորդներին թոնդրակեցիներին մեղադրելու անառակ կյանքի և կենցաղի մեջ: Թոնդրակեցիները կռապաշտություն են համարել խաչի ու սրբապատկերների պաշտամունքը, քարոզել են «մարդապաշտություն», մերժել Քրիստոսի աստվածությունը՝ նրան համարելով սովորական մի մարդ, իրենց աղանդի գլխավորին անվանել են Քրիստոս, փրկիչ, ազատարար, Աստծո ուղարկած մարգարե, որը վերջ էր տալու չար աշխարհի բոլոր անարդարություններին:

Ըստ Գրիգոր Մագիստրոսի, թոնդրակեցիները գաղտնի են պահել իրենց «չար աղանդը», աղանդի ու նրա կենտրոնի մասին հարցնողներին սխալ ճանապարհ ցույց տվել՝ իրենց հետքերը թաքցնելու նպատակով:

Մեծ զայրույթով և հայհոյությամբ խոսելով Սմբատ Զարեհավանցու մասին՝ Գրիգոր Մագիստրոսն ասում է, թե նա քարոզում էր «քահանայական բոլոր ներգործությունները ոչնչացնել, մանավանդ սնոտի համարել»[1]:

Կճավա վանքին հղած իր թղթում Գրիգոր Նարեկացին հաղորդում է, որ Սմբատ Զարեհավանցուն սպանել է Աբու-լ-Վարդը: «Դու քեզ Քրիստոս ես համարում, ասել է Աբու-լ-Վարդը Սմբատին,- Քրիստոսը հարություն առավ երեք օրից հետո, ես քեզ կսպանեմ և կթաղեմ, եթե երեսուն օրից հետո էլ հարություն առնես, կիմանամ, որ իրոք Քրիստոս ես:»[2] Նարեկացին նշելով, որ Աբու-լ-Վարդը խայտառակամահ սպանեց Սմբատ Զարեհավանցուն, մեծարում է նրան՝ ասելով, թե հեթանոս (ոչ քրիստոնյա) ամիրան վրեժխնդիր եղավ հերձվածողից. Նրան համարում է՝ «հզոր այր խնդրող վրիժաց նախատանացն Քրիստոսի…»[3] կամ «արդարն զաւազան սրտմտութեան ի ձեռին տեառն Յիսուսի»[4]:

Սմբատ Զարեհավանցու սպանության փաստից ենթադրվում է, որ նրա պայքարն ուղղված է եղել նաև օտարերկրյա նվաճողների դեմ: Սմբատ Զարեհավանցու հայացքների վերաբերյալ տեղեկությունները պահպանված են նրա հակառակորդների գրվածքներում: Չնայած դրանց միակողմանիությանը՝ ակնառու է, որ Սմբատ Զարեհավանցին իր ժամանակի

[1]Գրիգոր Նարեկացի, Գիրք թղթոց, էջ 154:
[2] Նույն տեղում, էջ 155:
[3] Նույն տեղում, էջ 500:
[4] Նույն տեղում, էջ 498:

աղանդավորական գաղափարների միավորմամբ ստեղծել է հակաավատատիրական պայքարի ուսմունք: Գրիգոր Մագիստրոսը գրում է, որ «…յամենեցունց զթոյնս չարութեան մի վայր ժողովեալ հերձուածս, հաւանեցան այնմ աստուծամարտ և ցանկապատառ դիւամոլի անօրինին Սմբատայօրէնս դընել…»[1]:

Սմբատ Զարեհավանցու սպանության ստույգ տարեթիվը հայտնի չէ, իսկ նրան սպանող Աբու-լ-Վարդ ամիրան իշխել է 830-840-ական թվականներից մինչև 870-880-ական թվականները[2]: Ուստի, հենվելով այդ վկայության վրա, Աշոտ Հովհաննիսյանը, նրա հետևությամբ և Ե.Տեր-Մինասյանը[3] Սմբատ Զարեհավանցու մահապատժի հավանական ժամանակը դնում են 840-ական թվականներին[4]:

Սմբատի սպանությամբ թոնդրակյան շարժումը չվերացավ, այլ շարունակվեց նրա հետևորդների գլխավորությամբ, հետզհետե ավելի ձևավորվեց գաղափարապես ու կազմակերպչորեն և դուրս գալով Ապահունիքի սահմաններից, ծավալվեց երկրով մեկ:

Թոնդրակեցիները պատկառելի ուժ էին դարձել Հարթ գավառում: Հույս չունենալով գավառի թոնդրակեցիների առաջնորդ Հակոբ եպիսկոպոսին բռնել տեղում, քանի որ աղանդավորներն այդ թույլ չէին տա, Հայոց կաթողիկոսը նրան խաբեությամբ իր մոտ հրավիրեց, ձերբակալեց և բանտ նետեց:

Շարժման խորացումն առաջ բերեց երկրի իշխանական դասի և հոգևորականության լուրջ անհանգստությունը: Երկրի ավատատիրական մասնատվածության պայմաններում շարժումը ճնշել չհաջողվեց: Այդ հնարավոր եղավ միայն 11-րդ դ. կեսերին, երբ բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայ ազգային նշանավոր գործիչներից Գրիգոր Մագիստրոս Պահլավունին ձեռնամուխ եղավ շարժման ճնշմանը: Նրա ղեկավարած կանոնավոր զորքերը քարուքանդ արեցին ու կրակի մատնեցին թոնդրակյան համայնքները: Թոնդրակեցիների մեծ մասը պարզապես բնաջնջվեց, իսկ կենդանի մնացածները կամ փախուստի դիմեցին, կամ էլ արտաքսվեցին երկրից[5]:

Դժվար է ասել՝ թոնդրակեցիները խոր ընդհատակ մտան, թե առժամանակ դադարեցրին իրենց գործունեությունը: Համենայն դեպս, շարժման հետքերը դեռ երկար տեսնում ենք երկրի տարբեր գավառներում: Սակայն Հայաստանի անհանգիստ քաղաքական կյանքը և օտար տիրապետությունները պատճառ դարձան, որ հայ իրականության մեջ վերջին հզոր աղանդավորական շարժումը վերջնականապես մարի:

Աղանդավորական շարժումները, հանդես գալով որպես պաշտոնական եկեղեցուն ընդդիմադիր ուժ, հաճախ ուղեկցվել են ժողովրդական ելույթներով:

Թոնդրակեցիների աղանդը հայ պատմագիտության մեջ հայտնի է թոնդրակյան շարժում անունով: Խորհրդահայ պատմաբաններն այն ներկայացրել են ավելի շատ որպես սոցիալական, հակաավատատիրական շարժում, աշխատավոր գյուղացիության՝ ավատատիրության(ֆեոդալիզմի) դեմ մղած պայքար, անգամ ազգային-ազատագրական շարժում՝ չափազանց ընդգծելով նրա քաղաքական կողմը՝ որպես հայրենիքի անկախության համար մղած պայքար արաբների և բյուզանդացիների դեմ (Վ. Համազասպյան, Ա. Մնացականյան, Ա. Հովհաննիսյան, Ս. Պողոսյան ևն):[6] Թոնդրակեցիների ուսմունքի բուն էությունը, այլ աղանդների հետ նրանց կապերը և նմանատիպ բազմաթիվ հարցեր գրեթե անտեսվել են:

---

[1] Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 160:

[2] Տես՝ Գիրք թղթոց, էջ 498,502:

[3] Տես՝ Տեր-Մինասյան Ե., Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 149-189:

[4] Տես՝ ՀԺՊ, հ.3, էջ 282:

[5] http://www.findarmenia.com/arm/history/20/259

[6] Հ. Բարթիկյան http://ter-hambardzum.net/archives/3101#sth ash.ZVh1xRk6.dpuf

Թոնդրակյան աղանդավորական շարժման, շարժման ղեկավար Սմբատ Զարեհավանցու գործունեության, ինչպես նաև շարժման տարածվածության և նրա դեմ մղած պայքարի մասին վկայություններ է տալիս Հովհաննես Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմը։

«Թոնդրակեցիները» պոեմը բաղկացած է նախերգանքից, չորս մասերից (առաջին, երկրորդ, երրորդ,վերջին) և վերջերգանքից։ Նրա բովանդակությունն ընդգրկում է 30-328 էջերը։ Պոեմի առաջաբանը կազմում է Սամվել Մուրադյանի վերլուծական խոսքը՝ 3-34-րդ էջերը։ Առաջին մասը բաղկացած է «Դուռն բանադրաց» կոչվող մասից և վեց գլուխներից, երկրորդ մասը՝ «Բանադրանք միջին» կոչվող մասից և յոթ գլուխներից,երրորդ մասը՝ «Բանադրանք վերջին» կոչվող մասից և երկու գլուխներից, իսկ չորրորդը՝ «Հուսկն բանադրանց» կոչվող մասից և չորս գլուխներից։ Պոեմն ավարտվում է Վերջերգանքով։

Հ.Շիրազի «Թոնդրակեցիները» պոեմի էջ 22-ում նշվում է.«Կոնծիկ աբեղայից ու թոնդրակուհիներից, սակայն, կատաղի էին շարժման պարագլուխ Սմբատ Զարեհավանցին, Թորակ ու Վրվեռ թոնդրակեցիները, Հակոբոս Հարքացին, որոնք պարզապես սպառնում էին հայոց պետության ու եկեղեցու գոյատևմանը՝ իրենց քարոզչությամբ հարվածելով ազգի գոյաբանական արմատներին՝ պետականությանը, հավատքին,երկրի պաշտպանունակու-թյանը,ընտանիքին ու բարոյական ըմբռնումներին, մշակույթին ու լեզվին, առհասարակ հայ մարդու ազգային նկարագրին։ Եվ այս բոլոր «սատանայի ժիր մշակները», հայոց թագավորի, կաթողիկոսի,սպարապետի հետ միասին, բարձր արվեստով կերպավորված են Հ.Շիրազի պոեմում, որպես բանավիճող կողմ հանդես են բերված դրամատիկական բարդ գործողությունների մեջ՝ իրենց արարքներով, մարտնչող երկխոսություններով ու անհատականացված խոսքով։»[1]

Հ.Շիրազն իր «Թոնդրակեցիները» պոեմում փորձում էր ցույց տալ ազգային համախմբմանն ու հայոց պետականությանը թոնդրակեցիների հասցրած աղետալի և կործանարար հարվածները։

Խորհրդային ժամանակաշրջանում Հովհաննես Շիրազի ձեռնարկումը՝ բարձրացնել բռնազավթված Արևմտահայաստանի ու ողջ Հայ դատի խնդիրը, որ պետականորեն արգելվում էր, պահանջել Ցեղասպանության համաշխարհային ճանաչում ու ոճրագործ Թուրքիայի դատապարտում, որ անկարելի էր թուրք-բոլշևիկյան բարեկամական ամոթալի համաձայնագրով Հայոց երկիրը թուրքերին հանձնելու դառը իրողության և տիրապետող կեղծ գաղափարախոսության՝ միջազգայնության կամ ինտերնացիոնալիզմի գերակայության պայմաններում, իրականություն չկարողացավ դառնալ ու չտպագրվեց։

Արդի ժամանակաշրջանում, երբ ողջ հայությունը, հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը բարձրաձայնեց, և համայն հանրությունը արձագանքեց հայոց պահանջատիրությանը, «Թոնդրակեցիները» պոեմի հրատարակումը ևս մի քայլ էր հայ ժողովրդի ազգային միասնության ոգեկոչման ճանապարհին։

Տեղեկություններ հեղինակի մասին.

Նունե Պողոսի Սարումյան - ԱրՊՀ, Պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.,դոցենտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը։

[1] Շիրազ Հ., Թոնդրակեցիները, Երևան, 2014, էջ 22-23։

ՀՏԴ 008(479.243) Պատմություն, Մշակույթ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ թթ.

Արմինե ԱՌՍՏԱՄՅԱՆ

Բանալի բառեր: *մշակույթ, կրթություն, դպրոց, անգրագիտություն, դպրոցաշինություն, ԼՂԻՄ, խորհրդային վարչակարգ, կոմունիստական գաղափարախոսություն, արցախահայություն, հակահայկական քաղաքականություն:*

Ключевые слова: *культура, образование, школа, неграмотность, строительство школ, НКАО, коммунистическая идеология, армянство Арцаха, антиармянская политика.*

Keywords: *culture, education, school, illiteracy, school construction, NKAR, Soviet regime, Communist ideology, Armenians of Artsakh, anti-Armenian policy.*

КУЛЬТУРА В НКАО В 1920-1930 ГОДАХ

А.Арстамян

В Арцахе в годы советской власти культурная жизнь получила своеобразное развитие. С одной стороны, вся общественно-политическая жизнь, а также и культура, оказались под сильным воздействием коммунистической идеологии. Было запрещено свободное и открытое слово, разномыслие, национальная черта культуры была отодвинута на второй план. Несмотря на это, армяне Арцаха приложили большие усилия для улучшения школьного строительства, образовательного дела. В результате большинство населения было вовлечено в сферу образования, борьба за ликбез стала первоочередной. Были проведены значительные работы для развития культуры, изданы новые газеты, появились новые литературные произведения, были открыты музей и театр. Примечательно, что несмотря на неблагоприятные условия, армяне Арцаха сохранили культурную национальную черту. Всё этого содействовало сохранению армянского образа области в условиях антиармянской политики Азербайджана.

THE CULTURE IN NAGORNO KARABAKH IN 1920-1930

A.Arstamyan

During the Soviet era the cultural life Artsakh experienced a unique development. On the one hand, the social-political life, as well as the culture appeared under the strong influence of communist ideology. The free and open speech, disagreement was prohibited, national identity of culture was pushed to the sidelines. Despite this, the armenians of Artsakh poured too much effort in construction of schools of 1920-1930-ies and improving education. As a result, the majority of people was involved in the education sector, and the fight against literacy became the priority. Much work was done for the development of culture, new newspapers were published, appeared new literary works, opened museum and theater. It is notable that despite unfavorable conditions the Armenians of Artsakh preserved their national cultural identity. All this contributed to the region to maintain its patriotic image in conditions of Azerbaijan's anti-Armenian policy.

Խորհրդային իշխանության տարիներին Արցախում յուրօրինակ զարգացում ապրեց մշակութային կյանքը: Մի կողմից, ինչպես ողջ հասարակական– քաղաքական կյանքը, այնպես էլ մշակույթը հայտնվեց կոմունիստական գաղափարախոսության ուժեղ ազդեցության ներքո: Արգելվեց ազատ ու բաց խոսքը, տարակարծությունը, մշակույթի ազգային դիմագիծը երկրորդական պլան մղվեց: Չնայած դրան, արցախահայությունը չափազանց մեծ ջանքեր թափեց 1920-1930-ական թթ. դպրոցաշինության, կրթական գործի բարելավման ուղղությամբ: Արդյունքում հասարակության մեծամասնությունը ընդգրկվեց կրթության ոլորտ, գրագիտության դեմ պայքարը դարձավ առաջնահերթ: Զգալի աշխատանքներ կատարվեցին մշակույթի զարգացման ուղղությամբ, հրատարակվեցին նոր թերթեր, երևան եկան նոր գրական երկեր, բացվեց թանգարան ու թատրոն: Հատկանշական է այն, որ չնայած անբարենպաստ պայմաններին արցախահայությունը պահպանեց մշակութային ազգային դիմագիծը: Այս ամենը նպաստեց, որ մարզը պահպանի իր հայեցի կերպարը ադրբեջանի հակահայկական քաղաքականության պայմաններում:

Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, հասարակական-քաղաքական կյանքը վերափոխվեց նոր կարգերին համահունչ: 1920-1930-ական թվականներին Արցախի մշակութային կյանքը, ինչպես ողջ հասարակական-քաղաքական ոլորտը, գտնվում էր խորհրդային գաղափարախոսության մամլիչի տակ: Ազգային գաղափարախոսությունն, որպես

այդպիսին, դուրս էր մղված, ողջ հասարակական-քաղաքական համակարգը հարմարեցված էր կոմունիստական գաղափարախոսությանը: Լեռնային Ղարաբաղում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո գավառային և շրջանային հեղկոմներին կից ստեղծվեցին լուսավորության բաժիններ, որոնց հիմնական խնդիրներից կարևորը նոր դպրոցների բացումն էր:

Ժողովրդական կրթության ընդհանուր ղեկավարությունը դրվեց լուսավորության պետական հանձնաժողովի վրա:

1923թ. հոկտեմբերի 5-ին ստեղծվեց ԼՂԻՄ լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որը 1929թ. մարտին վերանվանվեց մարզային խորհրդի ժողո-վրդական կրթության բաժին: ԼՂԻՄ լուսավորության առաջին կոմիսարն էր Արշավիր Քամալյանը: Վերացվեց դպրոցների բազմատիպությունը: Եկեղեցու իրավասության տակ գտնվող բոլոր ուսումնական հաստատությունները դրվեցին լուսժողկոմատի իրավասությանը: Ընդհանրապես, Լեռնային Ղարաբաղում դպրոցների վիճակն անմխիթար էր: 1920թ. հոկտեմբերի 20-ին Վարանդայի Ճարտար գյուղում տեղի ունեցածգավառի երկրորդ տեղամասի ուսուցիչների կոնֆերանսում Գիշի գյուղից պատգամավոր Ա. Բալայանն իր ելույթում նշեց. «Կա դպրոց, բայց չկա ինքը՝ դպրոցը: Կանչում են աշակերտին, բայց չկա ոչ նստարան, ոչ ուսումնական պարագաներ, ամգամ թուղթ, չխոսելով արդեն այն մասին, որ չկա լավ շենք, ջեռուցում..»:[1] Չնայած դրան, ուսումնատենչ արցախահայությունը միավորեց ջանքերը կրթական գործի արդյունավետ կազմակերպման համար: Արդեն 1922/23 ուսումնական տարում Լեռնային Ղարաբաղում գործում էր 78 դպրոց՝ 4375 աշակերտի ընդգրկումով:[2] Այդ դպրոցներում աշխատում էր 140 ուսուցիչ: 1924թ. տվյալներով 6100 աշակերտի համար եղած 1500 նստարանների մեծամասնությունը անպիտան էր, 102 դպրոցներից 33-ն էր տեղավորված սեփական, կամ ազգայնացված շենքերում, իսկ այդ շենքերից միայն 23-ն էր գտնվում բարվոք վիճակում:

Մարզի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքները բարելավելու և ուսուցիչների մասնագիտական որակը բարձրացնելու համար մի շարք դպրոցներում կազմակերպվում էին փորձնական դասեր, մանկավարժական բնույթի զեկուցումներ ու դասախոսություններ: Ուսուցչական կադրեր ստեղծելու համար 1924թ. ամռանը Ստեփանակերտում կազմակերպվեցին երկամսյա դասընթացներ: Չնայած այս ամենին, մարզում աղքատ էր դպրոցների նյութատեխնիկական բազան: 1927թ. հունվարի 7-ի մի հաղորդագրության մեջ ասվում էր, որ մարզի դպրոցներն ունեն 4000 նստարանի և 200 գրատախտակի կարիք:

Մարզում ուսումնական գործը աստիճանաբար դարձավ համաժողովրդական: Այսպես, արդեն 1925/26 ուսումնական տարում մարզում դպրոցների թիվը հասնում էր 144-ի, իսկ դասարանների թիվը՝ 458-ի: Նախորդ ուսումնական տարվա համեմատությամբ աշակերտների թիվը զգալիորեն ավելացել և հասել էր 15413-ի:[3]Պետք է ասել, որ արցախահայությունը բուռն կերպով լցված էր դպրոցաշինության գործին: Մարզային լուսժողկոմատը պատրաստում և հրատարակում էր շրջաբերականներ, մեթոդական հրահանգներ, տպագրում բրոշյուրներ և դասագրքեր:

1930-1931թթ. ուսումնական տարում ԼՂԻՄ ժողովրդական կրթության ոլորտում անցում կատարվեց ընդհանուր պարտադիր տարրական ուսուցմանը: 1930թ. նոյեմբերին մարզխորհրդի գործադիր կոմիտեի պլենումըքննարկելով «Պարտուսի ընթացքը և անգրագիտության վերացումը» հարցը, նշեց, որ առկա են մի շարք սուր խնդիրներ: Հարց դրվեց չքավորների երեխաներին ապահովել հագուստներով, գրենական պիտույքներով: Մարզում նույնիսկ հայտարարվեց պարտուսիմիամսյակ, որի ընթացքում դպրոցները պետք է ապահովվեին վառելափայտով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկեին դպրոց, ժողկրթաբաժիններում ստեղծվեին նվիրատվության ֆոնդեր և այլն:1930թ. պլենումի նիստում ելույթ ունենալով, Լազարյանը նշեց, որ աշակերտները աղքատ են, մերկ, ոտաբոբիկ: Դպրոցաշինության համար չի

[1]Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, 1919-2010թթ., գիրք Բ, (1923-1985թթ.), էջ 107;
[2]նույնտեղում, էջ 109:
[3]Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախը, 1917-2000թթ., գիրք Բ1923-1985թթ., էջ 110;

հերիքում նյութական բազան: Իսկ Գ. Սարկիսովան նշեց, որ համընդհանուր կրթության գործը թույլ է դրված: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել չքավոր աշակերտներին հագուստով, կոշիկով: Ա. Անտոնովը ելույթ ունենալով, նշոց, որ Ջրաբերդի շրջանի Քոլատակ գյուղում չկա դպրոցի շենք, չկան նստարաններ և աշակերտները ստիպված են լինում նստել գետնին:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում 1930/31թթ. ուսումնական տարումմարզի առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկվեց 23026 աշակերտ:30-ական թթ. արագորեն բարելավվում էր ուսուցչական կադրերի որակը: Այսպես, 1925/26 ուստարում աշխատող 241 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ուներ ընդամենը 2 հոգի, միջնակարգ կրթություն՝ 163-ը, ապա 1933/34 ուս. տարում 999 ուսուցիչներից բարձրագույն կրթություն ուներ 28, միջնակարգը՝ 909 հոգի:

Այսպես, 1913թ. հետ համեմատած, (առկա էր 54 դպրոց), 1932թ. կար 156 I աստիճանի դպրոցներ, որտեղ սովորում էին 21,641 աշակերտ: 1932թ. տվյալներով երեխաների 99,5%-ը ընդրկված էր ուսուցման գործում: 26 գյուղերում ստեղծվեցին յոթամյա դպրոցներ: Նախադպրոցական հիմարկները՝ 1931թ. եղել են 11, 1937թ. դարձան 36՝ 1602 երեխաներ: 1913թ. եղել են 203 ուսուցիչ, 1932թ. ուսուցիչների թիվը դարձավ 661: Նախատեսվում էր 1933թ. ուսուցիչների թիվը հասցնել 661: Նախատեսվում էր 1933թ. ուսուցիչների թիվը հասցնել 950-ի: [1] Նշենք, որ 1921/22 ուս. տարում Շուշիում բացվել է մանկավարժական ուսումնարան, 2 բաժիններով՝ հայկական և ադրբեջանական: 1923թ. Մանկավարժական տեխնիկոմ բացվեց Հադրութում, իսկ մանկավարժական բանֆակ՝ Շուշիում: Մշակութային կյանքում խորհրդային իշխանության ամենամեծ նվաճումներից մեկը համարվում է բնակչության զանգվածային անգրագիտության վերացումը: Խրճիթ-ընթերցարաններին, ակումբներին, գյուղխորհուրդներին ուսումնական հաստատություններին կից ստեղծվում են ագրագիտության վերացման կայաններ: Մինչև 1930թ. մարզում գործող լիկկյաններում սովորել է 30.000-ից ավել մարդ:

Խորհրդային իշխանության տարիներին մարզում զարգացավ նաև տպագրությունը, գրականությունը և արվեստը:

1928թ. մարտին կազմակերպվեց Լեռնային Ղարաբաղի գրողների ասոցիա-ցիան, որը Հայրենական Մեծ պատերազմից հետո վերանվանվեց գրողների մարզային բաժանմունքի: 1930-ական թվականների տպագրվել են Հակոբ Աթալյանի, Աշոտ Ուլուբաբյանի, Իսրայել Պետրոսյանի, Գր. Մովսիսյանի, Արմո Խաչումյանի և ուրիշ-ների ստեղծագործությունները:

Խորհրդային իշխանության առաջին իսկ օրերին Լեռնային Ղարաբաղում փակվեցին տարբեր կուսակցությունների, կազմակերպությունների և հոսանքների թերթերը, ազգայնացվեցին մասնավոր տպարանները:

Փաստորեն, վերացվեց բացախոսությունը և նոր հրատարակվող թերթերում տիրում էր համատարած միակարծությունը:

1920-21 թվականներին Շուշիում լույս տեսավ Ղարաբաղի արտակարգ կոմիսարիատի «Ղարաբաղի չքավորություն» պաշտոնաթերթը՝ ադրբեջանական լեզվով: 1923 թվականին ապրիլի 4-ից Շուշիում սկսվեց հրատարակվել Շուշիի գավկոսկոմի և գավգործկոմի պաշտոնաթերթ «Ղարաբաղի գեղջուկ»-ը: Նույն թվականի ամռանը ինքնավար մարզի ստեղծումից հետո այն վերանվանվեց «Խորհրդային Ղարաբաղ» և դարձավ կուսակցության Լեռնային Ղարաբաղի մարզկոմի և մարզխորհրդի գործկոմի պաշտոնաթերթը: 1980-ական թվականներին վերոհիշյալ թերթը հրատարակվում էր նաև ռուսերեն լեզվով: «Խորհրդային Ղարաբաղ» թերթին կից լույս տեսան «Երիտասարդ լենինյան», «Կուլտարշավ», «Ղարաբաղի բատրակ» թերթիկներն ու հավելվածները և կարճատև «Կայծ» գեղարվեստական հանդեսը:

30-ական թվականներից մինչև 80-ականի վերջերը հանդես եկան շրջանային՝ Շուշիի «Շուշան», Ասկերանի «Կարմիր դրոշ», Մարտակերտի «Բարեկամություն», Մարտունու «Աշխատանք», Հադրութի «Կոլտնտեսական» թերթերը: Նշված ժամանա-կահատվածում

[1] ԼՂՀ Պետական արխիվ , ֆոնդ 1, ց. 2, պ. մ. 3, թ. 2

հրատարակվում էր Ղարմետաքսկոմբինատի մետաքսագործ «Բազ-մատիրաժ» թերթը: Գյուղական վայրերում հիմնվում էին խրճիթ-ընթերցարանները:

Ակումբներին կից կան ինքնագործ խմբեր, կինոկայանքներ: 1924 թվականից Ստեփանակերտում կազմակերպվեց առաջին կինոցուցադրումը: Կինոն աստիճանա-բար մուտք գործեց մարզի գյուղերը: Հայ թատրոնի երկուհազարամյա պատմության մեջ իր պատվավոր տեղն ունի Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը: Այն ստեղծվել է 1932 թվականին, որի հիմնադրին էր հայ բեմի երախտավոր Կարո Ալվարյանը: Այսպիսով, արցախահայության բուռն ջանքերով հնարավոր եղավ մարզում պահպանել հայեցի ազգային դիմագիծը, պայքար մղել անգրագիտության դեմ, բարելավել կրթական գործը, ստեղծել դպրոցներ և այլ մշակույթի օջախներ:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմինե Առստամյան - ԱրՊՀ, Պատմության ամբիոն, պ.գ.թ., դոցենտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 941(479.243) Պատմություն

XIII ԴԱՐԻ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ԹԱԳԱՎՈՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ԴՈԼԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ստեփան ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ

Բանալի բառեր – *Հասան-Ջալալ-Դոլա, Արցախ, Ներքին Խաչեն, Արցախի իշխանաց իշխան, Գանձասարի եկեղեցի, Կաչաղակաբերդ, Խոխանաբերդ, Հեթում I, Աթաբեկ-Իվանե, Ռուզաքան:*

Key words: *Hasan-Jalal-Dola, Artsakh, Lower Khachen, prince of princes of Artsakh, monastery of Gandzasar, Kachaghakaberd, Khokhanaberd, Hetum I, Atabek-Ivane, Ruzaqan.*

Ключевые слова: *Асан-Джалал-Дола, Арцах, Нижний Хачен, князь князей Арцаха, церковь Гандзасар, Качахакаберт, Хоханаберт, Етум I, Атабек-Иване, Рузакан.*

S. Hasan-Jalalyan

THE ORIGIN AND ACTIVITIES OF THE PRINCE OF PRINCES, KING OF THE XIII CENTURY OF ARTSAKH HASAN-JALAL-DOLA

This article presents the origin and activities of the prince of princes of the XIII century of Artsakh, Hasan-Jalal-Dola. In a very short period of time Hasan-Jalal-Dola, due to his management, diplomatic and leadership God-given talents, acquired the status of reigning. Hasan-Jalal-Dola was one of the most prominent statesmen, military and political leaders of the Armenian political reality of the XIII century. His political and diplomatic activity was a unique phenomenon in the history of medieval Armenia. He in fact (de facto) and legally (de jure) presented himself and was recognized by foreigners as the head of an independent and sovereign state.

If we try to briefly assess the activity of the prince of princes of Artsakh, we can say that if we now have a free and independent Republic of Artsakh, then in this undoubtedly also has an invaluable contribution the king of Artsakh of the XIII century, the prince of princes of the Armenian princely family Aranshakhiks Hasan-Jalal-Dola.

С. Асан-Джалалян

ПРОИСХОЖДЕНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ КНЯЗЬЯ КНЯЗЕЙ, КОРОЛЯ АРЦАХА XIII ВЕКА АСАНА-ДЖАЛАЛА-ДОЛЫ

В данной статье представлены происхождение и деятельность князя князей Арцаха XIII века Асана-Джалала-Долы.

В очень коротком периоде времени Асан-Джалал-Дола, благодаря своему правлению и данные богом дипломатическим и полководческим талантам, приобрел статус царствующего.

Асан-Джалал-Дола был одним из самых выдающихся государственных, военных и политических деятелей армянской политической реальности XIII века. Его политическая и дипломатическая деятельность была уникальным явлением в истории средневековой Армении. Он фактически (де-факто) и юридически (де-юре) проявил себя и был признан иностранцами как глава независимого и суверенного государства.

Если мы попытаемся кратко оценить деятельность князя князей Арцаха, то можем сказать, что если мы сегодня имеем свободную и независимую Республику Арцаха, то в этом несомненно также имеет неоценимый вклад король Арцаха XIII века, князь князей армянского княжеского рода Араншахиков Асан-Джалал-Дола.

Հոդվածում ներկայացվում է XIII դարի Արցախի իշխանաց իշխան, թագավոր Հասան-Ջալալ-Դոլայի ծագումը և կատարած գործունեությունը:

Շատ կարճ ժամանակամիջոցում Հասան-Ջալալ-Դոլան, շնորհիվ իր կառավարման, դիվանագիտական և զորավարական աստվածատուր տաղանդի, ձեռք է բերում գահերեցի կարգավիճակ:

XIII դարի հայ քաղաքական իրականության մեջ Հասան-Ջալալ-Դոլան ամենանշանավոր պետական, ռազմական ու քաղաքական գործիչն էր: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եզակի երևույթ էր: Նա փաստացի (դե-ֆակտո) և իրավաբանորեն (դե-յուրե) ներկայացել և օտարների կողմից ճանաչվել է որպես անկախ, ինքնիշխան պետության ղեկավար:

Եթե փորձենք համառոտ բնութագրել Արցախի իշխանաց իշխանի գործունեությունը, ապա կարող ենք ասել, որ եթե այսօր ունենք ազատ և անկախ Արցախի Հանրապետություն, ապա դրանում, անկասկած, իր անուրանալի ներդրումն ունի նաև XIII դարի Արցախի թագավոր, իշխանաց իշխան Առանշահիկ Հասան-Ջալալ-Դոլան:

Պատմահայր Խորենացին ցույց է տվել, որ Արցախի և ՈՒտիքի նախարարական տների ներկայացուցիչները բուն հայկական են՝ սերված Հայկ նահապետի ժառանգներից, մասնավորապես Առանից:

Մինչև ուշ միջնադար Արցախի և ՈՒտիքի իշխանական տների ներկայացուցիչներն իրենց անվանում էին Առանշահիկներ, այսինքն՝ Առան նահապետից սերված իշխաններ: Առանից սկսած՝ նրա ժառանգների իշխանությունը հայոց Արցախ և ՈՒտիք նահանգներում անընդմեջ շարունակվել է երկու հազարամյակ:

Առանշահիկների ծագման մասին Խորենացու մեկնաբանությունը հետագա հայ պատմիչները ևս ընդունել են[1]: Այսպես, VII դարի պատմիչ Մովսես Կաղանկատվացին Հայկ նահապետի ժառանգներից Առանից սերված Առանշահիկներին համարում է Արցախի, ինչպես նաև ՈՒտիքի իշխանական տների նախնիներ[2]: Նույն տեսակետին է նաև XIII դարի մեկ այլ պատմիչ՝ Կիրակոս Գանձակեցին[3]:

V դարի վերջում Առանշահիկները Վաչագան Բարեպաշտի գլխավորությամբ ստեղծեցին իրենց թագավորությունը[4]՝ այնուհետև դառնալով թագավորական տոհմ:

Արաբական տիրապետության վերջում Արցախի Առանշահիկները իրենց իշխանությունը տարածում են հիմնականում նահանգի նախալեռնային ու լեռնային գավառների վրա, որոնք մեկ ընդհանուր անունով կոչվում էին Խաչեն[5]:

XII դարի սկզբին Խաչենի տարածքի վրա գոյանում են Առանշահիկներից սերված երկու իշխանություններ՝ Ներքին Խաչենի՝ ի դեմս իշխան Վախթանգ Մեծի[6] և Հաթերքի՝ ի դեմս գերագահ իշխան Հասանի (1142-1182թթ.)[7]: Դարավերջին վերոհիշյալ երկճյուղ իշխանությանը ավելանում է երրորդը՝ նույնպես Առանշահիկներից սերող Վերին Խաչենի կամ Ծարի իշխանությունը[8], ի դեմս իշխան Հասանի[9]:

XIII դարի սկզբին Մեծ Հայքի Արցախ նահանգի Ներքին Խաչեն գավառի իշխանն էր Հասան Մեծի որդի Վախթանգը, որն աղբյուրներում կոչվել է նաև Վախթանգ-Տանգիկ: «Տանգիկ»-ը, ըստ երևույթին, Վախթանգ անվան երկրորդ վանկն է՝ «թանգ»-ը կամ «տանգ»-ը «...փաղաքշական «իկ» մասնիկով հանդերձ: Անվանը փոքրացուցիչ մասնիկ ավելացնելու մեջ կարող էր դեր խաղացած լինել նաև նույն ժամանակ Խաչենում գահերեցի իրավունքով իշխող տոհմակից մյուս Վախթանգը, որը Հաթերք գավառի տերն էր և կոչվում էր «գլխաւոր այլոց իշխանաց»[10]»[11]:

Վախթանգ-Տանգիկն ամուսնացել էր ժամանակի հայ-վրացական միացյալ պետության ամիրսպասալար[*], իշխանաց իշխան Բագրատունի Սարգիս Զաքարյանի[12] և Սահակադուխտ Արծրունու[13] դուստր Խորիշահի հետ, ով ամիրսպասալարի պաշտոնում Սարգիս Զաքարյանին հաջորդած Զաքարեի և Վրաց արքունիքի աթաբեկ (թագավորական տան կառավարիչ, թագաժառանգի դաստիարակ)[14] Իվանեի քույրն էր: Վախթանգ-Տանգիկն ու Խորիշահն ունեցել են յոթ

[1]Хасан-Джалалян С., Рукописные источники по генеалогии кячзей Хачена, “Вспомогательные исторические дисциплины – источниковедение – методология истории в системе гуманитарного знания”, материалы XX международной научной конференции. Москва, 31 января – 2 февраля 2008г., ч. II, Москва, 2008, с. 648.

[2] Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1912, էջ 14-15:

[3] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Թիֆլիս, 1909, էջ 182:

[4] Մովսեսի Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, էջ 55-60, 97-103:

[5] ՈՒլուբաբյան Բ., Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Երևան, 1994, էջ 55:

[6] ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 135-136:

[7] Նույն տեղում, էջ 145:

[8] Նույն տեղում, էջ 152:

[9] Նույն տեղում, էջ 51:

[10]Орбели И., hАсань Джалал, князь Хаченский, “Известия Императорской Академии Наук”, серия VI, т. III, N 61, Санкт-Петербург, 1909, с. 408.

[11]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 140:

[*]Ամիրսպասալար – XIII դարում հայ-վրացական միացյալ պետության մեջ քաղաքացիական և ռազմական գործերի գլխավոր կառավարիչ, (տե՛ս Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմությունը, h. I, Երևան, 1939, էջ 240-241):

[12]Բարխուտարեանց եպիսկոպոս Մ., Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երևան, 1999, էջ 346:

[13]ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 148; Մանանդյան Հ., Երկեր, h. III, Երևան, 1977, էջ 137:

[14] Ածառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, h. Ա, Երևան, 1942, էջ 65:

զավակ[1]՝ չորս որդի՝ Հասան-Զալալ-Դոլան, Զաքարեն, Իվանեն, Դոլան և երեք դուստր՝ Մարինոն կամ կամ Մարինան ու ևս երկու դուստր, որոնց անունները, ցավոք, որևէ ձևով չեն արձանագրվել և մեզ չեն հասել:

XIII դարի սկզբին՝ 1214թ., Ներքին Խաչենի իշխան Վախթանգ-Տանգիկի վախճանից հետո նրան հաջորդում է իր ավագ որդին՝ Հասան-Զալալ-Դոլան[2]: Վերջինս իշխել է բավականին երկար՝ 47 տարի՝ թողնելով չափազանց հարուստ կենսագրություն:

Կիրակոս Գանձակեցին այսպես է բնութագրել նրան. «...սա (Հասան-Զալալ-Դոլան – Ս. Հ-Զ.) քուեր որդի էր մեծամեծ իշխանացն Զաքարէի և Իւանէի, այր բարեպաշտ և աստուածասէր, հեզ և հանդարտ, ողորմած և աղքատասէր, ճգնող յաղօթս և ի խնդրուածս իբրև զայնս՝ որ յանապատսն կային. զպաշտօն տընջեան և գիշերոյ անխափան կատարէր, ուր և լինէր՝ իբրև զվանօրայսն, և զյիշատակ յարութեան Փրկչին յաւուր միաշաբաթուջ յոտանաւոր տքնութեամբ անցուցանէր անքուն. և էր յոյժ քահանայասէր և ուսումնասէր և ընթերցող աստուածային կտակարանացն»[3], այնուհետև պատմիչն ավելացնում է. «...աստվածապաշտ, երկյուղած ու պարկեշտ մարդ էր, ազգությամբ հայ»[4]:

Թեև պատմիչ Կ. Գանձակեցու խոսքը Հասան-Զալալ-Դոլայի ծագման վերաբերյալ ավելի քան հստակ է և որևէ հիմք չկա կասկածելու նրա խոսքի ճշմարտացիությանը, քանզի դրանք ականատես վկայի խոսքեր են, այնուամենայնիվ մեր օրերում դեռ կան հետազոտողներ, որոնց համար Արցախի իշխանաց իշխանի ազգային պատկանելության հարցը քննության առարկա է[5]:

Կովկասի հարցերում մասնագիտացած բրիտանացի գրող և լրագրող Թոմաս դե Վաալը, ցանկանալով պարզել Հասան-Զալալ-Դոլայի ծագումը, նամակով դիմել է ԱՄՆ Նյու Ջերսի նահանգի Ռոհան քոլեջի պրոֆեսոր՝ Կովկասի XIII դարի պատմության մասնագետ Ռոբերտ Հյուսենին[6]:

2001թ. հունվարի 10-ին պրոֆեսոր Հյուսենը հանգամանալից պատասխան է ուղարկել Թոմաս դե Վաալին[7]: Գիտնականը, հետազոտելով Հասան-Զալալ-Դոլայի ծագումնաբանությունը, հանգել է այն եզրակացության, որ այն բացառապես հայկական է՝ այդ մասին մասնավորապես գրելով. «[Հասան-Զալալի] նախնիները հայտնի են մինչև չորրորդ դարը՝ ներառելով հետևյալ ազնվական տոհմերը. հայրական կողմը՝ (1) Սյունիքի իշխանները (ավելի ուշ՝ թագավորները): Իր նախնիների հետ ամուսնացած իշխանուհիների գծով Հասան-Զալալը սերում է (2) Բագրատունիների տոհմի հայոց թագավորներից (Անի մայրաքաղաքով), (3) Արծրունիների տոհմի Վասպուրականի հայոց թագավորներից (Վան մայրաքաղաքով), (4) Գարդմանի իշխաններից, (5) Պարսկաստանի Սասանյանների տոհմից և (6) Արշակունիներից՝ Ալբանիայի երկրորդ թագավորական տոհմից, որն ինքը (7) հնագույն պարթևական թագավորների ճյուղերից է»[8]:

Այսպիսով՝ անվիճելի է այն փաստը, որ Հասան-Զալալ-Դոլան սերում է հայոց ամենանշանավոր ու հռչակավոր տոհմերից:

Սակայն որտեղի՞ց այդ դեպքում նրա օտարահունչ անունը, ի՞նչ են նշանակում այս անձնավորության երեք ոչ հայկական անվանումները՝ Հասան, Զալալ և Դոլա:

Այն ժամանակների Արցախում և Հայաստանի մյուս մասերում մեծ տարածում գտած ո՛չ հայկական, նույնիսկ ո՛չ քրիստոնեական, օտար անունները, ինչպես Հասան, Վախթանգ, Քուրդ և այլն, զարմանալի չեն լինի, եթե հաշվի առնենք Իրանի, ապա և հատկապես արաբական խալիֆայության, նրանց միջոցով էլ՝ օտար մշակութային միջավայրերի ազդեցությունը հայ ժողովրդի վրա: Այլ խոսքով, պատմական տվյալ ժամանակաշրջանում արաբական լեզուն եղել է բավականին հարգի և ունեցել է մոտավորապես այն արժեքը, ինչ որ անգլերենը ժամանակակից աշխարհում: Այդ պատճառով էլ հասարակության մեջ մեծ հռչակ վայելող մարդկանց կոչել են արաբական անուններով, որպես յուրահատուկ արժանիքի տեր անձնավորությունների, դրանցից են օրինակ Զալալը, Դոլան և այլն:

---

[1]Մատենադարան, ձեռագիր N 378, թ. 308ա-308բ; Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, կազմեց Բարխուդարյան Ս., Երևան, 1982, էջ 40, 63:

[2] ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 172-173:

[3] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 254:

[4]Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները Վարագ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 257-258:

[5]Դե Վաալ Թ., Սև այգի, Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Երևան, 2007, էջ 220, 223:

[6] Նույն տեղում, էջ 225:

[7]Նույն տեղում, էջ 423:

[8]Նույն տեղում, էջ 226:

Հնում, ինչպես և այսօր, Արցախում ու նաև ամբողջ Հայաստանում, սովորության համաձայն, ավագ որդուն կոչել են պապի անունով: Տվյալ դեպքում հայր Վախթանգ-Տանգիկն ավագ որդուն՝ Հասան-Ջալալ-Դոլային կոչել է իր հոր՝ Հասանի անունով: «Հասան»-ը արաբերեն բառ է, որ հայերեն նշանակում է «գեղեցիկ տղամարդ»[1]:

Խաչենի իշխան Հասանին անվանում էին նաև «Ջալալ» և «Դոլա»: «Ջալալ»-ը դարձյալ արաբերեն է և հայերեն նշանակում է «փառք, վեհություն, մեծություն»[2]: «Դոլա»-ն էլ արաբերեն «դավլաթ-դովլաթ» բառից է և հայերեն նշանակում է «հարստություն, մեծություն, ինչք, պետություն, իշխանություն»[3]:

Արցախահայությունն իր իշխանապետին՝ Հասանին, մեծարելով, կոչել է «Ջալալ-Դոլա», որ բառացի թարգմանաբար նշանակում է «փառք պետությանը», «փառք իշխանությանը»:

Սա բառացի թարգմանությամբ մոտավորապես նման է ռուսերեն «слава царю» (փառք թագավորին) արտահայությանը, իսկ իմաստային թարգմանության պարագայում «Ջալալ-Դոլա» արտահայտությունն, ըստ երևույթին, նշանակում է «պետության փառք», «պետության վեհություն»:

Հարկ է նշել, որ Հասանի եղբայր Զաքարեն էլ է ունեցել համանման անվանում, նա էլ կոչվել է «Նասր-Դոլա», ինչը թարգմանաբար հայերեն նշանակում է «օգնություն կամ հաղթություն պետությանը»[4]:

Շատ կարճ ժամանակամիջոցում Հասան-Ջալալ-Դոլան, շնորհիվ իր կառավարման, դիվանագիտական և զորավարական աստվածատուր տաղանդի, ձեռք է բերում գահերեցի կարգավիճակ: Իր կառավարած գավառի՝ Ներքին Խաչենի իշխանության տարածքին միացնելով անիշխան մնացած Հաթերք գավառի տարածքը՝ Հասան-Ջալալ-Դոլան դառնում է Արցախի արդեն երկճյուղ դարձած իշխանությունների (Ներքին Խաչենի և Վերին Խաչենի կամ Ծարի) լիիրավ ղեկավարը՝ վիմագիր արձանագրություններում և ձեռագիր մատյաններում կոչվելով Արցախի արքա, թագավոր[5], կամ իշխանաց իշխան[6]:

Հասան-Ջալալ-Դոլայի շինարարական գործունեության մասին պատմող առաջին արձանագրությունը պահպանվել է նրա տոհմին պատկանող Վաճառ գյուղատեղում, որի մասին վկայում են այժմյան Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղի մոտ գտնվող հետքերը, որտեղ 1229թ. Հասան-Ջալալ-Դոլան կառուցել է Սուրբ Ստեփանոս եկեղեցին[7]:

1248թ. էլ Հասան-Ջալալ-Դոլան ու իր կինը՝ Մամքանը, վերանորոգել են թաթար-մոնղոլների ավերած Կեչառիսի վանքը[8]:

Սակայն Արցախի իշխանաց իշխանի շինարարական գործունեության գլուխգործոցն է համարվում Գանձասարի՝ Սուրբ Հովհաննես Մկրտչի անունը կրող եկեղեցին, որի կառուցումը նա սկսել է 1216թ.:

Գանձասարի եկեղեցու կառուցման պատմությունը հանգամանորեն ներկայացրել է XIII դարի արժանահավատ հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին՝ միաժամանակ հաղորդելով, որ Գանձասարը հնում եղել է Ներքին Խաչենի իշխանական տոհմի տապանատունը:

Սարգիս արքեպիսկոպոս Հասան-Ջալալյանն այսպես է մեկնաբանում Գանձասար անունը. «Է գիւղ փոքրիկ առ համանուն լերամբն Գանձասարայ յորում է վանքն Գանձասար. արժանայիշատակ հայր Ղուկասն Ինճիճեան ասէ թէ այն լեառն կոչի Գանձասար այն է լեառն Գանձակաց, իսկ ես հաւանական դատիմ զպատմութիւն բնակչացն, որք ասեն թէ յայսմ լերին գտանին հանքք արծաթոյ, վասնորոյ և կոչեցաւ Գանձասար, այն է լեառն գանձուց, որք ի ստուգութիւն բանից իւրեանց ցուցին ինձ զտեղիս յորոց հանեալ են երբեմն զարծաթ բազում»[9]:

Գանձակեցին ասում է՝ «...յոլով ամս աշխատ եղեն ի նման»[10]: Գանձասարի կառուցման մեծ արձանագրությունից հայտնի է դառնում, որ եկեղեցու կառուցումը տևել է 22 տարի՝ 1216-1238թթ.:

---

[1] Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Երևան, 1946, էջ 56:
[2] Նույն տեղում հ. Դ, Երևան, 1948, էջ 286:
[3] Նույն տեղում, հ. Բ, Երևան, 1944, էջ 76:
[4] Նույն տեղում, հ. Դ, էջ 24:
[5] Դատեան վարդապետ Խ., Արցախ, երկասիրեց Մակար եպ. Բարխուդարեանց, «Արարատ», N 2, Էջմիածին, 1896, էջ 81; Ռիլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 213:
[6] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 41; Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, էջ 200:
[7] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 79:
[8] Յովսէփեան կաթողիկոս Գ., Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 317:
[9] Հասան-Ջալալեանց վարդապետ Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 181-182:
[10] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 256:

կարծում ենք՝ շինարարության երկար տևելու պատճառը օտարների պարբերական արշավանքներն էին դեպի Արցախ. նախ XIII դարի 20-ական թվականներին Ջալալ ադ-Դինի հորդաների արշավանքը, այնուհետև թաթար-մոնղոլների ավերիչ առաջին ասպատակությունները, որին էլ հաջորդեց երկրորդ արշավանքը:

Ժամանակի պատմիչները և հատկապես Կիրակոս Գանձակեցին հիացմունքով են նկարագրում եկեղեցու շինարարությունն ու նրա օծման արարողության մանրամասները:

Եկեղեցու օծման հանդիսավոր արարողությունից հետո, Հասան-Ջալալ-Դոլան շքեղ ճաշկերույթ է կազմակերպել: Ինքն անձամբ հյուրասիրել և սպասարկել է մասնակիցներին, ապա յուրաքանչյուրին իր պատվի համեմատ առատաձեռն նվերներ հանձնելով, բոլորին ճանապարհել է: Այս հանդիսությունը, համաձայն արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակեցու, տեղի է ունեցել 1240 թվականին՝ Վարդավառի մեծ տոնի օրը[1]:

Պրոֆեսոր Բ. ՈՒլուբաբյանը պարզել է, որ 1240թ. Վարդավառի մեծ տոնը տեղի է ունեցել հուլիսի 22-ին և համապատասխանել է շաբաթվա յոթերորդ՝ կիրակի օրվան[2]:

Փաստորեն, համաձայն արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակեցու վկայության՝ 1240 թվականի Վարդավառի մեծ տոնի օրը առանձնահատուկ շքեղ է եղել Խաչենագետի հովիտը: Այդ օրը Արցախի կաթողիկոս Ներսեսն իր եպիսկոպոսներով ու հայոց աշխարհի ծայրերից ժամանած 700 քահանաներ պատրաստվում էին օծել Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտչի անվան տաճարը:

Օծման պաշտոնական արարողությունից հետո բացվել են հյուրասիրության սեղաններ: Արցախի իշխանաց իշխանն անձամբ սպասարկել է բոլոր հյուրերին: Ավելին, հանդիսավոր խնջույքից հետո ոչ ոք դատարկաձեռն չի հեռացել, Հասան-Ջալալ-Դոլան բոլորին նվերներ է հանձնել՝ յուրաքանչյուրին իր դիրքին ու պատվին համապատասխան:

Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո Հասան-Ջալալ-Դոլան եկեղեցու պատերից մեկի վրա փորագրել է տվել մի բավականաչափ խոսուն արձանագրություն, որը վերաբերում է ինչպես եկեղեցու կառուցմանն, այնպես էլ Հասան-Ջալալյանների իշխանական տան տոհմաբանությանը[3]:

Հասան-Ջալալ-Դոլայի գահակալության սկզբում տեղի ունեցան թաթար-մոնղոլական մահասփյուռ արշավանքները, որոնք չափազանց բացասական ազդեցություն ունեցան մասնավորապես Արցախի ու ընդհանրապես ողջ Կովկասի քաղաքական զարգացման ընթացքի վրա:

Ժամանակի արժանահավատ պատմիչ Կիրակոս Գանձակեցին այսպես է նկարագրել թաթար-մոնղոլների հանկարծակի ներխուժումն Անդրկովկաս. «Ի ՈԿԹ (1220) թուականին...(թաթար-մոնղոլները – Ս. Հ-Ջ.) յանկարծակի յեղակարծ ժամու յոլով գունդս զօրու ծանու ամենայն կազմութեամբ ելեալ ընդ դուռն Դարբանդայ ուժգին դիմեցմամբ, և եկեալ յաշխարհն Աղուանից, գալ անցանել յաշխարհս Հայոց և Վրաց, և զոր ինչ գտանէր ի ճանապարհին՝ զամենեսեան սրոյ ճարակ տայր՝ զմարդ և զանասուն, մինչև ի շունս անգամ, և մեծագին հանդերձից և այլ ընչից փոյթ ինչ ոչ առնէին, բաց ի ձիոյ. և փոյթ ընդ փոյթ չոգան մինչև ի քաղաքն Տփխիս, և դարձեալ եկին իջին յաշխարհն Աղուանից, ի սահմանս Շամքոր քաղաքիս...»[4]:

Սա թաթար-մոնղոլների առաջին արշավանքն էր Անդրկովկաս և հարևան երկրներ, որով նրանք կատարել էին հետախուզություն: «...1223 թվին, մոտ երեք տարվա արշավանքներից հետո, սրանք (թաթար-մոնղոլները – Ս. Հ-Ջ.) վերադարձան Արևելք՝ Չինգիզ-խանի մոտ, հավաքած լինելով կարևոր տեղեկություններ արևմտյան այն երկրների մասին, որ իրենք նվաճելու էին մոտ ապագայում»[5] - միանգամայն իրավացիորեն գրել է ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը:

Մոնղոլիայի մայրաքաղաք Կարակորումում, որը գտնվում էր Օրխոն գետի վրա[6], 1235թ. թաթար-մոնղոլական ռազմաքաղաքական բարձրագույն ժողովը՝ կուրուլթայը, որոշում ընդունեց նոր արշավանքներ սկսել՝ նպատակ ունենալով մոնղոլական տիրապետությունը տարածել նաև Ռուսաստանի, Արևելյան Եվրոպայի և Անդրկովկասի դեռևս չնվաճված երկրների վրա[7]:

Եվ ահա 1236թ. կուրուլթայում ընդունված որոշումն իրագործելու մտադրությամբ արշավանքներ են ձեռնարկվում մի կողմից դեպի Ռուսաստան Չինգիզ խանի մեծ որդի՝ Ջուչիի որդի Բաթու խանի գլխավորությամբ, մյուս կողմից դեպի Անդրկովկաս Զարմաղանի գլխավորությամբ[8]:

---

[1] Նույն տեղում, էջ 256:
[2] ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 177:
[3] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 38-40; Բարխուտարեանց եպիսկոպոս Մ., նշվ. աշխ., էջ 250-251:
[4] Պատմութիւն Հայոց Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 190:
[5] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 196:
[6] Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 317:
[7] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 210; Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Երևան, 1976, էջ 606:
[8] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 210-211; Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 606:

Արցախ-Խաչենը բաժին էր ընկել Զուղբուղա զորավարին[1], որն, ըստ Միքայել Չամչյանի, թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Զարմաղանի եղբայրն էր[2]:

Ի վերջո, թաթար-մոնղոլները հասնում են Արցախի սահմաններին: Նրանց թվում էր, թե Արցախը ևս կարող են անարգել նվաճել, ինչպես մինչ այդ նվաճել էին Հայաստանի մյուս նահանգները: Սակայն նրանք, չարաչար, սխալվում էին: Արցախում իր զորքերով նրանց ընդառաջ ելավ մեծ հայրենասեր ու քաջ զորավար, իշխանաց իշխան Հասան-Զալալ-Դոլան՝ իր հայրենիքին ու ժողովրդին տեր կանգնելու ամուր վճռականությամբ:

Այս հեռատես իշխանաց իշխանն իր երկրի բնակիչներին նախապես կենտրոնացրել էր երկու անառիկ բերդերում՝ Կաչաղակաբերդում[3] (Հավքախաղացում)* ու Խոխանաբերդում**: Հասան-Զալալ-Զալալ-Դոլան իր զորքով մարտի է բռնվում թաթար-մոնղոլների հետ: Երկարատև ճակատամարտի արդյունքում, սակայն, արնածարավ կողոպտիչները մեծ դժվարությամբ կարողանում են նվաճել Կաչաղակաբերդը: Նրանք գաղտագողի թափանցում են բերդն ու սրի քաշում ներսում գտնվող բազմությանը, իսկ մի մասին էլ գահավեժ անում: «...ի բազմութենէ անկելոցն ծածկէր երկիրն և արիւնն առու եղեալ՝ իբրև զջուր երթայր, և յոչ ոք խնայեցին և ոսկերքն յետ բազում ժամանակաց իբրև զբերդուկս քարանց կուտակեալ երևէին»[4] - գրել է ականատես, պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Երկու կողմերն էլ ունենում են մեծ թվով կորուստներ:

Առաջին ամրոցը նվաճելուց հետո թաթար-մոնղոլները շարժվում են դեպի երկրորդ ամրոցը՝ Խոխանաբերդը: Այստեղ ևս Հասան-Զալալ-Դոլան ճակատամարտի մեջ է մտնում նրանց հետ: Երկարատև, կատաղի պայքարից հետո, տեսնելով, որ անհնար է գրավել այս բերդը՝ թաթար-

---

[1] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 217:

[2] Չամչյանց Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 210:

[3] Սարգսյան Ս., Կաչաղակաբերդ, ,Լրաբեր հասարակական գիտություններիե, N 1, Երևան, 1990, էջ 45:

*Գտնվում է Խաչեն գետից հարավ՝ Քոլատակ և Բաղարա գյուղերի արանքում՝ մի բարձր և անմատչելի ժայռի վրա, (տե՛ս ՈԻլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 136): Ամրոցի Կաչաղակաբերդ անվանումը կապվում է այն ավանդության հետ, թե անցյալում պարտություն չտեսած և համառ դիմադրությամբ հռչակված ամրոցի պաշտպանները, երկար ժամանակ ջուր և սննդամթերք չունենալով, նահատակվում են, բայց չեն հանձնվում թշնամուն: Իսկ երբ կաչաղակներն ու մյուս գիշատիչ թռչունները սկսում են աղմուկ-աղաղակով պտույտներ գործել ամրոցի վրա, թշնամին կռահում է, որ պաշտպանները կենդանի չեն: Ահա այսպես առաջացել է ամրոցի Կաչաղակաբերդ կամ Հավքախաղաց անվանումը: Պատմական տարբեր ժամանակահատվածներում ամրոցն ունեցել է տարբեր անվանումներ. մինչև X դարը այն կոչվել է Խաչենի բերդ, XIII դարում ամրոցը հիմնականում հայտնի է եղել Սխսաղան Հավքախաղաց անունով, իսկ սկսած XV դարից այն կոչվել է Կաչաղակաբերդ, (տե՛ս Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 41):

**Բերդը պարսկերեն կոչվում է Խոխանաբերդ – հայերեն թարգմանաբար նշանակում է Իշխանաբերդ, (տե՛ս Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 317): Գտնվում է Գանձասարի եկեղեցուց հարավ՝ Խաչեն գետի աջ ափին՝ ծովի մակերևույթից 1739-1812 մ. բարձրությամբ լեռան վրա՝ այժմյան Մարտակերտի շրջանի Վանք գյուղից 3 կմ. հարավ-արևմուտք: Կոչվում է նաև Թարխանաբերդ, քանի որ գտնվում է Թարխանասար կոչվող լեռան վրա, (տե՛ս Мкртчян Ш., Историко-архитектурные памятники Нагорного-Карабаха, Ереван, 1989, с. 21): Ունի ավելի քան 2700 տարվա գրավոր հիշատակություն, (տե՛ս Կարագեոզեան Յ., Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հ. I, գ. 1, Երեւան, «Մագաղաթ», 1998, էջ 139): Ամրոցից փոքր-ինչ հյուսիս գտնվում են Դարպասներ կոչվող իշխանական ապարանքի ավերակները, (տե՛ս Հասան-Զալալեանց վարդապետ Ս., Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Ա, Տփխիս, 1842, էջ 24; Мкртчян Ш., ук. соч., с. 21): Միջնադարում Հայաստանում իշխանական ապարանքները կոչվել են «դարաբաս», «դարապաս», (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատոր առաջին, Երևան, 1979, էջ 603-604), կամ «դարբաս», «դարպաս», (Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 151): Գրականության մեջ Խաչենի իշխանական ապարանքը՝ «Դարպասներ»-ը, կոչվում է նաև Ռուզանի բերդ: Ըստ ավանդության այն պատկանել է Հասան-Զալալ-Դոլայի դուստր Ռուզանին՝ ծառայելով նրա համար որպես ամառային պալատ: Պահպանվել են ապարանքի պարսպի մեծ մասի հիմքերը կիսակործան անկյունային բուրգերով ու դարպասով, երկու սենյակի պատերն ու ծածկի որոշ մասեր, ինչպես նաև մի քանի այլ սենյակների մնացորդներ: Ապարանքը շինարարական կամ այլ արձանագրություն չունի: Տեղագրական երկերում այն Դարպասներ անվան տակ էլ ներկայացվում է որպես Խաչենի XIII դարի նշանավոր իշխանաց իշխան Հասան-Զալալ-Դոլայի ապարանք, (Ղուլյան Ա., Խաչենի իշխանական ապարանքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», N 3, Երևան, 1984, էջ 51): Իշխանական ապարանքի ավերակներից մի քանի մետր հեռավորության վրա՝ կողք կողքի, կառուցված են երկու միջին չափերի բազիլիկ եկեղեցիներ, (Мкртчян Ш., ук. соч., с. 22): Խոխանաբերդն ավերվել է XV-XVI դարերում՝ թյուրքական արշավանքների ժամանակ, (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. II, Երևան, 1988, էջ 765): Հարկ է նշել, որ Խոխանաբերդն առ այսօր չի ենթարկվել սպառիչ հնագիտական ուսումնասիրության:

[4] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 253:

մոնղոլները, դիմում են Արցախի իշխանաց իշխանին՝ առաջարկելով խաղաղություն: Հասան-Ջալալ-Դոլան մեծ նվերներով իջնում է իր բերդից և հաշտություն կնքում Արցախը նվաճելու հրաման ստացած Ջուղբուղա զորավարի հետ: Մոնղոլները «...մեծարանս արարեալ նմա (Արցախի իշխանաց իշխանին – Ս. Հ-Ջ.), տան զաշխարհն իւր ի ձեռս նորա այլ ևս յաւելուածով...»[1]:

Ինչպես տեսնում ենք, իր քաջության և իմաստուն քաղաքականության շնորհիվ Հասան-Ջալալ-Դոլան կարողացել է ոչ միայն ապահովել Արցախի անվտանգությունն, այլև մեծացնել նրա սահմանները՝ թաթար-մոնղոլներից ստանալով նոր հողեր ու տարածքներ:

Դեպի Արցախ թաթար-մոնղոլների արշավանքը տեղի է ունեցել մոտավորապես 1238-1239թթ., թերևս հենց 1239թ., քանզի, ըստ երևույթին, հենց այս արշավանքի պատճառով է, որ Արցախի իշխանաց իշխանը, 1238թ. ավարտելով Գանձասարի եկեղեցու կառուցումը, ստիպված է եղել օծման հանդիսավոր արարողությունը կատարել երկու տարի անց՝ 1240թ.:

Ամենայն հավանականությամբ հենց այս արշավանքի ժամանակ էլ Հասան-Ջալալ-Դոլան ստիպված է լինում թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Չարմաղանի որդուն՝ Բորա նուինին*, կնության տալու իր դստերը՝ գեղեցկուհի Ռուզաքանին (Ռուզանին)**, որի շնորհիվ, ըստ երևույթին, թաթար-մոնղոլներն ավելի մեղմ քաղաքականություն են սկսում վարել Հասան-Ջալալ-Դոլայի ու Արցախի նկատմամբ:

1242թ. սկզբներին թաթար-մոնղոլների մեծ խանից հրաման ստացվեց թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար, համբացած Չարմաղանի[2] փոխարեն նոր հրամանատար ընտրելու մասին: Ընտրության արդյունքում նոր զորավար և առաջնորդ ընտրվեց Բաչու-Ղուրչին[3], սակայն իշխանությունը պետք է վարեր Չարմաղանի կինը՝ Ելթինա խաթունը[4]:

Նոր զորահրամանատար Բաչու-Ղուրչին Արևմտյան Հայաստանը սելջուկներից նվաճելու համար հայկական զորագնդերից բանակ է կազմում, որի մեջ ընդգրկում է նաև Հասան-Ջալալ-Դոլային, վերջինիս քեռիներ Իվանեի ու Զաքարեի որդիներին՝ Ավագին և Շահնշահին իրենց զորագնդերով:

Արևմտյան Հայաստանն ու Արևելյան Վրաստանը նվաճելուց հետո մոնղոլները ցանկանում էին իրենց իշխանությանը ենթարկել նաև Իկոնիայի Սելջուկյան պետությունը:

Պարտության մատնելով սելջուկներին՝ Բաչու-Ղուրչին որոշում է շարունակել հաղթական երթն ու ծնկի բերել նաև սելջուկների առաջնորդ Ղիյաս-Էդդին քայ Խոսրով II-ի (1237-1247թթ.) դաշնակիցներին, մասնավորապես՝ Հայկական Կիլիկիայի թագավոր Հեթում I-ին:

Սակայն Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի դիվանագիտական միջնորդության շնորհիվ Հայկական Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի (1226-1270թթ.) ու թաթար-մոնղոլների միջև կնքվում է դաշինք, ինչի արդյունքում Կիլիկիան փրկվում է վերահաս կործանումից:

Հեթում արքան, տեղեկանալով իր դաշնակցի՝ Ղիյաս-Էդդինի պարտության մասին, որպես հեռատես միապետ, որոշում է մի պատգամավորություն ուղարկել թաթար-մոնղոլական բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարության մոտ՝ առաջարկելով կնքել խաղաղության և բարեկամության մասին դաշնագիր[5]:

Շատ լավ իմանալով, որ ժամանակի հայ քաղաքական իրականության մեջ եթե կար մեկն, ով մեծ հարգանք ու պատիվ էր վայելում թաթար-մոնղոլական բարձրագույն ղեկավարների շրջանում, ով օժտված էր հմուտ դիվանագիտական կարողությամբ՝ պետք է ենթադրել, որ Հեթում արքան մի դեսպանություն էլ ուղարկել էր Արցախի իշխանաց իշխանի մոտ՝ խնդրելով նրա միջնորդությունը թաթար-մոնղոլական բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպելու և բանակցելու համար:

Լինելով հեռատես պետական գործիչ ու հմուտ դիվանագետ՝ Հասան-Ջալալ-Դոլան, բնականաբար, հանձն է առնում իրականացնել խիստ կարևոր, ազգային նշանակություն ունեցող

---

[1] Նույն տեղում, էջ 255:

* թաթար-մոնղոլ. - հայերեն նշանակում է պարոն, (տե՛ս Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 197):

**Այս ամուսնության վերաբերյալ Մուրացանը 1881թ. գրել է պատմական դրամա, որը հրատարակվել է 1900թ. «Թատրոն» հանդեսում, (տե՛ս Մուրացան, Ռուզան կամ հայրենասեր օրիորդ, Երևան, 1944):

[2] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 263:

[3] Նույն տեղում, էջ 263-264:

[4] Նույն տեղում, էջ 274: «Խաթուն»-ը մահմեդական ծագում ունեցող բառ է, որը հայերեն նշանակում է «կին», «պատվավոր կին», «տիկին», «խանում», (տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա, Երևան, 1961, էջ 362):

[5] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 269:

առաքելությունը: Եվ 1243թ. Կեսարիայում[1], որը համապատասխանում է այժմյան Թյուրքիայի Կայսերի քաղաքին*** Արցախի իշխանաց իշխանը Կիլիկյան հայոց թագավորական առաջին պատվիրակությանը ներկայացնում է թաթար-մոնղոլական զորքերի գլխավոր հրամանատար Բաչու նուինին, նախկին հրամանատար Զարմաղանի կնոջը՝ Ելթինա խաթունին* ու մոնղոլ մյուս մեծամեծերին[2]:

Հայկական պատվիրակության կազմում էին Կիլիկյան հայոց զորքերի գլխավոր հրամանատար Սմբատ Սպարապետը (գունդստաբլը՝ 1208-1276թթ.), ով, ի դեպ, Հեթում I արքայի ավագ եղբայրն էր[3], վարդապետ Սիմոն Ասորին և Հեթում արքայի հայրը՝ Կոստանդին[4] պայլը**, ով գլխավորում էր պատվիրակությունը[5]:

Հասան-Ջալալ-Դոլայի անմիջական միջնորդությամբ տեղի ունեցած հայ-մոնղոլական բարձր մակարդակի բանակցությունների արդյունքում կնքվում է մի պայմանագիր, ըստ որի Կիլիկյան հայոց թագավորությունը ճանաչում էր իր կախվածությունը մոնղոլական կայսրությունից, միաժամանակ պարտավորվում էր հարկ եղած դեպքում պարենամթերք մատակարարել մոնղոլական զորքերին, իսկ անհրաժեշտության դեպքում տրամադրել նաև հայկական օժանդակ զորքեր:

Մոնղոլներն էլ, ընդունելով Հեթում I-ի ընծաները, հաստատեցին բարեկամություն արքայի հետ՝ տալով նաև այդ ամենը հաստատող գիր՝ ըստ իրենց հավատի, որն «էլ-տամղա»*** էին կոչում[6]:

Նկատի ունենալով Հասան-Ջալալ-Դոլայի միջնորդական խիստ կարևոր առաքելությունը՝ կարող ենք ասել, որ Արցախի իշխանաց իշխանը զգալի կշիռ և հեղինակություն է ունեցել ժամանակի միջազգային քաղաքականության մեջ:

Հասան-Ջալալ-Դոլայի բարեկամությունը թաթար-մոնղոլական կայսրության առաջին դեմքերի հետ, հմուտ քաղաքականություն վարելու կարողությունը, ինչպես նաև անելանելի թվացող իրավիճակներում արագ ու արդյունավետ լուծումներ գտնելու ունակությունը, կարծեք թե, պետք է հնարավորություն տային Արցախի իշխանաց իշխանին հանգիստ ու խաղաղ իշխանավարման:

Սակայն, ցավոք սրտի, հետագա դեպքերն ու իրադարձությունները ծավալվեցին ի վնաս Հասան-Ջալալ-Դոլայի, ինչի արդյունքում էլ տարածաշրջանի մոնղոլ հարկահան Արղունի հրամանով 1261թ. իշխանաց իշխանը ձերբակալվում է և տարվում Իրանի Ղազվին քաղաքը, ապա կարճ ժամանակ անց ենթարկվում է մահապատժի[7]:

Հասան-Ջալալ-Դոլայի նահատակությունը, Կիրակոս Գանձակեցու և Վարդան Արևելցու արժանահավատ վկայություններով, տեղի է ունեցել 1261թ.[8]:

Հասան-Ջալալ-Դոլայի որդին՝ Աթաբեկ–Իվանեն, «...առաքեաց...արս հաւատարիմս և ետ գողանալ զնշխարհս հօր իւրոյ, զի ընկեցեալ կայր ի ջրհոր մի ցամաք, զի Պարսիկն որ ի տան իւրում ունէր զնա (Հասան-Ջալալ-Դոլայի – Ս. Հ-Ջ.) ի կապանս, տեսեալ աստուածայինս ի վերայ նորա, զի իբրև սպան զնա, իջեալ լոյս սաստիկ ի վերայ, խնամարկեալ ընկէց զնա ի ջրհորն, զի յետ աւուրց թաղէսցէ զնա պատուով: Նա եցոյց խնդրողացն զմարմինն նորա, և պատմեաց զսքանչելի տարան զնա (Հասան-Ջալալ-Դոլայի մարմինը – Ս. Հ-Ջ.) ի տուն ժողովեալ խնդութեամբ, և բարձեալ տարան

---

[1]Գալստյան Ա., Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները, «Պատմաբանասիրական հանդես», N 1, Երևան, 1964, էջ 99:

***Քաղաք Կապադովկիայում, այժմյան Թուրքիայի Կայսերի վիլայեթի վարչական կենտրոնը, (տե՛ս Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 2, Երևան, 1995, էջ 664):

*Ելթինա խաթունը քրիստոնյա էր, մինչև Զարմաղանի կինը դառնալը Չինգիզ խանի կինն էր եղել, (տե՛ս Орбели И., հАсан-Джалал, князь Хаченский, с. 422).

[2] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 269:

[3] Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 140, 199:

[4]Նույն տեղում, էջ 140: Մինչև իր մահը Սմբատ սպարապետը եղել է Հեթում I արքայի գահակիցն ու իմաստուն խորհրդականը, (տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. V, Երևան, 1979, էջ 612):

**Պայլ – պարոնի կամ ասպետի փոխանորդ, (տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. IV, Երևան, 1979, էջ 17):

[5] Գալստյան Ա., նշվ. աշխ., էջ 98:

***Էլ-տամղա – արտոնագիր, պետությունից տրված արտոնաթուղթ, (տե՛ս Գանձակեցի Կ., Հայոց պատմություն, էջ 208):

[6] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 270:

[7] Նույն տեղում, էջ 375:

[8]Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 375; Մեծին Վարդանայ Բարձրբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական, էջ 200:

զնա ի տուն իւր, և թաղեցին ի վանքն Գանձասար ի գերեզմանս հարց իւրոց: Այլ և բերողք նշխարացն տեսին ի ճանապարհի զնոյն տեսիլ լուսոյն ի վերայ նշխարացն»[1]:

Թեև Կիրակոս Գանձակեցին գրել է, որ Հասան-Ջալալ-Դոլայի մասունքները «...թաղեցին ի վանքն Գանձասար ի գերեզմանս հարց իւրոց», այնուամենայնիվ, մինչ օրս հայտնի չէ Արցախի իշխանաց իշխանի գերեզմանի գտնվելու ստույգ տեղը:

Ինչո՞ւ այսօր Գանձասարի եկեղեցու գավթում ի շարս բազում տապանաքարերի չկա մի տապանաքար, որի արձանագրությունն ընթերցելով հնարավոր լինի հստակ ասել, որ ահա սա է Արցախի իշխանաց իշխան Հասան-Ջալալ-Դոլայի գերեզմանը:

Զարմացանց դժվար է հավատալ, թե Աթաբեկը հոր գերեզմանի վրա տապանաքար չի դրել մասունքներն ամփոփելուց հետո: Այդ դեպքում որտե՞ղ է իշխանաց իշխանի գերեզմանը:

Գանձասարի եկեղեցու գավթի արևելյան մասում՝ դեպի եկեղեցին տանող մուտքի առջև գտնվող տապանաքարը, որը գանձ որոնողների կողմից երեք մասի է բաժանվել, այնուհետև կրկին դրվել խառնված գերեզմանի վրա, բազում թյուրիմացությունների տեղիք է տալիս թեԲ այցելուներին, թե եկեղեցում ծառայող հոգևորականներին, ովքեր սխալմամբ Հասան-Ջալալ-Դոլայի թոռանթոռ՝ Ջալալ Մեծի տապանաքարը նույնացնում են Հասան-Ջալալ-Դոլայի տապանաքարի հետ:

Հիշյալ տապանաքարի արձանագրությունն ուշադիր ընթերցելով՝ կարելի է տեսնել, որ այն վերաբերում է XV դարում գործունեություն ծավալած Արցախի իշխան Ջալալ Մեծին, ինչն իրավացիորեն նկատել է Բ. ՈՒլուբաբյանը[2]: Ահա այդ արձանագրությունը.

«ԱՅ[Ս Է] ՀԱՆԳ[ԻՍ]Տ ՄԵԾԻՆ
Զ[ԱԼ]ԱԼԻ[Ն] ԱՂԱԹՍ
ՅԻ[Շ]ԵՑԷՔ ԹՎ[ԻՆ] :ՊՁ: (1431)»[3]:

Մինչդեռ Հասան-Ջալալ-Դոլան նահատակվել է 1261թ.՝ տապանաքարի վրա նշված թվականից 170 տարի առաջ:

Մակար Բարխուտարյանցն այս արձանագրության մասին գրել է. «Հարկ է յայտնել, որ ականաւոր իշխանս Ջալալ-Դօլայ նահատակուած է ՉԺ (1261) թուին, իսկ սորա գերեզմանի շիրմաքարն կրում է Հայոց ՊՁ (1431) թիւը: Յայտնի է, թէ («Այս է հանգիստ մեծին Ջալալին. յաղաւթս յիշեցէք թվ. ՊՁ (1431)») տապանաքարս կամ նահատակութիւնից 170 տարի յետոյ ձգուած է եւ կամ փոխուած է հին տապանաքարն եւ ձգուած նորս եւ կամ այլ է Ջալալ-Դօլայի եւ այլ Ջալալի գերեզմաններն, բայց տապանաքարն միայն մի հատ է»[4]:

Դժվար է հավատալ Բարխուտարյանցի ենթադրություններին, քանզի նախ չէր կարող պատահել, որ Աթաբեկը հոր գերեզմանի վրա տապանաքար չդներ մասունքներն ամփոփելուց անմիջապես հետո, այլ թողներ, որ այն դրվեր հուղարկավորությունից 170 տարի հետո միայն:

Երկրորդ, եթե ընդունում ենք, որ Աթաբեկը հոր գերեզմանի վրա տապանաքար է դրել մասունքներն ամփոփելուց անմիջապես հետո, ապա պետք է ենթադրել, որ նա տապանաքարի վրա փորագրել է տվել նահատակվածի, այսինքն՝ իր հոր, լրիվ կամ մասնակի անունը, այն է՝ «Հասան-Ջալալ-Դոլա» կամ «Հասան-Ջալալ»՝ միևնույն ժամանակ արձանագրելով նաև նահատակության թվականը՝ 1261:

Եվ եթե հետագայում Հասան-Ջալալյան տոհմի ժառանգներն իրենց նախապապի գերեզմանի վրայի ժամանակի ընթացքում մաշված, հին տապանաքարը փոխել են և դրել նորը, ապա ճիշտ է ենթադրել, որ նրանք անխախտ կթողնեին տապանաքարի վրայի գիրը՝ մասնավորապես նահատակվածի անունն ու նահատակության տարեթիվը, ընդամենն արձանագրելով փոփոխության թվականը, այլ ոչ թե Հասան-Ջալալ-Դոլայի անվան ու նահատակության տարեթվի (1261թ.) փոխարեն կփորագրեին Ջալալ Մեծի անունն ու վերջինիս վախճանի թվականը (1431թ.):

Եվ վերջապես երրորդ, անտրամաբանական է ենթադրել, որ Հասան-Ջալալ-Դոլայի և Ջալալ Մեծի գերեզմանների վրա մեկ տապանաքար են դրել, քանզի հիշյալ անձինք ոչ թե ռամիկներ են եղել, այլ ազնվականներ և այս առումով կարելի է մեծ հավանականությամբ ենթադրել, որ նրանց պատվով են հուղարկավորել՝ յուրաքանչյուրի գերեզմանին դնելով առանձին տապանաքար:

Մնում է կարծել, որ Աթաբեկն, անտարակույս, տապանաքար է դրել հոր գերեզմանի վրա, որի ճշգրիտ տեղը, սակայն, դժբախտաբար, մինչ օրս, դեռևս, հայտնի չէ:

---

[1] Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 375-376:
[2] ՈՒլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, էջ 208, 305:
[3] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 64:
[4] Բարխուտարեանց եպիսկոպոս Մ., նշվ. աշխ., էջ 252, 375:

Այսպիսով, Արցախի Առանշահիկների թագավորական տոհմի ժառանգ Հասան-Ջալալ-Դոլան 47 տարի անընդմեջ՝ 1214-1261թթ., հանդիսացել է Արցախի թագավորը կամ իշխանաց իշխանը, կամ իր խոսքով ասած՝ «Բնակաւոր (բնիկ – Ս. Հ-Ջ.) ինքնակալ (ինքնիշխան – Ս. Հ-Ջ.) բարձր և մեծ Արցախական աշխարհի, թագաւոր Խաւխանաբերդի, յոքնասահման (բազմասահման – Ս. Հ-Ջ.) նահանգաւք»[1]:

XIII դարի հայ քաղաքական իրականության մեջ Հասան-Ջալալ-Դոլան ամենանշանավոր պետական, ռազմական ու քաղաքական գործիչներից մեկն էր: Նրա քաղաքական-դիվանագիտական գործունեությունը Հայաստանի միջնադարյան պատմության մեջ եզակի երևույթ էր: Նա փաստացի (դե-ֆակտո) և իրավաբանորեն (դե-յուրե) ներկայացել և օտարների կողմից ճանաչվել է որպես անկախ, ինքնիշխան պետության ղեկավար:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ստեփան Հասան-Ջալալյան - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
ՀՀ Ազգային ժողովի փորձագետ
E-mail: Hasan-Jalal@yandex.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

[1] Դիվան հայ վիմագրության, պրակ V, էջ 38-39:

ՀՏԴ 94(430.2:159.9) Պատմություն

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ և ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գևորգ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Г. Мелконян

НЕМЕЦКИЕ ОФИЦЕРЫ И АРМЯНСКИЙ ГЕНОЦИД

В данной статье обсуждается роль Кайзеровской Германии в деле Армянского геноцида в годы Первой мировой войны со стороны изучения германской исполнительности во время Армянского геноцида, очень важно выяснение деятельности немцев, которые находились в Турции в годы Первой мировой войны.

Данная статья пытается подтвердить тот факт, что некоторые немецкие офицеры не только одобряли деятельность Молодых турков против армян, но и имели участие в деле Армянского геноцида и в угнетение армянских самооборонительных боев.

G. Melqonyan

German officers and Armenian Genocide

The article discusses the question about the role played by the Imperial German officers in the Armenian Genocide during World War I. From the point of view of the investigation on Imperial Germany's role in the Armenian Genocide, important is the revealing of the German officers in Turkey during the First World War.

The aim of it is to certify the fact that some German officers have not only approved the measures taken by the Young Turks towards the Armenians, but have also actively participated in the implementation of the Genocide and in suppressing the self-defensive actions of the Armenians.

Հոդվածում քննարկվում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կայսերական Գերմանիայի զինվորականների դերակատարությունը Հայոց Ցեղասպանության իրականացման գործում: Հայոց Ցեղասպանության ընթացքում կայսերական Գերմանիայի դերակատարության ուսումնասիրման տեսանկյունից կարևոր է առաջին աշխարհամարտի տարիներին Թուրքիայում գտնվող գերմանացի զինվորականների գործունեության վերհանումը:

Հոդվածում փորձ է արվում հաստատելու այն փաստը, որ որոշ գերմանացի զինվորականներ ոչ միայն խրախուսել են երիտթուրքերի գործողությունները հայերի հանդեպ, այլև գործուն մասնակցություն են ունեցել Ցեղասպանության իրագործման և հայկական ինքնապաշտպանական մարտերի ճնշման գործում:

Հայոց ցեղասպանության հարցում գերմանացի զինվորականների դերակատարության հարցը շարունակում է մնալ արդիական: 2016 թ. հունիսի 2-ին Գերմանիայի խորհրդարանում՝ Բունդեսթագում, քվեարկության դրվեց և ընդունվեց «Օսմանյան կայսրությունում 101 տարի առաջ հայերի և մյուս քրիստոնյա փոքրամասնությունների ցեղասպանության և հիշատակի մասին» բանաձևի նախագիծը, որը մշակել էին իշխող կուսակցության մաս կազմող Քրիստոնեա-դեմոկրատական միությունը և Քրիստոնեա-սոցիալիստական միությունը, Սոցիալ-դեմոկրատական ու ընդդիմադիր Կանաչների կուսակցությունները:

20-րդ դարի սկզբին Գերմանիայի ռազմական աջակցությունը Օսմանյան կայսրությանը ավելի մեծացավ, որը պայմանավորված էր Մերձավոր Արևելքում գերմանացիների քաղաքական և տնտեսական շահերի ընդլայնմամբ: Բալկանյան երկրորդ պատերազմում թուրքերը կորցրին Եվրոպայում իրենց նվաճած գրեթե բոլոր տարածքները և կայսրությունը կանգնեցրին կործանման վտանգի առաջ, որը պայմանավորված էր նաև թուրքական բանակի մարտունակության և տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակով: Ուստի 1913թ. մայիսի 22-ին երիտթուրքական կառավարության պաշտոնական հրավերով Կ.Պոլիս ժամանեց գերմանական նոր զինվորական առաքելությունը Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ[1]:

[1] Տե՛ս **Фирбюхер Генрих**, Армения 1915, Уничтожение Турцией культурного народа, (ответственный редактор и автор предисловия Вардгес Микаелян), Ереван, 1991, с. 62 :

Գերմանացիները Թուրքիային աջակցում էին ոչ միայն ռազմական մասնագետներով, այլև նոր զինատեսակների տրամադրմամբ, որի մասին 1914 թ սեպտեմբերի 16-ին «Հորիզոն» օրաթերթը գրում էր. «Թնդանոթաձիգները բաղկացած են երկուհարյուրվաթսուն բատարեաից, վեցական թնդանոթներով, գլխավորապես Կրուպպի գործարանից՝ յոթուկես և ութուկես սանտիմետրանոց: Մի քանի տարի առաջ Թուրքիան ստացել է Կրուպպի եռեսունմեկ արագազարկ բատարեյ և յոթանասուն գնդացիր՝ Գոչկսի տիպի »[1]: Գերմանացիները թուրքերին տրամադրեցին նաև 15 սմ տրամագծով դաշտային հրանոթների երեք մարտկոց, ամենաժամանակակիցները՝ օդաճնշիչ մեխանիզմով, որոնք բացակայում էին անգամ արևմտյան ռազմաճակատում[2], իսկ գերմանական «Deutsch Waffen und Munitionsfabriks» ֆիրման Թուրքիային տրամադրեց 200 հազար «Մաուզեր» համակարգի ատրճանակ[3]: Իրականում Օսմանյան կայսրությանը գերմանացիների կողմից տրամադրված սպառազինությունը ավելի մեծ չափերի էր հասնում, քան վերոնշյալը, և թուրքական բանակի ինչպես ցամաքային, այնպես էլ ռազմածովային ուժերի մարտունակության բարձրացումը պայմանավորված էր ոչ միայն գերմանացի սպաների ներկայությամբ, այլև գերմանական ժամանակակից ռազմական տեխնիկայով:

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում բրիտանացի, ամերիկացի և ֆրանսիացի բարձրաստիճան պաշտոնյաները հաճախ մեղադրում էին գերմանացի սպաներին այն բանի համար, որ նրանք են դրդել երիտթուրքերին, որ վերջիններս արտաքսեն ու բնաջնջեն հայերին, ինչպես նաև օգնել էին նրանց՝ հայերի ցեղասպանությունն իրականացնելու: Այս մեղադրանքները հաճախ դիտարկվում էին որպես պատերազմող երկրների քարոզչական քաղաքականության հետևանք: Ուստի Հայոց ցեղասպանության ընթացքում գերմանացի զինվորականների դերակատարության ուսումնասիրության համար կարևոր է ռազմական նախարար Էնվեր փաշայի գերմանացի <<խորհրդատուների>> գաղտնի խմբի մեջ ընդգրկված բարձրաստիճան գերմանացի զինվորականների գործունեության դիտարկումը: Այդ խմբի մեջ էին հիմնականում օսմանյան տարածքային ուժերի շտաբի պետը, Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանության ծովային գործերով կցորդը, Օսմանյան կայսրությունում գերմանական ռազմական միսիայի ղեկավարը, թուրքական ռազմածովային նավատորմի ցամաքային պաշտպանական ուժերի ընդհանուր տեսուչը և թուրքական ռազմածովային նավատորմի հրամանատարը: Ըստ Գուստի՝ Առաջին աշխարհամարտի տարիներին թուրքական բանակում գործում էին շուրջ 800 գերմանացի սպաներ, որոնց մեծ մասը Օսմանյան կայսրություն էր եկել 1913 թ. գերմանական ռազմական առաքելության շրջանակում[4]:

Առաջին աշխարհամարտից հետո գերմանական մամուլում հայտնվեցին մի քանի հոդվածներ, որոնք փաստում էին հայերի տեղահանման մեջ գերմանացի սպաների ակտիվ մասնակցությունը:1918թ. նոյեմբերի 25-ին Լեփսիուսի «Գերմանահայկական թղթակցություն» ամսագրում հրապարակվեց «Գերմանացիների ունեցած պատասխանատվությունը» վերնագրով մի հոդված, ըստ որի՝ Գերմանիան պատասխանատվություն չի կրում հայերի արտաքսման գործում որպես խորհրդատու հանդես գալու համար: Հոդվածը հիմնականում վերաբերում էր Օսմանյան կայսրությունում որպես գլխավոր ռազմական հրահանգիչ աշխատող գերմանացի ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցի[5] ունեցած դերակատարությանը: Հեղինակը եզրակացնում

---

[1] «Հորիզոն », 1914 թ., 16 սեպտեմբերի:

[2] Տե՛ս **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Երևան, 2008, էջ 109:

[3] Տե՛ս **"Kolnische Zeitung"**, von 13 Januar, 1903, մեջբերված է G. W. Hallgarten-ի նշված գրքից, Bd. I, էջ.503:

[4] Տե՛ս **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916, էջ 108:

[5] **Վիլհելմ Լեոպոլդ Կոլմար բարոն ֆոն դեր Գոլց** (1843-1916), 1883-1895 թթ. ղեկավարել է գերմանական ռազմական առաքելությունը Թուրքիայում, 1909-1913 թթ. նա հանդիսանում էր թուրքական բանակի գլխավոր տեսուչ: Իսկ 1914 թ. դեկտեմբերից սուլթանի ռազմական խորհրդատուն էր, հետագայում՝ 1915 թ. մարտին, ստանձնել է թուրքական 1-ին բանակի, իսկ 1915 թ. հոկտեմբերից մինչև 1916 թ. ապրիլը թուրքական 6-րդ բանակի հրամանատարությունը (Բաղդադ): (Vahakn N. Dadrian, Documentation of the

էր, որ արտաքսումը եղել էր ռազմական միջոցառում, որը գաղտնի չէր կարող պահվել գերմանացի սպաներից և փաստորեն այս ծրագիրը ներկայացված էր եղել ֆելդմարշալ ֆոն դեր Գոլցին, որն էլ իր հավանություն էր տվել այդ հարցի շուրջ «…Ծրագիրը պաշտոնական տեսքով բավական անվտանգ էր թվացել և ըստ կառավարության հրամանի 2-րդ հոդվածի՝ բանակի հրամանատարները իրավունք ունեն ռազմական անհրաժեշտության դեպքում, նաև այն դեպքում, եթե կասկածվում է լրտեսություն և դավաճանություն, արտաքսել գյուղերի կամ քաղաքների բնակիչներին՝առանձին կամ զանգվածաբար և բնակեցնել այլ վայրերում»[1]: Այն փաստը, որ ֆելդմարշալ Գոլցը կանխավ տեղյակ է եղել հայերի տեղահանմանը, վկայում է նաև Օտտո Գյոփերտը, որը հանդիսանում էր Գերմանիայի արտգործնախարարության, որոշ ժամանակ նաև Կ.Պոլսի գերմանական դեսպանատան գաղտնի խորհրդական: Գյոփերտը գրում էր. «Կարծես հաստատված է, որ ֆոն դեր Գոլցը թուրք ռազմական նախարար Էնվերից ստացել է տեղահանման հրամանը և, թերևս, համաձայնվել է , բայց ակնհայտորեն չի հասկացել ծրագրված միջոցառման փաստացի բնույթը»[2]: Գերմանական կողմի այն պնդումները, որ գերմանացի զինվորականները չեն կռահել հայերի տեղահնման բուն նպատակը, չի համապատասխանում իրականությանը և պարզապես նպատակ ուներ հերքելու գերմանական սպաների մասնակցությունը այդ իրադարձություններին:

Գոյություն ունեն բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում են, որ գերմանացի սպաները քաջատեղյակ են եղել հայերի տեղահանման իրական նպատակներին: Բերենք մի քանի օրինակ. կորվետի հրամանատար Հանս Հումանը, որը նաև Կ. Պոլսում գերմանական դեսպանատան ծովային գերատեսչության ռազմական կցորդն էր և Էնվեր փաշայի մտերմներից, 1915 թ հունիսի 15-ին նշել էր. «Հայերը հիմա քիչ թե շատ բնաջնջվեցին: Դա դաժան է, բայց օգտակար», երկու օր անց Հումանը արտահայտել է հետևյալ տեսակետը. «Թուրքական կառավարությունն օգտագործում է պատերազմական ժամանակաշրջանը և Եվրոպայի հետամտած շահը՝ ամբողջ Հայկական հարցը բռնությամբ լուծելու համար»[3]:Հումանը Կ.Պոլսի ԱՄՆ դեսպան Մորգենթաուին ասել էր. «…Ես թուրքերին բոլորովին չեմ նախատում, որ հայերին այդպես են վերաբերվում: Ես այն կարծիքին եմ, որ նրանք լիովին իրավացի են: Առավել թույլ ժողովուրդը պետք է պարտվի: Հայերը ուզում են մասնատել Թուրքիան, նրանք այս պատերազմում թուրքերի ու գերմանացիների դեմ են, ուստի գոյատևելու իրավունք չունեն»:[4] Իսկ Վիլհելմ Սուշոնը, որ հանդիսանում էր թուրքական նավատորմի հրամանատարը, իր օրագրում 1915 թ. օգոստոսի 15-ին գրել էր հետևյալ միտքը. «Հայերի դեմ Թուրքիան գործում է հնարավոր գաղտնապահությամբ և արմատականությամբ (նրանց երեք քառորդը պետք է որ վերացած լինի): Հավանաբար այդ դրաման շուտով կավարտվի»: Իսկ օգոստոսի 19-ին նա նշել էր. «Թուրքիայի համար փրկություն կլիներ, եթե սպաներ վերջին հային»[5]: 1919թ. մարտի 19-ին գերմանացի սանիտարական ծառայության սպա Արմին Վեգները[6] դասախոսություն կարդաց «Հայ ժողովրդի արտաքսումը դեպի անապատներ» վերնագրով, որում Վեգները հաստատում էր այն փաստը, որ գերմանացի սպաները աջակցել են հայերի աքսորմանը[7]:Հեղինակը նշում էր.

Armenian Genocide in German and Austrian Sources, The Widening Circel of Genocide: A. Critical Bibliographie Review, Vol, 3, Israel Charny (ed.), New Brunswick, էջ 82, http//de.wikipedia.org/Colmar-Freiher-von-der-Goltz: Ա. Օհանջանյան, 1915 թվական. Անհերքելի վկայություններ…էջ 237:

[1] **Christoph Dinkel**, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, Bd. 44, 1991, S 79:

[2] **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Եր., 2008, էջ 11:

[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 12:

[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 117:

[5] Տե՛ս նույն տեղում:

[6] **Արմին Թեոֆիլ Վեգներ** (1886-1978 թթ.), 1915-1916 թթ. որպես զինվորական բժիշկ ֆոն դեր Գոլցի բանակում եղել է Միջագետքում, գերմանական մի շարք թերթերի ռազմական թղթակիցն էր, 1921 թ Բեռլինում կայացած Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ հանդես է եկել Թեհլերյանի պաշտպանությամբ: (Հայկական հարց, հանրագիտարան, Եր., 1996, էջ 433) :

[7] Տե՛ս **Christoph Dinkel**, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, էջ 84:

«Երբ գերմանական զորքի առաջնորդներին հարցրին, թե ինչպես վարվել սահմանում բնակվող դավաճան հայերի հետ, նրանք առաջարկեցին հայերին տեղահանել դեպի երկրի խորքեր»[1]: Գերմանացի ծովակալ ֆոն Ուզեդոմը, որը հանդիսանում էր Օսմանյան կայսրությունում ծովափնյա ամրությունների կառուցման գլխավոր հրամանատարը, Կ.Պոլսի ամերիկյան դեսպան Մորգենթաուի հետ հանդիպման ժամանակ հայտնել էր հետևյալ տեսակետը. «Հայերն այստեղ արգելք կլինեն գերմանացիների հաջողության համար և դրա համար անհրաժեշտ է նրանց հեռացնել»[2]:

1919 թ. փետրվարին բեռլինյան «Angemeine Missions Zeitchrift» լրագրում տպագրվեց մի հոդված, որի հեղինակն էր բժիշկ, պրոֆեսոր Յու. Ռիխտերը: Նա գտնում էր, որ տեղահանման միջոցառումները անխուսափելի էին պատերազմի ժամանակ և նորմալ երևույթ սահմանային տարածքներում, իսկ գերմանացիները այդ հարցում հանդես են եկել գլխավորապես որպես թուրքերի խորհրդատուներ, սակայն այդ «խորհրդատուները» հաշվի չեն առել, որ նման գործողությունների իրականացման համար անհարժեշտ էր նախազգուշական լուրջ միջոցներ ձեռնարկել[3]: Նա գրում է, որ գերմանացի սպաներն էին առաջարկել թուրքերին տեղահանել սահմանային շրջանների ոչ հուսալի հայությանը[4]: Փոխարենը, հոդվածում մեղադրվում էր Գոլցը՝ հայերի արտաքսման հրամանը թերի ըմբռնելու համար: Հոդվածում նշվում էր, որ նա հաշվի չի առել հայ-թուրքական հարաբերությունները, թուրքերի աճող ազգայնամոլությունը և այն մեթոդը, որ կիրառում էին թուրք պաշտոնյաները աքսորման համար, քանի որ նա ճանաչել էր թուրքերին միայն որպես զինվորներ և սխալ կարծիք էր ունեցել նրանց մասին[5]: 1921 թ. հունիսի 30-ին «Deutsche Allgemeine Zeitung» ամսագրում Թալեաթ փաշայի դատավարության կապակցությամբ հրատարակվեց Առաջին աշխարհամարտի տարիներին գերմանական ռազմական առաքելության անդամ, թուրքական գլխավոր հրամանատարության առաջին բաժնի պետ, փոխգնդապետ Օտտո ֆոն Ֆելդմանի հոդվածը, որում նա հայտնում էր, որ գերմանցի սպաները, այդ թվում նաև ինքը, պատերազմի ժամանակ խորհուրդ են տվել թուրքական բանակի թիկունքում գտնվող որոշակի շրջանների հայ բնակչությանը տեղահանել[6]:

Թուրքիայում գտնվող գերմանացի զինվորականներից մեծ հեղինակություն էր վայելում թուրքական բանակի գլխավոր ռազմական հրահանգիչ, գերմանացի ֆելդմարշալ Կոլմար ֆոն դեր Գոլցը: Վերջինս եվրոպական Թուրքիայի կորուստը բարիք էր համարում թուրքերի համար և գտնում էր, որ օսմանյան պետությունը իր «ուժը պետք է նվիրի անատոլիական գավառների նյութական և ինտելեկտուալ զարգացմանը»[7] , և Օսմանյան կայսրությունը պետք է լինի բացարձակապես իսլամական երկիր, որտեղ այլևս տեղ չի լինի քրիստոնյա տարրերի համար[8]: 1914թ. փետրվարին «Գերմանա-թուրքական ընկերության» անդրանիկ նիստում մարշալ Գոլցը առաջարկեց հայերին Արևմտյան Հայաստանից տեղափոխել Միջագետք, որովհետև «Թուրքիան միայն այդպես կարող է պաշտպանվել նոր բարդություններից»[9]: Այն փաստը, որ Գոլցը անմիջական մասնակցություն է ունեցել հայերի տեղահանման և նաև ինքնապաշտպանության ճնշման գործում հաստատում է հետևյալ փաստը. 1915 թ նոյեմբերի 4-ին Մոսուլի փոխհյուպատոս Հոլշթայնը Կ. Պոլսի դեսպանությանը զեկուցել էր. «Ինչպես լսել եմ, բարոն ֆոն դեր Գոլցը 4-րդ բանակին հրաման է արձակել ապստամբության ճնշման համար

---

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 85:
[2] **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Եր., 2008, էջ 11:
[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 80:
[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 79-80:
[5] Տե՛ս նույն տեղում:
[6] Տե՛ս նշվ. աշխ., էջ 96:
[7] Տե՛ս **Colmar Freierr von der Goltz**, Denkwürdigkeiten, Berlin, 1929, էջ 131:
[8] Տե՛ս նշվ. աշխ., էջ 111-112:
[9] Տե՛ս **Ա. Օհանջանյան**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), Եր., 1997, էջ 215: Կիրակոսյան Զ., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916թթ.,Երևան,1965, էջ 161-162:

զորքերն ուղարկել Միդիաթ։Ես ուշադրություն եմ հրավիրում այն փաստերի անհամապատասխանության վրա, որ Միդիաթի ու Մարդինի (Ազիկի մոտ) միջակայքում խրամատավորված քրիստոնյաները (սիրիացիներ և մի փոքր մաս հայեր), որոնց դեմ պետք է գործեն վերոհիշյալ զորքերը, ապստամբներ են համարվում, և նրանց որպես այդպիսին են վերաբերվում: Նրանք ավելի շատ այն քրիստոնյաներն են, ովքեր կարողացել են փախչել և հիմա պաշտպանում են իրենց կյանքը՝ ոչխարի պես մորթվելու փոխարեն»[1]: Երբ այս առիթով աղմուկ բարձրացավ, Գոլցը կտրականապես արգելեց գերմանացի սպաներին այդ գործողություններին մասնակցել (ըստ Հոլշթայնի զեկուցագրի՝ նախատեսվում էր, որ «ապստամբած» վայր պետք է ժամաներ Էրզրումի փոխհյուպատոս Շոյբներ-Ռիխտերն իր զորաջոկատով-(Գ. Մելքոնյան) և այդ գործը հանձնարարեց Նաջի բեյին[2]:

Հակահայկական հայացքներով Թուրքիայում գտնվող գերմանացի բարձրագույն սպայական անձնակազմից առավել հայտնի էին գեներալ-մայոր Բրոնզարտ ֆոն Շելենդորֆը, փոխծովակալ Վիլհելմ Սուշոնը, գնդապետ Ֆելիքս Գուզեն, փոխգնդապետ Բյոտրիխը, կապիտան-լեյտենանտ Հանս Հումանը և այլոք: Նրանցից Բրոնզարտ ֆոն Շելենդորֆը, Ֆելիքս Գուզեն, Հանս Հումանը պատերազմից հետ էլ գտնում էին, որ հայերի տեղահանումները արդարացված էին[3]: Իսկ Հումանի հակահայկական հայացքները այնքան էին ծայրահեղ, որ անգամ 1922 թ. նա առաջարկում էր Գերմանիայից արտաքսել բոլոր հայերին[4]: Վ. Գուստը նշում է, որ ֆոն Սանդերսը, Գուզեն, Բրոնզարտը թուրքերի հակահայկական գործողությունները փորձում էին հիմնավորել հայերի ապստամբելու փաստով, սակայն նրանք, լինելով զինվորական բարձրաստիճան գործիչներ, բավական տեղեկություններ պետք է ունենային, որ այդ լուրերը թուրքական քարոզչության արդյունք են [5]:

Ինչպես հաստատում են վերոնշյալ փաստերը, գերմանացի սպաները քաջատեղյակ են եղել երիտթուրքերի կողմից հայերի տեղահանության և կոտորածների ծրագրին: Եղած նյութերի հիման վրա կփորձենք հիմանավորել, որ գերմանացի որոշ զիվորականներ նաև անմիջական մասնակցություն են ունեցել այդ ծրագրերի իրականացմանը: Այս հարցի արնչությամբ Հ. Կայզերը նշում է, որ մայոր կոմս Էբերհարտ Վոլֆսկել ֆոն Ռայխենբերգի[6] օրինակը միակ հայտնի դեպքն է, երբ գերմանացի սպան անմիջական մասնակցություն է ունեցել հայկական կոտորածներին:[7] Սակայն փաստերը հաստատում են, որ ֆոն Ռայխենբերգը միակ զինվորականն չի, որ անմիջական մասնակցություն է ունեցել այդ իրադարձություններին: Ավագ լեյտենանտ Բյոտրիխը, որ հանդիսանում էր թուրքական գլխավոր շտաբի երկաթուղային հաղորդակցության պետ, անձամբ ստորագրեց երկաթուղու հայ աշխատողների տեղահանման հրամանը, որը հանգեցրեց Բաղդատի երկաթուղային ընկերությունում աշխատող հազարավոր հայերի սպանության: Այս առիթով Բաղդատի երկաթուղու տնօրենի տեղակալ Ֆրանց Գյունտերը բողոքեց. «Մեր հակառակորդները մի օր շատ փող կվճարեն այդ գրավոր փաստաթուղթը ունենալու համար, քանի որ ռազմական միսիայի անդամի ստորագրությամբ նրանք կապացուցեն, որ գերմանացիները ոչ միայն ոչինչ չեն արել հայերի հալածանքները

---

[1] **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Երևան, 2008, էջ 408:

[2] Տե՛ս նույն տեղում կամ Վիլհելմ Բ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Անցյալը-Ցեղասպանությունները-Ներկան, Եր., 2010, էջ 102:

[3] Տե՛ս **Christoph Dinkel**, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, էջ 93-99:

[4] Տե՛ս նշվ. աշխ., էջ 115:

[5] Տե՛ս **Gust W**., Der Völkermord an den Armeniern. Die Tragödie des ältesten Christenvolkes der Welt, München-Wien, Corl Hans Verlag, 1993, էջ 274-275:

[6] Երբ հրետանազորի գերմանացի սպա, կոմս Էբերհարդ Վոլֆսքել ֆոն Ռայխենբերգը թուրքական 12-րդ բանակային կորպուսի հրամանատարն էր, գեներալ Ֆահրետտինը կռվում էր հայերի դեմ Մուսա լեռան մոտ (օգոստոս-սեպտեմբեր) և Ուրֆայում (1915 սեպտեմբեր-հոկտեմբեր): Նա հրետանակոծեց Ուրֆայի հայկական թաղամասը և կոտրեց պաշտպանությունը: Wolfdieter Bihl, Die Kaukasus-Politik der MittelmՊchte, Wien, 1975, s 178 կամ Dadrian, German Responsibility, S 136:

[7] Տե՛ս Hilmar Kaiser,…. էջ 15:

կանխելու համար, այլև այդ նպատակով որոշակի հրամաններ իրենք են տվել, այսինքն, իրենք են ստորագրել»[1]: Անգամ Գերմանիայի արտգործնախարար Գոթլիբ ֆոն Յագովը զգուշացրեց բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Էրիխ ֆոն Ֆալկենհայնին, որ վերջինս կարողանա սաստել Բյոթռիխին[2]: Գերմանացի զինվորականների անմիջական մասնակցության մասին հաստատում են անգամ գերմանական աղբյուրները: Գերմանացի սպաներից գնդապետ Օտտո ֆոն Ֆելդմանը, որ 1914-1915 թթ. հանդիսանում էր ռազմական նախարար Էնվերի խորհրդականը արևելյան արշավանքների ժամանակ, նույնպես կողմնակից էր արևմտահայության տեղահանմանը: Նա հաստատում էր այն փաստը, որ գերմանացի սպաները ևս իրենց մասնակցությունն են ունեցել որոշ հայկական բնակավայրերից հայերի տեղահանման գործում[3]: Դեռևս 1914 թ. ապրիլից, երբ թուրքերը սկսել էին հայերի արտաքսումը Զեյթունից և Ադանայի գավառներից, գերմանացի մի սպա, որ ղեկավարում էր Ադանայի հայկական թաղերի հրետանակոծումը, նամակում գրել էր, որ «բարենպաստ առիթ է Զեյթունում մի քիչ մաքրություն անելու»[4]: Գերմանացի զինվորականների մասնակցությունը «հայկական միջոցառումներին» անուղղակի ձևով հաստատել է անգամ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմը, որը Բեռլին ուղարկած իր զեկուցագրերից մեկում փորձում է հաստատել թուրքերի այն պնդումը, թե իբր թուրքական բանակում ծառայող հայ զինվորները ապստամբում են և զենքը ուղղում թուրքերի դեմ. «Մի փաստ, որ հաստատել են գերմանական սպաներն էլ, ովքեր մասնակցել են այդ կռիվներին »[5]: Իսկ Հալեպից Ավստրո-Հունգարիայի հյուպատոս Դանդինին գրում է, որ գերմանացի զինվորականները ոսկու, ժամացույցների, արժեթղթերի, թանկարժեք քարերի և այլ ապրանքների աշխույժ առևտուր էին անում[6]: Այն, որ ցանկության դեպքում գերմանացիները կարող էին կանխել հայկական կոտորածները, հաստատում են հետևյալ դեպքերը: 1914 թ. դեկտեմբերին Ջեմալ բեյը պաղեստինցի հրեաների արտաքսման հրաման էր տվել, սակայն Կ. Պոլսում գերմանական դեսպան Վանգենհայմի ճնշման տակ նույն թվականի դեկտեմբերի 18-ին այդ հրամանը չեղյալ համարվեց: Գերմանացի զինվորականները պաշտպանեցին նաև վրացիներին, երբ թուրքերը 1918 թ. դեպի Թիֆլիս էին արշավում: Նրանք կռվեցին վրացական զորքերի հետ և անգամ ունեցան զոհեր և վիրավորներ: Թուրքերը, տեղի տալով գերմանացիների քաղաքական և ռազմական ճնշումներին, հրաժարվեցին Վրաստանը գրավելու ծրագրից [7]:Հայերին նման աջակցություն ցույց տրվեց միայն Զմյուռնիայում գերմանական ռազմական առաքելության ղեկավար Օտտո Լիման ֆոն Սանդերսի կողմից: Վերջինս ժամանակավորապես արգելեց հայ բնակչության տեղահանումը, և թուրքական իշխանությունները հաշտվեցին դրա հետ՝ չնայած ներքին գործերի նախարար Թալեաթի հրամաններին: Գուստը իրավացիորեն նկատում է, որ. «Զմյուռնիան միակ դեպքն էր, որտեղ գերմանական զինվորականները հայերի տեղահանումը կասեցրին»[8]:

Այսպիսով, փաստերի համակողմանի վերլուծությունը հաստատում է, որ գերմանացի զինվորականները քաջատեղյակ էին երիտթուրքերի կողմից հայերին տեղահանելու ծրագրերին, իսկ նրանցից ոմանք անգամ խրախուսել և անմիջական մասնակցություն էին ունեցել այդ գործողություններին: Թուրքիայում գտնվող գերմանացի զինվորականների մեծ մասը հայերին համարում էր ռուսների դաշնակիցներ և նրանց նկատմամբ վերապահումով էր տրամադրված և եթե նույնիսկ բացահայտ չէին խրախուսում թուրքերի գործողությունները հայերի հանդեպ, ապա

---

[1] **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Եր., էջ 12:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Տե՛ս **Christoph Dinkel**, German Officers and the Armenian Genocide, Armenian Review, էջ 96:
[4] Տե՛ս **Hovannisian Richard G.**, Die armenische Frage (1878-1913), in, Das Verbrechen des Schweigens, bg. V. Tessa Hofmann, Wien, 1984, էջ 25: Կամ Վիլհելմ Բ., Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Անցյալը-Ցեղասպանությունները-Ներկան, էջ 220:
[5] Տե՛ս **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Երևան, էջ 29:
[6] Տե՛ս **Ա. Օհանջանյան**, 1915 թվական. Անհերքելի վկայություններ (Ավստրիական վավերագրերը հայոց ցեղասպանության մասին), էջ 122:
[7] Տե՛ս նշվ. աշխ., էջ 213:
[8] Տե՛ս **Գուստ Վ.**, Հայերի Ցեղասպանությունը 1915-1916,Երևան, էջ 111:

հիմնականում հանդես էին գալիս դիտորդի դերում: Հայերի տեղահանության հարցում կայսերական Գերմանիայի մեղսակցությունն հաստատող հիմնական փաստարկները վերաբերում են գերմանացի որոշ բարձրաստիճան զինվորականների՝ այդ իրադարձություններին անմիջական մասնակցություն ունենալու փաստերը, որոնք հիմնավորվում են ինչպես փոքրաթիվ արխիվային փաստաթղթերով, այնպես էլ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող տվյալ ժամանակաշրջանի գործիչների հուշերի ու մամուլի տվյալներով:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Գևորգ Գագիկի Մելքոնյան, պ.գ.թ., ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի դասախոս, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի վարիչ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, պ.գ.դ., Վ.Ռ.Բալայանը:

ՀՏԴ 159/94(560) *Հոգեբանություն*

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԳՈՐԾԻ ՀԱՆՑԱԾԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր-*ցեղասպանություն, այլատյացություն (քսենոֆոբիա), հայատյացություն (արմենոֆոբիա), էթնոցենտրիզմ, խմբային հանցավոր վարքագիծ, հուզական-բացասական, նեգատիվ, նախաքրեածին, քրեածին և հանցածին դիրքորոշումներ, ցեղասպանության քարոզչություն:*

Ключевые слова-*геноцид, ксенофобия, армянофобия, этноцентризм, коллективное криминальное поведение, эмоционально-отрицательная, негативная, предкриминальная, криминальная, преступная установки, пропаганда геноцида.*

Key words- *genocide, xenophobia, Armenophobia, ethnocentrism, collective criminal behavior, emotional-negative, negative, preliminary-criminal and criminal attitudes, genocide agitation.*

В.Ярамишян

ПРОПАГАНДА АРМЕНОФОБИИ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ КАК ФАКТОР, ФОРМИРУЮЩИЙ ПРЕСТУПНОЕ ГЕНОЦИДАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ

В статье обсуждаются некоторые вопросы Геноцида армян с точки зрения юридической психологии. Сделана попытка применить принятые в юридической психологии иерархические схемы - от эмоционально-отрицательной, негативной, предпреступной личностных установок к формированию преступного поведения личности относительно к лицам, совершившим массовые убийства-геноцид, а также выделить роль и место организованной пропаганды ксенофобии (армянофобии) в деле формирования преступных диспозиций личности.

V.Yaramishyan

PROPAGANDA OF ARMENOPHOBIA IN OTTOMAN EMPIRE AS THE GENOCIDAL CRIMINAL BEHAVIOUR FORMING FACTOR

The article discusses some issues of the Armenian Genocide from the legal psychology perspective. It was made an attempt to apply the adopted legal psychology of the hierarchical generation circuit of the criminal behavior of the person on respect to persons who committed mass murder, genocide, and to highlight the role and place of organized propaganda of xenophobia (Armenophobia) in the formation of criminal dispositions of personality.

Հոդվածում քննարկվում են Հայոց ցեղասպանությանն առնչվող որոշ հարցեր իրավաբանական հոգեբանության առումով: Փորձ է կատարված անձնավորության բացասական-հուզական, նեգատիվ, նախաքրեածին և քրեածին դիրքորոշումներից մինչև հանցածին վարքագծի ձևավորում ընդունված աստիճանաբաշխական սխեմաները կիրառելի դարձնելու ցեղասպանությունն իրականացրած անձանց՝ ցեղասպանագործների համար, ինչպես նաև, որպես հանցավոր դիրքորոշում ձևավորող գործոն, առանձնացնելու այլատյացության (հայատյացության) քարոզչությունը և հստակեցնելու դրա մասնաբաժինը՝ ցեղասպանագործի հանցածին վարքագծի ձևավորման մեջ:

2015թ. ապրիլին Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների, միլիոնուկես անմեղ զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությունների, ՀԱԵ կողմից նահատակների սրբադասման և առհասարակ ցեղասպանության փաստի նկատմամբ ձևավորվող նոր՝ պահանջատիրական մոտեցումների համատեքստում քաղաքակիրթ մարդկության առջև ևս մեկ անգամ ծառանում է այն ոչ հռետորական հարցը, թե, այնուամենայնիվ, ուղիղ մեկ դար առաջ ի՞նչ պայմաններ կային, որոնք հնարավոր դարձրին այդ հրեշավոր ծրագրի՝ 20-րդ դարի առաջին ցեղասպանության անպատիժ իրականացումը: Միանգամից արձանագրենք, որ այս խնդրի շուրջ շատ է խոսվել, դեռ կխոսվի: Հրապարակի վրա են ակադեմիկոսների վկայություններ, մասնագիտական վերլուծություններ, հետազոտություններ, քննարկումներ: Ակնկալվող

արդյունքն էլ կարծես առկա է, քանի որ ոչ միայն հայկական, այլև միջազգային հանրության համատեղ ջանքերով փաստացի բացահայտվել են այն հիմնական պատճառները, հանգամանքներն ու գործոնները, որոնք Օսմանյան կայսրության պարագլուխների համար ստեղծեցին այդ նպաստավոր պայմանները՝ մարդկության դեմ ուղղված իրենց հանցավոր ծրագիրն ի կատար ածելու համար:

Միանալով մասնագիտական ակտիվ քննարկումներին՝ նկատենք, որ մեկդարյա հեռավորությունից տվյալ խնդրի վերաբերյալ նոր խոսք ասելը բավականին դժվար է, մանավանդ, որ խնդիրը նախկինում քննարկվել է և այժմ էլ ամենատարբեր հարթակներում քննարկվում է բոլոր հնարավոր հայեցակետերով՝ պատմական, ռազմական, քաղաքական, միջազգային-իրավական, սոցիալական, հումանիտար և այլն: Սակայն, այնուամենայնիվ, ցեղասպանությանը նվիրված բազմաթիվ հրապարակումների առավել մանրազնին վերլուծությունը մեզ համոզում է, որ դրանց մեջ համեմատաբար քիչ քանակ են կազմում այն աշխատությունները, որոնցում հարցը վերլուծվել է իրավահոգեբանական դիտակետով: Ուստի մենք կփորձենք անդրադարձ կատարել 100-ամյա վաղեմություն ունեցող, սակայն երբեք իրենց հրատապությունը չկորցրած այդ սոսկալի իրադարձություններին՝ շեշտադրում կատարելով հարցի իրավահոգեբանական կողմի վրա և խնդիր ունենալով բացահայտել ցեղասպանագործների, այսինքն՝ ցեղասպանություն գործած անձանց և նրանց խմբերի հանցածին վարքագծի ձևավորման ընդհանուր համակարգում քարոզչական աշխատանքի՝ որպես ձևավորող գործոնի տեղն ու դերակատարության աստիճանը:

Վերլուծությունն սկսենք անվիճելի համարվող այն փաստի արձանագրումով, որ Հայոց ցեղասպանության իրագործման լոկոմոտիվը կամ շարժիչ ուժը Օսմանյան կայսրությունում պետական քաղաքականության մակարդակի հասցված համատարած հայատյացությունն էր՝ որպես ազգային հողի վրա սերմանված այլատյացության կամ քսենոֆոբիայի (քսենոֆոբիա՝ ազգային ատելություն, անհանդուրժողականություն, թշնամություն, վախ) տարատեսակ: Մասնագետների կարծիքով, քսենոֆոբիան, որպես սոցիոմշակութային և էթնոմշակութային երևույթ, ունի երկու նշանակություն [9]: Առաջինը ֆիքսված, կպչուն սարսափն է անծանոթ ամեն ինչի նկատմամբ, իսկ երկրորդը՝ անծանոթ երևույթների կամ առարկաների նկատմամբ ձևավորված անհանդուրժողականությունը, ատելությունը, չընդունելը: Մասնագիտական գրականության մեջ քսենոֆոբիային զուգահեռ օգտագործվում է նաև էթնոցենտրիզմ հասկացությունը, սակայն դրանք տարբեր հասկացություններ են: Քսենոֆոբիան տարբերվում է էթնոցենտրիզմից նրանով, որ վերջինս հատուկ է բոլոր ժողովուրդներին, մինչդեռ քսենոֆոբիան նախևառաջ սոցիալ-քաղաքական երևույթ է: Էթնոցենտրիզմը հոգեբանները սահմանում են որպես այլ մարդկանց վարքը սեփական մշակութային միջավայրի թելադրած սահմաններից դուրս դիտարկելու անկարողություն: Որպես էթնոցենտրիզմի չափման ելակետ կարող է հանդես գալ գրեթե ամեն ինչ՝ ազգությունը, կրոնը լեզուն գրականությունը նույնիսկ սնունդը, հագուստը և այլն: Էթնոցենտրիկ մարդիկ միտված են աշխարհը դիտարկելու այնպես, որպեսզի «իրենց խումբը» հայտնվի ամեն ինչի կենտրոնում, իսկ մնացած բոլորը չափվեն նրա հետ ունեցած առնչությամբ կամ գնահատվեն նրա արժեքների տեսանկյունից: Էթնոցենտրիզմը հազվադեպ է «դուրս գալիս» նորմայի շրջանակներից և երբեք չի վերածվում սոցիալ-քաղաքական պաթոլոգիայի: Քսենոֆոբիան մի քիչ այլ է: Քսենոֆոբիան անհատի բացասական ապրումների պատճառ հանդիսացող իռացիոնալ զգացմունք է, որը հենված է վախի, նախապաշարմունքների, կարծրատիպերի, կանխակալ կարծիքների ու համոզմունքների և դրանցից բխող վիճակների ու վարքագծի վրա [3, էջ 8]: Նկատենք, որ այս երկու բավականին բարդ հասկացությունները, անկախ այն բանից, թե կոնկրետ որ գիտության տեսանկյունից են դիտարկվում՝ ազգագիտության, իրավագիտության, քաղաքագիտության, հոգեբանության, սոցիոլոգիայի, մշակութաբանության, կենսաբանության, բոլոր դեպքերում հանգում են «մենք-նրանք» կամ «յուրային-օտար» հակամարտ ընկալմանը:

«Մենք» հավաքական հասկացության մեջ ներգրավվելու, նրա անդամը լինելու և այդ անդամների հետ նույնականանալու, որևէ հանրույթի անբաժանելի մասնիկը լինելու

պահանջմունքը հոգեբանության տեսակետից դիտարկվում է որպես մարդու հիմնարար պահանջմունքներից մեկը: Հետաքրքիր է, որ մարդկանց «մենք-նրանք» տարանջատումը անխուսափելիորեն բերում է «մենքի» բարձրացման ու գովաբանության՝ ի հաշիվ «նրանց» ստորացման ու փնովման: Ուստի «մենքի» բարձրացման անխուսափելի ուղեկիցը «նրանց» ստորացումն է: Ոմանք կարող են չհամաձայնվել այս տեսակետին՝ պնդելով, որ հնարավոր է նաև «բարձրանալ՝ բարձրացնելով», սակայն քննարկվող դեպքի, այսինքն՝ Հայոց ցեղասպանության փաստացի պայմանների ու հանգամանքների քննարկման պարագայում «բարձրացնելով բարձրացնելու» մասին խոսելն անգամ անիմաստ է, քանի որ խոսքը գնում է ցեղասպանության հեղինակի, այսինքն՝ թուրքի՝ որպես էթնիկական կազմավորման մասին:

Վերադառնալով բուն թեմային՝ նախ կատարենք փոքր պատմական ակնարկ՝ ուշադրություն դարձնելով այն հնարքների վրա, որոնք՝ որպես լայնածավալ քարոզչություն, կիրառել է թուրքական կառավարությունը՝ միջազգային հանրության առջև իրենց գործողություններն արդարացնելու և դրանք հնարավորինս արագ ավարտին հասցնելու համար: Հայտնի է, որ ցեղասպանության ամենաակտիվ գաղափարախոսներից մեկը՝ Բեհադդին Շաքիրը, 1915թ. հունվարի 15-ին Օսմանիե ակումբում, ներկայացնելով հայերի բնաջնջման իր հրեշավոր ծրագիրը, բառացիորեն հայտարարել է. <...ծրագիրն ի գիտություն հանձնել Թուրքիայի կրոնապետին՝ Շեյխ-ուլ-իսլամին, որպեսզի նա ֆեթվա (հրաման) արձակի՝ ***հայերին հոչակելով իսլամի և հայրենիքի թշնամիներ***...> [2, էջ 32]: Դատելով այս խոսքերի հեղինակի հետագա գործողություններից, պետք է ենթադրել, որ նա ամենևին հոգեգար չի եղել, այլ ակնհայտորեն սառը հաշվարկ է կատարել՝ անվրեպ գործող կրոնական անհանդուրժողականության բորբոքման հողի վրա քսենոֆոբիա (արմենոֆոբիա կամ հայատյացություն) սերմանելու ուղղությամբ: Պատահական չէ, որ ամերիկահայ ցեղասպանագետ Վահագն Տատրյանն առհասարակ ցեղասպանությունների գաղափարական ապահովման գործում առանձնակի տեղ է հատկացնում հատկապես անհանդուրժողական իսլամին՝ իր տեսակետը հիմնավորելով այն փաստով, որ հայերի զանգվածային սպանությունները հիմնականում կատարվել են ուրբաթ օրերի ավանդական նամազներից հետո, որոնց ժամանակ մոլլաները հայերի դեմ սրբազան պատերազմի կոչեր էին հնչեցնում [10]:

Նկարագրված խորհրդաժողովից ընդամենը երկու ամիս անց՝ նույն թվականի մարտի 15-ին, Իթթիհաթի ներկայացուցիչներն արդեն ամենուրեք նոր խորհրդակցություններ էին հրավիրում՝ շարունակ քարոզելով անխնա ոչնչացնել հայերին: Որպես քարոզչական լավ մտածված հնարք՝ թուրքական գաղափարախոսներն առաջ էին քաշում իբր թե Վանում հայերի կողմից սպանված 150.000 թուրքերի արյան դիմաց վրեժ լուծելու մտացածին առիթը: Այս պատմական փաստը վկայում է, որ թուրքական քարոզչամեքենեան մեկնարկի պահից ընդամենը մեկ ամիս անց արդեն իսկ զգալի արագություն էր հավաքել: Եվս մեկ ամիս անց՝ ապրիլի 18-ին, Էրզրումի արվարձաններից մեկում կազմակերպվեց թուրքական բազմամարդ ցույց, որում, ինչպես պլանավորվել էր, հայերին վերջնականապես հայտարարեցին դավաճաններ, իսկ նրանց օգնելու պատրաստ մուսուլմաններին զգուշացրին, որ նրանք ևս կարժանանան նույն ճակատագրին: Գործընթացն ստացավ անշրջելի բնույթ: Ապրիլի 24-ին նույն պատճառաբանությամբ ձերբակալվեցին և աքսորվեցին մոտ 300, այնուհետև՝ 600, իսկ հետո՝ ևս 5000 անմեղ հայեր: Աքսորը քողարկված ֆիկցիա էր, որովհետև ձերբակալվածների մեծամասնությունը դաժանորեն գնդակահարվեց Ստամբուլի արվարձաններում: Միջազգային հանրությանը մոլորեցնելու նպատակով նմանատիպ արյունոտ գործողությունները թուրքական իշխանությունները ներկայացվում էին որպես ռազմական անհրաժեշտություն: ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուին հղված իր նամակում Թալեաթ-բեկն այս «միջոցառումները» ներկայացնում էր որպես «անհրաժեշտ ինքնապաշտպանություն՝ հայերի համատարած դավաճանությունն ու ագրեսիան կանխելու համար»: Գործի էին դրված Օսմանյան կայսրության տրամադրության տեղ եղած քարոզչական և հակաքարոզչական բոլոր լծակները: Արդեն մայիսի 30-ին Օսմանյան կայսրության մինիստրների խորհուրդը տեղահանության մասին օրենք ընդունեց, որով թուրքերն իրենք իրենց փաստացի իրավունք էին վերապահում խեղդելու բոլոր տեսակի զինված

ապստամբությունները և աքսորելու դավաճանության ու լրտեսության մեջ կասկածվողներին: Չնայած տուժողների համար օրենքով նախատեսված էին որոշակի փոխհատուցումներ, սակայն դրանք այդպես էլ մնացին չիրականացված: Եթե այսքանից հետո որևէ մեկին դեռևս թվում է, թե թուրքական իշխանությունները պետք է բավարարված լինեին իրենց նպատակային գործողությունների արդյունքներից, քանի որ կարողացել էին փաստացի գլխատել մի ողջ ժողովուրդ, ուրեմն նա սխալ պատկերացում ունի թուրքական դիվանագիտության նենգության ու արյունարբու բնույթի վերաբերյալ: Ինչպես ասում են, ամեն ինչ դեռ առջևում էր: Մի քանի օր անց հետևեց հաջորդ հրեշավոր քայլը: Թուրքական իշխանությունները բոլոր կալանատներից ազատ արձակեցին թվով 34.000 քրեական հանցագործների և նրանցից կազմեցին պատժիչ ջոկատներ: Անձամբ Թալեաթին ենթարկվող «Թեշկիլաթի Մահուսա» հատուկ ջոկատն իր վրա վերցրեց և սկսեց մեթոդաբար իրագործել հայերի ամենադաժան սպանությունները՝ ոչ առանց Բեհեդդին Շաքիրի ակտիվ մասնակցության [8, էջ 255]:

Կարծում ենք, որ Հայոց ցեղասպանության գաղափարական կազմակերպիչներից մեկի՝ Բեհադդին Շաքիրի հայտարարությամբ և նրա հետագա նպատակային գործողություններով փաստացի ոչ թե սկիզբ դրվեց, այլ տգետ, սոցիալ-կենցաղային ծայրահեղ անբարենպաստ պայմաններում ապրող և կրոնական խավարամտության մեջ խարխափող հոծ զանգվածների անասնական զգացմունքների բորբոքման, ինչպես նաև գաղափարախոսական-քարոզչական լայնածավալ աշխատանքի անհրաժեշտության վրա շեշտադրում կատարելու և նախկին գործելաոճին նորացված, կոնկրետ կողմնորոշում տալու ճանապարհով շարունակվեց Օսմանյան կայսրության հայակործան քաղաքականությունը՝ այն իր վերջնական նպատակին հասցնելու համար: Ըստ կազմակերպիչների մտահղացման՝ քարոզչական այս նոր հնարքները պետք է գործածվեին՝ հասնելու համար թուրքական բազմաշերտ հասարակության կառուցվածքում խիստ որոշակիորեն ուրվագծվող զանգվածների՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքից և կովկասյան ճակատում թուրքական զորքերի անհաջողություններից հիասթափված զինվորների, ինչպես նաև տեղաբնակ քուրդ խաժամուժի հավաքական գիտակցության, զգացմունքների և կամքի վրա նպատակաուղղված ներգործություն կատարելու ճանապարհով հասնելու նրանց վերջնական մարգինալացմանը և այդ ճանապարհով իրենց վաղեմի պանթուրքական և պանիսլամիստական երազանքների իրականացմանը՝ հայ ազգի ոչնչացմանը: Ամեն ինչ արվում էր թուրք զինվորների հոգեկանից կարեկցանքի, մեղքի զգացման, իսկ զինվորներին ուղեկցող խաժամուժի զգացմունքներից խղճմտանքի ու խղճահարության վերջին փշրանքները հեռացնելու համար: Հոգեբանական առումով խնդիր էր դրված շարունակական անհաջողությունների պատճառով թուրք զինվորական հասարակության մեջ ձևավորվող զանգվածային չարացածությունն ուղղորդելու «քավության նոխազի» վրա, իսկ ագրեսիան փոխհատուցել դաժան սպանություններից ու կողոպուտներից ստացած բավականության զգացումներով: «Քավության նոխազի» կարգավիճակում էր հայտնվել հայ ժողովուրդը:

Դեպքերի հետագա ընթացքը վկայում է, որ թուրքական կեղտոտ քարոզչամեքենայի հաշվարկը ճիշտ էր կատարված: Փաստորեն, նպատակ էր դրված խավարամոլ զանգվածների կրոնական և ազգայնական զգացմունքները բորբոքելու ճանապարհով հասնել նրան, որ հաղթահարվի ագրեսիվության օբյեկտիվացման անորոշությունը, այսինքն՝ թուրք էթնոսին գենետիկորեն բնորոշ ագրեսիվությունը, վայրագությունն ու կրոնական անհանդուրժողականությունը, ինչի առկայության մասին հրաշալի գիտեին եվրոպական կրթություն ստացած երիտթուրքերը, խիստ կոնկրետ նշանակետ ունենա, որոշակիորեն ուղղորդվի «օտար ու խորթ» հայտարարված անցանկալի օբյեկտի, կոնկրետ դեպքում՝ այլադավանների կամ գյավուրների՝ հայերի վրա: Այս նպատակային ջանքերի շնորհիվ համեմատաբար կարճ ժամանակահատվածում թուրքական գաղափարախոսներն ու քարոզիչները կարողացան ձևավորել թուրք ազգաբնակչության խմբային հանցավոր վարքագիծը:

Իրավաբանական հոգեբանության տեսակետից անձնավորության հանցավոր վարքագծի հիմքում ընկած է նրա հանցածին դիրքորոշումը՝ որպես սոցիալական դիրքորոշման առանձնահատուկ տեսակ: Սոցիալական հոգեբանության տեսակետից անձնավորության

սոցիալական դիրքորոշումները ձևավորվում են երեք հիմնական բաղադրիչներով՝ ***կոգնիտիվ-իմացական, էմոցիոնալ-հուզական և սիտուատիվ-իրադրային*** [6, էջ 508]: Դրան զուգահեռ, իրավաբանական հոգեբանությունը անձնավորության նեգատիվ սոցիալական դիրքորոշումները նույնացնում է հանցածին դիրքորոշման և, որպես դրա արդյունք, հանցածին վարքագծի հետ: Մասնագետները պնդում են, որ անձնավորության հանցածին վարքագծի ձևավորման գործում վճռական նշանակություն ունի հատկապես նրա հանցածին դիրքորոշումը, որն իր հերթին, ունի դինամիկ, փուլային բնույթ և կառուցվածքային որոշակի բաղադրամասեր [1, էջ 173]: Հանցածին դիրքորոշման ձևավորման յուրաքանչյուր փուլ հատկանշվում է հարաբերականորեն ինքնուրույն մինի-դիրքորոշումներով, որոնց միասնության արդյունքում ամբողջանում է անձի հանցավոր դիրքորոշումը: Որպես հարաբերականորեն ինքնուրույն դիրքորոշումներ՝ հեղինակներն առանձնացնում են թվով հինգ՝ ***բացասական-հուզական, նեգատիվ, նախաքրեածին, քրեածին և հանցածին*** դիրքորոշումները: Նկատենք, որ ոչ միայն հանցագործ, այլև առհասարակ, անձի դրսևորվող վարքագծի կառուցվածքում դիրքորոշման ուղղորդող նշանակությունն ակնհայտ է: Ավելին, եթե անձի մոտ արդեն իսկ ձևավորվել է որոշակի դիրքորոշում որոշակի օբյեկտի նկատմամբ, ապա իրադրության համապատասխան պայմանների առկայության դեպքում վարքային համապատասխան դրսևորումն անխուսափելի է: Իսկ դա նշանակում է, որ հավանականության մեծ տոկոսով կարելի է պնդել, որ եթե նույնիսկ հանցագործի՝ անձի դիրքորոշումների ընդհանուր համակարգում նկարագրված հարաբերականորեն կայուն բաղադրիչները դեռևս լիարժեք չեն ձևավորվել, ապա, միևնույն է, որոշակի նպաստավոր պայմանների առկայության դեպքում, հանցավոր վարքային դրսևորումը կարող է ակտուալացվել: Դիրքորոշումների համակարգի ներկայացված աստիճանաբաշխական կառուցվածքում առկա է դրանց հաջորդականությունը և փոխկապակցվածությունը, այսինքն՝ յուրաքանչյուր նախորդ աստիճանում ձևավորվում են հաջորդ աստիճանին բնորոշ տարաբնույթ, այդ թվում՝ հոգեբանական, նախադրյալները:

Հայտնի է, որ քարոզչական աշխատանքի նշանակետը անձնավորության մտքերը, զգացմունքները և կամային որակներն են: Քարոզչական աշխատանքը նպատակ ունի մարդկանց մտքերի, զգացմունքների ու կամքի վրա ուղղորդված ազդեցություն գործելու ճանապարհով հասնել դրանց ցանկալի փոփոխություններին: Հասկանալի է, որ քարոզչությունը կամ հակաքարոզչությունը միակ գործիքները չեն անձնավորության սոցիալական դիրքորոշումների ընդհանուր համակարգը ձևավորելու համար: Հոգեբանությունն իր տրամադրության տակ ունի բազմաթիվ այլ հնարքների հարուստ հավաքակազմ՝ նույն նպատակին հասնելու համար: Փորձենք սոցիալական դիրքորոշումների կոգնիտիվ-իմացական և մասամբ նաև էմոցիոնալ-հուզական բաղադրիչների ձևավորմանը նպաստող հոգեբանական մի շարք գործոնների թվից առանձնացնել քարոզչության դերակատարությունը, ինչպես նաև Հայոց ցեղասպանության օրինակով որոշակիացնել Օսմայնյան կայսրության պարագլուխների կողմից իրականացված գաղափարական-քարոզչական աշխատանքի դերը՝ ցեղասպանագործի հանցածին վարքագծի ձևավորման վերը ներկայացված սխեմայի մեջ: Կփորձենք վերհանել նաև այդ գործոնի մասնաբաժինը նկարագրված փուլերից յուրաքանչյուրի ձևավորման մեխանիզմում, ինչպես նաև ընդհանուր համակարգից առանձնացնել այն փուլերը, որոնց ձևավորման ժամանակ քարոզչության ձևավորող գործոնի մասնաբաժինն ամենամեծն է: Այս խնդիրը կարևոր է՝ հասկանալու համար, թե ինչպիսի՞ հնարքներ են օգտագործել ցեղասպանության իրական կազմակերպիչները՝ սեփական ժողովրդի հավաքական գիտակցությունն այնպես ծրագրավորելու, ընդհուպ՝ քրեականացնելու համար, որպեսզի հնարավոր լինի նրան մղել գիտակցած հանցավոր գործողությունների: Խնդիրը նաև խիստ արդիական է Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, հետևանքների վերացման ու հատուցման, թուրքական ներկայիս իշխանությունների մերժողական քաղաքականության դատապարտման, ինչպես նաև Ադրբեջանի իշխանությունների կողմից սեփական ժողովրդի մոտ հակահայ դիրքորոշումներ ձևավորելու անթաքույց գործողությունների ֆոնի վրա:

Անմիջապես ենթադրենք, որ ցեղասպանագործների քրեածին դիրքորոշման և նմանատիպ վարքագծի կառուցվածքային բաղադրիչների աստիճանաբաշխական համակարգի ամենաստորին հարթության վրա տեղակայված բացասական-հուզական, ինչպես նաև հաջորդ՝ նեգատիվ դիրքորոշումների ձևավորման համար պահանջվող գաղափարական-քարոզչական ջանքերի մասնաբաժինն ամենափոքրն է լինելու: Այստեղ քարոզիչները գրեթե անելիքներ չունեին: Բանն այն է, որ ոչ միայն հայերի, այլ նաև մյուս տեղաբնակների նկատմամբ հուզական-բացասական վերաբերմունքը թուրքական էթնոսին բնորոշ ընդհանուր նկարագրի անբաժանելի մասն է կազմել պատմականորեն այն պահից սկսած, երբ առաջին թուրք տարրը ոտք դրեց Հայկական լեռնաշխարհի վրա, այսինքն՝ քսենոֆոբիան կամ հայատյացությունը նախկինում եղել է և հետագայում ամրապնդվել է մի քանի հարյուրամյակներ շարունակ, չնայած երկրորդ՝ նեգատիվ դիրքորոշումը փաստացի ձևավորվել է համեմատաբար ավելի ուշ, բայց նույն՝ բացասական-հուզական դիրքորոշման ամրակայման արդյունքում:

Մի փոքր այլ է իրավիճակը քննարկվող համակարգի երրորդ՝ նախաքրեածին դիրքորոշման ձևավորման պարագայում: Նախաքրեածին դիրքորոշումը նույնպես ձևավորման բավականին տևական ընթացք է ունենում: Նախաքրեածին դիրքորոշումը, նախորդ՝ բացասական-հուզական և նեգատիվ դիրքորոշումների բոլոր բաղադրիչները ներառելուց բացի, աստիճանաբար քրեականանալու միտում է դրսևորում այն ժամանակ, երբ անհատի հետ նախականխիչ-բացատրական աշխատանք չի իրականացվում և մեծ հավանականությամբ ձևավորվում է այն դեպքերում, երբ, ընդհակառակը, իրականացվում է նպատակային քարոզչություն՝ ուղղված սոցիալական արժեքների ոտնահարմանը, մարդկանց մոտ անտարբերության, լկտիության, դաժանության, ցինիզմի որակների սերմանմանը: Կարծում ենք, որ հատկապես ցեղասպանագործի նախաքրեածին դիրքորոշման ձևավորումը նկարագրված սխեմայի բեկումնային պահն է եղել, որովհետև հաջորդ երկու՝ քրեածին ու հանցածին դիրքորոշումների ձևավորման համար այլևս առանձնակի նպատակաուղղված ջանքեր չեն պահանջվելու: Անհրաժեշտ ու բավարար պայմանն այստեղ համապատասխան իրադրությունն է լինելու կամ ինչպես ասում են, դրսևորման հնարավորությունը:

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ Օսմանյան կայսրությունում ցեղասպանագործի հանցավոր վարքագծի ձևավորմանն ուղղորդված քարոզչական աշխատանքը հիմնականում նպատակ է ունեցել հայերի նկատմամբ պատմականորեն, հոգեբանական առումով՝ արդեն իսկ ենթագիտակցորեն, կենսաբանորեն բացասաբար տրամադրված թուրք խաժամուժի խմբային հոգեկանում քարոզչական հնարքների կիրառման ճանապարհով այնպիսի հատկանիշներ ձևավորելը, որոնք անհրաժեշտ են հատկապես նախաքրեածին ու մասամբ նաև քրեածին դիրքորոշումների ձևավորման համար: Այդ հատկանիշներն են ուրիշների ցավի նկատմամբ անտարբերությունը, ապրումակցման բացակայությունը, արհամարհանքը, դաժանությունը, կոպտությունը, ցինիզմն ու լկտիությունը: Այսպիսի մեկնաբանությունը հասկանալի է դարձնում, թե ժամանակին կոնկրետ ի՞նչ նպատակներ էին իրենց առջև դնում և իրենց գործողություններում հետապնդում թուրքական քարոզիչները, երբ հայերին դավաճան էին հայտարարում:

Քրեահոգեբաններից շատերի կարծիքով [4, 5] հանցավոր վարքը առանձնահատուկ հոգեբանական մեխանիզմներ չունի: Հանցագործության կատարմանը կարող են նպաստել բազմաբնույթ՝ ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներ: Մի կողմ թողնելով հանցագործության օբյեկտիվ պատճառականությունը՝ նկատենք, որ հանցագործության սուբյեկտիվ պատճառները կարող են պայմանավորված լինել հանցագործի կամ հանցագործների խմբի անդամների անհատական, տիպաբանական առանձնահատկություններով: Չպետք է մոռանալ, որ թվարկված հոգեբանական գործոնների առկայությունն ամենևին չի նշանակում, թե դրանք լիարժեք ապահովելու են հանցագործության իրականացումը: Հանցագործ մարդկանց վարքի նպատակներն ու դրդապատճառներն իրենք են պայմանավորված լինում իրականությամբ, կեցության պայմաններով և այն ուղղորդիչ-քարոզչական միջոցառումներով, որոնք էլ հավանականության մեծ աստիճանով պայմանավորում են հանցագործ վարքի դրսևորումը: Կոնկրետ Հայոց ցեղասպանության թեման քննարկելիս պետք է նաև ուշադրություն դարձնել այն

հանգամանքի վրա, որ հայերն ու թուրքերը հարյուրամյակներ շարունակ համատեղ ապրել են նույն տարածաշրջանում: Պատմությանը հայտնի են հայ-թուրքական ազգամիջյան հարաբերությունների վատթարացման և բարելավման բազմաթիվ ժամանակահատվածներ: Անշուշտ, մինչև 1915թ. Մեծ եղեռնը թուրքերը մշտապես ունեցել են հայերին իրենց պատմական հայրենիքից վտարելու ցանկություն: Կողոպուտներ ու կոտորածներ իրականացնելու բազմաթիվ փորձեր են կատարվել, երբեմն հաջողված, երբեմն անհաջող: Սակայն Մեծ Եղեռնը նախորդ բոլոր փորձերից առանձնանում է իր ծավալներով, իրականացման ձևերի ու միջոցների դաժանությամբ, անմարդկային բնույթով: Մեծ Եղեռնի կազմակերպիչներն իրենց հաշվենկատ գործողություններով ու գործադրած ճշգրիտ ջանքերով ակնհայտորեն գերազանցել են իրենց բոլոր նախորդներին: Նրանց գործողությունների քննությունը ի վերջո բերում է այն եզրահանգման, որ քարոզչական աշխատանքի հիմնական վեկտորը նրանք ուղղորդել են ոչ այնքան թուրք ազգաբնակչության շրջանում հայերի նկատմամբ ատելություն և արհամարհանք սերմանելուն, որովհետև այդ զգացմունքներն առկա էին ապրիորի, որքան ակնկալվող դաժան գործողությունների արդյունքում անպատիժ մնալու և իշխանությունների կողմից խրախուսված լինելու համոզմունքի ձևավորմանը: Նման քաղաքականության հիմքը դասագրքային այն ճշմարտությունն է, որ գործողության իրականացման համար անհրաժեշտ է լիակատար պայմանների ամբողջական հավաքակազմ: Դեռևս անցած դարի կեսերին Ս.Ռուբինշտեյնը գրել է. «Հանցագործության լրիվ, լիակատար պատճառը բոլոր այն հանգամանքների ամբողջությունն է, որոնց առկայության դեպքում անհրաժեշտաբար առաջանում է, վրա է հասնում հետևանքը» [7, էջ 261]: Ասվածի իմաստն այն է, որ Հայոց ցեղասպանության կազմակերպիչների գլխավոր խնդիրը նախապատրաստման փուլում եղել է ազգաբնակչության շրջանում այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծումը, որում մարդասպանն իրեն հերոսացած է զգում, հավատում է կամ վստահ է, որ, ինչ էլ լինի, մնալու է անպատիժ, որովհետև օգտվում է իշխանությունների աներկիմաստ աջակցությունից ու քաջալերանքից:

Իրենց հերթին թուրքական իշխանությունները նույնպես կարիք ունեին միջազգային հանրության կողմից քաջալերանքի ու անպատժելիության մթնոլորտի ապահովմանը, որպեսզի վստահ լինեն իրենց գործողություններում: Սակայն այս արդեն ուրիշ թեմա է:

Գրականություն

1. Արզումանյան Ս, Գրին Է. Իրավաբանական հոգեբանություն, Եր, Զանգակ-97, 2004., 432 էջ:
2. Մելքոնյան Հ. Ոճիրի բուրգեր, Եր. <Պարույր Սևակ>, 2001թ., 545 էջ:
3. Адибекян А., Элибекова А., Армянофобия в Азербайджане, Ер., «Центр общественных связей и информации» при аппарате президента Армении, 2013., 332 стр:
4. Василев В.Л. Психология ораторского мастерства государственного обвинителя, СПб, 1996г.
5. Еникеев М.И. Основы общей и юридической психологии, М., 1997г.
6. Немов Р.С. Психология М. Высшее образование, 2005г. 639 стр.
7. Рубинштейн С.Л. Основы обшей психологии, М. 1946.
8. Richard G.Hovannisian. The Armenian People from Ancient to Modern Times. — Palgrave Macmillan, 1997. — Vol. II. Foreign Dominion to Statehood: The Fifteenth Century to the Twentieth Century. 493 p.
9. http://hy.wikipedia.org/wiki.
10. https://ru.wikipedia.org/wiki/геноцид _армян.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Վիտյա Յարամիշյան, հ.գ.թ., դոց.,ԱրՊՀ

E-mail: vityayaramishyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., պրոֆեսոր Ա.Մ.Մխիթարյանը:

ՀՏԴ 159.9 (479.243) Հոգեբանություն

ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՆԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Վիտյա ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

Բանալի բառեր *– ազգային հոգեկերտվածք, մենթալիտետ, հոգեկերտվածքի բաղադրիչներ, ազգային բնավորություն, խորհրդային սերունդ, անկախության սերունդ, հարցման մեթոդ, արժեքային կողմնորոշիչներ, անձի սոցիալ-հոգեբանական նկարագիր, հոգեբանական դիմագիծ (պրոֆիլ), ճգնաժամային իրադրություն:*

Ключевые слова *– национальный психологический склад, менталитет, компоненты психологического склада личности, национальный характер, советское поколение, поколение независимости, метод опроса, ценностные ориентиры, социально-психологический облик, психологический портрет личности, кризисная ситуация.*

Keywords *–national psychological disposition, components of the of psychological structure, Soviet generation, nationl character, Independence Generation, survey method, values socio-psychological aspect, social-psychological description of a person, crisis situation.*

В.Ярамишян

ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛНОГО ПСИХОЛОГИЧЕСКОГО СКЛАДА У ПОКОЛЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ НКР

В статье рассматриваются некоторые психологические особенности формирования национального психологического склада у <<поколения независимости>> - лиц, родившихся после провозглащения в 1991 году независимости НКР. На основе результатов экспериментальных исследований выделены некоторые социальные факторы, которые, по мнению автора, ввиду их черевычайности оказывают значительное влияние на естественный процесс формирования национального характера, национального самосознания и мышления у представителей поколения независимости.

V. Yaramishyan

FEATURES OF FORMATION OF THE NATIONAL MENTALITY IN GENERATIONS OF NKR INDEPENDENCE

The article discusses several psychological features of psychological structure of the "independence generation" - generation born in NK after declaration of independence in 1991. Experimental results point to social factors that had key impact on the natural course of the development of national character, national consciousness and national mentality.

Հոդվածում քննարկվում է 1991թ. անկախության հռչակումից հետո ԼՂՀ-ում ծնված և <<անկախության սերունդ>> պատվանունը կրող անձանց մոտ ազգային հոգեկերտվածքի ձևավորման մի քանի հոգեբանական առանձնահատկություններ: Փորձարարական հետազոտությունների արդյունքների հիման վրա առանձնացվում են սոցիալական ծագում ունեցող այն գործոնները, որոնք, հեղինակի կարծիքով, իրենց արտակարգ բնույթով շոշափելի ազդեցություն են թողնում նրանց մոտ ազգային բնավորության, ազգային գիտակցության և մտածողության ձևավորման բնականոն գործընթացի վրա:

Ազգն իր ծագման և պատմական զարգացման ընթացքում ձեռք է բերում փոխկապակցված հոգեկան հատկությունների մի խումբ, որոնք կազմում են քիչ թե շատ ամբողջական մի համակարգ, որն էլ կոչվում է ազգային հոգեկերտվածք[1] (6): Հոգեկերտվածքը ազգային բնավորություն է, ազգային գիտակցություն, ազգի այն հոգևոր-վարքային առանձնահատկությունը, որով տվյալ էթնիկ խումբը տարբերվում է մյուսից, օրինակ՝ կովկասյան ազգերը տարբերվում են սլավոնական ազգերից: Ազգային բնավորությունը

[1] Ազգային հոգեկերտվածքը երբեմն փոխարինվում է ազգային մենթալիտետ հասկացությամբ, որով հասկանում են անհատի, սոցիալական խմբերի և ազգի դիրքորոշումների և հակվածությունների համակարգը: Մենթալիտետի հիմքում ընկած է ազգային աշխարհընկալումը:

հարմարվողական կազմավորումների և բարդույթների կայուն համակարգ է, որի մեջ մտնող բաղադրիչների թվում առաջնային նշանակություն ունեն ազգային բնավորությունը, դիրքորոշումները, ազգային ոգին և էթնոցենտրիզմը (ազգակենտրոնություն): Ազգային բնավորությունը բարդ սոցիալական երևույթ է, որը բնութագրում է տվյալ ազգային, էթնիկական հանրույթին հատուկ կայուն առանձնահատկությունները, որոնք իրենց մեջ ներառում են գաղափարներ, հետաքրքրություններ, հոգևոր, բարոյական և կրոնական արժեքներ, մոտիվներ, ձգտումներ, սոցիալ-հոգեբանական պաշտպանական մեխանիզմներ (7): Ազգային բնավորության ակունքներում ընկած են մարդկային օրգանիզմի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ կենտրոնական նյարդային համակարգի ռեակտիվությունը, հակազդումների արագությունը, որոնք, իրենց հերթին, կապված են բնակության միջավայրի պայմանների հետ: Ազգային բնավորության կառուցվածքում տարբերում են մի շարք տարրեր՝

- խառնվածք, օրինակ՝ բուռն կամ հանգիստ,
- հույզեր՝ ազգային լավատեսություն կամ հոռետեսություն,
- զգացմունքներ՝ ազգային հպարտություն կամ ազգային ապաթիա,
- նախապաշարմունքներ՝ ազգի առաքելությունը, ազգային դերերը (նույն տեղը):

Ազգային բնավորության ձևավորումը դարեր տևող պատմահոգեբանական գործընթաց է: Տարբեր բնակլիմայական պայմաններում մարդիկ աստիճանաբար ընտելանում են դրանց՝ ձեռք բերելով ընկալման և հակազդումների որոշակի ձևեր, որոնք ունեն հարմարվողական բնույթ: Տվյալ հարմարվողական մեխանիզմները ամրապնդվում են անհատական և կոլեկտիվ վարքի որոշակի նորմերի՝ սոցիալապես հաստատված և ամրապնդված ձևերում: Այս առումով մեր ուսումնասիրության վերնագիրը կարող է որոշակի տարակուսանք հարուցել, քանի որ անկախության սերնդի ընդամենը քառորդդարյա տարիքը շատ քիչ ժամանակ է՝ ազգային հոգեկերտվածքի ձևավորման նոր միտումներ արձանագրելու համար: Սակայն այստեղ չի խոսվելու հայերին բնորոշ ինչ-որ նոր ազգային բնավորության կամ հոգեկերտվածքի ձևավորման մասին, այլ ընդամենը անդրադարձ է կատարվելու այն գործոններին, որոնք արտակարգ իրավիճակներում և իրադարձությունների հերթափոխման արագացված պայմաններում կարող են նոր շեշտադրումներ հաղորդել ազգային հոգեկերտվածքի ձևավորման տևական գործընթացին:

Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության հռչակումը 1991թ. սեպտեմբերի 2-ին, անկախ պետականության կայացման իրավական ձևակերպումը նույն թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեով, հետագայում Արցախյան պատերազմը և պետականաշինության 25-ամյա ընթացքը հայ ժողովրդի նորօրյա պատմության կարևորագույն իրադարձություններից են՝ հասարակական-քաղաքական, ազգային-ազատագրական, միջազգային-իրավագիտական, պատմագիտական և այլ առումներով: Ժամանակագրական առումով ԼՂՀ հռչակումը համընկավ խորհրդային կայսրության փլուզման և նրա հետ՝ համայնավարական գաղափարախոսության անկման հետ[1]: Անկախության հռչակմանը հաջորդած քառորդ դարում հայ (և ոչ միայն հայ) գիտական միտքը տարբեր ուղղություններով անդրադարձել է այդ դարակազմիկ իրադարձությունների վերլուծությանն ու գնահատականներ է տվել դրանց, սակայն առայսօր հրապարակի վրա դժվար է գտնել մի համապարփակ աշխատություն, որը կվերաբերեր տվյալ գործընթացի մասնակից անձանց, մասնավորապես՝ անկախության սերնդի ներկայացուցիչների հավաքական հոգեկերտվածքի վրա ազդեցություն ունեցող այն գործոններին, որոնք տեղ են ունեցել անցումային շրջանում՝ պետական կառավարման համակարգի ու հասարակական կյանքի փոփոխությունների արդյունքում: Մեզ հետաքրքրում է քննարկվող երևույթի սոցիալ-հոգեբանական կողմը, ուստի սույն հոդվածում կփորձենք ընդհանուր գծերով առանձնացնել այն հոգեբանական գործոններն ու դրանց ազդեցության հետևանքները, որոնք էական

[1] այստեղ խոսվում է կոմունիստական գաղափարախոսության իրավական-քաղաքական անկման մասին, քանի որ ակնհայտ է, որ երբեմնի իշխող գաղափարներն արագ <<չեն մահանում>>, այլ ընդամենը կորցնում են իրենց գերիշխող դիրքերը, իրենք մնալով կենսունակ:

նշանակություն են ունեցել և շարունակում են ունենալ անկախությունից հետո ծնված սերնդի ներկայացուցիչների հոգեկանի, ավելի կոնկրետ՝ նրանց սոցիալ-հոգեբանական ընդհանրացված կերպարի ձևավորման վրա: Ինչպիսի՞ն է նա՝ անկախության սերունդն իր հոգեկերտվածով. իր նախնիների ժառանգո՞րդն է, թե՞ ընդհակառակը՝ աչքի է ընկնում միանգամայն նոր, նախորդ սերնդին ոչ բնորոշ գծերով, յուրացրել և ստանձնե՞լ է արդյոք ավագ սերնդի կողմից իրեն փոխանցված արժեքային համակարգն ու պարտավորությունները, թե՞ իր համար մշակել է միանգամայն նոր արժեքային կողմնորոշիչներ: Նկատենք, որ մասնագետներից շատերը, մնալով երևույթի <<մակերեսին>>, երբեմն միանշանակ պնդում են, թե անկախ պետականության հռչակումն ու Արցախյան հաղթական պատերազմը լիարժեք հիմք են հանդիսացել <<հաղթանակած սերնդի>> և նրա մոտ <<հաղթողի հոգեբանության>> ձևավորման համար: Այստեղ, իհարկե, ճշմարտության մասնաբաժին կա, քանի որ խորհրդային համայնավարական, խիստ գաղափարայնացված հասարակարգում դաստիարակված, ինքնուրույնությունից զրկված և այդ պատճառով անկարողության ու անելանելիության հոգեվիճակում հայտնված մարդկանց համար <<կապանքների>> հաղթահարման հնարավորությունը, իսկապես, կարող էր նպաստել խորհրդային սերնդի մոտ ինքնավստահության և ինքնագնահատականի աճին, իսկ նոր սերնդի մոտ՝ դրանց գերակայությանը: Սակայն, մեր կարծիքով, այս երևույթն էլ ունի երկու կողմ: Օրինակ, հետաքրքիր է, թե ինչ հոգեվիճակներ կամ ինչպիսի հույզեր ու զգացմունքներ կունենա անկախության սերունդը՝ հարաբերվելով անհամեմատ բարձր կենսամակարդակ ու քաղաքարթական ժամանակակից ընկալմամբ զարգացման ավելի բարձր աստիճան ունեցող արտերկրի իր հասակակիցների հետ: Նրա մոտ, արդյոք, չե՞ն առաջանա ընկճվածության հոգեվիճակներ ու թերարժեքության բարդույթներ: Իսկ ինչպիսի՞ խմբային տրամադրություններ կառաջանան նոր սերնդի մոտ այն դեպքում, երբ երկրում առկա սոցիալական շերտավորումն էլ ավելի խորանա, անկախ պետականության, նրա միջազգային ճանաչվածության հետ կապված երազանքներն ու սպասելիքները չիրականանան կամ մասամբ իրականանան, տեսանելի ապագայում չլուծվեն անվտանգության, սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված բազմաթիվ խնդիրները, և չնվազեն հարևան ռազմատենչ երկրների կողմից <<դամոկլյան սրի>> պես կախված ռազմական ագրեսիայի սպառնալիքները, ինչպես այդ եղավ 2016թ ապրիլին: Այս դժվարագույն խնդրների լուծման համար նախ փորձենք հստակեցնել <<հոգեբանական հավաքական կերպար>> և <<հոգեկերտվածք>> եզրույթները կամ գոնե մեկնաբանենք, թե մեր կողմից ինչպիսի ընկալմամբ են օգտագործվելու դրանք՝ սույն հոդվածում կատարված դատողությունների համատեքստում:

Հոգեբանության մեջ անձի ***հոգեկերտվածքը*** նրա հոգեկան գծերի անկրկնելի ու հարաբերականորեն կայուն միասնությունն է, որն իր մեջ ներառում է ինչպես համամարդկային ու սոցիալական տվյալ միջավայրի մարդկանց համար բնորոշ գծեր, այնպես էլ տվյալ անձի անհատականությունը՝ խառնվածքը, բնավորությունը, ընդունակությունները, բնորոշ դրդապատճառներն ու զգացմունքները, հոգեկան պրոցեսների ընթացքի յուրահատկությունները, ինքնագիտակցության կառուցվածքը և այլն (2, էջ 134): Ինչպես հետևում է այս դասական ձևակերպումից, անձի հոգեկան կերտվածքի առաջնային ձևավորող բաղադրիչները ***տվյալ միջավայրի մարդկանց բնորոշ համամարդկային ու սոցիալական գծերն*** են, իսկ մյուս բաղադրիչն արդեն կապ ունի անձնավորության անհատական հատկանիշների հավաքակազմի հետ: Հետաքրքիր է, որ հոգեբանական գրականության մեջ <<անձի>> գրեթե բոլոր ընդունված սահմանումները նույնպես անմիջականորեն առնչվում են մարդու՝ սոցիալական միջավայրի ու այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններին, քանի որ <<անձը սոցիալական որակն է մարդու մեջ՝ որպես առանձին սոցիալական հանրույթների (ազգություն, հասարակական շերտ, խումբ և այլն) ներկայացուցչի, ով զբաղվում է գործունեության որոշակի տեսակով, գիտակցում է հարաբերություններն այլ անձանց հետ և ունի որոշակի անհատական առանձնահատկություններ>> (4): Մեզ համար գոնե հասկանալի է, որ անձի <<հոգեկերտվածքի>> ձևակերպման համար կիրառված հասկացությունները

վերաբերում են կոնկրետ այն անձանց, ովքեր հանդիսանում են տվյալ սոցիումին բնորոշ հատկանիշների կրողը, սակայն բնավ չեն վերաբերում այդ հատկանիշների բնորոշմանը, ինչն արդեն ոչ թե հոգեբանական, այլ հասարակագիտական խնդիր է: Խոսքը վերաբերում է տվյալ հասարակարգը, տվյալ հանրույթը բնորոշող այնպիսի երևույթներին, ինչպիսիք են ազգաբնակչության կենսամակարդակը, ազատությունների աստիճանն ու դրանց երաշխավորվածության մակարդակը, մարդկանց ընդգրկվածությունը երկրի համար կարևոր հարցերի լուծման գործում, տիրապետող գաղափարներն ու դրանց ուղղվածությունը, սոցիալ-քաղաքական, սոցիալ-կենցաղային բազամաթիվ այլ հարցերը: Մասնագետի համար դժվար է միանշանակ ուսումնասիրելն ու բացահայտելը, թե հասարակական կյանքի կոնկրետ ինչպիսի այլափոխումներն են վճռորոշ նշանակություն ունենում մարդկանց հոգեկերտվածքի ձևավորման կամ փոփոխության գործում:

Քննարկվող հիմնախնդիրն էլ ավելի է խճճվում այն պատճառով, որ հոգեբանության մեջ շրջանառվում է նաև անձնավորության սոցիալ-հոգեբանական ***նկարագիր հասկացությունը:*** Այդպես է կոչվում մարդու այն ընդհանրական բնութագիրը, որը ներառում է նրա ներքին հոգեկան կառուցվածքը՝ սոցիալական դիրքորոշումների համակարգը, հոգեբանական հատկանիշների <<դասավորվածությունը>>, ինչպես նաև հնարավոր վարքը՝ սոցիալական նշանակալի պայմաններում (5): Բացի այդ, հոգեբանական ախտորոշման պրակտիկայում կիրառվում է նաև ***անձնավորության դիմագիծ կամ պրոֆիլ հասկացությունը,*** որը, մեր կարծիքով, հոգեբանական դիմանկարից տարբերվում է նրանով, որ մեծ մասամբ քանակական, այլ ոչ թե որակական, բնութագիր է (1, էջ 79): Ի տարբերություն անձնավորության պրոֆիլի՝ դիմանկարը ոչ թե սանդղակ, կամ աղյուսակ է, որը նկարագրում է տարբեր գործոններից ստացված միավորների հարաբերակցությունը, այլ ներկայացնում է այդ հարաբերակցության տեքստային-բովանդակային մեկնաբանությունը: Այնուամենայնիվ, պրոֆիլի բացահայտումն ու մեկնաբանությունը կարող է էական դերակատարություն ունենալ անձի դիմանկարի և հոգեկերտվածքի պարզորոշման համար: Բանն այն է, որ անձնավորության ամբողջական պրոֆիլը բացահայտում է նրա կյանքի գրեթե բոլոր կողմերի մասին տեղեկատվությունը և ներառում է հետևյալ բաղադրիչները.

- մտածելու, գործելու, երևույթների էությունն ու բովանդակությունն ընկալելու անհատական ոճը՝ նշանակալի պայմաններում հնարավոր վարքագծի կանխատեսմամբ,
- հիմնական անձնային հատկանիշներն ու կարևոր արժեքային կողմնորոշումները,
- հուզական պրոֆիլը՝ ո՞ր իրադարձությունները կարող են հույզեր առաջացնել, որոնք՝ ոչ, ի՞նչ հոգեկան ապրումների մեջ կարող է խորասուզվել, որո՞նք են բնորոշ հոգեկան ապրումներ,
- աշխարհայացքը, համոզմունքները, նախապաշարմունքները, որոնք ազդում են անձի հետաքրքրությունների և առօրյա վարքի վրա,
- ակտուալ նպատակները և դրանց հասնելու ձևերը,
- բնավորության առանձնահատկությունները: Ինչպիսի՞ն է ինքը և ինչպե՞ս է ներկայանում շրջապատին,
- ներանձնային կոնֆլիկտները, բարդույթները, դրսևորման ձևերը,
- դրդապատճառները, որոշումներ ընդունելու կարողությունը, հարաբերություններ ստեղծելու ռազմավարությունը,
- լոյալությունը, ռիսկի գործոնները,
- մասնագիտական գործունեության առանձնահատկությունները, առաջընթացի հեռանկարները (8):

Հասկանալու համար, թե բովանդակային ինչպիսի փոփոխություններ են կատարվել անկախության հռչակումից հետո ծնված սերնդի ընդհանրացված հոգեկանում, նախ փորձենք վերհիշել, թե այդ ընթացքում ինչն է փոխվել, և որոնք են եղել այն բնորոշ սոցիալ-հոգեբանական բաղադրիչները, որոնք նախկինում հատուկ էին <<կոմունիզմ կառուցողի>> բարոյահոգեբանական նկարագրին՝ պայմանականորեն ընդունելով, որ այդ բաղադրամասերը սոցիալիզմի հասարակարգում բավականաչափ բնորոշ ու ամրապնդված են եղել

արցախահայության կոլեկտիվ հոգեկանում: Տեսականորեն <<կոմունիզմ կառուցողի>> բարոյական արժեհամակարգն իր մեջ ներառել է հետևյալ դրույթները.

1. ***Նվիրվածություն*** կոմունիզմի գործին, սեր դեպի սոցիալիստական հայրենիքը, սոցիալիզմի երկրները,
2. ***Բարեխիղճ աշխատանք*** ՝ հանուն հասարակության շահերի: Ով չի աշխատում, նա չի ուտում:
3. ***Հոգատարություն*** և սրտացավ վերաբերմունք հասարակության նվաճումների պահպանման ու բազմացման նկատմամբ,
4. Հասարակական պարտքի բարձր գիտակցում, անհանդուրժողականություն՝ հասարակական շահերի խախտման նկատմամբ,
5. ***Կոլեկտիվիզմ և ընկերական փոխօգնություն*** ՝ մեկը՝ բոլորի համար, բոլորը՝ մեկի,
6. ***Մարդասիրական վերաբերմունք մարդկանց նկատմամբ*** ՝ մարդը մարդու ընկերն է, եղբայրն ու բարեկամը,
7. ***Ազնվություն և արդարամտություն, բարոյական մաքրություն, պարզություն և համեստություն*** ՝ անձնական և հասարակական կյանքում,
8. Փոխադարձ հարգանք ընտանիքում, հոգատարություն երեխաների դաստիարակության նկատմամբ,
9. Անհանդուրժողականություն անարդարության, ծուլության, անազնվության, կարիերիզմի նկատմամբ,
10. Ժողովուրդների բարեկամություն, անհանդուրժողականություն ազգային և ռասային խտրականության նկատմամբ,
11. Անհանդուրժողականություն կոմունիզմի, խաղաղության, ժողովուրդների ազատության թշնամիների նկատմամբ,
12. Բոլոր երկրների աշխատավորների եղբայրական ***համերաշխություն*** (4):

Եթե սույն արժեհամակարգից միտումնավոր դուրս թողնենք բարոյական ու հոգեբանական նկարագրի հետ անմիջականորեն կապ չունեցող հասկացություններն ու հատկանիշները, ապա կունենանք հետևյալ պատկերը. խորհրդային մարդուն բնորոշ են եղել (կամ, առնվազն, պետք է բնորոշ լինեին)՝ ***նվիրվածությունը, բարեխղճությունը, աշխատասիրությունը, սրտացավությունը, հոգատարությունը, ընկերականությունը, մարդասիրությունը, հարգանքը, ազնվությունը, համեստությունը, արդարամտությունը, բարոյական մաքրությունը, պարզությունը, համերաշխությունն ու սկզբունքայնությունը (տեքստում՝ անհանդուրժողականությունը բացասական երևույթների նկատմամբ):***

Այս հատկանիշների շնորհիվ <<կոմունիզմի շինարարը>> ձեռք էր բերում ընդհանրացված մի կերպար, ում համար անձնական շահն ու հաջողությունը ստորադասված են եղել հանրային շահին ու բարեկեցությանը: Մի կողմ թողնելով ռեալ իրականության մեջ մարդկանց կողմից կոմունիստական գաղափարների ընկալված, յուրացված ու ընդունված լինելու մասին վիճելի հարցը՝ նկատենք, որ Արցախյան պատերազմում արցախահայության տարած հաղթանակի պատճառների վերլուծության դաշտում կարծիքներ են շրջանառվում նաև այն մասին, որ հատկապես այդ հատկանիշների շնորհիվ է արցախահայությունը կարողացել խիզախության ու արիության բազմաթիվ դրվագներ հեղինակել կենաց ու մահու մի այնպիսի պատերազմում, որում հակառակորդը բազմաթիվ անգամ գերազանցել է ռազմական տեխնիկայով ու սպառազինությամբ, մարդկային ռեսուրսներով: Այս հարցի վերաբերյալ մեր անձնական տեսակետն այն է, որ այսպիսի վարկածն իրավունք ունի շրջանառվելու և որոշ իմաստով կարող է ճիշտ լինել, եթե ընդունենք, որ արցախահայությանն ավելի, քան նրա պատերազմական թշնամուն, պատմականորեն բնորոշ են եղել և հավանաբար այժմ էլ շարունակում են բնորոշ լինել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են ավանդապաշտությունը, օրինապահությունն ու հատկապես օրհասական պահին որևէ համազգային գաղափարի շուրջ համախմբվելու բացառիկ ունակությունը:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացությանը, որ քառորդ դար առաջ արցախահայությունն անկախ պետականության կերտման ուղին թևակոխել է այնպիսի

ընդհանրացված բարոյահոգեբանական որակներով ու սոցիալ-հոգեբանական հատկանիշներով, որոնց հիմնական աղբյուրները երկուսն են.

- ավանդապաշտությունը, բարոյականության, հայրենքի ու պատվի մասին ազգային-ավանդական պատկերացումներով տոգորված լինելը,
- օրինապահությունը, դաստիարակվածությունը տվյալ ժամանակահատվածում գերիշխող գաղափարներով:

Խնդրի լիարժեք բացահայտման համար, ի թիվս այլ գործոնների, ճիշտ կլինի չնվազեցնել այս երկու հիմնասյուների ազդեցության դերը, այլ անկախ պետություն կերտող ներկա սերնդի արժեքային կողմնորոշումների համակարգը նույնպես փորձել կառուցել դրանց հիմքի վրա, որովհետև անկախության ակունքներում այդ նույն խորհրդային սերունդն էր, իսկ նոր սերնդի նոր նկարագրի ձևավորման համար պարզապես բավարար ժամանակ չկար: Արցախահայությանը նախկինում բնորոշ ավանդապաշտությունն ու օրինապահությունն այսօր էլ կասկած չեն հարուցում: Արցախում՝ հայապահպանության այս կղզյակում, ավելի, քան որևէ այլ երկրամասում, այժմ էլ պահպանվել են պատիվ, խիղճ, ամոթ, ավանդույթ հասկացությունները: Արցախցին ամուր կառչել է իր բաժին հողակտորին: Արցախահայ պատանին դեռևս այնքան չի <<քաղաքակրթվել>> ու <<եվրոպականացել>>, որքան, օրինակ, երևանցի կամ վանաձորցի իր հայրենակիցը: Կարծում ենք, որ երևույթի ամրապնդմանը նպաստել են նաև երկրի ազգաբնակչության մոնոէթնիկ բնույթը (այստեղ հայերի քանակը հասնում է գրեթե բացարձակ 100 տոկոսի), համեմատաբար մեկուսացված լինելը՝ տարատեսակ ազդեցություններից (հարևան ոչ բարեկամ երկրների կողմից փակ պահվող ճանապարհների ու դաժան շրջափակման պատճառով), սահմանափակ շփումներն այլ ազգերի ներկայացուցիչների հետ, տարատեսակ <<մարդասիրական, զարգացողական, իրավապաշտպան, ազատության աջակցության>> և նմանատիպ ծրագրերի ներդրման նվազ ծավալները, որոնք հիմնականում հետամուտ են ապազգային, մասնավոր, կոնյուկտորային շահերի ու նպատակների:

Արցախում ծնված և ապրող անկախության սերնդի ընդհանրացված արժեքային կողմնորոշումներն ուսումնասիրելու նպատակով նախկինում էլ մեր կողմից ԼՂՀ ՊԲ զորամասերում անց էին կացվել 18-20 տարեկան պատանիների սոցիալ-հոգեբանական հետազոտություններ (3): Ընտրանքի այսպիսի համակազմը պայմանավորված էր նրանով, որ բանակում կենտրոնացած է նույն սեռի, տարիքի, նույն նպատակի շուրջ համախմբված մեծ թվով երիտասարդություն: Ուսումնասիրությունն անց է կացվել սոցիալ-հոգեբանական հարցման մեթոդով: Առաջադրվել են հարցապնդումներ, որոնք անուղղակիորեն պետք է բացահայտեին պատանիների արժեքային կողմնորոշումները, մասնավորապես՝ վերաբերմունքը անկախության ու պետականության նկատմամբ: Օրինակ, <<Առաջին հերթին ի՞նչն է հարկավոր զենքով պաշտպանել>> հարցադրմանը պատասխանելու համար առաջարկվել են պատասխանների տարբերակներ, իսկ մեկ այլ հարցման ժամանակ, հավաստիության բարձրացման նպատակով, հարցապնդմանը տրվել էր հետևյալ ձևակերպումը. <<Ըստ կարևորության դասավորեք հետևյալ հասկացությունները՝ Հայրենիք, Անկախություն, Պետություն, Հավատ, Պատիվ, Ծնողներ և ընտանիք, Ընկերներ>>:

Ստացված արդյունքներից կարելի էր նկատել, որ անվիճելի առաջնայնությունը և ըստ տարիների աճելու միտումը (հարցումն անց է կացվել 2004-2005 և 2008 թ.թ.-ին) պատկանում է <<ծնողներին, հարազատներին ու ընտանիքին>>, քանի որ հարցվածների կեսից ավելին անվերապահորեն ընտրել է այդ տարբերակը: <<Հայրենիքն>> ու <<Պետությունը>> կիսել են երկրորդ և երրորդ տեղերը՝ յուրաքանչյուրը մոտ 22% ձայներով: Եթե <<Հավատը>> տարբերակն ընտրել էր յուրաքանչյուր տասներորդ հարցվածը, և այդ ցուցանիշը տարիներով չի փոխվել, ապա <<Պատիվ>> և <<Անկախություն>> հասկացությունները շեշտակի անկում են ապրել՝ չորս տարիների ընթացքում 15%-ից և 10%-ից համապատասխանաբար իջնելով մինչև 5%: Կարծում ենք, որ այս, առաջին հայացքից անօգուտ թվացող, հաշվարկները կարող են մեծապես օգնել՝ անկախության սերնդին կողմնորոշող արժեքները ճիշտ հասկանալու առումով: Օրինակ,

կարելի է եզրակացնել, որ անկախությունը շատ ավելի <<քաղցր է եղել>> նրա ձեռքբերման նախնական փուլերում՝ անցած դարի 90-ական թվականներին և 2000-ականների սկզբին, քանի որ այդ ժամանակ մեծ էին ոգևորությունը և լավագույն ապագայի սպասելիքները: Տարեցտարի, սակայն, բախվելով տարաբնույթ կենցաղային դժվարությունների ու այդպես էլ իրենց լուծումը չգտնող սոցիալական խնդիրների հետ, այդ ոգևորությունը նկատելիորեն նվազել է, որոշ իմաստով տեղ են գտել հիասթափության, չարդարացված հույսերի ու սպասումների հոգեվիճակները:

Աղյուսակ 1

2004-2005թ.թ. 18-20 տարեկան տղաների հարցման արդյունքները

Հարցադրում	Պատասխանի տարբերակ	2004/1	2004/2	2005/1	2005/2
	հարցվածների քանակը	1294	3492	3318	250
Բառերը համարակալեք ըստ կարևորության	հավատ	11.1	9,9	14.4	10.3
	պատիվ	14.8	12,1	6.0	4.8
	հայրենիք	18.3	11,1	19.2	22.0
	անկախություն	9.7	9,2	1.6	4.4
	ծնողներ, ընտանիք	34.5	14,3	33.2	51.6
	ընկերներ, շրջապատ	5	11,8	-	-
	պետություն	5.3	11,5	20.4	22.5

Հարցման արդյունքներից կարելի է կատարել ևս մեկ հետաքրքիր եզրակացություն՝ անկախության սերնդին հայրենասիրության պակասի մեջ կասկածելը, ըստ երևույթին, զուրկ է որևէ հիմքից, քանի որ երիտասարդությունն ավելի ու ավելի ըմբռնումով է վերաբերվում այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են պետականությունն ու հայրենիքը, իսկ հայրենասիրությանը խանգարող գործոնների թվում առանձնացվում է երկրի սոցիալ-տնտեսական վիճակը (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

2004-2005թ.թ. 18-20 տարեկան տղաների հարցման արդյունքները

Ի՞նչն է խանգարում հայրենասիրու թյանը	ընտանիքի դաստ-նը	1251	*9,5*	1074	*10.3*	177	*6,6*
	ընկերական շրջապատը	343	*2,6*	286	*2.7*	57	*2,1*
	երկրի սոցիալական վիճակը	10135	*77,1*	8055	*77.1*	2080	*78*
	բանակում տիրող վիճակը	1197	*9,1*	962	*9.2*	235	*8,7*

Այժմ արդեն կարող ենք պնդել, որ հասարակական կյանքում արմատավորված այնպիսի երևույթները, ինչպիսիք են շուկայական հարաբերությունները, սոցիալական բևեռացումները, արժեքային կողմնորոշիչների վերադասավորումները (անձնական շահի ու հետաքրքրությունների աճը, նյութապաշտությունը, անհատականացումը, <<բարձր հոգևոր արժեքների>> սրընթաց անկումը և այլն), պատանիների մտավոր, ֆիզիկական և ընդհանուր պատրաստվածության հետ կապված խնդիրների բազմազանությունը հանգեցնում են անկախության սերնդի հոգեկերտվածքը ձևավորող գործոնների վերադասավորմանը: Խնդիրը բարդանում է նրանով, որ խորհրդային սերնդի ներկայացուցիչներից շատերը, չկարողանալով հարմարվել նոր իրավիճակին, դադարեցին ջանքեր գործադրել, իրենց դիրքերից նահանջեցին ու տեղի տվեցին: Ոմանք անտարբեր ու սպասողական կեցվածք ընդունեցին՝ նոր սերնդին վերապահելով բարդ իրավիճակներում կողմնորոշվելու մենաշնորհը, ասելով. <<Եթե մեր գաղափարները մերժում եք, ուրեմն բարի եղեք մեզ չանհանգստացնել և արեք այն, ինչ ուզում եք>>: Հրաժարվելով ակտիվ կենսադիրքից և կրավորական դիրք գրավելով՝ խորհրդային սերնդի

ներկայացուցիչներից ոմանք ակամա էլ ավելի ամրապնդեցին իրենց համար կյանքի իմաստ դարձած համայնավարական գաղափարների կենսունակությունն ու կարծրությունը: <<Հայրերի սերնդի>> այսպիսի ինքնամեկուսացումը և այդ ֆոնի վրա անկախության սերնդի գործունեության միջավայրի արագ փոփոխությունը հանգեցրին երիտասարդության համար արժեքային-կողմնորոշիչ համակարգի անկայունության աճին: Այս իրավիճակին մասնագիտական գնահատական տալու համար հարկավոր կլինի գտնել այնպիսի իրադարձություններ, որոնք կարևոր են երկրի ներկայի ու ապագայի համար, և որոնցում մեծ է երիտասարդների մասնակցության աստիճանը:

Վերհիշենք, որ ազգային բնավորությունը որոշակի հակազդումների և որոշակի արարքներ գործելու միտումների համակարգ է, որը ծագել է ընդհանուր ապրումների և կենսակերպի հետևանքով: Ազգի և նրա առանձին ներկայացուցչի բնավորության իրական գծերը, շատ դեպքերում լինելով թաքուն կամ արտամղված, պրոբլեմային իրադրություններում սկսում են ինքնաբերաբար բացահայտվել և վարքային դրսևորումներ ունենալ: Դա հատկապես հստակ է երևում կոնֆլիկտային և ճգնաժամային իրադրություններում: Այս առումով ավելի տիպական օրինակ, քան 2016թ. ապրիլյան քառօրյա պատերազմն է, դժվար է գտնել: Այդ օրհասական պահին Արցախի երիտասարդ սերունդը հայտնվեց անորոշության դեմ պայքարի հորձանուտում: Բնական է ենթադրել, որ կշռադատված որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ ժամանակի բացակայության պայմաններում երիտասարդությունն իր վարքային դրսևորումներում առաջնորդվելու էր այն ներքին մղումներով ու կայուն դիրքորոշումներով, որոնց մասին խոսվել է սույն հոդվածի նախաբանում: Ի պատիվ նրա՝ պետք է արձանագրենք, որ ամենալավատեսական կանխատեսումներն անգամ բազմակի գերազանցվեցին: Անկախության սերունդը, առնվազն նրա արական սեռի ներկայացուցիչները, անվարան նետվեցին ռազմաճակատ: Օրինակ, Արցախի պետական համալսարանում տղա ուսանող գրեթե չմնաց, բոլորը մեկնեցին առաջնագիծ: Տղաներից բնավ հետ չմնացին աղջիկները, ովքեր զանգվածաբար ներգրավվեցին ռազմաճակատի աջակցության ու ապահովման ուղղությամբ ծավալված կամավորական շարժման մեջ: Աղջիկների 30-40 հոգանոց խմբերը տասնօրյակներ շարունակ կամավորական աշխատանքներ էին կատարում պարենային և իրային պահեստներում՝ բաշխելով մթերքը, հագուստը, ռազմաճակատի համար հանգանակված իրերը: Այսպիսի վարքագիծը վկայում է, որ անկախության սերունդն իր հոգեկերտվածքով մնացել է նախորդ սերունդների կողմից պատմականորեն մշակված ազգային բնավորության, ազգային մտածողության ու ավանդույթների արժանի կրողն ու շարունակողը:

Այսպիսով, ազգային հոգեկերտվածքի ձևավորումը պատմահոգեբանական գործընթաց է, որի վերջնարդյունքի վրա զգալի ազդեցություն են գործում տվյալ ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի արտակարգ և ճգնաժամային իրավիճակները: Դրա հետ մեկտեղ՝ արցախահայության անկախության սերունդն իր վարքագծով վերահաստատում է ավանդապաշտության, օրինապահության, հայրենասիրության ու օրհասական ժամին միասնական գաղափարի շուրջ համախմբվելու բացառիկ ունակությունը: Սոցիալ-տնտեսական ու սոցիալ-քաղաքական բարդ հանգամանքներով պայմանավորված, ձևավորման առանձնահատկություններով հանդերձ, անկախության սերունդն իր հավաքական հոգեկանում կրում է ազգային բնավորության ու մտածողության այն կարևորագույն գծերը, որոնք պատմականորեն առանձնացել են որպես հային բնորոշ էթնոհոգեբանական հատկանիշներ:

Գրականություն

1. Արզումանյան Ա, Մկրտչյան Ս, Սարգսյան Վ., Կիրառական հոգեբանության պրակտիկում: Եր., Զանգակ, 2002, 392 էջ:
2. Ա.Նալչաջյան, Հոգեբանական բառարան, Երևան, Լույս, 1984, էջ 134:
3. Վ.Բ.Յարամիշյան, <Զինվորական ծառայությանը նորակոչիկների սոցիալ-հոգեբանական հարմարման դժվարությունները և դրանց հաղթահարման ուղիները>, հ.գ.թ. հայցման ատենախոսություն, 2009, ՀՊՄՀ գրադարան:

4. Антипин Н. А. Философия морали и парадоксы современного российского общества / Под ред. проф. В. В. Варава, доц. И. О. Надточий, доц. Н. А. Панова, 2-е изд., М.: 480 с.
5. Н.И. Конюхов Прикладные аспекты современной психологии: термины, законы, концепции, методы, Москва - 1992 г.
6. https://hy.wikipedia.org/wiki/ Ազգային բնավորություն
7. https://ru.wikipedia.org/wiki/Национальный_характер
8. https://ru.wikipedia.org/wiki/Психологический_портрет_личности

Տեղեկություններ հեղինակի մասին.
Վիտյա Յարամիշյան, հ.գ.թ., դոց.,ԱրՊՀ
E-mail: vityayaramishyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել, հ.գ.թ., պրոֆեսոր Ա.Մ.Մխիթարյանը:

ՀՏԴ 376(479.243) Հոգեբանություն

ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ԼՂՀ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Գոհար ԳՐԻԳՈՐՅԱՆ, Արև ՄԻՐԶԱՋԱՆՅԱՆ

Բանալի բառեր *- ներառական կրթություն, ԿԱՊԿՈՒ /կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող/ անձ, ԱՈՒՊ /անհատական ուսումնական պլան/, պրոյեկտիվ մեթոդիկաներ, ուսումնական մոտիվացիա, զգացմունքային հակազդում, հոգեբանական էքսպեկտացիա, հոգեբանական բաղադրիչ, ներառականության սահմանում, տարածաժամանակային կողմնորոշում, հասարակական հանդուրժողականություն, էմպատիա/ապրումակցում/:*

Ключевые слова *- Инклюзивное образование, личность, который нуждается в особых условиях образования, индивидуальный учебный план, проективные методики, учебная мотивация, эмоциональная реакция, психологическая экспектация, психологическое содержимое, формулирование инклюзивности, территориально-временная ориентация, общественная снисходительность, эмпатия /сопереживание/.*

Keywords *- Inclusive education, person, who needs special conditions for education, individual curriculum, projective method, education motivation, emotional reaction, psychological expectations, psychological content, formulation of inclusivity, territorial and time orientation, social leniency, empathy.*

Г. Григорян, А. Мирзаджанян

ПСИХОЛОГИЧЕСКОЕ СОДЕРЖИМОЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ В ИНКЛЮЗИВНЫХ ШКОЛАХ НКР

В данной статье затрагивается тема психологического содержимого одного из актуальных методов организации образования - инклюзивного образования. Описываются факторы, которые образуют эту содержимую и делается попытка определения путей организации инклюзивного обучения, которые позволят сделать процесс обучения детей с особыми нуждами более многосторонним и эффективным. Толерантным отношением общества к ребенку обусловлена взаимная толерантность ребенка к обществу.

G. Grigoryan, A. Mirzajanyan

PSYCHOLOGICAL CONTENT OF INCLUSIVE EDUCATION AT INCLUSIVE SCHOOLS OF NKR

The article touches the psychological content of one of the current ways of organizing the educational process- the inclusive education. Those factors are described, which take part in the process of structuring that content and a trial is made to find out the formulation of inclusivity that will help the tutoring process to become more effective and comprehensive. The base of inclusive education is a child with special needs (disabled child) and depending on the fact how carefully and kindly the society treats this child, the social leniency will be reached.

Հոդվածում արծարծվում է կրթության կազմակերպման արդիական ձևերից մեկի՝ ներառական կրթության հոգեբանական բաղադրիչը, նկարագրվում են ձևավորող գործոնները: Փորձ է արվում գտնելու ներառական կրթության կազմակերպման այն ուղին, որը թույլ կտա ուսումնառության պրոցեսը դարձնել արդյունավետ: Ներառականության առանցքում հատուկ կարիքներով երեխան է՝ իր զգացմունքներով և հասարակության հետ կապեր կառուցելու իր ունակությամբ և, կախված նրանից, թե ինչպիսին է հասարակության կարեկցանքը երեխայի հանդեպ, վերջինս էլ նույնքան կարեկից կլինի հասարակության նկատմամբ:

Համաձայն ԼՂՀ Սահմանադրության 41-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք [1]: Այս սահմանադրական իրավունքն իր մեջ բովանդակում է ավելի հումանիստական, քան իրավաբանական իմաստ: Համամարդկային արժեքներն այժմ ավելի, քան երբևէ, միտված են անթրոպոկենտրոն դրսևորումների: Մարդու՝ բացառիկ արժեք լինելու գաղափարն ընկած է կրթական յուրաքանչյուր գործընթացի հիմքում, նույնիսկ եթե այդ մարդն ունի ֆիզիկական և մտավոր սահմանափակ կարողություններ: Այլասիրական և կառուցողական մոտեցման անհրաժեշտությունից էլ հենց ծնվեց ներառական կրթությունը, ինչը լայն իմաստով

միտված է կրթությունը հասանելի դարձնել բոլորին՝ առանց բացառության: Այսօր մեր հանրապետությունում ներառական կրթությունը կրթական քաղաքականության ամբաժանելի մասն է և իրագործվում է համապատասխան 2007թ. հունիսի 20-ին ընդունված «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ԼՂՀ օրենքի և այլ իրավական փաստաթղթերի [2]:

2010թ-ից մեր հանրապետությունում գործում են 97 ներառական դպրոցներ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 405 աշակերտներով, դրանց թվում՝ մանկական ուղեղային կաթվածով (ՄՈՒԿ), լսողության և տեսողության, խոսքի խանգարումներով և ուսումնական ունակությունների յուրահատուկ խանգարումներով:

Մայրաքաղաք Ստեփանակերտում և շրջաններում գործում են բազմամասնագիտական թիմեր, որոնք ընթացիկ մշտադիտարկում (մոնիթորինգ) են իրականացնում և մասնագիտական աջակցություն ցուցաբերում ներառական կրթության կազմակերպմանը:

Ներառական կրթությունն այն բարդ գործընթացն է, որը ենթադրում է իրավաբանական, սոցիալական, սոցիոլոգիական, մանկավարժական և հոգեբանական բաղադրիչների ամբողջական դինամիկ ընթացակարգ: Եվ եթե իրավաբանական, սոցիալական, սոցիոլոգիական ու մանկավարժական բաղադրիչներով ներառական կրթությունը քիչ թե շատ կայացել է այս 15 տարիների ընթացքում, ապա նույնը չի կարելի ասել հոգեբանական բաղադրիչի մասին:

Ներառական կրթության հոգեբանական բաղադրիչ ասելով՝ հասկանում ենք հատուկ կարիքներով երեխաների ուսումնառության գործընթացում ներգրավված անձանց հույզերի ու զգացմունքների, նրանց հոգեկան պրոցեսների, վիճակների ու հատկությունների ձևավորման ընթացքի, կոնկրետ մանկավարժական իրադրություններում ընդունելի հոգեբանական ելքեր գտնելու հնարավորությունների որոնման կարողության, հատուկ կարիքներով երեխայի արժեհամակարգի և աշխարհայացքի ձևավորման գործընթացի և որպես վերջնական արդյունք՝ հասարակության մեջ ապրող ինքնուրույն, ինքնասպասարկվող միավոր ձևավորելու ունակության իրացումը:

Ներառական կրթության հոգեբանական բաղադրիչի ձևավորման ու կայացման դինամիկ գործընթացը կարելի է պայմանականորեն բաժանել 3 փուլի՝

- էմոցիոնալ ընկալման փուլ,
- մասնագիտական արձագանքման փուլ,
- հոգեբանական կանխատեսման (էքսպեկտացիաների) փուլ:

Մասնագետները խոստովանում են, որ աշխատանքային գործունեությունը սկզբում միշտ զգացմունքային հակազդումից է սկսվում. առաջին անգամ դասարան մտած ներառված աշակերտը նախ հանդիպում է դասավանդողի և բազմամասնագիտական թիմի անդամների, ինչպես նաև դասարանի մյուս աշակերտների զգացմունքային ընկալմանը: Այստեղ շատ կարևոր է բարձր որակավորում ունեցող մասնագետի պրոֆեսիոնալ մոտեցումը՝ հաղթահարելու կարեկցանքն ու խղճահարությունը, շատ դեպքերում նաև մյուս աշակերտների քամահրանքը և աշխատանքը տեղափոխելու հաջորդ փուլ:

Մասնագիտական արձագանքի փուլն ընդգրկում է ԱՈՒՊ-ի ճշգրիտ լրացման, հատուկ կարիքով երեխայի հոգեկան պրոցեսների, վիճակների ու հատկությունների համարժեք գնահատման և երեխայի շահերից բխող նպատակների ու հնարավորությունների որոնման գործընթացը: Այս փուլում շատ կարևոր է հոգեբանի կողմից ներառված երեխայի անձի բազմաշերտ ուսումնասիրությունը: Դա կարող է իրականացվել համապատասխան պրոյեկտիվ մեթոդիկաների (Ռորշարխի թանաքաբծերի, Լյուշերի գունային ընտրությունների, <<տուն, ծառ, մարդ>>, <<ինքնանկար>>, <<իմ ընտանիքը>>, <<գոյություն չունեցող կենդանի>> մեթոդիկաներ) միջոցով:

Տարբեր դպրոցներում կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վերոհիշյալ պրոյեկտիվ մեթոդիկաները հարուստ հետազոտական նյութ կարող են տրամադրել հոգեբանին, ինչն էլ նա կարող է ծառայեցնել ամբողջ թիմի աշխատանքային արդյունավետության

բարձրացմանը: Շատ կարևոր է պարզել նաև երեխայի տարածաժամանակային կողմնորոշման մակարդակը և ուսումնական մոտիվացիայի աստիճանը:

Հաջորդ՝ հոգեբանական կանխատեսումների փուլում անհրաժեշտ է նախորդ փուլում հավաքագրված հետազոտական նյութի հիման վրա ձևակերպել էքսպեկտացիաները՝ ինչ ձեռքբերումներ կարող է ունենալ երեխան առաջիկա ամիսների կամ տարվա համար, ինչպիսին կլինեն հասարակության մեջ ինտեգրվելու նրա հաջողությունները, ինչ ջանքերով նա կկառուցի հարաբերությունները հասակակիցների և ընկերների հետ:

Պնդել, որ այս փուլերը և, մասնավորապես, ներառման գործընթացն ամբողջությամբ առանց դժվարությունների է իրագործվում, անհեթեթ կլինի: Բայց մի բան ակնհայտ է. առաջացող դժվարությունները, որպես կանոն, <<մեծահասակների ձեռքի գործն են>>, այսինքն՝ գործընթացը բարդությունների բախվում է միակողմանի: Արցախի տարբեր ներառական դպրոցներում կատարված հետազոտությունները թույլ են տալիս պնդել, որ ներառական կրթությունն ավելի դյուրին է ընկալվում երեխաների կողմից, քան մեծահասակների:

Փոքրիկ, հեռավոր գյուղերում, որտեղ առարկայական ուսուցիչն իր որակավորմամբ համեմատաբար քիչ է համապատասխանում ներառական կրթություն իրագործող մասնագետին ներկայացվող պահանջներին և լավ է ճանաչում իր համագյուղացի երեխաներին, չի կարողանում հատուկ կրթության կարիք ունեցող իր աշակերտին ընդունել նրա ընտանիքից, ծնողներից զատված, անջատ, այսինքն՝ նրա հուզական վերաբերմունքը այդ երեխայի նկատմամբ, որպես կանոն, միջնորդավորված է հասարակական կարծիքով, իր և համագյուղացիների կարծրատիպերով: Այլ պատկեր է դասարանի մնացած աշակերտների հուզական վերաբերմունքի դեպքում. նրանց համար կարևոր չէ, թե ում երեխան է 7 տարեկան Ա-ն, որն այնքան ցածրահասակ է, որ դժվարությամբ է ինքնուրույն տեղաշարժվում: Ա-ն նրա համադասարանցին է, և աղջիկները նրան զուգարան են ուղեկցում և օգնում են օգտվելու զուգարանից: Նրանց համար դա սովորական ամենօրյա արարք է, ոչ թե կարեկցանքից կամ խղճահարութունից ծնված բարեգործական քայլ: Այսինքն՝ փոքրիկների <<առաջարկած>> ներառումը զերծ է հետաքրքրասիրությունից և խղճահարությունից. այն ուղղակի իրենց ընկերոջն ընդհանուրի մեջ ներգրավելու, ուսուցման մեջ նրա անհատական պահանջմունքները բավարարելուն ուղղված գործողություն է: Ի դեպ, սա այն է, ինչին մեծահասակները դժվարությամբ են հասնում: Մասնագիտական էքսպեկտացիաների փուլում նրանց կանխատեսումներն ու ակնկալիքները հատուկ կարիքներով երեխայի հանդեպ խիստ սահմանափակ են, և ստացված արդյունքն էլ դիտարկվում է որպես վերջնական և չգերազանցվող: Գյուղերից մեկի միջնակարգ դպրոցում 8 տարեկան Հ-ին ամբողջ կոլեկտիվի ջանքերով սովորեցրել էին Արցախի օրհներգը և ամբողջ տարին այդ արդյունքը համարում էին այն առավելագույնը, ինչին նա ընդունակ է: Այսինքն, մեր դպրոցներում մասնագետի աշխատանքը, ցավոք, դեռ ուղղված է միայն արդյունքին: Իսկ ակնկալվող արդյունքը չստանալով՝ նա հուսահատվում է: Առարկայական ուսուցիչների մեծ մասը դեռևս շարունակում է ԿԱՊԿՈՒ (կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող) երեխաներին դիտարկել որպես անընդունակ և հիվանդ, որոնց հետ անիմաստ են ժամանակ ծախսելու և որևէ բան սովորեցնելու փորձերը:

Այսպիսով, ստացվում է, որ ներառման գործընթացի հաջողություններից խոսելիս ներշնչվում ենք միայն մեր փոքրիկների հանդուրժողականությամբ և բարությամբ, դիմացինին ապրումակցելու և օգնելու պատրաստակամությամբ, որն, ի դեպ, ներառական կրթության ամենամեծ ձեռքբերումն է: Ստացվում է այնպես, որ ներառական կրթությունից ավելի շատ շահում են կրթության հատուկ պայմանների կարիք չունեցող երեխաները, քան ունեցողները:

Եվ եթե ուզում ենք, որ ներառական կրթությունն իրոք կայանա մեր հանրապետությունում, պետք է առաջնորդվենք ներառականության այն սահմանմամբ, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ն է առաջարկել. <<Ներառումն իրենից ներկայացնում է դինամիկ պրոցես, որը դրականորեն է արձագանքում աշակերտների բազմազանությանը՝ ընկալելով անհատական

տարբերությունները ոչ թե որպես լուծման ենթակա խնդիր, այլ որպես ուսուցման գործընթացը հարստացնող հնարավորություններ>> [3]:

Օգտագործված գրականություն

1. ԼՂՀ Սահմանադրություն, հոդված 41
2. ,,Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց մասին,, ԼՂՀ օրենքը, 2005:
3. Ներառման ուղեցույց. Կրթություն բոլորի համար, ՅՈՒՆԵՍԿՕ, Երևան, 2005:
4. Ներառական կրթություն. Վերապատրաստման դասընթացների բովանդակային նյութերի փաթեթ, Երևան, 2008:
5. www.unicef. (Inclusive education in Armenia)

Տեղեկություններ հեղինակների մասին.

Գոհար Գրիգորյան, մանկավարժ –հոգեբան, իրավաբանական հոգեբան
E-mail: grigoryangog@gmail.com
Արև Միրզաջանյան, Ստեփանակերտի Վ.Ջհանգիրյանի անվան հ. 11 ավ.դպրոցի ՄԿԱԳՏՏ
E-mail: vityayaramishyan@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9 Հոգեբանություն

ԹՐԵՆԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԻ ԵՎ ԹԻՄԻ ԷՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԹՐԵՆԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԻ ԹԻՄԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ

Արմինե ԱԼՈՅԱՆ

Բանալի բառեր- *խմբային հոգեբանական մեթոդ, թրենինգային աշխատանք, թիմակազմավորում, թիմաձևավորում, խմբային համատեղելիություն, թիմային համախմբվածություն, համագործակցության բարձր աստիճան, ավագ դպրոցականներ, հետազոտություն, վերջնաարդյունք:*

Ключевые слова- *психологический группавой метод, тренинговая работа, группасоздание, группавая совместимость, командная сплоченность, высокий степень сотрудничества, старшеклассники, исследовательская работа, конечный результат.*

Keywords: *collective psychological method, training work, team organization, team formation, group compatibility, team unity, great degree of cooperation, high school children, research work, final result.*

А. Алоян

СОПОСТОВЛЕНИЕ И СРОВНЕНИЕ СУШНОСТИ, А ТАК ЖЕ ФУНКЦИЙ ТРЕНИНГОВОЙ ГРУППЫ И КОМАНДЫ, КАК ОСНОВА КОМАНДООБРОЗОВАНИЯ ТРНЕНИНГОВОЙ ГРУППЫ

В статье рассматривается сопоставление групп и команд, их положительные и отрицательные качества, а также необходимость и важность тренинговой работы в процессе командооброзования, в качестве центрального качества, способствующего повышению эффективности тренинговой работы с старшеклассниками. В итоге, тренинговой работы, для измерения конечного результата командообразования рассматривается степень сотрудничества, которая, согласно эмпирическим исследованиям, а также проведенной работе в группах старшеклассников и выводам, представленным в статье, имеет более высокую степень в команде, чем в группе и может быть стандартом, с помощью которого можно определить эффективность тренинга командообразования.

A. Aloyan

COMPARISONS AND COMBINATIONS OF ESSENCE AND FUNCTIONS OF THE TEAM AND TRAINING GROUP AS THE BASIS OF TRAINING GROUP FORMATION

In this article it is spoken about team and training group combination, about their positive and negative qualities, also it is spoken about the significance and the necessity of team organization process during the training work as central quality stimulating the effectiveness of training work. As a result of training work the cooperation degree is considered as the central quality of final result. As assured the empirical researches, accomplished results of high school children and the article explorations , it is higher in the team than in group, and it can be the criteria (standard) with it it will be able to clarify the team forming training effectiveness.

Հոդվածում դիտարկվում է թրենինգային խմբի և թիմի համադրությունները, դրանց դրական և բացասական որակները, ինչպես նաև թրենինգային աշխատանքներում թիմաձևավորման գործընթացի կարևորությունն ու անհրաժեշտությունը որպես թրենինգային աշխատանքների արդյունավետությունը խթանող կենտրոնական որակ: Թրենինգային աշխատանքի արդյունքում թիմաձևավորման վերջնաարդյունքի չափման կենտրոնական որակ է դիտարկվում համագործակցության աստիճանը: Որը, ինչպես հավաստում են և՛ էմպիրիկ ուսումնասիրությունները, և՛ ավագ դպրոցականների խմբերում իրականացված ու հոդվածում ներկայացված հետազոտության արդյունքները, առավել բարձր է թիմում, քան խմբում և կարող է հանդիսանալ չափորոշիչ, որով կարելի է պարզել թիմաձևավորող թրենինգի արդյունավետությունը:

Նախքան թրենինգային խմբի և թիմի էության և գործառությունների միջև համեմատական զուգահեռներ անցկացնելը, թրենինգի թիմակազմավորող գործառույթի կարևորումը, նպատակահարմար է անդրադարձ կատարել թրենինգի ու թրենինգային խմբի, թիմի ու թիմային աշխատանքների առանձնահատկություններին:

Հանդիսանալով ակտիվ խմբային հոգեբանական մեթոդ՝ սոցիալ հոգեբանական թրենինգը ծագեց և զարգացավ հենց խմբային մեթոդների զարգացման ճանապարհին:

Անկասկած, խմբային հոգեբանական աշխատանքի արդյունավետությանը տրվող բարձր գնահատականը բխում է անհատի վրա խմբի ունեցած ազդեցության կարևորումից: Բացի

այդ, խումբը դիտարկվում է որպես անհատի զարգացմանը նպաստող կարևոր օղակ, քանի որ մարդը, որպես անձ իր կայացման ճանապարհին անցնում է մի խմբից մյուսը, խմբում է ձևավորում իր արժեհամակարգը, աշխարհայացքն ու բարոյական կերպարը: Անձի դիմանկարը բնութագրվում է նաև այն նորմերով ու արժեքներով, որոնք նա ներքնայնացրել է՝ հանդիսանալով այս կամ այն խմբի անդամ: Հետևաբար, անհատը չի կարող հոգեբանորեն անկախ լինել խմբից: Մարդու համար սթրեսածին, նաև հոգեբանական անվտանգությանը լուրջ խոչընդոտ է հանդիսանում խմբից մեկուսացված լինելը, խմբի կողմից չընդունվելը, խմբի կողմից մերժվելը: Անհատը իր օնտոգենեզի առաջին իսկ պահից սոցիալական էակ է, նա իր զարգացման ու կայացման ճանապարհին մենակ ու ինքնուրույն չի քայլում: Անձնային զարգացման յուրաքանչյուր փուլ միջնորդավորված է խմբերով: Եվ հենց անհատի կյանքում խմբի նման նշանակությունն էլ գործնական հոգեբանության բնագավառում առանձնահատուկ ասպեկտի վրա է դնում խմբային աշխատանքի մեթոդները: Կ. Լևինը պնդում էր, որ մարդկանց վարքում և դիրքորոշումներում արդյունավետ փոփոխությունների մեծ մասը տեղի է ունենում խմբերում, այլ ոչ թե անհատական կոնտեքստում, այդ պատճառով, որպեսզի մարդը բացահայտի և փոխի իր դիրքորոշումները, մշակի վարքի նոր ձևեր, նա պետք է սովորի իրեն տեսնել այնպիսին, ինչպիսին իր անձն ընկալում են ուրիշները: Ասել է թե, անձն իր զարգացման ու սոցիալականացման ճանապարհին պետք է սովորի տեսնել ինքն իրեն կողքից, այլ մարդու աչքերով, և, որ կարևոր է , ոչ միայն տեսնի, այլ դիտի, այսինքն, կարողանա նկատել սխալներն ու կարողանա շտկել դրանք, ինչպես դիրքորոշումների, այնպես էլ վարքային մակարդակում, ցուցաբերի ռեֆլեքսիայի բարձր կարողություն: Կ. Լևինը իր աշխատակիցների հետ միասին սկիզբ դրեց խմբային զարգացման /դինամիկայի/ ուսումնասիրությանը, որը փոքր խմբերի հոգեբանության կորիզն է: Նա մշակեց խմբերում մասնակցող դիտման մեթոդը /the participant-observation method/, որի շնորհիվ ծագեց մարզման խմբերի՝ T- խմբերի /անգլ. T-groups/ տեսությունն ու պրակտիկան: Դրանք արտացոլում են այն միտքը, որ մարդկանց գերակշիռ մասն ապրում և աշխատում է խմբերում, բայց հաճախ իրենք իրենց հաշիվ չեն տալիս, թե ինչպես են իրենք իրենց դրսևորում այդ խմբերում, ինչպիսինն են իրենց տեսնում ուրիշները, ինչպիսի ռեակցիաներ է առաջացնում իրենց վարքը ուրիշների մոտ: Կ. Լևինը համոզված էր և իր աշխատանքներում ապացուցեց, որ սովորաբար ավելի հեշտ է փոխել խմբում հավաքված անհատներին, քան թե փոխել նրանցից յուրաքանչյուրին առանձին- առանձին:

Ըստ Ն. Վ. Գրիշնայի [3], Կ. Լևինի հետազոտությունների արդյունք հանդիսացած թրենինգային խմբերի բացահայտման տարեթիվը կարելի է համարել 1946 թվականի ամառը՝ կոնեկտիկուտյան թրենինգների անցկացման ժամանակահատվածը: Եվ առ այսօր թրենինգային խմբերը՝ իրենց նպատակներով, գործելաոճերով, աշխատանքների կազմակերպման առանձնահատկություններով և այլ նկարագրություններով զարգացման, վերափոխման բավականին երկար ճանապարհ են անցել՝ ստանալով մեծ տարածում և ընդլայնելով նաև կիրառման սահմանները: Այսօր այդ մեթոդն ակտիվորեն օգտագործվում է տարբեր ոլորտներում՝ հատկապես սոցիալական հոգեբանության հետ սահմանակից բնագավառներում, խմբային հոգեթերապիայում, հոգեշտկողական, հոգեկարգավորման, նույնիսկ օտար լեզուների ինտենսիվ ուսուցման ժամանակ: Բացի այդ, այս մեթոդի արդյունավետությունը ապացուցվել է նաև ընտանեկան հարաբերությունների շտկման, դեռահասների ադապտացիայի հարցում:

Այսպիսով, սկիզբ դրվեց «թրենինգային մշակույթի» զարգացմանը: Նույնիսկ կոմերցիոն կառույցները սկսեցին առավել հաճախ դիմել թրենինգին որպես իրենց աշխատակիցների աշխատանքի բարելավման միջոցի և, անկասկած, կոմերցիոն կառույցների ուշադրության առաջատար դիրքերը զբաղեցնում են կոմունիկատիվ թրենինգները, որոնք ապահովվում են այլ մարդկանց հետ փոխհարաբերությունների, շփման ունակությունների զարգացումը: Կիրառման, թրենինգների տեսակների առանձնահատկությունները պայմանավորում են մեթոդի բնութագրությունների մեջ որոշ տարբերությունների առկայությունը: Ըստ այդմ գոյություն ունեն ՍՀԹ-ի տարբեր սահմանումներ և դրա հիման վրա առանձնացվում են մի շարք գործառույթներ՝ որպես խմբային փոխազդեցություն, որպես մասնակիցների

ինքնազարգացման, ինքնաարտահայտման միջոց, որպես սոցիալական ուսուցման կոմպլեքսային դիդակտիկ ուղղություն, որպես բազմաֆունկցիոնալ մեթոդ, որպես կոմպիտենտայնության բարձրացման միջոց: Մասնավորապես, սոցիալ-հոգեբանական թրենինգը դիտվում է որպես ազդեցության միջոց՝ ուղղված միջանձնային հարաբերություններում գիտելիքների, սոցիալական դիրքորոշումների, կարողությունների զարգացմանը[7]: Սոցիալ-հոգեբանական թրենինգը բնորոշվում է որպես «շփման մեջ կոմպիտենտայնության զարգացման նպատակով խմբային հոգեբանական աշխատանքի ակտիվ մեթոդների վրա ուղղորդված գործնական հոգեբանության ոլորտ»: Այս բնորոշման մեջ սոցիալ- հոգեբանական թրենինգի նպատակը սահմանափակվում է միայն շփման մեջ կոմպիտենտայնության բարձրացմամբ, թեև այն ներկայացվում է ոչ թե լոկ մեթոդ այլ ՝ ոլորտ, ինչը ենթադրում է, որ կոնկրետ նպատակը իրագործելու համար կարող են կիրառվել մի շարք մեթոդներ: Սակայն պետք է հաշվի առնել որ թրենինգի կիրառման սահմաններն առավել ընդարձակ են: Յու. Եմիլյանովը նշում է, որ «թրենինգ» տերմինը պետք է կիրառվի ուսուցման նկատմամբ ընդունակությունների զարգացմանը կամ գործունեության ցանկացած այլ բարդ տեսակին, մասնավորապես, շփմանը տիրապետելուն ուղղված մեթոդների բնորոշման համար [4]: Ա. Պ. Սիտնիկովի բնորոշմամբ. «Թրենինգները հանդիսանում են սինթետիկ անտրոպոտեխնիկաներ, որոնք իրենց մեջ զուգակցում են տարբեր խաղային իրադրությունների մոդելավորման պայմաններում անցկացվող խաղային և ուսումնական գործունեություններ» [9, էջ144]: Ընդ որում, անտրոպոտեխնիկայի տակ նա հասկանում էր ակմեոլոգիական պրակտիկայի այնպիսի տարր, որն ուղղված է մարդուն բնականից տրված ընդունակությունների վերափոխմանը և դրանց հիման վրա մասնագիտական վարպետության մշակութային ֆենոմենի ձևավորմանը: Պետք է նշել, որ «թրենինգ» տերմինի կիրառման սահմանների ընդլայնումը մեծամասամբ պայմանավորված է վարժեցման նպատակների, դրանց առջև դրված խնդիրների և կիրառման ոլորտների ընդլայնմամբ: Եթե սկզբնապես հիմնական խնդիր էր շփման մեջ կոմպիտենտայնության բարձրացումը, ապա այսօր թրենինգների միջոցով լուծվող հարցերի շրջանակը առավել քան ընդլայնվել է՝ անձնային աճ, նոր հոգեբանական տեխնոլոգիաների յուրացում կամ վարքի նոր ձևերի մշակում և յուրացում: Ա. Պ. Սիտնիկովն իր կողմից ստեղծված ակմեոլոգիական թրենինգի ուղղվածությունը բնորոշում է որպես ծրագրային-նպատակային, որի տակ հասկանում էր. «թրենինգի ուղղվածությունը որպես պրոֆեսիոնալ կադրերի սովորեցման և նախապատրաստման համակարգ՝ ուղղված մասնագիտական գործունեության կոնկրետ ձևերի համար բնութագրական մասնագիտական վարպետության ամբողջական ֆենոմենի վերաստեղծմանը» [9, էջ172]: Մի շարք հեղինակներ մատնացույց են անում այն հանգամանքին, որ այսօրվա դրությամբ թրենինգի սահմանները խաչվում են այնպիսի հոգեբանական խմբային աշխատանքների սահմանների հետ, ինչպիսին են հոգեշտկումը, խմբային հոգեթերապիան, ուսուցումը: Անկասկած, թրենինգների բնորոշումները տարբեր են, սակայն ընդհանուր ու անփոփոխ է այն, որ թրենինգը հոգեբանական ազդեցության խմբային մեթոդ է և խումբն է, որ հանդիսանում է թրենինգային աշխատանքի միջուկն ու հոգեբանական ազդեցության միջոցը: Հետևաբար, մեթոդի արդյունավետությունն էլ մեծամասամբ պայմանավորված է խմբի ճիշտ ձևավորումից, դրա նպատակային ուղղվածությունից, խմբի անդամների ճիշտ ընտրությունից, յուրաքանչյուր անդամի վերաբերմունքից դեպի թրենինգային աշխատանքը, նրա սպասումներից, նպատակներից խնդիրներից, խմբում աշխատելու ունակությունից և այլն: Երբեմն թրենինգների խմբերը ձևավորվում են պատահականորեն, ելնելով թրենինգին մասնակցելու ցանկությունից: Սակայն ցանկությունն այլ է, անհրաժեշտությունը՝ այլ: Բացի այդ, միայն մեկ գործոնը, օրինակ՝ ցանկությունը կամ սպասելիքները, դեռևս բավարար չեն որևէ մեկին թրենինգային խմբում ընդգրկելու համար: Նախքան թրենինգի կազմակերպումը պետք է հոգալ, որ թրենինգային խմբի մասնակիցները

- ունենան հոգեբանական շտկման ենթակա նույն խնդիրները
- ունենան տարիքային նույն առանձնահատկությունները
- ունենան մտավոր և հոգեբանական զարգացվածության մոտ աստիճաններ

Միայն այդ դեպքում հնարավոր է ապահովել թրենինգային խմբի նպատակային կազմավորումն ու աշխատանքը: Այն հանգամանքից, թե ինչպիսի թրենինգային խումբ է կազմավորվել, կախված է նաև ողջ խմբի աշխատանքի արդյունավետությունը՝ ընդհանրապես, և յուրաքանչյուր մասնակցի մասնակցության արդյունավետությունը՝ մասնավորապես: Թրենինգային խմբի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող գործոն կարող է հանդիսանալ, եթե թրենինգային խումբը հասնի թիմի մակարդակի և իր վրա կրի թիմային մի շարք գործոնների դրական ազդեցությունը: Իսկ դրան հնարավոր է հասնել, եթե պահպանվեն վերոնշյալ պահանջները: Այդ դեպքում է հնարավոր միայն խումբը զարգացնել որպես թիմ և այն համապատասխանեցնել թիմին ներկայացվող չափորոշիչներին:

Թիմերին ներկայացվող պահանջներն ու բնութագրությունները, հիմնականում, բխում են փոքր խմբերի բնութագրություններից, որոնք ներկայացվում են որպես. «մարդկանց համեմատաբար ոչ մեծաքանակ հանրույթ, իրար միջև գտնվող անմիջական անձնային շփման և փոխգործակցության մեջ» [8, էջ 69], «…խումբ որտեղ հասարակական հարաբերությունները հանդես են գալիս անմիջական անձնային կոնտակտների ձևով» [2, էջ238], «…. խումբ, որի անդամները գտնվում են իրար հետ անձնային շփման մեջ, ինչը պայմանավորում է հուզական հարաբերությունների, յուրատիպ արժեքների և վարքի նորմերի ծագումը» [6, էջ2]: Կարևոր է, որպեսզի թրենինգը հանգեցնի թիմի կազմավորման, քանի որ գործ ունենք թիմային փոխազդեցության հետ: Գ. Մ. Անդրեեվան թիմը դասում է ֆորմալ խմբերի դասին [1, էջ 137]: Համաձայն շվեդական ժամանակակից հետազոտողների տեսակետների, թիմը, անկասկած, ընդհանուր նզրագծեր ունի խմբի հետ, սակայն թիմում առավել մշտական անձնակազմ է, դերերի առավել հստակ բաշխում, առավել հստակ ու ֆորմալ նպատակ: Թիմի անդամները այնքան միահամուռ են, որ կողքից, նույնպես, ընկալվում են որպես թիմակիցներ: Իսկ թիմի անդամները թիմային մասնակցությունը դիտարկում են որպես պարգևատրում: Թիմը ձգտում է ընդհանուր նպատակի իրագործման: Թիմակիցները շրջապատի նկատմամբ գործում են միատեսակ, բոլորը հպարտ են, որ միասին կարող են հասնել ավելիին, քան առանձին- առանձին: Թիմում բավարարվում են անձի մասնակցության, հարգանքի, հաջողության հասնելու պահանջմունքները [5, էջ 226]: Բնականաբար, նման մակարդակի հասած խմբում մասնակիցը հոգեբանորեն առավել պատրաստ է լինում ռեֆլեքսիայի, փոփոխությունների:

Թրենինգային խմբի և թիմի բնորոշումները հիմք են հանդիսանում համեմատական զուգահեռներ անցկացնելու, ինչպես նաև շեշտելու մարդկային հանրույթի այդ երկու ձևերի դրական ու բացասական կողմերը / Աղյուսակ 1/:

Աղյուսակ1

որակային բնորոշում	դրական	բացասական
թրենինգային խումբ	անհատական ուսուցման հնարավորություն, անձնային աճի հնարավորություն, ընդհանուր նպատակի առկայություն, խմբային նորմերի ձևավորում, խմբային աշխատանքի «այժմ և հիմա» սկզբունքի առկայություն, խմբային աշխատանքում գաղտնապահության սկզբունքի առկայություն, խմբային դերերի հստակություն	թրենինգային աշխատանքների մասնակցության անկայունություն, մասնակիցների կամքից անկախ դերերի բաշխում /հնարավոր է նույն դերին հավակնեն մի քանի հոգի/, թրենինգային աշխատանքի ժամկետային սահմանափակումները, թրենինգից հնարավոր կախվածության առաջացումը
թիմ	թիմում առավել բարձր է անձնային հուզական շփումը, թիմում դիտվում է համախմբվածության բարձր	անհատական որակների, մոտեցում-ների հնարավոր ստորադասում, անձնական նպատակների

	աստիճան, թիմում ձևավորվում են յուրատիպ արժեքներ ու նորմեր, թիմում առկա է դերերի առավել հստակ բաշխվածություն և թիմակիցների միջև համատեղելիության բարձր աստիճան, թիմային նպատակի առկայությունը, թիմակիցների գործելակերպի միատեսակությունը, փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտի առկայություն, թիմային համագործակցության բարձր աստիճան, թիմային շարունակական աշխատանք:	ստորադասում, չափից ավելի հարմարվողականության դրսևորում, անձնական զարգացման բաղադրիչի մղումը դեպի հետին պլան, թիմակիցների անձնական փորձառության տարբերությունների հնարավոր դրսևորումները, թիմի մասնակիցների կրեատիվ մտածողության ճնշում, ոչ ստանդարտ իրավիճակներում այլընտրանքային լուծումները կարող են դառնալ թիմային կոնֆլիկտների աղբյուր և թիմի պառակտման պատճառ, թիմում չկա դերերի հատուկ ստանձնում, կարող են առաջանալ լիդերներ և աստղեր, թիմային աշխատանքում հնարավոր է անհատական պատասխանատվության ցրում:

Վերոնշյալ համեմատականներից /աղյուսակ1/ կարելի դիտարկել, որ կան բնորոշումներ, որոնք դրական լինելով թիմի համար, կարող են բացասական որակվել թրենինգային խմբի պարագայում: Օրինակ՝ թրենինգային խմբերում կարևորում ենք անձնային աճի բաղադրիչը, անձնական նպատակների կարևորությունը, իսկ ահա թիմում դրանց առաջ մղումը հակասում է թիմային սկզբունքի գաղափարին: Թրենինգային խմբի յուրաքանչյուր մասնակից նպատակ ունի հասնել դրական փոփոխությունների սեփական ես-ի մակարդակում, իսկ թիմի յուրաքանչյուր մասնակցի համար գերխնդիր է դիտարկվում թիմի հաջողությունը՝ նույնիսկ սեփական ես-ի «զոհողության» գնով: Անկասկած, այս նրբությունները պետք է հաշվի առնվեն, եթե նպատակ է դրված թրենինգային խումբը հասցնել թիմի մակարդակի՝ թիմային որակները թրենինգային աշխատանքի նպատակներին դրականորեն ծառայեցնելու համար: Իսկ թիմը նման արդյունավետ որակներ, անկասկած ունի:

Ինչպես կարելի է դիտարկել, թիմը ենթադրում է խումբ, որը հասել է համախմբվածության բարձրագույն աստիճանի, որը գործում է որպես համակարգ, որպես ընդհանուր հանրույթ: Յուրաքանչյուր խմբում կարևոր է, որպեսզի բավարարվեն յուրաքնչյուր անդամի պահանջմունքները, հակառակ դեպքում խումբը, այդ թվում նաև թրենինգային խումբը կունենա բացասական ազդեցություն անձի վրա, կարող է դիտվել անձի դեգրադացիա, զարգացման աղավաղում, խմբի անդամների միջև կոնֆլիկտների առաջացում:

Թիմում դրական գործառույթների դիտարկումը բերում է այն եզրահանգման, որ թրենինգի ժամանակ արդյունավետ աշխատանք կազմակերպելու և ցանկալի արդյունք ապահովելու համար նպատակահարմար է կատարել ճիշտ և նպատակային թիմակազմավորման, թիմաձևավորման և թիմակայացման աշխատանքներ: Այդ նպատակով էմպիրիկ ուսումնասիրությամբ պարզել ենք, թե թրենինգի ժամանակ ինչպիսի ցուցանիշներ պետք է արձանագրվեն թիմի անդամների միջև հոգեբանական համատեղելիության, համախմբվածության, հոգեկան բավարարվածության, ինքնահիրացման և թիմային աշխատանքների կարողությունների ուղղությամբ:

Թիմի ձևավորման փուլում նախ և առաջ անհրաժեշտ է լուծել թիմակիցների համատեղելիության հարցը: Այս խնդիրը կարող է առաջանալ նաև երկրորդ անգամ, երբ անհրաժեշտություն է լինում թիմի վերակազմավորման, թեև դա թրենինգային խմբերի համար բնութագրական չէ: Կարելի է տարբերակել համատեղելիության տեսակները.



Համատեղելիության յուրաքանչյուր տեսակ ունի իր բովանդակությունը:

- Ֆիզիկական համատեղելիությունը բնորոշվում է ուժային չափորոշիչներով, դիմացկունությամբ, ֆիզիկական կարողություններով:
- Հոգեֆիզիոլոգիական համատեղելիությունը որոշվում է անալիզատորային համակարգների այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են տեսողականը, հոտառականը, լսողականը
- Սոցիալ-հոգեբանականը՝ անձնային որակներով, ինչպիսիք են բնավորությունը, խառնվածքը, ճաշակը, նախասիրությունները և այլն
- Սոցիալ-գաղափարականը՝ սոցիալական արժեքներ, դիրքորոշումներ և այլն [11]:

Անկասկած, տարբեր իրադրություններում տարբեր են համատեղելիությանը ներկայացվող պահանջները, բայց փաստ է այն, որ դրանք պետք է մշտապես իրագործվեն և լինեն առանցքային:

Թրենինգների ընթացքում թիմակազմավորման, թիմաձևավորման և թիմակայացման աշխատանքներում կարևորելով խմբային համախմբվածությունը, սույն հոդվածում ներկայացնում ենք մասնավորապես, համախմբվածության ուղղությամբ կատարված ուսումնասիրությունը, որի ընթացքում պարզել ենք թե թրենինգի ժամանակ ինչպիսի ցուցանիշներ պետք է արձանագրվեն այս ուղղությամբ:

Հետազոտության օբյեկտ է հանդիսանում թրենինգային խմբի խմբային համախմբվածությունը:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել թրենինգային աշխատանքների սկզբնական և վերջնական փուլերում թրենինգի մասնակիցների կողմից իրենց խմբի համախմբվածության վերաբերյալ տրվող գնահատականները և որոշել ընդհանուր համախմբածության մակարդակը:

Ուսումնասիրության խնդիրներն են.

1. բացահայտել խմբի մասնակիցների պատկերացումները խմբային համախմբվածության վերաբերյալ,
2. պարզել խմբային համախմբվածության մակարդակները թրենինգային աշխատանքների սկզբնական և վերջնական փուլերում:

Տվյալ ուսումնասիրության սահմաններում առաջադրվել են հետևյալ **վարկածները**.

1. Հնարավոր է, որ թրենինգային խմբի աշխատանքների առաջին փուլում խմբային համախմբվածության մակարդակը ցածր լինի:
2. Հնարավոր է, որ թրենինգային խմբի ճիշտ զարգացմանը համընթաց աճի նաև խմբային համախմբվածությունը:

Տվյալ վարկածները ստուգման համար օգտագործվել են հետևյալ մեթոդներն ու մեթոդիկաները.

1. Տեսական վերլուծության մեթոդներ /վերլուծություն, սինթեզ, համադրություն, հիպոթեզի առաջադրում/

2. Հոգեբանական դիագնոստիկայի մեթոդ
- Սիշորի «Խմբային համախմբվածության ինդեքսի որոշման» մեթոդիկա:
- Մաթեմատիկա-սինթեթիկական մշակման մեթոդ:

Ուսումնասիրությունը անց է կացվել ավագ դպրոցականների երկու խմբում: 1-ին խումբը նոր կազմավորված էր, իսկ 2-րդ խմբում նախապես անց էր կացվել թրենինգային աշխատանք, որի ծրագիրը կազմվել էր թիմակազմավորման և թիմաձևավորման նպատակներից և փուլերից ելնելով: Այս կերպ իրագործվել էր թրենինգի թիմակազմավորող և թիմաձևավորող գործառույթը:

Հասկացության օպերացիոնալիզացիա

Խմբային համախմբվածությունը խմբի սուբյեկտիվ բնութագրությունն է, որն իրենից ներկայացնում է խմբի հոգեբանական միասնության ընկալումը ներսից /խմբի անդամների կողմից/ կամ դրսից /ոչ խմբի մասնակիցների կողմից/ մեկ կամ մի քանի հիմքերով[10]:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծություն:

Խմբային համախմբվածության ինդեքսի որոշման Սիշորիի մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացանք հետևյալ արդյունքները, որոնք ներկայացված են աղյուսակի տեսքով:

Սիշորի «Խմբային համախմբվածության ինդեքսի որոշման» մեթոդիկայի արդյունքներ
/աղյուսակ 2/

Աղյուսակ 2

	Խմբային համախմբվածության մակարդակներ				
Խումբ	Բարձր	Միջինից բարձր	Միջին	Միջինից ցածր	Ցածր
1-ին խումբ /10 հոգի/	0	4	5	1	0
2-րդ խումբ /10 հոգի/	4	3	3	0	0

Ինչպես կարելի է տեսնել, 1-ին խմբում չի արձանագրվում համախմբվածության բարձր աստիճան: 2-րդ խմբում արդեն արձանագրվում է համախմբվածության բարձր աստիճան: Ընդ որում միջինից ցածր արդյունք չի արձանագրվում:

Ստացված արդյունքները թույլ են տալիս եզրահանգել, որ 1-ին խմբում խմբային համախմբվածությունն առավել ցածր է, քան 2-րդ խմբում, որտեղ անց է կացվել համապատասխան թրենինգային աշխատանք և առկա է համատեղ գործունեության փորձ: Այդ հանգամանքը նշանակում է, որ խմբային համախմբվածությունը, ինչը թիմի կարևոր բնորոշումներից է, աճում է թիմի անդամների համատեղ գործունեության ընթացքում և կարող է դառնալ թիմակազմավորող թրենինգի արդյունքը չափելու կենտրոնական որակներից:

Խումբը, բնականաբար, միանգամից թիմի վերափոխվել չի կարող: Անհրաժեշտ է, թրենինգային աշխատանքների սկզբնական փուլերում թրենինգի մասնակիցների համատեղ գործունեությունն այնպես կազմակերպել, որպեսզի այն տանի դեպի թիմակազմավորումը: Հետևաբար, թիմակազմավորումը պետք է հանդիսանա ցանկացած թրենինգային աշխատանքի սկզբնական փուլերից, ինչպես նաև նպատակներից մեկը: Ընդ որում, պետք է հստակ տարբերակվի խմբակազմավորում և թիմակազմավորում հասկացությունները: Իսկ դրա համար անհրաժեշտ է բացահայտել այն հոգեբանական գործոնները, որոնք նպաստում են թիմաձևավորմանը և առավել արդյունավետ են դարձնում թրենինգային աշխատանքը:

Այսպիսով, հաստատված ենք համարում էմպիրիկ ուսումնասիրության սկզբում առաջադրված վարկածները:

Թրենինգային աշխատանքը նախ և առաջ ենթադրում է խմբի կազմավորում: Սակայն այդ գործընթացը պատահական բնույթ չպետք է կրի: Թրենինգային խումբը պետք է զարգանա որպես թիմ և այդ պարագայում համագործակցության բարձր աստիճանը կնպաստի առավել արդյունավետորեն իրագործել թրենինգի կենտրոնական նպատակը՝ խմբի միջոցով նպաստել

յուրաքանչյուր մասնակցի զարգացմանն ու կատարելագործմանը որպես վերջնաարդյունք, քանի որ անհատի վրա առավել ուժեղ և նպաստավոր ազդեցություն կարող են ունենալ միայն ռեֆերենտային խմբերը, ինչպիսին և հանդիսանում է թիմը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Андреева Г. М. Социальная психология. — М.: Аспект-Пресс, 1996
2. Андреева Г. М. Социальная психология.-М.:Изд-во МГУ,1980
3. Гришна Н. В. . Курт Левин: жизнь и судьба. В кн.: Курт Левин. Разрешение социальных конфликтов, СПб.: Речь. 2000
4. Емельянов Ю. Н. Активное социально-психологическое обучение. Л.: Изд. ЛГУ, 1985.
5. Карлоф Б., Седерберг *С.* Вызов лидеров. — М.: Дело, 1996.
6. Краткий словаря по соцологии/ Под общей ред. Д. М. Гришвиани, Н. И. Лапина; сост. Э. М. Коржева, Н. Ф. Наумова.-М.: Политиздат, 1988.
7. Петровская Л. А. Теоретические и методологические проблемы социально-психологического тренинга.-М.: Изд-во МГУ, 1982
8. Психология: словарь/ По ред. А.В. Петровского, М. Г. Ярошевского- 2-е изд.-М.: Политиздат, 1990.
9. Ситников А. П. Акмеологический тренинг: Теория. Методика. Психологии. М.: Технологическая школа бизнеса, 1996
10. Энциклопедический словарь Под общ. ред. А.А. Бодалева. - М. Издательство ,Когито-Центр, 2011 г.
11. http://www.bibliotekar.ru/upravlenie-personalom-2/37.htm/

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմինե Ալոյան, ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ասիստենտ

e-mail: armine.aloyan.82@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 37.018.1:316.642.2 Հոգեբանություն

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԴԵՎԻԱՆՏ ՎԱՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ

Եվգենյա ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր- *մեդիադաշտ, ագրեսիա, բռնություն, դևիանտ վարք, անոմիա, դեռահասների իդենտիֆիկացիա, բացասական իդենտիֆիկացիա, ինքնություն, սոցիալական նորմ:*

Ключевые слова *медиаполе, агрессия, насилие, девиантное поведение, аномиа, идентификация подростков, негативная идентификация, самость, социальная норма.*

Key words: *media field, aggression, force, deviant behaviour, anomie, identification of teenagers, negative identification, identification, social norm.*

Е. Саркисян

ОТРИЦАТЕЛЬНОЕ ВОЗДЕЙСТВИЕ СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ КАК ПРЕДУСЛОВИЕ ФОРМИРОВАНИЯ ДЕВИАНТНОГО ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ

В данной статье рассматривается телевидение как главный фактор (предпосылка) отклонения в процессе формирования поведения подростка. Рассматривая психологическое отождествление как психологический осевой (центральный) механизм в формировании убеждений и поведения подростка, считаем важным источником роль теле- и медиаполя,что имеет непосредственную связь с приспособлением (адаптацией) подростков и формированием правильных ценностей. Было предложенное в социальных сетях и медиаполе уделять большое внимание правильным социальным нормам и публикациям, которые связанны с национальной самостью, что и будет способствовать формированию правильного поведения подростков.

Ye. Sargsyan

THE NEGATIVE EFFECT OF MASS MEDIA AS PRECONDITION OF THE FORMATION OF TEENAGE DEVIANT BEHAVIOR

In this article television is presented as an important source for the formation of teenage inordinate behaviour. Considering the psychological identification as main psychological mechanism of teenage principle and behaviour formation, we underlined the role of the source of its declination such as television and media which is directly connected with the formation of teenage exact system of values and adaptation. Here we offered to give more place to the correct social norms and publications concerning national identifications in social websites and media in general which will support the formation of teenage proper behaviour.

Սույն հոդվածում հեռուստատեսությունը դիտարկվել է որպես դեռահասների շեղվող վարքի ձևավորման կարևոր նախապայման: Հոգեբանական նույնացումը դիտելով դեռահասի համոզմունքների ու վարքի ձևավորման առանցքային հոգեբանական մեխանիզմ՝ կարևորել ենք նրա սնուցման աղբյուրի՝ հեռուստա և մեդիադաշտի դերը, ինչը ուղիղ կապ ունի դեռահասների հարմարվածության և ճիշտ արժեքային համակարգի ձևավորման հետ: Առաջարկվել է սոցիալական կայքերում և առհասարակ մեդիադաշտում մեծ տեղ տալ սոցիալական ճիշտ նորմերի քարոզչությունը ու ազգային ինքնությանն առնչվող հրապարակումներին, որոնք կնպաստի դեռահասների ճիշտ վարքագծի ձևավորմանը:

Վերջերս աճել է այն դեռահասների թիվը, որոնց համար գերագույն նպատակ է կյանքի ցանկացած գնով և ցանկացած միջոցներով նյութական հաջողության հասնելը: Աշխատանքն ու ուսումնական գործընթացը այլևս կորցրել են իրենց արժեքը և սկսել են կրել պրագմատիկ բնույթ. այն է՝ ստանալ շատ բարիք, սակայն քիչ աշխատել ու քիչ սովորել: Դեռահասաների այսպիսի դիրքորոշումը գնալով ավելի ակնառու է դառնում, ինչը հանգեցնում է դևիանտ վարքի:

Չնայած մասնագետները հակված են դեռահասի սոցիալ-հոգեբանական փոփոխությունների ընդգծված երանգը վերագրելու նրա սեռային զարգացման ֆոնին, այնուհանդերձ նրա հոգեկան անհարմարության վիճակները, որոնք դրսևորվում են բացասական հուզական հակազդումների ձևով, պետք է փնտրել տարիքային առանձնահատկությունների մեջ: «Դեռահասների

ապահարմարվողականության հիմնական գործոններից են նրանց տարիքային առանձնահատկությունները: Կրտսեր դեռահասների պարագայում դրանք պայմանավորված են նրանց համար կարևոր մարդկանց հետ շփման կորստով՝ տարրական դասարանների ուսուցիչներ, հասակակիցներ և այլն: Այս անհանգստությունները կարող են ավելի ուժեղանալ, երբ բացակայում է ծնողների փոխհասկացվածությունը:

Ապահարմարվողականության հավանականությունը մեծանում է, երբ դեռահասը կորուստները փոխհատուցում է «հակասոցիալական (ասոցիալ) ոլորտի օգնությամբ»[1]:

Դեռահասների դժվար, իսկ հաճախ նաև դևիանտ վարքագիծը միջանձնային շփման խնդիր է դառնում ծնողների, մանկավարժների և իրենց իսկ հասակակիցների համար: Այստեղ շատ կարևոր է հոգեբանական նույնացման հստակեցման հարցը, որը շատ կարևոր է հենց այս տարիքում: Իսկ որո՞նք են այսօր դեռահասի հոգեբանական նույնացման օբյեկտները, որոնցից կարող է սնվել նրա ինքնությունը և որից ածանցվում է նրա ճիշտ հոգեբանական նույնացումը:

Հեռուստատեսությունը և առհասարակ մեդիադաշտն այսօր ավելի շատ բացասական հոգեբանական ինքնանույնացման դաշտ են հատկապես դեռահասների համար, որոնց մոտ առանձնապես ակնառու է ինքնության ու սեփական պատկանելության հաստատման ներքին ծարավը: Այսօր ակտիվորեն քարոզվող սեռական, կրոնական և հոգեբանական շեղումները սոցիալական ցանցերում ավելի հաճախ վտանգավոր չափանիշ դիտվող և հատկապես բռնություն ենթադրող տեսանյութերն ու գովազդող համակարգչային խաղերը, ցավոք, դարձել են դեռահասի դևիանտ վարքի ձևավորման նախապայման: Իսկ որոշ սուբկուլտուրաներ /ենթամշակույթ/ ուղղակիորեն քարոզում են կյանքի այնպիսի ոճ, որը չի համապատասխանում սոցիումի սահմանած նորմերին:

Հեռուստատեսության և ռադիոյի ի հայտ գալու հետ աշխարհում շատ բան է փոխվել: Շատ բան է փոխվել հատկապես համացանցի և սոցիալական ցանցերի ի հայտ գալով: Լրատվությունը, հատկապես համացանցային տեղեկատվական հոսքերն այսօր փոքրամասնության առավելությունից վերածվել են հասարակության լայն շերտերի վրա ներազդելու կարևոր միջոցի: Տեսաբանների կարծիքով համացանցային տեղեկատվությունն ու հեռուստատեսությունը ահռելի ազդեցություն են ունենում հասարակության ներկայիս վիճակի, արդարության ու բարոյականության մակարդակի մասին պատկերացումների, բարոյականության ու արդարության ձևավորման վրա և այլն: Այսինքն, հենց հեռուստատեսությամբ առաջին հերթին ունենք մեր գիտակցությունը, վարքը, ոճը ձևավորող լրատվամիջոց, ինչը նաև վարքային կանխատեսելիության մոդել է:

«Թերթեր, ամսագրեր ու գրքեր դեռահաս իրավախախտները գործնականում չեն ընթերցում, չնայած դրանց ազդեցությունը մեծ չէ, բայց հեռուստատեսություն և տեսանյութեր դեռահասները նայում են կանոնավոր կերպով»[2],- գրում ուսումնասիրողներից մեկը: Յուրաքանչյուր օր հեռուստացույցն աշխատում է օրը յոթ ժամ, իսկ երեկոյան ծրագրերը բովանդակում են երկուսից երեք բռնության ծրագրեր (ֆիզիկական հարկադրման գործողություն, սպանություն, բռնաբարություն և այլն): Դպրոցն ավարտելու պահին դեռահասն արդեն հասցրած է լինում դիտել մոտավորապես 8000 ֆիլմ սպանության մասին, 100 000-ը այլ կարգի բռնությունների մասին, ինչի արդյունքում նրա մոտ ուժեղանում են ագրեսիվ հակումները, բարձրանում է բռնության զգայության շեմը, սկսում են ձևավորվել ոչ ադեկվատ հայացքներ: Թե ինչ ազդեցություն ունի հեռուստատեսությունը հանցագործությունների ընդհանուր աճի վրա, ուսումնասիրողները բացահայտել են կոռելացիոն և էքսպերիմենտալ մեթոդների միջոցով (Ու. Բելսոն, Ռ. Խյուսման, Ա. Բանդուրա, Ռ. Դժին, Յու Կուրդինովա, Վ. Մատվեեվա, Ա. Գ. Դանիլովա և ուրիշներ) և եկել այն եզրահանգման, որ ինչքան շատ են հեռուստահաղորդումների բռնության տեսարանները, այնքան ավելի վառ է արտահայտված

[1] Մաթևոսյան Է., Կրթական համակարգի բարեփոխումները և դեռահասի սոցիալ-հոգեբանական հարմարվողականությունը, 2009-2_218pdf-Adobe Reader

[2] http/:www.mywrrd.ru Психологи я под ред. А. А. Крылова, М., Проспект, 2000. С., 429

փոքրիկ կամ դեռահաս հեռուստադիտողի ագրեսիան: Հեռուստատեսությունը շարունակում է մոդելավորել ոչ իրական աշխարհը, ինչը ավելի հաճախ հանգեցնում է անոմիայի՝ արժեքային կողմնորոշումների կորստի: Սա, այսպես կոչված կոնֆլիկտային արժեքների տեսությունն է, որի ազդեցությունը դեռահասին իրական շփոթմունքի մեջ է դնում: Այսպես, ֆիլմը կամ փաստագրական տեսանյութը քարոզում է բարձր բարոյական արժեքներ, սակայն իրական հաջողության է հասնում այն մարդը, ով շրջանցում է ամենատարրական սոցիալական նորմը: Չկան իրական պատժվողներ, և պատիժն այլևս չի ընկալվում վատ կամ հանցավոր արարքի վերջնական արդյունք: Մինչդեռ մարդու վարքը կարգավորվում է նրա ներքին համոզմունքներով ու հասարակության առաջադրած նորմերով ու կանոններով: Այսպես, մեծահասակ մարդը սիրալիր ողջունում է հարևանին, տրանսպորտում չի ծխում, որովհետև նրա մոտ արդեն իսկ մշակված են վարքի ու համոզմուքների որոշակի կանոններ: Իսկ դեռահասը խախտում է այս կամ այն սոցիալական նորմը, ոևովհետև այն չի յուրացրել ու ներքնայնացրել: Պետք է նկատել, սակայն, որ դեռահասները հաճախ գիտակցաբար և նպատակաուղղված ձևով են խախտում վարքի հասարակական կանոնները: Օրինակ, ծխելու կամ դասաժամերը լքելու քայլերը, որոնց մասին նա պարզ պատկերացում ունի, սակայն կատարում է առանց երկար վարանելու: Խոսքն այստեղ արդեն իսկ դևիանտ վարքի մասին է: Մինչդեռ բավական է դաստիարակող մարմինները ունենան համակարգված ու նպատակասլաց գործունեություն, դեռահասների մոտ ոչ միայն կարող է կանխվել դևիացիայի գործընթացը, այլ և պարզապես չձևավորվել: «Որոշ իրադրություններում դեռահասին պետք է երկարատև արհեստավարժ ուղղում և հոգեթերապիա»[1]: Սրանք այն դեպքերն են, որոնց վերաբերում են ալկահոլամոլության ու ծխախոտից կամ թմրանյութերից կախվածության ձևավորման վտանգը, սուիցիդալ փորձը, դեռահասի՝ հասարակության նորմերին հարմարվելու անընդունակությունը և այլն:

Դևիանտ վարքի պատճառը պետք է փնտրել վատ ազդեցությունների մեջ, որում էական դերակատարություն կարող են ունենալ դեռահասին շրջապատող հեղինակությունները, որոնց հետ շփումը կարող է տեղի ունենալ սոցիալական առողջ կապերի զարգացման և հոգեբանական նույնացման ճիշտ միջավայրի ձևավորման շնորհիվ: Այստեղ մեծ նշանակություն ունի նաև դեռահասի ռեֆերենտային խումբը, որի անդամները կարող են ազդել դեռահասների գործունեության վրա:

Կանադացի հոգեբան Ջեյմս Մարշան 1966 թվականին առանձնացրել է նույնականացման զարգացման էտապներ՝ չափելով երիտասարդների /պատանիների/ մասնագիտական, կրոնական և քաղաքական ինքնորոշման աստիճանը:

1. Անորոշ նույնականացում, որը բնորոշվում է նրանով, որ անհատը դեռևս չունի հստակ համոզմունք, մասնագիտություն չի ընտրել և չի առնչվել նույնականացման ճգնաժամին:
2. Վաղաժամ իդենտիֆիկացիա- Սա այն է, երբ անհատն ընդգրկվել է համապատասխան հարաբերությունների համակարգ, բայց դա արել է ոչ թե ինքնուրույն՝ ապրած ճգնաժամի ու փորձությունների արդյունքում, այլ ուրիշ մարդկանց կարծիքների հիման վրա և նրանց օրինակին կամ հեղինակությանը հետևելով:
3. «Մարատորիայի» փուլը բնորոշվում է նրանով, որ անհատը, գտնվելով ինքնորոշման նորմատիվ ճգնաժամի գործընթացում,՝ զարգացման բազմաթիվ տարբերակներից ընտրում է այն, որը համարում է իրենը:
4. Հասուն նույնականացում- Ճգնաժամն ավարտված է, և անհատն ինքնաորոնման գործընթացից անցում է կատարել դեպի գործնական ինքնահիրականացում[2]:

Եթե դեռահասը չի կարողանում լուծել նույնականացման խնդիրը, ապա նրա մեջ երևան է գալիս ոչ ադեկվատ նույնականություն, որն արտացոլում է գտնում այնպիսի որակներում, ինչպիսիք են հոգեբանական մոտիկությունից հեռանալը, գոյություն ունեցող միջանձնային

[1] https//www.video-psiholog.ru./deti i podrostki/problemy-v povedenii/ deviantnoe povedenie podrostkov
[2] Возрастная психология: Детство, отрочество, юность: Хрестоматия: /сост. и науч. ред. В. С. Мухина, А. А. Хвостов.- 5-е изд. Испр.- М.: Изд. Центр <<Академия>>, 2005, с 529-530.

հարաբերությունների ամուր կապերի քանդումը, կյանքի պլաններ կազմելու անընդունակությունը, ստեղծագործական և արդյունավետ մտածողության խախտումը, հոգեբանական ուժերի քայքայումը, նեգատիվ նույնականության ձևավորումը: Շեղվող վարքագիծ ունեցող դեռահասները սկսում են հեռանալ կամ խուսափել ակտիվ հասարակական կյանքից, խուսափում են իրենց պարտականություններից ու պատասխանատվությունից, համացանցային կախվածության մեջ են ընկնում, ծխում և ալկոհոլ են օգտագործում, փախչում են դասերից կամ տնից՝ փորձելով այդ կերպ ինքնահաստատվել: Բանականության ցածր մակարդակը կամ ներընտանեկան կոնֆլիկտները չէ, որ կարող են դևիանտ վարքի միջուկ դառնալ: Շատ կարևոր է ուսուցման նկատմամբ դրական դիրքորոշման ձևավորման անհրաժեշտությունը և վաղ հակասոցիալական վարքի ձևերի շտկումը:

Հարց է առաջանում, որքանո՞վ ենք մենք կարողանում նպաստել դեռահասի հասուն ու ճիշտ նույնականացմանը և ինչպես կարող ենք կանխել մեդիա և հեռուստատեսային բացասական ներգործությունը, ինչը նպաստավոր է դևիանտ վարքի առաջացման համար:

Այսօր, հատկապես քառօրյա պատերազմից հետո, կարելի է անվիճելիորեն պնդել, որ Արցախը դադարել է փակ տեղեկատվական հասարակություն հանդիսանալուց, չնայած անժխտելի է այն իրողությունը, համաձայն որի արցախյան լրատվադաշտը կարիք ունի մշակութային-տեղեկատվական նոր ռազմավարության մշակման, որը կօգնի ոչ միայն հիմնախնդրին առնչվող ճիշտ ռազմավարության մշակմանը, այլև կնպաստի երիտասարդ, հատկապես դեռահաս ընթերցողի ու հեռուստադիտողի արժեհամակարգի ձևավորմանը:

Անհրաժեշտ է համացանցում, մասնավորապես դպրոցական կայքէջերում, օրինակ www.dasaran.am, ուժեղացնել ազգային (հայկական)-պետական արժեքների քարոզչությունը, հայրենասիրական և ազգային մշակութային դիմագծի պահպանման մասին նյութերի մշտական ու բարձրակարգ մատուցումը դիտել որպես տեղեկատվական առաջնահերթություն:

Արցախյան մեդիադաշտում այսօր այս կամ այն չափով արտացոլված է մշակութային ինքնությունը, ինչը կարելի է բացատրել ինքնության ժամանակակից հետազոտողներից Ի. Գ. Մալիգինայի տեսակետով[1]. այս երևույթի ծագումնաբանությունը բացատրվում է ինքնության իմաստավորման և կենսագործունեության այն չորս հիմնական ենթատեքստերի շրջանակներում, ինչպիսիք են ինքնության՝ որպես կեցության, գիտակցության իմացական–հոգեբանական չափման, սիմվոլիկ փոխազդեցության գործընթացում ձևավորվող սոցիալական չափումների, ես- հայեցակարգի դիտարկումը:

Մեդիադաշտում ինքնության պահանջմունքի ու պատմական հիշողության կենդանացումը նշանակությունը կնպաստեն դեռահասների ազգային ինքնագիտակցության ձևավորմանն ու ամրապնդմանը: Բնավ պատահական չէ, որ ինքնությանն առնչվող հրապարակումների ծանրակշիռ մասը վերաբերում է արցախյան ազգագրությանն ու բանահյուսությանը, պատմական հուշարձաններին ու մշակութային այն արժեքներին, որոնք նպաստում են ընթերցողի հոգեբանական ճիշտ հարմարվածությանը, ազգային ճիշտ արժեհամակարգի ձևավորմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Возрастная психология: Детство, отрочество, юность: Хрестоматия: /сост. и науч. ред. В. С. Мухина, А. А. Хвостов.- 5-е изд. Испр.- М.: Изд. Центр <<Академия>>, 2005, с. 529-530.
2. Змановская Е. В., Девиантология: (Психология отклоняющегося поведения), Учебное пособие для студ. Высш. Учебной заведении. М., Издательский центр, “Академия”, 2004.
3. Кулагина И.Ю., Колюцкий В.Н., Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001. - 464 с.

[1] **Малыгина И. В.,** Этнокультурная идентичность: Онтология, морфология, динамика:Автореферат диссертации д-ра философ. наук,Москва, 2005, стр. 41.

4. Майсан Н. В., Матрица цоциальных девиации: классификации типов и видов девиантного поведения, 2010- N4, с. 78-86.
5. Малыгина И. В., Этнокультурная идентичность:Онтология, морфология, динамика:Автореферат диссертации д-ра философ. наук,Москва, 2005, 305 стр.
6. Мухина В. С., Личность: Мифы и реальность. Альтернативный взгляд. Системный подход. Екатеринбург. ИнтелФлай, 2007, 382 с.
7. Яковенко И.Г. Базовые идентичности и социокультурные основания их трансформации: факторы, тренды, сценарии // Мир Психологии. – 2004. – № 3 (38). – С. 28–37.
8. Яковец Ю. В., Глобализация и взаимодействие цивилизаций / Ю.В. Яковец. – 2-е изд. – М.: Экономика, 2001. – 346 с.
9. https//www.video-psiholog.ru./deti_ i_ podrostki/problemy_v. povedenii/ deviantnoe_ povedenie_ podrostkov.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Եվգենյա Սարգսյան, Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար
e-mail:

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 316.6 (479.243) Սոցիալական հոգեբանություն

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՓՈՐՁ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Ռոզալյա ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *մշակութային արժեքներ, կրեատիվություն,ինքնազարգացում, նվաճումներ, սեփական հեղինակություն, հոգևոր բավարարվածություն, սոցիալական հաղորդակցում*

Ключевые слова. *культурные ценности, креативность, самореализация, достижения, собственный авторитет, духовное удовлетворение, социальное общение*

Keywords: *cultural values, creativity, self-fulfillment, achievement, his own authority, spiritual satisfaction, social interaction*

Р. Арутюнян

ОПЫТ ИЗУЧЕНИЯ ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ЦЕННОСТЕЙ НА ПРИМЕРЕ СТУДЕНТОВ АРЦАХСКОГО ГОСУДАРСКОГО УНИВЕРСИТЕТА

Культурные ценности опосредованы традициями, нормами, духовными шифрами и стилистикой жизни. В данной статье отображены результаты экспериментальной работы, направленной на исследование процесса поиска, формирования и развития ценностей.

Базис ценностей молодежи, включенной в экспериментальную группу, включает национальный характер, духовные традиции, социальный стиль жизни, что уникальным образом воздействует на условия самореализации и формирование системы ценностей.

R. Harutyunyan

THE EXPERIENCE OF STUDYING THE PROCESS OF FORMATION AND DEVELOPMENT OF VALUES ON AN EXAMPLE OF STUDENTS OF ARTSAKH STATE UNIVERSITY

Cultural values are mediated by traditions, norms, spiritual ciphers and life stylistics. This article reflects the results of experimental work aimed at the study of the process of the values search, formation and development.

Value basis of young people comprised in the experimental group includes national character, spiritual traditions, social way of life which uniquely affects the conditions of self-realization and the formation of values.

Մշակութային արժեքները միջնորդավորում են ավանդույթները, նորմերը, հոգևոր ծածկագրերը և կեցության ոճաբանությունը: Սույն հոդվածում արտացոլված է արժեքների որոնման, ձևավորման ու զարգացման գործընթացի ուսումնասիրմանն ուղղված փորձարարական աշխատանքի արդյունքները:

Փորձարարական խմբի մեջ ընդգրկված երիտասարդության մոտ արժեքներն ունեն այնպիսի հենարաններ, ինչպիսիք են ազգային բնավորությունը, հոգևոր ավանդույթը, սոցիալական կենսակերպը, որոնք յուրատիպ ձևով անդրադառնում են նրանց ինքնաիրացման պայմանների ու արժեքային համակարգի ձևավորման վրա:

Անհատական չափանիշների ու արժեքների ամրապնդումը, շրջապատող աշխարհի նկատմամբ որոշակի հարաբերությունների ձևավորումը տանում է ինչպես սեփական վարքագծի, այնպես էլ այլ մարդկանց վարքային դրսևորումների նկատմամբ ներքին գնահատման չափանիշների զարգացմանը:

Ինքնիրականացումը կարևոր դեր է խաղում մարդու կյանքի ողջ ճանապարհին և ըստ էության որոշում այն: Ինքնիրականացման նկատմամբ նախադրյալները դրված են մարդու էության մեջ և գոյություն ունեն որպես տվյալներ, որոնք մարդու զարգացման, նրա անձնային գծերի ձևավորման հետ դառնում են ինքնիրականացման նկատմամբ ընդունակության հիմք: Անձի ինքնաիրացման պայմանների ուսումնասիրությունը հնարավորություն է ստեղծում բացահայտելու տվյալ անձի՝ որպես յուրահատուկ հոգեբանական ամբողջության հոգեկերտվածքի յուրահատկությունները: Ինքնաիրացման պայմանների ուսումնասիրումը համարվում է բարդ հետազոտական խնդիր, քանի որ կապված է բազմաթիվ խորքային հարցադրումների հետ, որոնց համատեքստում միայն կարելի է բացահայտել դրանց էությունն ու առանձնահատուկ ասպեկտը: Որքանո՞վ է հնարավոր անձի լիարժեք ինքնաիրականացումը, ինչպե՞ս են հարաբերվում անձի պահանջմունքների համակարգը, որդեգրած արժեքներն ու սոցիումի թելադրած պայմանները, ինչպե՞ս են դրանք դրսևորվում անձի ինքնաիրականացման ժամանակ:

Այսօր բնագավառի մասնագետների առջև կանգնած են մի շարք հարցեր ևս. անձի ինքնագիտակցության և ինքնավերաբերմունքի համակարգում ինչպե՞ս է փոխվում պահանջմունքների արժեքների բովանդակությունը քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային ու աշխարհաքաղաքական զարգացումների փոփոխվող պայմաններում:

Անցումային ժամանակաշրջանին յուրահատուկ տնտեսական, հասարակական, բարոյահոգեբանական արժեքների վերափոխումների օրինաչափ երևույթները ստեղծում են միանգամայն նոր իրավիճակ, որն իրեն հատուկ զարգացման օրինաչափություններով հակադարձ համեմատական է արժեքային համակարգի ու անձի լիարժեք ինքնաիրականացման ձևավորմանը:

Սույն հոդվածի շրջանակներում կատարված հետազոտությունը նպատակաուղղված է եղել բացահայտելու, թե ինչպե՞ս է տեղի ունենում արժեքների որոնման, ձևավորման ու զարգացման գործընթացը: Ուսումնասիրել Արցախի մի շարք ուսանողների ինքնաիրացման պայմաններն ու արժեքների համակարգի ձևավորումը աշխարհաքաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային ներկա ազդեցությունների պայմաններում:

Փորձարկվողների ընդհանուր թիվը կազմել է 100 ուսանող: Կատարված փորձարկումների արդյունքները մշակել ենք Վ. Ն. Սոպովի և Լ. Ծ. Կարպուշինի կյանքի արժեքներ մորֆոլոգիական թեստի միջոցով:

Մենք դիտարկել ենք **ինքնազարգացումը, հոգևոր բավարարվածությունը, կրեատիվությունը, ակտիվ սոցիալական հաղորդակցումը, սեփական հեղինակությունը, սեփական անհատականության պահպանումը,** որը ենթադրում է անհատական առանձնահատկությունների, ընդունակությունների, անձնային բնութագրիչների պարբերական զարգացում:

Հոգևոր բավարարվածությունը ենթադրում է բարոյա-հոգեբանական սկզբունքների ղեկավարում, նյութական պահանջմունքների հաղթահարում հոգևոր պահանջմունքների միջոցով: **Կրեատիվությունը** ենթադրում է ստեղծագործական ընդունակությունների ակտուալացում և իրականացում, շրջապատող իրականությունը փոխելու ձգտում: **Սեփական հեղինակությունը** ևս դիտարկվել է կենսական արժեքների համակարգում, ինչը ենթադրում է հասարակության մեջ սեփական ճանաչմանն ուղղված յուրատեսակ նվաճման գործընթաց՝ որոշակի սոցիալական պահանջների ուսումնասիրման ճանապարհով: **Բարձր նյութական վիճակը** իր կայուն տեղն ունի անձի կենսական արժեքների համակարգում, որն հանդես է գալիս որպես կեցության ու գոյության գլխավոր իմաստ: **Անձի նվաճումները** հստակեցնում են մարդու կենսական խնդիրներն ու նպատակները՝ որպես կյանքի կարևորագույն գործոններ: **Սեփական անհատականության պահպանումը** ևս դիտվում է որպես կենսական կարևորագույն արժեք, ինչը նշանակում է ունենալ սեփական մտքերի, գաղափարների, հայացքների, համոզմունքների ու հետաքրքրությունների, սեփական անկախության ու անկրկնելիության կայուն համակարգ:

Նշենք, որ մեր փորձարարական աշխատանքում կողմնորոշիչ նորմի մեջ կյանքի արժեքների գնահատման նշաձողում տարբեր արժեքներ գնահատվել ե տարբեր միավորներով:

Ինքնազարգացումը որպես արժեք դիտարկել ենք Ստեփանակերտի երիտասարդության օրինակով: Ըստ որում փորձարկվող ընտրակազմը ունեցել է հետևյալ նկարագիրը՝ բնագիտական և հումանիտար կրթությամբ ուսանողներ՝ տղա և աղջիկ համակազմով: Նկար 1-ում հստակ արտացոլվել են ինքնազարգացման ցուցիչները:

Ուսումնասիրվող առաջին արժեքի՝ ինքնազարգացման մակարդակը Արցախի փորձարկվող երիտասարդների շրջանում միջին սանդղակում է, որը համարժեք է 10 միավորային բալային սանդղակի 6, 7 միավորային ցուցիչին /դիագրամ 3-ը/: Կարելի է ենթադրել, որ ինքնազարգացման ուղղությամբ լուրջ և եռանդուն աշխատանքներ չեն տարվում:

Հոգևոր բավարարվածության, համապատասխանաբար նվաճումների բարձր մակարդակ է գրանցվել Արցախի բնագիտական կրթություն ունեցող աղջիկների շրջանում: Հոգևոր բավարարվածության և համապատասխանաբար նվաճումների բարձր ցուցանիշ է արտահայտվել նաև հումանիտար կրթությամբ սովորող Արցախի աղջիկների շրջանում:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ հոգևոր բավարարվածությանն և նվաճումների արժեքը փոխադարձաբար լրացնում են միմյանց: Երկու արժեքների դեպքում էլ ցուցանիշն արտահայտվել է միջինից բարձր:

Դիագրամ 1



- Արցախ - տղա- բնագիտական
- Արցախ - աղջիկ- հումանիտար

Ուսումնասիրությունները արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ ուսանողության շրջանում հումանիտար ուղղվածությունը ավելի նպաստավոր է արժեքային համակարգի ձևավորման գործում:

Պետք է նշել, որ ինքնազարգացում, հոգևոր բավարարվածություն, նվաճումներ և սեփական անհատականություն արժեքներն անմիջապես կապված են իրար հետ: Եվ, եթե ուշադիր հետևելու լինենք դիագրամի վրա արտացոլված արժեքների միավորային ցուցիչներին, իսկույն կնկատենք արժեքների մակարդակների ընդհանրական կապը:

Կրեատիվությունը ենթադրում է ստեղծագործական ընդունակությունների ակտուալացում և իրականացում, շրջապատող իրականությունը փոխելու ձգտում:

Ուսումնասիրման ցուցանիշ է դիտվել նաև կրեատիվությունը: Կրեատիվության համար ցուցանիշները ևս տարբեր են: 1 միավոր է համարվում 25-ից ցածր ցուցանիշը: 26-28-ը համարժեք է 2 միավորին, 29-31-ը՝ 3-ին, 32-34-ը՝ 4-ին, 35-36-ը՝ 5-ին, 37-39-ը՝ 6-ին, 40-42-ը՝ 7-ին, 43-45-ը՝ 8-ին, 46-47-ը՝ 9-ին, 48 և ավելին՝ 10 միավորին: Թվերը հուշում են, որ կրեատիվությունը միջին՝ 6 միավորին համարժեքությամբ է արտացոլվել հումանիտար կրթությամբ տղաների մոտ, և միջինից մի քիչ բարձր՝ բնագիտական կրթության տղաների մոտ:

Կրեատիվությունը փոքր ցուցանիշով է արտացոլվել Ղարաբաղի բնագիտական և հումանիտար կրթություն ստացող աղջիկների շրջանում: Արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ կրեատիվությունը, որպես ստեղծագործական ընդունակությունների ակտուալացում և իրականացում, շրջապատող իրականությունը փոխելու ձգտում թույլ է արտահայտված Արցախի պետական համալսարանում սովորող երիտասարդության շրջանում:

Ակտիվ սոցիալական հաղորդակցումն, անշուշտ, ենթադրում է ակտիվ հարաբերությունների կառուցում սոցիալական տարբեր փոխհարաբերություններում, սեփական միջանձնային շփումների ընդարձակում, սեփական սոցիալական դերի ակտուալացում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ակտիվ սոցիալական հաղորդակցությունն վառ է դրսևորված երիտասարդության շրջանում: Արժեքային համակարգի այս ցուցանիշը բարձր է դրսևորվել Արցախի ինչպես բնագիտական կրթություն ստացողների, այնպես էլ հումանիտար կրթություն ստացող երիտասարդների շրջանում: Այս երևույթն ընդհանրական է նաև աղջիկների պարագայում: Ինչպես հումանիտար, այնպես էլ բնագիտական կրթություն ստացող Արցախի ուսանողության շրջանում գրանցվել է ակտիվ սոցիալական հաղորդակցման բարձի աճ:

Սեփական հեղինակությունը ևս դիտարկվել է կենսական արժեքների համակարգում, ինչը ենթադրում է հասարակության մեջ սեփական ճանաչմանն ուղղված յուրատեսակ նվաճման գործընթաց՝ որոշակի սոցիալական պահանջների ուսումնասիրման ճանապարհով:

Նվաճումները

Արժեքային համակարգում կարևորագույն ցուցանիշ է նաև անձի նվաճումների պատկերը: Ինչպիսի՞ նվաճումներ ունեն երիտասարդները: Արդյո՞ք նրանք կարողանում են ակտուալացնել իրենց հետաքրքրություններն ու հոգևոր պահանջմունքները: Այս հարցի ուսումնասիրությամբ էլ ստուգել ենք փորձարկվողների նվաճումների մակարդակը երիտասարդության օրինակով: Նվաճումների ընդհանուր մակարդակը համապատասխանում է 10 միավորային սանդղակի 6, 7, 8 միավորներին:

Հումանիտար կրթություն ստացող աղջիկների նվաճումների մակարդակն բարձր է:

Բնագիտական կրթություն ստացող աղջիկների մոտ այն ավելի բարձր է, քան հումանիտար կրթություն ստացող տղաների մոտ:

Դիագրամ 2



- Արցախ - տղա- հումանիտար
- Արցախ - աղջիկ- բնագիտական

Դիագրամ 3



- Արցախ - տղա- բնագիտական
- Արցախ - աղջիկ- հումանիտար

Որպես կատարած աշխատանքի ամփոփում, կարող ենք ասել, որ անցումային ժամանակաշրջանին յուրահատուկ տնտեսական, հասարակական, բարոյահոգեբանական

վերափոխումները իրենց զարգացման հատուկ օրինաչափություններով անդրադառնում են անձի ինքնաիրացման պայմանների, հետևաբար նաև պահանջմունքների ու արժեքների ձևավորման վրա: Անձի մոտ /տվյալ պարագայում երիտասարդության/ բարձրագույն ապրումների ու պահանջմունքների ձևավորման գործում և ճիշտ ինքնաիրականացման գործում մեծ դերակատարություն ունի մշակույթը, որն արտացոլում է հասարակության մեջ առկա արժեքները, որոնք հնարավորություն են տալիս վերահմաստավորելու և վերարժևորելու այն փոփոխությունները, որոնք պարբերաբար տեղի են ունենում մարդկանց գործունեության ընթացքում: Մշակութային արժեքները միջնորդավորում են ավանդույթները, նորմերը, հոգևոր ծածկագրերը և կեցության ոճաբանությունը: Երիտասարդության մոտ արժեքներն ունեն այնպիսի հենարաններ, ինչպիսիք են ազգային բնավորությունը, հոգևոր ավանդույթը, սոցիալական կենսակերպը: Եվ այս ամենը յուրատիպ ձևով անդրադառնում է երիտասարդի ինքնաիրացման պայմանների ու արժեքային ճիշտ համակարգի ձևավորման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Лэнгеле А. Экзистенциально-аналитическая теория личности: Сборник стстей. М/.: Генезис, 2004.- 159 стр.:
2. Психология самосознания. Самара,Издательский дом ‘’ Бахрах-М”’, 2003 с 641
3. Психологические, философские и религиозные аспекты смысла жизни: Материалы 3-5 симпозиумов /псих. Институт Поссийской образования/Ред. Кол. Чудновцкий В. Э. и др..-М.: ‘”Ось-89”, 2001.- 336 стр.:
4. Соловьев Э. Ю. Экзистенциализм и научное познание. — М.: Высшая школа, 8 История философии. — Т. 6. — Кн. 2.:
5. Шибутани Т., Социальная психология, м., Прогресс, 1968г.
6. 20. Хьелл Л.,Зиглер Д. Х-35 Теории личности-СПБ: Издательство Питер1999г-609с- (Серия «Мастера психологии»)стр.480-500
7. Хекхаузен Х. Мотивация и деятельность, М.: Педагогика, 1986. Т. 1-408 с., Т. 2-392 с.
8. *Эриксон* Э. Идентичность: юность и кризис. Перевод с англ. / общ.ред. и предисл. В.Толстых. – М.: Прогресс, 1997. – 340с.

Տեղեկություններ հեղինակի մասին.

Ռոզալյա Հարությունյան, Մանկավարժության և հոգեբանության« ամբիոնի ասիստենտ, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի հայցորդ, Գիտական ղեկավար՝Նաիրա Ռ.Հակոբյան հ.գ.դ.,պրոֆեսոր

e-mail: avrozali@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 159.9 Հոգեբանություն

ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր և արտահայտություններ. *ինքնավերաբերմունք, կառուցվածք, բաղադրիչ, ինքնահարգանք, ինքնարժեորում*

Ключевые слова: *самоотношение, структура, компонент, самоуважение, самоценность.*

Key words: *self- relation, the structure, self-respect, component, self-worth.*

Л. Саргсян

МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ИССЛЕДОВАНИЕ СТРУКТУРЫ САМООТНОШЕНИИ

В статье представлены те психологические исследовании структуры самоотношении личности, которые являются методологесскии основами. Особое внимание уделяется компонентам самоуважении, аутосимпатии, самообвинении в струкруре самоотношении: формируя основу для глобального самоотношения человека. Теоретическому анализу подвергаются структурные стороны вопроса, рассматриваются эмоциональные, когнетивные и конативные структуры стороны самоотношения.

L. Sargsyan

METHODOLOGICAL BASES OF RESEARCH OF THE STRUCTURE SELF-RELATION

The article presents the psychological structure of the self- relation, individuals which are the methodological basis. The structural aspeects of the problem are analyzed theoretically. Particular attention is paid to the components of self-esteem, autosimpatii, self-blame in the self-strukrure forming the basis for a global self-relation of the person. Especially, the emotive, kognitive and konative perspectives of self attitude structure are detailed.

Հոդվածում ներկայացվում են անձի ինքնավերաբերմունքի կառուցվածքի վերաբերյալ հոգեբանական այն ուսումնասիրությունները, որոնք վերոնշյալ եզրույթի համար հանդիսանում են մեթոդաբանական հիմքեր: Մասնավորապես ուշադրություն է դարձվում ինքնավերաբերմունքի կառուցվածքի համակարգում ինքնահարգանքի, ինքնահամակրանքի, ինքնանվաստացման բաղադրիչներին՝ որպես անձի գլոբալ ինքնավերաբերմունքի ձևավորման հիմքեր: Ինքնավերաբերմունքի կառուցվածքի հիմքում դիտարկվում են դրա գնահատող, արժեքային, կարգավորող բաղադրիչները:

Ինքնավերաբերմունքն անձի կեցության կարևոր գործոններից մեկն է: Թեպետ ժամանակակից հոգեբանական վերլուծություններում ինքնավերաբերմունքի հիմնախնդիրը ձեռք է բերել տեսական ու գործնական նոր հնչեղություն, պետք է նշենք, որ մինչ 1974 թ. ինքնավերաբերմունքի վերաբերյալ բավական քիչ էին հոգեբանական ուսումնասիրությունները անձի <<Ես>> - հայեցակարգի, ինքնագիտակցության տեսանկյունից Ու. Ջեյմսի, Զ. Ֆրոյդի, Կ. Յունգի, Ռ. Բեռնսի, Կ. Ռոջերսի, Ի. Կոնի աշխատություններում: Օրինակ՝ հոգեվերլուծության և հումանիստական հոգեբանության մեջ <<ինքնավերաբերմունք>> հասկացությունը հաճախ նույնացվում էր <<ինքնագիտակցություն>> հասկացությանը և փոխարինվում նրանով: Թեպետ, տասնամյակներ շարունակ խնդիրն ուսումնասիրվում է հոգեբանության բնագավառում, այնուամենայնիվ, մինչ օրս չկա ինքնավերաբերմունքի վերաբերյալ միասնական մոտեցում. հոգեբանական բառարաններում <<ինքնավերաբերմունք>> և <<ինքնագիտակցություն>> հասկացությունները հաճախ նույնացվում են: Իր հերթին, <<ինքնագիտակցություն>> հասկացությունը հաճախ նույնացվում է <<Ես>>, <<Ես-ի պատկեր>>, <<ինքնագնահատական>>, <<Ես – հայեցակարգ>> հասկացություններին, որոնք նույնպես շատ մոտ են <<ինքնավերաբերմունք>> հասկացությանը: Ուստի կարևորում ենք ներկայացնել <<ինքնավերաբերմունք>> եզրույթի կառուցվածքի հոգեբանական ուսումնասիրություններն ու այն մոտեցումները, որոնք ամբողջացնում և հիմնավորում են վերջինս որպես առանձին հոգեբանական հասկացություն:

Ինքնավերաբերմունքի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու համար այն պետք է դիտարկել անձի իմացաբանական, վարքաբանական, հուզական մակարդակներում: Այն անձի հոգեսոցիալական կարևոր բնութագրիչներից մեկն է՝ անձի հոգեկան և սոցիալական կողմերի համահարաբերակցության արդյունք: Հոգե-սոցիալական համահարաբերակցության արդյունքում է տեղի ունենում սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումն ու զարգացումը: Սոցիալական միջավայրի՝ որպես օբյեկտիվ աշխարհի և, զուգահեռաբար, անձի սուբյեկտիվ վերաբերմունքի արդյունքում են ձևավորվում ինքնավերահսկողությունը, ինքնաքննադատումը, ինքնաարժևորումը, ինքնահասկացումը որպես ինքնավերաբերմունքի բաղադրիչներ կամ դրա կառուցվածքի մաս: Հոգեբանության մեջ երևույթը քննվել է Դ. Միդի, Ս. Կուպերսմիտի, է Ռ. Բերնսի, Կ. Ռոջերսի, Կ. Հորնիի, Է. Էրիկսոնի և այլոց հայեցակարգերում: Ռուս հոգեբաններ Ի.Ս. Կոնը, Բ.Գ. Անանևը, Վ.Մ. Մյասիշչևը, Ս.Լ. Ռուբինշտեյնը, Ե.Տ. Սոկոլովան, Վ.Վ. Ստոլինը, Ի.Ի. Չեսնոկովան, Ե.Վ. Շորոխովան ինքնավերաբերմունք հասկացությունը համարում են անձի հոգեկանի կարևոր ենթակառույց, անձնային գծերի գնահատական, ինքնաիրացման պահանջմունք: Այս տեսակետը զարգացրին մասնավորապես Ս.Ռ. Պանտիլեևը, Ե.Տ. Սոկոլովան, Վ.Վ. Ստոլինը:

Հոգեբանության մեջ ինքնավերաբերմունքի և դրա կառուցվածքի վերաբերյալ կարելի է հանդիպել տարբեր մեկնաբանությունների: Որոշ աղբյուրներում ինքնավերաբերմունքը բնութագրվում է որպես սեփական <<Ես>>-ի հանդեպ յուրահատուկ զգացողություն, <<հայեցակարգային պատրանք>> [11]: Ու. Ջեյմսը համարում է, որ անձը կազմված է ֆիզիկական, սոցիալական և հոգևոր <<Ես>>-երից, ինչի հիման վրա առանձնացնում է դրա հետևյալ բաղադրիչները՝ ինքնագնահատականը, ինքնասիրությունը և ինքնահարգանքը: Ընդ որում, ինքնագնահատականն արտահայտում է ինքնաբավարարվածություն ու ինքնադժգոհություն: Հեղինակը նշում է, որ ինքնասիրությունն առանձնանում է ինքնագնահատականից և ներառվում անձի գործողություններում, իսկ ինքնահարգանքը որոշվում է անձի նկատմամբ պահանջների և հաջողության հարաբերակցությամբ [6]: Ու. Ջեյմսի հոգևոր <<Ես>>-ի գաղափարը՝ ինքնասիրություն, ինքնագնահատական և ինքնահարգանք բաղադրիչների վերաբերյալ ինքնավերաբերմունքի դաշտում տվեց նոր ուսումնասիրությունների հեռանկար:

Ինքնավերաբերմունքի կառուցվածքային բաղադրիչները, անկախ իրենց բովանդակությունից, միավորված են մեկ համակարգում: Անձի հոգեբանության բնագավառում ինքնավերաբերմունքի բաղադրիչների միավորման հարցում կարելի է առանձնացնել երեք մոտեցում: Առաջին մոտեցումը հիմնվում է <<հավելվածության սկզբունքի>> վրա [16]: Երկրորդ մոտեցման համախոհներն անձի՝ ինքն իր նկատմամբ վերաբերմունքը բացատրում են՝ ելնելով <<իմաստային ընդգրման>> սկզբունքից [11]: Եվ երրորդը, որը հոգեբանության մեջ ավելի տարածված է, ինքնավերաբերմունքը նկարագրում է որպես ամբողջական համակարգ՝ պահպանելով կառուցվածքային բաղադրիչների անկախ և հավասարաչափ ներկայացման սկզբունքը [15]:

Քանի որ ինքնավերաբերմունքի առաձին բաղադրիչներն իրենց բովանդակությամբ մոտ են, կարելի է դրանց միավորել չտարբերակված, ընդհանրացված ամբողջության մեջ՝ սեփական <<Ես>>-ի նկատմամբ <<կողմ>> կամ <<դեմ>> սկզբունքով: Վերոնշյալի հիման վրա կարելի է խոսել անձի ինքն իր նկատմամբ ունեցած բացասական կամ դրական վերաբերմունքի մասին համապատասխան հուզական երանգով: Բացասական կամ դրական ինքնավերաբերմունքի շրջանակներում անհրաժեշտ ենք համարում մեջբերել Զ. Ֆրոյդի գաղափարն այն մասին՝ համաձայն որի՝ որքան <<Ես>>-ը շատ է սեր նվիրում ուրիշներին, այնքան ավելի քիչ սեր է մնում սեփական անձին և հակառակը [17]: Ի տարբերություն Զ. Ֆրոյդի՝ Է. Ֆրոմմը սիրելու ունակությունը համարում է զարգանալու ընդունակություն և պնդում, որ սեփական անձի նկատմամբ դրական վերաբերմունքը ոչ

միայն նպաստում է ուրիշների նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորմանը, այլև հանդիսանալով դրա անհրաժեշտ պայմաններից մեկը՝ ձևավորում է որոշակի վերաբերմունք[18]: Նմանատիպ տեսակետի ենք հանդիպում Վ. Ստոլինի մոտ, ով գրում է. <<Սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունքն առաջին հերթին, արտահայտվում է մյուսների նկատմամբ որոշակի վերաբերմունքով, որը մարմնավորում է անձի <<Ես>>-հատկանիշները>> [16, էջ 229]:

Ինքնավերաբերմունքի կառուցվածքային բաղադրիչների բովանդակային վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու երկու ենթահամակարգ՝ հուզական-գնահատող և հուզական-արժեքային [11]: Հուզական-գնահատող ինքնավերաբերմունքի դեպքում վերջինս բնութագրվում է որպես ինքնահարգանք, կոմպետենտության և արդյունավետության զգացում: Երկու համակարգերն էլ գտնվում են փոխադարձ վերաձևափոխման մեջ:

Ինչպես նշեցինք, հոգեբանության մեջ կարելի է հանդիպել ինքնավերաբերմունքի կառուցվածքային բաղադրիչների վերաբերյալ մի շարք դասակարգումների: Օրինակ, Ն.Ի. Սարջվելաձեն [12], Ա.Վ. Զախարովն [7] առանձնացնում են ինքնավերաբերմունքի հուզական և իմացական բաղադրիչները, Բ.Ս. Բրատուսը՝ [5] արժեքային ու գործառնական կառուցվածքը, Ս. Պանտիլեևը՝ [11] հուզական-գնահատող և հուզական-արժեքային ենթահամակարգերը:

Ս.Ռ. Պանտիլեևը, ինքնագնահատականը համարում է ինքնավերաբերմունքի ենթահամակարգերից մեկը, որը, համաձայն հեղինակի հայեցակարգի, իր մեջ ընդգրկում է ինքնահարգանքը, ինքնահամեմատումը, ինքնահամակրանքը, սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունքը [11]: Նա, հիմնվելով Ա. Բոդալևի [4] և Վ. Ստոլինի [16] <<Ես>>-հայեցակարգերի ըմբռնման վրա, որոնցում ինքնավերաբերմունքը ներկայացվում է որպես անձի ապրում, համեմատաբար կայուն զգացմունք, կարծում է, որ ինքնավերաբերմունքը ներթափանցում է անձի ինքնաբնկալման և <<Ես>>-կերպարի մեջ:

Պանտիլեևն ինքնավերաբերմունքի կառուցվածքային 3 բաղադրիչ է տարբերակում՝ ինքնահարգանք, որն արտահայտվում է ինքնավստահության, անկեղծության, արտացոլվող ինքնավերաբերմունքի և ինքնակառավարման ձևով, ինքնահամակրանք, որն արտահայտվում է ինքնավերլուծության, ինքնարժևորման և ինքնաընդունման ձևով, և ինքնակործանում՝ արտահայտվելով ինքնամեղադրման և ներքին կոնֆլիկտի ձևով:

Որպես ինքնավերաբերմունքի բաղադրիչ՝ սեփական անձի նկատմամբ գնահատականը Կ. Ռոջերսը մեկնաբանում է երկու տեսանկյունից. ինքնագնահատականի, որը սեփական անձի գնահատումն է որպես որոշակի հատկությունների և արժեքների կրողի, և ինքնաընդունման, որը սեփական անձի ընդունումն է որպես յուրահատուկ անհատականություն, ով օժտված է ոչ միայն արժեքներով, այլև թերություններով [19]:

Այս տեսանկյունից Կ.Ա. Աբուլխանովա-Սլավսկայան նշում է. <<Ինքնասիրությունը հանդես է գալիս որպես որոշակի ամբողջական անձնային ձևավորում, որը միաժամանակ արտահայտում է <<Ես>>-ի շարժող ուժը և նրա ակտիվ կողմը: Ինքնասիրությունը՝ որպես շրջապատի հետ փոխազդեցության չափանիշների ցուցանիշ, կարևոր դեր է խաղում անձի արժեքային-բարոյական ոլորտի զարգացման գործում: Այս գործընթացն անձի դրդապատճառների ավելացման կամ նվազման, կյանքի իմաստի ձեռքբերման կամ կորցնելու աղբյուրներից մեկն է>> [3, էջ 104-108]: Ըստ այդմ՝ ինքնասիրությունը կարելի է համարել ինքնավերաբերմունքի վարքային բաղադրիչ:

Ա.Ի. Զախարովը նշում է. <<Անձի ձևավորման գործընթացում ինքնավերաբերմունքը ձևավորվում է անձի և նրա համար կարևորություն ներկայացնող մարդկանց միջև և միայն հետո՝ նրա ներքին բաղադրիչների միջև: Հուզական ինքնավերաբերմունքը չի սահմանափակվում ինքնաընդունման և ինքնաճանաչման խնդիրների լուծմամբ. այն արտահայտվում է անձի վարքում՝ հանդիսանալով նրա և ընդհանրապես շրջապատի նկատմամբ վերաբերմունքի հիմքը: Ինքնաընդունման բարձր մակարդակը շփման մեջ

ստեղծում է բարենպաստ պայմաններ, անձին դարձնում ավելի հուզական՝ ուրիշների արժանիքների նկատմամբ և ավելի հանդուրժող՝ նրանց թերությունների նկատմամբ>> [7, էջ 80-84]: Հեղինակը նաև կարևորում է միջավայրի ու նրանց դերը, ովքեր որոշակի նշանակություն են ունենում ինքնավերաբերմունքի ձևավորման գործում:

Ինքնավերաբերմունքի կառուցվածքի ձևավորման հարցում Վ.Ս. Մուխինան [10] կարևորություն է տալիս սոցիալական գործոնին: Նա նշում է, որ անձը, իրականացնելով առօրյա կյանքի պահանջները և միաժամանակ հանդես գալով որպես սոցիալական անհատ, ամրապնդում է սեփական արժանապատվության և ինքնագնահատման զգացումը: Իսկ սոցիալական գործոնի ներքո պետք է հասկանալ անձի սոցիալական կապերը, սոցիալական պահանջմունքներն ու դրդապատճառները, որոնք, ըստ հեղինակի, պայմանավորում են ինքնավերաբերմունքի կառուցվածքային բաղադրիչները:

Ինչպես տեսնում ենք, ինքնավերաբերմունքի կառուցվածքի ձևավորման գործում Կ.Ա. Աբուլխանովա-Սլավսկայան, Ա.Ի. Զախարովը, Վ.Ս. Մուխինան կարևորում են սոցիալական միջավայրի և անձ-միջավայր փոխհարաբերությունների դերը:

Ե. Սելեզնևան անձի <<Ես>>-ի, մասնավորապես ինքնավերաբերմունքի վերաբերյալ կատարած ուսումնասիրությունների արդյունքում ներկայացնում է ինքնավերաբերմունքի հետևյալ կառուցվածքը (տես՝ գծապատկեր 1-ում).

Գծապատկեր 1.



Հեղինակը գրում է. <<Ինքնավերաբերմունքը կարելի է դիտարկել ակմեոլոգիական ֆենոմեն և բնորոշել որպես հուզական-արժեքային համակարգ, որն արտահայտում է սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի առանձնահատկությունները, կարգավորում կյանքի ուղին, ակտիվությունն ու շարունակականությունը>> [14, էջ 243]: Ինչպես տեսնում ենք, հեղինակն ինքնավերաբերմունքը ներկայացնում է որպես գնահատող, արժեքային, կարգավորող համակարգ, որն իր կառուցվածքում ընդգրկում է հուզական-գնահատող, հուզական-արժեքային, հուզական-կարգավորող բաղադրիչները:

Հոգեբանական ուսումնասիրություններում անձի ինքնավերաբերմունքի հուզական-գնահատող և հուզական-արժեքային ենթահամակարգերն ըստ իրենց բովանդակության առանձնացվում են: Գնահատող ինքնավերաբերմունքը ձևավորվում է գնահատականի

ինտերսուբյեկտիվ մակարդակում՝ սոցիալական համեմատության գործողության միջոցով, կամ հասարակության նորմաների ու էտալոնների հետ համեմատելով [11, 15]: Սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող վերաբերմունքը կառուցվում է առաջադրված նպատակի իրականացման և գնահատման հիման վրա՝ սոցիալական չափորոշիչների հետ սեփական ձեռքբերումները, հաջողությունները համեմատելու միջոցով: Ինքնավերաբերմունքի հուզական-արժեքային ենթահամակարգի հիմքում ընկած է հուզական հարաբերություններում անձի համար կարևոր մարդկանց հետ շփման կենսական փորձը: Հուզական ինքավերաբերմունքը, ի տարբերություն իմացականի և վարքայինի, սկզբունքորեն չունի անձի նկատմամբ արտաքին գնահատող հիմքեր և քիչ է կախված անձի իրական հաջողություններից ու անհաջողություններից [11, 13, 15]: Ինքնավերաբերմունքի հուզական-արժեքային բաղադրիչը պայմանավորված է սեփական անձին ուղղված սուբյեկտիվ գնահատականով:

Ինքնավերաբերմունքի կառուցվածքի մեկ այլ մեկնաբանություն է առաջարկում Վ.Ֆ. Սաֆինը: Ելնելով սուբյեկտի ամբողջական ինքնագնահատականի հայեցակարգի՝ նա կարևորում և առանձնացնում է հատկապես ինքնահարգանքը որպես հուզական-արժեքային վերաբերմունք: Նրա կարծիքով ինքնահարգանքը՝ <<Խորը, գլոբալ ձևավորում է, քան առանձին ինքնագնահատականները>> և հավելում. <<Ինքնահարգանքը ներկայանում է սեփական անձի նկատմամբ հուզական-գնահատող ամբողջություն, որը ձևավորվում է արտաքին, կարևոր գնահատականների հիման վրա>> [13, էջ 72-74]:

Վ.Վ. Ստոլինը ինքնավերաբերմունքը համարում է հիերարխիկ կառույց՝ հետևյալ երեք մակարդակներներով՝

1. գլոբալ ինքնավերաբերմունք, այսինքն՝ սեփական անձի նկատմամբ <<կողմ>> և <<դեմ>> լինելու ներքին չտարբերակված զգացումը.
2. տարբերակված ինքնավերաբերմունք՝ ըստ ինքնահետաքրքրության, ինքնահարգանքի, ինքնահամակրանքի և սեփական անձի նկատմամբ սպասումների.
3. սեփական անձին ուղղված կոնկրետ գործողությունների մակարդակ, <<Ես>>-ին ուղղված այնպիսի ներքին գործողություններ, ինչպիսիք են ինքնավստահությունը, ուրիշների վերաբերմունքը, ինքնահետաքրքրությունը, ինքնակառավարումը, ինքնամեղադրումը, ինքնաընդունումը և ինքնահասկացումը [16, էջ 229-231]:

Վ.Վ. Ստոլինի կարծիքով ինքնավերաբերմունքի զարգացման առավել բարձր մակարդակը սեփական անձի նկատմամբ հետաքրքրության դրսևորումն է: Այդ մակարդակում մարդու մեջ մեծանում է <<Ես>>-հայեցակարգի իմացական բաղադրիչի դերը: Ստոլինի կարծիքով, սեփական անձի նկատմամբ հետաքրքրության համար անհրաժեշտ են ռեֆլեքսիվ մեխանիզմների ձևավորվածություն, բանականության բարձր մակարդակ, սեփական անձը հասկանալու պահանջմունք [16]: Ինքնավերաբերմունքի կառուցվածքում Ստոլինը տարբերակում է վերաբերմունքի երեք տեսակ՝ սեփական անձի նկատմամբ, ուրիշների նկատմամբ և սպասվող վերաբերմունքն ուրիշների կողմից: Այդ բաղադրիչները հնարավորություն են ընձեռում առանձնացնել սուբյեկտի ինքնաընդունման մակարդակները. <<Առավել զարգացած անձի մոտ ենթադրվում է համակրանք և հարգանք սեփական անձի և ուրիշների նկատմամբ, ինչպես նաև փոխադարձ համակրանքի սպասում: Հարգանքի առավել քիչ զարգացած մակարդակում ուրիշների նկատմամբ հարգանք չի դրսևորվում և սպասվում է թշնամություն: Այնուհետև, սեփական անձի նկատմամբ հարգանքի բացակայության և հակակրանքի դեպքում ուրիշների նկատմամբ սպասվում է արհամարհանք, իսկ ինքն իրեն չընդունելը կարող է զուգակցվել ուրիշների նկատմամբ չափազանցված ակնածանքով>> [16, էջ 230]:

Հետևելով Վ.Վ. Ստոլինին՝ Ա.Մ. Կոլիշկոն ինքնավերաբերմունքի կառուցվածքում առանձնացրեց սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի չորս տիպեր՝

1. բարձր ինքնահամակրանքով և բարձր ինքնահարգանքով (<<լավ և ուժեղ>>).
2. ցածր ինքնահամակրանքով և բարձր ինքնահարգանով (<<վատ և ուժեղ>>).

3. ցածր ինքնահամակրանքով և ցածր ինքնահարգանքով (<<վատ և թույլ>>).
4. բարձր համակրանքով և ցածր ինքնահարգանքով (<<լավ և թույլ>>) [8, էջ 24]:

Հարաբերությունների տվյալ դասակարգումը կարելի է հասկանալ <<Ես>>-ի անձնային իմաստի արտահայտման տեսանկյունից, որտեղ ցածր ինքնահարգանքով և հակակրանքով վերաբերմունքը դիտվում է որպես <<Ես>>-ի բացասական իմաստի արտահայտում, բարձր ինքնահարգանքով, հակակրանքով, ինքնահամակրանքով և ցածր ինքնահարգանքով ինքնավերաբերմունքը՝ <<Ես>>-ի կոնֆլիկտային իմաստ, իսկ համակրանքով և ինքնահարգանքով ինքնավերաբերմունքը՝ <<Ես>>-ի դրական իմաստ:

Ն.Ի. Սարջվելաձեն [12] ինքնավերաբերմունքի կառուցվածքում առանձնացնում է իմացական, զգայական և վարքային բաղադրիչները (տես՝ գծապատկեր 2-ում):

Գծապատկեր 2.



Սարջվելաձեն առանձնացնում է նաև այլ դասակարգում՝ ներկայացնելով անձի վերաբերմունքն առարկաների, մարդկանց և ինքն իր նկատմամբ (տես՝ աղյուսակ 1-ում):

Աղյուսակ 1.

Անձի տեղայնացման կառուցվածքը		վերաբերմունքն ուղղված՝		
		առարկաներին (Ա)	մարդկանց (Մ)	ինքն իրեն (Ի)
վերաբերմունքի հնարավորությ.	սուբյեկտ-օբյեկտ U - o	U – o – O 1	U – o – M 2	U - O - U 3
	սուբյեկտ-սուբյեկտ U - u	U - u – O 4	U – u – M 5	U – u – U 6

Սարջվելաձեն աղյուսակում տված հարաբերությունները դասակարգեց վեց խմբի՝

1. Սուբեկտ-օբեկտ վերաբերմունքն առարկաների նկատմամբ (U - o - O)
2. սուբեկտ-օբեկտ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ (U - o - M)
3. սուբեկտ-օբեկտ վերաբերմունքն ինքն իր նկատմամբ (U - O - U)
4. սուբեկտ-սուբեկտ վերաբերմունքն առարկաների նկատմամբ (U - u - O)
5. սուբեկտ-սուբեկտ վերաբերմունքը մարդկանց նկատմամբ (U - u - M)
6. սուբեկտ-սուբեկտ վերաբերմունքն ինքն իր նկատմամբ (U - u - U):

Եթե Սարջվելաձեի մոտեցումը համեմատենք Ս.Ռ. Պանտիլեևի կողմից առանձնացրած ինքնավերաբերմունքի կառուցվածքի հետ, ապա ինքնաճանաչման վրա հիմնված իմացական բաղադրիչը կլինի ինքնահարգանքը, զգայական բաղադրիչը՝ ինքնահամակրանքը, վարքային բաղադրիչը՝ վառ արտահայտված ինքնավստահությունը:

Ինքնավերաբերմունքի կառուցվածքում նա առանձնացնում է այնպիսի բաղադրիչ, ինչպիսին է ինքնամեղադրանքը՝ կապված անձի ներքին լարվածության, բացասական հույզերի, ինքնաքննադատության և անկեղծության հետ: Վերջիններս ուղեկցվում են անհանգստությամբ և ներքին ապրումների նկատմամբ մեծ ուշադրությամբ [11, էջ 19]: Հեղինակը, սեփական ուսումնասիրությունների հիման վրա տալիս է ինքնավերաբերմունքի հետևյալ կառուցվածքը (տես՝ աղյուսակ 2-ում):

Աղյուսակ 2.

մոդալություն	ինքնահարգանք	ինքնահամակրանք	ինքնանվաստացում
գործոնների սանդղակ	ինքնակառավարում, ինքնավստահություն, արտացոլվող վերաբերմունք, սոց. ցանկալի <<ես>>	ինքնակապվածություն ինքնարժեորում, ինքնաընդունում,	ներքին կոնֆլիկտ, ինքնամեղադրում,

Փաստորեն, ինքնահարգանքը բաղկացած է ինքնակառավարումից, արտացոլվող ինքնավերաբերմունքից, ինքնավստահությունից, սոցիալական ցանկալի <<Ես>>-ից, ինքնահամակրանքը՝ ինքնակապվածությունից, ինքնարժեորումից, ինքնաընդունումից, իսկ ինքնանվաստացումը՝ ինքնամեղադրումից և ներքին կոնֆլիկտայնությունից:

Համաձայնվելով Ս.Ռ. Պանտիլեևի հետ՝ Տ.Վ. Արխիրեևան ինքնաընդունումը ներկայացնում է որպես ինքնահամակրանք, որպես ինքնավերաբերմունքի կառուցվածքում ծագումնաբանորեն առաջին բաղադրիչ: Եթե Տ.Վ. Արխիրևան ինքնաընդունումը ներկայացնում է որպես ինքնավերաբերմունքի կառուցվածքում ծագումնաբանորեն առաջին բաղադրիչ, ապա Ա.Ն. Լեոնտևն ինքնավերաբերմունքի բնութագրերից է համարում նրա ամբողջականության աստիճանը, ինքնավարությունն ու սոցիալական միջավայրի գնահատականներից կախվածությունը [9]:

Ք. Ավետիսյանը ինքնավերաբերմունքը ներկայացնում է երկու մակարդակում. <<էքզոինքնավերաբերմունք, որը ձևավորվում է սոցիալական աշխարհի ներգործության և հետագայում նրա հետ խորը փոխներգործության շնորհիվ, և էնդոինքնավերաբերմունք, որը ձևավորվում է ներքին արժեքների հիմքի վրա: Այն իրավիճակային չէ: Ինչ-որ իմաստով այն անձի ինքնանույնականացման ամբողջության հիմքն է կազմում: Սակայն, ինքնավերաբերմունքի այդ տեսակը նման չէ անձի նարցիսական սկզբին, այն ակնհայտ պատճառով, որ նարցիսական սկիզբն ընդհանուր առմամբ կախված է սոցիալական գնահատականներից և սնվում է դրանցով: Մինչդեռ, անձի էնդոինքնավերաբերմունքը բնութագրվում է հենց անկախությամբ սոցիալական կարծիքներից: Ընդ որում, մենք համարում ենք, որ էնդոինքնավերաբերմունքը և էքզոինքնավերաբերմունքն անձի <<Ես-կոնցեպցիայի>> ինքնավար ենթակառուցվածքներ չեն>> [1, էջ 20]:

Այսպիսով, ինքնավերաբերմունքի կառուցվածքային վերլուծությունը կարելի է կատարել տարբեր կողմերից. այն հանդիսանում է բարդ, բազմամակարդակ համակարգ, որի կառուցվածքում մտնում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են սեփական անձի նկատմամբ դրական (ինքնահարգանք և ինքնահամակրանք) և բացասական (ինքնանվաստացում) վերաբերմունքը: Ինքնավերաբերմունքի կառուցվածքի բարդությունը բխում է անձի հարաբերությունների բազմաշերտությունից և խորությունից: Առավել ընդհանուր ձևով ինքնավերաբերմունքի մեջ կարելի է առանձնացնել երեք ենթահամակարգեր՝ հուզական-գնահատող, հուզական-արժեորող, հուզական-կարգավորող: Այս ենթահամակարգերը, ըստ իրենց բովանդակության, սկզբունքորեն տարբեր են: Տարբեր են նաև դրանց ձևավորման հոգեբանական մեխանիզմները:

Մեր կողմից կատարված հետազոտությունների ընթացքում մենք ևս փորձեցինք անդրադառնալ ինքնավերաբերմունքի կառուցվածքի խնդրին: Ուսումնասիրելով ինքնավերաբերմունքի դերը դատապարտյալների հարմարման գործընթացում՝ դուրս բերեցինք տվյալներ, համաձայն որի ինքնավերաբերմունքի և հարմարման գործընթացի միջև առկա են փոխպայմանավորված կապեր: Այդ կապերը մենք տեսնում ենք հարմարման և ինքնավերաբերմունքի՝ ինքնարժեորում, ինքնակառավարում, ինքնաընդունում, ինքնավստահություն որակների միջև [2]:

Մենք առաջ ենք քաշում դրույթ, համաձայն որի անձի ինքնավերաբերմունքը կատարում է նաև հարմարվողական գործառույթ. ինքնավերաբերմունքի բովանդակային փոփոխությունների արդյունքում փոփոխություն է կրում նաև հարմարումը: Ուստի, ճիշտ կլինի նշել, որ հարմարումը պայմանավորված է ոչ միայն ինքնավերաբերմունքով, այլ ինքնավերաբերմունքի՝ որպես հարմարման շղթայի օղակներից մեկը լինելով: Կարելի է ասել, որ միջավայրն իր ազդեցությունն է ունենում անձի ինքնավերաբերմունքի վրա: Արդյունքում ինքնավերաբերմունքի բովանդակային փոփոխություններն իրենց ազդեցությունն են ունենում հարմարման գործընթացի վրա, մասնավորապես ինքնավերաբերմունքի դրական ելքը նպաստում է անձի հարմարմանը, իսկ բացասականը՝ ապահարմարմանը: Հիմնվելով մեր կողմից կատարված հետազոտության տվյալների վրա [2]՝ դուրս ենք բերել հարմարման և ինքնավերաբերմունքի այն որակները, որոնք միմյանց հետ գտնվում են հիմնական փոխպայմանավորված կապերի մեջ՝ ապահովելով քրեակատարողական հիմնարկությունում դատապարտյալների հարմարումը կամ ապահարմարումը (տես՝ գծապատկեր 3-ում):

Գծապատկեր 3.



Դատապարտյալների ինքնավերաբերմունքով պայմանավորված հարմարման մոդելը.

Այս տեսանկյունից ինքնավերաբերմունքը դիտարկում ենք որպես սեփական անձի նկատմամբ սուբյեկտ-օբյեկտային, օբյեկտ-սուբյեկտային հարաբերություններում առկա դրական կամ բացասական ներհոգեկան դինամիկ գործընթաց, ինչ անմիջական կապի մեջ գտնվելով հարմարման գործընթացի հետ՝ մի շարք դրական ու բացասական բաղադրիչների ազդեցության արդյունքում անձին մղում է հարմարման կամ ապահարմարման: Հիմնվելով մեր հետազոտության արդյունքների, ինչպես նաև Ն.Ի. Սարջվելաձեի, Վ.Վ. Ստոլինի, Ս.Ռ. Պանտիլեևի ուսումնասիրությունների վրա՝ գծապատկեր 4-ում առաջարկում ենք անձի ինքնավերաբերմունքի հետևյալ մոդելը.

Գծապատկեր 4.



Անձի ինքնավերաբերմունքի մոդելը.

Այս մոդելի հիմքում ընկած է ինքնավերաբերմունքի բաղադրիչների՝ սուբյեկտ-օբյեկտ, օբյեկտ-սուբյեկտ, սուբյեկտ-սուբյեկտ հարաբերությունները: Որպես ինքնավերաբերմունքի դրական կողմ՝ առանձնացնում ենք ինքնահարգանքը՝ ինքնավստահություն, ինքնակառավարում, ինքնահասկացում, ներքին անկեղծություն, արտացոլվող ինքնավերաբերմունք բաղադրիչներով, ինքնահամակրանքն՝ ինքնաընդունում, ինքնարժևորում, ինքնավերլուծություն բաղադրիչներով: Որպես ինքնավերաբերմունքի դրական-բացասական կողմ՝ առանձնացնում ենք ակնկալվող ինքնավերաբերմունքն անձի և շրջապատի համար: Եվ որպես ինքնավերաբերմունքի բացասական կողմ՝ առանձնացնում ենք ինքնամեղադրում, ներքին կոնֆլիկտայնություն, ինքնաքննադատում բաղադրիչները: Այս բոլորի դինամիկ փոխպայմանավորվածության արդյունքում ձևավորվում է անձի գլոբալ ինքնավերաբերմունքը:

Այսպիսով՝ նշենք, որ ուսումնասիրության ընթացքում հանդիպած մի շարք անպատասխան հարցեր մեզ հուշում են, որ անձի հոգեբանության բնագավառում ինքնավերաբերմունքի կառուցվածքն այսօր դեռևս ամբողջական չէ, և կան չուսումնասիրված կողմեր: Տեսական վերլուծության ենթարկելով ինքնավերաբերմունքի կառուցվածքի խնդիրը, ինչպես նաև ներկայացնելով մեր կողմից կատարված հետազոտության հիմնական արդյունքները, համարում ենք, որ խնդրի վերաբերյալ անհրաժեշտ են նոր ուսումնասիրություններ՝ այն ավելի համակարգված ներկայացնելու համար: Առաջարկում ենք ինքնավերաբերմունքը դիտարկել որպես անձի հոգե-սոցիալական հարաբերությունների արդյունք, քանի որ վերջինս անձի հոգեբանական և սոցիալական կողմերի հարաբերակցության արդյունք է: Այս հարաբերություններում է որոշակիանում ինքնավերաբերմունքը. արտահայտվում են ինքնավերաբերմունքի բաղադրիչները՝ ձևավորելով ամբողջական համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավետիսյան Ք.Ս. Անձի ինքնավերաբերմունքի ձևավորման սոցիալ-հոգեբանական օրինաչափություններն ու առանձնահատկությունները: Ատենախոսության սեղմագիր, հգթ, ԺԹ.00.03, Եր. 2012. – 26 էջ:
2. Սարգսյան Լ.Կ. Ինքնավերաբերմունքի դերը դատապարտյալների հարմարման գործընթացում: Ատենախոսության սեղմագիր, հգթ, ԺԹ.00.03, Եր: 2015. – 22 էջ:
3. Абульханова-Славская К.А. Стратегия жизни. – М.: Мысль, 1991. – 299 с.
4. Бодалев А. Восприятие и понимание человека человеком. – М.: 1982. – 200 с.
5. Братусь Б.С. Соотношение структуры самооценки и целевой регуляции деятельности в норме и при аномалии развития. //Вопросы психологии. – 1986. № 4. – С. 146-154.
6. Джеймс У. Личность. //Психология личности: Хрестоматия: В 2-х т. Т. I. /Ред.-сост. Д.Я. Райгородский. Самара: Бахрах-М, 2006. – 512 с.
7. Захаров В.П., Векилова С.А., Завьялов Е.И., Сидоренко Е.В. Социально-психологический тренинг как фактор социального развития человека: Межвузовский сборник. (Экспериментальная и прикладная психология. – Вып. 13). / Под. ред.: А.А. Крылова. – Л.: Изд-во ЛГУ, 1989. с. 80-84
8. Колышко А.М. Психология самоотношения: - Гродно: ГрГУ, 2004. – 102 с.
9. Леонтьев А.Н. Очерк психологии личности. - М.: Смысл, 1993. – 356 с.
10. Мухина В.С. Возрастная психология: феноменология развития, детство, отрочество: 4-е изд., - М.: Издательский центр «Академия», 1999. – 456 с.
11. Пантилеев С. Самоотношение как эмоционально-оценочная система. М.: 1991.–338с.
12. Сарджвеладзе Н.И. Личность и ее взаимодействие с социальной средой. – Тбилиси: «Мецниереба», 1989. – 206 с.
13. Сафин В.Ф. Психология самоопределения личности. Свердловск: СГПИ, 1986. – 142 с.
14. Селезнева Е.В. Самоотношение как акмеологический феномен //Мир психологии. Научно-методический журнал. 2008. N 4. – с. 238-249
15. Соколова Е. Самосознание и самооценка при аномалиях личности. – М: 1989. – 215 с.
16. Столин В.В. Самосознание личности /В.В. Столин. – М.: Изд. МГУ. 1983. – 288 с.
17. Фрейд З. Психопатология обыденной жизни //Психология бессознательного. – М.: Просвещение, 1989. – 342 с.
18. Фромм Э. Человек для себя: Исслед. психол. проблем этики./ пер. с англ. – Минск.: Коллегиум. 1992. – 253 с.
19. Rogers K.R., Dymond R.F. Psychotherapy and personality change. Chicago, 1954. – 344 p.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Լևոն Սարգսյան *- ՀՊՄՀ, Կիրառական հոգեբանության ամբիոն, հ.գ.թ.*
E:mail: *sargsyan1985L@rambler.ru*

Հոդվածը տպագրության է երաշխավորել հ.գ.թ., Վ.Բ.Յարամիշյանը:

ՀՏԴ 378.14 Մանկավարժություն

ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ

Էլլադա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Եվգենյա ՍԱՐԳՍՅԱՆ

Բանալի բառեր *- Ժողովրդական մանկավարժություն, բարձրարժեք, ազգային ոգի, պատշաճ գնահատում, ճանաչողական արժեք, դաստիարակչական արժեք,արցախյան ժողովրդական հեքիաթներ, հուզական ապրումներ, զգացմունքներ, համոզմունքներ, երևակայություն:*

Ключевые слова *- Народная педагогика, высокие ценности, национальный дух, надлежащая оценка, узнаваемые ценности ,воспитательные ценности, арцахские народные сказки , эмоциональные переживания, чувство,убеждения, воображение.*

Keywords *- national pedagogics, high-value, national spirit, proper assessment, recognizable values,educational values, , Artsakh national tales, mental feelings, sense, persuasion, imagination.*

Э. Багдасарян, Е. Саркисян

УЗНАВАЕМЫЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ ЦЕННОСТИ АРЦАХСКИХ НАРОДНЫХ СКАЗОК

В данной статье, хоть и кратко, но освещаются узнаваемость, благородство, воспитательная ценность Арцахских народных сказок. На протяжении веков арцахский народ с помощью сказок, из поколения в поколение, воспитывал патриотизм, гуманизм, честность, трудолюбие, преодоление лени, страха, злости, алчности. Сказки сыграли огромную роль в воспитании в детях героизма; милосердия, храбрости, отваги, воли к преодолению сложностей, веру в трудящийся народ, в добро, в справедливость и правду.

E. Baghdasaryan, E. Sargsyan

RECOGNIZE AND EDUCATIONAL VALUE OF THE ARTSAKH NATIONAL TALES

The given article is devoted to recognition, precious and educational value of Artsakh national tales. For centuries, Artsakh people, educated patriotism, humanism, honesty, hard-working, overcoming laziness, fear, anger, greed from generation to generation,.

Tales have a great role instilling children heroism, compassion charity, courage, bravery, the will to overcome difficulties, faith in the working people, in kindness, in justice and truth.

Սույն ամսագրային հոդվածում, թեկուզ և համառոտակի, քննության են առնված Արցախի ժողովրդական հեքիաթների ճանաչողական, բարոյախրատական, դաստիարակչական արժեքը: Արցախի ժողովուրդը դարեր շարունակ զանազան հեքիաթների միջոցով մատաղ սերնդի մեջ դաստիարակել է հայրենասիրություն, մարդասիրություն, գթասրտություն, ազնվություն, աշխատասիրություն, խարազանել է ծուլությունը, վախկոտությունը, չարությունը, շահամոլությունը:

Հեքիաթները հսկայական դեր են կատարել երեխաների մեջ հերոսական գծերի արմատավորման ուղղությամբ, մշակել են համարձակություն, խիզախություն, դժվարությունները հաղթահարելու կամք, ներշնչել են ջերմ հավատ աշխատավոր ժողովրդի, բարու, ճշմարտության, արդարության նկատմամբ:

Հայ ազգային դպրոցում առաջ է քաշվում սովորողների կրթության, ազգային ոգով դաստիարակելու կարևորագույն խնդիրը: Դպրոցի վերաբերյալ ընդունված հիմնադրույթներում նաև նշվում է, որ ազգային դպրոցի խնդիրն է դաստիարակել հայրենասեր, հայրենիքին նվիրյալ սերունդ, որը լինի ոչ միայն ֆիզիկապես ուժեղ, գեղագիտական և բարոյական իմացություններով, այլ ունենա իր ժողովրդի պատմության, մշակույթի, նրա բանահյուսության, մաքառումների ու վերելքների մասին համապատասխան գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և իմացություններ: Սովորողների դաստիարակության միջոցներից կարևորագույնը հայ ժողովրդի, նրա արցախյան հատվածի ժողովրդական բանահյուսությունն է, որն ազգային մշակույթի հարուստ ու մեծարժեք բնագավառներից մեկն է և համարվում է ազգի պահպանիչը:Այդ տեսակետից ուսանելի է ազգային մեծ բանաստեղծ Հովի. Թումանյանի այն խորհուրդը, որ անհրաժեշտ է փրկել ժողովրդական հանճարով ստեղծված այդ գոհարները՝ վերապատմելով և մշակելով, որ «սա է ուղիղ ճանապարհը (բանահյուսության երկերի գրական մշակումը),որով հոսանք պետք է

տալ, ներս բերել,առողջ ժողովրդական ստեղծագործությունները և ուժեղ,հարուստ կենդանի լեզուն »:[4,102]Հայ ժողովրդի մշակույթի երախտավորները միշտ էլ բարձր են գնահատել ժողովրդական բանահյուսության դաստիարակչական դերն ազգի դաստիարակության գործում: Դեռևս իր ժամանակին Ղ.Աղայանը ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը համարել է ոչ միայն դաստիարակության միջոց, այլև երեխայի մտածողության զարգացման միջոցներ: Մեծ մտածող, գրական հասարակական գործիչ Մ.Նալբանդյանը խորհուրդ է տալիս. «Ազգային դպրոցը պիտի ուսուցանե ազգային մշակույթը, պատմությունը,գրականությունը, ավանդույթները, ազգային բանահյուսության արժեքները…»[5,257]

Հայոց Արցախական աշխարհն իր բազմադարյան պատմության տարբեր շրջաններում ընդգրկվել է Մեծ Հայքի ընդհանուր քաղաքական ու մշակութային ոլորտներում: Հայագիտության նվիրյալ գիտնականների անբասիր ուսումնասիրությունները վերստին հաստատել են (ընդդեմ թուրք վայ –պատմաբան կեղծարարների), որ արցախահայությունը նույն հայ ժողովուրդն է՝նրա անբաժանելի բաղադրամասը, ինքնուրույն պատմական ճակատագրով, նյութական և հոգևոր կյանքի յուրատիպ դրսևորումներով, ինքնատիպ մշակույթով և սեփական հայրենիքով:Աներկբա կարելի է ասել, որ հայ ժողովրդի բազմադարյան հարուստ բանահյուսության անբաժանելի մասն են կազմում նաև արցախ-յան հեքիաթները, որոնց տեղական երանգավորմամբ հատուկ են նույն օրինաչափությունները և ընդհանուր ազգային առանձնահատկությունները:

Արցախյան բանահյուսության հավաքմամբ անգնահատելի ծառայություն են մատուցել ազգագրագետները ու բանագետները:Նկատի ունենք Եր.Լալայանին(«Զանգեզուր,նյութեր ապագա ուսումնասիրության համար»,«Ազգագրական հանդես», գիրք 4, Թիֆլիս,1892), Ստ.Լիսիցյանին («Լեռնային Ղարաբաղի հայերը», 1981), Մ.Գրիգորյանին(«Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը»,1971), Ա.Ղանալանյանին («Ավանդապատում»,1969), մասամբ՝ Մ.Առաքելյանին, Ռ.Ղահրամանյանին («Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից », 1978), Լ.Հարությունյանին(«Նշխարներ Արցախի բանահյուսության», 1991) և ուրիշների:Հայաստանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվում պահպանվող նյութերից[2,326] տեղեկանում ենք նաև,որ 19 -րդ դարի երկրորդ կեսին՝ 1850 - 60 - ական թվականներից սկսած,Արցախի մշակութային կյանքի զարգացման շրջանում, մշակույթի նախանձախնդիր գործիչներ Բահաթրյան եղբայրները՝ Առաքելը նույն ինքը՝ ականավոր մանկավարժ Առաքել Բահաթրյանը, Ալեքսանդրը և Գրիգորը, արձագանքելով բանահավաք հրատարակիչ Տիգրան Նավասարդյանի հայրենասիրական կոչին՝մոռացությունից փրկել հայ ժողովրդական բանահյուսության գանձերը,Շուշի քաղաքի և հարևան գյուղերի բնակիչներից գրի առնել բանահյուսության տարբեր ժանրեր՝հեքիաթներ, անեկդոտներ, հանելուկներ,զրույցներ… և այլն, մեծ գործ են կատարել հայրենի երկրամասի բանահյուսության նյութերի հավաքման ու նրա մշակման ուղղությամբ: Հետագայում՝ 1882 թ., Տ.Նավասարդյանը Վաղարշապատում հրատարակում է Բահաթրյան եղբայրների և Շուշիի հայոց հոգևոր թեմական դպրոցի ուսուցիչների ու աշակերտների հավաքած արժեքավոր բանահյուսության ժանրերը: [1,68]

Պետք է նաև հիշատակել, որ անցյալի («Արարատ»,«Արձագանք»,«Մշակ»,«Նոր Դար»,«Ազգագրական հանդես», «Ղարաբաղ»,«Նոր կյանք» և այլն) և մերօրյա ամսագրերում ու թերթերում բովանդակալից ու հետաքրքիր հոդվածներով հանդես են եկել բանահյուսությամբ զբաղվողներ Հ.Թավրիզյանը, Գ. Շերմազյանը, Մ.Բարխուդարյանը, Կ.Մելիք Շահնազարյանը («Տմբլաչի Խաչանը») , Ա. Ղազիյանը, Ս. Իսրայելյանը և շատ ուրիշներ:Անշուշտ, վերոնշյալ և այլ աղբյուրներ աղբյուրագիտական հիմք են ծառայել անցյալի և մեր ժամանակի հետազոտողների համար:Հարկ ենք համարում նաև նշել այն հանգամանքը, որ այդ և ուրիշ հեղինակների՝բանահյուսության բազմաբովանդակ ժանրերին նվիրված ուսումնասիրություններում պատմաքննական տեսանկյունով վերլուծված են միայն բանահյուսության ձևավորման ու զարգացման շրջանների հետ կապված հիմնահարցերը:

Մենք շատ արժեքավոր ենք համարում նաև Վարդան Հացունու « Դաստիարակությունը հին հայոց մեջ» (1923), Վասիլ Հարությունյանի «Դաստիարակչական գաղափարները

ժողովրդական հեքիաթներում» (1959) հայ ժողովրդական մանկավարժության հիմնահարցերի ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները: Հայ ժողովրդական մանկավարժության առանձին հարցեր քննության են առնված նաև վաստակաշատ մանկավարժ գիտնականներ՝ Ար.Ալպոյաճյանի «Պատմություն հայ դպրոցի» (1946), Աբ. Մովսիսյանի «ՈՒրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության» (1958), Թ.Ջուհարյանի «Հայ գրականության մեթոդիկա» (1972), «Հայ մանկական գրականության պատմության ուրվագծեր» (1973) և այլոց ուսումնասիրություններում: ՈՒշագրավ է նաև, որ վերջին ժաանակներս նոր հետազոտողներ հայ ժողովրդական մանկավարժության առանձին հիմնահարցերին նվիրված ատենախոսություններ են պաշտպանել (Ն.Մարտիրոսյան, «Ժողովրդական բանահյուսության դերը սովորողների բարոյական որակների ձևավորման գործում», Ե.,2006), և հրատարակել բազմաբնույթ հոդվածներ «Մանկավարժական միտք», «Մանկավարժ», «Մխիթար Գոշ», «Նախաշավիղ» և այլ պարբերականներում: Մեր ժամանակների հրամայականն է նորովի ուսումնասիրել հայ ժողովրդի բազմադարյան հարուստ բանահյուսության անբաժանելի մաս կազմող արցախյան բանահյուսության ժանրերում արտացոլված ժողովրդական մանկավարժության հիմնահարցերը, որոնք մեծապես կհարստացնեն հայ ժողովրդի բանագիտությունն ընդհանրապես և որոշակիորեն կնպաստի նաև «հայ ժողովրդական մանկավարժություն» ամբողջական դասընթացի ստեղծման համար: Կարևոր ենք համարում նաև նշել,որ նվիրյալ բանահավաքների ջանքերով արցախյան բանահյուսության բարձրարժեք գործերը մոռացությունից փրկվելով ու հրատարակվեն, հիանալի նյութ կարող են դառնալ թե՛ դպրոցում և թե՛բուհում կրթադաստիարակչական բազմազան խնդիրների լուծման համար: Եվ ճիշտ նկատում է անվանի հոգեբան Ալբերտ Նալչաջյանը. «ՈՒսումնասիրել ժողովրդական մանկավարժության մշակույթը և գիտական մանկավարժության ոլորտ տեղափոխել այն մանկավարժական գիտելիքներն ու փորձը, որոնք մնայուն արժեք են ներկայացնում»[3,17]:Հիրավի, ներկա ժամանակներում մանկավարժական գիտության կարևորագույն նպատակներից է նաև ամենայն խորությամբ ուսումնասիրել ժողովրդի դաստիարակչական աշխատանքի դարավոր փորձը, գտնել դրա ռացիոնալ հատիկը կազմող առաջավոր գաղափարները և դրանցով հարստացնել մանկավարժության տեսությունն ու պրակտիկան: ՉԷ որ ազգային դպրոցի նոր հայեցակարգը պետք է հիմնվի մեր ժողովրդի մշակույթի հարուստ պատմության, այդ թվում ժողովրդական բանահյուսության պատշաճ գնահատման վրա, այսինքն պետք է ընդհանրացնել դարերի ընթացքում կուտակված կրթության ու հայեցի դաստիարակության իմաստությունն ու փորձը, մանկավարժական ավանդույթներն ու արժեքները, այն ամեն լավագույնը, որ ստեղծել է հայ ժողովրդական մանկավարժությունը, և միաժամանակ հաշվի առել մեր կյանքի պահանջներն ու զարգացման միտումները:

Բանահյուսության ժանրերում կյանքն արտացոլվում է մարդկային կերպարների, գործող անձերի,դրանց հատկանիշների,հարաբերությունների, խոհերի և զգացմունքների ցուցադրման միջոցով: Բնութագրվում և արժանի գնահատական են ստանում հերոսների ոչ միայն հոգևոր-բարոյական հատկությունները,այլև հումանիստական, հայրենասիրական հատկանիշները, ֆիզիկական ուժը, հնարամտությունը, խելքը:

Արցախյան բանահյուսության հնագույն ժանրերից է հեքիաթը: Դարեր շարունակ Արցախի ժողովուրդը զանազան հեքիաթների միջոցով մատաղ սերնդի մեջ դաստիարակել է հայրենասիրություն,ազնվություն,աշխատասիրություն,խարազանել է ծուլությունը, վախկոտությունը, չարությունը,շահամոլությունը: Հեքիաթները հսկայական դեր են կատարել երեխաների մեջ հերոսական գծերի արմատավորման ուղղությամբ. մշակել են համարձակություն, խիզախություն, դժվարությունները հաղթահարելու կամք, ներշնչել են ջերմ հավատ աշխատավոր ժողովրդի, բարու, ճշմարտության,արդարության նկատմամբ: Տեղին է հիշատակել հայ ուսուցչապետ Ղ.Աղայանի խորիմաստ միտքն այն մասին, որ հեքիաթը բարոյական և մտավոր զարգացման համար շատ նման է մայրական կաթին, որ մարդու հանճարի և տաղանդի սերմերը պետք է փնտրել նրա լսած հեքիաթներում: Ժողովրդի

մեծագույն մանկավարժի ստեղծած հեքիաթային կերպարները երեխայի մտքին ու սրտին են հասցնում իր ազգի ստեղծագործության ոգին,կյանքի նկատմամբ նրա հայացքները, ձգտումները:

Որպես ճանաչողական և դաստիարակչական արժեք ունեցող վառ օրինակ վկայակոչենք Արցախում ստեղծված հեքիաթներից մի քանիսը: «Մարդ» հեքիաթում արծարծված է մարդկությանը հավերժ հուզող թեման՝ կյանքի սերը և պայքարը մահվան դեմ:Կյանքից անմուրազ հեռացող մայրն անընդհատ մաքառում է մահվան դեմ՝ հետաձգելու այն, և ցանկանում է տեսնել իր զավակների բարօրությունն ու երջանկությունը:

Ըստ «Վեղը շատ չրչարե» հեքիաթի կենսափիլիսոփայության՝ աշխատանքում ամենաքաղցր բանը հողն է, ամեն երկրայինի սկիզբը,որից ծնվում են բոլոր բարիքները՝ հացը, ջուրը, աղը և այլն: Իմաստուն հեքիաթասացը մարդուն խորհուրդ է տալիս՝«աշկդ ծակ չը պահես, քո դուշմանդ քո աշկդ ա», «Ծառ շատ տնգե, համա շիլ չըղնիս քրիստոսա տունգը պուք տաս,քամուն պերած սերմը տնգիս»:Ձևավորելով ազնիվ, խելոք, քաջ ու հնարամիտ, ձեռներեց ու աշխատասեր մարդու իդեալը՝ հեքիաթասաց ժողովուրդն անխնա ձաղկում, դատապարտում և ծաղրում է մարդկային թերություններից հատկապես չարությունը,ագահությունը, («Թաքավերեն ըխճիկանը խոսկը»,«Երկու ախպեր»), ծուլությունն ու հիմարությունը («Մրթըկնեգ՝ ճոխտն էլ մի խելքու»),դրվատում բարիյացակամությունը «Ծիլկան» հեքիաթում, որում անձնազոհ,ճարպիկ, խելոք երիտասարդը կարողանում ՝ խաբել վիշապին և փրկել հայրենակիցների կյանքը:Այդ է պատճառը, որ երկրի թագավորը բարձր է գնահատում Ծիլկանին և իր աղջկան ամուսնացնում ՝ նրա հետ ու նրան դարձնում երկրի թագավոր: Ընդամենը «Ահմադ» հեքիաթի երկու էջում ժողովուրդը սքանչելիորեն ներկայացնում է քաղաքակիրթ մարդկության բոլոր ժամանակների վսեմ համոզմունքներից մեկը՝ բարեգործությանը պետք է պատասխանել երախտագիտությամբ, և դատապարտում է կամքի թուլությունը,աչքածակությունը և եսապաշտությունը[6,290]: Հեքիաթում փոքր եղբայրները հնարավոր չեն գտնում ոտնատակ տալ իրենց բարերարի տանը կերած աղ ու հացը…ու «մին պեժակ ճուրը» և սրբապղծել նրա աղջկա պատիվը:Սակայն նրանց միջնակ եղբայրը հանուն իր եսասիրական հաճույքի պատրաստվում է այդ շնությունը կատարել,որի համար էլ պատժվում է՝ զրկվելով հոր ժառանգությունից:

Բազմազան ու բովանդակալից է արցախյան հեքիաթների թեմատիկան,որում ընդգծված են կենցաղ,սովորություններ, ավանդություններ,ժողովրդի երազանքը,իդեալները և այլն: Հեքիաթներում արտահայտված ազգային դաստիարակության գաղափարները չեն ընկալվում որպես արագ մոռացվող ճանաչողական տեղեկատվություն,այլ հոգին ու բանականությունը պարուրող, խորապես ապրած համոզմունքներ, որոնց հիման վրա ձևավորվում է մարդու անձնական և հասարակական վարքագիծը:

Արցախը ունենալով յուրահատուկ աշխարհագրական դիրք, բնակլիմայական պայմաններ,յուրօրինակ սովորություններ ու զբաղմունքներ, դարերի ընթացքում ստեղծել է իր ինքնատիպ մշակույթը:Նրա բանահյուսական անբավ գանձարանն ընդգրկում է բազմաթիվ հրաշապատում հեքիաթներ, առակներ, ավանդույթներ,ավանդազրույցներ և ժողովրդական հանճարի ծնունդ այլ ստեղծագործություններ: Կասկած չի կարող լինել,որ դրանք կրթական ու դաստիրակչական մեծ արժեք ունեն ներկա ու գալիք սերունդների համար: Արցախի բանահյուսության մեջ մինչև այսօր պահպանված են մարդկանց մտածողության բնորոշ գծերը,բնության,հողի, ջրի, արևի,կրակի,ծառի,առանձին կենդանիների պաշտամունքի հետքերը,նախնիների ընտանեկան օջախի պաշտամունքը և այլն: Ժողովուրդը աճող սերնդին հեքիաթ պատմելով, իր առաջ որոշակի նպատակ է դրել՝դաստիարակել իր ժողովրդին որպես անձնվիրաբար ծառայող, ինքնազոհության պատրաստ մարդ:

Արցախի բանահյուսության բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանում ցայտուն կերպով է արտահայտված ժողովրդի բողոքը սոցիալական անարդարությունների դեմ:Հատակապես հեքիաթներում ժողովուրդն իր բողոքի ձայնն է բարձրացնում արդարությունը, մարդկային իրավունքները և ազատությունները ոտնահարողների դեմ և

որպես չարի մարմնացում՝ պատժում, կործանում է դրանց ներկայացուցիչներին:Արցախյան հեքիաթների բնորոշ առանձնահատկություններից մեկն էլ լավատեսությունն է: Հեքիաթներում դրական հերոսը գրեթե միշտ ծանր պայմանների մեջ է լինում, բայց երբեք չի հուսալքվում,զգում է իր գործի ճշմարտացիությունը, ժողովրդի համակրանքը, ձգտում է դեպի անմահության դափնին:Հեքիաթներում միշտ էլ դրական հերոսի համար ապահովում է բարոյական հաղթանակ, որով և իր սերունդներին բարու և արդարության դասեր է տալիս ու հաղթանակի հավատ է ներշնչում:

Չնայած հեքիաթներում դրսևորվող չափազանցություններին, նրանցում արտացոլվում են ժողովրդի մտածողության, հոգեբանության,սպասելիքների և երազանքների իրական պատկերները:Ամեն մի հեքիաթի մեջ կան իրականության տարրեր: Բարձր արժեքավորելով ժողովրդական բանահյուսությունը և առանձնապես հեքիաթը՝ Աղայանն այն համարել է ժողովրդի հոգեբանության ուսումնասիրության լավագույն միջոց:

Հեքիաթը ժողովրդական բանահյուսության ժանրերից ամենահինն է, այն իր հետ բերել է նախամարդը,բերել է պարզունակ ձևով:Նախամարդը հավատացել է գերբնական ուժերին (որոնք այն ժամանակ վախ էին առաջացնում):Գերբնական ուժերը տիրապետել են մարդուն, նրա մտածողությանը,հոգեկան աշխարհին,իսկ այդ պատմությունները հանդիսացել են ժողովրդական հեքիաթների սաղմերը:Լեզվի զարգացմանը զուգընթաց մարդն ընդունակ է դառնում վերացական մտածողության, երևան է գալիս մարդուն բնորոշ հատկություններից մեկը՝ երազելու ունակությունը, և այդ կարողություններն իրենց դրսևորումն են գտնում հեքիաթներում:

Հեքիաթը փոխանցվում է ուրիշ մարդկանց,սերունդներին՝իր մեջ խտացնելով նաև նրանց փորձը,իղձերն ու ցանկությունները և, շուրթերից շուրթ անցնելով,հասնում է մեզ որպես կյանքը գեղարվեստորեն արտացոլելու միջոց, հոգևոր սնունդ, որը շատ սերունդներ է սնուցել և կսնուցի:

Հեքիաթները՝ որպես համով հոտով գրված ստեղծագործություններ, կլանել և կլանում են բոլոր տարիքի մարդկանց, լինեն նրանք մանուկ թե ալեհեր, մեծ թե փոքր: Մեծ է հեքիաթի դաստիարակչական նշանակությունը և զուր չէ, որ այն հանդիսացել է մի <<հրաշք բանալի>>,որի առջև բաց են եղել բոլոր դռները՝ դեպի տիեզերք,երկրի ընդերք,բնություն, աշխատանք, մարդկային սիրտ ու զգացմունքներ:Այն դպրոցի բացակայության պայմաններում թռիչք է տվել մանկան մտածողությանն ու երևակայությանը,հարստացրել նրա խոսքը, դաստիարակել նրան, սեր արթնացրել բարու, անմեղի, արդարի և ատելություն՝ չարի, դաժանի,անիրավացիի նկատմամբ՝ ինչ-որ տեղ փոխարինելով դպրոցական ուսուցմանը:

Նահապետական բազմանդամ ընտանիքներում հատկապես ձմռան ցրտաշունչ օրերին խլվլացել են մանուկները, աղմկել,սակայն բավական է եղել, որ մանուկները լսեին <<եղել է, չի եղել>> արտահայտությունը,որպեսզի անմիջապես հանգստանային,գային նստեին պապի կամ տատի մոտ՝նահապետական բուխարու կամ թոնրի շուրջ, և ծայր են առել հեքիաթները՝ոգևորող, զայրացնող, ուրախացնող ու ատելություն առաջացնող:Նրանց աչքերը փայլել են, կայծկլտացել, նրանց աչքերի առջև բացվել են կախարդական աշխարհի դռները, զմրուխտ դուշի և գորգի վրա նստած մտքով սլացել են Սև,Կարմիր թագավորություններ:Նրանց թույլ և փոքրիկ ձեռքերը բռունցքվել են չարի դեմ, հողագործին խաբող տերտերի ու տիրոջ դեմ, մանկանը տանջող խորթ մոր դեմ և թուլացել են, ծափ զարկել, երբ հաղթել է բարին, արդարը, երբ չարը կործանվել է:Արտասվել է մանուկը, երբ հանկարծ բարին հանդիպել է անհաջողության, տանջվել:

Հեքիաթները եղել են մասնագիտություններ ու արհեստներ ընտրելու ու տարածելու միջոց, գաղափար են տվել աշխատանքների տեսակների ու գործիքների մասին և սեր արթնացրել վերջիններիս նկատմամբ:Հեքիաթը երեխաների մեջ զարգացնում է ոչ միայն համամարդկային, այլև ազգային, հայրենասիրական զգացմունքներ:Ծնողասիրության թեման ներծծված է հայկական հեքիաթներում, զրույցներում պատմվածքներում:Այն ազգային բնորոշ հատկանիշներից է:

Շատ բնորոշ է հեքիաթի հեղինակ ժողովրդի երազանք-ցանկությունը՝<<հանց բեդար խելունք խոսկը խելունք կործ տեռնար, ըստածու կյիրավը դաստի կդարվար, խելունքը միշտ թագավեր տեռնար>>:

<<Պիճ ապերը>> հեքիաթում ժողովուրդ հեղինակը շարունակում է իր կենսափիլիսոփայությունը՝ եզրակացնելով, որ <<պճոթունը (Ճարպկությունը) վեր կա, ամեն հինչ ա, ետե ճելլի աշխարքս ուննական ա>>:

<<Մարը>> հեքիաթում արծարծված է մարդկությանը հավերժ հուզող թեմա՝ կյանքի սերը և պայքարը մահվան դեմ:Կյանքից անմուրազ հեռացող մայրն անընդհատ մաքառում է մահվան դեմ՝ հետաձգելու այն, և ցանկանում է տեսնել իր զավակների երջանկությունը :

Ըստ <<Վեղը շատ չրչարե>> հեքիաթի կենսափիլիսոփայության՝ աշխարհում ամենաքաղցր բանը հողն է, ամեն երկրայինի սկիզբը, որից ծնվում են բոլոր բարիքները՝ հացը, ջուրը,աղը և այլն:

Իմաստուն հեքիաթասացը մարդուն խորհուրդ է տալիս<<աշկդ ծակ չի պահիս, քու դուշմանդ քու աշկդ ա>> , <<ծառ շատ տնգե, համա շիլ չըղնիս քրիստոսատունգը պուք տաս, քամուն պերած սերմը տնգիս>>:

Ոսկեվազի հնագույն հայրենիքներից մեկի՝ Արցախի ժողովուրդն իր թագավորներից մեկի բերանով իմաստուն խորհուրդ է տալիս ոչ թե ոչնչացնել խաղողը, գինի չպատրաստել ու գինի չխմել, այլ այնքան խմել,որ մեռնելու փոխարեն կարողանա առյուծ սպանել:<<Ա ժողովուրթ, խմիշքը քըշեցեք, ամմա խմեցեքյ վըեչ թա վըեր ընգելի մըռնելի հետե, այլ առյուծ ըսպնելի պետե>>:(<<Առյուծ սպանող տղան>>)

Բնորոշ է այն հանգամանքը, որ մարդկային արժանիքները և թերությունները բնութագրելիս հեքիաթասաց ժողովուրդը խտրականություն չի դնում կանանց և տղամարդկանց միջև՝ դրանով ընդգծելով երկու սեռի նկատմամբ էլ ունեցած իր մարդկային հավասարարժեք վերաբերմունքը:Այսպես, <<Իտի կնեգյ էլ ա ինում>>, <<Օրթնված կնեգյ>>, <<Տոն տինողը կնեգյ ա>>, <<Թաքավըերեն ըխճըկանը խոսկը>> հեքիաթներում արտահայտված է ամուսիններին հավատարիմ լինելու գաղափարը և հայ կնոջ ու ընտանիքի վերաբերյալ ժողովրդի կենսափիլիսոփայությունը՝ <<տըղրմարթին հարստությունը կնեգյն ա, նրան ա պատկանում տոնն էլ, տըեղն էլ …>>, <<կնեգյը պիտի խելունք ինի, մինն էրկու անէ …>>:Եվ ահա այդ իմաստուն, հեռատես և ընտանեսեր կանանց շնորհիվ է, որ դարեր անընդհատ հարատևել է հայի օջախը՝ դառնալով համայն ազգի գոյատևման սյուներից մեկը:Այդ է պատճառը,որ << Օվչի Փիրումը>> հեքիաթում ժողովուրդ հեքիաթասացը, նկարագրելով որսորդ Փիրումի և իր կնոջ միջև ծագած հիմար վեճը, արձանագրում է, որ անցյալներում ընդունված չէր արցախցու ընտանիքում կնոջից բաժանվելը և դառնությամբ ավելացնում է, որ << կնեգյ տուս քցիլը տրանա ետև ա ադաթ ընգյալ >>:

Ձևավորելով ազնիվ, խելոք, քաջ ու հնարամիտ, ձեռներեց ու աշխատասեր մարդու իր իդեալը՝ հեքիաթասաց ժողովուրդն անխնա կերպով դատապարտում և ծաղրում է մարդկային թերություններից հատկապես չարությունը,ագահությունը (<<Թաքավըերեն ըխճըկանը խոսկը>>, <<Պոզը>> ,<<Երկու ախպեր>>(ծուլությունն ու հիմարությունը) (<<Մրթըկնեգ՝ ճոխտն էլ մին խելքու>>), (ժլատությունն ու աչքածակությունը) (<<Ղազը>>), սեփական խելքի պակասը (<<Հփուռկես>>):

Արցախյան բանահյուսության մյուս ժանրերում՝ ավանդույթներում(«Վանք գյուղի մասին ավանդույթը»), («Շուշի քաղաքի մասին»), («Ծիարշավ»), երգիծական զրույցներում («Տավար պահողը»,«Խորամանկ ծառան»),հանելուկներում՝ («Հալբաթ եկալ ա, վեր եկավ վըեչ»), («Մահ կամ ազդեցություն», «Խե տուս քըցից թաքավորը պահակին» [7,128] և այլն) աչքի են ընկնում մարդասիրության, հայրենասիրության, մարդկային արժանապատվության և այլ առաքինությունների գաղափարները, որոնցով այնքան շռայլորեն օժտված են հայ ժողովրդի այս հատվածի բնակիչները:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը, ի թիվս հեքիաթների, լայն հնարավորություն է տալիս հասունացող սերնդին՝ առնչվելու բարու և չարի հետ,մարդու բարոյական ինքնագիտակցության, պարտքի, խղճի,պատասխանատվության, արժանապատվության, մարդու հուզական

ապրումների հետ և դրանց ազդեցության ներքո կազմակերպել իրենց անձնական և հասարակական վարքը:

Արցախյան բանահյուսության հարուստ ժանրի՝բնագրի լեզվով ու ծավալով անփոփոխ գրի առնված (բանահավաքությամբ ձեռք բերած նորահայտ նյութերի) նմուշների մեր ուսումնասիրությունը հաստատում է այն ճշմարտությունը, որ Հայոց Արևելից կողմանց՝ Աղվանից ողջ հայ աշխարհի՝ պատմական Արցախի՝ դարերով ստեղծված ժողովրդական բանահյուսությունը սկիզբ է առել կյանքի իմաստուն ու բազմահարուստ ակունքներից, որոնցից սնունդ են առել ժողովրդի առաջին պատկերացումները և մարմնավորել հեքիաթների, առած-ասացվածքների, հանելուկների, երգերի և այլ բնույթի բանավոր ստեղծագործությունների մեջ:Սրանք դարեր ուղեկցել են ժողովրդին և կրթել ու դաստիարակել նրան:Առանձնապես սերնդեսերունդ անցնելու իրավունք են ստացել ժողովրդական այն ստեղծագործությունները, որոնք համապատասխանել են մատաղ սերնդի ըմբռնումներին, բավարարել են նրանց հետաքրքրությունները: Ժողովուրդը՝ իբրև իմաստուն ուսուցիչ, առաջինն է մտահոգվել երեխայի հետաքրքրություններով,նրան իր իմաստուն խոսքով գբաղեցնելու և զվարճացնելու,հայեցի ոգով ուսուցանելու և դաստիարակելու գործով: Արցախյան բանահյուսության տարբեր ժանրեր իրենց հայրենաշունչ արտահայտչամիջոցներով կատարել են անգնահատելի դեր երեխայի ու պատանու լեզվի, մտածողության ու երևակայության զարգացման գործում և այսօր էլ կազմում են մանկան ընթերցանության որոշակի բաժինը:

Այսպիսով՝ այս հոդվածում, թեկուզ և համառոտակի,քննության են առնված Արցախի ժողովրդական բանահյուսության, մասնավորապես հեքաթների մեջ արտացոլված ազգային դաստիարակության մի քանի հարցեր, որոնցով, անշուշտ,չի սպառվում հիմնահարցի գիտական մեկնաբանումը, այն պահանջ է առաջադրում հետագայում ավելի մանրամասնորեն ուսումնասիրելու և ամենայն խորությամբ, գիտամանկավարժական տեսանկյունով լուսաբանելու ու առաջադրելու այն տեսակետներն ու մեթոդները, հիմնադրույթները,որոնք այսօր ընդունելի են գիտական մանկավարժության համար:Այդպիսի ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես բանագիտության, ազգագրության, հոգեբանամանկավարժական գիտությունների բնագավառում,այնպես է ազգային դաստիարակության նոր համակարգի մշակման և կրթադաստիարակչական գործնական աշխատանքներում:

Գրականություն

1. Ա.Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գիրք 7, Թիֆլիս, 1891;
2. Հայաստանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսության արխիվ.ֆ. 2. 2904-3175 և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հեղինակի անվան ֆոնդում:
3. Ա.Նալաչանջյան, Ս.Մկրտչյան, Էթնիկական մանկավարժություն,»Զանգակ«,Ե.2003:
4. Հովհ.Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Ե. 1951::
5. Մ.Նալբանդյան, Հրապարակախոսական երկեր, Ե. 1987:
6. Մ.Գրիգորյան, Լեռնային Ղրաբաղի բանահյուսությունը, ՀՀ ԳԱԱ հր..Ե.1971
7. Լ.Հարությունյան Նշխարներ Արցախի բանահյուսության . Ե, 1991:
8. Ա. Ղանալանյան, ժողովրդական բանահյուսության մի քանի հարցեր, Ե, 1954:

Տեղեկություններ հեղինակների մասին.

Էլլադա Բաղդասարյան, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ
e-mail: gayangayan683@mail.ru

Եվգենյա Սարգսյան, Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտի պաշտոնակատար
e-mail:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ. Գ.Հ.Հարությունյանը:

ՀՏԴ 378.14 Մանկավարժություն

ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Էլլադա ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր *- Ազգային մշակույթ, համամարդկային, ազգային ոգի, ժողովրդական բանահյուսություն, մարդասիրություն, ազգային ավանդույթ, հոգու առաքինություն, հոգևոր արժեք, ազգային ապրելակերպ, ստեղծագործական կարողություններ, աշխարհայացք:*

Ключевые слова *- Национальная культура, общечеловеческий, национальный дух, национальный фольклор, филантропия, национальная традиция, душа добродетели, духовная ценность, национальный образ жизни, творческие способности, мировоззрение.*

Keywords *- National culture, universal human, national spirit, national folklore, philanthropy, national tradition, the soul of virtue, spiritual value, national lifestyle, creative abilities, world view.*

Э. Багдасарян

ОБЩЕЧЕЛОВЕЧЕСКИЕ ЦЕННОСТИ В АРЦАХСКОМ НАРОДНОМ ФОЛЬКЛОРЕ

В статье хоть и очень сжато, но освещаются некоторые вопросы национального воспитания проявляющиеся в жанрах арцахского фольклора. Цель статьи-показать, что арцахский фольклор имеет не только национальное, но и общечеловеческое значение, в котором особое место занимают идеи арцахского фольклора народной педагогики, приемлемые также для научной педагогики. Общечеловеческие ценности присваиваются в притяжении всей жизни . Это очень важно, сочетание национальных и общечеловеческих ценностей . Значит национальное воспитание включает в себе общечеловеческие ценности.

E. Baghdasaryan

HUMAN VALUES IN ARTSAKH NATIONAL FOLKLORE

The article is devoted to some problems of national upbringing in the form of folklore. The aim of the scientific article is to show that Artsakh folklore has not only national but also human implication; ideas of national pedagogics have a special role and are applied in scientific pedagogics as well. Human values are assimilated during the whole life. Universal human and national values should be combined. Thus national upbringing should include universal human values as well.

Սույն ամսագրային հոդվածում համառոտակի քննության է առնված ազգային և համամարդկային արժեքները արցախյան ժողովրդական բանահյության տարբեր ժանրերում: Հոդվածի նպատակն է ցույց տալ, որ Արցախի ժողովրդական բանհյուսությունն ունի ոչ միայն ազգային, այլ նաև համամարդկային նշանակություն, որտեղ առանձնահատուկ տեղ են գրաղեցնում ժողովրդական մանկավարժության գաղափարները, որն ընդունելի են նաև գիտական մանկավարժության համար:Համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում:Շատ կարևոր է ազգայինի և համամարդկային արժեքների մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ:

Հայոց պետականության ամրապնդման նպատակով անհրաժեշտ է դպրոցի կրթության և դաստիարակության բովանդակությունը հագեցնել ազգային մշակույթի արժեքներով՝ միաժամանակ ընդգծելով համամարդկայինը: Ամեն մի սերունդ մի օղակ է անցյալի և ապագայի միջև և ապահովում է ինչպես տվյալ համակարգին բնորոշ արժեքների հաջորդականությունը, այնպես էլ փոփոխումը:

Սովորողների դաստիարակության համար կարևոր է ազգային մշակութային արժեքները ճանաչելու, վերաիմաստավորելու, երեխաներին ազգային ոգով դաստիարակելու անհրաժեշտությունը: Այսօր շատ կարևոր է ապահովել նոր սերնդի դաստիարակությունը՝ ձևավորված ազգային հոգեբանությամբ, ազգային չափանիշներով ու ըմբռնումներով, առանձնահատկություններով: Ազգային արվեստի, կենցաղի, խորհրդանիշների, հայրենի բնաշխարհի յուրահատկությունների, ժողովրդական բանահյուսության հետ ծանոթությունը, հաղորդակցումը դա նպաստում է սովորողների

ազգային բարոյական հիմքերի ձևավորմանը, որը միշտ էլ եղել է մանկավարժական գիտության հիմնական հիմնահարցերից մեկը:

Մարդասիրության ուղին անցնում է բարոյական նորմերի, հայրենասիրության ճանաչողության, պատմության հերոսական դրվագների գնահատման միջով՝ ուղեկից ընտրելով նաև ազգային ավանդույթները: Հայրենասիրության գաղափարը, հայրենիքին նվիրված լինելը հատկապես ամրապնդում է անձի էությունը, ուժ ու կորով ներարկում նրան՝ որպես հոգու առաքինության ամենաառաջնային դրսևորումներից ամենակարևորը: Դա իրականացվում է փոքր տարիքից:

Արդի ժամանակաշրջանում սրվել է հետևյալ հիմնախնդիրը՝ ինչպես մտնել համամարդկային կյանք՝ չկորցնելով մեր մշակույթի հոգևոր արժեքները, չշեղվելով ու չգնալով ազգավերացման ուղիով:

Ազգային և համամարդկային արժեքները յուրացվում են ողջ կյանքի ընթացքում ոչ միայն հատուկ այդ նպատակին ծառայող քարոզչության ու տարաբնույթ գործունեության ընթացքում: Մարդն ընդօրինակում է ազգային ապրելակերպը, յուրացնում լեզուն, մշակույթը, հոգեբանությունը և բազմաթիվ այլ որակներ՝ աստիճանաբար ձևավորվելով որպես տվյալ ազգի լիարժեք անդամ: Ազգային դաստիարակությունը ձևավորում է հայ մարդուն, սակայն համամարդկային արժեքներն իր մեջ չամփոփած հայը չի կարող լինել իր ազգի լիարժեք անդամ: Հայ դպրոցի, առհասարակ հայերի դաստիարակության կարևորագույն խնդիրն է՝ ապահովել ազգայինի և համամարդկայինի մեկտեղումը: Ուրեմն ազգային դաստիարակությունն իր մեջ պետք է ներառի նաև համամարդկային արժեքներ:

Մանկավարժությունը գիտություն է դաստիարակության մասին, անհատին զինում է դարերով կուտակված գիտական իմացությամբ նրա մեջ պատվաստելով ընդունակություններ, հմտություններ, ստեղծագործական կարողություններ, ձևավորում է գիտական, հոգևոր աշխարհայացք, բարոյական, զգացմունքային համոզմունքներ, ըմբռնումներ, հասարակական հաղորդակցման և վարքի դրսևորման համապատասխան իրավիճակներ: Այս թվարկված որակները պատմական զարգացման ընթացքում ենթարկվում են որոշակի ձևափոխումների՝ իրենց վրա կրելով ժամանակի սոցիալ քաղաքական, գիտական առաջընթացի և կյանքի պայմանների կնիքը:[1]

Բարձր բարոյական և գեղագիտական արժեքների շտեմարան է արցախյան բանահյուսությունը: Արցախյան ժողովրդի մեծագույն ստեղծագործություններում նկարագրված են արցախյան ժողովրդի հոգեբանական կերտվածքը, աշխարհընկալումը, մարդու և մարդկային հարաբերությունների հումանիստական գաղափարները: Արցախյան ժողովրդի հույզերը, զգացմունքները պատկերավոր լեզվով արտահայտված, հոգու ջերմությամբ ստեղծում են մնայուն արժեքներ ընթերցողների շրջանում: Դրանք արցախյան ժողովրդի գեղարվեստական մտքի փայլուն էջեր են , մտքի վիթխարի թռիչքներ: Արցախի ժողովուրդի հերոսական ոգին միշտ հույսերով և տագնապներով է նայել ապագային՝ աչքի ընկնելով իր լավատեսությամբ:

Աշխարքըս հաղուղի վազ ա,
Պահիլ միքյ շորերնիտ թազ ա՞
Կյեցիքյ, ման եկիքյ ծըծըղեցիքյ,
Գյանքը կարճ ա, վըռազ ա:

[1] Տես՝ Գևորգյան Ս.Ա. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, 2002, էջ 31:

Արցախյան ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրի ստեղծագործություններում նկարագրված են հերոսական եղելություններ, լիարժեք կերպով տրված են ժողովրդի կյանքը, նրա կենցաղը, ավանդույթները, ազգային դիմագծերը, նրա ազատատենչությունը, հայրենասիրությունը, ուղղամտությունը, պարզությունը, դիմացկունությունը, լավատեսությունն ու հավատարմությունն իր հողին:

Պրենը հարայ մադաթ ա,
Եվ հինչ կանին, բեդաթ ա,
Լավ տոնը-տրեդ պահիլը
Ղարաբաղում ադաթ ա:

Մարդու գիտակցության բարձր արժեքների համակարգի մեջ են մտնում՝ հայրենասիրությունը, աշխատասիրությունը, մարդասիրությունը և այլն: Բանահյուսության բոլոր ժանրերում տեղ են գտել համամարդկային արժեքների դրսևորման օրինակներ: Առանձին ստեղծագործություններում արտահայտվում են մարդկային հարաբերությունները: Միջանձնային հարաբերություններում արժևորվում է արդարությունը, բարին, մարդասիրությունը, իմաստությունը:

Մարթ կա բախտան փախչըմ ա,
Մարդ կա հոքին տանջըմ ա,
Ըսորըն էքուցվա մի քըցիլ
Գյանքը վըռազ փախչըմ ա:

«Դաստիարակության ժողովրդական ավանդույթները,- գրում է ԿԴ. Ուշինսկին,- գալիս են նրա պատմության խորքերից և գտնվում են նրանից անդին»:[1]

Ազգային դաստիարակությունը ելնում է անձնավորության զարգացման և դաստիարակության գործում միջավայրի կարևոր դերի ըմբռնումից: Մարդը կարող է դաստիարակավել միայն իր հարազատ միջավայրում՝ յուրացնելով իր նախնիների փորձն ու ժառանգությունը, ժողովրդական բանահյուսությունը: Բնական է, որ նա այդ միջավայրում կդաստիարակվի տվյալ մշակույթը պաշտպանելու ոգով:

Ազգային դաստիարակությունը չի հակասում համամարդկային դաստիարակության պահանջին, ավելին, ազգային դաստիարակությունը կարող է կրել համամարդկային դաստիարակության իդեալը և լիովին ընդունել համամարդկային արժեքների առաջատար դերը: Ավելին, համամարդկայինը նույնպես ազգային է և կոնկրետ ազգայինի ամենաարժեքավոր տարրերի համալիր է, որով յուրաքանչյուր ազգ գնում է դեպի համամարդկային մշակութային տիրույթ. փորձելով յուրացնել համամարդկայինը՝ միաժամանակ հարստացնում է այն:[2]

Այսօր վտանգված է սովորողների ազգային գաղափարախոսությունը և նկատվում է նահանջ ազգային որոշ արժեքներից: Անհրաժեշտ է դպրոցի կրթադաստիարակչական համակարգում բովանդակային հագեցվածություն ազգային մշակութային արժեքներով: Ազգապահպան գործում վկայակոչում ենք հայոց մեծերին և արժեքավոր հղումներով կատարում եզրահանգումներ, նշելով, որ գրեթե բոլոր դարաշրջաններում ժողովուրդը ջանացել է իր ստեղծագործական, իմացական արգասիքով ամրապնդելու ազգային ոգին, հպարտությունը մարդասիրությունը, հայրենիքի գաղափարն ու այդ գործին անմնացորդ նվիրվելը: Դպրոցի կարևորագույն նպատակն է նոր սերնդի ներքին, բարձր

[1] Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ.2, Ե., Հայպետհրատ, 1959, էջ 604
[2] Տես՝Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, 2-րդ գիրք, 2005, էջ 111:

համոզվածության կերտումը, ազգային արժեքների, ավանդույթներին, սովորույթների ձեռքբերումն ու պահանումը:

Արցախի ժողովրդի ազգապահպան գործում մեծ է արցախյան ժողովրդական բանահյուսության դերը: Հատկապես այն ժամանակ, երբ ազգային դաստիարակության ոլորտում նկատվում է ազգային արժեքների, մտածելակերպի, բարոյական նորմերի համընդհանուր նահանջ:

Արցախյան բանահյուսությունը ժողովրդի ոչ միայն մշակութային հարստությունն է, այլև նրա հոգևոր գանձարանը, որի արժեքները ըստ արժանվույն գնահատելուց հետո պարտավոր ենք այն խնամքով հանձնել սերունդներին:

Արցախյան բանահյուսությունն աչքի է ընկնում իր խոսքի անկեղծությամբ, անմիջականությամբ, մարդկային նուրբ թախիծով, բայց և լավատեսական ոգով, գեղարվեստական բարձր արժանիքներով և համամարդկային արժեքներով:

Որպես անձնավորություն՝ մարդը ձևավորվում է հասարակական հարաբերությունների որոշակի համակարգում նպատակասլաց ու բազմակողմանի դաստիարակության միջոցով:

Ամբողջ սերնդի աշխարհայացքի ձևավորման ու վարքագծի մշակման, գաղափարական գեղագիտական, հոգևոր-բարոյական դաստիարակության, կամքի կոփման ու զգացմունքների հղկման, հուզաշխարհի ազնվացման, հոգևոր հարստությունների կուտակման անսպառ ակունք է Արցախի ժողովրդական բանահյուսությունը: Այն միաժամանակ նաև ճանաչողական և ներշնչաքի զորեղ աղբյուր է:

Այն, ինչ ստեղծել են մեր նախնիները, հեշտ ճանապարհով ձեռք չի բերվել: Եղել է իսկական անձնվիրություն և անշահախնդրություն: Իսկ ստեղծածը պաշտպանելու և կրկնապատկելու համար ներկա սերունդը պետք է սրբորեն պահպանի մեր նախնիների ավանդները: Դրա համար մենք՝ մանկավարժներս, պետք է մեր սաներին դաստիարակենք այնպես, որ նրանք պաշտպանեն ազգային և համամարդկային արժեքները, իրենց ազգը, երկիրը, շրջապատի բնությունն ու կենդանական աշխարհը, ճանաչեն ու գնահատեն գեղեցիկը, ունենան գիտակցական կարգապահություն, թույլերին ու կարիք ունեցողներին օգնելու պատրաստակամություն, լինեն բարձր մակարդակի առաքինություններով օժտված բարոյական անձնավորություն, կելեկտիվի իսկական անդամ և հայրենիքի համար կյանքը զոհելու պատրաստակամությամբ օժտված քաղաքացի:

Արցախյան ժողովրդական բանահյուսության մեջ աչքի են ընկնում մարդասիրության , բարոյականության, հայրենասիրության և այլ առաքինությունների գաղափարները, որոնցով այնքան շռայլորեն օժտված են Արցախի մեծ ու փոքր հայ բնակիչները:

Դաստիարակությունը, ըստ Ուշինսկու, ոչ միայն պետք է զարգացնի մարդու գիտակցությունը, մտածելակերպը և տա նրան տեղեկությունների որոշակի ծավալ, այլև, պետք է բոցավառի լուրջ աշխատելու ծարավ, առանց որի նրա կյանքը չի կարող լինել ոչ պիտանի, ոչ էլ երջանիկ:

Արցախյան ժողովրդական բանահյուսությունը լայն հնարավորություն է տալիս փոքրերին և մեծերին՝ առնչվելու բարու և չարի հետ, մարդու բարոյական ինքնագիտակցության բովանդակության, պարտքի, խղճի, պատասխանատվության, արժանապատվության, մարդու հուզական ապրումների հետ և դրանց ազդեցության ներքո կազմակերպելու իրենց անձնական հասարակական վարքը:

Բանահյուսության մեջ դրական հերոսը բարության մարմնավորումն է: Նա ոչ միայն մեծ մարդասեր է, աշխատում է նվիրվել բարեկամներին ու հայրենակիցներին, այլև մեծահոգի է նույնիսկ իր թշնամիների նկատմամբ: Բարություն սերմանելու ճանապարհին նա դիմում

է զոհողության, միևնույն ժամանակ հոգեկան ծանր ապրումներից հետո նա կարողանում է ներել իր թշնամիներին, նույնիսկ կյանք շնորհել նրանց: Դա պատճառաբանվում է նրանով, որ ժողովուրդը մեծահոգի և հոգեկան զգացմունքներով հարուստ է:

Արցախյան բազմաբովանդակ բանահյուսության հեքիաթներում տարբեր երանգներով իրենց դրսևորումն են գտել ամուսնական հարաբերությունները, որոնցում ժողովուրդն անխնա դատապարտել է սրբապղծությունն ու օրինախախտումները և փառաբանել առաքինությունը, հավատարմությունը և օրինապահությունը:

Արցախյան ժողովուրդը, քննադատելով հասարակության մեջ տեղ գտած անբարոյականությունը և փառաբանելով ընտանիքներում հավատարմությունը, սերունդներին դաստիարակում է մարդկային վեհ, առաքինի զգացմունքներվ: Ընտանեկան առաքինի հարաբերությունների հավատարմության և անձնազոհ սիրո հարցը միշտ էլ եղել է և մնում է մեր ժողովրդի ուշադրության կենտրոնում: Մեծ գերդաստանի հարսերը պատրաստվում էին անկողինները պատրաստել քնելու համար, այդ պահին դրսից ոտնաձայն է լսվում, տան նահապետը տղաներից մեկին ասում է.«Դուրս եկ, տես ով է, գուցե օտար մարդ է, անհարմար է համարում ներս մնտնել, ներս հրավիրիր, դրսում կմնա, կսառչի, կմահանա»:

Տղան դուրս է գալիս, տեսնում, իրոք, մի մարդ դռան շեմից ետ է դարձել, ընդ որում, ոտնահետքերից երևում է, որ հսկա տղամարդ է եղել: Նրա ոտնահետքերով գնում է, բայց չկա ու չկա: Գյուղից բավականաչափ հեռանում է, թեքվում, նորից գնում է, տեսնում՝ քարանձավի մեջ նստած է մի սպիտակահեր ծերունի, որի մորուքը հասնում է մինչև գոտկատեղ: Ծերունին սովորական մարդու նման չէ, ունի ահավոր տեսք:

- Ինչու ես եկել նստել այս սառնամանիքում, կմրսես, կհիվանդանաս: Հայրս ուղարկել է, որ քեզ տանեմ մեր տուն:

-Ես մարդ չեմ, ես մահն եմ, եկել եմ տնից մեկին հետս տանեմ: Գնա, հորդ ասա, ում է ուզում, որ տանեմ, -ասում է նա:

Տղան վերադառանում է տուն և պատմում լսածն ու տեսածը : Ընտանիքը բաղկացած է լինում յոթանասուն-ութսուն հոգուց: Ամենափոքր հարսը, որ, թեքված օրորոցին, երեխային կերակրում է, խախտելով նահապետական օրենքը, բարձրաձայն ասում է «Մահին ասա՝ մեր ընտանիքից ում որ ուզում ես, տար, բայց մեր սերությունը չտանես»:

Տղան վերադառնում է մահի մոտ և այդպես էլ ասում է: Մահը պատասխանում է.«Դե, որ դուք այդքան սիրով եք ապրում, ձեր տնից ոչ մեկին չեմ տանում, այդպես էլ սիրով ապրեցեք»:

Ամենուր հաղթում է մաքուր ու անաղարտ սերը, առանց որի ամուր ընտանիքներ լինել չեն կարող:Կնոջ հավատարմությանն է նվիրված <<Օրթնված կընեգյը>> հեքիաթը: Սյուժեի զարգացման հետ զարգանում են նաև հերոսները՝ ամուսիններ Մարդրուսը և Շարմաղը:

Տղան, մոր խորհրդով փախչելով դահիճ հորից, հանդիպում է Շարմաղին, ամուսնանում հետը: Բարդ իրավիճակների մեջ Շարմաղը չի դավաճանում օտար աշխատանքի մեկնած իր ամուսնուն: Տառապանքի ու փորձության մեջ ավելի է ջերմանում Շարմաղի սերը: Վերջինիս ազնվության ու խելքի շնորհիվ Մարդրուսը և ինքը իշխում են թագավորության վրա, վայելում իրենց սերը:

Փորձառու ուսուցիչը է ժողովուրդը, և նրա հորինած հեքիաթների մի մասը դարձել է հավերժության զուգորդ և ուղեկցում է սերունդներին որպես փորձ ու խորհուրդ: Երջանիկ է այն ընտանիքը, որի հարսը խելոք է, աշխատասեր, ընտանիքի անդամների միաբանությունն ապահովող, մեծի և փոքրի տեղն իմացող: Այս գաղափարների հյուսվածքն է «Պուճուր հարսը», հեքիաթը, որտեղ արցախահայությունը խտացրել է

ընտանեկան իր կենսափորձը և անցագիր տվել դեպի դարեր: Աղքատ ընտանիքից աղջիկը գալիս է հարուստ ընտանիք և այնպես է դրսևորում իրեն, որ երեք տարի հետո տան ղեկը հանձնում են նրան, ում շնորհիվ էլ ընտանիքն ավելի է հարստանում: Իսկ ինչի մեջ է տան երջանկությունն ու ամրությունը: Դրան պատասխանում է հեքիաթի ավարտը հարսի շուրթերով.

Սորա ետը հինչը ասեք էն կանեմ:
Վըեր սեր ու միաբան
Մեզ էխնողը չի ինի,
Մունք վըեշ մին կործում ամալ չընքե:

Բազմաթիվ խաղիկկներում ժողովուրդ-դաստիարակը երիտասարդներին խորհուրդ է տալիս ստեղծելու ճշմարիտ, անկեղծ սիրո վրա հենվող ընտանիք, սրբությամբ պահել և պահպանելու ընտանեկան հարաբերությունները, քանի որ Արցախի ժողովրդի համար «Լավ տոնը-տըեղ պահիլը Ղարաբաղում ադաթ ա»:

Արցախցու համար ընտանիքը սուրբ է, սերը անաղարտ ու մաքուր: Այն պղծել, կեղտոտել ոչ ոք իրավունք չունի: Նա ով խախտում է բարոյական մաքրության օրենքը, այլևս երջանիկ լինելու իրավունք չունի:

Արցախցին ավանդում է իր երիտասարդ զավակներին, որ ճշմարիտ երջանկությունը հարստության, ոսկու և փառքի մեջ չէ, այլ նվիրական, հավատարիմ սիրո մեջ է , բարության ու բարեգործության մեջ է:

Կյարունքը կյա, խըերավ կյա,
Ախպերավ կյա, հարավ կյա
Նըշան տվող էն տղան,
Վըսկեն պետք չի, սերավ կյա:

Փիլիսոփայական դաստիարակչական խոր իմաստ են պարունակում , այն խաղիկները որոնցում բանասաց ժողուվուրդը քննադատում է մարդու աչքածակությունը, ագահությունը, ամբարտավանությունը, անբարիշտությունը և եզրակացնում, որ այդ ամենը մարդուն բաոյական և մտավոր տհասության արդյունք է:

Մարդը միշտ աշկը ծակ ա,
Ամեն օր տըրութակ ա,
Մըռնելիս պըեն չի տանիլ,
Մարթը խելքավ հալա խակ ա:

Ուստի ժողովուրդ-դաստիարակը երիտասարդներին խորհուրդ է տալիս.

Օգիս բաղու կըտեռնա,
Պահիս քաղու կըտեռնա,
Փիս մարթին նհետ հաց մի օտել,
Վըեռչը աղու կըտեռնա:

Իմաստուն փիլիսոփա և մանկավարժ ժողովուրդը երիտասարդների խորհուրդ է տալիս ճիշտ կողմորոշվել արժեքային հարցերում, հաշվի առնել կյանքի փորձը, իմանա, որ այս անցավոր աշխարհում ամենից շատ գնահատվում է մարդկային խելքը:

Հազարամյակների ընթացքում մշակված դաստիարակության ժողովրդկան միջոցների և ձևերի այդ համակարգը բացառիկ դեր ու նշանակություն է ունեցել ամեն մի ժողովրդի համար՝ նրա ազգային դիմագիծը ձևավորելու իմաստով: Ուսումնասիրել ժողովրդի դաստիրակչական աշխատանքի դարավոր փորձը, գտնել դրա ռացիոնալ հատիկը կազմող առաջավոր գաղափարները և դրանցով հարստացնել մանկավարժության տեսությունն ու

պրակտիկան. սրանք են մանկավարժական գիտության կարևորագույն նպատակները: Այսօր հայ ազգային դպրոցում առաջ է քաշվում կրթության, ազգային ոգով և համամարդկային արժեքներով դաստիարակելու կարևորագույն խնդիրը: Հազիվ թե հարկ լինի ապացուցելու արցախահայության ժողովրդական մանկավարժության ուսումնասիրության կարևորությունը, նրա քաղաքական ու դաստիարակչական մեծ նշանակությունը ներկայիս և մանավանդ ապագա սերունդների համար:

Արցախյան բանահյուսության ինքնատիպ ու անգնահատելի գոհարներ՝ բազմաթիվ ասացվածքներ, առածներ, հեքիաթներ, երգիծական զրույցներ. առակներ և ժողովրդական հանճարի այլ ստեղծագործություններ իրենց բովանդակությամբ և ձևով, արտահայտած կրթական են դաստիարակչական խնդիրներով խիստ բազմազան են: Նրանցում արտացոլվում է մարդկային կերպարների, գործող անձերի բարոյական հատկանիշներն ու հատկությունները, ֆիզիկական ուժը, մարդասիրությունը, հնարամտությունը և այլ որակներ: Բնորոշ է, որ բարոյականության հասարակական ըմբռնումներն արցախյան բանահյուսության մեջ բխում են համամարդկային այնպիսի արժեքներից, ինչպիսիք են մարդասիրությունը, բարու արարչագործությունը, հայրենասիրությունը, ազնվությունը, աշխատասիրությունը, խաղաղասիրությունը և այլն: Ահա երկրամասի ժողովրդի բարոյական դավանանքի բազում արտահայտություններից միայն մեկ նմուշ, որը, ժամանակի ընթացքում բյուրեղանալով, դարձել է ողջ հայ ժողովրդի բարոյական հավատամքը՝ ուղղված դարերին, սերունդներին.

Ժառանգ թողե,
Կամար կապե,
Մին կիր կյիրի,
Մին ծառ տնգե,
Հավատդ էլ դայիմ փռնե:

Հիրավի, բանաձևված այս պատգամներն ամփոփում են ներդաշնակ ու համերաշխ կյանքի ընդունակ մարդկության հողեղեն երջանկության, նրա բարձրագույն բարոյախոսության ողջ բովանդակությունը:

Գրականություն

1. Նալչաջյան Ա, Մկրտչյան Ս, Էթնիկական մանկավարժություն, Եր., 2003:
2. Լիսիցյան Ստ., Լեռնային Ղարաբաղի հայերը, ազգագրական ակնարկ, հայ ազգագրություն և բանահյուսություն, նյութեր և ուսումնասիրություններ, հ.12, Երևան, 1981:
3. Մելքումյան Մ, Ղ.Աղայանի մանկավարժական ժառանգությունը և նրա այժմեականությունը, Եր., 1991:
4. Ա.Ավետիսյան, Գիտելիք աշխարհի գիտական պատկերը, Խորհրդային մանկավարժ, 1979:
5. Հարությունյան Վ. Դաստիարակչական գաղափարները ժողովրդական հեքիաթներում, Եր., 1959:
6. Գրիգորյան Մ. Լեռնային Ղարաբաղի բանահյուսությունը, Երևան, 1971:
7. Գևորգյան Ս.Ա. Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում. Երևան, 2002:
8. Ուշինսկի Կ.Դ., Մանկավարժական ընտիր երկեր, հ.2, Երևան, 1959:
9. Ղույումչյան Գ.Ե., Մանկավարժություն, 2-րդ գիրք, Երևան, 2005:

Տեղեկություններ հեղինակների մասին.

Էլլադա Բաղդասարյան, Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ
e-mail: gayangayan683@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ. Գ.Հ.Հարությունյանը:

ՀՏԴ 378.147 Մանկավարժություն

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Արմինե ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Բանալի բառեր *- վերափոխումներ,հանրակրթություն, ուսումնասիրել, ուսանողներ,նախասիրություններ, մեթոդական ուղղություններ, ինքնուրույն աշխատանք*
Ключевые слова- *образование, учеба, студенты, хобби, методическое, руководство, самозанятость*
Key words *- education, education, students, hobby, teaching, management, selfemployment*

А.Багдасарян

НЕОБХОДИМЫМИ УСЛОВИЯМИ ДЛЯ ЭФФЕКТИВНОЙ ОРГАНИЗАЦИИ САМОСТОЯТЕЛЬНОЙ РАБОТЫ СТУДЕНТОВ

Эта методологическая обобщение выводов, основанных на прецеденте АрГУ научно педогагичное охватываемых организации самостоятельной работы студентов педагогических кадров в соответствии с требованиями кредитной системы; В статье также работать в дополнение к обсуждению теоретических имеет одологических аспектов организации самостоятельной работы студентов;

A.Baghdasaryan

PREREQUISITES FOR THE EFFECTIVE ORGANIZATION OF STUDENTS' INDEPENDENT WORK

This methodological generalization of findings based on the precedent of ArGU gitamnkavarzhoren covered by the organization of independent work of students of pedagogical staff in accordance with the requirements of the credit system; The article also work in addition to the discussion of theoretical and methodological aspects of the organization of independent work of students;

Սույն գիտամեթոդական հոդվածում ուսումնասիրությունների արդյունքների ընդհանրացման հիման վրա գիտամնկավարժորեն լուսաբանվում է ԱրՊՀ մանկավարժական ֆակուլտետի ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նախապայմանները՝ կրեդիտային ուսուցման համակարգի պահանջների համահունչ ;

Հոդվածում, բացի տեսական հարցերի քննարկումից առաջադրվում են նաև ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման մեթոդական ուղղությունները;

Անցումային մեր ժամանակներում արմատական վերափոխումներն ու թարմացումը սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում հանրակրթության բնագավառում անհրաժեշտ պայմաններ են դնում նաև բարձրագույն դպրոցի առջև՝ պատրաստելու մասնագիտական խոր գիտելիքներով զինված որակյալ կադրեր, որոնք վաղը համալրելու են փորձառու մասնագետների շարքը:Այդ պահանջներն ամենից առաջ իրականացնելու են բուհի դասախոսները, որոնց առաջնահերթ խնդիրն է ստեղծագործական –մասնագիտական խոր գիտելիքների ձերքբերումը և ամբողջ դասավանդման ընթացքի վերակառուցումը; Երիտասարդ սկսնակ դասախոսների համար անչափ ուսանելի է պրոֆեսոր Արամ Բալյանի ուսանելի այն դրույթը, որ լավ դասախոսությունը արթնացնում է ուսանողի միտքը, ստիպում նրան խորհելու տվյալ գիտության առարկայի վերաբերյալ , որոնելու դասախոսության ժամանակ ծագած հարցերի պատասխանները; Հաջողությամբ կարդացված դասախոսությունը ուսանողին մղում է դեպի գրքերի աշխարհ, պահանջում խորացված ու համակարգված ինքնուրույն աշխատանք1/56:

Փորձը ցույց է տվել, որ ուսանող անձնավորության ձևավորման կարևոր նախապայմանը բուհում պատշաճ մակարդակով ուսումնական գործունեության/ նախապատրաստումը ամենօրյա դասախոսություններին, սեմինար պարապմունքներին , ինքնուրույն աշխատանք դասագրքի, սկզբնաղբյուրների վրա/, կազմակերպումն է բաժիններով և բաղադրամասերով;

Իսկ այս առումով ինչպիսի՞նն է Արցախի պետական համալսարանում ուսանողների բարեհաջող ու բազմաբովանդակ ուսումնական գործունեության կազմակերպումը;

Այս տեսանկյունով սույն գիտական հոդվածում ուսումնասիրությունների հիման վրա փորձել ենք գիտամանակավարժորեն լուսաբանել միայն մանկավարժական ֆակուլտետում ուսանողների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման նախապայմանները:

Հարկ է նշել, որ ուսումնական տարին սկսելուց առաջ համալսարանի ռեկտորատը , ֆակուլտետի դեկանատը և ամբիոնները համակարգված և նպատակամետ աշխատանք են տանում, բարենպաստ պայմաններ ստեղծում ուսանողների ուսումնադաստիարակչական աշխատանքը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար: Ավանդական ձևով, համալսարանի ռեկտորը, ֆակուլտետի դեկանը ամբիոնները հանդիպում են կազմակերպում նոր ընդունված և բարձր կուրսի ուսանողների հետ; ուսանողներին հանգամանորեն ծանոթացնելու համալսարանի կանոնակարգին, ուսանողների պարտականություններին, ուսման առաջատար ուսանողների գործունեությանը միաժամանակ ըստ կուրսերի, ուսանողների առաջադիմությանը՝ դրանով իսկ ուսանողների մոտ ստեղծելով ուսման նկատմամբ բուռն հետաքրքրության մթնոլորտ;

Դիմելով առաջին կորսեցիներին՝ ռեկտոր տիկին Մ.Մինասյանը իրավացիորեն մատնանշում է. «հարգելի ուսանող, կատարվել է քո երազանքը , ընդունվել ես բուհ, դարձել առաջին կուրսեցի, հնարավորություն ես ստացել ծանոթանալու քո ընտրած մասնագիտության համար անհրաժեշտ գիտությունների և ձերք բերելովու գիտելիքների, կարողությունների, հմտությունների անհրաժեշտ հսկայական պաշար, իսկ գիտելիք ձեռք բերելու հիմնական աղբյուրներից մեկը կարդացվող դասախոսություններն են, որ պետք է գրի առնել, լավ նախապատրաստվել սեմինար և գործնական պարապմունքներին, բարեհաջող հանձնել ուսուցման կրեդիտային համակարգով ընթացիկ, եզրափակիչ քննաշրջանի ստուգարքներն ու քննությունները»:

Մանկավարժական ֆակուլտետի դեկան Շ.Այդինյանը, ընդանրացնելով հանդիպման արդյունքները, մատնանշում է որ համալսարանում իշխում է ուսանողների նկատմամբ հոգատարության և ուշադրության մթնոլորտ, դասախոս-ուսանող շփման պարզություն, գիտելիքների նկատմամբ ցուցաբերվում է պահանջկոտություն; Անշուշտ, բավարար առաջադիմությամբ ուսանողներին զգալիորեն խանգարում են ուսումնական գործնթացի կազմակերպման հետևյալ թերությունները՝ ուսանողների հետ խորհրդատվությունների անհամակարգ բնույթը, ուսումնառության տարբեր փուլերում ուսանողի մոտ առաջացած անհատական ուսումնական դժվարությունները հաղթահարելիս կուրսղեկների պասիվությունը և այլն;

Բուհական մանկավարժության մեր փորձը հաստատում է այն իրողությունը, որ ուսանողների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման կարևորագույն նախապայման է հանդիսանում լավ կարդացած դասախոսությունը, գործնական և սեմինար պարապմունքների պատշաճ մակարդակով կազմակերպումը, ուսումնահիմացական գործունեության արդյունքների ստուգման, գնահատման ստուգարքների, քննությունների ընթացքում տվյալ առարկայի դասախոսի մանկավարժական վարպետության, տակտի, ընդունակությունների, լավատեսության և որակական այլ հատկանիշների դրսևորումը:

Մանկավարժական ֆակուլտետի ուսանողների ուսումնական գործունեության արդյունավետ կազմակերպման նախապայմաններից է նաև ինքնուրույն աշխատանքի ճիշտ պլանավորումն ու պատշաճ մակարդակով կազմակերպումը: Ինքնուրույն աշխատանքը որպես ուսանողի ուսումնական գործունեության բազմազան ձևերից մեկը, փաստորեն դասախոսության շարունակությունն է, այսինքն դասախոսության ժամանակ չլուսաբանված հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրումն է հանձնարարված սկզբնաղբյուրներով: Իսկ դասախոսության թեմային առնչվող համապատասխան սկզբնաղբյուրների վրա ուսանողի կողմից արդյունավետ աշխատանք կատարելու հաջողությունը առաջին հերթին կախված է

առարկայագետ դասախոսի կողմից ուսումնական ծրագրերով յուրաքանչյուր առարկայի գծով ճիշտ ընտրությունից: Հիրավի, համալսարանում ուսուցման գործընթացի կազմակերպման հիմնական ուղին ուսուցման կրեդիտային համակարգով ինքնուրույն աշխատանքի ճիշտ պլանավորումն ու արդյունավետ կազմակերպումն է ;

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսանողի ինքնուրույն աշխատանքի կազմակերպման խնդիրը նոր չէ;Տարբեր ժամանակներում այդ խնդրներով զբաղվել են մանկավարժության պրակտիկայի երախտավորները; Այսպես, օրինակ, գիտական մանկավարժության հիմնադիր Յ Ա Կոմենսկին գրել է.<<Մեր դիդակտիկայի ալֆան և օմեգան կդառնա այն եղանակի որոնումն ու հայտնագործումը , որի ժամանակ ուսուցանողը քիչ սովորեցնի , իսկ ուսուցանվողը շատ սովորի 2/18>>: Այդ կապակցությամբ էլ ուշագրավ մտքեր է հայտնել նաև ռուս մեծ մանկավարժ Կ Դ Ուշինսկին ; Նա պահանջում էր ուսուցումը այնպես կազմակերպել , որպեսզի <<Սովորողները հնարավորին չափ սովորեն ինքնուրույնաբար , իսկ սովորեցնողը ղեկավարի այդ ինքնուրույն աշխատանքը>>3/45: Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման անհրաժեշտությունը ընդգծել են նաև հայ մանկավարժները՝ Խ Աբովյանը, Ղ Աղայանը, Առ. Բահաթրյանը և ուրիշներ;

Խորհրդահայ ականավոր մանկավարժ Մուշեղ Սանթրոսյանը, Ուսանողի ինքնուրույն աշխատանքը գրքի վրա,,4/9 ուսումնամեթոդական ձեռնարկում բնութագրում է գրքի, դասագրքի վրա աշխատելու ձևերն ու մեթոդները; Անշուշտ, այսօր բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսների համար ուսանելի են անցյալի ականավոր մանկավարժների ուղեցույց դրույթները;

Վերոնշյալ ականավոր մանկավարժների ուսանելի դրույթները, անշուշտ , այսօր էլ չեն կորցրել իրենց հետաքրքրությունը: Այն ձեռք է բերել մեծ իմաստ ուսուցման կրեդիտային համակարգին անցնելու հիմնախնդրի լուսաբանմանը նվիրված բուհական ուղեցույցներում, /5/ կանոնադրության դրույթներում;

Հայտնի է որ 2008-2009 ուսումնական տարվա ԱրՊՀ առաջին կուրսի ուսանողների համար առկա է նոր կրթական համակարգ , որտեղ ուսանողի ինքնուրույն աշխատանքը պետք է գտնվի առաջին տեղերից մեկում 6:

Ուսումնասիրության արդյունքների վերլուծության հիման վրա, փորձենք բնութագրել ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ևս մի քանի նախապայմաններ;

Առաջին՝ դիտարկում ենք դասախոսի կողմից իր մասնագիտական առարկաներից ուսանողի համար մշակված ինքնուրույն աշխատանքի թեմատիկան ; Այս տեսանկյունով մեր կողմից մշակվել է մանկավարժական ֆակուլտետի ՏԿՄՄ 1,2,3 և ՆՄՀ 2,4/առկա/ կուրսերի ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համակարգ, որի մեջ ընդգրկվում է .

.ուսանողների ուսումնական տարիների /բակալավրիատի դասընթացով/ ինքնուրույն աշխատանքի մշակում՝ համապատասխան ուսուցման կրեդիտային համակարգի ծրագրային պահանջներին

.սեմինար, գործնական պարապմունքների, ավարտական աշխատանքների, մագիստրոսական թեզերի թեմատիկայի պլանավորում՝ հանձնարարված սկզբնաղբյուրների ճիշտ ընտրություն,

.դասախոսության գրառման կանոնների մշակում ՝ ինչպես գրի առնել դասախոսությունը, որը նպաստում է ուշադրության պահպանմանը, ակտիվացնում ուսանողի միտքը և ուսանողի մոտ ձևավորում ինքնուրույն աշխատելու ունակություններ,

.դասագրքի, դասախոսության թեմային առնչվող համապատասխան սկզբնաաղբյուրների վրա ինքնուրույն աշխատանքի ձևերի մշակում՝ սովորեցնել ինչպես կազմել պլան, թեզիսներ, կոնսպեկտներ և գիտահետազոտական աշխատանք կատարել

.ուսումնասիրելով ուսանողների նախասիրությունները՝ տալիս ենք մեթոդական ուղղություններ, բնութագրում նաև ինքնուրույն աշխատանքի տիպերն և տեսակները, կազմակերպման ձևերն ու մեթոդները;

Ուսանողի ինքնուրույն աշխատանքի այս համակարգի մշակումը, մեր կարծիքով կնպաստի այդ աշխատանքի կատարելագործմանը; Դրա համար անհրաժեշտ է՝

.զարգացնել ուսանողների մոտիվացիան՝ հետաքրքրությունը ուսման նկատմամբ և այն դիտել որպես գիտելիքների յուրացման միջոց,

. ուսանողներին զինել ինքնուրույն աշխատանք կատարելու համար անհրաժեշտ կարողություններով ու հմտություններով,

. համակարգված օգնություն ցույց տալ ուսանողի կատարելիք աշխատանքին,

. կատարելագործել ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը,

Մեր կարծիքով, ուսանողի ինքնուրույն աշխատանքը չի տա ցանկալի արդյունք, եթե այն չվերահսկվի, քանի որ բուհական ուսուցման արդյունավետությունը կախված է միայն ուսանողի իմացական գործունեության բնույթի, այդ գործունեության կառավարման որակից, այլև վերահսկման բնույթից և նրա նկատմամբ ուսանողների ունեցած վերաբերմունքից; «Մանկավարժություն և սպորտ» ֆակուլտետի դեկան Շ.Այդինյանը ֆակուլտետի խորհրդի նիստում նշում է , որ կիսամյակի արդյունքների քննարկումը, վերահսկումը նպատակ ունի խթանելու ուսանողի ինքնուրույն աշխատանքը և դասախոս-ուսանող հետադարձ կապը; Փաստերի ուսումնասիրումը վկայում է, որ որոշ դասախոսներ սահմանափակվում են ստուգարքների և քննությունների ընթացքում կիրառվող վերահսկողությամբ և չեն օգտագործում ընթացիկ վերահսկողության բազմապիսի ձևերը;

Ըստ մեր դիտարկումների՝ ընթացիկ վերահսկողության ձևերն են՝

- հարցում գործնական պարապմունքից և լաբորատոր պրակտիկումից առաջ,
- զրույց ուսանողների հետ հաշվետվությունից առաջ,
- համառոտ հարցում դասախոսությունիցառաջ,
- խորհրդատվություն,
- ինքնուրույն աշխատանքների ստուգում սեմինար պարապմունքների ընթացքում,
- ընթացիկ ստուգարքներ և քննություններ;

Ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ֆակուլտետում ուսանողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման գործընթացի հետագա բարելավումը պահանջում է.

.մշտապես բարձրացնել առարկայագետ դասախոսի մանկավարժահոգե բանական ու մեթոդական պատրաստվածության մակարդակը,

. կրեդիտային ուսուցման համակարգի պահանջներին համապատասխան կատարելագործել ուսանողների ինքնուրույն աշխատանքների համակարգը՝ բովանդակությունը, տեսակները, ձևերը, մեթոդները, վերահսկումը, կառավարումը,

.ամրապնդել ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան և այլն ;

Վերոշարադրյալ հիմնախնդիրների գիտական հիմնավորումը թույլ է տալիս հանգել հետևյալ եզրակացության, որ նշված խնդիրների համալիրային լուծումը հնարավորություն կտա զարգացնելու ուսանողների ինքնուրույն աշխատանքի մոտիվացիան, զինելու նրանց աշխատանք կատարելու արդյունավետ մեթոդիկայով, ժամանակին պահանջվող օգնություն ցույց տալու ուսանողներին, կատարելագործելու ինքնուրույն աշխատանքի կառավարման արդյունքների գնահատման եղանակներն ու ձևերը; Այդ տեսակետից առանձնապես կարևորվում են համալսարանում ուսումնառության բոլոր տարիներին ուսանողների մեջ համակարգված ինքնուրույն աշխատանքի ցանկության պատվաստելը, շարունակական ինքնակրթության կայուն դիրքորոշում մշակելը եռաստիճան ուսուցման համակարգի դեպքում , որի ժամանակ գիտելիքների նպատակասլաց, մշտական ինքնուրույն համալրումը պետք է դառնա սովորություն յուրաքանչյուր ուսանողի համար; Ընդգծելով նման սովորության հսկայական դերը ականավոր մանկավարժ Ուշինսկին գրել է. << Մտավոր աշխատանքը սովորություն դարձած մարդը ձանձրանում է առանց այդպիսի աշխատանքի, որոնում է այն և, իհարկե, գնում յուրաքանչյուր քայլի >>;

Պրակտիկ փորձը ցույց է տվել, որ նման մոտիվացիոն դիրքորոշման ձևավորումը անշուշտ, նպաստում է ուսանողների մեջ ուսման նկատմամբ, պատասխանատու վերաբերմունք, իմացական հետաքրքրություններ դաստիարակելուն; Իսկ նման մոտիվացիոն դիրքորոշումը ձևավորվում է ուսումնադաստիարակչական աշխատանքի բարձր ձևերի ու մեթոդների, դասախոսների անձնական օրինակի, ուսանողների ողջ կենսակերպի ու գործունեության ազդեցությամբ;

Ընդհանրացնելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր ֆակուլտետում, ամբիոնում, կուրսում, ամեն մի պարապմունքի ընթացքում ստեղծել այնպիսի բարոյահոգեբանական մթնոլորտ, որը ուսանողներին օբյեկտիվորեն մղի համակարգված ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի՝ իրենց ուժերի և հնարավորությունների սահմաններում;

Գրականության ցանկ

1. Ա.Բալյան, Առաջին կուրսեցու ուղեցույց , Երևան,<<Լույս>> հր. ,1973;
2. Յ. Ա. Կոմենսկի, <<Լույս>> հր., 1957, նաև Յու. Ամիրջանյան, Ժամանակակից դիդակտիկա, <<Լույս >> , հր., Երևան, 1947:
3. Կ .Դ. Ուշինսկի Մանկավարժական ընտիր երկեր, Լույս հր., Երևան, 1997:
4. Մ. Սանթրոսյան, Ուսանողի ինքնուրույն աշխատանքը գրքի վրա , <<Լույս>>,հր., Երևան , 1975:
5. Բարձրագույն կրթորթյուն /Կրթ. Ազգային ինստիտուտ/, հատ. 1 Երևան , 2005:
6. ԱրՊՀ <<Տեղեկագիր>>, 2008:
7. ԿԴ Ուշինսկի , Մանկավարժական ընտիր երկեր, Երևան , 1982:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արմինե Բաղդասարյան, մ.գ.թ., Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ավագ դասախոս

e-mail: arminebagdasaryan72@mail.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, մ.գ.դ. Գ.Հ.Հարությունյանը:

ՀՏԴ 330 Տնտեսագիտություն

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մանուշ ՄԻՆԱՍՅԱՆ

Հիմնաբառեր. *ժողովրդագրություն, ծնելիության մակարդակ, մահացության մակարդակ, ժողովրդագրական ծերացում, կյանքի սպասվող տևողություն, միգրացիա*

Ключевые слова: *демография, рождаемость, смертность, старение населения, продолжительность жизни, миграция*

Keywords: *demographics, birth rate, mortality rate, demographic aging, life expectancy, migration*

M. Minasyan

THE DEMOGRAPHIC PROBLEM IN THE CONTEXT OF GLOBAL DEVELOPMENTS IN THE ARTSAKH REPUBLIC

The demographic problems have various manifestations in global economy: the unprecedented growth of the population in developing countries, simple reproduction and aging of the population in the developed countries and the population shift in countries with economies in transition.

Since 2008 the demographic situation in AR has considerably improved, however there is a number of questions, which demand urgent measures:

- the low level of rate of a natural and mechanical increase of population, aging of the population which in the future will lead to social burdening of the state;

- studying of dynamics of the combined coefficient of birth rate, average age of mother by the time of the child's birth, an order of the birth of children in a family show the need of revision of some state programs;

- inadequate structure of the mechanical movement of the population, protection of rural areas.

In the article the analysis of a factor of migration is carried out and some recommendations about improvement of the situation are made.

М. Минасян

ДЕМОГРАФИЧЕСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ ГЛОБАЛЬНЫХ ПРОЦЕССОВ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Демографические проблемы в глобальной экономике имеют различные проявления: в развивающихся странах это беспрецедентный рост населения, в развитых странах - простое воспроизводство и старение населения, в странах с переходной экономикой – миграция населения.

Начиная с 2008 года демографическая ситуация в АР значительно улучшилась, однако существует ряд вопросов, требующих неотложных мер:

- низкий уровень темпа естественного и механического прироста населения, старение населения, которое в будущем приведет к отягощению социального бремени государства;

- изучение динамики комбинированного коэффициент рождаемости, среднего возраста матери к моменту рождения ребенка, порядок рождения детей в семье указывает на необходимость пересмотра некоторых государственных программ;

- неадекватная структура механического движения населения, защита сельской местности.

В статье также проведен анализ фактора миграции и даны рекомендации по улучшению ситуации.

Ժողովրդագրական հիմնախնդիրը համաշխարհային տնտեսությունում տարբեր դրսևորումներ ունի.զարգացող երկրներում այն բնակչության քանակի աննախադեպ աճն է, զարգացած երկրներում՝ բնակչության պարզ վերարտադրությունն ու բնակչության ծերացումը, իսկ անցումային տնտեսությամբ երկրներում՝ բնակչության միգրացիան:

ԱՀ ժողովրդագրական իրավիճակը 2008թ. սկսած էականորեն բարելավվել է, սակայն օրախնդիր են հետևյալ հարցերը.

-բնակչության բնական և մեխանիկական աճի տեմպերի ցածր մակարդակը, բնակչության ծերացումը, ինչն ապագայում ավելի կծանրացնի պետության սոցիալական բեռը.

-ծնելիության գումարային գործակցի, երեխայի ծննդյան ժամանակ մոր միջին տարիքի ցուցանիշի, ընտանիքում ծնված երեխայի հերթականության դինամիկայի ուսումնասիրությունը ԱՀ-ում վկայում է որոշ պետական ծրագրերի վերանայման անհրաժեշտության մասին.

-բնակչության մեխանիկական շարժի անբավարար կառուցվածքը, գյուղական բնակավայրերի պահպանությունը:

Հոդվածում կատարվել է նաև արտագաղթի գործոնային վերլուծություն և տրվել իրավիճակի բարելավմանն միտված առաջարկություններ:

Մարդկության ողջ պատմության ընթացքում բնակչության աճի տեմպերի մակարդակն ավելի բարձր չի եղել, քան 20-րդ դարի երկրորդ կեսին էր: Միջին տարեկան աճը 1950-ական թթ. կազմել է 53,3մլն մարդ, 1970-ական թթ.՝ 70,3մլն, իսկ 1990-ական թթ.՝ 97մլն.-ից ավելի: Բացարձակ ցուցանիշներով բնակչության աճի տարեկան տեմպը 21-րդ դարի առաջին տասնամյակում նվազել է, սակայն պատմական առումով շարունակում է մնալ բարձր. միջին 79մլն. մարդ՝ մեկ տարվա ընթացքում: Փորձագիտական գնահատականների համաձայն՝ աճի տեմպերը 2010-2025թթ. կշարունակեն մնալ բարձր՝ տարեկան 66մլն մարդ: [1] Որպես հետևանք 20-րդ դարում երկրագնդի բնակչությունը քառապատկվեց, ընդ որում 1-ին կրկնապատկումը տեղի ունեցավ 60, իսկ 2-րդը՝ 40 տարվա ընթացքում: Բացարձակ թվերով դարասկզբի բնակչության թիվը 1,5 մլրդ-ից աճելով 2000թ. հատեց 6 մլրդ-ի սահմանը, իսկ արդեն 2014թ.՝ 7,2 մլրդը:

Ըստ կանխատեսումների 2050թ. այն կկազմի 9,1 մլրդ մարդ:

Եթե փորձենք զուգահեռ անցկացնել Լեռնային Ղարաբաղի ցուցանիշների (հաշվի առնելով տվյալների բացակայությունը, ներկայացված թվերը տարածքային և ազգային կառուցվածքի առումով համադրելի չեն) հետ, պատկերը, թերևս, մտահոգիչ կթվա: Այսպես, խորհրդային տարիներին անցկացված մարդահամարների արդյունքներով 1926թ. բնակչության թվաքանակը կազմել է 125,3 հազ. մարդ, 1939թ.՝ 150,8 հազ. մարդ, 1959թ. 130,4 հազ. մարդ, 1970թ.՝ 150,3 հազ. մարդ, 1979թ.՝ 162,2 հազ. մարդ և վերջին խորհրդային մարդահամարի արդյունքներով 189,1 հազ. մարդ: Եվ եթե աշխարհում բնակչության թվաքանակը կրկնապատկվել է, ապա Լեռնային Ղարաբաղում նույն ժամանակաշրջանում բնակչության թվաքանակը աճել է ընդամենը 50%-ով, որտեղ, անշուշտ, լուրջ ներդրում ունի ադրբեջանցիների թվաքանակի փոփոխությունը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ քաղաքային բնակչության թվաքանակը բնակչության ընդհանուր թվաքանակը 6,6 տոկոսից (1926թ.) աճել է մինչև 51,7 տոկոս (1989թ.):

Օբյեկտիվ պատճառներով բնակչության թվաքանակը արդեն 1995թ. նվազել է 35,2 տոկոսով և մեր անկախության 25 տարվա ընթացքում մեզ չի հաջողվել բնակչության թվաքանակով մոտենալ խորհրդային տարիներին պաշտոնապես հայտարարված վերջին ցուցանիշին (զիջում ենք շուրջ 22 տոկոսով):

Ներկայումս բնակչության խտությունը ԼՂՀ-ում 1 քառ. կմ-ի վրա կազմում է 13 մարդ՝ շուրջ 4 անգամ ցածր աշխարհի բնակչության խտությունից (49 մարդ):

Այդքանով հանդերձ, բնակչության աճի տեմպերի դանդաղումը չի մեղմացնում ժողովրդագրական հիմնախնդրի սրությունը: Աշխարհի բնակչության աճի ավելի քան 80%-ը բաժին է ընկնում զարգացող երկրներին, հատկապես Աֆրիկային, Միջին և Մերձավոր Արևելքի երկրներին: Սրա գլխավոր պատճառն այն է, որ զարգացող երկրներում գերակշռում է վերարտադրության այն ձևը, երբ մահացության կրճատումը չի զուգակցվում ծնելիության մակարդակի համապատասխան նվազմամբ: Զարգացող երկրներում վերջին տասնամյակներում մահացությունը կրճատվեց 24,4%-ից մինչև 9%[2]: Չնայած դրան, դեռ երբեք մարդկության պատմության ընթացքում ծնելիության մակարդակն այսքան ցածր չի իջել: Այս ցուցանիշը նվազել է՝ հիմնականում պայմանավորված միլիոնավոր մարդկանց՝

[1] Տե՛ս Мировая экономика/под ред. доктора экономических наук, профессора Булатова А./ М. 2003, с.402

[2] Տե՛ս նույն տեղում

ընտանիքի անդամների թվաքանակը սահմանափակելու ցանկությամբ: Սակայն ծնելիության մակարդակը դեռևս զգալիորեն տատանվում է՝ կախված երկրի տնտեսական զարգացման մակարդակից: Նկատելի տարբերություն կա թույլ զարգացող երկրների(4.4 երեխա 1 կնոջ հաշվով) և զարգացած երկրների (2.5երեխա մեկ կնոջ հաշվով) միջև: Բացի այդ, 1975-1980 թթ. զարգացած երկրներում ծնելիության միջին մակարդակը այնքան ցածր էր, որ չէր ապահովում բնակչության վերարտադրությունը(1.6երեխա մեկ կնոջ հաշվով) և շարունակում է մնալ այդպիսին, չնայած գրանցված որոշակի առաջընթացին[1] (գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Ծնելիության մակարդակն ըստ երկրների խմբերի 1950-2010թթ.[2]

Հատկապես զարգացած երկրներում ծնելիության նման ցածր մակարդակի պայմաններում բնակչության աճի միակ աղբյուրը կարող է լինել ներգաղթը: Անհրաժեշտ է իջեցնել նաև բնակչության մահացության մակարդակը հատկապես փոքր և միջին տարիքի բնակչության շրջանում, որն էլ իր հերթին մի քանի անգամ կդանդաղեցնի ծերացումը:

ԼՂՀ-ում վերջին տարիներին ծնելիության մակարդակի փոփոխությունը իր ազդեցությունն է թողել կանանց ծնելիության տարիքային գործակիցների վրա, ինչպես տարիքային առանձին խմբերում, այնպես էլ ամբողջապես վերցրած ծնունակ տարիքում: Հատկանշական է 20-24 և 25-29 տարիքային խմբերին բաժին ընկնող ծնվածների գերակշռությունը, մասնավորապես՝ 2014թ ծնվածների համապատասխանաբար 36,6տոկոսը և 34,8տոկոսը, 2015թ. ծնվածների համապատասխանաբար 28.0 տոկոսը և 40,9 տոկոսը (Աղյուսակ1):

Աղյուսակ 1. Ծնվածների բաշխումն ըստ մոր տարիքի 2010-2015թթ

Մոր տարիքը	2010	2011	2012	2013	2014	2015
Ընդամենը ծնվածներ	2694	2586	2500	2371	2428	2582
այդ թվում՝ մինչև 20	127	112	128	99	119	83
20-24	989	983	986	898	888	724
25-29	954	886	812	807	846	1055
30-34	447	422	422	405	416	512

[1] Տե՛ս Мировые демографические тенденции. Доклад Генерального секретаря ООН, E/CN 9/2011/6 с.7
[2] Տե՛ս նույն տեղում

35-39	144	153	131	139	132	177
40-44	33	29	20	22	22	29
45-49	-	1	1	1	5	2
50 և բարձր	-	-	-	-	-	-
Ընդամենը ծնվածներ (%-ով)	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
այդ թվում՝ մինչև 20	4.7	4.3	5.1	4.2	4.9	3.2
20-24	36.7	38.0	39.4	37.9	36.6	28.0
25-29	35.4	34.3	32.5	34.0	34.8	40.9
30-35	16.6	16.3	16.9	17.1	17.1	19.8
35-39	5.4	5.9	5.2	5.9	5.5	6.9
40-44	1.2	1.1	0.8	0.9	0.9	1.1
45-49	-	0.1	0.1	0.0	0.2	0.1
50 և բարձր	-	-	-	-	-	-

Աղբյուրը ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու> 2015, 2016

ԼՂՀ-ում ծնելիության գումարային գործակիցը վերջին տարիներին հիմնականում գերազանցել է բնակչության վերարտադրության համար անհրաժեշտ ցուցանիշը՝ 2,15երեխա: Շատ երկրների նման նաև Արցախին է բնորոշ դիտարկվող ցուցանիշի համեմատաբար բարձր մակարդակը գյուղական բնակավայրում(Աղյուսակ2):

Աղյուսակ 2. Ծնելիության գումարային գործակիցը ըստ բնակավայրի

Տարեթիվը	Ընդհանուր ցուցանիշը	Քաղաքային բնակավայր	Գյուղական բնակավայր
2010	2.4	2.1	2.9
2011	2.3	2.2	2.5
2012	2.2	2.1	2.3
2013	2.1	2.0	2.2
2014	2.1	2.0	2.3
2015	2.3	2.3	2.5

Աղբյուրը ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու>, ըստ տարիների

Մեր գնահատմամբ լուրջ վերլուծության ենթակա է նաև ծնվածների կառուցվածքը ըստ ընտանիքում ծնված երեխաների հերթականության, ինչը հնարավորություն է տալիս իրատեսորեն գնահատել բազմազավակության խթանման պետական ծրագրերի արդյունավետությունը: Եվ դարձյալ վիճակագրությունը փաստում է(Աղյուսակ3), որ ընտանիքում երրորդ և հաջորդող կարգի ծնունդների մասնաբաժինը գյուղական բնակավայրերում զգալիորեն գերազանցում է քաղաքայինին:

Աղյուսակ 3. Ծնվածների բաշխումն ըստ ծննդի կարգի քաղաքային և գյուղական բնակավայրերով, 2010-2015թթ.

	2010			2011			2012			2013			2014			2015		
	Ընդ.	քաղաք	գյուղ	Ընդ.	քաղաք	գյուղ	Ընդ.	քաղաք	գյուղ	Ընդ.	քաղաք	գյուղ	Ընդ.	քաղաք	գյուղ	Ընդ.	քաղաք	գյուղ
Ընդամենը ծնվածներ Այդ թվում՝	2694	1382	1312	**2586**	**1456**	**1130**	**2500**	**1417**	**1083**	**2371**	**1343**	**1028**	**2428**	**1446**	**982**	**2582**	**1496**	**1086**
1-ին	981	580	401	1007	642	365	904	597	307	877	530	347	877	576	301	888	575	313
2-րդ	841	437	404	841	506	335	836	492	344	790	497	293	839	546	293	843	536	307
3-րդ	544	269	275	461	220	241	451	222	229	423	216	207	430	222	208	505	252	253
4-րդ	192	61	131	163	54	109	174	66	108	172	62	110	141	60	81	208	82	126
5-րդ և բարձր	136	35	101	114	34	80	135	40	95	109	38	71	141	42	99	138	51	87
Ընդ.ծնվածներ (%-ով) Այդ թվում՝	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0
1-ին	36.4	42.0	30.5	39.0	44.1	32.3	36.2	42.1	28.3	37.0	39.5	33.8	36.1	39.9	30.7	34.4	38.4	28.8
2-րդ	31.2	31.6	30.8	32.5	34.8	29.7	33.4	34.7	31.8	33.3	37.0	28.5	34.6	37.7	29.8	32.6	35.8	28.3
3-րդ	20.2	19.5	21.0	17.8	15.1	21.3	18.0	15.7	21.1	17.8	16.1	20.1	17.7	15.4	21.2	19.6	16.9	23.3
4-րդ	7.1	4.4	10.0	6.3	3.7	9.6	7.0	4.7	10.0	7.3	4.6	10.7	5.8	4.1	8.2	8.1	5.5	11.6
5-րդ և բարձր	5.1	2.5	7.7	4.4	2.3	7.1	5.4	2.8	8.8	4.6	2.8	6.9	5.8	2.9	10.1	5.3	3.4	8.0

Աղբյուրը ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու>, ըստ տարիների

Հետաքրքիր և կարևոր ցուցանիշ է ծնելիության գնահատման առումով երեխայի ծննդյան ժամանակ մոր միջին տարիքը(2014թ 26,8տարեկան, 2015թ. 27,2 տարեկան). այս ցուցանիշով Արցախը զիջում է բազմաթիվ երկրների:

Սկսած 1970-ական թթ.՝ ժողովրդագրական ճգնաժամ առաջացավ զարգացած և անցումային տնտեսությամբ երկրներում, որը շարունակվում է մինչև այժմ: Եթե զարգացած երկրներում նշված ճգնաժամը պայմանավորված էր բնակչության աճի տեմպերի կտրուկ կրճատմամբ, բնակչության ծերացմամբ, ապա անցումային տնտեսություններում, բացի նշվածից, կարևորագույն խնդիրներից է նաև բնակչության միգրացիան: Ժողովրդագրական ծերացումը հասարակությանը սոցիալ-տնտեսական լուրջ խնդիրներ է առաջադրում. ամենից առաջ մեծացնում է զբաղված բնակչության տնտեսական ծանրաբեռնվածությունը: Կարևոր նշանակություն ունի 15-ից մինչև 64 տարեկան և 65 ու բարձր տարիք ունեցող մարդկանց թվերի հարաբերակցությունը(գծապատկեր 2):Այս ցուցանիշն արտահայտում է յուրաքանչյուր թոշակառուին բաժին ընկնող աշխատողների թիվը:



Գծապատկեր 2. Բնակչության կյանքի միջին տևողությունն ըստ երկրների խմբերի 1950-2010թթ.[1]

Ըստ գծապատկերի՝ ակնկալվող կյանքի տևողությունն աճել է բոլոր խմբերի երկրներում: Զարգացած երկրներում, որտեղ 1950-1955թթ.արդեն այս ցուցանիշը եղել է 66տարեկանը, 2005-2010թթ. այն ավելացնել է 11տարով՝ կազմելով 77տարի: Թույլ զարգացող երկրներում, որտեղ կյանքի տևողությունը դեռևս համեմատաբար կարճ է, այդ ցուցանիշն աճել է 20տարով՝ 36-ից մինչև 56 տարեկան: Զարգացող երկրներում կյանքի միջին տևողությունն ավելացել է ավելի կտրուկ՝ 26 տարով՝ 42-ից մինչև 68տարեկան: Փաստորեն, զարգացող և զարգացած երկրներում կյանքի տևողությունների միջև խզումը զգալիորեն կրճատվել է, կանխատեսվում է, որ հետագայում այդ ցուցանիշը կշարունակի աճել բոլոր խմբերի երկրներում:

ԼՂՀ-ում կյանքի սպասվող տևողությունը պաշտոնական վիճակագրությունը սկսել է հաշվարկել 2008թվականից, մինչ այդ հաշվարկվում էր կյանքի միջին տևողությունը:

Աղյուսակ 4 Կյանքի սպասվող տևողությունը ԼՂՀ-ում 2007-2015թթ.

Տարեթիվը	Ընդհանուր ցուցանիշ	Տղամարդ	Կին
2007/2008	73.2	70.0	76.3
2008/2009	73.5	73.0	76.9
2009/2010	73.9	71.2	76.5

[1] Տե՛ս նույն տեղում

2010/2011	73.4	70.8	75.9
2011/2012	74.6	71.8	77.4
2012/2013	73.5	71.0	76.0
2013/2014	74.2	71.6	76.8
2014/2015	74.1	71.5	76.6

Աղբյուրը ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու>, ըստ տարիների

Այսուսակից ակներև է, որ ինչպես և ամբողջ աշխարհում, կանանց կյանքի սպասվող տևողությունը գերազանցում է տղամարդկանց համանուն ցուցանիշը շուրջ 5տարով:

Մասնագետների հաշվարկներով 2000-2050 թթ. մարդկության թիվն աճելու է 1.5անգամ, ընդ որում՝ Աֆրիկայում բնակչությունը կաճի 2.3անգամ, իսկ Եվրոպայում կնվազի 12%-ով: 2050թ. մարդկության 59%-ը բնակվելու է Ասիայում, 20%-ը՝ Աֆրիկայում և 7%-ը՝ Եվրոպայում: Բնակչության աճի անհամաչափությունը բնորոշ է նաև առանձին երկրների: Բերենք մի քանի օրինակ, եթե 2010թ.ԵՄ բոլոր երկրների բնակչությունը 1տարում աճել է 343հազ. մարդով, ապա Հնդկաստանը նույնքան աճ է արձանագրել ընդամենը 6օրում, 50տարի առաջ Ռուսաստանի բնակչությունը 3 անգամ ավելի էր, քան Պակիստանինը, այսօր այդ երկրների բնակչությունը հավասար է, իսկ 50 տարի հետո Ռուսաստանի բնակչությունը 2.5անգամ ավելի պակաս կլինի, քան Պակիստանինը: Ուշադրության արժանի է նաև այն հանգամանքը, որ, չնայած երկրագնդի՝ ՁԻԱՀ-ով տառապող բնակչության 70%-ը կենտրոնացած է Աֆրիկայում, դա չի նվազեցնում աֆրիկյան երկրների բնակչության արագ աճը:[1]

Ինչ վերաբերվում է ԼՂՀ-ին, ապա, անցումային այլ երկրների նման, այստեղ ժողովրդագրական իրավիճակն անհանգստացնող է հետևյալ առումներով՝

- ծնելիության ոչ ցանկալի մակարդակ,
-ծերացում,
-բնակչության մեխանիկական շարժի անբավարար կառուցվածք,
-գյուղական բնակավայրերի պահպանություն:

Քննարկենք այս խնդիրներից յուրաքանչյուրն առանձին: Ծնելիության ցուցանիշին մենք արդեն անդրադարձ ենք կատարել: Հարկ է նկատել, որ 2008թ սկսած ԼՂՀ-ում ժողովրդագրական իրավիճակի բարելավման միտումները ակնհայտ են. 2008-2014թթ բնակչության միջին տարեկան աճը կազմել է 1600մարդ, այն դեպքում, երբ 2001-2007թթ՝628մարդ: Պաշտոնական վիճակագրության տվյալներով ԼՂՀ բնակչության թվաքանակը 01.01.2015թ դրությամբ կազմել է 148,9հազար մարդ, ինչը, 2015թ մարդահամարի արդյունքներով ճշգրտվել է՝ կազմելով 145,1 հազար մարդ: Հատկանշական է, սակայն, որ բնակչության թվաքանակի կառուցվածքում գնալով նվազում է գյուղական բնակչության տեսակարար կշիռը՝ 1989թ վերջին խորհրդային մարդահամարից հետո 2015թ նվազելով 5,1 տոկոսային կետով:Հարկ է նշել, որ 1926թ ԼՂԻՄ-ի բնակչության 93,4, 1959թ՝ 79,3 և 1979թ 56,8տոկոսը գյուղաբնակ էր:

2001-2007թթ ծնվածների միջին տարեկան ցուցանիշը կազմել է 2128մարդ, 2008-2014թթ՝ 2545մարդ, մահացածների միջին տարեկան ցուցանիշը՝ համապատասխանաբար 1225 և 1301մարդ:

Ըստ ՄԱԿ-ի ժողովրդագրական ծերացման սանդղակի՝ եթե 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 7%-ից բարձր է, ապա այդպիսի բնակչությունը ծերացած է համարվում: ԼՂՀ-ում այդ ցուցանիշը 2016թ. տարեսկզբին կազմել է 13.1%, վերջին տարիներին գրեթե անփոփոխ է: Հիշյալ ցուցանիշի այսպիսի պատկերը գլխավորապես հետևանք է շարունակվող պատերազմի և դրա հետևանքների, ծնելիության մակարդակի անկման և աշխատանքային տարիքի բնակչության էմիգրացիոն ակտիվության:

[1] Տե՛ս Мировые демографические тенденции. Доклад Генерального секретаря ООН, E/CN 9/2011/6 с.7

Բնակչության բնական աճի տվյալներն ավելի խոսուն են լինում, երբ դրանք համադրվում են մահացության ցուցանիշների հետ (գծապատկեր 3):

Գծապատկեր 3. ԼՂՀ բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշներ(մարդ)[1]

Միգրացիան, որպես ժողովրդագրական երևույթ, գոյություն ունի գրեթե բոլոր երկրներում: Այսօր ևս աշխարհում այդ գործընթացն անխուսափելի է, քանի որ, եթե կան պետություններ, պետական սահմաններ, կլինեն նաև մարդկանց տեղաշարժեր: Աշխարհի շատ ժողովուրդների նման հայերը նույնպես ունեն միգրացիայի հին ավանդույթներ: Հայ ժողովրդի արցախյան մասի միգրացիոն գործընթացները խորհրդային տարիներին պայմանավորված էր Ադրբեջանի հայատյաց քաղաքականությամբ, որի արդյունքում շուրջ մեկ դար առաջ ամբողջությամբ հայերով բնակեցված Ղարաբաղում 1989թ վերջին խորհրդային մարդահամարի արդյունքներով 21.5 տոկոսը կազմել են ադրբեջանցիները:

ԼՂՀ-ից աշխատուժի միգրացիայի պատճառները տարբեր են: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միգրացիոն գործընթացներում առաջնային է տնտեսական դրդապատճառներով բնակչության արտահոսքը: Արտագաղթողների 2/3-ը որպես հիմնական պատճառ նշում է աշխատանքին առնչվող հանգամանքները՝ աշխատատեղերի բացակայությունը կամ սղությունը, աշխատանքի վարձատրության ցածր մակարդակը և ինքնուրույն տնտեսական գործունեությամբ զբաղվելու բարդությունները: Սակայն աշխատուժի միգրացիայի շարժառիթ կարող են լինել նաև երկրների առանձին տնտեսական շրջանների զարգացման մակարդակների տարբերությունները: Սկզբնական շրջանում դա արտահայտվում է ներքին միգրացիայով՝ դեպի արդյունաբերական կենտրոններ, իսկ այնուհետև, զբաղվածության հիմնախնդրի սրման պատճառով, ձևավորվում են աշխատուժի միջազգային միգրացիոն հոսքեր: Գյուղական բնակչության կենտրոնացումը քաղաքներում անդառնալի տնտեսական կորուստների պատճառ է դառնում այն երկրներում, որոնք ունեն համեմատական առավելությունների իրացման հնարավորություններ գյուղատնտեսության ոլորտում: Այս առումով ակնառու օրինակ է Արցախը: Ներքին միգրացիան հանգեցրեց գյուղական շրջանների բնակչության կենտրոնացմանը շրջկենտրոններում և մայրաքաղաքում: Աշխատատեղերի բացակայությունը և աշխատանք գտնելու նրանց անհաջող փորձերը ավելի խթանեցին արտաքին միգրացիան:

ԼՂՀ միգրացիոն հաշվեկշիռը դիտարկվող ժամանակահատվածում տարբեր բնութագրեր է ունեցել. այն բացասական էր 2006թ. և 2007թ., 2008թ.-ից մինչև 2015թ.՝ դրական: 2016թ ապրիլյան

[1] Տե՛ս ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու>, ըստ տարիների

քառօրյա պատերազմի բացասական դրսևորումներից կլինի նաև բնակչության տարվա մեխանիկական շարժի սալդոն:

Աղյուսակ 5.**Բնակչության մեխանիկական շարժի բնութագիրը ԼՂՀ-ում 2006-2015թթ**.

Տարեթիվ	Եկողներ	Մեկնողներ	Մեխանիկական հավելաճ
2006	865	1310	-445
2007	831	1026	-195
2008	1142	775	367
2009	914	403	511
2010	1011	446	565
2011	1109	663	446
2012	907	574	333
2013	866	554	312
2014	946	578	368
2015	880	589	291

Աղբյուրը <<Սոցիալ-տնտեսական վիճակը ԼՂՀ –ում>> զեկույցը ըստ տարիների

Հայտնի է, որ բնակչության թվաքանակի նվազման գործում հիմնական «ավանդը» պատկանում է արտագաղթին՝ պայմանավորված բազմաթիվ պատճառներով: Սակայն որոշիչը սոցիալ-տնտեսական իրավիճակն է. բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշով ԼՂՀ-ն աշխարհում համեստ տեղ է զբաղեցնում, այն զիջում է նաև ՀՀ ցուցանիշը՝ 15,8 տոկոսով: Ընդ որում, հարկ է նշել, որ այդ տարբերությունը 1990թ կազմել է 2,2 անգամ:

ՀՆԱ ցածր մակարդակը կրկին մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ ունի, որոնք համալիր հետազոտությունների կարիք ունեն. նկատենք, որ փորձագիտական գնահատականների բացակայությունը հարցի ծագման վերաբերյալ դժվարացնում է ինչպես ներկա իրողությունները ճիշտ գնահատելը, այնպես էլ, բնականաբար, ապագայում իրավիճակը բարելավելու ուղիների մշակումը: Պատերազմը, և դրանից հետո հանրապետությունում ստեղծված իրավիճակը բացասաբար են ազդել աշխատուժի որակական բաղադրիչի վրա: Ճիշտ է 2015թ մարդահամարի արդյունքներով, անշուշտ, ԼՂՀ-ում կարձանագրվի բարձրագույն կրթությամբ բնակչության տեսակարար կշռի աճ (2005թ արդյունքներով 15տոկոս), սակայն դա միայն բարձրագույն կրթության մատչելիության բարձրացման առհավատչյան է: Իրականում դեռևս խորհրդային Ադրբեջանի արմատավորած քաղաքականությունը՝ բարձրագույն կրթություն ստանալ Լեռնային Ղարաբաղից դուրս, ինչը հանգեցրել է մեր երիտասարդության սերուցքի այլ երկրներում բնավորմանը, կարելի է ասել, որ այսօր էլ քաղաքական և տնտեսական դրդապատճառներով շարունակվում է, ինչը ազգային և տնտեսական անվտանգության տեսանկյունից լուրջ մարտահրավեր է:

Անհրաժեշտ է շտկել հասարակության անհավասարակշռությունը և անհրաժեշտ քանակով «վերականգնել ստեղծագործ արհեստավարժների իրավունքները»: Ակնհայտ է, որ այս գործում չի կարելի միայն հույսը «շուկայի անտեսանելի ձեռքի» վրա դնել, և պետք է հիշել, որ սեփական նախագծերի բացակայության պարագայում իրականացվում են օտարներինը: Մասնավորապես հարկ է գերակա կարգավիճակ շնորհել տնտեսության տեխնոլոգիական հատվածին, դրա զարգացման ռազմավարության մշակմանը, և որ գլխավորն է՝ այդ ռազմավարության կենսագործմանը:

Տնտեսությունում և ժողովրդագրության մեջ ստեղծված վիճակը հետևանք է նաև այն բանի, որ <<հայկական կապիտալը>> այնքան էլ համարժեք չի պատկերացնում ԼՂՀ-ի և ՀՀ-ի դերը արդի

գլոբալ համակարգում,նրանց զարգացման պահանջներն ու առաջնահերթություններն, արդյունքում՝ <<հայրենասիրական>> շատ քայլեր հաճախ դրսևորվում են հերթական խաչքարի տեղադրման կամ եկեղեցու կառուցման տեսքով:

Գաղտնիք չէ, որ պետության հզորության հարցում ի թիվս այլ կարևոր գործոնների կենտրոնական տեղում են երկրի ժողովրդագրական բնութագրիչները: Գիտականորեն հիմնավորված է, որ ազգային հզորությունը կարող է ներկայացվել մի բանաձևով, որտեղ պետության կամ ազգային հզորությունը =(բնակչության և ժողովրդագրական, ինչպես նաև տարածքի բնութագրիչներ+տնտեսական կարողություն+ռազմական կարողություն) x (ռազմավարական նպատակ+ազգային ռազմավարություն հետամտելու կամք): Այս բանաձևը ցույց է տալիս թե որքան փոխկապված են միմյանց հետ սովորական կյանքում առաջին հայացքից իրար հետ առնչություն չունեցող աշխատավարձի մեծությունը և պետության ռազմական կարողությունը, հարկային համակարգն ու տարածքի օգտագործման(հողերի արդյունավետ յուրացման) մակարդակը և այլն: Սակայն դա փոխկապակցվածության բացակայության միայն թվացյալ տպավորություն է, մինչդեռ խորքում երկրի առջև ծառացած բազմաբնույթ հիմնախնդիրները ոչ միայն սերտորեն կապված են միմյանց հետ, այլև դրանց լուծման համար ցանկացած առաջարկ պետք է դիտարկել համակարգային լուծման համատեքստում, որպես պատճառների վերացմանը միտված գործողությունների ամբողջություն:

Մեր կարծիքով արտագաղթի պատճառներն առաջանում են արտաքին և ներքին մի շարք գործոնների համալիր ազդեցության ներքո: Արտաքին գործոնների մեջ հատկապես հարկ է առանձնացնել այլ երկրների կողմից վարվող ներգաղթի քաղաքականությունը, աշխարհաքաղաքական, այդ թվում տարածաշրջանում ձևավորված մարտահրավերները, արտաքին կենտրոնների վարած քաղաքականությունը, Արցախի ո՛չ պատերազմ-ո՛չ խաղաղություն փաստացի վիճակը, տևական շրջափակումը և անորոշությունն այս հարցում:

Արտագաղթի ներքին գործոնները առավել շատ սոցիալ-տնտեսական, սոցիալ-քաղաքական և սոցիալ-հոգեբանական են: Սոցիալ-տնտեսական գործոնների ներքո հարկ է առանձնացնել արժանապատիվ վարձատրությամբ աշխատանք ունենալու հնարավորությունների (հատկապես երիտասարդների համար) սահմանափակ լինելը, հասարակության հարուստ և աղքատ շերտերի բևեռացումը, նվազագույնից ցածր եկամուտ ունեցող քաղաքացիների մեծ տեսակարար կշիռը, տնտեսության կառուցվածքային և հակամենաշնորհային քաղաքականության ցածր արդյունավետությունը, Ստեփանակերտից դուրս, հատկապես գյուղական բնակավայրերի թերազարգացվածությունը, ագրարային հատվածում բարեփոխումների ոչ էական արդյունքները:

Սոցիալ- քաղաքական գործոնների շարքում կանխորոշողը քաղաքական համակարգի չկայացվածությունն է, ընտրական համակարգի վիճակը:

Սոցիալ- հոգեբանական գործոնների մեջ առանձնանում է Արցախի անկախության վերանվաճումից հետո առավել բարեկեցիկ կյանքով ապրելու չիրականացված սպասումն ու դա արտահայտող ընդգծված բացասական տեղեկատվությունը:

Վերլուծելով արտագաղթի պատճառները կարելի է ձևակերպել, որ նվազագույնը երկրում պետք է զարգացնել մարդու(քաղաքացու) երեք կարևոր՝ կյանքի, ազատության և սեփականության անձեռնամխելի իրավունքների իրացման երաշխավորված համակարգ, որն ունակ կլինի ազդելու հեռացողների որոշումների փոփոխության վրա՝ ի օգուտ երկրում արժանապատիվ ապրելու որոշման:

Այդ առումով, հաշվառելով նաև միջազգային փորձը, կարող ենք ընդհանրացնել, որ մշակման և իրացման են ենթակա գործողություններ հետևյալ ուղղություններով.

1. Կադրային քաղաքականություն: Հարկ է տարանջատել բիզնեսն ու քաղաքականությունը: Պաշտոնատար անձի համար պետք է գործի թափանցիկ և հանրությանը հաշվետու լինելու սկզբունքը: Քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող երիտասարդը քաղաքական ու կառավարման համակարգում ինքնադրսևորման լայն հնարավորություններ պետք է ունենա:

2. Տնտեսական քաղաքականություն: Հարկային օրենսդրությունը պետք է դարձնել կանխատեսելի, իրական հատվածում ներդրումները խրախուսող: Օրենքով պետք է ամրագրել, որ հատկապես փոքր ու միջին բիզնեսի համար հարկային դրույքաչափերի բարձրացումը, հարկերի հաշվարկման և վճարման կանոնների բարդացումը չեն կարող ներդրվել առանց հիմնավոր պատճառների և փորձաքննություն անցնելու: Սոցիալականից պետք է անցնել արդյունաբերական գյուղատնտեսության:

3. Սոցիալական ոլորտում առաջնահերթությունները պետք է լինեն կրթությունը, այն դարձնելով առավել որակյալ և մրցունակ, ամրապնդել աշխատաշուկայի հետ կապ ապահովող, սոցիալական պաշտպանությունը՝ նպաստելով յուրաքանչյուր քաղաքացու՝ նվազագույնից ոչ ցածր եկամուտ և բնակտարածք ունենալու իրավունքի իրացմանը, առողջապահությունը՝ ներդնելով առողջության պարտադիր ապահովագրության համակարգ:

4. Արտադրության և անվտանգության համակարգերում հրամայական են արդարության հաստատման օրենսդրակիրառական վերափոխումներ իրականացնելը:

Գրականության ցանկ

1.Мировая экономика/под ред. доктора экономических наук, профессора Булатова А./ М. 2003, с.40

2. Мировые демографические тенденции. Доклад Генерального секретаря ООН, E/CN 9/2011/6 с.7

3. ԼՂՀ ԱՎԾ <ԼՂՀ ժողովրդագրական ժողովածու>, ըստ տարիների

4. <<Սոցիալ-տնտեսական վիճակը ԼՂՀ –ում>> զեկույցը ըստ տարիների

Տեղեկություններ հեղինակի մասին.

Մանուշ Մինասյան-տ.գ.թ, ԱրՊՀ «Տնտեսագիտության տեսության և կառավարման» ամբիոնի դոցենտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ., Շ.Շ.Ասրյանը:

ՀՏԴ 336.77(479.243) Տնտեսագիտություն

ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ

Արևիկ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *հիփոթեքային վարկ, հիփոթեքային վարկավորման արևմտյան մոդելներ, գերմանական մոդել,բաց հատյալ մոդել , բաց ընդլայնված մոդել, սեքյուրտիզացիա,ապահովված հիփոթեքային պարտատոմսեր, LTV*

Ключевые слова: *ипотечный кредит, западные модели ипотечного кредитования, замкнутая (немецкая) модель,усеченно-открытая модель, расширенно открытая модель, секюритизация, LTV.*

Keywords: *mortgage, the Western model of mortgage lending, closed (German) model, truncated open model, the expansion of the open model, Securitization, the LTV.*

А. Алексанян

ЗАПАДНЫЕ МОДЕЛИ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ И ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ В НКР

Основным инструментом для обеспечения и улучшения жилищных условий населения В Нагорно-Карабахской Республике является ипотечное кредитование. Главная проблема жилищного ипотечного кредитования является оптимальный выбор тех ресурсов, которые используют финансово-кредитные организации для финансирования ипотечных кредитов. В этой статье представлены западные модели ипотечного кредитования ,механизмы их реализации, преимущества и недостатки каждой модели, а также текущее состояние ипотечного кредитования в Нагорно-Карабахской Республики, проблемы и возможности внедрении западных моделей.

A. Aleksanyan

THE WESTERN MODELS OF MORTGAGE LENDING AND THE POSSIBILITY OF IMPLEMENTATION IN NKR

The main tool to ensure and improve the living conditions of the population in the Nagorno Karabakh Republic is a mortgage lending. The main problem of mortgage lending is the optimum choice of the resources used by the financial and credit organizations to finance mortgage loans. This article presents western model of mortgage lending mechanisms for their implementation, the advantages and disadvantages of each model, as well as the current state of mortgage lending in the Nagorno-Karabakh Republic, challenges and opportunities for the implementation of the western models.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում բնակչության բնակարանային պայմանների ապահովման և բարելավման հիմնական գործիքն է հանդիսանում հիփոթեքային վարկավորումը:Բնակարանային հիփոթեքային վարկավորման հիմնախնդիրներից մեկը այն ռեսուրսների առավել արդյունավետ տարբերակների ընտրությունն է, որոնք օգտագործում են ֆինանսավարկային կազմակերպությունները հիփոթեքային վարկերի ֆինանսավորման համար: Այդ պատճառով հոդվածում ներկայացվում են հիփոթեքային վարկավորման արևմտյան մոդելները, դրանց իրականացման մեխանիզմները, յուրաքանչյուր մոդելի առավելություններն ու թերությունները, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում հիփոթեքային վարկավորման ներկա իրավիճակը, առկա խնդիրները, և արևմտյան մոդելների ներդրման հնարավորությունները:

Սովորաբար հիփոթեքային վարկավորման մոդելները դասակարգվում են՝ հաշվի առնելով, թե ֆինանսավարկային կազմակերպությունները ինչ միջոցների հաշվին են տրամադրում հիփոթեքային վարկեր: Դրանք կարող են լինել հիփոթեքային վարկ տրամադրող հաստատության սեփական միջոցները, միջբանկային վարկերը, ապահովագրական, կուտակային և այլ հիմնադրամների կողմից կատարվող ներդրումները, հաճախորդների դեպոզիտային հաշիվները, ֆինանսական գործառնությունների հետևանքով վարկատուների տրամադրության տակ գտնվող ազատ դրամական միջոցները:

Բնակարանային հիփոթեքային վարկավորման հիմնախնդիրներից մեկն այդ ռեսուրսների առավել արդյունավետ տարբերակների ընտրությունն է: Կարելի է առանձնացնել իրարից սկզբունքայնորեն տարբերվող երեք մոդելներ՝ փակ ինքնավար, բաց հատյալ և բաց ընդլայնված[1]: Վերջինս իր հերթին տարանջատվում է միամակարդակ և երկմակարդակ մոդելների: Սակայն, մոդելների տարանջատումը չի նշանակում, որ որևէ երկրում գործում է հիփոթեքային վարկավորման միայն կոնկրետ մեկ մոդել: Հիփոթեքային վարկավորման ֆինանսավորման տարբեր մոդելները գործում են միմյանց հետ, փոփոխվում և զարգանում են յուրաքանչյուր մոդելում կիրառվող գործիքներն ու մեխանիզմները:

[1] *Разумова И.А.,"Ипотечное кредитование":Учебное пособие. Санкт-Петербург стр.94.*

Ներկայացնենք հիփոթեքային վարկերի ֆինանսավորման մոդելները՝ պարզաբանելու համար, թե որ մոդելը կարելի է ներդնել ԼՂՀ-ում `հիփոթեքային վարկի շուկան առավել արդյունավետ զարգացնելու համար:

Փակ ինքնավար մոդելն այլ կերպ անվանում են գերմանական մոդել, որի դեպքում հիփոթեքային վարկը տրամադրվում է «փոխադարձ օգնության սկզբունքի»հիման վրա: Վարկեր տրամադրող կազմակերպությունները փոխատվական–խնայողական բանկերն են: Տվյալ դեպքում վարկառուն տվյալ բանկից իրավունք ունի ձեռք բերել հիփոթեքային վարկ միայն այն դեպքում, երբ նախկինում իր ազատ դրամական միջոցները ներ է դրել այդ բանկում: Այսինքն, եթե վարկառուն որոշում է ձեռք բերել հիփոթեքային վարկ տվյալ բանկից, ապա կազմվում է խնայողական-վարկային պայմանագիր, որը իրականացվում է երկու փուլերով[1]՝

1. Խնայողությունների կուտակման հատված: Այս փուլում ապագա վարկառուն կատարում է որոշակի գումարի ներդրումներ տվյալ բանկում, օրինակ բնակարանի արժեքի 50%-չափով: Այդ տոկոսադրույքի դիմաց նա ստանում է տարեկան ֆիքսված տոկոսադրույքով եկամուտ, միջինում՝ 3%:

2. Վարկի տրամադրման հատված: Երբ վարկառուն կուտակում է անհրաժեշտ գումարը, վարկատու կազմակերպությունը վարկ է տրամադրում բնակարանի արժեքի գումարի տարբերության չափով՝միջինը 5% տոկոսադրույքով:

Այս մոդելը նպատակահարմար է և՛ վարկառուի, և՛ վարկատուի համար: Վարկառուի համար այս մոդելի առավելությունը կայանում է նրանում, որ տվյալ դեպքում վարկային հաստատությունները ավելի շատ արտոնություններ են տրամադրում հաճախորդներին, քան հիփոթեքային բանկերը: Բացի դրանից միջոցների կուտակման շնորհիվ վարկառուն գնահատում է իր հնարավորությունները, ինչպես նաև վարկի ստացման դեպքում «հարմարվում է» վարկային կարգապահության: Իսկ բանկը շինարարա-խնայողական պայմանագրերի կուտակային ժամանակահատվածում ձևավորում է հաճախորդի վարկային պատմությունը և գնահատում է ապագայում նրա վարկի մարման հնարավորությունը:

Մոդելն անկախ լինելու պատճառով բացարձակապես կախված չէ ֆինանսական շուկայում տեղի ունեցող փոփոխություններից:

Այսպիսով, առաջին մոդելի դեպքում հիփոթեքային վարկերը ֆինանսավորվում են ապագա վարկառուների կողմից կատարվող ներդրումների հաշվին:

Երկրորդ մոդելը գործում է հիփոթեքային բանկերի փոքրագույն քանակության դեպքում և դրանք կարծես թե ֆինանսական համակարգի այլ մասերից կոնկրետ հատվածներ են: Այս մոդելը սահմանափակվում է գրավաթղթերի առաջնային շուկայի շրջանակներում, այսինքն բանկի կողմից ստացված գրավաթղթերը այլևս չեն կարող ուղղվել լրացուցիչ վարկային միջոցներ ներգրավելու համար: Բանկի կողմից տրված հիփոթեքային վարկերը կարող են ֆինանսավորվել մի շարք աղբյուրներից՝ սեփական կապիտալի հաշվին, հաճախորդների դեպոզիտային հաշիվներում ազատ դրամական միջոցների հաշվին, միջբանկային վարկերի հաշվին: Պարզ է, որ բանկի կողմից տրամադրվող վարկերի տոկոսադրույքներն ուղղակիորեն կախված են ֆինանսական շուկայի իրավիճակից, ԿԲ-ի կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականությունից և ներքին ու արտաքին մի շարք գործոններից: Հիփոթեքային վարկավորման կազմակերպման համեմատաբար պարզությունը պայմանավորել է երկրների շատ լայն շրջանակ, որտեղ գործում է այս համակարգը, հատկապես զարգացող երկրներում, որտեղ դեռևս ամբողջությամբ չեն ձևավորվել ֆինանսական և արժեթղթերի շուկաների ենթակառուցվածքները:

Երրորդ մոդելը բաց ընդլայնված մոդելն է: Այս մոդելում վարկերի ֆինանսավորումն իրականացվում է երկրորդային շուկայի հաշվին, հիմնականում կենսաթոշակային և ապահովագրական ինստիտուտների միջոցներով: Բաց մոդելը հիմնված է հիփոթեքային պարտատոմսերի թողարկման վրա: Հիփոթեքային պարտատոմսը երկարաժամկետ արժեքուղթ է, որը թողարկվում է անշարժ գույքի սեփականության գրավադրման դիմաց և որը բերում է ֆիքսված տոկոսադրույք[2]: Այս մոդելը կարող է լինել միամակարդակ և երկմակարդակ:

Միամակարդակ մոդելի էությունը կայանում է նրանում, որ տրամադրելով հիփոթեքային վարկ, բանկը ինքն է թողարկում պարտատոմս՝ հիմք ընդունելով հիփոթեքային վարկերի գրավաթղթերը[3]: Այդ

[1] *Афонина А.В.,"Все об ипотеке". ЛитРес 2008, стр 18.*

[2] *Косарева Н.Б.. "Основы ипотечного кредитования",Москва 200. ;стр 241.*

[3] *.Демченко Н.Л, "Зарубежный опыт развития ипотечного кредитования жилой недвижимости", Всероссийская государственная налоговая академия Министерства финансов РФ, Москва 2012г.*

գրավաթղթերի թողարկումը և շրջանառությունը վերահսկվում և կանոնակարգվում է օրենսդրությամբ: Հիփոթեքային պարտատոմսի թողարկումից հետո բանկը այն վաճառում է բաց շուկայում:

Հիփոթեքային վարկի միամակարդակ մոդելի մեխանիզմը ներկայացված է գծապատկեր 1-ում[1]:



Գծապատկեր 1: Հիփոթեքային բանկի գործունեության կազմակերպումը հիփոթեքային վարկի միամակարդակ մոդելի դեպքում

Ներդրողների դերում կարող են հանդես գալ այլ վարկային և ֆինանսական հաստատություններ, ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային հիմնադրամներ: Հիփոթեքային պարտատոմսերը շրջանառվում են ինչպես երկրի ներքին, այնպես էլ միջազգային շուկաներում: Դրանք կազմում են ապահովագրական ընկերություններնի և այլ ֆինանսական հաստատությունների ներդրումային պորտֆելի գերակշիռ մասը: Մի շարք եվրոպական երկրներում գործում են այնպիսի մեխանիզմներ, որտեղ միայն հիփոթեքային բանկը կարող է տրամադրել վարկը պարտատոմսերի թողարկման միջոցով: Բացառություն է կազմում Իսպանիան, որտեղ ցանկացած բանկ կարող է թողարկել հիփոթեքային պարտատոմս: Չնայած իր երկարամյա պատմության, հիփոթեքային պարտատոմսերի մոդելը շատ քիչ է տարածված: Արևմտյան Եվրոպայում հիփոթեքային պարտատոմսերի թողարկմամբ ֆինանսավորվող հիփոթեքային վարկերի ծավալի 75 տոկոսը բաժին է ընկնում երեք երկրների՝ Դանիա, Շվեդիա, Գերմանիա:Դանիայում հիփոթեքային վարկերի համարյա 100 տոկոսը ֆինանսավորվում են հիփոթեքային պարտատոմսերի թողարկման շնորհիվ, Շվեդիայում՝ 70, իսկ Գերմանիայում՝ 20: Մի շարք երկրներում՝ Մեծ Բրիտանիա, Իռլանդիա, Բելգիա, Հունաստան, այս մոդելը ընդհանրապես չի կիրառվում: Միամակարդակ մոդելի առավելություններն են.

1. Հիփոթեքային հարաբերությունների պարզությունը և դրանց կազմակերպման հեշտությունը,
2. Վարկային ռիսկերի ապահովագրման բացակայությունը,
3. Վարկանշային կազմակերպությունների ծառայություններից օգտվելու հնարավորությունները,
4. Օրենսդրական կարգավորման պարզությունը:

Այսպիսով, միամակարդակ մոդելի դեպքում հիփոթեքային վարկերի ֆինանսավորման հիմնական աղբյուրը հիփոթեքային պարտատոմսերն են, որոնք ապահովված են անշարժ գույքի գրավաթղթերով:

Երկմակարդակ մոդելը ենթադրում է հիփոթեքային շուկայում հատուկ միջնորդների առկայություն, որի դերում կարող են հանդես գալ խոշոր հիփոթեքային բանկեր կամ մասնագիտացված վարկային կազմակերպություններ: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը,մի շարք երկրներում այդպիսի մասնագիտացված ընկերությունների ստեղծման նախաձեռնողը պետությունն է: Սակայն, հետագա զարգացման ընթացքում պետությունը նախաձեռնությունը տալիս է անհատներին: Ամենից շատ դա արտահայտված է ԱՄՆ-ում:

Մոդելի էությունը կայանում է նրանում, որ բանկը՝ էմիտենտը, տրամադրելով վարկ, այն անմիջապես վաճառում է մասնագիտացված կազմակերպությանը՝ կոնդուիտին: Այս դեպքում հիփոթեքային վարկը բանկի հաշվեկշռից դուրս է գալիս և հաշվառվում է կոնդուիտի հաշվեկշռում: Կոնդուիտի կողմից իրականացվում է այսպես կոչված «վարկի ամրապնդում»: Նա ձեռք բերված հիփոթեքային վարկերը խնբավորում է ըստ տարբեր հատկանիշների, դրանց գրավադրմամբ թողարկում է հիփոթեքային պարտատոմսեր և վաճառում է ներդրողներին: Ընդ որում, կոնդուիտը ապահովագրում է հիփոթեքային

[1].Разумова И.А,"Ипотечное кредитование":Учебное пособие. Санкт-Петербург ,2005.стр.97

ռիսկը: Այս գործընթացը կոչվում է սեքյուրիտիզացիա (արժեթղթավորում)՝ որի դեպքում հիփոթեքային վարկերը փոխակերպվում են հիփոթեքային պարտատոմսերի[1]:

Սակայն ոչ բոլոր հիփոթեքային վարկերն են ենթարկվում սեքյուրիտիզացիայի: Դա վերաբերում է միայն այն ակտիվներին, որոնք համապատասխանում են հիփոթեքային վարկերի սահմանված ստանդարտներին: Այսպիսի մոդելի կիռառման դեպքում հիփոթեքային բանկերի դերը և գործառույթները արմատապես փոխվում են:

Պարզ է , որ այս մոդելի զարգացումը ենթադրում է հիփոթեքային վարկի երկրորդային շուկայի առկայություն, այսինքն շուկայի, որտեղ վաճառվում են արդեն տրամադրված հիփոթեքային վարկերը:

Հիփոթեքային վարկավորման երկրորդային շուկայի գործունեությունը ներկայացված է գծապատկեր 2-ում [2]:



Գծապատկեր 2: Հիփոթեքային վարկի երկրորդային շուկայի իրականացման մեխանիզմը

Բաց ընդլայնված մոդելի իրականացումն ապահովված է միայն հիփոթեքային շուկայի ընդլայնված ենթակառուցվածքների առկայության դեպքում, որպես կանոն, պետական որոշակի աջակցության շնորհիվ և հիփոթեքային արժեթղթերի թողարկման նկատմամբ վերահսկողության պայմաններում: Այս մոդելն անվանում են նաև ամերիկյան, քանի որ իր զարգացման գագաթնակետին է հասել հենց ԱՄՆ-ում:

Ուսումնասիրելով հիփոթեքային վարկերի ֆինանսավորման մոդելները՝ դժվար չէ եզրահանգել, որ ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործում է հիփոթեքային վարկավորման բաց հատյալ մոդելը:

ՀՀ-ում առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները հիփոթեքային վարկեր սկսեցին տրամադրել 2005թ. ապրիլ ամսից: Տրամադրված վարկերի շարժընթացը՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներկայացված է 3 գծապատկերում[3]:

[1] *Разумова И.А.,"Ипотечное кредитование":Учебное пособие. Санкт-Петербург ,2005,стр 31*
[2] *Разумова И.А.,"Ипотечное кредитование":Учебное пособие. Санкт-Петербург ,2005, стр100*

[3] *ՀՀ ԿԲ Վիճակագրական տեղեկագրեր՝ 2005-2015 թթ.*



Գծապատկեր 3 ՀՀ-ում հիմփոթեքային վարկերի շարժընթացը

Գծապատկեր 3-ից պարզ երևում է, որ հիփոթեքային վարկերի ծավալները կտրուկ աճեցին 2012 թվականից, այսինքը երբ նորից ՀՀ-ում տնտեսական անկում չկար և ՀՀ տնտեսությունը սկսեց վերականգնվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հասցրած վնասներից հետո: Բացի դրանից ավելի շատ վարկեր են տրամադրվում ԱՄՆ դոլարով, ինչը բարձրացնում է ՀՀ-ում դոլարայնացման մակարդակը:

ԼՂՀ-ում հիփոթեքային վարկավորման շուկան սկսեց ձևավորվել 2008 թվականից, երբ Կառավարությունը, շուկայում առկա բնակարանների բարձր գները համեմատաբար մատչելի դարձնելու, ԼՂՀ բնակիչների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով, հաստատել է հիփոթեքային վարկավորմամբ բնակարան/առանձնատուն/ձեռք բերելու կամ վերանորոգելու ֆինանսական աջակցության ծրագիրը: Ծրագիրն իրականացնում է Արցախի Ներդրումային Հիմնադրամը, որի հետ համագործակցում են բանկեր և վարկային կազմակերպություններ: 2015թ. վարկերի տրամադրումն ըստ հիմնադրամի հետ համագործակցող կազմակերպությունների ներկայացված է գծապատկերում:[1]



Գծապատկեր 4: Վարկերի տրամադրումն ըստ ֆինանսավարկային կազմակերպությունների

Գծապատկեր 4-ից երևում է, որ 2015 թ ամենից շատ և մատչելի վարկեր տրամադրվել է «Ֆիդես Հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից,իսկ մյուս բանկերի կողմից վարկերը հիմնականում տրամադրվել են ԱՄՆ դոլարով:Ընդհանրացնելով նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում և ԼՂՀ-ում հիփոթեքային վարկեր են տրամադրում ՀՀ ԿԲ-ի կողմից լիցենզավորված բանկերը և վարկային կազմակերպությունները: Որպես հիփոթեքային վարկերի ֆինանսավորման աղբյուր հանդես են գալիս բանկերի սեփական կապիտալը, հաճախորդների դեպոզիտային հաշիվների մնացորդները, միջբանկային և պետական վարկերը և այլն:

ՀՀ-ում և ԼՂՀ-ում գործում է պետական աջակցության ծրագրեր՝հիփոթեքային վարկի շուկայի զարգացման համար: Տրամադրվում են սուբսիդիաներ, հարկային արտոնություններ այն քաղաքացիներին, ովքեր իրենց բնակարանային պայմանների բարելավման համար ձեռք են բերել հիփոթեքային վարկեր: Սակայն հիփոթեքային շուկայի զարգացմանը խոչընդոտում են հետևյալ գործոնները.

[1] *Տվյալները վերցվել են Արցախի Ներդրումային Հիմնադրամի «2015 թվականի հաշվետվությունից»*

1. Բանկերը և վարկային կազմակերպությունները հիփոթեքային վարկեր են տրամադրվում միայն ՀՀ և ԼՂՀ ռեզիդենտներին,
2. Չնայած տարածաշրջանի երկրների համեմատ ԼՂՀ-ում հիփոթեքային վարկերի տոկոսադրույքները համեմատաբար ցածր են, այնուամենայնիվ դրանք դեռևս դժվարամատչելի են հասարակության լայն խավերի համար,
3. Հիփոթեքային վարկավորման ծրագրերը հիմնականում վերաբերում են երիտասարդներին,
4. Կանխավճարի մեծ չափը: ՀՀ-ում ամենատարածված պայմաններից մեկը LTV-ի[1] 70% արժեքն է, որի դեպքում բնակչությունը չի կարողանում հայթայթել բնակարանի արժեքի մյուս գումարը:
5. Անշարժ գույքի շուկայում գների բարձր մակարդակը և այլն:

Որպեսզի ունենանք արևմտյան երկրների պես զարգացած հիփոթեքային շուկա, պետք է շարունակական իրականացնենք հետևյալ քայլերը.

1. Առաջին հերթին պետք է շարունակենք կատարելագործել բաց հատյալ մոդելը, մտցնենք հիփոթեքային վարկավորման ավելի արդյունավետ գործիքներ և մեխանիզմներ:
2. Մանրամասն ուսումնասիրենք հիփոթեքային վարկավորման գերմանական կամ փակ մոդելը: Այս դեպքում պետք է ստեղծվեն փոխատվական-խնայողական բանկեր,որոնց գործունեության կարգավորման համար պետության կողմից պետք է մշակվի և ընդունվի համապատասխան օրենսդրություն, որում հստակ կձևակերպվեն փոխատվական-խնայողական բանկերի գործունեության առանձնահատկությունները, պայմանագրերի կնքման կարգը,պայմանները, ինչպես նաև գերմանական մոդելին վերաբերող մյուս նախապայմանները: Օրենսդրության կատարելագործվածության մակարդակից է կախված լինելու հետագա ձեռքբերումների որակը:
3. Գերմանական մոդելի ուսումնասիրությունից և ներդրումից հետո պետք է ուսումնասիրենք մյուս մոդելները: Քանի որ մեր պետությունում ֆինանսական համակարգի ենթակառուցվածքները դեռևս զարգացման փուլում են, ապա ավելի նպատակահարմար է սկզբնական շրջանում ուսումնասիրել միամակարդակ մոդելը: Այս դեպքում պետությունը նույնպես պետք է կանոնակարգի հիփոթեքային պարտատոմսերի թողարկման գործընթացը ,ինչպես նաև արտոնություններ տրամադրի այդ պարտատոմսերը ձեռքբերողներին: Հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում 2008թ.-ի մայիսի 26-ին ընդունվեց «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» օրենք, որի նպատակն էր հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված մոդելի ներդնումը,սակայն դեռևս այս մոդելը չի ներդրվել ՀՀ-ում:Ցանկալի է, որ ապագայում պարտատոմսերի գնման իրավունք ունենային ոչ միայն իրավաբանական, այլ նաև ֆիզիկական անձինք:

Ընդհանրացնելով նշենք, որ հիփոթեքային վարկավորման համակարգերի կատարելագործվածության մակարդակը ուղղակի կապ ունի տվյալ երկրի տնտեսության զարգացման մակարդակի հետ:Սակայն այն կախված է նաև այն մասնագետների որակավորվածության աստիճանից, որոնք զբաղվում են հիփոթեքային վարկերի ուսումնասիրությամբ և լավագույն տարբերակների ներդրմամբ: Վերջին տարիներին, ԼՂՀ-ը և ՀՀ-ը խթանում է գիտելիքահենք տնտեսության ստեղծումը: Հուսանք,որ դա կնպաստի մասնագետների որակավորման մակարդակի աճին, ինչն էլ իր հերթին կնպաստի հիփոթեքային վարկի շուկայի կատարելագործմանը:

Օգտագործած գրականություն

1. РазумоваИ.А,"Ипотечное кредитование": Учебное пособие. Санкт-Петербург ,2005,
2. АфонинаА.В.,"Все об ипотеке". ЛитРес 2008,
3. Косарева Н.Б.. "Основы ипотечного кредитования",Москва 2006
4. Демченко Н.Л, "Зарубежный опыт развития ипотечного кредитования жилой недвижимости", Всероссийская государственная налоговая академия Министерства финансов РФ, Москва 2012г.
5. Արցախի Ներդրումային Հիմնադրամ. «2015թ. գործունեության հաշվետվություն»,
6. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի պաշտոնական տվյալներ, www.cba.am,

Տեղեկություններ հեղինակի մասին.

Արևիկ Ալեքսանյան

E-mail: arevik.aleksanyan@bk.ru

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.թ. Մ.Մ.Մինասյանը:

[1] *LTV ասելով հասկանում ենք վարկի գումարի և ձեռք բերվող օբյեկտի արժեքի հարաբերակցությունը*

ՀՏԴ 343 Քրեական դատավարություն

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գուրգեն ՆԵՐՍԻՍՅԱՆ

Բանալի բառեր *- Նախագիծ, համագործակցության վարույթ, պաշտպան, պարտադիր, մասնակցություն, դատավարություն, միջնորդություն, մեղադրյալ, ցանկություն, ներգրավում, հայտնել, քննարկում, պաշտպանության իրավունք:*

Ключевые слова - *Проект, производство о сотрудничестве, зашитник, обязательный, участие, судопроизводство, ходатайство, обвиняемый, желание, привлечение, выразить, обсуждение, право на защиту.*

Keywords - *Project, production cooperation, defender, mandatory, partisipation, procedure, application, accused, desire, bringing, express. discussion, right to protection.*

Г.Нерсисян

ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЗАЩИТЫ ОБВИНЯЕМОГО В ПРОЦЕССЕ СОТРУДНИЧЕСТВА

В данной статье была сделана попытка обосновать, что при досудебном соглашении о сотрудничестве, предусмотренном в 56-ой главе проекта уголовно-процессуального кодекса РА, обязанность следственного органа – обеспечивать обязательное присутствие защитника, должно происходить не после предъявления обвиняемым ходатайства, а с момента появления желания его предъявления. По нашему мнению обеспечить реальную и эффективную защиту прав обвиняемого возможно только так.

G.Nersisyan

PROBLEMS ON THE PROTECTION OF THE RIGHTS OF THE ACCUSED IN THE COOPERATION PROCESS

It was substantiated in this article that according to AR Code of Criminal procedure chapter 56 mandatory duty to ensure the participation of the body conducting the criminal proceedings must arise not by the motion of the defendant but from the point when the wish was presented. We think that it is the only way possible to ensure effective and real protection of the rights of the accused.

Սույն հոդվածում փորձ է արվել հիմնավորելու, որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 56-րդ գլխում նախատեսված «Համագործակցության վարույթում» պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը պետք է ծագի ոչ թե մեղադրյալի կողմից միջնորդություն ներկայացնելու, այլ այն ներկայացնելու ցանկություն հայտնելու պահից: Ըստ մեզ միայն այդ կերպ է հնարավոր ապահովել մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետությունն ու իրական լինելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի /այսուհետ Նախագիծ/ 56-րդ գլուխը սահմանում է «Համագործակցության վարույթի» ծագման հիմքերն ու ընթացակարգը, դրա մասնակիցների՝ վարույթի խնդիրների ու նպատակների իրացման հնարավորությունն ապահովող փոխհարաբերությունները, մինչդատական վարույթի ու դատական քննության առանձնահատկությունները և այլն: Այս ինստիտուտը ՀՀ քրեական արդարադատության համակարգում նորույթ է, որի հիմնական նպատակը կազմակերպված, կոռուպցիոն բնույթի և գաղտնիության պայմաններում կատարվող ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների դեմ պայքարի նոր մարտավարությամբ նման հանցանքների բացահայտումն ու հանցագործների մերկացումն է:

Ընդհանուր առմամբ այս ինստիտուտը համապատասխանում է արտասահմանյան երկրների համանուն մոդելներ ունեցող ինստիտուտների կարգավորումներին, սակայն Նախագիծը պարունակում է որոշակի թերություններ, որոնք առանձին դեպքերում չեն ապահովում համագործակցության վարույթի մասնակիցների իրավունքների ու օրինական շահերի

երաշխավորված պաշտպանությունը, համագործակցող կողմերի փոխհարաբերությունների կոնկրետությունն ու հստակությունը:

Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման, մասնավորապես համագործակցության վարույթին պաշտպանի ներգրավման հետ կապված որոշակի խնդիրներ, որի համատեքստում քննարկման է ենթակա այն հարցը, թե համագործակցության վարույթի հարուցման փուլում որ պահից պետք է ծագի պաշտպանի պարտադիր մասնակցությունն ապահովելու՝ քրեական վարույթն իրականացնող մարմնի պարտականությունը:

Նախագծի 461-րդ հոդվածի համաձայն՝

1. Համագործակցության միջնորդությունը հասցեագրվում է հսկող դատախազին և ստորագրվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից:

/ … /:

4. Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե միջնորդությունը ներկայացնելու պահին մեղադրյալը պաշտպան չունի, ապա քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ քննարկել միջնորդությունը:[1]

Նախագծի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քրեական վարույթն իրականացնող մարմինը անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

/ … /:

9) մեղադրյալը միջնորդել է կիրառել համաձայնեցման կամ համագործակցության վարույթ»:

Հիշյալ իրավանորմերի պահանջից բխում է, որ համագործակցության վարույթի ծագման հիմքը համաձայնագիր կնքելու մեղադրյալի գրավոր միջնորդությունն է՝ ստորագրված ներկայացնողի ու պաշտպանի կողմից: Ընդ որում Նախագիծը մեղադրյալին պաշտպանով ապահովելու պարտադիր պայման է սահմանել միջնորդությունը ներկայացնելու պահին պաշտպան չունենալը:

Նախագծի 461-րդ հոդվածի 3-րդ մասի ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգելու, որ այն պարունակում է համաձայնագիր կնքելու միջնորդության ձևի ու բովանդակության որոշակի կառուցվածք, որի պահանջների պահպանմամբ համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացվելու դեպքում միայն կարող է ծագել քրեական վարույթն իրականացնող մարմնի՝ պաշտպան չունեցող մեղադրյալին պաշտպանով ապահովելու Նախագծի 46-րդ հոդվածից բխող պարտականությունը:

Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասի գործնական կիրառությունը ենթադրում է միմյանց հաջորդող հետևյալ գործողությունների պարտադիր կատարում՝

ա/ պաշտպան չունեցող մեղադրյալը պետք է կազմի մինչդատական համաձայնագիր կնքելու մասին գրավոր միջնորդություն և այն ներկայացնի քննիչին,

բ/ քննիչը պետք է հավաստիանա, որ մեղադրյալի կողմից ներկայացվող միջնորդությունը համաձայնագիր կնքելու վերաբերյալ է, այնուհետև

գ/ քննիչը պարտավոր է չընդունել միջնորդությունը, ներգրավել պաշտպան՝ մեղադրյալին ընձեռելով միջնորդությունը պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն:

Այդպիսով՝ Նախագծում տրված իրավակարգավորումը ենթադրում է, որ մեղադրյալի՝ պարտադիր պաշտպանով ապահովվելու իրավունքը, հետևաբար նաև քրեական վարույթն իրականացնող մարմնի հակընդդեմ պարտականությունը ծագում է մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու դեպքում:

Մեր կարծիքով քննարկող խնդրի նման կարգավորումը նպատակահարմարության ու իրավական տեսանկյունից խոցելի է հետևյալ պատճառաբանություններով.

ա/ Պաշտպան չունեցող մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդությամբ հանդես գալու դրսևորումները տեսականորեն կարող են արտահայտվել տարբեր ձևերով՝

միջնորդությունը /պաշտպանի հետ չքննարկված/ փոստով ուղարկելու, անձամբ կամ միջնորդավորված ներկայացնելու կամ այլ եղանակներով, որից հետո ըստ Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասի քննիչը ստանձնում է մեղադրյալին պաշտպանով ապահովելու պարտականություն՝ նրան ընձեռելով միջնորդությունը պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն: Սակայն այդպիսի պայմաններում վարույթն իրականացնող մարմինը ստանում է պաշտպանի հետ չքննարկված միջնորդության բովանդակությանը ծանոթանալու հնարավորություն և դրանից ստացված տեղեկատվությունը անուղղակիորեն օգտագործելու եղանակով քննիչը կարող է ձևավորել նույն միջնորդությունը դատախազի կողմից հետագայում մերժելու հիմքեր, ինչը պարունակում է մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի ոտնահարման իրական սպառնալիք: Հիշյալ փուլում պաշտպանի մասնակցությունը ենթադրում է վերջինիս կողմից մեղադրյալին դատավարական իրավունքների պարզաբանում և ենթադրյալ համագործակցության վարույթի շրջանակում ստանձնվող պարտականությունների ծավալի կատարման հնարավորության, ինչպես նաև դրա արդյունքում դատախազի կողմից «ընդառաջելու» պաշտպանության կողմի համար ակնկալվող տարբերակների քննարկում[2]: Դրանից ենթադրվում է, որ պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո մեղադրյալը կարող է նաև հրաժարվել համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու իրավունքից, մինչդեռ այդ դեպքում քննիչը նույնպես կունենա պաշտպան չունեցող մեղադրյալից ստացված միջնորդության բովանդակությունը օգտագործելու իրական հնարավորություն: Նախագծի 120-րդ հոդվածը, որը սահմանում է որպես ապացույց չթույլատրվող նյութերը, չի պարունակում համաձայնագիր կնքելու միջնորդության բովանդակությունից բխող տեղեկատվության /հատկապես այն դեպքում, երբ միջնորդությունը գտնվում է մեղադրյալի ու նրա պաշտպանի կողմից քննարկման կամ դատախազի կողմից ուսումնասիրության փուլում/ օգտագործման անթույլատրելիությունն արձանագրող պահանջ այն դեպքում, երբ մեղադրյալը պաշտպանի հետ քննարկելուց հետո չի պնդում միջնորդությունը կամ հրաժարվում է միջնորդությունից: Ավելին, Նախագիծը չի սահմանում նաև համագործակցության համաձայնագիր կնքելու միջնորդությունը մերժելու, ինչպես նաև մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները չկատարելու դեպքում նրա կողմից ներկայացված ապացույցների օգտագործման արգելք, ինչպիսի դրույթ նախատեսված է, օրինակ, Ամերիկայի Միացյալ Նահանգների դատավարական օրենսդրությամբ: Այսպես, ԱՄՆ դատարաններում քրեական դատավարության դաշնային կանոնների համաձայն (11-րդ կանոն կետ E), եթե մեղադրողի ու մեղադրյալի միջև համագործակցության համաձայնություն ձեռք չի բերվել, ապա մեղադրողը իրավասու չէ օգտագործելու այն ապացույցները, որոնք ձեռք են բերվել մեղադրյալի կողմից <<մեղքն ընդունելու մասին գործարք>> կնքելու միջնորդության քննարկման ընթացքում: Սա մի երաշխիք է, որն ուղղված է ապահովելու ի թիվս այլոց նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքը և անվտանգությունը:

Պայմանականորեն ընդունենք, որ համաձայնագիր կնքելու միջնորդության մեջ նշվել էր այն անձի անունը, ում հանցավոր դեպքին մասնակցությունը հիմնավորող ապացույցներ ներկայացնելու պարտականություն էր ստանձնել մեղադրյալը, ինչպես նաև ներկայացրել էր այլ փաստարկներ, որոնք կարող էին միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու համար <<ընդունելի>> գնահատվել: Նախքան միջնորդությունը մեղադրյալի կողմից պաշտպանի հետ քննարկելը, քննիչը կստանա տվյալ անձին հարցաքննելու և մյուս փաստարկները ստուգելու իրական հնարավորություն, որի ընթացքում հարցաքննվողը կարող է, օրինակ, հանդես գալ խոստովանությամբ, ներկայացնել ինքնամերկացնող ապացույցներ՝ այդ կերպ սպառելով համագործակցության առարկան, ինչը կչեզոքացնի համագործակցության ցանկություն հայտնած մեղադրյալի կողմից ներկայացված միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու հավանականությունը:

Վերը ներկայացվածից ուղղակի բխում է, որ համագործակցելու մտադրություն ունեցող մեղադրյալը պետք է ունենա պաշտպանության իրավունքի իրացման լիարժեք հնարավորություն նախքան համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելը:

բ/ Համաձայն Նախագծի 49-րդ հոդվածի՝ պաշտպանը դատավարական իրավունքներն իրացնում է՝ նպատակ ունենալով պարզելու մեղադրանքը հերքող, մեղադրյալի պատասխանատվությունը բացառող կամ պատիժը և դատավարական հարկադրանքի միջոցները մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև պաշտպանելու նրա իրավունքները և իրավաչափ շահերը: Նույն հոդվածի համաձայն, հիշյալ նպատակներն իրացնելու համար պաշտպանը օժտված է մեղադրյալին՝ նրա իրավունքները պարզաբանելու իրավասությամբ:

Անձի պաշտպանության իրավունքի վերաբերյալ Եվրոպական դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում, որում մասնավորապես նշել է, որ Կոնվենցիան կոչված է երաշխավորելու ոչ թե տեսական և պատրանքային, այլ գործնականում և արդյունավետ իրականացվող իրավունքներ: Դա հատկապես վերաբերում է պաշտպանության իրավունքին (տե՛ս Արտիկոն ընդդեմ Իտալիայի (Artico v. Italy) գործով վճիռ, 1980թ., մայիսի 13, կետ 33, Հերմին ընդդեմ Իտալիայի (Hermi v. Italy) գործով վճիռ, 2006թ., հոկտեմբեր 18, կետ 95):

Համանման կարծիք է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը ԵԿԴ/0121/11/14 քրեական գործով 2015 թվականի մարտի 27-ի որոշմամբ, որում արված հետևությունը հիմնված է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ պարբերության այն պահանջի վրա, որ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, իսկ անմիջականորեն գործող իրավունքը չի կարող լինել վերացական[3]:

Գ.Ի.Զագորսկու գնահատմամբ քրեադատավարական երաշխիքները դրանք իրավական նորմերով ամրագրված միջոցների համակարգ են, որոնք ուղղված են ապահովելու դատավարության մասնակիցների իրավունքների իրացումը, դրանց պաշտպանությունը, խախտված իրավունքների վերականգնումը, օրինական շահերի պահպանությունը: Քրեադատավարական երաշխիքների հիմնական տարրերից է համարվում մեղադրյալի պաշտպանության երաշխքիները, որոնց էությունը կայանում է մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար օբյեկտիվ պայմանների ու իրական հիմքերի ստեղծման մեջ:[4]

Նախագծով առաջարկվող համագործակցության վարույթի ծահման փուլում պաշտպանի կողմից մեղադրյալին իրավունքների պարզաբանման հնարավորությունը պետք է լինի իրական ու առարկայական և ծառայի որպես անհրաժեշտ միջոց իրավական պաշտպանության այդ գործիքակազմի գործադրմամբ ու մեղադրյալի պաշտպանության տակտիկական ու իրավական հիմքերի ընտրությամբ դիմագրավելու ենթադրյալ մեղադրանքը և ընդհանրապես դատավարական բոլոր տեսակի բացասական հետևանքները: Այլ կերպ ասած՝ պաշտպանության կողմը պետք է ունենա պաշտպանական այն «զենքը», որը կտա նրան քրեական վարույթն իրականացնող մարմնի մեղադրական «հարձակումներից» պաշտպանվելու արդարացված հնարավորություն: Հակառակ դեպքում պաշտպանությունը կստանա դրվագային բնույթ և պաշտպանը ստիպված կլինի յուրաքանչյուր անգամ պաշտպանական գործառույթն ու մեխանիզմները վերակազմակերպել կամ վերադասավորել ըստ մեղադրանքի կողմի առաջադրած իրավիճակների ու պահանջների:

Նախագծի 461-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համագործակցության միջնորդության մեջ նշվում է, թե ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործությունը բացահայտելուն կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելուն աջակցելու նպատակով: Այսինքն հիշյալ միջնորդությունը բովանդակային առումով պետք է պարունակի վերոհիշյալ հոդվածի պահանջները բավարարող պայմանները: Ընդ որում ըստ Ա.Յու.Կիրսանովի, հիշյալ պայմանները պահպանելը կարևոր է նախ և առաջ հենց պաշտպանության կողմի համար, քանի որ առաջարկվող գործողությունների իրական լինելու և քննության տեսանկյունից օգտակարության աստիճանով է պայմանավորված միջնորդությունը դատախազի կողմից բավարարելու և համագործակցության համաձայնագիր կնքելու հավանականությունը[5]: Մինչդեռ ոչ բոլոր դեպքերում է, որ մեղադրյալը կարող է ծանոթ

լինել քրեադատավարական օրենսդրության առաջադրած պայմաններին կամ ունակ լինել կազմելու դատավարական այդպիսի փաստաթուղթ:

Հետևաբար համագործակցության վարույթի նախաձեռնման փուլում անհրաժեշտ է սահմանել մեղադրյալի իրավունքների իրացման այնպիսի ձևաչափ, որում նրա պաշտպանության և պաշտպանի հետ խորհրդակցելու կամ վերջինիս հետ դիրքորոշումը քննարկելու կամ համաձայնեցնելու հնարավորությունները լինեն իրական ու անխոցելի, պաշտպան ունենալու մեղադրյալի իրավունքը պետք է ծագի նախքան միջնորդություն կազմելը, որը կարող է դիտվել նրա՝ որպես համագործակցության ցանկություն հայտնած դատավարական սուբյեկտի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման երաշխիք:

Համագործակցության մասին համաձայնագիր կնքելու փուլում պաշտպանի պարտադիր ներգրավման՝ Նախագծով սահմանված կարգավորմանը համահունչ մոտեցում են պարունակում նաև մի շարք այլ պետությունների՝ մասնավորապես Ռուսաստանի դաշնության[6] և Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերը[7]:

Ներկայացվող խնդիրը բարձրաձայնվում է նաև արտասահմանյան դատավարական օրենսգրքերի շուրջ: Կոնկրետ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգավորման կապակցությամբ որոշ հեղինակներ կարծում են, որ մեղադրյալի կողմից համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու բավարար հիմքերի առկայության դեպքում քննիչը պարտավոր է նրան պարզաբանել անձամբ պաշտպան հրավիրելու կամ պաշտպան նշանակելու միջնորդություն ներկայացնելու իրավունքը[8], այդ կերպ ստեղծելով նախքան միջնորդություն ներկայացնելը քրեական գործով վարույթին պաշտպան ներգրավելու հնարավորություն:

Մեկ այլ խումբ դատավարագետներ կարծում են, որ համագործակցության վարույթում պաշտպանի մասնակցությունը պետք է պարտադիր ճանաչվի համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրության ծագման պահից[9]:

Օ.Ա.Տերտըշնայան այն կարծիքին է, որ պաշտպանի մասնակցությունը անհրաժեշտ երաշխիք է մեղադրանքի կողմի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելու ցանկություն հայտնած մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության համար, այն համարվում է մեղադրյալի ազատ կամարտահայտության օրինականության պայման[10]: Միջնորդությունը պաշտպանի կողմից ստորագրված լինելու պահանջը ենթադրում է, որ անձը, ով համագործակցելու ցանկություն է արտահայտել, այդ մասին միջնորդությունը պետք է ներկայացնի միայն պաշտպանի հետ խորհրդակցելուց հետո:

Ե.Լ.Ֆեդոսեեվան գտնում է, որ անձը համագործակցելու ցանկություն հայտնելու իրավունք պետք է ունենա մինչդատական վարույթի հենց սկզբնական փուլում, որը կարող է ներկայացվել գրավոր դիմումի տեսքով: Համագործակցելու ցանկությունը կարող է ամրագրվել նաև հարցաքննության ժամանակ, այդ թվում վկայի հարցաքննության, ինչպիսի եղանակը պրակտիկայում հաճախակի է կիրառվում[11]: Այդ դեպքում համագործակցելու հայտարարությանը դրական արձագանքելու պայմաններում քննիչը տվյալ անձին որպես մեղադրյալ ներգրավելու պահից կտրամադրի պաշտպան, ով կապահովվի մեղադրյալի իրավունքների ու օրինական շահերի լիարժեք պաշտպանությունը:

Չնայած խնդրի լուծման վերաբերյալ կարծիքներն ու առաջարկվող ուղիները որոշակիորեն տարբեր են, սակայն դրանք ընդհանրական են հետևյալում՝

ա/ համագործակցելու մտադրություն ունեցող մեղադրյալը պետք է ունենա պաշտպանության իրավունքի իրացման լիարժեք հնարավորություն նախքան համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելը,

բ/ նախքան քննիչի կողմից մեղադրյալի ներկայացրած միջնորդության բովանդակությունից տեղեկատվություն քաղելու հնարավորության ստեղծումը մեղադրյալին պետք է ընձեռնվի այն փաստաբան-պաշտպանի հետ քննարկելու հնարավորություն:

Ըստ մեզ՝ իրավիճակներից զերծ մնալու համար Նախագծում նպատակահարմար է մեղադրյալի պաշտպանության իրավունքն ապահովել միջնորդություն ներկայացնելու առավել

վաղ փուլում՝ մեղադրյալի կողմից համագործակցելու մասին ցանկություն հայտնելու պահից: Այդ պայմաններում կապահովվի մեղադրյալի՝ համագործակցության եղանակների ու նպատակների շուրջ տեղեկատվության գաղտնիությունը՝ նախքան պաշտպանի ներգրավումն ու նրա հետ խորհրդակցելը, բացի դրանից մեղադրյալը ստիպված չի լինի օրենքի տարրը՝ Նախագծի 461-րդ հոդվածով նախատեսված միջնորդության բովանդակությանն առնչվող պայմանները պահպանելու համար անձամբ կազմել միջնորդության <<նախագիծ>> /նախագիծ, որովհետև պաշտպանի հետ քննարկելուց հետո այն կարող է փոփոխվել կամ մեղադրյալը կարող է ընդհանրապես հրաժարվել համագործակցության մտադրությունից/՝ բացառապես պաշտպանի ներգրավման հիմք ապահովելու և նրա հետ միջնորդությունը քննարկելու համար: Այդպիսի կարգավորման պայմաններում, պաշտպանի հետ խորհրդակցելուց և համաձայնագիր կնքելու միջնորդություն ներկայացնելու մտադրությունից հրաժարվելու դեպքում մեղադրյալը կստանա նաև նախկինում ունեցած իր մտադրության մասին հարկադիր բարձրաձայնելուց խուսափելու հնարավորություն: Մեր կողմից առաջարկվող տարբերակում պաշտպանի մասնակցությունն ապահովելու քննիչի պարտականությունը պետք է ծագի այն պահից, երբ մեղադրյալը, օրինակ, համագործակցության համաձայնագիր կնքելու ցանկություն պարունակող գրավոր դիմում է ներկայացրել քննիչին կամ այդպիսի հայտարարություն է արվել քննչական գործողության կատարման ժամանակ և որը մտցվել է տվյալ գործողության արձանագրության մեջ: Այսինքն պաշտպան ներգրավելու համար պետք է բավարար լինի համաձայնագիր կնքելու ցանկության մասին հայտարարությունը, իսկ միջնորդություն կազմելու և այն ներկայացնելու, այդ թվում ներկայացնելուց հրաժարվելու պաշտպանական կողմի գործողությունները պետք է հաջորդեն պաշտպան ներգրավելու և նրա կողմից մեղադրյալի հետ վերջինիս մտադրությունը քննարկելու փուլին:

Հետևաբար Նախագծի 41-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետը անհրաժեշտ է փոփոխել և ներկայացնել հետևյալ ձևակերպմամբ.

«Քրեական վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի հրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

/ … /:

9) մեղադրյալը համաձայնեցման կամ համագործակցության վարույթ կիրառելու ցանկություն է հայտնել»:

Նախագծի 461-րդ հոդվածի 4-րդ մասը նպատակահարմար է ձևակերպել հետևյալ բովանդակությամբ. «Միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե մեղադրյալը միջնորդություն ներկայացնելու ցանկություն հայտնելու պահին չունի հրավիրված կամ նշանակված պաշտպան, քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ խորհրդակցելու և միջնորդությունը քննարկելու համար»:

Օգտագործած գրականություն

[1].Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, փաստաթղթի կոդ Կ-084-14.09.2012,29.11.2013-ՊԻ-010/0, www.parliament.am կայքից:

[2]. М.О.Баев, О роли адвоката-защитника в заключении досудебного соглашения о сотрудничестве с подозреваемым/обвиняемым, Воронежский государственный университет, Вестник ВГУ, 2012, С 373-381:

[3]. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին, 06.12.2015թ. փոփոխություններով հանդերձ:

4. Уголовно-процессуальное право, под общей редакцией Г.И.Загорского, 2010., ст. 16-17.

5. А.Ю.Кирсанов, Досудебное соглашение о сотрудничестве, Анализ, практика, выводы, Закон и право, Москва, 2012, С 43:

6."Уголовно-процессуальный кодекс Российской Федерации" от 18.12.2001 N 174-фз (ред. от 13.07.2015) (с изм. и доп., вступ. в силу с 15.09.2015):
7.Уголовно-процессуальный кодекс Республики Казахстан (с изменениями и дополнениями по состоянию на 07.11.2014 г.):
8.Дьяконова В.В. Указ. соч. С 91:
9.Бочкарев А.Е. Указ.соч.С 80:
10. О.А.Тертышная, Порядок заявления подозреваемым /обьвиняемым/ ходатайства о заключении досудебного соглашения о сотрудничестве: Проблемы законадательный регламентации, пути устранения. Вестник Удмуртского Университета, 2013, выпуск 2, Ст. 185-187.
11.Федосеева Е.Л. Особый порядок уголовного судопроизводства при заключении досудебного соглашения о сотрудничестве: автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2014г., С 7.

Տեղեկություններ հեղինակի մասին.
Գուրգեն Ներսիսյան, ԼՂՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն, սեփականության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով բաժնի ավագ դատախազ, առաջին դասի խորհրդական

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 34.(340.5) Քրեական իրավունք և կրիմինոլոգիա

ՇՈՐԹՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Էրիկ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ *շորթում, շանտաժ, հարկադրանք, բռնություն, սպառնալիք, ազատ կամահայտնության իրավունք*

Ключевые слова: *вымогательство, шантаж, понуждение, насилие, угроза, право на свободное волеизъявление.*

Key words: *extortion, blackmail, coercion, violence,threat, the right of free expression ofwill.*

Э.Арзуманян

ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СОСТАВА ВЫМОГАТЕЛЬСТВА В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ

Статья посвящена анализу состава вымогательства,содержащегося вуголовных кодексах зарубежных стран. В ней представлены особенности и типичные черты правового регулирования вымогательства, в частности, Европейских стран, имеющих образцовую для нашей республики правовую систему; выделены сходства и различия норм уголовной ответственности за вымогательство; определены понятия вымогательства и шантажа в соответствии с уголовными кодексами этих стран. Ценность статьи состоит в том, что в ней способом сравнительного анализа автором выявляются недостатки ст. 188-ой Уголовного кодекса Нагорно-Карабахской Республики, и предлагаются конкретные предложения, которые могут оказать значительную роль в дальнейшем совершенствовании уголовного законодательства страны.

E.Arzoumanyan

FEATURES OF LEGAL REGULATION OF EXTORTION IN OTHER COUNTRIES

The present article analyzes the crime of extortion framedin the criminal codes of foreign countries. The article presents peculiarities and typical features of the legal regulation of extortion particularly in European countries having exemplarylegal systemfor our country. In the article are alsohighlighted similarities and differences between the normsof criminal responsibility for extortion, defined notions of extortion and blackmail, in accordance with the provision of mentioned countries' Criminal Codes. The value of the work is thatthe author through the method of comparative analysis detected the shortcomings of Article 188 of the Criminal Code of the Republic of Nagorno-Karabakh and gave specific suggestions which could significantly impact the further effective developmentof the criminallegislation of the country.

Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նախատեսված հանցակազմերի վերլուծությունը և դրանց համեմատումն ու համադրումը ներպետական իրավակարգավորումների հետ ինքնանպատակ չեն և միտված են այդ երկրների լավագույն փորձի ուսումնասիրությանը և կարող են էական ազդեցություն ունենալ ԼՂՀ քրեական օրենսգրքի հետագա արդյունավետ լրամշակման համար: Հատկանշական է, որ զարգացած իրավական համակարգ ունեցող պետություններում բավականաչափ մեծ ուշադրություն է հատկացված սեփականության իրավունքի համապարփակ պաշտպանությանը՝ տարբեր, այդ թվում նաև քրեաիրավական միջոցներով:

Մեծ տեմպերով վեր ընթացող հանցագործությունների կորը ստիպում է մշակել քրեական քաղաքականության նոր ուղղություններ՝հաշվի առնելով հանցագործությունների բնույթն ու դրանց զարգացման շարժընթացը: Այդ պայքարում ուղենիշային եղել և շարունակում է մնալ հակազդեցությունը սեփականության դեմ ուղղված հանցագործություններին, որոնց շարքում է նաև շորթումը:

Անկասկած է, որ շորթումը բոլոր ժամանակներում ոչ միայն սպառնալիք, այլև մեծ խոչընդոտ է հանդիսացել ինչպես կազմակերպաիրավական ցանկացած ձև ունեցող իրավաբանական անձանց (կազմակերպությունների, հաստատությունների, հիմնարկների և այլն), այնպես էլ ֆիզիկական անձանց կենսագործունեության համար առհասարակ: Այս հանցագործության տարածվածությունը ժամանակի ընթացքում ոչ միայն չի նվազել, այլև ընդհակառակը՝ նոր ծավալներ է ստացել՝ շոշափելով ավելի ու ավելի մեծ քանակությամբ անձանց շահեր: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և դրանց լայն կիրառությունը կյանքի տարբեր

ոլորտներում նպաստել են այս արատավոր երևույթի տարածմանը, քանի որ հանցավորների առջև բացվել են իրենց անօրեն պահանջների ներկայացման և դրանց կատարմանը հասնելու նոր ուղիներ: Ուստի շորթման դեմ պայքարը եղել և շարունակելու է մնալ պետության քրեական քաղաքականության գերակա ուղղություններից մեկը:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է շորթման հասկացությունը, որի համաձայն՝ շորթումը՝ անձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու, ինչպես նաև անձի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով կամ անձի, նրա մերձավորի գույքը կամ այլ անձանց տնօրինության կամ պահպանության տակ գտնվող գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով ուրիշի գույքը կամ գույքի նկատմամբ իրավունքը հանձնելու կամ գույքային բնույթի այլ գործողություններ կատարելու պահանջն է:

Նշված հոդվածի թերությունները վեր հանելու նպատակով, ինչպես նաև շորթման հանցակազմի լավագույն մոդելի ձևավորման նախադրյալներ ստեղծելու հարցում միջազգային դրական փորձի ուսումնասիրության ուղենիշային դերը կարևորելով՝ հարկ ենք համարում գլխավորապես անդրադարձ կատարել Եվրոպական երկրների քրեական օրենսգրքերի՝ շորթման վերաբերյալ իրավակարգավորումներին: Բանն այն է, որ հետխորհրդային պետությունների օրենսդիրների մոտեցումները այս հարցում էապես չեն տարբերվում: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ այս երկրների քրեական օրենսգրքերը հիմնականում կառուցված են «մոդելային» քրեական օրենսգրքի հիման վրա և շատ հարցերում աչքի են ընկնում համանման մոտեցումներով:

Հարկ է նկատել, որ շորթման և շանտաժի դեմ պայքարին հատկացված տեղը մեզ համար օրինակելի իրավական համակարգ ունեցող արտասահմանյան մի շարք երկրներում անչափ մեծ է՝ պայմանավորված այդ հանցավոր արարքների տարածվածությամբ և դրանց հանրային բարձր վտանգավորությամբ: Նշվածը հիմնավորվում է նաև նրանով, որ շորթումը, ինչպես նաև շանտաժը՝ որպես հանցավոր ոտնձգություններ, իրավական ակտերում հայտնվել են շատ դարեր առաջ: Դեռ հռոմեական իրավունքում հնարավոր էր հանդիպել crimen repetundarum անվանվող իրավախախտումներ (շորթում կամ պաշտոնատար անձի կողմից բռնությամբ զուգորդված պահանջներ[1]):

Անգլիական իրավունքում հանդիպում էին շորթման էությունն արտացոլող մի քանի ձևակերպումներ, որոնք են՝

1) գույք տալուն հարկադրելը բռնության կամ սպառնալիքի գործադրման գրավոր կամ բանավոր պահանջով,

2) գույք տալուն հարկադրելը կամ որևէ պաշտոնի նշանակելուն հարկադրելը՝ տուժողի կամ երրորդ անձի արժանապատվությունը ոտնահարող նամակի մասին բարձրաձայնելով կամ դրա սպառնալիքով,

3) սպառնալիքի, բռնության կամ հարկադրման այլ եղանակներով որևէ գործողություն կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելը[2]:

Ֆրանսիական քրեական օրենսդրությունն արդեն 20-րդ դարի սկզբին պատասխանատվություն էր սահմանում չորս տարբեր, միաժամանակ, սակայն, շատ ընդհանրություններ ունեցող հանցավոր այնպիսի արարքների համար, ինչպիսիք էին՝

1) extorsion՝ ֆիզիկական կամ հոգեկան բռնության միջոցով գույքային պարտավորություն ստանձնելու ստորագրություն տալուն հարկադրելը,

---

[1]Տե՛ս Шишкин А. Д. Сравнительно-правовой анализ регулирования ответственности за вымогательство в зарубежном уголовном законодательстве "Международное уголовное право и международная юстиция", 2008, N 4:

[2]Տե՛ս նույն տեղում:

2) chantage՝ անձի մասին արատավորող կամ անձի համար անցանկալի հետևանքներ առաջացնող տեղեկություններ հրապարակելու գրավոր կամ բանավոր սպառնալիքով գույք կամ գույքային պարտավորություն ստանձնելու ստորագրություն տալու պահանջ,

3) concussion՝ պաշտոնեական շորթում,

4) menaces՝ սպանության կամ անձի դեմ ուղղված այլ ոտնձգության սպառնալիքով դրամական միջոցներ տրամադրելու կամ այլ գույքային բնույթ ունեցող գործողություն կատարելու պահանջ[1]:

Ռուսաստանի քրեական իրավունքում շորթման հասկացությունը հանդիպում է 1845թ. «քրեական և ուղղիչ պատիժների մասին» իրավական ակտի 406-րդ հոդվածում, որի համաձայն այն սահմանվում էր որպես գերագույն աստիճանի ագահություն (высшая степень лихоимства)[2]: Այս սահմանման տակ հասկացվում էին տարբեր տեսակի ճնշումները՝ ուղղված նյութական բարիքների ստացմանը (եկամուտ, նվերներ և այլն):

Ներկայումս շորթման հասկացությունը տարբեր երկրներում ունի տարբեր դրսևորումներ՝ պայմանավորված այդ երկրների իրավական համակարգերի առանձնահատկություններով, բայց, այնուամենայնիվ, շորթումը բնութագրվում է որպես դիտավորությամբ կատարվող շահադիտական-բռնի հանցագործություն: Սա է պատճառը, որ քննարկվող հանցակազմը, ուսումնասիրված երկրների քրեական օրենսգրքերում, որպես կանոն, ավազակային հարձակումների հետ միասին զետեղված է նույն բաժնում և հանդիսանում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի կարևորագույն մասը:

Մինչ արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերով նախատեսված շորթման հասկացությանն անդրադարձ կատարելը, հարկ է նկատել, որ մի շարք պետություններում շորթումը և շանտաժը նախատեսված են առանձին հանցակազմերով, այսինքն՝ շանտաժը ձևակերպված է որպես ինքնուրույն հանցագործություն: ԼՂՀ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքերում շանտաժ հասկացությունը հանդիպում է մի քանի հոդվածներում (ԼՂՀ քրեական օրենսգրքի 138-րդ, 365-րդ, 376-րդ, ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ, 340-րդ, 350-րդ հոդվածներ), սակայն դրա բովանդակությունը որևէ հոդվածում չի բացահայտվում: Այս պայմաններում հարց է առաջանում, թե ի՞նչ հարաբերակցության մեջ են գտնվում շանտաժն ու շորթումը, դրանք նույնական կամ ընդհակառակը՝ լիովին տարբեր հասկացությունն՞ե՞ր են, թե՞ շանտաժը կազմում է շորթման հասկացության բաղկացուցիչ մասը:

Որպես օրինակ՝ նշենք, որ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի երրորդ գրքի երկրորդ գլխում առանձնացված են երկու բաժիններ, որոնցից առաջինը վերնագրված է՝ «շորթման մասին», երկրորդը՝ «շանտաժի մասին»: Հոլանդիայի քրեական օրենսգրքի 23-րդ բաժինը վերնագրված է՝«շորթում և շանտաժ», Թունիսի քրեական օրենսգրքի երրորդ բաժինը՝ «շորթում, շանտաժ, յուրացում, սնանկություն[3]»:

Շորթման և շանտաժի առավել մանրակրկիտ և ամբողջական հասկացությունները հանդիպում են Ֆրանսիայի 1992թ.-ի քրեական օրենսգրքում: Վերջինիս 312-1 հոդվածի համաձայն՝շորթումը բնութագրվում է որպես գործողություն, որը բռնության գործադրման, բռնության գործադրման սպառնալիքի կամ հարկադրանքի միջոցով ուղղված է անձի պարտավորության ստանձմանը կամ ինչ-որ բանից հրաժարվելու ստորագրության, գաղտնի տեղեկատվության, դրամական միջոցների, նյութական արժեքների կամ ցանկացած գույքի ստացմանը:

Քննարկվող հոդվածի դիսպոզիցիայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առաջին հերթին այս սահմանմամբ մանրակրկիտ նկարագրված են ոտնձգության առարկան, ինչպես նաև հանցագործության օբյեկտիվ կողմի երկընտրելի գործողությունները: Շորթման առարկա կարող

[1]Տե՛ս Фойницкий И. Я. Курс уголовного право. Часть Особенная. Петроград, 1916. էջեր 243 – 244:

[2]Տե՛ս Уложение о наказаниях уголовных и исправительных. СПб., 1845:

[3]Տե՛ս Шишкин А.Д.Регламентация ответственности за вымогательство в уголовных кодексах зарубежных стран (особенности конструирования состава и построения санкции)Российская юстиция. 2007. № 2. էջեր 71-74:

են հանդիսանալ՝ որոշակի գույքային իրավունքներ վերապահող փաստաթղթերը, որոնցում պետք է ստորագրի տուժողը, հանցավորի համար շահավետ պարտավորությունները, որոնք պետք է իր վրա վերցնի տուժողը, գույքային իրավունքները, որոնցից տուժողը պետք է հրաժարվի հօգուտ հանցավորի, գաղտնի տեղեկատվությունը, որոշակի արժեքներ՝ գույք, դրամական միջոցներ:

Այս առումով Ն.Ե.Կռիլովան նշում է, որ շորթումը սեփականության դեմ ուղղված հանցավոր արարքների շարքում նախատեսելը, լիարժեք չի համապատասխանում օրենսգրքում տրված դրա սահմանմանը: Նրա կարծիքով, շորթումը կարող է ուղղված լինել ինչ-որ անձից ստորագրություն ստանալուն, բայց փաստաթղթի տեսակը, որի վրա պետք է լինի անձի ստորագրությունը, կամ դրա ստորագրման հետևանքները չեն նշվում: Դրանք, իհարկե, կարող են ուղղված լինել գույքային իրավունքների ստացմանը, սակայն դրանց բնույթը՝ գույքային կամ ոչ գույքային՝ օրենսդրի կողմից հստակ սահմանված չէ: Շորթման նպատակը կարող է լինել նաև գաղտնիք պարունակող տեղեկությունների ստացումը և հատկանշական է, որ գաղտնի տեղեկատվության տեսակը ևս չի նշվում, ուստի պարզ չէ, թե ինչպիսի՞ գաղտնիքի մասին է խոսքը՝ առևտրային, բանկային, պետական, անձնական կյանքին վերաբերող, թե՞ խոսքը գնում է ցանկացած տեղեկության մասին, որը անձը ցանկանում է գաղտնի պահել երրորդ անձանցից[1]:

Ինչ վերաբերում է օբյեկտիվ կողմին, ապա տուժողի կամքի ճնշումը կարող է իրականացվել բռնության իրական գործադրմամբ, դրա գործադրման սպառնալիքով կամ հարկադրանքով, ընդ որում, գործադրվող բռնությունը չպետք է վտանգավոր լինի կյանքի կամ առողջության համար: Ֆրանսիայի քրեական օրենսգրքում քննարկվող նորմը, ի տարբերություն ԼՂՀ քրեական օրենսգրքի նույնաբովանդակ նորմի, չի կոնկրետացնում բռնության կամ սպառնալիքի հասցեատերերի շրջանակը, բացը լրացվում է դատական պրակտիկայով և քրեական իրավունքի տեսությամբ, համաձայն որոնց՝ ընդունելի է քննարկվող նորմի լայն մեկնաբանությունը. այսինքն՝ բռնությունը, կամ դրա գործադրման սպառնալիքը կարող է ուղղված լինել և՛ տուժողի, ՛և նրա մտերիմների դեմ[2]:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը շորթման հասարակ տեսակի համար նախատեսում է 7 տարի ժամկետով ազատազրկման ձևով և տուգանքով:

Շորթման հանցակազմը նմանատիպ ձևակերպմամբ հանդիպում է նաև Հոլանդիայի քրեական օրենսգրքում, որի հասարակ տեսակի համար սահմանվում է պատիժ՝ մինչև ինը տարի ազատազրկման ձևով կամ հինգերորդ կարգի տուգանքով:

Շորթման օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները նույնաբովանդակ ձևակերպումներով հանդիպում են նաև Շվեյցարիայի, Լեհաստանի, Սան-Մարինոյի, Ճապոնիայի քրեական օրենսգրքերում:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքի քննարկվող գլխի հաջորդ հոդվածները նվիրված են շորթման որակյալ հանցակազմերին: Մասնավորապես՝ շորթումը համարվում է ծանրացնող հանգամանքներում կատարված, եթե՝

- դրան նախորդել, ուղեկցել կամ հաջորդել են բռնի գործողություններ, որոնք հանգեցրել են այլ անձի աշխատունակության լրիվ կորստի, սակայն ոչ ավել քան ութ օրով,
- կատարվել են անձի անօգնական վիճակն օգտագործելով (պայմանավորված տարիքով, ֆիզիկական կամ հոգեկան արատով, հիվանդությամբ և այլն):

Այս դեպքերում շորթումը պատժվում է 10 տարի ժամկետով ազատազրկմամբ և տուգանքով:

Այն դեպքում, երբ շորթմանը կատարվել կամ դրան նախորդել կամ հաջորդել են բռնի գործողություններ, որոնք հանգեցրել են այլ անձի աշխատունակության լրիվ կորստի, սակայն ութ օրից ավել ժամկետով, ապա անձը պատժվում է 15 տարի ժամկետով ազատազրկմամբ և տուգանքով:

---

[1]Տե՛ս Крылова Н. Е. Основные черты нового Уголовного кодекса Франции. М., 1996:

[2]Տե՛ս նույն տեղում

Համեմատության համար նշենք, որ Շվեյցարիայի քրեական օրենսգիրքը համանման արարքի համար նախատեսում է մինչև տասը տարի ժամկետով ազատազրկում՝ խիստ ռեժիմում:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը 20 տարի ժամկետով ազատազրկում է նախատեսում այն դեպքի համար, երբ շորթմանը նախորդել, հաջորդել կամ ուղեկցել են բռնի գործողություններ, որոնք հանգեցրել են այլ անձի քրոնիկ հիվանդության կամ խեղման:

Ամենախիստ պատիժը նախատեսված է այն դեպքերի համար, երբ հանցավորը իր հանցավոր մտադրությունը ցանկանում է իրագործել զենքի միջոցով: Զենքի գործադրմամբ, կամ դրա գործադրման սպառնալիքով շորթման կատարման դեպքում անձին սպառնում է 30 տարի ժամկետով ազատազրկում և տուգանք: Հետաքրքրական է, որ այս ծանրացնող հանգամանքը վերաբերելի է նաև այն դեպքերին, երբ հանցավորը նույնիսկ զենքի գործադրման սպառնալիք չի տալիս, սակայն նրա վրա՝ աչքի համար տեսանելի մասում, առկա է զենք, որը կրելու համար պահանջվում է օրենքով սահմանված կարգով թույլտվության առկայություն, կամ որի կրումը արգելված է: Այսինքն, հանցավորի մոտ զենքի առկայությունը նույնիսկ, մեծացնում է վերջինիս հանրային վտանգավորությունը, որպիսի պայմաններում նրա արարքը պետք է ավելի խիստ պատժվի:

Հատկանշական է, որ Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը պրակտիկ անչափ կարևոր նշանակություն ունեցող նորմ է նախատեսում կազմակերպված հանցավորության դեմ պայքարի տեսանկյունից: Օրենսգրքում երեք մասերից բաղկացած առանձին հոդված է նախատեսված, որը վերաբերում է կազմակերպված խմբի (բանդայի) կողմից շորթման կատարմանը:

Այսպես՝ շորթումը, որը կատարվել է կազմակերպված խմբի (բանդայի) կողմից, պատժվում է 30 տարի ժամկետով ազատազրկմամբ և տուգանքով, եթե դրան նախորդում, ուղեցում, կամ հաջորդում են բռնի գործողություններ, որոնք հանգեցրել են այլ անձի քրոնիկ հիվանդության կամ խեղման, պատժվում է ցմահ ազատազրկմամբ և տուգանքով, եթե կատարվել է զենքի գործադրմամբ, կամ դրա գործադրման սպառնալիքով զենք կրելու իրավունք չունեցող անձանց կողմից:

Ֆրանսիայի քրեական օրենսգիրքը ևս մեկ՝գործնականում արարքի որակման համար կարևոր նորմ է պարունակում այն դեպքերի համար, երբ շորթումը չի կատարվում բռնությամբ, սակայն դրանից հետո բռնություն է գործադրվում պատասխանատվությունից խուսափելու կամ փախուստը հեշտացնելու նպատակով: Այս՝ շորթմանը հաջորդող բռնությունը, օրենսդիրը դիտարկում է որպես շորթման հանցակազմի կառուցվածքային բաղադրատարր: Համանման նորմ նախատեսված է նաև ավազակային հարձակումների համար: Հարկ է նկատել, որ նման իրավիճակների համար ԼՂՀ քրեական օրենսգիրքը կոնկրետ կարգավորում չի պարունակում, սակայն մեր պետության իրավակիրառ գործունեության ընթացքում ձևավորված պրակտիկան էապես տարբերվում է, Ֆրանսիայի քրեական օրենսգրքով սամանված մոտեցումից: Շորթմանը հաջորդած արարքները, ԼՂՀ քրեական օրենսդրությանը համապատասխան, որակվում են առանձին՝ հանցագործությունների համակցության կանոններով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ շորթումը ԼՂՀ քրեական օրենսգրքում նախատեսված է ձևական հանցակազմով և ավարտված է համարվում հանցավորի կողմից տուժողին համապատասխան պահանջը ներկայացնելու պահից:

Գերմանիայի քրեական օրենսգրքում շորթման համար պատասխանատվությունը նախատեսված է «Ավազակություն և շորթում» գլխում: Համաձայն 253-րդ պարագրաֆի՝ անձը, ով իր կամ երրորդ անձի ապօրինի հարստացման նպատակ հետապնդելով, որևէ գործողությամբ, բռնությամբ կամ էական վնաս հասցնելու սպառնալիքով հարկադրում է այլ անձի կատարել գործողություններ, հանդուրժել անհարմարություն կամ հրաժարվել ինչ-որ բանից, դրանով վնաս հասցնելով նրա կամ այլ անձի գույքին, պատժվում է մինչև հինգ տարի ժամկետով ազատազրկմամբ և տուգանքով:

Ինչպես տեսնում ենք հանցագործության հիմնական օբյեկտը սահմանված է հստակ, այն է՝ տուժողի կամ երրորդ անձի սեփականությունը: Լրացուցիչ անմիջական օբյեկտի դերում հանդես է գալիս տուժողի առողջությունը: Ինչ վերաբերում է տուժողին էական վնաս հասցնելու

սպառնալիքին, ապա հանցակազմի վերլուծությունից այնքան էլ պարզ չէ, թե էական վնասը վերաբերում է գույքային շահերին վնաս հասցնելու՞ն, թե՞ հոգեկան բռնությանը: Գրականության մեջ կարծիք կա, որ այս դեպքում խոսքը գնում է միայն հոգեկան բռնության մասին, քանի որ դրա մասին է վկայում 20-րդ գլխում համախմբված հանցագործությունների բնույթի և այս հանցագործության հանրային վտանգավորության աստիճանի վերլուծությունը[1]:

Ինչ վերաբերում է բռնությանը, ապա այն հասարակ հանցակազմի դեպքում պետք է լինի առողջության կամ կյանքի համար ոչ վտանգավոր: Ցանկալի արդյունքին հասնելու համար բռնություն գործադրելու կամ տուժողին էական վնաս հասցնելու սպառնալիքը կարող են շորթման օբյեկտիվ կողմի հատկանիշներ հանդիսանալ, եթե դրանք առանձին վերցրած իրենց բնույթով պարսավելի, դատապարտելի են[2]:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ շորթումը նախատեսված է նյութական հանցակազմով և ավարտված է համարվում տուժողի կամ երրորդ անձի գույքին վնաս հասցնելու պահից: Այդ է պատճառը, որ Գերմանիայի քրեական օրենսգիրքը առանձին նորմով պատասխանատվություն է սահմանում շորթման փորձի համար:

Հարկ է նշել, որ շորթումը նյութական հանցակազմի ձևով նախատեսված է նաև Ճապոնիայի, Լեհաստանի, Թունիսի քրեական օրենսգրքերում:

Գերմանիայի քրեական օրենսգրքի 255-րդ պարագրաֆը հետաքրքրական նորմ է նախատեսում, որը վերաբերում է կյանքի համար վտանգավոր բռնության կամ դրա գործադրման սպառնալիքով շորթման կատարմանը: Համաձայն այդ նորմի՝ եթե շորթումը կատարվում է բռնության գործադրմամբ կամ տուժողի կյանքին կամ առողջությանը իրական վնաս հասցնելու սպառնալիքով, անձը ենթակա է պատասխանատվության կողոպուտի համար:

ԱՄՆ-ի իրավական համակարգի յուրահատկությունը, այն է՝ առանձին նահանգներում քրեական օրենսգրքերի առկայությունը, պայմանավորում է շորթման համար պատասխանատվության կարգավորման հատուկ մոտեցումը: Հարկ է նշել, սակայն, որ, հաշվի առնելով շորթման բարձր վտանգավորությունը, այն, որպես ինքնուրույն հանցակազմ, ձևակերպվում է «Կազմակերպված հանցավորության վերահսկողության մասին» 1970 թվականի օրենքում: Շորթումը ներառված է կազմակերպված հանցավորությունը ձևավորող հանցավոր արարքների համակարգում, որը ինչպես նշված է օրենքի նախաբանում՝ «… ստանում է իր իշխանության զգալի մասը՝ օգտագործելով ապօրինի եղանակով ձեռք բերած եկամուտները: Այդ փողերը և իշխանությունը խաթարում են ամերիկյան տնտեսական համակարգի կայունությունը, օգտագործվում են օրինական բիզնեսում ներդրումներ անելու համար, ժողովրդական գործընթացի խափանման և կոռումպացման համար: Կազմակերպված հանցավորությունը խաթարում է պետության և երկրի քաղաքացիների բարօրությունը:»: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ շորթումը, «Կազմակերպված հանցավորության վերահսկողության մասին» ԱՄՆ օրենքի §1961-ի համաձայն, ընդգրկված է Ա խմբի հանցագործությունների (սպանություն ծանրացնող հանգամանքներում, մարդկանց առևանգում, մոլախաղեր, ավազակություն, կաշառակերություն, թմրանյութերի ապօրինի շրջանառություն և այլն) շարքում՝ որպես հանրային բարձր վտանգավորություն ունեցող հանցագործություն:

Ինչ վերաբերում է շանտաժի հանցակազմին, ապա հարկ է նկատել, որ ուսումնասիրված բոլոր այն դեպքերում, երբ շանտաժը նախատեսված է առանձին հանցակազմով, դրա առարկան նույնանում է շորթման առարկայի հետ: Այսպես՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքում առկա շանտաժի հանցակազմի առարկան, տառացի կրկնում է շորթման առարկայի սահմանումը: Շորթման հանցակազմից այն տարբերվում է միայն օբյեկտիվ կողմի կատարման եղանակով: Ի տարբերություն շորթման, որի դեպքում տուժողի կամքի վրա ներգործությունը իրականացվում է բռնության իրական գործադրմամբ, դրա գործադրման սպառնալիքով կամ հարկադրանքով, շանտաժի դեպքում անձի կամքի վրա ներգործությունը կատարվում է պատիվն ու

[1]Տե՛ս Кузнецова Н., Вельцель Л. Уголовное право ФРГ. М., 1980. Wessels J.

[2]Տե՛ս Wessels J. Strafrecht, Allgemeiner Teil. Karlsruhe, 1978.

արժանապատվությունը նվաստացնող տեղեկություններ հայտարարելու սպառնալիքով, կամ նրան այդպիսի հատկանիշներ վերագրելով: Շանտաժի հասարակ հանցակազմը պատժվում է 5 տարի ժամկետով ազատազրկմամբ և տուգանքով, իսկ եթե հանցավորը իրագործում է իր սպառնալիքը, ապա ազատազրկման ձևով պատիժի չափը մեծանում է՝ դառնալով 7 տարի:

Հոլանդիայի քրեական օրենսգիրքը ևս հստակ կերպով տարբերակում է շորթման և շանտաժի հանցակազմերը: Հետաքրկրական է, սակայն, այն հանգամանքը, որ շանտաժը, որպես նվազ հանրային վտանգավորություն ունեցող հանցագործություն, նախատեսված է մասնավոր մեղադրանքի կարգով քննվող գործերի շարքում: Հոլանդիայի քրեական օրենսնգրքի հոդված 318-ում ասվում է. «Անձը, որը իր կամ ուրիշի համար ապօրինի եկամուտներ ստանալու նպատակով ստիպում է այլ անձին տալ իրեն կամ մասնակիորեն իրեն պատկանող, կամ երրորդ անձին պատկանող ցանկացած գույք, ստանձնել պարտավորություն, հրաժարվել հավակնություններից, կամ կոմերցիոն գաղտնի տեղեկությունների մատչելիություն ապահովել, մեղադրվում է շանտաժի մեջ և ենթակա է մինչև 3 տարի ժամկետով ազատազրկման կամ 5-րդ կատեգորիայի տուգանքի»[1]:

Շանտաժի ինքնուրույն հանցակազմը հանդիպում է նաև Թունիսի քրեական օրենսգրքում, որի օբյեկտիվ կողմը ևս հանդիսանում է անձի մասին արատավորող տեղեկությունների տարածման սպառնալիքը՝ գրավոր կամ բանավոր եղանակով: Ընդ որում, այս հոդվածը շանտաժի առարկայի բացահայտման համար հղում է կատարում շորթման հանցակազմին՝ նույնացնելով դրանք:

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ է նկատել, որ քննարկված քրեական օրենսգրքերում շորթումը ձևակերպված է որպես շահադիտական-բռնի ագրեսիվ ոտնձգություն, պահանջ՝ ամրապնդված բռնության սպառնալիքով, իսկ շանտաժը՝ պահանջ՝ամրապնդված անձի պատիվն ու արժանապատվությունը ոտնահարող տեղեկություններ տարածելու սպառնալիքով[2]: Ուշագրավ է, որ շորթման համար նախատեսված քրեաիրավական սանկցիաները տարբեր երկրներում ծայրաստիճան տարբեր են: Համեմատության համար նշենք, որ, օրինակ՝ Ֆրանսիայի քրեական օրենսգրքով շորթման հասարակ և որակյալ հանցակազմերի համար սահմանված ազատազրկման ձևով սանկցիաների չափը միջինը երկու անգամ գերազանցում է նմանատիպ արարքների համար ԼՂՀ քրեական օրենսգրքի սանկցիաների չափը: Որոշ պետություններում շորթման որոշ որակյալ հանցակազմերի համար նախատեսվում է նույնիսկ ցմահ ազատազրկում, լայն կիրառություն ունի նաև տուգանքի և գույքի բռնագրավման՝ որպես լրացուցիչ պատիժների նշանակումը:

Արտասահմանյան երկրների՝ վերը քննարկված շորթման հանցակազմերի համադրական վերլուծության արդյունքում, հարկ է ընդգծել, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը խնդրահարույց է այնքանով, որ օբյեկտիվ կողմի մասը կազմող երկընտրելի գործողությունների սպառիչ թվարկումը անհարկի նեղացնում է հոդվածի կիրառման շրջանակը: Բանն այն է, որ քիչ չեն իրավիճակները, երբ հանցավորը իր պահանջը ներկայացնում է այլ ձևով, քան նշված է հանցակազմի դիսպոզիցիայում, ինչի հետևանքով վերջինիս արարքը դուրս է մնում այս հոդվածի կարգավորման տիրույթից: Ներկայիս կարգավորման պայմաններում շորթման հանցակազմի շրջանակներում անօրինական պահանջի ամրապնդմանն ուղղված սպառնալիքները հետևյալն են՝ ա)տուժողի կամ նրա մերձավորի նկատմամբ բռնության կիրառման սպառնալիք, բ) տուժողին կամ նրա մերձավորին պատկանող գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիք, գ) տուժողի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ տուժողի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակելու սպառնալիք:

Այսինքն, եթե գույքի, գույքային իրավունքի փոխանցման կամ գույքային բնույթի այլ գործողությունների կատարման պահանջը տեղի է ունեցել, սակայն սպառնալիք, որպես

[1]Տե՛ս Уголовный кодекс Голландии. СПб., 2001. էջ 398

[2]Տե՛ս Уголовное законодательство зарубежных стран Англии, США, Франции, Германии, Японии: Сборник законодательных материалов / Под ред. И. Д. Козочкина. М., 1998

այդպիսին, չի եղել, կամ այն կրել է այլ բնույթ, քան նշված է հոդվածի դիսպոզիցիայում, նշանակում է, որ անձի արարքը քննարկվող հանցակազմով չի կարող որակվել: Խնդրի լուծումը կարող է իրականացվել քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի ընդլայնման միջոցով: Գտնում ենք, որ Օրենսգրքի 188-րդ հոդվածի դիսպոզիցիան «(...) գույքը ոչնչացնելու (վնասելու) սպառնալիքով» բառերից հետ անհրաժեշտ է լրացնել «կամ հարկադրանքի այլ եղանակներով» բառերով:

Անդրադառնալով քննարկվող հանցակազմի որակյալ հատկանիշներին՝ հարկ է քննարկել հոդվածում հանցակազմի այնպիսի ծանրացնող հանգամանքի առկայության անհրաժեշտությունը, ինչպիսին է զենք կամ որպես զենք օգտագործվող առարկաներ գործադրելով շորթման կատարումը: Բանն այն է, որ հանցավորի մոտ զենքի առկայությունը, ինքնին, էապես մեծացնում է վերջինիս հանրային վտանգավորությունը, քանի որ տվյալ պայմաններում հնարավոր չէ բացառել զենքի գործադրման իրական հնարավորությունը: Բացի այդ, հանցավորի մոտ զենքի առկայության պայմաններում տուժողի հնարավոր վարքագծի ընտրության սահմանները նեղանում են, ընդհուպ զրոյանում են, քանի որ տուժողը, քաջ գիտակցելով զենքի գործադրման հնարավորությունը, ականջալուր է լինում հանցավորի պահանջներին: Ակներև է, որ այս արարքը ունի առավել բարձր հանրային վտանգավորություն, քան շորթման հասարակ հանցակազմը:

Կարծում ենք, որշորթման տարբեր դրսևորումների համար դիֆերենցված պատասխանատվություն սահմանելու տեսանկյունից անչափ կարևոր է զենքի կամ որպես զենք օգտագործվող առարկաների գործադրմամբ շորթման կատարումը նախատեսել որպեքս քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամնք, ինչը, անշուշտ, կապահովի պատժի չափի որոշման հարցում արդարացված տարբերակված մոտեցումը անձին քրեական պատասխանատվության ենթարկելիս:

Ինչ վերաբերում է շանտաժին, և այն առանձին հանցակազմով նախատեսելու նպատակահարմարությանը, կարծում ենք, որ նման անհրաժեշտությունը բացակայում է, մասնավորապես՝ այն պատճառաբանությամբ, որ արդարացի չէ նույնաբովանդակ արարքների որակման հարցում նման տարբերակված մոտեցումը, հատկապես այն դեպքում, երբ քննարկված բոլոր արտասահմանյան պետությունների օրինակներում շորթման և շանտաժի առարկաները ամբողջովին նույնական են: Նման պայմաններում հարց է առաջանում, թե որքանով է արդարացված անձին արատավորող տեղեկություններ տարածելու սպառնալիքի դեպքում հանցավորի արարքի առավել մեղմ հանցակազմով որակումը, եթե սպառնալիքի այս տեսակը ոչ պակաս քան բռնության կամ գույքը ոչնչացնելու սպառնալիքը կարող է ազդել տուժողի վրա՝ առաջացնելով վախ և տագնապ, օգնելով հանցավորին հասնել իր համար ցանկալի արդյունքին: Ուստի գտնում ենք, որ միայն սպառնալիքի եղանակի տարբերությամբ պայմանավորված անջատ հանցակազմի առկայությունը, ինչպես նաև սանկցիայի նման տարբերությունը արդարացված չէ,քանի որ սպառնալիքի բոլոր եղանակներն էլ միտված են նույն հետևանքի առաջացմանը:

Միաժամանակ, գտնում ենք, որ անհրաժեշտ է ԼՂՀ քրեական օրենսգրքում «շանտաժ» հասկացության բացահայտումը՝որպեսանձի կամ նրա մերձավորի մասին արատավորող կամ անձի կամ նրա մերձավորի իրավունքներին ու օրինական շահերին էական վնաս պատճառող տեղեկություններ հրապարակում, ինչը կնպաստի քննարկվող երևույթի նկարագրության միասնականաության ապահովմանը:

Տեղեկություններ հեղինակի մասին.

Էրիկ Արզումանյան - ԱրՊՀ իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գ.Ս.Ղազինյանը:

ՀՏԴ 343 Քրեական իրավունք

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ և ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Տաթևիկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Բանալի բառեր – հանցագործությունների համակցություն, նորմերի մրցակցություն, ընդհանուր և հատուկ մասեր, քրեական օրենքի կիրառում:

Ключевые слова – совокупность преступлений, конкуренция уголовно-правовых норм, общая и особенная часть, применение уголовного закона.

Key words – multiple offenses, conflict of criminal law, general and special part, application of criminal law.

Т. Геворгян

ПРОБЛЕМЫ СОВОКУПНОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ И КОНКУРЕНЦИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

Проблема конкуренции норм не раз становилась объектом комплексных уголовно-правовых исследований . Ввиду ее разносторонности в рамках настоящей работы будут рассмотрены лишь некоторые вопросы конкуренции норм, которые существенно влияют на содержание понятия совокупности преступлений. Уголовный закон говорит только о конкуренции общей и специальной норм. Тем не менее традиционно в. уголовно-правовой, науке выделяют такие виды конкуренции уголовно-правовых норм: общей и специальной норм; специальных норм; части и целого . Конкуренция норм заключается в том, что «признаки совершенного деяния предусмотрены сразу несколькими нормами Особенной части УК» «и при этом необходимо решить, квалифицировать ли содеянное по всем статьям УК, которыми охватываются признаки данного деяния, либо содеянное следует квалифицировать по той статье УК, которая наиболее адекватно отражает признаки совершенного деяния» . В этом смысле очень важно отграничение конкуренции норм от совокупности преступлений, и в первую очередь от совокупности, образуемой одним деянием.

T. Gevorgyan

PROBLEMS OF MULTIPLE OFFENSES AND CONFLICT OF CRIMINAL LAW

The problem of conflict of norms has often been the subject of comprehensive criminal law researches. Due to its versatility, only some of the issues of the conflict of norms that significantly affect the content of the concept of multiple offenses will be considered within the framework of this work. Criminal law mentions only the conflict of general and special norms. However, criminal science traditionally distinguishes the following types of conflict of criminal law: general and special norms; special norms; part and whole. The conflict of norms lies in the fact that 'signs of the committed act are stipulated by several norms of the Special Part of the Criminal Code' and 'thus it is necessary to decide whether to qualify the actions according to all the articles of the Criminal Code that encompass the signs of the act, or whether the actions should be qualified according to the article of the Criminal Code, which most adequately reflects the signs of the committed act'. In this case, it is very important to delimit the conflict of norms from the multiple offenses, and primarily from multiple offenses formed by one act.

Ինչպես հայտնի է, Քր. օր-ին ներհատուկ է երկու մասերի առկայությունը՝ ընդհանուր և հատուկ: Այդ է պատճառը, որ հաճախ առաջանում են դժվարություններ այդ մասերի նորմերի կիրառման հարցում, և առաջ է գալիս այսպես կոչված «նորմերի մրցակցության» երևույթը, որը մի անգամ չէ, որ եղել է իրավաբանների, տեսաբանների հետազոտության առարկա: Ընդունված կարծիք է, որ մրցակցություն կարող է առաջանալ քր. օր-ի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի միջև: Բայց և այնպես, հարկ է նշել, որ մրցակցություն առաջանում է ոչ միայն ընդհանուր և հատուկ մասերի նորմերի միջև, այլև հատուկ մասի նորմերի տարբեր մասերի միջև: Նախ և առաջ պետք է տարբերել հանցագործությունների համակցությունը ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունից: Պետք է ընդունել այն իրողությունը, որ թեև քրեական իրավունքի գիտության մեջ հիմնավորված է այն դրույթը, որի համաձայն, եթե հանցագործությունը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերով, ապա արարքը որակվում է հատուկ նորմով, սակայն քրեական օրենսգրքով նախատեսված չէ այդ նորմերի հարաբերակցության որոշման կարգը: Ուստի, արարքի որակման յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողն է որոշում՝ առկա է հանցագործությունների համակցություն, թե գործ ունի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հետ:

Ինչպես հայտնի է, Քր. օր-ին ներհատուկ է երկու մասերի առկայությունը՝ ընդհանուր և հատուկ: Այդ է պատճառը, որ հաճախ առաջանում են դժվարություններ այդ մասերի նորմերի կիրառման հարցում, և առաջ է գալիս այսպես կոչված «նորմերի մրցակցության» երևույթը, որը մի անգամ չէ, որ եղել է իրավաբանների, տեսաբանների հետազոտության առարկա: [1]

Քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը տրված է քրեական իրավունքի տեսության մեջ, համաձայն որի քրեաիրավական նորմերի մրցակցությունը քրեական օրենքի կիրառման ընթացքում մեկ հասարակական հարաբերությունը տարբեր ամբողջականությամբ կարգավորող երկու կամ ավելի քրեաիրավական նորմերի հարաբերությունն է:

Ընդունված կարծիք է, որ մրցակցություն կարող է առաջանալ քր. օր-ի ընդհանուր և հատուկ մասերի նորմերի միջև: Բայց և այնպես, հարկ է նշել, որ մրցակցություն առաջանում է ոչ միայն ընդհանուր և հատուկ մասերի նորմերի միջև, այլև հատուկ մասի նորմերի տարբեր մասերի միջև: Նախ և առաջ պետք է տարբերել հանցագործությունների համակցությունը ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցությունից: Ընդհանուր նորմն ավելի լայն հասկացություն է, որը ընդգրկում է բազում դեպքեր, իսկ հատուկ նորմը պարունակում է նման դեպքերից միայն մեկը:

Պետք է ընդունել այն իրողությունը, որ թեև քրեական իրավունքի գիտության մեջ հիմնավորված է այն դրույթը, որի համաձայն, եթե հանցագործությունը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերով, ապա արարքը որակվում է հատուկ նորմով, սակայն քրեական օրենսգրքով նախատեսված չէ այդ նորմերի հարաբերակցության որոշման կարգը: Ուստի, արարքի որակման յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողն է որոշում՝ առկա է հանցագործությունների համակցություն, թե գործ ունի ընդհանուր և հատուկ նորմերի մրցակցության հետ:

Որոշ երկրների քրեական օրենսգրքերում սահմանված են արարքի որակման որոշ կանոններ, երբ հանցագործությունը նախատեսված է ընդհանուր և հատուկ նորմերում: Օրինակ, Ուզբեկստանի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության Քրեական օրենսգրքերում սահմանված են համանման դրույթներ, համաձայն որոնց՝ հանցագործությունների համակցություն է համարվում քր.օր.-ի Հատուկ մասի տարբեր հոդվածներով կամ հոդվածի տարբեր մասերով կատարված երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար անձը չի դատապարտվել, որի համար նա ենթակա է պատասխանատվության: Եթե անձի կողմից կատարված արարքը պարունակում է մեկ հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցակազմի հատկանիշներ, ապա պատասխանատվություն է առաջանում հոդվածի այն մասով, որը նախատեսում է ավելի խիստ պատիժ: Հանցագործությունների համակցության դեպքում անձը պատասխա-նատվություն է կրում կատարված յուրաքանչյուր հանցագործության համար:

Բելառուսի Հանրապետության 1999թ. ընդունված քրեական օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործությունների համակցություն է համարվում քր.օր.-ի Հատուկ մասի տարբեր հոդվածներով նախատեսված երկու կամ ավելի հանցագործությունների կատարումը, որոնցից ոչ մեկի համար անձը չի դատապարտվել: Այդ դեպքում անձը պատասխանատվություն է կրում յուրաքանչյուր կատարված արարքի համար:Եթե հանցագործությունը նախատեսված է քր.օր.-ի Հատուկ մասի տարբեր հոդվածներում, որոնցից մեկը համարվում է ընդհանուր, իսկ մյուսը՝ հատուկ, հանցագործությունների համակցությունը բացակայում է և պատիժ է սահմանվում հատուկ նորմով:[2]

Մի շարք քրեագետներ կարծում են, որ առանձին հստակեցում է պահանջվում մեկ և մի քանի հանցագործությունների դեպքում կիրառվելիք նորմերի ընտրության հարցում: Օրինակ,

[1] См., напр.: *Горелик А.С.* Конкуренция уголовно-правовых норм. Учебное пособие. Красноярск, 1998; *Иногамова - Хегай Л.В.* Конкуренция норм уголовного права: дис. ... д-ра юрид. наук. М., 1999.; *Незнамова З.А.* Коллизии в уголовном праве: дис. ... д-ра юрид. наук. Екатеринбург, 1995. *Шакип В.Б.* Преодоление конкуренции уголовно-правовых норм при, квалификации преступлений: дис. ... канд. юрид. наук. М., 2004.

[2] Уголовный кодекс Республики Беларусь. Минск. 1999г.

Կուդրյավցևը, ով նորմերի մրցակցության լուծման գործում ունի մեծ ավանդ, դրա տակ հասկանում է հանցագործություն /սակայն ոչ համակցություն կամ ռեցեդիվ/, որը միաժամանակ պարունակում է քրեաիրավական երկու կամ ավելի նորմի հատկանիշներ:[1] Իսկ քրեագետ Գերցենզոնի կարծիքով մրցակցություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ համապատասխան արարքի համար, որի հատկանիշները նախատեսված են տարբեր նորմերով, սահմանվում են տարբեր պատժատեսակներ:[2] Կուրինովի կարծիքով նորմերի մրցակցություն կարող է առաջանալ այն դեպքում, երբ մեկ հանցագործության հատկանիշ պարունակվում են քր. Օր-ի հատուկ մասի տարբեր նորմերում:[3]

Ինչպես երևում է վերոգրյալից, համարյա թե մեծամասնության կարծիքով քրեաիրավական նորմերի մրցակցության պատճառ կարող է հանդիսանալ տարբեր նորմերում միևնույն արարքի հատկանիշների առկայության փաստը:

Քրեաիրավական նորմերի մրցակցության խնդիրը ամենաուղղակի առնչությունն ունի հանցագործությունների համակցության հետ, ընդ որում՝ հանցագործությունների համակցության դեպքում խոսքը մի քանի հանցագործությունների մասին է,ինչպես արդեն նշել ենք, իսկ նորմերի մրցակցության դեպքում՝ միայն մեկ: Նշված հարցը քրեական իրավունքի գիտության մեջ համարվում է կարևոր և լուծում պահանջող խնդիրներից մեկը, որի էությունը կայանում է համապատասխան դեպքերում քր. Օր-ի այս կամ այն նորմը ճիշտ ընտրելու մեջ:

Ինչպես նշում է Կուդրյավցևը, քրեաիրավական նորմերի ճիշտ կիրառումը ունի էական նշանակություն: Նորմերի մրցակցության դեպքում պետք է նախապատվություն տալ այն նորմին, որն առավել հստակ է նկարագրում արարքը: Ու սխալ ընտրությունը հավասարազոր է կատարված արարքը սխալ որակելուն, որն առաջացնում է նաև անբարենպաստ հետևանքներ. կամ արարքի համար կնախատեսվի ավելի մեղմ պատիժ, և այն չի ծառայի իր նպատակների իրականացմանը, կամ կնախատեսվի ավելի ծանր պատիժ՝ առանց հաշվի առնելու մարդասիրության սկզբունքը, հանցագործին դաստիարակելու նպատակների իրականացման հիմնահարցերը:[4]

Ինչպես սահմանված է տեսական գրականության մեջ, մրցակցել կարող են միայն այն նորմերը, որոնք նպատակաուղղված են միևնույն հարցի լուծմանը, և որոնք փոխկապակցված են իրար հետ, և մեկ նորմի բացառումը պետք է հիմք հանդիսանա մյուս նորմի կիրառման համար, որը մրցակցում էր բացառվածի հետ:[5]
Տեսական գրականության մեջ ընունված է առանձնացնել նորմերի մրցակցության մի քանի տեսակներ: Դրանք են՝

1. Ընդհանուր և հատուկ մասերի նորմերի մրցակցություն,
2. Հատուկ նորմերի մասերի մրցակցություն,
3. Նորմի մի մասի և նրա ամբողջի մրցակցություն:

Մալկովը նորմերի մրցակցության հետևյալ տեսակներն է առանձնացրել.

1. Ընդհանուր և հատուկ մասերի նորմերի մրցակցություն,
2. Հատուկ նորմերի մասերի մրցակցություն,
3. Միության և հանրապետական նշանակության նորմերի մրցակցություն,
4. Միության տարբեր մասերի օրենսդրությամբ ամրագրված նորմերի մրցակցություն,
5. Ազգային և արտասահմանյան քրեաիրավական նորմերի մրցակցություն,

---

[1] Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. *С. 210;* он же. Теоретические основы квалификации преступлений. М., 1963. С. 243.
[2] Герцензон А.А. Квалификация преступлений. М., 1947. С. 21.
[3] Куринов Б.А. Научные основы квалификации преступлений. М., 1976. С. 174.
[4] Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. С. 219.
[5] Малков В.П. Совокупность преступлений. С. 180-181. На данное обстоятельство указывает и Б.Н. Куринов. Указ. соч. С. 174-175.

6. Ազգային և միջազգային իրավական նորմերի մրցակցություն:[1]

Կուրինովի կարծիքով կարելի է առանձնացնել քրեաիրավական նորմերի մրցակցության հետևյալ տեսակները.

1. Ընդհանուր և հատուկ մասերի նորմերի մրցակցություն,
2. Հատուկ նորմերի մասերի մրցակցություն:

Ըստ նրա՝ նման որակումն իր մեջ ներառում է մյուս բոլոր տարբերակները: Նաև հարկ է նշել, որ արդի ժամանակներում մրցակցության այնպիսի ձևերի մասին խոսել, ինչպիսիք են միության և հանրապետական նորմերի, միության տարբեր մասերի օրենսդրությամբ ամրագրված նորմերի մրցակցությունը, անիմաստ է:

Այժմ անդրադառնանք ընդհանուր և հատուկ նորմերի միջև մրցակցության հարցին: Մինչ այդ հարկ է նշել, որ մրցակցող նորմերը, որոնք նախատեսում են միևնույն հանցագործության հատկանիշները, համընկնում են: Սակայն այդ համընկնումը մասնակի բնույթ ունի միայն, հակառակ դեպքում նրանց տարանջատման մասին խոսք լինել չի կարող: Եվ ինչպես նշում է Կուդրյավցևը, նորմերը, որոնք մասնակիորոն են համընկնում, տարբերվում են ծավալով և իրենց արտահայտած բովանդակությամբ: Առավել նպատակահարմար է նրանց տարանջատումն ըստ ծավալի: Մրցակցող նորմերից մեկն ընդգրկում է ավելի մեծ ծավալ, քան մյուսը, և երկրորդն իր բնույթով մտնում է առաջինի մեջ և ավելի նեղ բովանդակություն ունի: Հենց այսպես էլ, հատուկ նորմերը իրենց մեջ ընդգրկում են ընդհանուր նորմերի հատկանիշները, սակայն ունեն նաև առանձնահատկություններ, որոնցով էլ տարբերվում են առաջիններից:

Խոսելով ընդհանուր և հատուկ նորմերի հարաբերակցության մասին՝ Կուդրյավցևը նշում է, որ հատուկ նորմերին բնորոշ են հատկանիշներ, որոնք առավել մանրամասն են բնութագրում այս կամ այն հանցագործությունը, քան ընդհանուր նորմերը:

Որպես օրինակ՝ հեղինակը համադրում է պաշտոնեական դիրքի չարաշահումը և արդարադատության դեմ ուղղված հանցագործությունները: Միաժամանակ հեղինակը նշում է նաև, որ վերջին դեպքում առավել վառ է արտահայտված համապատասխան հանցագործությունների բնույթը, քանի որ արդարատատության դեմ ուղղված հանցագործությունների կատարման դեպքում խաթարվում է ոչ միայն երկրի արդարադության համակարգը, այլև խախտվում են այլ անձանց իրավունքները, նրանց պատիվն ու արժանապատվությունը, անվտանգությունը:[2]

Հարկ ենք համարում խոսել նաև հատուկ նորմի տարբեր մասերի միջև մրցակցության մասին: Այս տեսանկյունից ևս կարևորվում են իրավաբան- տեսաբանների կարծիքները: Համաձայն Նիկիֆորովի՝ հատուկ նորմի տարբեր մասերի միջև մրցակցությունը կայանում է հետևյալում. Առաջին դեպքում մրցակցում են երկու նորմեր, որոնցից մեկը նախատեսում է հանցագործության մասնակի, հատուկ բնույթը, իսկ մյուսը՝ հանցագործությունների ծանրացնող հանգամանքները, որոնք կարող են նաև դիտարկվել որպես առանձին հանցագործություններ: Նման պարագայում երկրորդ նորմը հանդես է գալիս որպես հատուկ այն նորմի հետ հարաբերությունում, որն արտահայտում է հացագործության միայն մասնակի բնույթը: [3]

Պարզաբանելով նորմերի մրցակցության խնդիրը՝ հարկ ենք համարում նաև անդրադառնալ նորմերի մրցակցության և կոլիզիոն նորմերի հարաբերակցությանը:

Ըստ Նեզնամովայի՝ նորմերի մրցակություն և կոլիզիոն նորմեր հասկացությունները նույնական են: Դրանք տարբեր տերմիններ են, որոնք ի վերջո արտահայտում են միևնույն իմաստը:

[1] Малков В.П. Совокупность преступлений. С. 182.
[2] Кудрявцев В.Н. Общая теория квалификации преступлений. С. 219.
[3] Никифоров А.С. Совокупность преступлений. М., 1965, С. 67.

Միևնույն ժամանակ կարելի է խոսել ինչպես մրցակցող նորմերի կոլիզիայի, այնպես էլ կոլիզիոն նորմերի մրցակցության մասին:[1] Հեղինակների մի մասն էլ այն կարծիքի է, որ նորմերի մրցակցությունը կոլիզիայի մի տեսակն է:[2]

Իսկ Մալկովը, արտահայտելով հակառակ կարծիքը, նշում է, որ կոլիզիան է մրցակցության առանձին տեսակ, նաև նշում է, որ իրավունքի որևէ ճյուղի նորմերի միջև կոլիզիան համարվում է կոլիզիայի օրենքի գլխավոր հարց: Իսկ նորմերի մրցակցության դեպքում որևէ նորմի առաջնայնություն տալը ոչ այլ ինչ է, քան այդ հարցի լուծում:[3]

Համաձայն Սաուլյակի՝ նորմերի մրցակցությկան հարցը առավել լայն ու ընդգրկուն է, քան կոլիզիոն նորմերինը, և մրցակցության դեպքում ոչ մի կոլիզիա լինել չի կարող: [4] Մեր կարծիքով, Կուդրյավցևի կարծիքն այս մասին ավելի հիմնավորված է: Ըստ նրա՝ նորմերի մրցակցություն և նորմերի կոլիզիա հասկացությանունները տարբեր են և դրանք չպետք է նույնացնել: Կոլիզիա կարող են կազմել այն նորմերը, որոնք իրար հակասում են, այն ինչ նորմերի մրցակցության դեպքում այդ երկու նորմերը արտահայտում են նույնական հատկանիշներ: Նման տեսակետ է հայտնում նաև Ագանը՝ ավելացնելով, որ նորմերի մրցակցության դեպքում խոսքը տարբերության, իսկ կոլիզիայի դեպքում՝ հակասության մասին է:[5]

Կուդրյավցեվը նաև նախանշում է այլ պատճառ, որի ուժով մրցակցությունը և կոլիզիան տարբեր հասկացություններ են: Երկու կամ ավելի նորմերի կոլիզիա գոյություն ունի, եթե առկա են այդ նորմերի բովանդակային հակասություններ:

Նորմերի մրցակցության դեպքում խոսքը գնում է իրավակիրառ պրակտիկայի կոնկրետ դեպքերի մասին, երբ խնդիր է առաջանում այս կամ այն նորմի կիրառման հարցում, և այստեղ չպետք է հարցը վերացականորեն հնչի, թե որ նորմն է ենթակա կիրառման: Հարցը պետք է հնչի հետևյալ կերպ՝ տվյալ հանցագործության հատկանիշները ո՞ր նորմն է արտահայտում:

Ինչ վերաբերում է մեր օրենսդրությանը, նշենք, որ թե ՀՀ, թե ԼՂՀ քրեական օրենսգրքերը չեն սահմանում, թե որ դեպքում է առկա նորմերի մրցակցություն, որ դեպքում՝ հանցագործությունների համակցություն:

Փաստորեն, ամեն անգամ արարքի որակման ժամանակ իրավակիրառողը պետք է հիմնվի իր իրավագիտակցության վրա և դիմի դատական պրակտիկային կամ քրեական իրավունքի տեսությանը: Կարծում ենք, որ ավելի նպատակահարմար կլիներ օրենսդրորեն կարգավորել այս հարցը, մասնավորապես, քրեական օրենսգրքում սահմանվեր հանցանքների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության տարբերակման հստակ դրույթներ, ինչպես նաև սահմանվեր քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը և տեսակները սահմանող նորմ:[6]

Տեղեկություններ հեղինակի մասին.

Տաթևիկ Գևորգյան, ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս, հայցորդ

e-mail:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Գ.Ս.Ղազինյանը:

[1] Незнамова З.А. Коллизия в уголовном праве. Екатеринбург, 1994. С. 33.
[2] Власенко Н.А. Коллизионные нормы в советском праве. Иркутск, 1984. С. 23.
[3] Малков В.П. Указ. соч. С. 179.
[4] Сауляк С.Ф. Проблема конкуренции уголовно-правовых норм: Дис. ... канд. юрид. наук. М,, 1996. С. 87.
[5] Агаев И.Б. Указ. соч. С. 155.
[6] Գ.Թ.Գրիգորյան, Քրեաիրավական նորմերի մրցակցությունը, Երևան 2008թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ս. ԽԱՆՅԱՆ	ՆԵՐԿԱՆ ԱՊԱԳԱՅԻՆ ԿԱՄՐՋՈՂ ՊՈԵԶԻԱ	3
Ա.ԱԹԱՅԱՆ	ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՐՎԵՍՏԻ ՆՈՐ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ	10
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ԿՈՐՈՒՍՅԱԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 1960-1980-ԱԿԱՆ թթ.	12
Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ *Լ. ԱՎԱՆԵՍՅԱՆ*	ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ 1960-1980- ԱԿԱՆ ԹԹ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՎԵՊՈՒՄ	19
Զ. ԲԱԼԱՅԱՆ	ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԳԻՐՔԸ. ԺԱՆՐԱՅԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐ	29
Զ.ԲԱԼԱՅԱՆ, *Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ*	ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԵՐԿԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ	36
Շ.ՍԱՂՅԱՆ	ՊԱՏՄԱԿԱՆ ՈՃԱՎՈՐՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ	44
Ս. ՄԻՆԱՍՅԱՆ	ԽԻՂՃ ԲԱՐՈՅԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌՈՒՅԹԻ ԵՎ ՆՐԱՆԻՑ ԿԵՐՏՎԱԾ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ	50
Ա.ՍԱՐԳՍՅԱՆ	ԱՐՑԱԽԻ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՐԲԱՌԸ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ» ԷՋԵՐՈՒՄ (Նվիրվում է «Ազգագրական հանդեսի» հիմնադրման 120-ամյակին)	59
Ա.ՇԻՐԻՆՅԱՆ	ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑԻ «ՀՈՎՆԱԹԱՆ ՈՐԴԻ ԵՐԵՄԻԱՅԻ» ԵՐԿԸ	67
Ա. ՇԻՐԻՆՅԱՆ	ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ	72
Ա. ՂՈՒԼՅԱՆ, *Հ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*	ԱՆՀԱՏԻ ԵՐԿԱՏՄԱՆ ԽՆԴԻՐԸ Պ.ԶԵՅԹՈՒՆՑՅԱՆԻ, ԿԼՈԴ ՌՈԲԵՐՏ ԻԶԵՐԼԻԵ ՎԵՊՈՒՄ	83
Ռ. ՄՈՎՍԵՍՅԱՆ	*ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ*	90
Ծ. ՀԱՄՐԱԹՅԱՆ	ԼԵԶՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ « ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄԻ ՕՐԻՆԱԿՈՎ	95
Ն.ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԶՄԱԳՈՐԾԱՌՈՒՅԹ ՄԻ ՔԱՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	98
Կ. ԱՎԱՆԵՍՅԱՆ	ԳՐԱԲԱՐԻ ԳՈՒՆԱՊԱՏԿԵՐԸ ՀՈՎՀ. ՇԻՐԱԶԻ «ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ» ՊՈԵՄՈՒՄ	103
Հ.ԲԱԲԱՅԱՆ	ԾԵՐԵՆՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ և ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ	108
Լ.ՄԱՐԳԱՐՅԱՆ	ԻՐԱՆԱԿԱՆ APAT /*ԱՊԱՏ* ԲԱՌԱՐՄԱՏԻ ԻՄԱՍՏԱԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ	114
Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	*ԱՌԱՋԱԴԵՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՌԱՅԻՆ ԱՍՊԵԿՏԸ*	118
Տ. ՄՈՎՍԻՍՅԱՆ	ՈՒՂՂԱՁԻԳ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ Զ. Գ. ԲԱՅՐՈՆԻ ՇԻԼԻՈՆԻ ԿԱԼԱՆԱՎՈՐԸ ԵՐԿՈՒՄ	122
Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ	ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ Յ.Վ. ԳՅՈԹԵԻ «ՖԱՈՒՍՏ» ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ	128
Լ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ	*Վ.ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՎԵՏԻՔ ԻՄԱՀԱԿՅԱՆԻ „ԱԲՈՒ-ԼԱԼԱ-ՄԱՀԱՐԻ„ ՊՈԵՄԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*	131
Լ.ՊԵՏՐՈՍՅԱՆ		136
Դ.ԿԱՐԱԲԵԿՅԱՆ	“Հ.ՇԻՐԱԶԻ “ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ” ՊՈԵՄԻ ԿՐՈՆԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՍՊԵԿՏԸ	140
Հ. ՓԱՇԱՅԱՆ, *Լ. ԲԱԼԱՅԱՆ*	ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՐԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ 1991-1992 թթ. ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ	147
Վ. ԱՎԱՆԵՍՅԱՆ	*ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՆԱՊՈԼԵՈՆ III ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՒԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ*	157
Ն. ՍԱՐՈՒՄՅԱՆ	ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ՍՄԲԱՏ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻՆ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ	164
Ա. ԱՌՍՏԱՄՅԱՆ	ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ թթ.	173

Ս. ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆ	III ԴԱՐԻ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱՑ ԻՇԽԱՆ, ԹԱԳԱՎՈՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ-ԴՈԼԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ	177
Գ. ՄԵԼՔՈՆՅԱՆ	ԳԵՐՄԱՆԱՅԻ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ և ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ	187
Վ.ՅԱՐԱՄԻՇՅԱՆ	ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅԱՏՅԱՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՑԵՂԱՍՊԱՆԱԳՈՐԾԻ ՀԱՆՑԱԾԻՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ	194
Վ.ՅԱՐԱՄԻՇՅԱՆ	ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՄԵՐՆԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԵԿԵՐՏՎԱԾՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ	201
Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ, Ա.ՄԻՐԶԱԶԱՆՅԱՆ	ՆԵՐԱՌԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉԸ ԼՂՀ ՆԵՐԱՌԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ	211
Ա. ԱԼՈՅԱՆ	ԹՐԵՆԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԻ և ԹԻՄԻ ԷՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԹՐԵՆԻՆԳԱՅԻՆ ԽՄԲԻ ԹԻՄԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ	215
Ե. ՍԱՐԳՍՅԱՆ	ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌԱՀԱՄՆԵՐԻ ԴԵՎԻԱՆՏ ՎԱՐՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ	223
Ռ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՓՈՐՁ ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ	228
Լ.ՍԱՐԳՍՅԱՆ	ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	233
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, Ե.ՍԱՐԳՍՅԱՆ	ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ	243
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	250
Ա.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ	ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ	256
Մ.ՄԻՆԱՍՅԱՆ	ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԼՈԲԱԼ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	262
Ա. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ	ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԼՂՀ-ՈՒՄ	272
Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ	ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	278
Է. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ	ՇՈՐԹՄԱՆ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ	285
Տ.ԳԵՎՈՐԳՅԱՆ	ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ և ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ	294

СОДЕРЖАНИЕ

С. ХАНЯН	*ПОЭЗИЯ КАК МОСТ, СВЯЗЫВАЮЩИЙ НАСТОЯЩЕЕ С БУДУЩИМ*	3
А.АТАЯН		10
Н. АВАНЕСЯН	*ХУДОЖЕСТВЕННЫЕ ТЕНДЕНЦИИ ОБРАЗА ПОТЕРЯННОЙ РОДИНЫ В 1960-1980 ГГ.*	12
Н. АВАНЕСЯН	*ВОПРОС ГЕНОЦИДА АРМЯН В АРМЯНСКОМ СОВЕТСКОМ РОМАНЕ 1960-1980ГГ.*	19
З. В. БАЛАЯН	*КНИГА РАФФИ "МЕЛИКСТВА ХАМСЫ": АНАЛИЗЫ ЖАНРА*	29
З. БАЛАЯН, С. ХАЧАТРЯН	*СИСТЕМА ОБРАЗОВ ПРОИЗВЕДЕНИЯ РАФФИ «МЕЛИСТВА ХАМСЫ»*	36
Ш. САГИЯН	*ИСТОРИЧЕСКАЯ СТИЛИЗАЦИЯ В ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕРЫ»*	44
С. МИНАСЯН	*ЛИНГВИСТИЧЕСКАЯ ФУНКЦИЯ СЛОВА խիղճ (СОВЕСТЬ) И СОСТАВЛЕННЫХ ИЗ НЕГО СЛОВ В ПОЭМЕ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕРЫ»*	50
А. САРКИСЯН	*ЭТНОГРАФИЯ, ФОЛЬКЛОР И ДИАЛЕКТ АРЦАХА НА СТРАНИЦАХ ЖУРНАЛА «АЗГАГРАКАН АНДЕС»*	59
А. ШИРИНЯН	*ПРОИЗВЕДЕНИЕ ВАГАНА ТОТОВЕНЦА ,,ОВНАТАН-СЫН ЕРЕМИИ"*	67
А. ШИРИНЯН	*ЯЗЫЧЕСКИЙ ПАНТЕОН ЕГИШЕ ЧАРЕНЦА*	72
А.ГУЛЯН, Г.МАРТИРОСЯН	ПРОБЛЕМА РАЗДВОЕНИЯ ЛИЧНОСТИ В РОМАНЕ ПЕРЧА ЗЕЙТУНЦЯНА „КЛОД РОБЕРТ ИЗЕРЛИ„	83
Р. МОВСЕСЯН	*ДИАЛЕКТНЫЕ ГРАММАТИЧЕСКИЕ РЕАЛИИ В ПРОИЗВЕДЕНИЯХ АРЦАХСКИХ ПИСАТЕЛЕЙ*	90
Ц.АСРАТЯН	*ОБУЧЕНИЯ НЕКОТОРЫХ ЯЗЫКОВЫХ ЕДИНИЦ НА ПРИМЕРЕ ПОЭМЫ ОВАНЕСА ШИРАЗА «ТОНДРАКЕЦИНЕР»*	95
Н.ХАЧАТРЯН	*ПОЛИФУНКЦИОНАЛЬНЫЕ СОЮЗЫ В СОВРЕМЕННОМ АМЯНСКОМ ЯЗЫКЕ*	98
К. АВАНЕСЯН	КОЛОРИТ ГРАБАРА В ПОЭМЕ «ТОНДРАКЕЦИНЕРЫ»	103
А.БАБАЯН	ПОЛИТИЧЕСКАЯ МЕЧТА И СОЦИАЛЬНЫЕ ИДЕАЛЫ ЦЕРЕНЦА	108
Л.МАРКАРЯН	*ФУНКЦИОНАЛЬНО-СЕМАНТИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ИРАНСКОЙ КОРНЕВОЙ ОСНОВЫ -АРАТ/АПАТ В ОЙКОНИМАХ АРЦАХА*	114
А. АЙРАПЕТЯН	*ЛЕКСИЧЕСКИЙ АСПЕКТ ОБУЧЕНИЯ ОМОНИМАМ СТУДЕНТОВ СТАРШИХ КУРСОВ*	118
Т. МОВСИСЯН	*ПРОЯВЛЕНИЯ ВЕРТИКАЛЬНОГО КОНТЕКСТА В ПОЭМЕ ДЖ. Г. БАЙРОНА "ШИЛЬОНСКИЙ УЗНИК"*	122
С. СТЕПАНЯН	*ТАЙНА СМЕРТИ Ф. ШИЛЛЕРА В ТРАГЕДИИ "ФАУСТ'' ГЕТЕ*	128
Л. ГАБРИЕЛЯН	ОБ ОСОБЕННОСТЯХ ПЕРЕВОДА В.БРЮСОВА НА РУССКИЙ ЯЗЫК ПОЭМЫ «АБУ-ЛАЛА МААРИ »	131
Л.ПЕТРОСЯН	РЕЧЕВОЙ ЭТИКЕТ КАК НЕОБХОДИМОЕ ЗВЕНО ПОВЫШЕНИЯ КУЛЬТУРЫ РЕЧЕВОГО ПОВЕДЕНИЯ НА ЗАНЯТИЯХ ПО РУССКОМУ ЯЗЫКУ	136
Д. КАРАБЕКЯН	РЕЛИГИОЗНО-ПОЛИТИЧЕСКИЙ АСПЕКТ В ПОЭМЕ О.ШИРАЗА "ТОНДРАКЕЦИНЕРЫ" ("ԹՈՆԴՐԱԿԵՑԻՆԵՐԸ")	140
Г. ПАШАЯН, Л. БАЛАЯН	*ВОСПРИЯТИЕ СУТИ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА В 1991-1992 ДОКУМЕНТАХ*	147
В. АВАНЕСЯН	ОТНОШЕНИЕ ФРАНЦУЗСКОГО ПАРЛАМЕНТА К БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКЕ НАПОЛЕОНА III	157
Н.САРУМЯН	*ТОНДРАКИЙСКОЕ ДВИЖЕНИЕ И СМБАТ ЗАРЕАВАНЦИ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ*	164
А.АРСТАМЯН	*КУЛЬТУРА В НКАО В 1920-1930-х ГОДАХ*	173
С. АСАН-ДЖАЛАЛЯН	*ПРОИСХОЖДЕНИЕ И ДЕЯТЕЛЬНОСТЬ КНЯЗЬЯ КНЯЗЕЙ, КОРОЛЯ АРЦАХА XIII ВЕКА АСАНА-ДЖАЛАЛА-ДОЛЫ*	177
Г. МЕЛКОНЯН	*НЕМЕЦКИЕ ОФИЦЕРЫ И АРМЯНСКИЙ ГЕНОЦИД*	187
В.ЯРАМИШЯН	*ПРОПАГАНДА АРМЕНОФОБИИ КАК ФАКТОР, ФОРМИРУЮЩИЙ ПРЕСТУПНОЕ ГЕНОЦИДАЛЬНОЕ ПОВЕДЕНИЕ*	194
В.ЯРАМИШЯН	*ОСОБЕННОСТИ ФОРМИРОВАНИЯ НАЦИОНАЛНОГО ПСИХОЛОГИЧЕСКОГО СКЛАДА У ПОКОЛЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ НКР*	201
Г. ГРИГОРЯН, А. МИРЗАДЖАНЯН	*ПСИХОЛОГИЧЕСКОЕ СОДЕРЖИМОЕ ИНКЛЮЗИВНОГО ОБРАЗОВАНИЯ В ИНКЛЮЗИВНЫХ ШКОЛАХ НКР*	211

А. АЛОЯН	*СОПОСТОВЛЕНИЕ И СРОВНЕНИЕ СУШНОСТИ, А ТАК ЖЕ ФУНКЦИЙ ТРЕНИНГОВОЙ ГРУППЫ И КОМАНДЫ, КАК ОСНОВА КОМАНДООБРОЗОВАНИЯ ТРНЕНИНГОВОЙ ГРУППЫ*	215
Е. САРКИСЯН	*ОТРИЦАТЕЛЬНОЕ ВОЗДЕЙСТВИЕ СРЕДСТВ МАССОВОЙ ИНФОРМАЦИИ КАК ПРЕДУСЛОВИЕ ФОРМИРОВАНИЯ ДЕВИАНТНОГО ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ*	223
Р. АРУТЮНЯН	*ОПЫТ ИЗУЧЕНИЯ ПРОЦЕССА ФОРМИРОВАНИЯ И РАЗВИТИЯ ЦЕННОСТЕЙ НА ПРИМЕРЕ СТУДЕНТОВ АРЦАХСКОГО ГОСУДАРСКОГО УНИВЕРСИТЕТА*	228
Л. САРГСЯН	*МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ОСНОВЫ ИССЛЕДОВАНИЕ СТРУКТУРЫ САМООТНОШЕНИИ*	233
Э. БАГДАСАРЯН, Е. САРКИСЯН	УЗНАВАЕМЫЕ И ВОСПИТАТЕЛЬНЫЕ ЦЕННОСТИ АРЦАХСКИХ НАРОДНЫХ СКАЗОК	243
Э. БАГДАСАРЯН	*ОБЩЕЧЕЛОВЕЧЕСКИЕ ЦЕННОСТИ В АРЦАХСКОМ НАРОДНОМ ФОЛЬКЛОРЕ*	250
А.БАГДАСАРЯН	НЕОБХОДИМЫМИ УСЛОВИЯМИ ДЛЯ ЭФФЕКТИВНОЙ ОРГАНИЗАЦИИ САМОСТОЯТЕЛЬНОЙ РАБОТЫ СТУДЕНТОВ	256
М. МИНАСЯН	*ДЕМОГРАФИЧЕСКАЯ ПРОБЛЕМА В КОНТЕКСТЕ ГЛОБАЛЬНЫХ ПРОЦЕССОВ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ*	262
А. АЛЕКСАНЯН	*ЗАПАДНЫЕ МОДЕЛИ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ И ВОЗМОЖНОСТИ ВНЕДРЕНИЯ В НКР*	272
Г.НЕРСИСЯН	ПРОБЛЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВ ЗАЩИТЫ ОБВИНЯЕМОГО В ПРОЦЕССЕ СОТРУДНИЧЕСТВА	278
Э.АРЗУМАНЯН	*ОСОБЕННОСТИ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ СОСТАВА ВЫМОГАТЕЛЬСТВА В ЗАРУБЕЖНЫХ СТРАНАХ*	285
Т. ГЕВОРГЯН	*ПРОБЛЕМЫ СОВОКУПНОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ И КОНКУРЕНЦИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ*	294

CONTENTS

S. KHANYAN	POETRY AS A BRIDGE LINKING THE PRESENT WITH THE FUTURE	3
A.ATAYAN		10
N. HOVHANNISYAN	ARTISTIC TRENDS OF THE IMAGE OF THE LOST HOMELAND IN 1960 TO 1980	12
N. HOVHANNISYAN	THE QUESTION OF THE ARMENIAN GENOCIDE IN THE ARMENIAN SOVIET NOVEL OF 1960-1980	19
Z. BALAYAN	THE RAFFI'S BOOK « MELIK'S KINGDOM OF KHAMSA»:ANALYSES OF THE GENRE	29
Z. BALAYAN, S. KHACHATRYAN	THE SYSTEM OF IMAGES OF RAFFI'S WORK « MELIK'S KINGDOM OF KHAMSA»	36
SH. SAGHYAN	HISTORICAL STYLIZATION IN THE POEM OF HOVANNES SHIRAZ «TONDRAKETSINERY»	44
S. MINASYAN	THE LINGUISTIC FUNCTION OF MORAL WORD խիղճ (CONCIENCE) AND FORMED FROM IT IN THE POEM OF HOVANNES SHIRAZ «TONDRAKETSINERY»	50
A. SARGSYAN	ARTSAKH ETHNOGRAPHY, FOLKLORE AND DIALECT IN THE PAGES OF «AZGAGRAKAN HANDES»	59
A. SHIRINYAN	VAHAN TOTOVENTS "HOVNATHAN THE SON OF YEREMIA" NOVEL	67
A. SHIRINYAN	YEGHISHE CHARENTS' PAGAN PANTHEON	72
A.GHULYAN, H.MARTIROSYAN	THE PROBLEM OF SPLIT PERSONALITY IN ,,KLOD ROBERT IZERLY,, BY PERCH ZEYTUNTCYAN	83
R.MOVSESYAN.	DIALECTAL GRAMMATICAL REALITIES IN ARTSAKH WRITERS' WORKS	90
TS. ASRATYAN	LEARNING SOME LANGUAGE UNITS SUCH AS THE POEM HOVHANNES SHIRAZ "TONDRAKETSINER".	95
N. KHACHATRYAN	POLYFUNCTIONAL CONJUNCTIONS IN MODERN ARMENIAN	98
K. AVANESYAN	THE LANGUAGE COLOR IN THE POEM "THE TONDRAKIANS"	103
H.BABAYAN	TSERENTS' POLITICAL DREAM AND SOCIAL IDEALS	108
L.MARGARYAN	THE FUNCTIONAL-SEMANTIC CHARACTERISTICS OF IRANIAN ROOT STEM -APAT IN ARTSAKH OIKONYMS	114
A. HAYRAPETIAN	LEXICAL ASPECT OF TEACHING HOMONYMS TO ADVANCED STUDENTS	118
T. MOVSISYAN	THE VERTICAL CONTEXT DISPLAYS IN G. G.BYRON'S "THE PRISONER OF CHILLON" POEM	122
S. STEPANIAN	THE MYSTERY OF F. SHILLER'S DEATH IN GOETHE'S <<FAUST>> TRAGEDY	128
L.GABRIELYAN	THE PARTICULARITIES OF THE RUSSIAN TRANSLATION OF AVETIK ISSAHAKYAN'S POEM ,, ABOOL-ALA MAHARI,, BY V.BRUSSOFF	131
L.PETROSYAN	THE SPEECH ETIQUETTE AS THE NECESSARY LINK TO INCREASE THE CULTURE OF VERBAL BEHAVIOR AT THE RUSSIAN LANGUAGE LESSONS	136
D. KARABEKYAN	RELIGIOUS-POLITICAL ASPECT OF THE POEM OF H. SHIRAZ "TONDRAKETSINERY"	140
H. PASHAYAN, L. BALAYAN	PERCEPTION OF THE ESSENCE OF THE KARABAKH CONFLICT IN 1991-1992 DOCUMENTS	147
V. AVANESYAN	THE ATTITUDE OF THE FRENCH PARLIAMENT TO THE POLICY OF NAPOLEON III IN THE MIDDLE EAST	157
N.SARUMYAN	ABSTRACT TONDRAKYAN MOVEMENT AND SMBAT ZAREHAVANTSI IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY	164
A.ARSTAMYAN	THE CULTURE IN NAGORNO KARABAKH IN 1920-1930	173
S. HASAN-JALALYAN	THE ORIGIN AND ACTIVITIES OF THE PRINCE OF PRINCES, KING OF THE XIII CENTURY OF ARTSAKH HASAN-JALAL-DOLA	177
G. MELQONYAN	GERMAN OFFICERS AND ARMENIAN GENOCIDE	187
V.YARAMISHYAN	PROPAGANDA OF ARMENOPHOBIA IN OTTOMAN EMPIRE AS THE GENOCIDAL CRIMINAL BEHAVIOUR FORMING FACTOR	194
V. YARAMISHYAN	FEATURES OF FORMATION OF THE NATIONAL MENTALITY IN GENERATIONS OF NKR INDEPENDENCE	201

G. GRIGORYAN, A. MIRZAJANYAN	*PSYCHOLOGICAL CONTENT OF INCLUSIVE EDUCATION AT INCLUSIVE SCHOOLS OF NKR*	211
A. ALOYAN	*COMPARISONS AND COMBINATIONS OF ESSENCE AND FUNCTIONS OF THE TEAM AND TRAINING GROUP AS THE BASIS OF TRAINING GROUP FORMATION*	215
YE. SARGSYAN	*THE NEGATIVE EFFECT OF MASS MEDIA AS PRECONDITION OF THE FORMATION OF TEENAGE DEVIANT BEHAVIOR*	223
R. HARUTYUNYAN	*THE EXPERIENCE OF STUDYING THE PROCESS OF FORMATION AND DEVELOPMENT OF VALUES ON AN EXAMPLE OF STUDENTS OF ARTSAKH STATE UNIVERSITY*	228
L. SARGSYAN	*METHODOLOGICAL BASES OF RESEARCH OF THE STRUCTURE SELF-RELATION*	233
E. BAGHDASARYAN, E. SARGSYAN	*RECOGNIZE AND EDUCATIONAL VALUE OF THE ARTSAKH NATIONAL TALES*	243
E. BAGHDASARYAN	*HUMAN VALUES IN ARTSAKH NATIONAL FOLKLORE*	250
A.BAGHDASARYAN	PREREQUISITES FOR THE EFFECTIVE ORGANIZATION OF STUDENTS' INDEPENDENT WORK	256
M. MINASYAN	*THE DEMOGRAPHIC PROBLEM IN THE CONTEXT OF GLOBAL DEVELOPMENTS IN THE ARTSAKH REPUBLIC*	262
A. ALEXANYAN	*THE WESTERN MODELS OF MORTGAGE LENDING AND THE POSSIBILITY OF IMPLEMENTATION IN NKR*	272
G.NERSISYAN	*PROBLEMS ON THE PROTECTION OF THE RIGHTS OF THE ACCUSED IN THE COOPERATION PROCESS*	278
E.ARZOUMANYAN	*FEATURES OF LEGAL REGULATION OF EXTORTION IN OTHER COUNTRIES*	285
T. GEVORGYAN	*PROBLEMS OF MULTIPLE OFFENSES AND CONFLICT OF CRIMINAL LAW*	294

Արցախի պետական համալսարանի

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

УЧЕНЫЕ ЗАПИСКИ

Арцахского государственного университета

Artsakh State University's

PROCEEDINGS

ՊՐԱԿ ТОМ VOLUME

1/2016

Հանձնված է տպագրության՝ թ.:
Ստորագրված է տպագրության՝ թ.:
Ծավալը տպ. մամուլ: Տպաքանակ 100:

Հիմնադիր՝ Արցախի պետական համալսարան, Ստեփանակերտ, Մ. Գոշի փ. 5
հեռ. (0749) 4-04-91, ֆաքս (0479) 7-12-14
E-mail: rector@asu.am
ԱրՊՀ հրատարակչություն, e-mail printery.asu@mail.ru,
կայք: www.asu.am – Գիտական հրապարակումներ – Գիտական տեղեկագիր

Основатель – Арцахский государственный университет г.Степанакерт, ул. Мхитара Гоша 5, тел. (0749) 4-04-91, факс (0479) 7-12-14
Издательство АрГУ, e-mail printery.asu@mail.ru,
сайт: www.asu.am – Научные публикации – Ученые записки.

Founder - Artsakh State University, 5 Mkhitar Gosh st., Stepanakert
Tel.: (0749) 4-04-91, Fax: (0479) 7-12-14
ASU Publishing house, e-mail printery.asu@mail.ru,
website: www.asu.am – Scientific publications – Proceedings.

Ստեփանակերտ
Степанакерт 2016 Stepanakert